ISSN 1829-4383

Արցախի պետական համալսարան

Арцахский государственный университет

Artsakh State University

Արցախի պետական համալսարանի ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ Арцахского государственного университета

Artsakh state university PROCEEDINGS

ՊՐԱԿ 1 ТОМ 1 VOLUME 1

2019

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

СОЦИАЛЬНЫЕ НАУКИ SOCIAL SCIENCES

Ստեփանակերտ

Հրատարակվում է 1998թ-ից.
Պարբերականությունը՝ տարեկան երկու անգամ
Издается с 1998г. Периодичность – дважды в год
Issued since 1998. Frequency – twice a year

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
Публикуется по решению ученого совета Арцахского государственного университета.
Published by the Decree of the Academic Council of the Artsakh State University.

Խմբագրական խորհրդի նախագահ՝ բ.գ.թ. Սարգսյան Ա.Յու.
Председатель редакционного совета: к.ф.н. Саргсян А.Ю.
Chairman of the Editorial Board: Ph. D. in Philology Sargsyan A.Yu.

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ. Ավանեսյան Վ.Մ.
Главный редактор: д.и.н. Аванесян В.М.
Editor-in-chief: Doctor of History Avanesyan V.M.

Խմբագրական կոլեգիա
Редакционная коллегия
Editorial board

Հասարակական գիտություններ

1. Աղաբալյան Ն.Է, ԱՀ ԿԳՍ նախարար – Агабалян Н.Э., Министр образования, науки и спорта АР - Aghabalyan N.E., Minister of Education, Science and Sport of AR
2. Սուվարյան Յու.Մ., տ.գ.դ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս –Суварян Ю. М., д.э.н., академик НАН РА - Suvaryan Yu.M., Doctor of Economics, Academician of NAS RA
3. Ղազինյան Գ.Ս., ի.գ.դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս – Газинян Г.С., д.ю.н., академик НАН РА - Ghazinyan G.S. . Doctor of Law, Academician of NAS RA.
4. Մանասերյան Թ.Ն., տ.գ.դ. պրոֆեսոր – Манасерян Т.Н., д.э.н., профессор – Manaseryan T.N., Doctor of Economics, Professor
5. Ասրյան Շ.Շ., տ.գ.թ.- Асрян Ш.Ш., к.э.н. –Asryan Sh.Sh., Ph.D. in Economics
6. Բալայան Վ.Ռ., պ.գ.դ., -Балаян В. Р., д.и.н. – Balayan V.R., Doctor of History
7. Ղազարյան Հ.Ս., բ.գ.թ. – Газарян А.С., к.ф.н. –Ghazaryan H.S., Ph.D. of Philology
8. Ենգոյան Ա.Փ., ք.գ.դ.- Енгоян А.П., д.п.н. – Engoyan A.P., Doctor of Political science
9. Հարությունյան Վ.Ն. բ.գ.դ., Арутюнян В.Н ., д.ф.н. – Harutyunyan V.N., Doctor of Philology
10. Խանյան Ս.Ա., բ.գ.դ.- Ханян С.А. д.ф.н. – Khanyan S.A., Doctor of Philology
11. Կարապետյան Ի.Կ., մ.գ.դ.- Карапетян И.К., д.п.н. - Karapetyan I.K., Doctor of Pedagogics
12. Կարապետյան Վ.Ս., հ.գ.դ., պրոֆեսոր –Карапетян В.С., д.п.н., профессор - Karapetyan V.S., Doctor of Psychology , Professor
13. Հայրապետյան Է.Ա., մ.գ.թ. - Айрапетян Э.А., к.п.н.- Hayrapetyan E.A., Ph. D. in Pedagogics
14. Հովհաննիսյան Լ.Շ., բ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Ованнисян Л.Ш., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Hovhannisyan L.Sh., Doctor of Philology, Corresponding Member of the Armenian National Academy of Sciences.
15. Մանասյան Ա.Ս., փ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Манасян А. С., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Manasyan A.S., Doctor of Philosophy, Corresponding Member of the Armenian Natioanl Academy of Sciences

16. Մարգարյան Գ.Գ. կ.գ.թ., /գիտ.քարտուղար/–Маргарян Г. Г., к.б.н., ученый секретарь – Margaryan G.G., Ph. D. in Biology, Scientific Secretary
17. Մխիթարյան Ա.Մ., հոգեբ.գ.թ. - Мхитарян А.М., к.п.н. – Mkhitaryan A.M., Ph. D. in Psycology
18. Մուսայելյան Հ.Գ., բ.գ.դ.– Мусаелян О. Г., д.ф.н.– Musaelyan H.G., Doctor of Philology.
19. Յարամիշյան Վ.Բ., հոգեբ.գ.թ. - Ярамишян В.Б. –к.п.н. - Yaramishyan V.B., Ph. D. in Psycology.
20. Մուրադյան Դ.Է., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Мурадян Д.Э. – заслуженный деятель искусств Армении – Muradyan D.E., Honored Artist of Armenia.
21. Հակոբյան Ե.Ս., մ.գ.դ., - Акопян Е.С., д.п.н. – Hakobyan E.S., Doctor of Pedagogics
22. Թադևոսյան Ա.Վ., մ.գ.թ. – Тадевосян А.В., к.п.н. – Tadevosyan A.V., Ph.D. in Pedagogics

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մ.ԱՐԶԱԿԱՆՅԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱ ՅՈԼԱԿ ԳԵՎՈՐԳԻ ԱՐԶԱԿԱՆՅԱՆԸ..... 16

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Լ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԱՄՆԻԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱՅՆՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ (Հին հայերենի նյութի հիման վրա)..... 20

Ծ.ՀԱՍՐԱԹՅԱՆ
ԱՆՈՐՈՇ ԵՎ ՀԱՄԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ՈՐՈՇ ՁԵՎԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ..... 31

Մ.ՄԻՆԱՍՅԱՆ
–Վ-, -(Ա//Ե)ՅՆ- ԲԱՅԱԾԱՆՑՆԵՐՈՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՏԻՊԱՐՆԵՐԸ (Աշոտ Աբրահամյան-100)..... 38

Մ.ՄԻՐՈՒՄՅԱՆ
ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԻՊԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՅՈՒՄ..... 50

Շ.ՍԱՂՅԱՆ
Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ (Աշոտ Աբրահամյան-100)..... 59

Վ.ՍԱՐԳՍՅԱՆ
ԲԱՌԵՐԻ ՁԵՎԱՒՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ..... 69

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Զ.ԲԱԼԱՅԱՆ
ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ԱՐՅԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒՈՒԹՅՈՒՆԸ» ԳԻՐՔԸ..... 78

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՅԱԽԻ «ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ. ՎԱՉԳԵՆ ՕՎՅԱՆԻ «ԱՅՍ ՂԱՐԱԲԱՂՆ Է» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ..... 94

Մ.ԽԱՆՅԱՆ
ԾԱՂԿԱԾ ՅԱՎԻ ՊՈԵԶԻԱՆ..... 101

Ա.ՀԱՅՐԻՅԱՆ
ԱՐՅԱԽԸ՝ ՆԵՐՇՆՉԱՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ..... 110

Ա.ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ՄԱՍՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ (ԱՊՐԻԼՅԱՆ ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)..... 116

Գ.ԼԱԼԱՅԱՆ
ԳՈՒՐԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ ԵՎ ԱՐՅԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ..... 127

Տ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ «ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ՎԵՊԻ ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 136

Զ.ՄԱՌԱՋՅԱՆ
ՀԱՅԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՅԻ ԳՐՈՂԻ ՏԵՍԱԴԱՇՏՈՒՄ. ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ՝ ՀՇՄԱՐԻՏ ՀԱՅԱՅՔ..... 147

ՕՏԱՐ ԼԵԶՈՒ

Ի.ՀԱԿՈԲՅԱՆ
«ԿԱՏՈՒ/ КОШКА» ԵՎ «ՇՈՒՆ /СОБАКА» ԶՈՈՆԻՄ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԻ ՌՈՒՍ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՈՒՄ..... 158
Ն.ԱՎԱԳՅԱՆ
ՌՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՐՋԻՆԻԱ ՎՈՒԼՖԻ և ՔԵԹՐԻՆ ՄԱՆՍՖԻԼԴԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ (ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ)..... 168
Ն.ՄԻՆԱՍՅԱՆ
ԿՈՆՖԼԻԿՏԸ ԻԲՐԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԺԱՆՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ..... 176
Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ
ԵՐԿԼԵԶՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԻԳԼՈՍԻԱՆ ՈՐՊԵՍ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ ԼԵԶՎԱԿԱՆ ՇՓՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ՆՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊՐՈՑԵՍԻ ՎՐԱ..... 183
Վ.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳԼԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ.... 192
Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՆԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ..... 205

ՆԶՊ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ

Մ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ ՆԱԽԱՎԱՐԺԱՆՔԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ..... 215
Ա.ՖԻՐՅԱՆ
ԱՆՁԻ ԻՆՔՆԻՐԱՅՈՒՄԸ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՈՏՈՒՄ 220
Բ.ԵՐԻՑՅԱՆ
ԻՆԺԵՆԵՐ-ՄԱԿՐԱՎՈՐ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ..... 231

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

Մ.ՂԱԼԱՅԱՆՑ
ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ..... 237

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վ.ՅԱՐԱՄԻՇՅԱՆ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ..... 244
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՈՒԶԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ՄՈՏ..... 253
Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ
ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԹՐԵՅՆԻՆԳՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀՈԳԵՇՏԿՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ.. 262

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ն.ՄԱՐՈՒՄՅԱՆ
ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶՐԿՄԱՆ ՓԱՍՏԸ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ..... 271
Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԼՂԻՄ-Ի ՊԱՅՔԱՐՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱԶՄԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՀԱՄԱՐ: ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐԻՆ 1945-1991ԹԹ..... 283

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄՈՒՆԱՑՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ..... 297
Հ.ՓԱՇԱՅԱՆ, Լ.ԲԱԼԱՅԱՆ
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ..... 304
Ե.ԲՈԲԿՈՎԱ
ՄՈԼԴՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶԱՑՄԱՆ ՌԵՍՈՒՐՍ..... 315
Ե. ԵՎՏԻԳՆԵՅԵՎԱ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ԿՈՆՎԵՆՑԻՈՆԱԼ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ..... 324

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՆՈՂ ՈՉ ԿԱՆՈՆԱԴՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ..... 334

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Թ.ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
ԱՐՑԱԽԻ ԳՅՈՒՂԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ..... 355
Ռ.ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ, ՅԱ.ԼԱԼԱՅԱՆ
ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՀ-ՈՒՄ... 370
Լ.ԲԵԳԼԱՐՅԱՆ
ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԱՀ-ՈՒՄ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ..... 385
Ա.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԱՀ-ՈՒՄ... 398
Գ.ՄԱՐԳՍՅԱՆ
ԻՐԱՅՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԻՔ..... 408
Շ.ԱՍՐՅԱՆ
ԱՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ..... 419
Մ.ԱՍՐՅԱՆ
ԱՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ..... 432
Մ.ՄԻՆԱՍՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆՈՒՂԻՆԵՐՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 443

СОДЕРЖАНИЕ

М. АРЗАКАНЯН
ФИЛОСОФ ЦОЛАК ГЕВОРКОВИЧ АРЗАКАНЯН **16**

АРМЯНСКИЙ ЯЗЫК

Л.ХАЧАТРЯН
ОБОБЩАЮЩАЯ ФУНКЦИЯ ГРАММАТИЧЕСКИХ ЧАСТИЦ /НА МАТЕРИАЛЕ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА/..... ***20***
Ц. АСРАТЯН
ВОПРОСЫ ОБУЧЕНИЯ НЕКОТОРЫХ ФОРМ ИНФИНИТИВА И ПРИЧАСТИЯ НЕСОВЕРШЕННОГО ВИДА..... ***31***
С.МИНАСЯН
ТИПЫ СТРУКТУР С ГЛАГОЛЬНЫМИ АФФИКСАМИ В (А/Е) ЦН (АШОТ АБРАМЯН -100)..... ***38***
М. МИРУМЯН
МЕТОДЫ ОБУЧЕНИЯ АНАЛИТИЧЕСКОГО ТИПА СЛОВООБРАЗОВАНИЯ В СРЕДНЕЙ ШКОЛЕ..... ***50***
Ш. САГИЯН
ВКЛАД А. АБРААМЯНА В АРМЯНСКУЮ ИСТОРИЧЕСКУЮ ЛИНГВИСТИКУ..... ***59***
В.САРКИСЯН
ОБУЧЕНИЕ МОРФО-СЕМАНТИЧЕСКИХ ПОЛЕЙ ЛЕКСЕМ..... ***69***

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

З. БАЛАЯН-АРАКЕЛЯН
МОНУМЕНТАЛЬНОЕ ФОЛЬКЛОРНОЕ ИССЛЕДОВАНИЕ: КНИГА АРМЕНА САРКИСЯНА «АРЦАХСКИЙ ФОЛЬКЛОР»..... ***78***
М. ЯВРУМЯН
РОЛЬ ДИАЛЕКТНЫХ СЛОВ И СЛОВ ОБЩЕНАРОДНОГО РАЗГОВОРНОГО ЯЗЫКА В ПОЭЗИИ СОКРАТА ХАНЯНА..... ***88***
С. ХАЧАТРЯН
АРЦАХСКОЕ «Я СОЛНЦЕМ ВСКОРМЛЕННЫЙ ЯЗЫК МОЕЙ АРМЕНИИ ЛЮБЛЮ» В ПРОИЗВЕДЕНИИ «ЭТО КАРАБАХ» ВАЗГЕНА ОВЯНА..... ***94***
С. ХАНЯН
НЕУТИХАЮЩАЯ БОЛЬ..... ***101***
А.АЙРИЯН
АРЦАХ – ИСТОЧНИК ВДОХНОВЕНИЯ..... ***110***
А. ДОЛУХАНЯН
ПРЕСС СЛУЖБА КАК МЕТОД ИНФОРМАЦИОННОЙ ПОЛИТИКИ ГОСУДАРСТВА (НА ПРИМЕРЕ АПРЕЛЬСКИХ ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ)..... ***116***
Г. ЛАЛАЯН
ГУРГЕН ГАБРИЕЛЯН И АРЦАХСКОЕ ДВИЖЕНИЕ..... ***127***
Т.СОГОМОНЯН
СОВРЕМЕННЫЕ И КЛАССИЧЕСКИЕ ИНТЕРПРЕТАЦИИ РОМАНА «ЕРКИР НАИРИ» ЕГИШЕ ЧАРЕНЦА..... ***136***

З. САРАДЖЯН
*АРМЯНИН И АРМЯНСТВО В ПОЛЕ ЗРЕНИЯ АЗЕРБАЙДЖАНСКОГО ПИСАТЕЛЯ: ПРАВИЛЬНЫЙ ВЗГЛЯД НА РЕАЛЬНОСТЬ..... **147***

ИНОСТРАННЫЙ ЯЗЫК

И. АКОПЯН
*ФРАЗЕОЛОГИЗМЫ С ЗООНИМНЫМИ КОМПОНЕНТАМИ «КОШКА/ԿԱՏՈՒ» И «СОБАКА/ՇՈՒՆ» В РУССКОЙ И АРМЯНСКОЙ ЯЗЫКОВЫХ КАРТИНАХ МИРА..... **158***
Н. АВАКЯН
*О ВЛИЯНИИ РУССКОЙ КУЛЬТУРЫ НА ТВОРЧЕСТВО ВИРДЖИНИИ ВУЛЬФ И КЭТРИН МЭНСФИЛД (ВЕЛИКОБРИТАНИЯ)..... **168***
Н.МИНАСЯН
*КОНФЛИКТ КАК ОДИН ИЗ ПРИЕМОВ ИНТЕРПРЕТАЦИИ ХУДОЖЕСТВЕННОЙ ЛИТЕРАТУРЫ..... **176***
Г. ОСИПЯН
*БИЛИНГВИЗМ И ДИГЛОССИЯ КАК ОСНОВНЫЕ ЯВЛЕНИЯ В ТЕОРИИ ЯЗЫКОВЫХ КОНТАКТОВ И ИХ ВЛИЯНИЕ НА ПРОЦЕСС ОБУЧЕНИЯ ШКОЛЬНИКОВ..... **183***
В.ГАБРИЕЛЯН
*ПУНКТУАЦИЯ В АНГЛИЙСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ **192***
А.АРУТЮНЯН
*О РАЗВИТИИ НЕКОТОРЫХ СТРАТЕГИИЙ И ПРИЁМОВ УСТНОГО ПЕРЕВОДА..... **205***

НВП И ФИЗИЧЕСКАЯ КУЛЬТУРА

С.АЙРАПЕТЯН, А.АЙРАПЕТЯН ***215***
*МНЕНИЯ СПЕЦИАЛИСТОВ О ЗНАЧИМОСТИ РАЗМИНКИ..*****.....**
А. ФИРЯН
*САМОРЕАЛИЗАЦИЯ И ПСИХОЛОГИЧЕСКАЯ УСТОЙЧИВОСТЬ ЛИЧНОСТИ В ПРИГРАНИЧНОЙ ЗОНЕ..... **231***
Б. ЕРИЦЯН
*МЕТОДИКА ОЦЕНКИ ВОЕННО-ПРИКЛАДНЫХ НАВЫКОВ КУРСАНТОВ СОПЕРОВ..... **237***

ИЗОБРАЗИТЕЛЬНОЕ ИСКУССТВО

М.ГАЛАЯНЦ
*ПРОБЛЕМА ИНТЕГРИРОВАННОГО ОБУЧЕНИЯ ИЗОБРАЗИТЕЛЬНОМУ ИСКУССТВУ В ШКОЛЕ..... **237***

ПСИХОЛОГИЯ

В.ЯРАМИШЯН
*НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ ПОВЫШЕНИЯ УРОВНЯ УЧЕБНОЙ МОТИВАЦИИ У СТУДЕНТОВ..... **244***
Г. АЙРАПЕТЯН
ТРЕВОЖНОСТЬ КАК ЭМОЦИОНАЛЬНОЕ ЯВЛЕНИЕ У ***253***

ПОДРОСТКОВ.....
А. АВАНЕСЯН
ФУНКЦИИ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИХ ТРЕНИНГОВ В ПСИХОКОРРЕКЦИОННЫХ РАБОТАХ 262

ИСТОРИЯ

Н.САРУМЯН
ЛИШЕНИЕ ИМУЩЕСТВА АРМЯН: ТУРЕЦКИЙ ПРОЦЕСС..... 271
А.ХАЧАТРЯН
БОРЬБА НКАО ЗА ВЫХОД ИЗ СОСТАВА АЗЕРБАЙДЖАНА. ИСТОРИЧЕСКИЙ ЭКСКУРС К ТРЕБОВАНИЯМ АРМЯН АРЦАХА 1945-1991ГГ..... 283

ПОЛИТОЛОГИЯ

А. АБРАМЯН
ИСТОРИЧЕСКОЕ МЕСТО КАРАБАХСКИХ МЕЛИКСТВ В СОХРАНЕНИИ ПРЕЕМСТВЕННОСТИ ПОЛИТИЧЕСКОЙ ЗРЕЛОСТИ АРМЯНСКОГО НАРОДА..... 297
Г. ПАШАЯН, Л. БАЛАЯН
ОБУЧЕНИЕ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА И ИСТОРИИ АРМЯНСКОГО ВОЕННОГО ИСКУССТВА, КАК КЛЮЧЕВОЙ ФАКТОР ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ..... 304
Е. БОБКОВА
ПРАКТИКИ РЕАЛИЗАЦИИ СОЦИАЛЬНО-КОНВЕНЦИОНАЛЬНОГО МЕХАНИЗМА УСТОЙЧИВОСТИ СОЦИУМА В УСЛОВИЯХ НЕПРИЗНАННОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ..... 315
Е.ЕВСТИГНЕЕВА
ПОЛИТИЧЕСКАЯ МЕДИАЦИЯ СОВРЕМЕННОГО ОБЩЕСТВА РЕСПУБЛИКИ МОЛДОВА КАК РЕСУРС ЭФФЕКТИВНОЙ ПОЛИТИЧЕСКОЙ СОЦИАЛИЗАЦИИ..... 324

ЮРИСПРУДЕНЦИЯ

Г.АРУТЮНЯН
ПРЕСТУПЛЕНИЯ ПРОТИВ ПРАВИЛ ВЕДЕНИЯ ВОЕННОЙ СЛУЖБЫ, ВЕДУЩИЕ К НЕУСТАВНЫМ ВЗАИМООТНОШЕНИЯМ И СПОСОБЫ ИХ ПРЕДОТВРАЩЕНИЯ..... 334

ЭКОНОМИКА

Т.МАНАСЕРЯН
ПЕРСПЕКТИВЫ УСИЛЕНИЯ АРЦАХСКИХ СЕЛ И РАЗВИТИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА..... 355
Р. МАНГАСАРЯН, Я. ЛАЛАЯН
ПРОБЛЕМЫ УЛУЧШЕНИЯ КАЧЕСТВА ЖИЗНИ В АР..... 370
Л.БЕГЛАРЯН
ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ НАЛОГОВОГО АДМИНИСТРИРОВАНИЯ В РА И ПУТИ ЕГО УЛУЧШЕНИЯ..... 385
А. АЛЕКСАНЯН
ПРОБЛЕМЫ ЗАПУСКА МЕХАНИЗМА СЕКЮРИТИЗАЦИИ АКТИВОВ 398

В АРМЕНИИ И В АРЦАХЕ.....
Г.САРГСЯН
АНАЛИЗ ЛИКВИДНОСТИ КАК ИНСТРУМЕНТ ФИНАНСОВОГО УПРАВЛЕНИЯ ПРЕДПРИЯТИЯ..... 408
Ш.АСРЯН
СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ В ВОПРОСАХ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ АРЦАЙСКОЙ РЕСПУБЛИКИ..... 419
С. АСРЯН
КЛЮЧЕВЫЕ ВОПРОСЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ..... 431
М.МИНАСЯН
ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ РАЗВИТИЯ ПРОМЫШЛЕННОЙ ПОЛИТИКИ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ..... 443

CONTENTS

M.ARZAKANYAN
*THE PHILOSOPHIST TZOLAK G. ARZAKANYAN..... **16***

ARMENIAN LANGUAGE

L. KHACHATRYAN
*THE GENERALIZING FUNCTION OF GRAMMATICAL PARTICLES (BASED ON OLD ARMENIAN MATERIAL)..... **20***
TS. HASRATYAN
*ABOUT TEACHING SOME INDEFINTE FORMS..... **31***
S.MINASYAN
*TYPES OF STRUCTERS WITH VERBAL AFFIXES V(A/E) CN (ASHOT ABRAHAMYAN -100)..... **38***
M. MIRUMYAN
*THE METHODS OF STUDYING THE ANALYTICAL TYPE OF WORD-FORMATION AT SECONDARY SCHOOL..... **50***
S. SAGHYAN
*A. ABRAHAMYAN'S CONTRIBUTION TO ARMENIAN HISTORICAL LINGUISTICS..... **59***
V.SARKISYAN
*TRAINING OF MORPHO-SEMANTIC FIELDS OF LEXEM..... **69***

LITERATURE

Z.ARAKELYAN-BALAYAN
*THE MONUMENTAL FOLKLORISTICAL RESEARCH: ARMEN SARKISYAN'S "THE FOLKLORE OF ARTSAKH" BOOK..... **78***
M. YAVRUMYAN
*THE ROLE OF COLLOQUIAL AND DIALECTIC WORDS IN SOKRAT KHANYAN'S POEMS..... **88***
S. KHACHATRYAN
*"I LOVE THE SUN-NOURISHED LANGUAGE OF MY ARMENIA" OF ARTSAKH IN THE WORK "IT'S KARABAKH" BY VAZGEN OVYAN..... **94***
S. KHANYAN
*UNCEASING PAIN **101***
A.HAYRIYAN
*ARTSAKH IS THE SOURCE OF INSPIRATION..... **110***
A. DOLUKHANYAN
*MEDIA SERVICE AS A METHOD OF INFORMATION POLICY OF THE STATE (ON THE EXAMPLE OF APRIL MILITARY ACTIONS)..... **116***
G. LALAYAN
*GURGEN GABRIELYAN AND ARTSAKH LIBERATION STRUGGLE..... **127***
T. SOGHOMONYAN
*THE CLASSICAL AND MODERN INTERPRETATIONS OF "YERKIR NAIRI" NOVEL OF YEGHISHE CHARENTS..... **136***
Z.SARAJYAN
*THE ARMENIAN AND ARMENIANITY IN THE FIELD OF VIEW OF AZERBAIJANI WRITER: A TRUE LOOK AT THE REALITY..... **147***

FOREIGN LANGUAGES

I. HAKOBYAN
*PHRASEOLOGICAL UNITS WITH ZOONYM COMPONENTS «/КОШКА/ԿԱՏՈՒ» AND «/СОБАКА/ՇՈՒՆ» IN RUSSIAN AND ARMENIAN LANGUAGE PICTURE OF THE WORLD..... **158***
N.AVAGYAN
*ON THE INFLUENCE OF RUSSIAN CULTURE ON THE OEUVRE OF VIRGINIA WOOLF AND CATHERINE MANSFIELD (UK)..... **168***
N. MINASYAN
*CONFLICT AS ONE OF THE INTERPRETATION TECHNIQUES IN FICTION..... **176***
G. HOVSEPYAN
*BILINGUALISM AND DIGLOSIA US A MAIN LINGUISTIC PHENOMENS OF LANGUAGE CONTACT AND THEIR INGUENCE ON LEARNING PROCESS OF ARMENY SCHOOLCHILDREN..... **183***
V. GABRIELYAN
*PUNCTUATION IN THE ENGLISH AND ARMENIAN LANGUAGES..... **192***
A. HARUTYUNYAN
*ON THE DEVELOPMENT OF SOME STRATEGIES AND TECHNIQUES OF ORAL TRANSLATION..... **205***

IMT & PHYSICAL CULTURE

S.HAYRAPETYAN, A.HAYRAPETYAN
*OPINIONS OF SPECIALISTS ON THE IMPORTANCE OF WARM-UP..... **215***
A.FIRYAN
*PERSON'S SELF-ESTEEM AND PSYCHOLOGICAL STABILITY IN THE BORDER ZONE..... **220***
B. YERITSYAN
*METHODOLOGY OF MILITARY APPLIED SKILLS ASSESSMENT OF SAPPER CADETS..... **231***

FINE ARTS

M.GALAYANTS
*THE PROBLEM OF INTEGRATED EDUCATION IN FINE ARTS AT SCHOOL..... **237***

PSYCHOLOGY

V.YARAMISHYAN
*SOME PSYCHOLOGICAL FACTORS OF INCREASING THE LEVEL OF STUDENTS' MOTIVATION IN EDUCATION..... **244***
G. HAYRAPETYAN
*ANXIETY AS EN EMOTIONAL PHENOMENON AMONG THE TEENAGERS..... **253***
A. AVANESYAN
*THE FUNCTIONS OF THE SOCIO-PSYCHOLOGICAL TRAININGS IN PSYCHOLOGICAL WORKS..... **262***

HISTORY

N. SARUMYAN
DEPRIVATION OF ARMENIAN PROPERTY: TURKISH PROCESS..... ***271***
A.KHACHATRYAN
THE STRUGGLE OF THE SELF-GOVERNING REGION OF NAGORNO-KARABAKH TO WITHDRAW FROM AZERBAIJAN.
HISTORICAL REVIEW OF SUBMITTED STATEMENTS OF ARTSAKH ARMENIANS.(1945-1991 YEARS)..... ***283***

POLITICAL SCIENCE

A.ABRAHAMYAN
THE HISTORICAL PLACE OF THE KARABAKH MELIKS MAINTAINING THE CONTINUITY OF THE ARMENIAN PEOPLE'S POLITICAL MATURITY..... ***297***
H. PASHAYAN, L. BALAYAN
TRAINING THE KARABAKH CONFLICT AND THE HISTORY OF THE ARMENIAN MILITARY ART AS A KEY FACTOR FOR SECURITY ENSURING..... ***304***
E. BOBKOVA
PRACTICES OF IMPLEMENTING THE SOCIAL-CONVENTIONAL DEVICE (MECHANISM) OF SOCIAL SUSTAINABILITY IN CONDITIONS OF UNRECOGNIZED STATEHOOD..... ***315***
E.EVSTIGNEEVA
POLITICAL MEDIATION OF THE MODERN SOCIETY OF THE REPUBLIC OF MOLDOVA AS A RESOURCE FOR EFFECTIVE POLITICAL SOCIALIZATION..... ***324***

JURISPRUDENCE

G. HARUTYUNYAN
CRIMES AGAINST THE RULES OF MAINTAINING A MILITARY SERVICE LEADING TO UNCERTAIN RELATIONSHIPS AND METHODS OF ITS PREVENTION ***334***

ECONOMY

T. MANASERYAN
PROSPECTS FOR ARTSAKH'S AGRICULTURAL DEVELOPMENT AND STRENGTHENING VILLAGES..... ***355***
R. MANGASARYAN , YA. LALAYAN
PROBLEMS OF IMPROVING THE QUALITY OF LIFE IN AR..... ***370***
L. BEGLARYAN
ASSESSING THE EFFICIENCY OF TAX ADMINISTRATION IN RA AND WAYS OF ITS IMPROVMENT..... ***385***
A.ALEKSANYAN
PROBLEMS OF STARTING THE ASSETS SECURITIZATION MECHANISM IN ARMENIA AND ARTSAKH..... ***398***
G.SARGSYAN
THE ANALYSIS OF LIQUIDITY AS A TOOL FOR THE FINANCIAL MANAGEMENT OF THE ORGANIZATION..... ***408***

SH.ASRYAN
THE CURRENT TRENDS IN THE ECONOMIC SECURITY ISSUES OF THE REPUBLIC OF ARTSAKH ***419***
S. ASRYAN
KEY ISSUES OF THE SOCIO-ECONOMIC DEVELOPMENT OF THE REPUBLIC OF ARTSAKH ***431***
M.MINASYAN
THE MAIN DIRECTIONS OF THE DEVELOPMENT OF INDUSTRIAL POLICY IN ARTSAKH REPUBLIC..... ***443***

Марина АРЗАКАНЯН
главный научный сотрудник Института всеобщей истории Российской Академии наук, доктор исторических наук, профессор

ФИЛОСОФ ЦОЛАК ГЕВОРКОВИЧ АРЗАКАНЯН

Статья посвящена жизни и научному творчеству известного философа Цолака Геворковича Арзаканяна. В ней повествуется об основных направлениях деятельности ученого и его главных работах.
Ключевые слова: *Арзаканян, Армения, СССР, философия, вопросы философии, Кант, Гегель, иностранные языки, переводы, редактирование.*

Мой отец, Цолак Геворкович Арзаканян, родился в Ереване 1 августа 1917 года в семье владельца небольшой пекарни (бывшего пекаря Каталикоса всех армян Мкртыча Айрика Химяна) Геворка Арзаканяна. Геворк очень рано овдовел, поэтому его четверых детей – Аракс, Римму, Цолака и Константина, - воспитывала сначала одна, а потом вторая мачеха. Мой дед не остался в стороне от бурных событий 1918 года. Когда турецкие войска вторглись в Восточную Армению, он вступил в ополчение, чтобы защищать родную землю. Геворк Арзаканян в мае 1918 года участвовал в Сардарапатском сражении, когда армянам удалось остановить натиск турок. В Ереване в доме моего двоюродного брата Геворка Арзаканяна хранится боевая сабля деда.

По окончании средней школы отец начал трудовую деятельность, освоил рабочие специальности, в частности электрика. С детства он очень любил музыку, и армянскую народную, и мировую классическую, и сам играл в самодеятельном оркестре на мандолине. Будущий философ много читал на армянском и русском языках, интересовался историей, философией, искусством. Он мечтал продолжить образование, стать ученым. И вот в двадцать лет Цолак приезжает в Москву и поступает в выделенный в 1931 году из Московского государственного университета (МГУ) Московский институт философии, литературы и истории (МИФЛИ, чаще называемый ИФЛИ). Он учится сначала на философском, а потом на историческом факультете. В ИФЛИ преподавали лучшие профессора СССР, сформировавшиеся как исследователи и наставники студентов еще в дореволюционной России. Выпускники института получали прекрасное гуманитарное образование. Отец учится с большим усердием, рвением и удовольствием, совершенствует свой русский язык и проявляет большие способности к древним и современным европейским языкам, прежде всего немецкому. Он интересуется историей, древней и немецкой классической философией.

В 1941 году начинается Великая Отечественная война. Почти весь курс Цолака уходит на фронт. Все мужчины записались добровольцами. В бою под Смоленском отец получил тяжелейшее осколочное ранение в голову, потерял сознание и пришел в себя уже в немецком плену. Начались бесконечные мытарства, сначала на родной советской, а затем и на немецкой земле. В конце войны его как особо неблагонадежного заключают в концентрационный лагерь

Дахау близ Мюнхена. Освободили лагерь американцы. Мюнхен оказался в американской зоне оккупации. Советские пленные могли остаться. Но Цолак вместе с другими соотечественниками возвращается в Москву. ИФЛИ во время войны опять слили с МГУ. На бывших военнопленных смотрели косо, с недоверием. Отцу позволили доучиться. В 1947 году он получает диплом философского факультета МГУ. Однако на работу его никуда не брали.

Опять пришло время испытаний. Одинадцать долгих лет отец был вынужден довольствоваться лишь эпизодическими заработками. Главным образом выпускник МГУ редактировал самые различные тексты. Цолак не отказывался и от работы «машинистки», перепечатывая то, что писали другие. Иногда он даже разгружал вагоны. Но это время не пропало для него даром. Все свободные дни Цолак проводил в Библиотеке имени В.И.Ленина – от ее открытия до закрытия. Он читал, читал и читал на русском и европейских языках книги по философии, истории, культуре. Обладая прекрасной памятью и исключительными способностями к иностранным языкам, отец постепенно превращался в человека энциклопедических знаний. Именно в конце 40-х – начале 50-х годов он стал писать книгу на русском языке о предмете и ключевых проблемах философии. Впоследствии ученый много раз возвращался к этому тексту. Но закончить его, начитывать к теме современную литературу просто не находил времени. В результате книга так и осталась незавершенной. Ее текст можно назвать огромным «наброском», «очерками», просто «изложенными размышлениями» к поистине необъятной теме. В 2017 году эту объемную книгу в том виде, в котором ее оставил отец, опубликовал в Ереване к 100-летию со дня его рождения на собственные средства мой зять Арташес Тер-Оганесян.[1] За это я приношу ему огромную благодарность.

Судьбу многих людей СССР решил XX съезд КПСС и последовавшая вскоре за ним «оттепель». В 1958 году Цолака, наконец, приглашают на постоянную работу – заведующим редакции «Вестника истории мировой культуры». К сожалению, это интересное периодическое издание просуществовало всего несколько лет. Однако после его закрытия в 1962 году отца сразу берут редактором отдела истории философии и философии за рубежом журнала «Вопросы философии». Он проработал в нем вплоть до выхода на пенсию в 1991 году. В Москве, к сожалению, его трудно произносимое для русских имя, да и отчество, часто коверкали. Отцу, конечно, это не нравилось. И он сам принял решение, чтобы его называли простым, но все-таки армянским именем – Армен. Так, именно в «Вопросах философии» за ним окончательно утвердилось и второе имя. Теперь лишь немногие продолжали называть его Цолак Геворкович. В основном же звали Армен Георгиевич. Сотрудники журнала отмечали, что он – прекрасный редактор, тщательно и вдумчиво работающий с чужими текстами, с уважением относящийся к любому автору.

Как только отец устроился на постоянную работу, он сразу начал и собственную научную деятельность. Его первые публикации состоялись в «Вестнике истории мировой культуры».[2] Затем Цолак Геворкович стал постоянным автором журнала, в котором работал. На его страницах он в течение

---

[1] ***Арзаканян Ц.Г.*** *Вопросы философии. Составитель А. Тер-Оганесян. Ереван, 2017.*

[2] *См. например:* ***Арзаканян Ц.Г.*** *Культура и цивилизация: проблемы теории и истории / Вестник истории мировой культуры. 1961. № 3.*

трети века публиковал статьи на самые разные сюжеты.[1] Отца постоянно приглашали печататься и в других периодических изданиях и коллективных трудах.[2] В 60-е годы он стал одним из авторов «Краткого словаря по философии».[3] В то же время Цолака Геворковича включили в коллектив ученых, проводивших очень важную научно-организационную работу. Вместе со своими коллегами отец принял участие в разработке библиотечно-библиографической классификации (ББК), которая впоследствии была заложена в основу составления систематических каталогов всех отечественных научных библиотек. ББК была опубликована в 25-ти томах. Цолак Геворкович трудился над томами по философии и истории.

Как квалифицированного редактора, владеющего современными европейскими и древними языками, человека энциклопедических знаний в области истории, философии, литературы и искусства, Цолака Геворковича часто приглашали в качестве научного редактора переведенных на русский язык трудов иностранных ученых. Назову хотя бы книгу известного французского искусствоведа Жермена Базена «История истории искусства. От Вазари до наших дней»,[4] сборник материалов западногерманских авторов «Философия техники ФРГ»,[5] труд немецкого историка искусства и культуры Ханса Бельтинга «Образ и культ. История образа до эпохи искусства»,[6] над редактированием перевода которой отец работал в последние годы жизни. Он и сам часто делал переводы с немецкого и английского языков исследований известных зарубежных мыслителей.[7]

---

[1] *См. например:* ***Арзаканян Ц.Г.*** *К вопросу о становлении истории философии как науки / Вопросы философии. 1962. № 2; Он же. Обсуждение вопросов историко-философской науки / Вопросы философии. 1971. № 6; Он же (в соавторстве с А.А.Яковлевым). Фрагменты из «Научной теории культуры» Б.Малиновского / Вопросы философии. 1983. № 2; Он же. Наш журнал и его читатель / Вопросы философии. 1985. № 10; Он же. Философская мысль и философский журнал / Вопросы философии. 1987. № 7.*

[2] *С.:* ***Арзаканян Ц.Г.*** *Трактовка гуманизма в современных буржуазных концепциях культуры и цивилизации / От Эразма Роттердамского до Бертрана Рассела. Проблемы современного буржуазного гуманизма и свободомыслия. М., 1969; Он же. Проблемы преемственной связи Возрождения с «эпохой научной революции» / Вопросы истории естествознания и техники. 1984. № 4; Он же (в соавторстве с В.Г.Гороховым). Философия техники как новая область знания / Вестник высшей школы. 1990. № 4; Он же. Была ли философская дискуссия 1947 года философской? / Отечественная философия: опыт, проблемы, перспективы исследования. М., 1991. Выпуск 6.*

[3] *Краткий словарь по философии. М., 1966; 1970.*

[4] ***Базен Ж****. История истории искусства. От Вазари до наших дней. Общая редакция и послесловие Ц.Г.Арзаканяна. М., 1995.*

[5] *Философия техники ФРГ. Переводы, составление и предисловие Ц.Г.Арзаканяна и В.Г.Горохова. М., 1989.*

[6] ***Бельтинг Х****. Образ и культ. История образа до эпохи искусства. Редакция перевода Ц.Г.Арзаканяна. М., 2002.*

[7] ***Фихте И.Г****. К вечному миру. Философский проект Иммануила Канта. Перевод Ц.Г.Арзаканяна / Трактаты о вечном мире. М., 1963; Гегель Г.В.Ф. Письма. Перевод Ц.Г.Арзаканяна и А.В.Михайлова / Гегель Г.В.Ф. Работы разных лет. М., 1971; 1973. Т.2; Лукач Д. Обоснование и защита объективного идеализма. Перевод Ц.Г.Арзаканяна / Лукач Д. Молодой Гегель и проблемы капиталистического общества. М., 1987; Массинг О. Господство. Перевод и примечания Ц.Г.Арзаканяна / Полис. 1991. № 6;*

Самым важным направлением в научной творческой деятельности Цолака Геворковича была работа над философским наследием выдающегося немецкого философа Иммануила Канта. Он трудился над ним всю жизнь – редактировал переводы, делал их сверки, сам переводил отдельные фрагменты и малые произведения, писал комментарии, предисловия и послесловия, при переизданиях дорабатывал уже написанные им же тексты. Начало этой огромной трудоемкой работы отца было приурочено к подготовке (впервые в СССР) шеститомного издания трудов великого немецкого мыслителя.[1]

Центральное место в работе Цолака Геворковича над наследием Иммануила Канта занимало исследование главного труда немецкого философа «Критика чистого разума», опубликованного в Советском Союзе в первый раз в третьем томе шеститомника.[2] Это был перевод 1915 года известного русского ученого Н.О. Лосского. Отец совместно с М.И.Иткиным сверил и отредактировал перевод, после чего сам написал к тексту примечания. С тех пор это издание «Критики чистого разума» считается классическим. В 1994 году том был вновь напечатан.[3] Начиная с 2006 года, его постоянно переиздает московское издательство «Эксмо».[4]

Еще в 80-е годы Цолак Геворкович начал трудиться над редактированием перевода «Критики чистого разума» на армянский язык, сделанного Вараздатом Терояном. Работа шла много лет. Усилиями дочери переводчика Нунэ Вараздатовны эта книга увидела свет в Ереване в 2010 году.

Отца не стало в Москве 31 января 2003 года. Я перевезла его прах на родную землю, в Армению. Он упокоился на родовом месте нашей семьи рядом со своим отцом Геворком, братом Константином и сестрой Аракс на ереванском кладбище Токмах.

Верю, что еще долгие годы читатели будут брать в руки книги, над которыми работал Цолак Геворкович Арзаканян. Таким образом сохранится память и о нем самом.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, փ.գ.դ., Ա.Ս Մանասյանը:

Грунвальд А. От книги к компьютеру: эволюция или революция? Перевод Ц.Г.Арзаканяна / Общество и книга: от Гутенберга до Интернета. М., 2000.

[1] *См.: **Кант И.** Рецензия на книгу И.Шульца «Опыт руководства к учению о нравственности». Перевод Ц.Г.Арзаканяна / Кант И. Сочинения. Т.4. Ч.1. М., 1964; Кант И. Метафизика нравов. Перевод Ц.Г.Арзаканяна и С.Я.Шейнман-Топштейн / Кант И. Сочинения. Т.4.Ч.2. М., 1965; Кант И. Ответ на вопрос: что такое Просвещение? Перевод Ц.Г.Арзаканяна / Кант И. Сочинения. Т.6. М., 1966; Кант И. Рецензия на книгу И.Г.Гердера «Идеи философии истории». Перевод Ц.Г.Арзаканяна / Кант И. Сочинения. Т.6. М.,1966; Кант И. К вечному миру. Спор факультетов. Перевод Ц.Г.Арзаканяна / Кант И. Сочинения. Т.6. М.,1966; Кант И. Об основанном на априорных принципах переходе от метафизических начал естествознания к физике. Перевод Ц.Г.Арзаканяна / Кант И. Сочинения. Т.6. М., 1966; Кант И. Сочинения. Т.6. Примечания Ц.Г.Арзаканяна и Т.И.Ойзермана. М., 1966.*

[2] ***Кант И**. Критика чистого разума / Сочинения. Т.3. М., 1964.*

[3] ***Кант И**. Критика чистого разума. М., 1994.*

[4] ***Кант И**. Критика чистого разума. Перевод с немецого Н.О.Лосского. Сверен и отредактирован Ц.Г.Арзаканяном, М.И.Иткиным. Примечания Ц.Г.Арзаканяна. М., 2006; 2007; 2014; 2016.*

ՀՏԴ 809.198.1
Հայոց լեզու

Լալիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ
բ.գ.դ., պրոֆեսոր
Խ.Աբովյանի անվ.ՀՊՄՀ Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱՑՆՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ
(Հին հայերենի նյութի հիման վրա)

Լեզվամտածողության մեջ կարևոր պայման է փիլիսոփայական ընդհանրացման հանգամանքը, որ կատարվում է դեդուկցիայի մեթոդով՝ ընդհանուր փաստերից գալով եզակիին:
Լեզվական համակարգում ընդհանրացնող նշանակություն ունեն քերականական երկրորդական ձևույթները, որոնք ստեղծվում են հարացուցային ձևերում՝ առաջացնելով բառաձևեր. վերջիններս իրացվում են շարահյուսական մակարդակում: Այդ դերով հանդես են գալիս գոյականի հոլովական և թվակազմական ցուցիչները, ինչպես նաև բայական քերականական մասնիկները՝ դիմաթվային ցուցիչներ, դերբայական մասնիկներ և այլ կարգի ձևույթներ:
Ելնելով դեդուկցիայի հակադարձ դիտանկյունից՝ կարելի է ասել, որ եզակին ընդհանրացնում է համարժեք իմաստներ կրողների բազմությունը:
Բանալի բառեր՝ *լեզվամտածողություն, ընդհանրացում, կաղապարավորում, քերականական մասնիկ, հոլովամասնիկ, դիմաթվային մասնիկ, թվակազմական ցուցիչ, դերբայական մասնիկ, հիմքակազմիչ ձևույթ, դեդուկցիա:*

Л.Хачатрян

ОБОБЩАЮЩАЯ ФУНКЦИЯ ГРАММАТИЧЕСКИХ ЧАСТИЦ
/На материале древнеармянского языка/

В процессе языкового мышления важную роль играет фактор обобщения, который осуществляется методом дедукции, исходя из общих фактов к единственному.
В языковой системе обобщающую функцию имеют второстепенные частицы, которые формируются в парадигматических формах, порождая словоформы, которые реализуются на синтаксическом уровне. Такую роль имеют

падежные и числообразовательные частицы существительного и грамматические частицы глагола
/частицы лица, числа и причастных форм/.
Исходя из обратного аспекта дедукции, можно предполагать, что единственное обобщает множество, носящее эквивалентные значения.
***Ключевые слова**: языковое мышление, обобщение, моделирование, грамматические частицы, падежные частицы, частицы лица, частицы числа, частицы причастных форм, основообразовательный суффикс, дедукция.*

L. Khachatryan

THE GENERALIZING FUNCTION OF GRAMMATICAL PARTICLES
(Based on Old Armenian material)

The philosophical generalizing circumstance is an important clause in lingual thought. The philosophical generalizing circumstance is achieved through deductive method: the concrete singularity is deduced from general principles.
The grammatical secondary morphemes have generalizing meaning in the linguistic system. They are created in paradigmatic forms by producing word-forms which are used in syntax. The grammatical number and case indexes of noun, the grammatical particles of verb-number and person indexes, participle particles and other morphemes have generalizing role.
According to the deduction contrary law it can be said that the singular generalizes the integrity of equivalent meanings.
***Keywords**: lingual thought, generalizing, pattern-forming, grammatical particle, case inflexion, person-number particle, number index, participle particle, stem-forming particle, deduction.*

Աշխարհն անհատի գիտակցության մեջ իմաստավորված կերպով արտացոլվում է լեզվի նշանային համակարգի միջոցով. լեզվական նշանի բովանդակությունը, որքանով պայմանական, նույնքան էլ հասկանալի է տվյալ լեզվակիր հանրությանը։ Լեզվական նշաններ են՝ *բառը* (մասնակի նշան), *ձևույթը* (կիսանշան), որոնք իրացվում են խոսքում՝ նախադասության արտահայտության և բովանդակության պլաններում։ Այդ առումով նախադասությունը համարվում է լեզվական *լիանշան,* որի շրջանակներում հանդես են գալիս լեզվական մյուս բոլոր նշանները՝ միմյանց նկատմամբ ցուցաբերելով քերականական տարաբնույթ հարաբերություններ[1]։ Նախադասությունը լեզվական իմաստների կաղապարավորման բարձրագույն ձևն է, որ լիովին արտացոլում է լեզվամտածողության (գիտակցական գործունեության) բոլոր աստիճանները։

[1] *Տե՛ս* ***Кодухов В.Н.,*** *Общее языкознание, М., 2013, էջ 132.*

Փիլիսոփա Պ.Վ.Կոպնինը *լեզու* հասկացությունը սահմանում է որպես գիտելիքի ձև, որ գոյություն ունի նշանների համակարգի տեսքով: Այդ պատճառով էլ գիտելիքը միշտ հանդես է գալիս որևէ լեզվի տեսքով[1]:

Ինչպես նկատել է Ստ. Չեյզը, մտածողության բոլոր բարձրագույն մակարդակները կախված են լեզվից[2]: Այս դիտարկումը բխում է լեզվի և մտածողության փոխհարաբերության համատեքստում լեզվի առաջնային դերից: Այս տեսությունն է ընկած Սեպիր-Ուորֆի վարկածի հիմքում, որի համաձայն՝ մտածո- ղությունը կախված է լեզվից և պայմանավորված է լեզվով. այլ կերպ ասած՝ մարդկանց մտածողությունը, աշխարհայացքը և վարքականոնը պայմանավորված են լեզվի բովանդակությամբ, նրա կառուցվածքով ու բնույթով[3]:

Եթե ընդունենք լեզվի կառուցատիպով մտածողության կառուցվածքը որոշելու սկզբունքը, ապա կարող ենք ասել, որ լեզվի (տվյալ դեպքում՝ հին հայերենի) կառուցվածքի՝ մասնավորապես նախադասության գծային պլանի, ինչպես նաև բառաձևերի ձևական կաղապարների քննությունը բացահայտում է մտածողության որոշակի հատկանիշներ, որոնք պայմանավորված են մտածողության և աշխարհի լեզվական կաղապարավորման հարաբերակցության աստիճանով:

Լեզվամտածողության մեջ այդ կարգի կարևոր պայման է *ընդհանրացման հանգամանքը,* որ նպաստում է լեզվական միջոցների տնտեսմանը. լեզվական եզակի միավորը կարող է ընդհանրացնել բառաշարքեր՝ արտահայտելով այդ շարքերին հատուկ համարժեք քերականական իմաստներ: Փիլիսոփայական ընդհանրացումը կատարվում է դեդուկցիայի մեթոդով՝ ընդհանուր փաստերից գալով եզակիին: Մյուս կողմից՝ համաձայն ինդուկցիայի մեթոդի՝ եզակին ընդհանրացնում է իրենից դուրս գտնվող համարժեք իմաստներ կրողների բազմությունը:

Լեզվական համակարգում որոշակի միավորներ ունեն ընդհանրացնող նշանակություն, ինչպիսին են քերականական երկրորդական ձևույթները, որոնք ստեղծվում են հարացուցային ձևերում՝ առաջացնելով բառաձևեր. վերջիններս իրացվում են շարահյուսական մակարդակում: Բառաձևերի քերականական մասնիկներն ունեն լեզվական իմաստներն ընդհանրացնող նշանակություն:

---

[1] *Տե՛ս Проблемы теории познания и логики. Материалы к XIV Международному философскому конгрессу, вып. I, М., 1968, էջ 25.*

[2] *Տե՛ս B.L.Whorf, Language, Thought and Reality, Massachusets Institute of Technology, 1966, էջ VI.*

[3] *Տե՛ս* ***Բրուտյան Գ.****, Փիլիսոփայություն և լեզու, Եր., 1972, էջ 41-50: Տե՛ս նաև Лингвистический энциклопедический словарь, М., "Советская энциклопедия", 1990, էջ 443.*

Այդ դերով հանդես են գալիս հոլովական վերջավորությունները, դիմաթվային ցուցիչները, դերբայական մասնիկները և այլ կարգի ձևույթներ:

Հին հայերենի քերականական համակարգում ցույց տանք գոյականի հոլովական և թվակազմական ցուցիչների, ինչպես նաև բայական քերականական մասնիկների ընդհանրացնող գործառույթները:

Այսպես, երբ խոսում ենք գոյականի *հոլովական համակարգում* ներքին թեքման Ա հոլովիչի մասին և վկայում *ուսումն - ուսման, շարժումն - շարժման, ուսմունք – ուսմանց, շարժմունք – շարժմանց* ձևերը, դա նշանակում է, որ Ա ներքին թեքման հոլովիչը ընդհանրացնող նշանակություն ունի բոլոր այն բառերի դեպքում, որոնք վերջանում են – *ումն* բառակազմական ձևույթով: Ընդ որում, քերականական այդ երևույթը երկակի մեկնաբանություն ունի. այլ մոտեցումով կարող ենք ասել, որ – *ումն* ձևույթն ընդհանրացնող նշանակություն ունի. նրանով վերջացող բառերը ենթարկվում են Ա ներքին թեքման:

Փիլիսոփայական ընդհանրացման տեսանկյունից՝ բառակազմական տվյալ մասնիկը ընդհանրացնում է հոլովման տիպը (տվյալ դեպքում՝ Ա ներքին թեքումը), մյուս կողմից՝ հոլովման տիպը ընդհանրացնում է տվյալ մասնիկով կազմված բառերը (տվյալ դեպքում՝ *-ումն* մասնիկով բառերը):

Որպեսզի չստեղծվի այն տպավորությունը, որ մեկ հոլովատիպը ձգում է մեկ ձևույթով կազմված բառաշարքեր, նկատենք, որ գրաբարում Ա ներքին թեքման հոլովատիպն ընդհանրացնում է նաև *-ութիւն* վերջածանցով կազմված բառաշարքերը: Հմմտ. *ուրախութիւն – ուրախութեան, քաջութիւն - քաջութեան, ուրախութիւնք – ուրախութեանց, քաջութիւնք – քաջութեանց* և այլն: Հետևաբար, ինչպես Ա ներքին թեքումն ընդհանրացնում է *–ութիւն* ածանցով վերջացող բառաշարքերը, այնպես էլ –ութիւն ածանցն ընդհանրացնում է բոլոր համատիպ կազմությունները՝ ենթարկելով *Ա ներքին* թեքման:

Շարունակելով նույն հոլովման շրջանակներում ընդհանրացման դրսևորումները՝ կարելի է ցույց տալ այլ մասնիկներ ևս և բացահայտել նրանց ընդհանրացնող դերն ու նշանակությունը:

Հին հայերենում *–իկ* ածանցով (հատուկ անունների դեպքում՝ -իկ վերջնահնչյուններով) վերջացող բառերը նույնպես ենթարկվում են Ա ներքին թեքման. հետևաբար, *-իկ* մասնիկը (հնչյունախումբ) ընդհանրացնում է բառաշարքեր՝ դրանք ենթարկելով Ա ներքին թեքման, մյուս կողմից՝ Ա ներքին թեքումն ընդհանրացնում է բառերի որոշակի խումբ, որոնք վերջանում են –իկ ածանցով (հնչյունախումբ), ինչպես՝ *անդրանիկ - անդրանկան, Սաթենիկ - Սաթինկան, անդրանիկք – անդրանկաց* և այլն:

Հին հայերեում Ա ներքին թեքման ընդհանրացնող բնույթն այսքանով չի սահմանափակվում. *-ուստ, -ունդ, - ուրդ* ածանցներով բառերը դարձյալ ենթարկվում են Ա ներքին թեքման. այս ածանցներն ի մի

են բերում (ընդհանրացնում) այն բառերը, որոնք ենթարկվում են Ա ներքին թեքման, մյուս կողմից՝ Ա ներքին թեքումն ընդհանրացնում է այդ ածանցներով կազմված բառաշարքերը, ինչպես՝ *կորուստ - կորստեան, ծնունդ - ծննդեան, ժողովուրդ - ժողովրդեան* և այլն[1]:

Եթե հարցին մոտենանք լեզվափիլիսոփայական ընդհանրացման մեկ այլ դիտանկյունից, կարող ենք ասել, որ ձևական ցուցիչը ներառում է ընդհանրացման ավելի ընդարձակ շարքեր: Ելնելով Ա ներքին թեքումն ընդհանրացնող տարբեր ցուցիչներից՝ կարելի է տալ նաև այդ ցուցիչների համար ընդհանուր հնչյունական միավոր, որ իր հերթին ընդհանրացնում է գրեթե բոլոր մասնիկների ընդհանրացնող նշանակությունները (բացի -իկ, ուստ, ունդ, ուրդ մասնիկներից): Դա ընդհանրական *–մն* հնչյունախումբն է, որ ընդհանրացնում է բոլոր այն գոյականներին, որոնք ենթարկվում են Ա ներքին թեքման, մյուս կողմից՝ Ա ներքին թեքումն ընդհանրացնում է բոլոր այն գոյականներին, որոնք վերջանում են –մն հնչյունախմբով:

Դա նշանակում է, որ լեզվական, ինչպես նաև քերականական ընդհանրացումը բազմաշերտ դրսևորումներ ունի: Այսպես, եթե գրաբարում բոլոր այն բառերը, որոնք վերջանում են *-ումն, -ութիւն* ածանցներով, ենթարկվում են Ա ներքին թեքման, ապա այդ ածանցների ընդհանրական ցուցիչը՝ *–մն* հնչյունախումբը, իր հերթին դարձյալ ընդհանրացնում է բառաշարքեր, որոնք ենթարկվում են Ա ներքին թեքման, ինչպես՝ *այծեամն - այծեման, ատամն - ատաման, այծեմանք - այծեմանց, ատամունք – ատամանց* և այլն:

Դիտարկելով լեզվական և քերականական ընդհանրացման դրսևորումները՝ կարելի է եզրակացնել, որ քերականական կարգի մեկ կարգային անդամը (տվյալ դեպքում՝ սեռական հոլովը՝ Ա ներքին թեքման հոլովատիպով) ընդհանրացնում է տարբեր կառուցատիպերի բառեր (*-ումն, -ութիւն, -մն, -ուստ, -ուրդ, -ունդ, -իկ* ածանցներով), մյուս կողմից՝ տարբեր կառուցատիպի բառեր, ըստ կառուցվածքային ընդհանուր բաղադրիչի (ածանցի կամ մասնիկի) ընդհանրացնում են Ա ներքին թեքումը (ունենալով ընդհանուր առմիջուկային բաղադրիչներ)[2]:

---

[1] *Նկատի չունենք հոլովական շեղումները կամ հոլովական զուգաձևությունները, ինչպես՝ կորստի, ծննդոց, ժողովրդի – ժողովրդոց և այլն: Այս մասին տե՛ս Ա.Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 15:*

[2] *Ածանցների, ինչպես նաև հոլովամասնիկների և հոլովատիպերի ընդհանրացնող նշանակությունն առանձին քննության նյութ կարող է դառնալ, ուստի բավարարվենք՝ միայն մեկ հոլովատիպի ընդհանրացնող նշանակությունը դիտարկելով:*

Գոյականի թվակազմական մասնիկների ընդհանրացնող գործառույթը վերաբերում է քանակայնության գաղափար արտահայտող ցուցիչներին։

Թվի իմաստը քերականորեն արտահայտվում է ձևական ցուցիչների միջոցով, ընդ որում՝ հակադրության սկզբունքով. հակադրական հարաբերություն են կազմում եղած և չեղած մասնիկները։ Եզակի թվի իմաստն արտահայտվում է զրո ցուցիչով, որին հակադրվում է բառաձևի մասնիկը (ցուցիչը)՝ արժևորելով քանակայնության գաղափարը։

Հին հայերենում հոգնակի թվի իմաստն արտահայտում են որոշակի մասնիկներ, որոնք, բառաձևից անկախ, իմաստազուրկ ցուցիչներ են և քերականորեն իմաստավորվում են *արմատի* նկատմամբ հարաբերության շրջանակներում։

Հոգնակիության իմաստ արտահայտող ցուցիչները միավորում են ընդհանրական բառաշարքեր[1]։ Այսպես՝ հին հայերենում –ք մասնիկը հոգնակիակերտ ցուցիչ է. այն՝ իբրև լեզվական նշան, արտահայտում է առարկայի քանակայնության գաղափար։ -Ք մասնիկն ընդհանուր է գոյականների ճնշող մասի համար՝ ընդհանրացնելով քանակայնության իմաստ արտահայտող բառաշարքեր՝ հոգնակի թվի նշանակությամբ, ինչպես՝ *տիտանք, արքայք, դստերք, որդիք, այգիք, պատանիք, աւուրք, դիք, աստուածք* և այլն։ -Ք մասնիկն ընդհանրական նշանակություն ունի նաև հոգնակիակերտ այն բաղադրյալ մասնիկների համար, որոնք իրենց կառուցվածքում ունեն –ք ձևույթը. –անք (ականք), -ունք (ձկունք), -ինք (անձինք), -այք (կանայք) , -ունք (եպիսկոպոսունք) և այլն[2]։

Քերականական իմաստների ընդհանրացնող նշանակություն ունեն նաև *բայի դիմաթվային մասնիկները,* որ կարելի է ցույց տալ ըստ բայի *ներկա և անցյալ ժամանակների* խոնարհման վերջավորությունների և ըստ ներգործաձև ու կրավորաձև խոնարհման տիպերի։

Բայի ներկա ժամանակի դիմաթվային մասնիկներն ընդհանրացնում են բայով արտահայտված գործողություն կատարողի դեմքը, թիվը, ինչպես նաև գործողության ժամանակային մեկնակետը։

---

[1] *Որոշ մասնիկների ընդհանրացնող նշանակությունները որոշակի սահմանափակումներ ունեն, քանի որ տվյալ մասնիկներից յուրաքանչյուրով որոշակի բառաշարքեր են հոգնակիության գաղափար արտահայտում։ Հմմտ. -ք (կաքաւ – կաքաւք), -ական (գուսան – գուսանական), -ան (ձի – ձիան), -անի (աւագ – աւագանի), -եան (բերդ – բերդեան), -նեար (նաւակ – նաւկնեար), -որեայ // -որայ (արտ – արտորեայ, վան – վանորայ), -տի // -ոտի (մանուկ - մանկտի, ոսկոր – ոսկրոտի) և այլն (Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 20, Լ.Խաչատրյան, Գ.Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Եր., 2004, էջ 24-25)։*

[2] *-Ունք մասնիկը ընդհանրացնում է հավաքականության իմաստ արտահայտող բառաշարքեր, ինչպես՝ անձունք, քրտունք, գառունք, մանկունք, խաշունք և այլն։*

Այսպես, ներկա ժամանակի եզակի և հոգնակի թվի դիմաթվային վերջավորությունները՝ *-մ, -ս, -յ, -մք, -յք, -ն,* ընդհանուր են բոլոր՝ ներգործաձև և կրավորաձև խոնարհումների համար և ընդհանրացնում են բոլոր բայերի ներկա ժամանակի դիմաթվային քերականական իմաստները: Դիմաթվային այս ցուցիչները համապատասխան խոնարհիչների (լծորդությունների) հետ կազմում են խոնարհման վերջավորություններ, որոնք ընդհանուր են բոլոր լծորդությունների բոլոր բայերի համար:

Այսպես՝ ներկա ժամանակի՝ *խաղամ, խաղաս, խաղայ, խաղամք, խաղայք, խաղան* բայաձևերի խոնարհման վերջավորությունները (-ամ, -աս, -այ, -ամք, -այք, -ան) ընդհանրական են Ա լծորդության բոլոր բայերի համար, իսկ դիմաթվային վերջավորությունները (-մ, -ս, -յ, -մք, -յք, -ն) ընդհանրական են ինչպես Ա խոնարհման, այնպես էլ մյուս խոնարհումների (լծորդությունների) համար:

Հմմտ. *-եմ, -ես, եյ (է), -եմք, -եյք (էք), -են* վերջավորությունները՝ Ե խոնարհման բայերի համար (գրեմ…, գրեմք…), *-իմ, -իս, -ի, իմք-,-իք ,-ին* վերջավորությունները՝ Ի խոնարհման բայերի համար (բազմիմ…, բազմիմք)[1], *-ում, -ուս, -ու, -ումք, -ուք, -ուն*՝ վերջավորությունները՝ Ու լծորդության բայերի համար (կիզում…, կիզումք):

Ներկա ժամանակի բայաձևերի արտահայտության դիտվածքում առանձնացվում են երկու կարգի ընդհանրացնող մասնիկներ՝ խոնարհման մասնիկներ, որոնք ընդհանրական են նույն լծորդության բոլոր բայերի համար, և դիմաթվային վերջավորություններ, որոնք ընդհանրական են բոլոր բայերի համար՝ անկախ լծորդությունից:

Արտահայտության դիտվածքում ընդհանրացնող մասնիկներն արտահայտում են քերականական իմաստների ընդհանրական նշանակություններ:

Անցյալ ժամանակի (անցյալ կատարյալի) բայաձևերի մասնիկների ընդհանրացնող նշանակությունը կարելի է տարբերակել ըստ ներգործաձև և կրավորաձև խոնարհման տիպերի:

Ներգործաձև խոնարհման բայերի արտահայտության դիտվածքում ընդհանրացնող նշանակություն ունեն *-ի, եր,* - Ø (զրո)*, -աք, -էք (-իք), -ին* դիմաթվային վերջավորությունները:

Փիլիսոփայական ընդհանրացման տեսանկյունից՝ լեզվական կաղապարավորումը կատարվում է դիմաթվային մասնիկների միջոցով, որոնցից յուրաքանչյուրը որոշակի քերականական իմաստ է ընդհանրացնում: Այսպես՝ -ի մասնիկն ընդհանրանցում է ներգործաձև խոնարհման եզակի թվի առաջին դեմքի քերականական իմաստը (գրեց-ի,

---

[1] *Ի լծորդության դիմաթվային մասնիկներն ընդհանուր են Ե լծորդության ներգործական սեռի այն բայերի համար, որոնք կարող են խոնարհվել նաև կրավորաձև:*

խաղաց-ի, կիզ-ի), -եր մասնիկը՝ երկրորդ դեմքի իմաստը (գրեց-եր, խաղաց-եր, կիզ-եր), Ø (զրո) մասնիկը՝ երրորդ դեմքի իմաստը (գրեաց, խաղաց, (ե)կեզ)։ -Աք մասնիկն ընդհանրացնում է հոգնակի թվի առաջին դեմքի քերականական իմաստը (գրեց-աք, խաղաց-աք, կիզ-աք), -էք (-իք) մասնիկը՝ երկրորդ դեմքի իմաստը (գրեց-էք (-իք), խաղաց-էք (-իք), կիզ-էք (-իք)), -ին մասնիկը՝ երրորդ դեմքի իմաստը (գրեց-ին, խաղաց-ին, կիզ-ին)։

Հին հայերենում կրավորաձև խոնարհման դիմաթվային քերականական իմաստներն ընդհանրացնում են *-այ, -ար, աւ, աք, -այք, -ան* մասնիկները, որոնք ընդհանուր են Ի լծորդության բայերի համար, որոնք խոնարհվում են միայն կրավորաձև։ Այս մասնիկներն ընդհանրացնում են Ե, Ա, Ու խոնարհման բայերի դիմաթվային քերականական իմաստները, որոնք կարող են խոնարհվել նաև կրավորաձև։

Այսպես՝ -այ մասնիկն ընդհանրացնում է կրավորաձև խոնարհման եզակի թվի առաջին դեմքի քերականական իմաստը (գրեց-այ, խաղաց-այ, կիզ-այ, բազմեց-այ),

-ար մասնիկը՝ երկրորդ դեմքի իմաստը (գրեց-ար, խաղաց-ար, կիզ-ար, բազմեց-ար),

-աւ մասնիկը՝ երրորդ դեմքի իմաստը (գրեաց-աւ, խաղաց-աւ, կիզ-աւ, բազմեց-աւ)։

-Աք մասնիկն ընդհանրացնում է հոգնակի թվի առաջին դեմքի քերականական իմաստը (գրեց-աք, խաղաց-աք, կիզ-աք, բազմեց-աք), -այք մասնիկը՝ երկրորդ դեմքի իմաստը (գրեց-այք, խաղաց-այք, կիզ-այք, բազմեց-այք), -ան մասնիկը՝ երրորդ դեմքի իմաստը (գրեց-ան, խաղաց-ան, կիզ-ան, բազմեց-ան)։

Անշուշտ, բայական համակարգի տարբեր եղանակային ձևերի դիմաթվային քերականական իմաստների ընդհանրական նշանակությունները նույնպես արտահայտվում են որոշակի մասնիկների միջոցով, սակայն վերոբերյալ օրինակները բավական են՝ գաղափար կազմելու մյուս եղանակային ձևերի քերականական իմաստներն ընդհանրացնող միջոցների վերաբերյալ։

Քերականական ընդհանրացման հատկանիշը յուրովի են դրսևորում *դերբայական մասնիկները։*

Անորոշ դերբայի չորս լծորդություններն ընդհանրացնում են բոլոր այն բայերը, որոնք համապատասխանաբար պատկանում են տվյալ լծորդությանը։ Ինչպես՝ *երգել, սիրել, շարժել, տեսանել, արկանել* (Ե լծորդ.), *աղալ, խաղալ, գոհանալ, հագենալ* (Ա լծորդ.), *խօսիմ, բազմիմ, մատչիմ, ուսանիմ* (Ի լծորդ.), *կիզուլ, հերուլ, այտնուլ, ոստնուլ* (ՈՒ լծորդ)։

Որոշ դերբայական մասնիկներ երկակի գործառույթ ունեն. մի դեպքում հանդես են գալիս որպես բայական իմաստի կրողներ, երկրորդ դեպքում՝ որպես տարարժեք մասնիկներ, արտահայտում են այլ խոսքիմասային նշանակություններ։

Այսպես՝ *-եալ* մասնիկն ընդհանրացնում է այն բայերը, որոնք արտահայտում են անցյալ դերբայի նշանակություն, ինչպես՝ *առաքեալ, անկեալ, հեծեալ, հանգուցեալ, մեռեալ, ննջեցեալ, հաւատացեալ, ուրացեալ, կատարեալ, կորուսեալ, հանդերձեալ* և այլն:

Հմմտ. Վաղվաղակի ստիպով *առաքեալ* դեսպան Զվահրիճ ոմն անուն (Փարպ., 14): Հասակաւ *կատարեալ* եմք (Եղ., 173):

Սակայն այդ բառերը գրաբարում, բայական իմաստին զուգահեռ, ունեն նաև գոյական կամ ածական անունների նշանակություն, և շարահյուսական կիրառության ոլորտում է հնարավոր բացահայտել դրանց խոսքիմասային արժեքները, հետևաբար նաև մասնիկների խոսքիմասային ընդհանրացնող նշանակությունները[1]:

Զարդարեալ զձեզ և այն զարդու, որով զարդարին *առաքեալքն* (Փարպ., 176),- գոյ.: Ինքն իսկ արժանի եղև առնուլ զ*կատարեալ* նահատակութիւն (Եղ., 118),- ած.:

Գրաբարում դերբայական –ի մասնիկն ընդհանրացնում է այն բայերը, որոնք ունեն ապառնի դերբայի նշանակություն, ինչպես՝ *սիրելի, կրելի, ուտելի, հաւատալի, երանելի, սքանչելի, տենչալի* և այլն: Հմմտ.

Քանզի յոյժ *սիրելի էր* նման խռովութիւն, արիւնհեղութիւն, վասն այնորիկ անձն իւր տարաբերէր… (Եղ.,…): Կէսքն յանասնոց ի պէտս արարան, որ *ուտելի* է և *կրելի* է (Եզն., 63):

Մյուս կողմից՝ այդ մասնիկով դերբայաձևերը նույնպես ընդհանրացնում են համակառուցատիպ ածական անուններ, որոնց տարբերակումը դարձյալ կատարվում է շարահյուսական միջավայրում: Հմմտ.

Իսկ *երանելին* Նունէ ել գնաց անտի աշակերտել (Խոր., 234): Յօրէնսն զ*ուտելի* անասունսն սուրբս կոչէ (Եզն., 283):

-Ող մասնիկն ընդհանրացնում է բայի ենթակայական դերբայաձևերը, ինչպես՝ *խօսող, շարժող, սիրող, արկանող, բեկանող, խաղացող, տեսանող, ծնանող, կիզող, զենող* և այլն[2]:

Բայական համակարգում ընդհանրացնող դեր ունեն նաև *հիմքակազմիչ մասնիկները,* որոնք հանդես են գալիս երկրորդ հիմքում:

Կատարյալի բաղադրյալ հիմքն ունի ցոյական (ցո մասնիկով) և *-ի* թույլ բաղադրիչով տարբերակներ, որոնք համապատասխան բայերի առումով ունեն ընդհանրացնող նշանակություն:

Այսպես, *-եաց* (անշեշտ՝ եց) մասնիկն ընդհանրացնում է *է, ի* լծորդության բոլոր պարզ բայերի կատարյալի հիմքը՝ անկախ բայասեռից,

---

[1] *Տե՛ս* ***Խաչատրյան Լ.****., Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Ե., 1985, էջ 79:*

[2] *-Ող մասնիկն ընդհանրացնում է այս դերբայաձևից ծագած որոշ գոյական անուններ, ինչպես՝ Յօրինեն զհարսանիսն ամենայն երաժշտական երգեցողքն (ՆՀԲ, 1, 673): Հարկահանք և պահանջողք տիրեն ձեզ (ՆՀԲ, 2, 587):*

ինչպես՝ գրել -*գրեաց,* շարժել -*շարժեաց,* սիրել - *սիրեաց,* բազմիմ - *բազմեաց,* խօսիմ - *խօսեաց,* ծիծաղիմ - ծիծաղեաց և այլն: Այդ նույն կառուցատիպն ունեն –ա- լծորդության պարզ և ածանցավոր բայերը, ինչպես՝ աղալ -*աղաց,* խաղալ - *խաղաց,* իմանալ - *իմաց,* գոհանալ - *գոհաց,* գողանալ - *գողաց* և այլն: Ա լծորդության –ենալ- ածանցավոր բայերի համար բնորոշ է կատարյալ –*եց* հիմնային ածանցը՝ համատիպ բայերի ընդհանրական նշանակությամբ, ինչպես՝ հագենալ - *հագեց,* մերձենալ - *մերձեց,* մոտենալ - *մոտեց* և այլն:

Կատարյալի հիմքի -ի թույլ բաղադրիչն ընդհանրացնում է -*ի* և -*ու* լծորդության ածանցավոր բայերին, ինչպես՝ մատչիմ - *մատի,* երկնչիմ - *երկի,* թռչիմ-*թռի,* ոստնուլ - *ոստի,* այտնուլ - *այտի,* զարթնուլ – *զարթի* և այլն:

Այսպիսով՝ լեզվամտածողության և փիլիսոփայական ընդհանրացման տեսանկյունից հին հայերենի մակարդակում որոշակի դեր ունեն նյութական խոսքի մասերի՝ գոյականի և բայի քերականական մասնիկները՝ հոլովամասնիկները, թվակազմական ցուցիչները, դիմաթվային վերջավորությունները, դերբայական մասնիկները և հիմքակազմիչ ձևույթները:

Լեզվի բառաձևերի ձևական կաղապարների ուսումնասիրությունը բացահայտում է տվյալ հանրության լեզվամտածողության ծածկագրերը, որոնց բաղադրիչներից են քերականական մասնիկները, որոնք լեզվափիլիսոփայության դիտանկյունից ունեն քերականական իմաստներն ընդհանրացնող նշանակություն:

Գրականություն

1. Աբրահամյան Ա., Գրաբարի դասընթաց, Ե., 1976:
2. Բագրատունի Ա., Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:
3. Բրուտյան Գ.Ա., Փիլիսոփայություն և լեզու, Ե., 1972:
4. Խաչատրյան Լ., Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Ե., 1985:
5. Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., Գրաբարի դասագիրք, Ե., 2004:
6. В.Н.Кодухов, Общее языкознание, М., 2013.
7. Проблемы теории познания и логики. Материалы к XIV Международному философскому конгрессу, вып. I, М., 1968.
8. Лингвистический энциклопедический словарь, М., “Советская энциклопедия”, 1990.
9. B.L.Whorf, Language, Thought and Reality, Massachusets Institute of Technology, 1966.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եզն. - Եզնկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826։
Եղ. - Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Ե., 1957։
Խոր. - Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913։
ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ,հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837։
Փարպ. - Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփխիս, 1904։

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ,բ.գ.թ. դոցենտ Հ.Ս. Ղազարյանը։

ՀՏԴ 371.31: 809.198.1
Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա

Ծովինար ՀԱՍՐԱԹՅԱՆ
ԱրՊՀ ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի ավագ դասախոս

ԱՆՈՐՈՇ ԵՎ ՀԱՄԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ՈՐՈՇ ՁԵՎԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սույն հոդվածում քննվում է խոսքում հաճախ հանդիպող սխալներից մեկը՝ համակատար դերբայի փոխարեն անորոշի բացառական հոդվածների գործածությունը: Վերջինս հատուկ է խոսակցական լեզվին, գրական լեզվում համարվում է մերժելի երևույթ : Աշակերտներն այսպիսի սխալներ կատարում են հատկապես նախադասության, տեքստի կազմության ժամանակ:
Քանի որ դերբայներն անցնում են հիմնական դպրոցի 7-րդ դասարանում, ուստի հենց այդ դասարանից սկսած՝ պետք է աշակերտները, քերականական սահմանումներից զատ, տիրապետեն խոսքային ճիշտ կիրառություններին: Ուսուցիչների համար օգտակար են համապատասխան քերականական, խոսքի մշակույթի ձեռնարկներն ու աշխատությունները:
Բանալի բառեր *– անորոշ դերբայ, համակատար դերբայ, ուսուցում, մեթոդ, քերականական գիտելիքներ, վարժություններ, խոսքի հոկում, հիմնական դպրոց, դասավանդում, գործնական կիրառություն, գիտակցական յուրացում, բացատրություն:*

Ц. Асратян

ВОПРОСЫ ОБУЧЕНИЯ НЕКОТОРЫХ ФОРМ ИНФИНИТИВА И ПРИЧАСТИЯ НЕСОВЕРШЕННОГО ВИДА

В данной статье рассматривается систематический встречающиеся в речи ученика одна из ошибок, это вместо причастия (специфическая для армянского языка форма глагола, не указывающая на лицо, но могущая содержать общие указания на время действия) использование инфинитив (неопределенной формы). Последнее характерно для разговорной речи, а для литературной речи является неприемлемым явлением. Ученики делают такие ошибки в предложении, при составлении текста, что делает речь неграмотной.
Поскольку в основной школе причастия проходят в 7-м классе, поэтому начиная с этого класса, при изучении правил грамматики, необходимо обучать школьников в их различиях и в правильном использование при составлении предложении. Соответствующие грамматические пособия и работы по культуре речи полезны для учителей.

Ключевые слова *– инфинитив, причастие (несовершенное II), обучение, метод, грамматические знания, упражнения, улучшение речи, основная школа, преподавание, практическое применение, сознательное освоение, объяснение.*

Ts. Hasratyan

ABOUT TEACHING SOME INDEFINTE FORMS

This article discusses the systematic occurrence of one of the errors in the student's speech; it is the use of an indefinite form instead of the participle (Armenian-specific form of the verb, not pointing to the person, but which may contain general instructions for the duration). The latter is characteristic of colloquial speech, and for literary speech is an unacceptable phenomenon. Pupils make such mistakes in the sentence, in drawing up the structure of the text, which makes speech illiterate.

Since in the basic school the participles take place in the 7th grade, therefore, starting from this class, it is necessary when teaching the rules of grammar to teach students in their differences and correct use in making sentences. Relevant grammar and speech culture works are useful for teachers.

Keywords *- indefinite form, participles (imperfect II), training, method, grammatical knowledge, exercises, improvement speech, basic school, teachings, practical application, conscious mastering, explanation.*

Բայը լեզվի դասընթացի ամենածավալուն բաժինն է, ուսուցանվում է հիմնական դպրոցի 7-րդ և ավագ դպրոցի 11-րդ դասարաններում: Նրա դասավանդումն ունի գործնական բնույթ: Սա բացատրվում է ոչ միայն բայի բազմաձևությամբ, քերականական կարգերի առատությամբ, այլև նախադասության մեջ և առհասարակ խոսքում ունեցած բացառիկ կարևոր դերով:

Թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում հանդիպում ենք բայաձևերի կազմության, գործածության բազմաթիվ սխալ օրինակների: Դա ամենից առաջ բխում է նրանից,որ «Խոսքը …. դինամիկ է, արտադրողականությամբ սահմանափակ չէ, դրսևորվում է անհատական տարբերացումներով…. Այստեղ որոշակի տեղ ունեն պատահականությունը, շեղումները, անկանոնականը, անհատական փորձը և այլն»:[1]

Բայի ուսուցման ընթացքում շատ են հատկապես տեսական բնույթի հարցերը: Դրանց բացատրությունը պետք է տանել առավել կազմակերպված, աշակերտների ակտիվ մասնակցությամբ, այն նպատակադրումով, որ նրանք սովորեն բայի, բայահիմքերի, դիմավոր ձևերի կազմությունները, դրանց իմաստները, որոնք անհրաժեշտ են խոսքում: Սրա անհրաժեշտությունը բացատրվում է նրանով, որ նյութի գիտակցական յուրացման առաջին նախապայմանը գիտելիքները

[1] ***Պետրոսյան Հ.***,*Հայերենագիտական բառարան,Եր.,1987,էջ 280:*

գործնականում կիրառելն է: Բավական չէ սովորեցնել միայն երականական սահմանումներ, պետք է պահանջել, որ դրանք ճիշտ կիրառվեն խոսքում:

Այս հարցում չափազանց կարևոր են ուսուցչի գիտելիքները, ինչպես նաև մատուցման ձևը: Անշուշտ, որքան խոր ու հարուստ լինեն ուսուցչի գիտելիքները, այնքան ըմբռնելի ու հստակ կլինի քննարկվող նյութը: Այս առումով ուսուցիչների համար կարևորվում են գիտական ձեռնարկները, հոդվածները:« Բայ» թեմայի վերաբերյալ անգնահատելի են Աշոտ Աբրահամյանի աշխատությունները:[1] Բավարարվել միայն դպրոցական դասագրքով ճիշտ չի լինի:

Սույն հոդվածում անդրադառնում ենք խոսքում հաճախ հանդիպող սխալներից մեկին՝ համակատար դերբայի փոխարեն անորոշի բացառական հոլովաձևի գործածությանը, ինչպես, Տուն *գնալուց* հանդիպեցի նրան: Դահլիճ *մտնելուց* դա չէի զգացել: Ախորժակը *ուտելուց* է բացվում: Աշակերտներն այսպիսի սխալներ կատարում են հատկապես նախադասության, տեքստի կազմության ժամանակ: Ուսուցիչը բնականաբար կբացատրի, որ նման գործածությունը հատուկ է խոսակցական լեզվին,որ գրական լեզվում սա մերժելի երևույթ է:

Այս հարցին լեզվաբաններն անդրադառնում են խոսքի մշակույթին նվիրված աշխատություններում, ձեռնարկներում[2]: Օրինակ՝ Պ. Բեդիրյանի «Հայ լեզուն և մեր խոսքը. արևելահայերեն խոսքի ուղեցույց» գրքից մեջբերենք. ««*Հիվանդանալիս* նյարդային է դառնում» և «*Հիվանդանալուց* նյարդային է դառնում»: Առաջինում ընդգծվածը նշանակում է «հիվանդանալու ժամանակ», իսկ երկրորդում՝ «հիվանդանալու պատճառով կամ՝ հետևանքով»: -Ելիս, –ալիս - ով վերջացող ձևը /դերբայը/ առաջին հերթին և համարյա բացառապես զուգահեռ գործողություն և ժամանակ մատնանշելու համար է ստեղծված, իսկ –ելուց, -ալուց-ով վերջացողն էլ /անորոշ դերբայի բացառականը/ պատճառի իմաստ արտահայտելու համար գրեթե անփոխարինելի է: Այս հստակ տարբերությունը չընկալողներն առաջինների փոխարեն –ելուց, -ալուց –ով ձևերն են սխալմամբ օգտագործում»:[3] Հ.Գալստյանի «Ճիշտը և սխալը» ժողովածուում նշվում է. «Անորոշի բացառական հոլովով ձևերը ճիշտ են,

---

[2] ***Աբրահամյան Ա.***,*Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը,Եր.,1953 :*
Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Եր.,1962 :

[2] ***Բեդիրյան Պ.***, *Հայ լեզուն և մեր խոսքը. արևելահայերեն խոսքի ուղեցույց, Եր., 1999 :*

Գալստյան Հ., *Ճիշտը և սխալը, Եր., 2007թ.: Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Եր.,2014 :*

[3] ***Բեդիրյան Պ.***, *Հայ լեզուն և մեր խոսքը. արևելահայերեն խոսքի ուղեցույց, Եր., 1999 ,էջ 97:*

եթե մեր նպատակը պատճառը ցույց տալն է. «Երեխաների մասին շատ *մտածելուց* (= մտածելու պատճառով) անկողին ընկավ»:

Բացառական հոլովը ժամանակի իմաստ կարող է արտահայտել *հետո* կապական բառի հետ միասին. «Տնից *դուրս գալուց հետո* (=դուրս գալիս) հանդիպեց ընկերոջը»:[1]

Այս բացատրությունները բավականին ընկալելի են խնդրահարույց թեման պատշաճ յուրացնելու համար: Դպրոցական դասագրքերում սկզբնապես այս հարցը չի քննվել, օրինակ՝ խորհրդային տարիներին գործող՝ Է.Աղայանի, Հ.Բարսեղյանի հեղինակած դասագրքում[2], հետխորհրդային շրջանում՝ Ֆ. Խլղաթյանի, Լ.Խաչատրյանի դասագրքում[3]: Գուցե պատճառն այն է, որ պետական ծրագրով նախատեսված չէին խոսքի մշակույթի հարցերը: Ներկայումս ծրագրերում ընդգրկված են նաև խոսքի մշակույթի հարցեր, գործող դասագրքերում համառոտ անդրադարձ է կատարվում այս հարցին: Տեսական նյութ չկա, պարզապես տրված են օրինակներ, նշված են ճիշտն ու սխալը: Օրինակ՝ «Համակատար դերբայ» թեմայում ոչ միայն տրվում են նրա սահմանումը, կազմությունը և շարահյուսական կիրառությունը, այլև խոսքային տարածված սխալ կիրառությունների օրինակներ՝ Դասը ~~պատասխանելուց~~ շփոթվեց: Փողոցն ~~անցնելուց~~ վայր ընկավ[4]:

Ուսուցիչը պետք է կազմի վարժությունների ու առաջադրանքների համակարգ և ունենա այնպիսի մեթոդական հնարներ, որոնք կխթանեն թեմայի գիտակցական յուրացումն ու խոսքի մեջ դրանց ճիշտ գործածությունը: Քանի որ նշված թեմայի վարժությունները բազմազան չեն, կարելի է հետադարձ կապ ստեղծել «Անորոշ դերբայ» թեմայի հետ, կրկնել հարացույցը՝ ուշադրությունը կենտրոնացնելով բացառական հոլովաձևի կիրառությունների վրա: Նշված խնդրին կարելի է անդրադառնալ նաև շարահյուսության բաժնում՝ պատճառի, ժամանակի պարագաներն ուսուցանելիս:[5]

Գուցե 7-րդ դասարանում կարելի է բավարարվել միայն մակերեսային բացատրություններով, բայց ահա ավագ դպրոցում հիմքերն ավելի խոր պետք է լինեն: Ինչպես գիտենք, պետական ծրագրով հայոց լեզվի բոլոր բաժինների ծրագրային նյութերն ավարտվում են 9-րդ դասարանում, իսկ ավագ դպրոցում անդրադառնում են դրանց՝ անցածն ու սովորածն ավելի խորացնելու և ամրապնդելու նպատակով:11-րդ դասարանի դասագրքում քննարկվող թեմայի վերաբերյալ նույնպես էական բացատրություն չկա, ուստի ճիշտ կլինի լրացուցիչ գրականության օգտագործումը:

---

[1] ***Գալստյան Հ.***, *Ճիշտը և սխալը, Եր.,2007, էջ 71:*

[2] ***Աղայան Է., Բարսեղյան Հ.,*** *Հայոց լեզու, V-VII դասարան, Եր., 1986:*

[3] ***Խլղաթյան Ֆ., Խաչատրյան Լ.,*** *Հայոց լեզու, 6-րդ դասարան, Եր., 2006 :*

[4] ***Բարսեղյան Հովհ., Մելթիխանյան Փ.***, *Հայոց լեզու, 7–րդ դասարան, Եր.2016, էջ 92:*

[5] ***Բարսեղյան Հ.,Մելթիխանյան Փ.***,*Հայոց լեզու,8-րդ դասարան,Եր., 2017 , էջ 119,122*

Ա. Աբրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» աշխատության մեջ հանգամանորեն բացահայտվել է այս երևույթի սերման պատմությունը. «Հայերենի այն հատվածները, որոնց հատուկ չէ *–ի՛ս* մասնիկով անկատար դերբայի գործածությունը, գլխավոր գործողությանը զուգահեռ գործողությունն արտահայտում են անորոշ դերբայի տրական հոլովով….

Անորոշ դերբայի տրական հոլովը գրական լեզվի (կամ *–ի՛ս* անկատար դերբայ ունեցող բարբառների) անկատար դերբայի անալոգիայով ստանում է *ս* բաղաձայնը, և այդպիսով այդ ձևերը դառնում են՝ գրելու-գրելուս, կանչելու-կանչելուս և այլն: Սա ժողովրդի մեջ այնքան տարածվեց, որ առանձին հեղինակներ գործածեցին իրենց երկերում: Այդպիսի հեղինակներից է, օրինակ, Պ. Պռոշյանը, որի մոտ գտնում ենք. «Աքլորականչին Սև -ջրի գլխիցը ձի նստեցի, էս անտեր թղթի կտորները ծոցիս, միտք ունեի լիսը *բացվելուս* Աշտարակ մտնեմ»:

Հիշյալ ձևը ժողովրդական ստուգաբանությամբ կապվել է բացառական հոլովի հետ, և այստեղ *ս*-ին փոխարինել է *ց*-ն: Կարելի է ցույց տալ այդպիսի շատ օրինակներ: «Այդտեղից *նայելուց* երևում էր նրա ընդարձակ դաշտը»: «Այսօր կղզին *մտնելուց* դուք խոսեցիք գյուղացիների տրտունջի մասին»: (Մուրացան)»:[1]

Հիրավի, այս բացատրությունը բավականին օգտակար է ուսուցիչների համար, քանի որ նախ տալիս է լեզվական երևույթի սերման պատմությունը, այնուհետև նրանց ուշադրությունը բևեռում այն խնդրի վրա, որ դասականների ստեղծագործություններում կան լեզվական այնպիսի ձևեր, որոնք արդի հայերենի քերականական նորմի տեսակետից անհանձնարարելի են :

Խոսքի մշակույթի՝ վերը նշված գրքերը խոսքի նորմավորման առումով բավականին մատչելի են և կօգնեն ուսուցիչներին մանրակրկիտ ուսումնասիրելու և բացահայտելու քննվող նյութի բոլոր նրբությունները: Այն ընկալելի կլինի նաև ավագ դպրոցի հումանիտար հոսքի համար:

Հայտնի է, որ անորոշ դերբայի բացառական հոլովը սովորաբար հանդես է գալիս՝ ա/ անջատման խնդրի պաշտոնով՝ Հրաժարվում է մեզ հետ *խոսելուց:*

բ/պատճառի պարագայի պաշտոնով՝ *Շտապելուց* մի քանի սխալներ թույլ տվեց:[2]

Այսպիսով՝ անորոշի բացառական հոլովով ձևերը ճիշտ են, եթե. ա/ մեր նպատակը պատճառը ցույց տալն է, օրինակ՝ Աղջիկը հուզվելուց /հուզվելու պատճառով/ չկարողացավ մտածել, բ/հանդես է գալիս կապի հետ՝ արտահայտելով ժամանակի իմաստ, օրինակ՝ *Սովորելուց* հետո

---

[1] ***Աբրահամյան Ա.***, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, էջ 115-116 :*

[2] ***Ասատրյան Մ.***, *Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1989 թ., էջ 23 :*

/կամ՝ սովորելիս/ անթերի էր գրում, *Խոսելուց* հետո /խոսելիս/ թեթևացավ: Բայց «Սովորելուց անթերի էր գրում: Խոսելուց թեթևացավ» ձևերը սխալ են:

Այս բացատրությունից հետո պետք է առաջադրել նախադասություններ, հանձնարարել գտնել սխալը և հիմնավորել:Այդ առաջադրանքները կարելի է կատարել թե՛ 7-րդ դասարանում, երբ անցնում են դերբայները, թե՛ 8-րդ դասարանում,երբ անցնում են պարագաները, թե՛ ավագ դպրոցում:

Պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարանում նույնպես ընդգրկված է խնդրո առարկա նյութը՝ հետևյալ հարցադրումներով. Ո՞ր նախադասության մեջ բայաձևերի գործածության սխալ կա:

1/ Ջուրը ծառերի տակ *կապելուց* հետո Լառ –Մարգարը պառկում էր շվաքի տակ:

2/ Ջուրը *կապելուց* (կապելիս) նա ջրի հետ էլ գնում էր:

3/ Փողոցի լորենու սաղարթները *շոշափելուց* Լևոնը մեծ հաճույք էր զգում:

4/ Մարգարը ծիրանի կորիզները *տանելուց* առաջ բավական մտածեց:

Կամ՝ Ընդգծված դերբայական ձևերից ո՞րն է սխալ գործածված:

1/ Հենց մի վատ բան *անելուց (անելիս)* է լինում…

2/ Մեկին վատություն *անելիս* մտածիր:

3/ Արդեն հոգնել եմ սրա –նրա համար աննպատակ գործեր *անելուց*: [1]

Ունենալով համապատասխան գիտելիքներ՝ սովորողը խնդրի առաջ չի կանգնի:

Բայաձևերի ճիշտ գործածման և ընդհանրապես գրագետ ու ճիշտ խոսելու մյուս կարևոր հանգամանքը գրականության դասերին լեզվական նյութի օգտագործումն է: Բազմիցս խոսվել է, որ գրական յուրաքանչյուր երկ անցնելիս ուսուցիչն անպայման պետք է ուշադրություն դարձնի քերականական այն հարցերին, որոնք սովորել են կամ սովորում են լեզվի դասերին՝ դրանով իսկ քերականական ձևերի կազմության օրինաչափությունները, արտահայտած իմաստները, կապակցական առանձնահատկությունները, շեղումներն ու բացառությունները ցույց տալով կապակցված խոսքի մեջ, դրանց նմանությամբ կատարելով մարզողական բնույթի վարժություններ:

---

[1] *Պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան, 2017:*

Գրականություն

1. Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը,Եր.,1953:
2. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Եր.,1989:
3.Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Եր., 2014:
4.Բեդիրյան Պ., Հայ լեզուն և մեր խոսքը. արևելահայերեն խոսքի ուղեցույց, Եր., 1999:
5. Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ., Հայոց լեզու, 7-րդ դասարան,Եր.,2016:
6. Գալստյան Հ. , Ճիշտը և սխալը, Եր., 2007:
7.Եզեկյան Լ.,Սարգսյան Ս.,Սաքապետոյան Ռ.,Հայոց լեզու,11-րդ դասարան,Եր.,2010:
8. Պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան,2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ,բ.գ.թ.,դոցենտ Հ.Ս. Ղազարյանը:

ՀՏԴ 809.198.1
Հայոց լեզու

Միլվա ՄԻՆԱՍՅԱՆ
բ.գ.թ., դոցենտ
ԱրՊՀ ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն

–Վ-, -(Ա//Ե)ՅՆ- ԲԱՅԱԾԱՆՑՆԵՐՈՎ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՏԻՊԱՐՆԵՐԸ (Աշոտ Աբրահամյան-100)

Աշոտ Աբրահամյանը բայածանցների տիպարային ձևերը մանրամասնված, համակողմանի գիտականորեն հետազոտել, քննարանել ու ներկայացրել է «Բայը ժամանակակից հայերենում» գրքում: Ածանցատիպարային –Վ-, -(Ա//Ե)ՅՆ ձևույթներով կառույցները մանրամասն դիտարկվել են բառակազմական ու քերականական կարգերում և մեծ մասամբ ներկայացվել ստուգաբանված: Կրավորականի –վ(ու)-ով բառակազմական գործընթացը տրվել է ձևավորման շրջանից՝ միջին հայերենից, ուշադրություն է դարձվել բառապաշարում դրա կիրառության ընդլայնմանը: Բառակազմական այդ երևույթը շարունակվում է առ այսօր. առանձնահատուկ են հատկանուններից ձևավորվածները: Վերջինս Ա. Ա. Աբրահամյանի ուսումնասիրություններում չկա: Հեղինակը, պատճառական բայածանցի նմանությամբ, ռուսերենի միջնորդությամբ փոխառյալ բառերով ածանցման գործընթացն ամենայն մանրամասնությամբ է քննել :

Բանալի բառեր՝ *բայածանց, բայատիպարներ, բայատիպարային ածանցներ, բայացնող մասնիկ, բաղադրական-քերականական// սոսկածանց// ներածանց, բազմապատկական// զորացման// սաստկացման, պատճառական, կրավորական, սկզբնատիպ// նախատիպ, վերջածանց, փոխառություն, կիսափոխառյալ ածանցներ:*

С.Минасян

ТИПЫ СТРУКТУР С ГЛАГОЛЬНЫМИ АФФИКСАМИ В (А/Е) ЦН (Ашот Абрамян -100)

В книге “Глагол в современном армянском языке” Ашот Абрамян всесторонне детально, с научной точки зрения изучил и представил типовые виды глагольных аффиксов. Аффиксальнотиповые структуры с аффиксами В (А/Е) ЦН были подробно рассмотрены в словосоставных и грамматических

системах и в большинстве случаев представлены этимологизированными. Словообразовательный процесс страдательного в армянском языке-В (у) с периода формирования был дан автором со среднего языка и было обращено внимание на его широкое применение в лексиконе армянского языка.
Этот словообразовательный процесс продолжается по сей день, особенно сформировавшихся от имен собственных. Последнего нет в исследованиях А.А.Абрамяна. При сходстве каузативных аффиксов и при посредничестве русского языка, автор подробно обсудил процесс заимствования слов в рамках вербализации.
Ключевые слова: *глагольный суффикс, глагольные типы, компонентный /грамматический, формальный аффикс, многократные, каузативный, страдательный, исходный/ прототипный, суффикс, заимствование, полузаимствованные суффиксы, глагольная частица.*

Minasyan S.

TYPES OF STRUCTERS WITH VERBAL AFFIXES V(A/E) CN
(Ashot Abrahamyan -100)

Ashot Abrahamyan comprehensively, scientifically studied and presented typical types of verb affixes in the book "The Verb in Modern Armenian Language". Affixal-type structures with affixes V (A / E) CN of were considered in detail in word composition and grammatical systems and in most cases presented etymologized. The word-formation process of the passive in the Armenian language-In V(u) since the period of formation was given by the author from the Middle Armenian and attention was paid to its widespread use in the vocabulary of the Armenian language.
This word-building phenomenon continues to this day, especially those formed from proper names. The latter is not present in the studies of A. Abrahamyan. With the similarity of causative affixes and mediated by the Russian language, the author discussed in detail the process of borrowing words in the framework of verbalization.
Key words: *verb suffix, verb types, component / grammatical, formal affix, multiple, causative, passive, source / prototype, suffix, borrowing, semi-borrowed suffixes, verb particle*

Աշոտ Արսենի Աբրահամյանը XX դարի 50-80-ականների լեզվաբանների աստղաբույլի կարկառուն ներկայացուցիչներից է: Բայագիտական նրա ծանրակշիռ աշխատանքներն առ այսօր էլ անգերազանցելի նվաճումներ են: Բայի ուսումնասիրությանը նվիրված երկու աշխատություն[1] ունի: Հեղինակը «Բայը ժամանակակից հայերենում»գրքում նշել էր, որ բայերում գործածվող ոչ բայական ածանցներից *բառակազմական ածանցներն*

[1]. ***Աբրահամյան Ա. Ա.***,*Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., , 1953 , 440 էջ,*
Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, Ե, 1962 ., 730 էջ:

բայագիտական արժեք չունեն[1]: Բայածանցների մասին Ա. Ա. Աբրահամյանը նշել է. «Ժամանակակից հայերենի բայական համակարգում բայատիպարային ածանցներն են այնպիսի բայածանցները, որոնք կամ բաղադրում են բայական բառույթը՝ քերականական լրացուցիչ իմաստների արտահայտման հետ կամ առանց դրանց, կամ էլ պատրաստի բայական բառույթներին քերականական ածանցմամբ հաղորդում են քերականական ուրույն իմաստներ, միաժամանակ հանդես գալով իբրև այդ իմաստների ածանցական ցուցիչներ»[2]: Ըստ այդմ էլ՝ լինում են *ածանցագուրկ* և *ածանցական տիպարներ* (ն. տ.): Դրանք արմատից հետո տեղադրվելու պատճառով *վերջածանցներ* են (Մ. Աբեղյանը միջածանցներ էր համարել): Ա. Ա. Աբրահամյանը *բայատիպարային* ածանցները երկու խմբի է բաժանել՝ *բաղադրական-քերականական* և *բուն քերականական* (սրանք սեռի՝ սեռի և սեռային առումներ են (կրավորական և պատճառական) ու նաև կերպի (բազմապատկական) ցուցիչներ, գծ. 1,2,3): Այս նույնը նաև սեռադասայինում է (գծ.4):

Ժամանակակից հայերենի բայական համակարգում *բայատիպարային ածանցները* բաղադրում են բայական բառույթը՝ քերականական լրացուցիչ իմաստների արտահայտման հետ կամ առանց դրանց և դառնում այդ *իմաստների ածանցական ցուցիչներ*: Սրանց գործադրման հիման վրա էլ բայերը լինում են *ածանցագուրկ և ածանցական տիպարներով*[3] : Երբեմն էլ բայերի ածանցական որոշ տիպարներ ենթարկվում են կրկնակի ածանցման՝ կապված քերականական որոշակի իմաստների արտահայտման հետ՝ կազմելով *սկզբնատիպ* կամ *նախատիպ* (ն. տ.) բայական բառաձևեր հաջորդ սերվածի համար:

Միջին հայերենից գործառող *–ու//-վ* բառակազմական ածանցը (ն. տ., էջ 306, 656) հիմքային կառույցում քերականական արժեք չունի (անփոփոխ պահպանվում է տիպարային կառույցը՝ *գիժ-Ա* արմատից սերված *սկզբնատիպ* կամ նախատիպ բայ՝ *գժվել-Աաա*, I հիմք՝ գժ-վ-ում է-Աաք Ա, գժ-վ-ել է-Աաք Ա, կ-գժ-վ-ի-քԱաք, II հիմք՝ գժ-վ-ե/ց-ին-Աաձք, III հիմք՝ գժ-վ-ել-ու են-Աաքք Աք, գծ. III):

Այս *–վ-* ցուցիչը գործողության կատարման համար, բառակազմականից բացի, քերականական իմաստաբանական նրբերանգ չի հաղորդում (համեմատենք՝ *նստել*-ինքն իրեն կատարել այդ գործողությունը, նույնն էլ՝ *գժվել*, *բնակվել*, *մաշտոցվել* (վերջինս XX դարի II կեսին ստեղծված նորակազմություն է) ևն: Ս. Գ. Աբրահամյանը դրանք *սկզբնաձևային բայածանցավոր* (ածանցյալ սկզբնաձևեր)[4] է համարել: Կրավորականի գրաբարյան նախատիպը նաև *ի* լծորդությամբ էր և, ինչպես նշեցինք,

---

[1]. ***Աբրահամյան Ա. Ա.***,*Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, էջ 194:*
[2]. *Ն. տ., էջ 194:*
[3]. *Ն. տ., էջ 212:*
[4]. ***Աբրահամյան Ս. Գ.***,*Ժամանակակից գրական հայերեն, , Ե., 1981., էջ 187:*

միջին հայերենից սկսեց –*ու*-ով արտահայտվել: Դա (-ու/-վ) արևելահայերենում հարաճուն բառակազմական գործընթաց է դարձել: Օրինակ՝ Ա. Ա. Աբրահամյանը նկատել էր, որ մի շարք բայեր XX դարի սկզբին գործածվում էին նաև առանց –*վ*- ածանցի[1], և տվել էր օրինակներ (XX դարի սկիզբ)՝ Վ. Տերյան՝ Վերջին լույսերը *կվախճանեն* (կես դար հետո և հիմա՝ *կվախճանվեն*), Ստ. Զորյան՝ Մի ժամ հետո, որ ամեն ինչ *խաղաղել* էր (կես դար հետո և հիմա՝ *խաղաղվել էր*), Դ. Դեմիրճյան՝ Ամեն ինչ *խաղաղեց* (կես դար հետո և հիմա՝ *խաղաղվեց*) ևն: Ահա մեր կողմից նկատվածը Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները»պոեմում (թեև սա հրատարակվել է 2014 թ., բայց հեղինակն աշխատել էր XX դարի 50-ականներին)՝ *Պապանձեց* քեզնով լեզվագար դևը (էջ 262): Այդպիսի փոփոխությունները սկզբնական շրջանում լեզվաբանների կողմից որպես խաթարում են նշվել, սխալ համարվել, և ուսումնական միջավայրում ուղղումներ են կատարվել: Կասեցնելն անհնար է: Այդ նույնը շեշտել էր երջանկահիշատակ Ա. Ա. Աբրահամյանը: Օրինակ՝ ահա նրա տված «Խոզն ու ագռավն» առակից բայ, որի սխալը ժամանակին չենք զգացել ու հիմա էլ չենք զգում չափածո խոսքում: *Զխտել*՝ ուտել, ներգործական բայի՝ *զխտվել* կրավորական գործածությունը[2] ուղիղ խնդրի հետ (դպրոցական դասագրքում XX դարում շարունակ տրվել է աշակերտներին առակի բարոյախրատականն ուսուցանելու համար ու լայն տարածում է ստացել հանգավորման պատճառով *զխտվել-փռվել* բարեհունչ գործածությունը. վերջինս միջին-անդրադարձ ձևի բայ է. *համաբանության* հետևանք է. (խոզը) Այնքան կաղին *զխտվեց*,// Որ ցած ընկավ ու *փռվեց*): Հատկապես XX դարի II կեսից *վերաբերել* բայի կիրառությունն ուշադրության կենտրոնում է (*առնչվել-վերաբերմունք ցույց տալ* տարբերակմամբ): Ահա Ա. Ա. Աբրահամյանի տված բառակազմական –*վ*- ձևույթով լայն ճանաչում գտած ժամանակակից արևելահայերենի բայերի[3] օրինակներից մի փունջ՝ բնակվել, գանգատվել, զգվել, դողահարվել, երդվել, ընդհարվել, զզվել, խաղաղվել, խելագարվել, խղճահարվել, կծկվել, համարձակվել, հաշտվել, հրաժարվել, չքվել, վախճանվել ևն: Հեղինակն անդրադարձել է –ւ/-ու/-վ ձևույթի կամ բայակերտից առաջ վերջնահնչյունի *համանուն* կամ *նույնանուն* լինելուն, կառույցների *համաձուլումներին*: Օրինակ՝ հաշվի առնելով Հ. Աճառյանի՝ *ցիր* բառի ստուգաբանական աշխատանքներում ներկայացրած գործիական հոլովի *ցրիւ/* գալ[4] վերջավորությունից ծագած սաստկականը, որից էլ՝ *ցրուել բայը* և այլ բառեր՝ ցրումն, *ցրուիչ* (ներկա *ցրիչ* գոյականն առանց այդպիսի ածանցի է), Ա. Ա. Աբրահամյանը ճշգրտորեն հետևեցրել է՝ *ցրուել* բայի -վ- ածանցի սերվելը գոյականի

---

[1]. ***Աբրահամյան Ա. Ա*** *,Բայը ժամանակակից հայերենում, գիրք I,Ե., էջ 650:*

[2]. *Ն. տ. էջ 657:*

[3]. *Ն. տ. էջ 650:*

[4]. ***Աճառյան Հ. Հ.,****Հայերէն արմատական բառարան, էջ 456, հ. IV, Ե. 1979. 676 էջ:*

գործիականից, այսինքն՝ *հաստատել, ընդլայնել է աճառյանական մոտեցումը*: *Կծվել* բայը սերվել է *կծու* նախատիպից, իսկ նրա սկզբնատիպը *կիծ* հիմնական ձևույթն է, *թթվել* բայինը՝ *թթու*[1], որի –ու-ն *մասնիկ* է (ածանց՝ գոյականակերտ, ածականակերտ), այն մերվել է բային: Ահա Հր. Աճառյանի «Հայերէն արմատական բառարան»-ից Ա. Ա. Աբրահամյանի կատարած հետևությունները՝ Մի շարք բայերի արմատական *վ*-ն հնարավոր է շփոթել ածանցների հետ: Օրինակ՝ բնիկ հայերեն *երդ/ն/ուլ* բայի ertu՝ *երդու* արմատից սերված ժամանակակից *երդվել*բայատիպարի – *վ*-ն արմատական հնչյուն է, ածանց չէ: Բնիկ հայերեն *հովիվ* (*հովիւ*) բառից նոր կերտված *հովվել* բայում հնչյունափոխությունից ձևավորված կրկնակ *վ* է, որը կապ չունի կրավորական ածանցի հետ՝ երկուսն էլ արմատական են՝ -վ և -ւ: *Հաշիւ*[2] ասորական փոխառությունից ստացվածը՝ *հաշվել*, որտեղ – *վ*-ն արմատի մաս է, ածանց չէ, մեխանիկան շփոթություն է ստեղծում: Այդպես է նաև պահլավական փոխառություն *պատիվ*[3] (*պատիւ*) արմատը, որից էլ *պատվել* բայը. այստեղ ևս սխալ է –*վ*-ն ածանց դիտարկելը: *Արտասվել* (*արցունք*) բառի –*վ-ն//-ու* արմատական է դիտարկվում մեծանուն գիտնականների կողմից, թվում է՝ սրա անցումն ածանցին ընդունելի է: *Գգվել, զգվել* չստուգաբանված բառերում –*վ*-ն ածանց համարել կարելի է: *Կռիվ* (*կուռ* արմատը գերադասելի է, մեր մեծությունները չստուգաբանված են համարել) բառի –*վ*-ն՝ ծագած –*ու*-ից, ևս հավանական է, հոլովաձևից լինի: Այժմ էլ շարունակվում է բայական համակարգի –*վ/ել* բաղադրյալ ածանցի բառակազմական գործընթացը: Նախորդ դարի 60-ականներից Հովհ. Շիրազի գեղարվեստում ուշադրություն գրավեցին հատուկ անուններից կերտված այդ տիպի բայերը[4], ինչպես՝ ավարայրվել, արագածվել, արազվել// արաքսվել, արարատվել, աքիլլեսվել, երևանվել, կայենվել, կոմիտասվել, մասիսվել, նարեկվել, նժդեհվել, շամիրամվել, չարենցվել ևն: Այդ երևույթն արցախյան գոյապայքարին նվիրված չափածոյում ևս արտահայտվեց (կարճ խոսքի բանաձև դարձավ)՝ արևսարվել, բեկորվել (արցախյան հերոսամարտիկ Աշոտ Ղուլյանի մականունից է), դավիթվել, թարթառվել, խաչենվել ևն:

Բառային իմաստի ընդարձակում և բայասեռի փոփոխություն ունեն *նվիրել// նվիրվել, հավաքել// հավաքվել և այլ բայեր*: Օրինակ՝ *հավաքել*

---

[1]. *Ն. տ., հ. II, էջ 181:*

[2]. *Ն. տ., հ. III, էջ 43:*

[3]. *Ն. տ., հ. IV, էջ 47:Աբրահամյան Ա. Ա.,Բայը ժամանակակից հայերենում, գիրք I ,Ե.,էջ 660-61:*

[4]. ***Մինասյան Ս. Ա.**, «Բայակազմական առանձնահատկությունները Հովհ. Շիրազի պոեմներում», «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1986., N 12,էջ30-36: Հատուկ անուններից կերտված բայեր, Ստ., 2004 , 72 էջ, մասնակի անդրադարձել է նաև Բաղդասարյան Գ. Խ., Արդի հայերենի բայասեռի և բայակազմության հարցեր, Ստ., 2005 , 88 էջ (II մշակում):*

բայի սկզբնատիպ ներգործականից սերվել է *հավաքվել* կրավորականը (Թղթերը *հավաքվեցին* ուսանողների կողմից), իսկ դրան զուգահեռ ստացվել է միջին-անդրադարձ[1] բայը՝ Ուսանողությունը *հավաքվեց* (խումբ կազմել) են: Այս ձևերն այժմ ուսանողությունը հստակ տարբերակում է: Կարելի է համարել բայի սեռային կարգի համանուն:

-Վ- ածանցով բայերը (համընդհանուր սովորական կրավորական սեռից բացի, տե՛ս գծ. 3) աբրահամյանական ներդրումների շնորհիվ ակադեմիական հրատարակության բուհական դասագրքում նշվում են ներգործականից սերված *չեզոքի ինքնին կատարելու* (բացվել), *անդրադարձ լինելու* (լվացվել) և *փոխադարձ* (համբուրվել, փաթաթվել) չեզոք բայերի ձևերով են[2], իսկ Մ. Ե. Ասատրյանը[3]*ընդհանուր կրավորակերպ չեզոք* է անվանում:

-(Ա//Ե)ՑՆ ԲԱՅԱԾԱՆՑՆԵՐ: Խորհրդային կարգերում պատճառական բայածանցների կիրառությունը սովորական էր:

Ռուսերենի միջնորդությամբ մի շարք նոր փոխառությունների (նախորդ դարի կեսերին *նորագույն* է համարվել) ուշադրություն էր դարձրել Գ. Սևակը[4] (Գրիգորյան)՝ յոթ բայի նշմամբ՝ էվակուացնել, կոմբինացնել, մոբիլիզացնել, մոտորացնել, նորմավորել// նորմալացնել, օկուպացնել (*նորմավորել*-ն իր ածանցային կառուցվածքով մեր հետաքրքրության շրջանակներից դուրս է):

Մեծ երախտավոր Ա. Ա. Աբրահամյանն[5] առավել ընդարձակել է բայական այդ իրողությունը (գծ. 5): Նա նշել է. «*Ռուսերենում այս կարգի* (և ոչ միայն այս կարգի) *բայերը չեն կարող լինել առանց ռուսերենին հատուկ բայացնող մասնիկի* (ть), *իսկ սրա հետ կապակցվում են զանազան ածանցներ: Քննարկվող բայերը հիմնականում խմբավորվում են* -ова(ть) *ածանցի և նրա տարբերակների՝*–ирова-, –изирова-, -изова- *ածանցների շուրջը*» (այստեղ խոսքը չի վերաբերում ռուսերենի բայակազմական բոլոր ածանցներին ընդհանրապես, որոնք շատ են[6]): Ռուսերենի համար այս ածանցների փոխատու աղբյուրը *գերմաներենն* է, վերջինիս համար էլ՝ *ֆրանսերենը*, իսկ սրա համար էլ՝ *լատիներենը* (ire դերբայական մասնիկը), նաև բուն ռուսական բառեր էլ կան[7]: Վ. Վ. Վինոգրադովը նաև

---

[1]. *Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, էջ 640:*

[2]. ***Աբրահամյան Մ. Գ., Պառնասյան Ն. Ա., Օհանյան Հ. Ա.,*** *էջ 294-296, Ժամանակակից հայոց լեզու (ձևաբանություն), հ. 2, Ե., 1974 :*

[3]. ***Ասատրյան Մ. Ե.,*** *էջ 220, Ժամանակակից հայոց լեզու (ձևաբանություն, II հրտկ.), Ե., 1989 :*

[4]. ***Գուրգեն Սևակ,*** *Հայոց լեզվի զարգացման սովետական փուլը, էջ 18-19, Ե., 1946 , Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 140-141, Ե., 1955 .:*

[5]. *Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, էջ128:*

[6]. *Ն. տ.:*

[7]. *Ն. տ., էջ 129:*

կիսափոխառյալ ածանցներ[1] է համարել որոշակի *մերվածները*: Ա. Ա. Աբրահամյանը գտել է, որ մի շարք բայերում *–ցն-* ածանցը (հիմնային *ա* ձայնավորի հետ) կցվել է *–ել* մասնիկին և դարձել բայական մասնիկավորման անբաժան տարր, որտեղ *հիմնականը ոչ թե պատճառական գաղափարն* է, այլ *բայական բառույթի կազմումը*[2], ինչպես՝ էվակուացնել, լիկվիդացնել, կոմբինացնել, կոոպերացնել, կոորդինացնել, մոբիլիզացնել, օկուպացնել ևն (այս բառերի հիմնական մասն արդեն հայերեն համարժեքն ունի, Աշոտ Հայրապետյանի «Օտար բառերի բառարան»-ում[3] բայական ձևերն ընդգրկված չեն. այս բառերը թարգմանական[4], բացատրական, ուղղագրական բառարաններում ընդգրկված են XX դարի վերջից):

Ա. Ա. Աբրահամյանը նաև ավելացրել է, որ *–ացնել* բառատիպարով ածանցն ուղղակի կցվում է փոխառյալ բաղադրիչ հիմնական մասին՝ կոլեկտիվացնել, կոնվեյերացնել, պաստյորացնել (պահածոյացնել) ևն: Սովորական պատճառական բայեր է համարել այնպիսի օրինակներ, որոնք փոխառյալ հիմնական բաղադրիչով ածանցված բայերում ունեն իրենց համապատասխան անանցողական զուգահեռ ձևերը՝ ակտիվացնել// ակտիվանալ, բյուրոկրատացնել// բյուրոկրատանալ, նորմալացնել// նորմալանալ, պասիվացնել// պասիվանալ ևն (*-ավորել* ձևով բայակազմությունները առավել հայահունչ են, ինչպես՝ ավտոմատավորել// ավտոմատացնել, էկրանավորել// էկրանիզացնել ևն): Օրինակ՝ *մոբիլիզացիա* նախատիպից սերված *մոբիլիզացնել* (*իա—նել -ցիա*+-ցն(ել)) օտարահունչ բառում հնչեղ է պատճառականությունը (կառույցների *համաձուլում* է կատարվում, որը բնական ընթացք է, ինչպես՝ աշխատել- 0// աշխատ-եցն-ել -- աշխատ-եց-վ-ել, ուտել- ուտ-վ-ել // ուտ-եցն-ել—ուտ-եց-վ-ել ևն): *Վերցնել* չգիտակցվող պատճառականով բայի համար սերման հիմքը *վեր առնել* հարադրությունն է , իսկ *հարցնել* բայում պատճառականություն չկա(հարց, հարցում):

Այսպիսով՝ Ա. Ա. Աբրահամյանի բայագիտական աշխատությունում մեզ հետաքրքրած ածանցները բայական համակարգում քննվել են բայատիպարային հիմունքով: Խնդրո առարկա –Վ, -(Ա//Ե)ՑՆ

---

[1]. *Ն. տ.:*

[2]. *Ն. տ., էջ 131:*

[3]. ***Հայրապետյան Ա. Պ.,*** *Օտար բառերի բառարան (II վերաշակված հր.),, Ե., 2011.:*

[4]. *Ռուս-հայերեն բառարան (4 հատոր), Ե., 1954, 1956, 1957, 1958 .: Աղայան Էդ., Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, , Ե., 1976 : Բարսեղյան Հ. Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Ե., 1973 : Մեյթիխանյան Փ. Գ., Հայերենի ուղղագրական նոր բառարան, 2005 .: Հատուկ անուններից կազմված սակավ ձևեր կան բառարաններում, տե՛ս Մինասյան Ս. Ա., Հատուկ անուններից կերտված բայեր, Ստ., 2004 , Հատուկ անուններից կերտված համադրական բայեր, Հատուկ անուններից կերտված բայերի կառուցվածքային տիպաբանությունը հայերենում ու ռուսերենում, էջ 3-7:*

ածանցներըսեռի, սեռային առումների և բառակազմականի դեր ունեն, որը զարգացման գործընթացում արժևորվել է ու արժևորվում է հավուր պատշաճի: Դրանք հեղինակի կողմից տրվել են ստուգաբանական հիմնավորումներով: *Կրավորական* և *պատճառական* ածանցներից կազմված սկզբնատիպ՝ նախատիպ սակավ բայաձևերում իշխում են քերականական բայատիպարային ածանցները: Այս ամենը համակարգված է ներկայացված մեծ երախտավորի՝ Ա. Ա. Աբրահամյանի կողմից:

Գծ.1, 2, 3


Կերպածանցներ՝ բազմապատկա-կան
Սոսկածանցներ (բաղադրական-քերականական, ներածանց)
Սեռածանցներ
Բայածանցների տիպարներ
Սեռածանցներ (տիպարներ)
Կրավորական
Պատճառական
Բայատիպա-րային ածանցներ
Բուն քերակա-նական
Սեռ
Կերպ
Բաղադրական-քերականական


Սեռադասային ածանցներ
(տիպարային ածանցներ)
Անանցողական
Անցողական
Կրավորական
(-վ՝ գրվել)
Միջին անդրադարձ
(լվացվել)
Պատճառական
(-ցն՝
աշխատեցնել)

Գծ.4


-Վ- բայածանց
(տիպարային ածանց)
Սեռածանց
Բառակազմական
Կրավորական
Միջին անդրադարձ

Գծ. 4



Գծ.5

Գրականություն

1.Աբրահամյան Ա. Ա.,*Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը,* Ե., 1953 , 440 էջ:
2. Աբրահամյան Ա. Ա.,*Բայը ժամանակակից հայերենում,* գիրք I, Ե.,1962 , 730 էջ:
3.Աբրահամյան Ս. Գ.,*Ժամանակակից գրական հայերեն,* Ե., 1981 , 418 էջ:
4. Աբրահամյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Օհանյան Հ. Ա., *Ժամանակակից հայոց լեզու* (ձևաբանություն), հ. 2, Ե., 1974 , 588 էջ:
5. Աղայան Էդ., Բ., *Արդի հայերենի բացատրական բառարան,* Ե., 1976 , 1616 էջ:
6.Աճառյան Հ. Հ.,*Հայերէն արմատական բառարան,* 4 հ., Ե. 1971-79 :
7.Ասատրյան Մ. Ե., *Ժամանակակից հայոց լեզու* (ձևաբանություն, II հրտկ.) Ե., 1989 , 432 էջ:
8.Բաղդասարյան Գ. Խ., *Արդի հայերենի բայաստեղի և բայակազմության հարցեր*, Ստ., 2005 , 88 էջ (II մշակում):
9. Բարսեղյան Հ. Խ., *Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան,* Ե., 1973 , 980 էջ:
10.Հայրապետյան Ա. Պ., *Օտար բառերի բառարան* (II վերաշակված հր.), Ե., 2011, 644 էջ:

11.Մեյթիխանյան Փ. Գ., *Հայերենի ուղղագրական նոր բառարան*, Ե., 2005 , 428 էջ :
12.Մինասյան Ս. Ա., «*Բայակազմականառանձնահատկությունները Հովհ. Շիրազի պոեմներում*», Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1986, N 12:
13.Մինասյան Ս. Ա., *Հատուկ անուններից կերտված բայեր*, Հայաստան հրտ., Ստ., 2004 , 72 էջ:
14. Ռուս-հայերեն բառարան (4 հատոր), Ե., 1954, 1956, 1957, 1958 :
15. Սևակ Գ., *Հայոց լեզվի զարգացման սովետական փուլը*, , Ե., 1946 :
16. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955 :

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ., դոցենտ Հ.Ս.Ղազարյանը:

ՀՏԴ 371.31: 809.198.1
Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա

Մարգուշ ՄԻՐՈՒՄՅԱՆ,
մ.գ.թ., դոցենտ
Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ, Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԻՊԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Հոդվածում քննարկվում են միջնակարգ դպրոցում բառակազմության վերլուծական տիպի ուսումնասիրման մեթոդները:
Առաջադրվում է վերլուծական բարդությունների բաղադրիչների հակադրման մեթոդը, որը թույլ է տալիս բացահայտել վերլուծական բարդությունների կառուցվածքային առանձնահատկությունները: Տրվում են այն մեթոդները, որոնք ապահովում են բառակազմության վերլուծական տիպի ուսումնասիրման արդյունավետությունը: Այդ մեթոդներն են մանրապատումը, խմբային հետազոտությունը, 10 րոպեանոց շարադրությունը, եռաստիճան հարցազրույցը և վեբ-որոնումը:
Բանալի բառեր՝ *մեթոդ, մանրապատում, խմբային հետազոտություն, 10 րոպեանոց շարադրություն, եռաստիճան հարցազրույց, վեբ-որոնում:*

М. Мирумян

МЕТОДЫ ОБУЧЕНИЯ АНАЛИТИЧЕСКОГО ТИПА СЛОВООБРАЗОВАНИЯ В СРЕДНЕЙ ШКОЛЕ

В данной статье рассматриваются вопросы обучения аналитического типа словообразования в средней школе.
При обучении предлагается сопоставление компонентов аналитических сложных слов, что позволяет выявить особенности сложностей аналитической структуры. Даются те методы, которые обеспечивают эффективность обучения аналитического типа словообразования, такие как: миниатюра, групповое исследование, 10-минутное сочинение, трёхстепенное интервью, Веб- поиск.
Ключевые слова: *метод, миниатюра, групповое исследование, 10-минутное сочинение, трёхстепенное интервью, Веб-поиск.*

M. MIRUMYAN

THE METHODS OF STUDYING THE ANALYTICAL TYPE OF WORD-FORMATION AT SECONDARY SCHOOL

The article deals with the problems of teaching the analytical type of word-formation at secondary school. We propose to study the analytical type of word formation by the comparative analysis of their structures in the process of which it will become possible to identify the peculiar features of this word-formation type.

The article presents those methods with the application of which ensures the effectiveness of teaching analytical compound words, for instance, a short story, a group research, a 10-minute composition, three- stage interview, web- search.

Key words: *method, miniature, group research, 10-minute essay, three-stage interview, web- search.*

Միջին դպրոցում աշակերտների բառապաշարի հարստացման արդյունավետության գրավական է բառակազմության ուսումնասիրումը: Այն հիմնականում կատարվում է ածանցման, բարդության և հապավման եղանակների ուսումնասիրման միջոցով: Բառակազմական մակարդակում ուսումնական նյութի յուրացմանը մեծապես նպաստում է բառաբարդման եղանակը, որի շրջանակներում սովորողները գիտելիքներ և կարողություններ են ձեռք բերում բարդությունների համադրական և վերլուծական կառուցատիպերի վերաբերյալ[1]:

Դիտարկենք բառակազմության վերլուծական տիպի ուսումնասիրման խնդիրներն ու նրանց լուծման մեթոդները միջին դպրոցում:

Մեր մանկավարժական փորձի և հատուկ նպատակով ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերլուծական բարդությունների ուսումնասիրումը նպատակահարմար է իրականացնել նրանց կառուցատիպերի *համեմատական դիտարկման ճանապարհով:* Մեթոդական այս ուղին առաջին հերթին ապահովում է ուսումնական նյութի յուրացման դրական դրդապատճառներ, որոնք հիմք են դառնում յուրացման գործընթացում բառի նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը՝ բարձրացնելով դասագործընթացի արդյունավետությունը:

Գործընթացն իրականացվում է վերլուծական բարդությունների շուրջ վերլուծական-համադրական մտավոր գործունեության ծավալման ճանապարհով: Բնութագրվում են նշված բարդությունները՝ շեշտադրելով նրանց կառուցատիպի առանձնահատկությունները: Խթանման փուլում

---

[1] *Ըստ **Ս. Գյուլբուդաղյանի**՝ բառակազմության ուսումնասիրումը հանրակրթական դպրոցում երկու նպատակ պետք է հետապնդի՝ լեզվական միջոցների ու երևույթների գիտակցական յուրացում և այդ միջոցներով խոսքի հարստացում: (Տե՛ս Գյուլբուդաղյան, Ս.Վ, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Եր., 1987):*

դիտարկվում է գրատախտակին գրված հետևյալ բառախումբը. *տեսակ-տեսակ, բարձր-բարձր, երկու-երկու, գլոր-գլոր, բան-ման, մարդ-մուրդ, տխուր-տրտում, դես-դեն, տուն-թանգարան, թույլ տալ, բաց անել, հանդես գալ, աչքի ընկնել, առնել-ծախել, ծլել-ծաղկել, տակ ու գլուխ, խաղ ու պար* և այլն:

Հարցերի օգնությամբ սովորողների ուշադրությունը կենտրոնացնում ենք գրատախտակին գրված բառերի բաղադրիչների, նրանց միջև առկա շարահյուսական կապերի և քերականական առանձնահատկությունների, ինչպես նաև շեշտադրության ինքնատիպության վրա: Աշակերտները մեր անմիջական օգնությամբ դասակարգում են այդ առանձնահատկությունները: Դրանք են՝

ա) կազմվում են անջատաբար գործածվող բառ-բաղադրիչներից,

բ) պահպանվում են շարահյուսական կապերն այդ բաղադրիչների միջև,

գ) պահպանվում են բաղադրիչների քերականական իմաստները,

դ) բաղադրիչներն արտահայտում են համադասական և ստորադասական հարաբերություններ,

ե) բաղադրիչները սովորաբար երկու շեշտ են ունենում (մեկը՝ թույլ, մյուսը՝ ուժեղ)[1]:

Համադասարանային քննարկման ընթացքում սովորողները բացահատում են, որ կազմվելով հարադրության հիմունքով՝ վելուծական բարդությունները միաժամանակ տարբերություններ են դրսևորում միմյանց նկատմամբ և հատկանշվում մի քանի տարատեսակներով: Դրանք անվանվում են նաև *հարադրական բարդություններ:* Մենք նախընտրում ենք այդ բարդությունները սովորողներին ներկայացնել *վերլուծական* անվանումով՝ նկատի առնելով, որ դա նախ՝ ավելի հստակ է արտահայտում համադրական բարդությունների նկատմամբ վերլուծական բարդությունների տարբերությունը և ապա՝ հնարավորություն է ընձեռում հստակորեն տարբերելու նրանց տեսակները:

Ա. *Լավ-լավ, փունջ-փունջ, մեկ-մեկ, տեսակ-տեսակ* բառերը դիտարկելով՝ աշակերտները նկատում են, որ վերլուծական բարդություններ կան, որոնք կազմվում են նույն բառի կամ կրկնվող արմատի հարադրությամբ և այլն:

---

[1] *Մասնագիտական գրականության մեջ վերլուծական բարդությունների ձևաիմաստային տիպերի քննությունը տե՛ս հետևյալ աշխատություններում.* ***Աբեղյան Մ.Խ,*** *Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965:* ***Աբրահամյան Ա.Ա.****, Բայը ժամանակակից հայերենում,Եր.,1962:* ***Աղայան Էդ.Բ.,*** *Ընդհանուր և հայկական բառագիտություն,Եր., 1984:* ***Ջահուկյան Գ.Բ.,*** *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն,Եր.,1989:* ***Խաչատրյան Լ.Մ.****, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Եր., 2011:*

Բ. *Կանաչ-կարմիր, ողջ-առողջ, կոշտ-կոպիտ, տուն-տեղ, հեռու-մոտիկ* և այլ բառեր դիտարկելիս նրանք եզրակացնում են, որ կան նաև վերլուծական բարդություններ, որոնք կազմվում են տարբեր բառերի հարադրությամբ:

Գ. *Միտք անել, աչքից ընկնել, հուսախաբ անել, դուրս գալ, հուպ տալ,* կամ միայն բայերի հարադրությամբ՝ *գրել-կարդալ, երգել-պարել, բերել տալ, գրել տալ, զգալ տալ* և այլ բառեր քննարկելիս հանգում են այն եզրակացության, որ կան վերլուծական բարդություններ, որոնք կազմվում են որևէ բառի և բայի կամ միայն բայական անդամների հարադրությամբ:

Դ. *Աջ ու ձախ, բառ ու բան, գունդ ու կծիկ, կարգ ու կանոն, խեղճ ու կրակ, պարտ ու պատշաճ* և այլ բառեր ուսումնասիրելիս նկատում են, որ կան վերլուծական բարդություններ էլ, որոնք կազմվում են առանձին գործածություն ունեցող այնպիսի բառերի հարադրությամբ, որոնք իրար հետ կապվում են *ու* համադասական շաղկապով:

Դասդասելով նշված չորս կառուցատիպերի վերլուծական բարդությունները՝ աշակերտները խմբավորում են նրանց հետևյալ տեսակները՝

ա) կրկնավոր հարադրություններ (տեսակ-տեսակ),

բ) անվանական հարադրություններ (կանաչ-կարմիր),

գ) բայական հարադրություններ (գրել-կարդալ),

դ) բաղհյուսական հարադրություններ (աջ ու ձախ):

Մեր մանակավարժական փորձով և հատուկ ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված տվյալներով մենք համոզվել ենք, որ «վերլուծական բարդությունների և դրա հետ՝ կրկնավոր հարադրությունների», «անհնչյունափոխ և հնչյունափոխված կրկնավոր բարդությունների», «նախդրավոր կրկնավոր բարդությունների», «անվանական հարադրական բարդությունների», «բաղհյուսական բարդությունների», «բայական հարադրությունների», «հարադրավոր բայերի», «զուգադրական բայերի», «պատճառական հարադիր բայերի» ուսումնասիրումը արդյունավետ է հատկապես ուսուցման փոխներգործուն մեթոդների, հնարների և տարաբնույթ վարժությունների միջոցով[1]:

Այսպես՝ նշված լեզվական նյութերն ուսումնասիրեցինք ներքոհիշյալ մեթոդական հնարների կիրառմամբ:

ա) «Մանրապատում»: Այս մեթոդական հնարի կիրառումը նպաստեց

---

[1] ***Ջ.Գյուլամիրյանը*** *նույնպես կարևորում է բառակազմական վարժությունների կատարման ճանապարհով բառակազմություն թեմայի ուսումնասիրումը՝ հիմնականում տեղ հատկացնելով բացատրական-վերլուծական և կիրառական վարժություններին (**Գյուլամիրյան Ջ.Հ.,** «Մայրենի 2». Հանրակրթական դպրոցի դասագիրք, Եր., 2003, էջ 135):*

ուսումնասիրվող նյութի վերաբերյալ ոչ միայն համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորմանը, այլև սովորողները ձեռք բերեցին ուսումնական նյութի էությունն ինքնուրույն ըմբռնելու կարողություն:

բ) «Խմբային հետազոտություն»: Մեթոդական այս հնարը հնարավորություն ընձեռեց նյութի ուսումնասիրման համար բարդ բառերից կազմված տեքստ ընտրելու, որն ինքնին ստեղծեց լեզվական իրողությունները տարբեր դիդակտիկական տեսանկյունից դիտարկելու պայմաններ.

- ուսուցիչը ներկայացրեց տեքստը, և աշակերտները որոշեցին նրանում առկա բարդ բառերը,
- աշակերտները քննարկեցին նյութը և ուսումնասիրման համար թեման բաժանեցին ենթաթեմաների,
- աշակերտներն աշխատանքն իրականացրին ուսուցչի մասնակցությամբ՝ որպես գործընկեր:

գ) «10-րոպեանոց շարադրություն»: Մեթոդական այս հնարի կիրառումը մեծապես նպաստեց բարդ բառերից կազմված տեքստի ընկալմանը, լեզվական հասկացությունների ուսուցման և լեզվական գիտելիքների յուրացման գործընթացում ինքնուրույն վերաբերմունքի ձևավորմանը, մտքերն արտահայտելու կարողության և ստեղծագործական-վերլուծականության զարգացմանը: Այս աշխատանքի համար ուսուցիչը հանձնարարեց 10 րոպեի ընթացքում, առանց կանգ առնելու, գրել իրենց դատողությունները բարդ բառերի կառուցվածքի վերաբերյալ: Աշակերտները զույգերով վերլուծեցին ներկայացված բարդ բառերը՝ առանց տեքստից ու թղթից կտրվելու: (Այս աշխատանքը չպետք է լինի նախապես պլանավորված և աշակերտներին ծանոթ տեքստից): Այս ճանապարհով հնարավոր է բացահայտել ոչ միայն լեզվական հասկացությունների մասին աշակերտի ունեցած գիտելիքները, այլև նրա ստեղծագործական կարողությունները: Երբ աշակերտն այլևս ասելիք չունի, չպետք է կանգ առնի, նա պետք է նշի՝ «չգիտեմ՝ էլ ինչ գրեմ», «էլ բան չկա գրելու» կամ նման այլ արտահայտություններ՝ մինչև 10 րոպեն լրանալը: Սահմանված ժամանակը լրանալուց հետո աշակերտներին հանձնարարվում է անդրադառնալ տեքստին և նորից ստուգել բարդ բառերի վերլուծության ճշգրտությունը:

դ) «Եռաստիճան հարցազրույց»: Մեթոդական այս հնարի միջոցով իրականացրել

ենք՝

- լեզվական հասկացությունների վերաբերյալ կուտակած տեղեկույթի փոխանցում և փոխանակում, լեզվական մտածողության ձևավորում,
- զրուցակցին լսելու, հասկանալու, ինքնուրույն աշխատելու և խոսակցական հմտությունների զարգացում:

Ուսուցման ընթացքում՝

- մտքերի տարափի միջոցով պարզեցինք ուսումնասիրվող ողջ նյութի, մասնավորապես բառակազմության վերաբերյալ աշակերտների նախնական գիտելիքների մակարդակը,
- աշակերտները ներկայացրին բառակազմության շուրջ փոքրածավալ բացատրություններ և սահմանեցին այս առնչությամբ լեզվական հիմնական հասկացությունները,
- աշակերտներին բաժանվեցին բառակազմություն թեմային վերաբերող առաջադրանքներ, և նրանք տարբեր ճանապարհներով ու եղանակներով դրանք կատարեցին խմբերով,
- յուրաքանչյուր խումբ իր տարբերակն անցկացրեց թղթի վրա և լուծումները համեմատում ու վերլուծում էր ուսուցչի անմիջական աջակցությամբ:

«Եռաստիճան հարցազրույց» մեթոդական հնարը նպաստեց յուրացրած գիտելիքների նկատմամբ աշակերտների վստահության ձևավորմանը և թեմայի յուրացումը դարձրեց արդյունավետ:

ե) «Վեբ-որոնում» մեթոդական հնարը բառակազմության ուսումնասիրման լավագույն ձևն է: Այն ինքնատիպ ուսումնական գործունեության ձև է, որի ընթացքում աշակերտները գիտելիքներ են ձեռք բերում հիմնականում տարբեր աղբյուրներից՝ հանրագիտարաններից, էլեկտրոնային գրադարաններից, համացանցից և այլն:

Նրանց փնտրտուքի նպատակն է հետազոտել բառակազմության վերաբերյալ տեսական տարբեր վարկածներ, կաղապարավորել բառերն ըստ կազմության:

Այս աշխատանքն իրականացվում է հետևյալ քայլաշարով.

- ծրագրային նյութից այն ուսումնական հարցի (տվյալ դեպքում՝ վերլուծական բարդությունների) առանձնացում, որը պետք է բազմակողմանիորեն ուսումնասիրվի կամ խորությամբ վերլուծվի,
- ծրագրային նյութերից որոշ հատվածների առանձնացում և դրանց ուսումնասիրության գործընթացի հարմարեցում միջին դպրոցում սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին,
- այն աղբյուրների հստակեցում (գրքեր, ուսումնական ձեռնարկներ, համացանց), որոնցից պետք է սովորողներն օգտվեն՝ նյութը բազմաշերտ ու խորը ուսումնասիրելու համար:

Մենք համոզվել ենք, որ «Բառակազմություն» թեմայի ուսումնասիրման արդյունավետության ապահովումը միաժամանակ պայմանավորված է ուսուցչի ծավալած ուսուցողական գործողություններով ու մեթոդական հնարներով: Դիտարկվող մեթոդական հնարի կիրառման պարագայում, կարծում ենք, որ ուսուցիչը պետք է՝

- ձեռք բերի և սովորողներին ներկայացնի ուսումնական տվյալ թեմային վերաբերող տեղեկույթի համապատասխան աղբյուրներ,
- հստակեցնի ուսումնական թեման՝ չթողնելով անհասկանալի որևէ հատված,

- աշակերտներին բացատրի ուսումնասիրվող թեմայի գործնական նշանակությունը և դրա լուծումը գտնելու ուղիները,
- աշակերտներին սովորեցնի տեղեկույթի որոնման արդյունավետ այլ ձևեր:

Մեր կողմից կիրառված մեթոդական հնարներն առավել կարևոր ու արդյունավետ ենք համարում, քանի որ դրանք լուծում են որոշակի ուսուցողական նպատակներ:

Նշենք դրանցից հիմնականները՝

- լեզվական գիտելիքների գիտակցական ձեռքբերումը, յուրացումը, ամրապնդումը և կիրառումը,
- լեզվական գիտելիքների ծավալի աստիճանական ընդլայնումն ու հստակեցումը՝ առարկայական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի համապատասխան,
- բարձրակարգ մտածողության բաղադրիչների ձևավորումը,
- համագործակցային և հաղորդակցական հմտությունների զարգացումն ու ձևավորումը,
- ՏՏ-ներից և ուսումնական տարբեր միջոցներից օգտվելու կարողության զարգացումը:

Վերլուծական բարդությունների կառուցատիպերի և նրանց յուրահատկությունների վերաբերյալ սովորողների իմացածն ամրապնդելու և դրանք գործնական հմտությունների վերածելու նպատակով մշակել և կիրառել ենք հետևյալ վարժությունները:

Վարժություն 1. Տրված բառաշարքերից ընտրե՛ք համապատասխան զույգեր և կազմե՛ք վերլուծական բարդություններ:

ա) Գիշեր, երգել, երկու, ուտել, աչքով, տանել, գնալ, քանի, հեռու, այստեղ, վազել, վարել, ուտող, եկող, առնել, կերած, եփել, թռչել, անցած,

բ) Խմող, թափել, հասնել, փախչել, այնտեղ, գալ, երկու, պարել, որ, ունքով, ցերեկ, խմել, մոտիկ, գնացող, խմած, ցանել, բերել, անցնել, գնացած:

Վարժություն 2. Տրված բառերից կազմե՛ք կրկնավոր բարդություններ և դիտարկե՛ք դրանց բաղադրիչները:

Խումբ, երամ, տաք, շուտ, զույգ, շարան, բուռ, հինգ, մեծ, քիչ, հազար, կաթիլ, իրեն, ջերմ, փաթիլ, օղակ, սուսիկ, սուր, սև, պարապ, ալիք, պակաս, մանր, առատ, փոքր, մարդ, ասան, թելիկ, մերթ, հաց, թալան:

Վարժություն 3. Համապատասխան շարքերից ընտրելով մեկական բառ՝ *ու* շաղկապի միջոցով կազմե՛ք վերլուծական (բաղհյուսական) բարդություններ և քննարկե՛ք դրանց կառուցատիպերը:

ա) Ահ, զենք, հաստ, տուն, ծանր, նետ, ներս, մուրճ, թանկ, խաղ, չար, աջ, վեր, ինձ, ազգ, բան, կարգ,

բ) դող, մանգաղ, աղեղ, կանոն, բարեկամ, գործ, ձախ, ինձ, դուրս, տեղ, վար, թեթև, բարի, պար, զրահ, բարակ, էժան:

Վարժություն 4. Տրված կրկնավոր բարդությունները գործածե՛ք նախադասությունների մեջ և դիտարկե՛ք դրանց իմաստային նրբությունները:

Փունջ-փունջ, հին-հին, ճեփ-ճերմակ, արագ-արագ, շիփ-շիտակ, առոք-փառոք:

Վարժություն 5. Հետևյալ բնագրից դո՛ւրս գրեք բաղադրյալ բառերը և որոշե՛ք նրանց տեսակները:

Օդը մառախլապատ էր: Մեգը, թավալվելով ձորեձոր, սարեսար, ալիք-ալիք նստում էր սևումութ անդունդներին ու ծերպերին: Ճանապարհի բարակ թելը ոլորվում, տեղ-տեղ կորչում և հետզհետե բարձրանում էր ամրոցը: Մշուշը փաթաթվում էր հինավուրց անտառներին, օձապտույտ ձգվում մինչև երկինք: Կամաց-կամաց աղջամուղջն էլ նստեց ձորերին: Լուսինը դուրս լողաց բարձրաբերձ լեռների խորքից: Նրա թախծալի լույսը կախվեց ահագին ձորի մթության վրա: Տխուր ծկլթում էր գիշերահավը, ու չարագուշակ վայում էր բուն: Իր ընդարձակ օթևանում՝ նեղ պատուհանի գոգին, նստած էր Փառանձեմ տիկինը: Իր օրիորդական հասակի փայփայած բաղձանքը մնաց անկատար, և հիմա վարում էր միանձնուհու կյանք: Նա իր վիշտը թաղում էր ընթերցանության և զավակների կրթության հոգսերի մեջ:

Հիմա էլ՝ Պարսկաստան մեկնելու նախընթաց գիշերը, տիկինը, տարօրինակ մի ոգևորությամբ համակված, կարդում էր հայրենաշունչ պատմահոր գիրքը: Նա խոսում էր հայկազյան թագավորների մասին: Նա օրհներգում էր Տիգրան Մեծի փառավոր օրերը, և խոր կսկիծով էր լցվում հոգին, երբ մտածում էր իր հայրենիքի ներկա անմխիթար վիճակի մասին (ԴԴ):

Այսպիսով, բառակազմության վերլուծական տիպի ուսումնասիրման խնդիրների ու նրանց լուծման մեթոդների համակարգը կարող է օգտակար լինել ինչպես հայոց լեզվի ուսուցիչներին, այնպես էլ միջին դպրոցի աշակերտությանը՝ հայերենի բառակազմության վերաբերյալ իրենց գիտելիքները խորացնելու և բառագործածաության հմտությունները զարգացնելու առումներով:

Գրականություն

1. Աբեղյան Մ. Խ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. Աբրահամյան Ա. Ա., Բայը ժամանակակից հայերենում, գ. 1, Երևան, 1962:
3. Աղայան Է. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984:
4. Գյուլբուդաղյան Ս. Վ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987:
5. Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենի-2, Հանրակրթական դպրոցի դասագիրք, Երևան,2003:
6. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն բառակազմություն, Երևան,1989:
7. Խաչատրյան Լ. Մ., Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Երևան, 2011:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ. , դոցենտ Հ.Ս. Ղազարյանը:

ՀՏԴ 809.198.1
Հայոց լեզու

Շուշանիկ ՍԱՂՅԱՆ
ԱրՊՀ, բ.գ.թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ (Աշոտ Աբրահամյան-100)

Հոդվածում «Գրաբարի ձեռնարկ», «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» աշխատությունների մի շարք հարցերի քննությամբ վեր է հանվել անվանի լեզվաբան Ա. Աբրահամյանի անուրանալի ներդրումը պատմական հայերենագիտության բնագավառում:

Լեզվական այս կամ այն երևույթի գոյությունն ավելի վաղ շրջաններին վերագրելը հատուկ է Ա. Աբրահամյանի պատմական լեզվամտածողությանը: Նա հայերենագիտության մեջ առաջինն է, ով անկատար դերբայի պատմական ձևերի (-ում, -իս վերջավորություններով), -ու-ով ապառնի դերբայի նախաձևերի օրինակներ է տվել Vդ. մատենագրությունից: Անվանի լեզվաբանը դերբայների բարբառային դրսևորումների հմուտ քննությամբ վեր է հանել մեր լեզվի քերականական տեխնիկայի հարստությունը՝ ստեղծելով քերականական իմաստների պատմական զարգացման յուրօրինակ համակարգ:

Բանալի բառեր՝ *անկատար դերբայ, անորոշ դերբայ, ապառնի դերբայ, բարբառ, գրաբար, նախաձև, ներգոյական հոլով, պատմական բարբառագիտություն, պատմական հայերենագիտություն, պատմական հնչյունաբանություն, պատմական ձևաբանություն, պատմական շարահյուսություն :*

Ш. Сагиян

ВКЛАД А. АБРААМЯНА В АРМЯНСКУЮ ИСТОРИЧЕСКУЮ ЛИНГВИСТИКУ

В статье рассматривается значительный вклад языковеда А. Абраамяна в историческое изучение армянского языка, в частности в историческую морфологию и фонетику. В данной статье рассматриваются "Пособие по грабару" и "Причастные формы армянского языка и их морфологическое значение", в которых содержаться основные научные взгляды А. Абраамяна.

"Пособие по грабару" содержит необходимую основу для дополнения исторического описания грабара / старого

литературного армянского. "Причастные формы армянского языка и их морфологическое значение" является первым историческим описанием причастий, которое также свидетельствует о необходимости соответствующих диалектических фактов при диахроническом изучении языка.

***Ключевые слова**: арменистика, грабар, диалект, инфинитив, историческая диалектология, историческая морфология, исторический синтаксис, историческая фонетика, предложный падеж, причастие будущего времени, причастие несовершенного вида.*

S. Saghyan

A. ABRAHAMYAN'S CONTRIBUTION TO ARMENIAN HISTORICAL LINGUISTICS

The article considers the significant contribution of the eminent linguist A. Abrahamyan in Historical Linguistics, in particular in Historical Morphology and Historical Phonetics of Armenian. This article analyzes A. Abrahamyan's "Manual on Old Armenian", "Armenian Verbals and their morphological meaning", which cover some of the A. Abrahamyan's findings. Manual on "Old Armenian" provides reliable basis for deeper insight into Old Armenian. "Armenian Verbals and their morphological meaning" is the first diachronical outline of Armenian verbals and proves that diachronic development should be viewed on the basis of relevant dialectical facts.

***Keywords**: Armenian Historical Linguistics, dialect, infinitive, future participle, Historical Dialektologie, Historical Morphology, Historical Phonetics, Historical Syntax, locative, Old Armenian, verbal.*

Ա. Աբրահամյանը պատմական հայերենագիտության հարցերով զբաղվում էր 1940-ականների վերջից, երբ նշված գիտակարգն իր կայացման հարյուրամյա ժամանակահատվածում ասպարեզ էր բերել երախտավորների, որոնց լեզվաբանական-հայերենագիտական մտքի նվաճումներն ամփոփվել են Հր. Աճառյանի կողմից: Ինչպես մնացած գիտությունները, լեզվաբանությունը ևս անընդհատական զարգացումների մեջ էր՝ նոր մեթոդների կիրառման կամ հների կատարելագործման, լեզվական փաստերի վերաիմաստավորման ու նոր աղբյուրների օգտագործման առումով: Աստիճանաբար առանձնանում էին լեզվի պատմական քննության նպատակային կարգերը՝ գրական լեզվի պատմությունը, գրավոր լեզվի պատմությունը, լեզվի ընդհանրական պատմությունը (լեզվի դրսևորման բոլոր ձևերի պատմությունը): Գոյակցում էին հայոց լեզվի պատմությունը և պատմական քերականությունը: Մեծ մասով տարորոշվել էր առաջինի համակարգը, որտեղ ավանդույթի ուժով գերակայում էր դասական գրաբարի քննությունը: Վերջինիս հեղինակությունը մինչխորհրդային հայերենագիտության մեջ հասել էր գագաթնակետին: Այնպես որ խորհրդային տարիներին՝ մինչև 1960-ականները, լեզվի պատմաբանները

հիմնականում զբաղվում էին գրաբարի բուհական ուսուցման հարցերով[1]: Լույս էին տեսնում քերականություններ՝ Մ. Աբեղյանի, Հ. Աճառյանի, Կ. Առաքելյանի, Էդ. Աղայանի, Ս. Ղազարյանի, Պ. Շարաբխանյանի և այլոց հեղինակությամբ: Դրանք նաև ուղղված էին այս կամ այն երևույթի ավելի ռացիոնալ համակարգմանը, նոր մեկնաբանմանը, գիտական իմաստավորմանը: Նախնականներից է Ա. Աբրահամյանի գրաբարի ձեռնարկը[2]: Այն Էդ. Աղայանի որակումով արժանի է դասվելու Չալըխյան-Այտընյանի քերականությունների կողքին[3]:

Խորհրդային տարիներին գրաբարի ձեռնարկները նյութի ընդգրկման և մեթոդաբանության առումով լրացնում էին միմյանց: Ա. Աբրահամյանի աշխատությունն այս համակարգում միտում էր դասական գրաբարի ձևաբանության լավագույն մատչելի ձեռնարկը դառնալու և այդպիսին էլ կա ցայսօր[4]:

Լեզվաբանը պատմական երևույթները քննել է ստատիկ հայեցակետով՝ ելնելով նորմատիվ քերականության պահանջներից: Սակայն էությամբ հայոց լեզվի պատմաբան լինելով՝ նա չէր կարող անտեսել լեզվի զարգացումը թեկուզ նման կարգի ուսումնասիրության մեջ: Սրան հավելվում է այն, որ գրաբարն արդեն ենթարկվել էր որոշակի դասակարգումների կամ հայեցակետային ուսումնասիրությունների, օրինակ՝ Ա. Այտընյանի կողմից մատենագրական լեզվում շեղումների քննությունը, Ա. Բագրատունու կողմից գրաբարի պատմական ուսումնասիրությունը, Հ. Աճառյանի կողմից պատմագործառական՝ մեսրոպյան (գրերի գյուտ-460թ.) և ետմեսրոպյան(460թ.-11-րդ դ.) շրջանների առանձնացումը [5] :

Ա. Աբրահամյանը հընթացս զբաղվում էր պատմական հնչյունաբանության հարցերով՝ հիմք ընդունելով ժամանակի վիմագրագիտության արդյունքները: Նա ներկայացրել է բառավերջյան *յ*-ի անկման վաղ օրինակներ VI դարից[6], *աւ* երկբարբառի մենաբարբառացման վաղ դրսևորումները[7]: Նման ուսումնասիրությունները զգալի ներդրում էին ոչ միայն պատմական հնչյունաբանության, այլև հին հայերենի նկատմամբ լեզվի փոփոխակայնության դրույթի հնարավորին կիրառման բնագավառում:

---

[1] *Հայերենագիտությունը 60 տարում, Եր., 1981 , էջ 96:*

[2] *Գրաբարի ձեռնարկ, Եր., 1952 (վերահրատ. 1958, 1964, 1976):*

[3] ***Աղայան Էդ.**, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Եր., 1962, էջ 376:*

[4] *Ժամանակակից ձեռնարկները մի մասով պահպանում են աբրահամյանական սխեման. նկատելի է ձևաբանական նյութի գերակայությունը մյուսների համեմատ:*

[5] ***Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, հ. II, էջ 76:*

[6] *«Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության», ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1957, N4, էջ 80:*

[7] *Ն.տ., էջ 75:*

Լեզվաբանը ձեռնարկում ներկայացրել է արտասանական բազայում երբեմն *ֆ- խ,* 9-րդ դարից *ու-վ* անցումները, բառավերջյան *յ*-ի օրինաչափ անկման, *ռ*-ի և *ա*-ի շեշտափոխական եզակի դրսևորումները, *է-ի/ե* հնչյունափոխական զուգահեռները, հոլովական, լծորդական, բայակազմական տարբերակները, տարածված այս կամ այն երևույթի դիմաց մատենագրական եզակի դրսևորումները, որոնք, թեկուզ մեծ մասով ծանոթագրությունների տեսքով, գրաբարի հնչյունական, քերականական զուգաձևությունների պատշաճ համակարգ են ներկայացնում, որը ևս հիմնարար նյութ է հին հայերենի գիտական համակողմանի, ոչ հատվածային ուսումնասիրությունների համար: «Լեզվի պատմությունը պետք է քննության ենթարկի ոչ միայն լեզվական համակարգն իր բոլոր մակարդակներով հանդերձ, այլև լեզվի տարածական, հասարակական, գործառական տարբերակների ամբողջությունը և ժամանակի ընթացքում նրանց կրած փոփոխությունները»[1] : Ներկայացվածը, որն այսօր լեզվի պատմության արդիական խնդիրներից է, իրագործելի է նման քննությունների շնորհիվ: Գ. Ջահուկյանը հին հայերենի հուշարձաններում պահպանված տարբերակների ուսումնասիրությունը կարևոր է համարել հնագույն հայերենի վիճակի մասին գաղափար տալու համար[2]: Լեզվաբանի կողմից հենց նշված ենթաշրջանի համար *տարածական, հասարակական-գործառական, ոճական* տարբերակների ընդունումը գաղափար է տալիս այն լուրջ հայտի մասին, որ արդի շրջանում ներկայացված է *հայոց լեզվի պատմություն* գիտակարգին:

Գրաբարի ձեռնարկում հնչյունաբանությունն ընդհանուր առմամբ ներկայացված է պարզ կառուցվածքով: *Պատմական հնչյունափոխություն* հասկացությունը ծառայեցվել է հետագա դարերի արտասանական փոփոխություններն արտացոլող կանոններին, որոնցում նկատելի է մեթոդական նպատակադրումը՝ գրաբարյան բնագրերի ընթերցման առումով: Ա. Աբրահամյանն աշխատել է հնարավորին չափով խուսափել հնդեվրոպական զուգադրումներից, որոնք էլ գիտականորեն պատմական հնչյունափոխության գործնական հիմքն են հին հայերենի համար: Այսպիսի մատչելիությունը ևս ապահովել է նշված ձեռնարկի դասագրքային որակը:

Ա. Աբրահամյանն ընդունել է հինգ պարզ ձայնավորի գոյությունը գրաբարի հնչյունական համակարգում: Այս տեսակետից լեզվաբանը սկզբունքորեն առանձնացնում է *ու*-ն և այն հարաբերականորեն դասում երկբարբառների շարքին՝ ի տարբերություն որոշ ուսումնասիրությունների, որոնցում այդ առանձնացումը հստակ չէ:

---

[1] ***Հովսեփյան Լ.***, *«Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներն ու սկզբունքները», Ջահուկյանական ընթերցումներ , Եր., 2008, էջ 109:*

[2] ***Ջահուկյան Գ.***, *Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 370:*

Օրինակ՝ Ս. Ղազարյանի կողմից *ու*-ն դասվում է և՛ ձայնավորների, և՛ երկբարբառների շարքին[1]: Սակայն փաստ է այն, որ պատմական հնչյունաբանության մեջ գերակայում է Հ. Աճառյանի, Էդ. Աղայանի, Գ. Ջահուկյանի այն դրույթը, որ գրաբարի հնչյունական համակարգում վեց պարզ ձայնավոր կար: Այսպիսով, Ա. Աբրահամյանը, հարելով հակառակ թևին, ներկայանում է այդ հարթակում իբրև գիտական որոշակի ստույգություն պահպանած լեզվաբան:

Լեզվական այս կամ այն երևույթի գոյությունն ավելի վաղ շրջաններին վերագրելը հատուկ է Ա. Աբրահամյանի պատմական լեզվամտածողությանը: Սրա լավագույն ապացույցը 1953թ. լույս ընծայած «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» մեծարժեք աշխատությունն է, որը պատմական ձևաբանության բնագավառում նորույթ էր թեմայի ընդգրկման և քննության առումով: Այն ըստ արժանվույն գնահատվել է լեզվաբանների կողմից: «Պատմական սկզբունքի հետևողական կիրառումով, լեզվական տվյալների հսկայական ընդգրկումով ու վերլուծությունների գիտական խորությամբ այս աշխատությունը մի լուրջ ներդրում է հայերենի պատմական քերականության բնագավառում» ,- նշել է Էդ. Աղայանը[2]:

Հեղինակը քննության պատմականությունն իրավացիորեն ապահովել է նաև բարբառների լեզվական նյութի միջոցով: Բարբառների՝ իբրև լեզվի բնական վիճակի դրսևորումների նկատմամբ գիտական ճիշտ մոտեցումը 1950-ականներից յուրօրինակ հարթակ էր պատմական բարբառագիտության զարգացման համար: Այս ժամանակաշրջանի արժեքավոր դրույթներից է Գ. Սևակի այն միտքը, որ գրաբարը ստեղծվել է հայ բարբառներից մեկի կամ մի քանիսի հիման վրա. գրաբարը ոչ թե հայ բարբառների մայրն է, այլ բարբառներից մեկի կամ մի քանիսի դուստրը[3]: Ուշագրավ է նաև Ս. Ղազարյանի հետևյալ միտքը. «Առանց սխալվելու, կարելի է ասել, որ հայերենը միշտ էլ ունեցել է իր բարբառները, որոնք պահպանել են նույնիսկ հիմք-լեզվի որոշ հատկանիշներ և զարգացման տենդենցները»[4]:

Ա. Աբրահամյանը ևս ընդունում էր, որ բարբառները բավականին հնություն ունեն և հայերենի կառուցվածքի պատմական զարգացման լավագույն արտացոլումներն են[5]: Քննվող գրքում նա պատմական վերլուծության նոր որակ առաջադրեց, որն այսօր էլ արդիական է մնում :

---

[1] ***Ղազարյան Ս.***, *Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1954, էջեր 106, 107: Հայոց գրական լեզվի պատմություն, Եր., 1964 , էջեր 171,173:*

[2] ***Աղայան Է.***, *Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, էջ 378:*

[3] *Ն.տ., էջ 334:*

[4] ***Ղազարյան Ս.,*** *Հայոց գրական լեզվի պատմություն, էջ 29:*

[5] ***Աբրահամյան Ա.,*** *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, էջ 81:*

Դա համառոտ կարելի է ձևակերպել այսպես. միայն գրական տարբերակի փաստերի վերլուծությունը հնարավորություն չի տալիս բացահայտելու լեզվի այն բոլոր հնարավորությունները, ինչ ի հայտ է գալիս այդ լեզվի բոլոր տարբերակների համալիր քննության ժամանակ: Այս դրույթն ավելի ակնառու է դառնում անկատար դերբայի քննության պարագայում, որը, ի դեպ, որակով առանձնանում է գրային հայերենի պատմական քննություններում :

Նշանակալից է հետևյալ միտքը. «Անկատար դերբայի *–ում* դերբայական ձևույթն անշուշտ պատկառելի հնություն ունի: *Ում* ճյուղի բարբառները …. գալիս են խոր հնադարից: Նրանք լեզվական շատ գանձերի հետ բերել են նաև անկատար դերբայը ձևավորող –ում ձևույթը»[1]:

Ա. Աբրահամյանն իբրև անկատար դերբայի նախաձև է ներկայացրել Սեբեոսի պատմությունից *ի տեսանելումն* կառույցը, որը դեռ հոլովական վիճակում էր, կազմված ոչ թե անմիջապես *տեսանել* անորոշ դերբայից, այլ *տեսանելի* դերբայական ձևից[2]: Այս տեսակետով Ա. Աբրահամյանն առանձնանում է անկատար դերբայի սերման պատմությամբ զբաղված լեզվաբանների համակարգում: Լեզվական տեսակետից անհնար համարելով անորոշ դերբայի և *-ում* ձևույթի համադրումը՝ նա ընդունում է միջանկյալ օղակ՝ *-ի*-ով դերբայաձև (որ սերում է անորոշից), որի հոլովական հարացույցում (*ո-ա* խառն արտաքին հոլովում) հնարավոր է –*ում*-ի գոյությունը:

Առանձնահատուկ ուշադրություն դարձնելով *-ում* ձևույթին՝ Ա. Աբրահամյանը գրաբարի ընձեռած հնարավորություններով քննել է նրա գործառման սահմանները՝ կենտրոնում ունենալով այն փաստը, որ նշված ձևույթի հիմնական դերը ներգոյական իմաստի դրսևորումն էր, օրինակ՝ ի բարձրաւանդակում, ի ձեռին իւրում : Սույնով լեզվաբանը նախ ընդգծել է ներգոյական հոլովի առաջացման նախադրյալները: «Հայերենի *–ում* մասնիկով ներգոյական հոլովը խոր հնություն ունի: «Ում» ճյուղի բարբառներին հատուկ ներգոյական հոլովի այդ ձևույթը առկա է նաև գրաբարի որոշ բառաձևերում, ուստի և այսօր մենք հնարավորություն ենք ստանում նրա հնության մասին խոսելու: Բարեբախտաբար, օրինակներ ունենք դեռ 5-րդ դարից»[3]: Հնդեվրոպական ներգոյականի ձևը կորցնելով, բայց հոլովի իմաստը պահպանելով՝ մեր լեզուն ինչ-որ միջոց պիտի զարգացներ այդ իմաստի համար: Եվ այդ զարգացումների նախնական ձևերը գրաբար նյութի վրա վերաքննում է Ա. Աբրահամյանը:

Գալու/ըմ, տալու/ըմ, լալու/ըմ, կյալում>կյալըմ>կյամ, տալում>տալըմ>տամ, գնալըմ,տեսանելըմ և այլ բարբառային ձևերով լեզվաբանն ապացուցել է դերբայի՝ անորոշի հիմքից սերելու փաստը: Քերականական իմաստի

---

[1] *Ն.տ., էջ 81:*
[2] *Ն.տ., էջ 83:*
[3] *Ն.տ., էջ 93:*

մթագնումից դերբայական –լ ձևույթի դուրս մղվելու փաստի ճշմարտացիությունը Ա. Աբրահամյանն ապահովել է «Ս» ճյուղի բարբառների նյութով, որտեղ նույնպես կա նման հնչյունափոխություն: Լեզվաբանների մի մասը սակայն ենթադրում է *–ում*-ի համադրումն անմիջապես բայահիմքին/բայարմատին:

Ագուլիսի բարբառում *անկատար դերբայի և վախտը* բառի հարադրությամբ ժամանակի պարագայի (յիտ դառնամ վախտը) արտահայտությունը, աշխարհաբարյան՝ *գտնվում է եղել* և այլ ձևեր լեզվաբանը ևս գործածել է քննվող դերբայի ընթացքայնության գաղափարի կապը ներգոյականի հետ հաստատելու համար: Այսպիսով՝ բազմադիտվածք վերլուծություններով Ա. Աբրահամյանը վեր է հանել լեզվական երևույթի էությունը: Նշված տեսակետը (ինչպես և բոլոր նրանց, ովքեր անկատարի ձևույթը բխեցնում են ներգոյականի վերջավորությունից՝ անվերապահորեն ընդունելով Ա. Այտընյանի կարծիքը) քննադատվել է Ա. Մարգարյանի կողմից[1] հիմնականում այն առումով, որ բարբառների նյութը ժամանակագրական այլ մակարդակ է ներկայացնում: Սակայն փաստ է նաև այն, որ եթե նույնիսկ բարբառների նյութը ժամանակագրական այլ մակարդակի է պատկանում, միևնույն է, արտացոլում է այն ընդհանուր միտումները, որոնք գոյություն ունեն մեր լեզվում:Որպես հայոց լեզվի պատմաբան՝ Ա. Աբրահամյանն իրավացիորեն առաջնորդվել է այն դրույթով, որ մատենագրությունը կարող է լեզվի պատմաբանին հնարավորություն չտալ ներկայացնելու լեզվական այս կամ այն փաստի էվոլյուցիան: Մատենագրության պարագայում մենք գործ ունենք առանձին անհատների, կանխակալության, աշխարհընկալման, ընդհանուրի և մասնավորի յուրօրինակ համադրման հետ: Ինչպես Գ. Ջահուկյանն է նշում, մատենագրությունը, մնալով գրային ժամանակաշրջանի լեզվի ուսումնասիրության հիմնական աղբյուրը, այնուամենայնիվ, որոշակի խնդիրներ է հարուցում, որոնցից առաջինը հետևյալն է. «Հին շրջանի մատենագրության մեջ համեմատաբար քիչ են խոսակցական լեզվի նմուշները»[2]: Մինչդեռ բարբառների հարուստ տեխնիկան, բազմաձևությունը ուշադիր հետազոտողին հնարավորություն են տալիս վերականգնելու պակասող օղակները: Այսպիսով՝ կարելի է ասել, որ Ա. Աբրահամյանը ներքին վերականգնման մեթոդի յուրօրինակ կիրառողներից է հայոց լեզվի պատմության ասպարեզում:

Տեղին է նշել նաև Ս. Անթոսյանի հետևյալ միտքը. «Միջին հայերենի I շրջանում, այն է՝ 12-14-րդ դարերում, *–ում* վերջավորությամբ անկատար դերբայաձևեր չեն հանդիպում: Այնչափով, որ այդ շրջանի գրականությունն

---

[1] ***Մարգարյան Ա.***, *Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966, էջ 469:*

[2] ***Ջահուկյան Գ.***, *Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, էջ 19:*

առավելապես կիլիկյան է, պետք է կարծել, որ լինելու դեպքում էլ կարող էր չարտահայտվել»[1]:

Ա. Աբրահամյանը նաև առաջինն է, ով իբրև անկատար II (համակատար) դերբայի նախաձևի օրինակ է դիտարկել Բուզանդի պատմությունից *ի լալիսն* կառույցը՝ այն բացատրելով իբրև *-լիք* վերջավորությամբ բառերի ներգոյականի կիրառության օրինակ: Այս կարծիքն ընդունել է լեզվաբանների մեծ մասը: «Հայերենի ներկա բարբառների խոնարհման համակարգի մեջ չկա ոչինչ, որ իր նախաձևը չունենա հայերենի նախորդ շրջանի մեջ: Ճիշտ է, տարբեր իմաստով, սակայն այս կամ այն ձևի ու իմաստի վերաճելու ներունակությամբ: Արդարև այս բոլորի գումարը չի՞ կազմում հայոց լեզվի պատմությունը»,- նշել է Ս. Անթոսյանը[2]:

Ուշագրավ է նաև հին հայերենում *-ու* ձևույթով ապառնի դերբայի գոյության ընդունումն անվանի լեզվաբանի կողմից: Բուզանդի և Անանիա Շիրակացու լեզվում Ա. Աբրահամյանն առանձնացրել է նշված դերբայի – *ու*-ով տարբերակներ, որոնք Ա. Բագրատունին ժամանակին նկատել է , բայց չի արժևորել իբրև դերբայական ձևեր: Լեզվաբանը նշում է . ««Խաւսելոյ» (խօսելոյ) և «կրելոյ» ձևերը, որ բերված նախադասություններում ապառնի դերբայի դեր են կատարում, կազմված են ոչ թե գրաբարի, այլ բարբառների սիստեմով» (149): «Դերբայական այս ձևը հատուկ է եղել հայ էթնիկական ընդհանուր լեզվին զուգահեռ գոյություն ունեցող բարբառներին, որոնք խոր հնություն ունեն, սակայն նրանցով գրի առնված հիշատակարաններ չեն եղել. հենց այդ պատճառով էլ բարբառներին հատուկ ձևերը գրավոր ճանապարհով առատությամբ մեզ չեն ավանդվել» (ն.տ.): Անվանի լեզվաբանը վեր է հանել ապառնի դերբայի բազմաձևության պատմական պատկերը (-ոց, -ի, -ոյ-ու, -ա, -աց, -էց, -ական/-ասկան, -ան, -ացու/-ացուկ, -օղ), որտեղ ի տարբերություն հայոց լեզվի պատմության այլ երախտավորների ներկայացրածի , *-ու*-ով տարբերակը հանդես է գալիս իբրև ժամանակագրական ավելի վաղ շերտի միավոր : *Ի*-ով ապառնի դերբայի սերումն անորոշի սեռականից ապացուցելու համար Ա. Աբրահամյանը ներկայացրել է այն բարբառները, որոնցում անորոշը հոլովվում է *–ի*-ով, և զուգահեռաբար կա *–ի*-ով ապառնի:

Պատմական ձևաբանության մեջ ընդունվում են Ա. Աբրահամյանի վերջնական ճշտումները *–ոց* և *-ի* ձևույթների՝ ոչ բայասեռային տարբերակվածության վերաբերյալ:

Ոչ միայն պատմական ձևաբանության, այլև լեզվաբանության համար չափազանց կարևոր են Ա. Աբրահամյանի մի շարք դրույթներ: Օրինակ՝ «Հայերենում կան ընդհանուր լեզվաբանության համար հետաքրքրություն

---

[1] *Հայոց լեզվի պատմություն, հ. II, Եր., 1975, էջ 182:*
[2] *Ն.տ., էջ 192:*

ներկայացնող շատ հարցեր. դրանցից է, օրինակ, անորոշ դերբայի ձևաբանական ու իմաստաբանական կապը ուրիշ դերբայների հետ: Հետազոտությունները պարզում են, որ հայերենում անորոշ դերբայից գոյացել են ուրիշ դերբայներ՝ նրա հոլովման, ածանցման և դերբայական մասնիկների զանազան հնչյունական փոփոխությունների հետևանքով:

Հայերենում խոնարհումն ավելի վերացական երևույթ է, քան հոլովումը: Վերջին դեպքում բառերի փոփոխություններն ավելի որոշակի են, առարկայական ու հեշտ պատկերացնելի: Հենց այս հիմունքով էլ անորոշ դերբայի բայական իմաստը մտքով առարկայացվել է, հոլովվել ու դրանով էլ առաջ բերել դերբայական նոր ձևեր, ուր հոլովի գաղափարը բոլորովին մթագնվել է» [1]:

Այսպիսով՝ անորոշ դերբայի տրական (գրելու=գրելիս), բացառական (քալելէն=քայլելով), գործիական (խուսէլավ ըմ, գիրօլօ յըմ), ներգոյական հոլովաձևերից դերբայների սերման տարբեր օրինակներով Ա. Աբրահամյանը ներկայացրել է քերականական իմաստի պատմական զարգացման մի շարք դրսևորումներ:

Լեզվաբանը պատմական քննությունը զերծ է պահել արդյունքների մեխանիկական գումարից: Նա քաջատեղյակ էր Ա. Այտընյանի , Ա. Բագրատունու, Հ. Աճառյանի, Գ. Սևակի, Գր. Ղափանցյանի, Էդ. Աղայանի և հայ լեզվաբանության այլ երախտավորների հայացքներին: Նրանց ուսումնասիրությունների հիմքի վրա փաստացի օրինակների ընդլայնմամբ կատարել է ուշագրավ ընդհանրացումներ՝ հիմքում ունենալով այն փաստը, որ լեզվի զարգացման տարրերը պահպանված են բարբառների ընդերքում: Միայն բարբառների նյութի համակողմանի քննությունն է պարզում հայերենի լեզվական ողջ հնարավորությունները: Այսպիսով՝ ոչ միայն գրաբարի հմուտ իմացությունը, այլև բարբառագիտության նվաճումներին համակողմանի անդրադառնալը հնարավորություն են տվել քննվող աշխատությանը դեռևս 50-ականներին նորարարական լինել պատմական հայերենագիտության ասպարեզում: Համապատասխան տեսական ընդհանրացումները ևս արժեքավոր են դարձնում այն և հիմք դառնում հետագա նման ուսումնասիրությունների համար:

Զգալի է նաև Ա. Աբրահամյանի ավանդը պատմական շարահյուսության բնագավառում: Ինչպես հայտնի է, նշված գիտակարգի նկատմամբ հետաքրքրվածությունն առավելապես XXդ. II կեսից է: Հիմքում ունենալով Մխիթարյանների շարահյուսական քննությունները՝ լեզվաբանները նորովի մեկնաբանություններով հանդես եկան: Ա. Աբրահամյանի, Վ. Առաքելյանի, Գ. Ջահուկյանի, Վ. Քոսյանի ուսումնասիրությունները հենարանային են : Ա. Աբրահամյանը տեսական ուշագրավ հիմնավորումներ է կատարել բայասեռի տեղաշարժերի, դրանց

[1] *Ն.տ., էջ 72:*

պատճառների և ելքերի վերաբերյալ[1]: Այս ամենը, թեկուզ և համառոտ ձևով, բավարար հիմք է պատմական շարահյուսության «Կապակցություն» բաժինն ամբողջացնելու, որոշ հարցեր զարգացնելու առումով:
Արդի շրջանում, Լ. Հովսեփյանի փաստմամբ, հայոց լեզվի պատմությունը նպատակ ունի հնարավոր լիակատարությամբ ներկայացնել լեզվական համակարգի ձևավորման ու նրա կրած պատմական փոփոխությունների ընթացքը, դրանք առաջ բերող պատճառները, միջավայրի ազդեցությունը լեզվի կառուցվածքի և լեզվի տարբեր գոյաձևերի վրա, վերջիններիս առաջացման ու գործառության պայմանները, լեզվի զարգացման տարբեր փուլերում նրանց համամասնության ու գործառույթների բաշխումը: Նման տեսական հիմնախնդիրների լայն շրջանակը հնարավոր է լուծել նաև Ա. Աբրահամյանի պատմական վերլուծությունների համակողմանի զարգացմամբ:

Գրականություն

Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953:
Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962:
Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976:
Աղայան Էդ., Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Եր., 1962:
Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 1951:
Հայերենագիտությունը 60 տարում, Եր., 1981:
Հայոց լեզվի պատմություն, հ. II, Եր., 1975:
Հովսեփյան Լ., «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներն ու սկզբունքները», Ջահուկյանական ընթերցումներ , Եր., 2008:
Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1954:
Ղազարյան Ս., Հայոց գրական լեզվի պատմություն, Եր., 1964:
Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966:
Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ., դոցենտ Հ.Ս.Ղազարյանը:

[1] *Բայը ժամանակակից հայերենում, էջեր 683, 701:*

ՀՏԴ 371.31: 809.198.1
Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա

Վեհանուշ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱրՊՀ, ավագ դասախոսի պաշտոնակատար, ակ. Ս. Աբրահամյանի անվ. հայոց լեզվի ամբիոն

ԲԱՌԵՐԻ ՁԵՎԱԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Սովորողների խոսքի, մասնավորապես նրանց բառապաշարի հարստացման գործում կարևորվում է բառերի ձևաիմաստային խմբերի ուսուցումը, որին նպաստում են բազմազան բառային աշխատանքները: Դրանց նպատակը բառիմաստի ըմբռնման խորացումն է և բառապաշարի հարստացումը, ինչպես նաև սովորած բառի օգտագործումը խոսքի մեջ:
Տրված բազմաբնույթ առաջադրանքների միջոցով սովորողների մեջ ձևավորվում է գեղարվեստական ճաշակ. նրանք ծանոթանում են լեզվի արտահայտչականության գեղարվեստական հնարանքներին, պատկերավորման միջոցներին, ըմբռնում են լեզվի կառուցվածքային իրողությունները, նրանց փոխհարաբերությունները խոսքի բովանդակության և արտահայտության դիտվածքներում:
Սույն հոդվածում ներկայացվում են բառերի ձևաիմաստային խմբերի ուսուցմանը վերաբերող մեթոդական որոշ հարցեր:
Բանալի բառեր՝ *ձևաիմաստային հատկանիշ, հոմանիշ, համանուն, հականիշ, հարանուն, բառապաշարի հարստացում, գեղարվեստական հնարանք:*

В.Саркисян

ОБУЧЕНИЕ МОРФО-СЕМАНТИЧЕСКИХ ПОЛЕЙ ЛЕКСЕМ

Для обогащения слов учащихся, особенно их словарного запаса, важно использовать обучение морфо-семантических полей лексем, чему способствуют разнообразные словарные работы. Их цель состоит в том, чтобы углубить понимание значения слова и обогащение словарного запаса, а также использование изученного слова в речи.
Студентам даются разнообразные задания для развития чувства художественного вкуса, они знакомятся с художественными приемами языкового выражения, средствами воображения, структурными реалиями языка, их отношениями в содержании слова и выражения.
В данной статье представлены некоторые методологические вопросы, связанные с обучением групп словообразования.
Ключевые слова: *морфо-семантическое свойство, синоним, омоним, антоним, пароним, обогащение словарного запаса, художественный прием.*

V.Sarkisyan

TRAINING OF MORPHO-SEMANTIC FIELDS OF LEXEM

To enrich the words of students, especially their vocabulary, it is important to use the training of morpho-semantic fields of lexemes, contributing to a variety of vocabulary. Their aim is to deepen the understanding of the meaning of the word and enrich the vocabulary, as well as the use of the learned word in speech.

Students are given a variety of tasks to develop a sense of artistic taste, they become familiar with the artistic tricks of linguistic expression, means of imagination, the structural realities of the language, their relationships in the content of words and expressions.

This article presents some methodological issues related to the teaching of word formation groups.

Key words: *morpho-semantic property, synonym, homonym, antonym, paronym, vocabulary enrichment, artistic technique.*

Սովորելը ոչ միայն գիտելիքների ձեռքբերման գործընթաց է, այլև որոշակի արժեքների ձևավորումն ապահովող ուսումնական գործունեություն:Կրթական կարևոր խնդիրների լուծումը հնարավոր է միայն այն պարագայում,երբ ուսուցումը հիմնվում է ոչ միայն գիտելիքների փոխանցման,այլև ուսանողների կողմից իրականացվող ակտիվ գործունեության ճանապարհով դրանց ձեռքբերման, կայունացման և հմտությունների մշակման վրա:Ուսումնական գործընթացում կարևոր են սովորողների մտածելու և սովորելու կարողությունների զարգացումը, ձեռք բերած գիտելիքը կիրառելու հմտությունը:

Այդ նպատակով ուսանողներից պահանջվում է իմանալ ոչ միայն լեզվական տարբեր մակարդակներին բնորոշ իրողություններ,այլև հասկանալ, իմաստավորել, վերլուծել, ընդհանրացնել և կիրառել դրանք: Սրանք այն բաղադրիչներն են, որոնց միջոցով կարելի է զարգացնել ուսանողների տրամաբանական և ստեղծագործական մտածողությունը:

Բուհում լեզվի համակարգի կառուցվածքային տարրերի ուսուցման նպատակը սովորողների գրավոր և բանավոր խոսքի կատարելագործման և նրանց բառապաշարի հարստացման ուղղվածություն ունի:Այս նպատակադրումով էլ կարևորվում է բառագիտություն բաժնի, մասնավորապես բառերի ձևաիմաստային խմբերի ուսուցումը:

Բառային կազմի յուրացումը ուսումնառության կարևորագույն խնդիրներից է, որի հիմքերը դրվում են դպրոցում և շարունակվում բուհում: Բառերի ձևաիմաստային խմբերի ուսուցումը ոչ միայն բառապաշարի հարստացման, այլև գրավոր ու բանավոր խոսքի զարգացման կարևոր միջոց է: Խոսքի զարգացման աշխատանքները մեծապես կապվում են սովորողների բառապաշարի հետ:

<<Խոսքի զարգացումը,-ինչպես նկատել է Սերգեյ Աբրահամյանը,-նրա մշակումը,կատարելագործումը և հարստացումն է այն հաշվով, որ ապահովվի խոսքի ճիշտ, նպատակային և գեղեցիկ կառուցումը թե՛ բառերի ընտրության, թե՛ քերականական կառուցվածքի և թե՛ առհասարակ խոսքի կառուցվածքի բոլոր բաղադրիչների, օրինաչափությունների տեսակետից>>:[1]

Ձևիմաստային հատկանիշը, ինչպես գիտենք, բառապաշարի դասակարգման սկզբունքներից մեկն է, այսինքն՝ բառերի դասակարգումն է՝ ըստ արտահայտած ձևի,իմաստի և փոխհարաբերության: Նշված մոտեցմամբ բառապաշարը դասակարգվում է հետևյալ խմբերի՝հոմանիշների, հականիշների, համանունների և հարանունների:

Սովորողների խոսքի, մասնավորապես նրանց բառապաշարի հարստացման գործում կարևորվում է հոմանիշ բառերի ուսուցումը, որին նպաստում են բազմազան բառային աշխատանքները:Դրանց նպատակը բառիմաստի ըմբռնման խորացումն է և բառապաշարի հարստացումը,ինչպես նաև սովորած բառի օգտագործումը խոսքի մեջ:[2]

<<Հոմանիշները-ինչպես նշում է Ա. Մարգարյանը,-բնորոշվում են նույն կամ մոտ իմաստներով ,որոնք, սակայն, միատեսակ պատկեր չեն ներկայացնում և զանազանվում են իմաստային տարաստիճանա-վորումներով>>:[3]

Այսպիսով՝ հոմանիշները միևնույն հասկացություններն արտահայտող այն բառերն են,որոնք ունեն մոտ կամ նույն իմաստները և միաժամանակ կարող են տարբերվել ոճական կիրառությամբ,հուզարտահայտչական երանգավորմամբ,կիրառության ոլորտով և հաճախականությամբ,ինչպես նաև ուրիշ բառերի հետ կապակցվելու հնարավորություններով:Հոմանիշների վերաբերյալ աշխատանքներ պետք է կատարվեն ոչ միայն տվյալ թեմայի,այլև հետագա բոլոր դասանյութերի վերաբերյալ,որովհետև այդ ուղղությամբ աշխատանքն ամենից շատ նպաստում է բառապաշարի զարգացմանը և կապակցված խոսքի հարստացմանը:

Կարևոր է նաև համանիշ,նույնանիշ,հոմանիշ գիտաբառերի գործածության հարցը:Նկատի ունենալով բառերի մոտիկ,մերձ կամ նույնական իմաստներ արտահայտելու իրողությունը՝մասնագիտական գրականության մեջ հոմանիշների երկու տարատեսակներ են տարբերակվում՝համանիշներ,որոնք արտահայտում են բառերի

---

[1] ***Ս.Աբրահամյան**,Աշակերտների խոսքի զարգացումը,Եր.,1973,էջ 5:*

[2] *Տե՛ս **Ա.Տեր-Գրիգորյան**, Հայոց լեզվի մեթոդիկա,Եր., 1980,էջ 417:*

[3] ***Ա.Մարգարյան,** Ժամանակակից հայոց լեզու:Բառագիտություն,Եր.,1993,էջ 80:*

մոտ,մերձակա իմաստներ,և նույնանիշներ,որոնք արտահայտում են բառերի նույնական իմաստներ:[1]

Մ.Աբեղյանը առաջիններից մեկն էր ,որ տարբերակել է նույնանիշ և համանիշ անվանումներն իբրև առանձին,իրարից ձևով տարբերվող տարատեսակներ:[2]

Հետագայում,սակայն,ինչպես նկատում է Ն.Պառնասյանը. <<Դպրոցական քերականությունների մեջ հոմանիշ և նույնանիշ տերմինները նույնացվեցին,իսկ իմաստային և կիրառական նրբերանգներ ունեցող բառերի համար սկսվեց գործածվել հոմանիշ տերմինը>>:[3]

Վերջին շրջանի լեզվաբանական ուսումնասիրություններում այս հարցը հստակեցվել է, և ճիշտ կլինի գործածել հոմանիշ ընդհանուր անվանումը, իսկ նույնանիշներն ու համանիշները դիտել իբրև հոմանշության երկու առանձին տեսակներ:

Նույնանիշների և համանիշների ուսուցումը համակարգված սկզբունքով իրականացնելու համար պետք ներկայացնել ըստ խոսքիմասային արտահայտության եղանակի: Օրինակ՝հղձ-բաղձանք, ջանասեր-աշխատասեր,զատել-բաժանել, կրկին-նորից, բնավ-երբեք և այլն:

Հոմանիշների դերը գեղարվեստական խոսքում հիմնականում ոճական է,քանի որ հոմանիշները նպաստում են խոսքի պատկերավորությանը,հաճախ էլ խոսքը զերծ են պահում պատկերավորությունից և անհարկի կրկնություններից: Ի տարբերություն հանրակրթական դպրոցի՝բուհում արդեն մեծ ուշադրություն է դարձվում հոմանիշների ոչ միայն իմաստային-իմաստաբանական ,այլև ոճական առանձնահատկություններին:Այս առումով ուսանողների ուշադրությունը պետք է բևեռել հոմանիշների դասակարգման այլ մոտեցումների վրա:Հոմանիշները դասակարգվում են նաև լեզվական և խոսքային

խմբերի:Առաջին խմբի հոմանիշներն արդեն իսկ լեզվի մեջ գոյություն ունեցող բառերն են,որոնք կարող են գործածվել լեզվի տարբեր ոլորտներում կամ գործառական բոլոր ոճերում,իսկ խոսքային հոմանիշներն ունեն կիրառության սահմանափակ ոլորտ:Դրանք

ունեն հեղինակային բնույթ և հիմնականում գործածվում են գեղարվեստական գրականության մեջ:

Պարույր Սևակը << Նորօրյա աղոթք>> բանաստեղծության մեջ հոմանշային հարաբերությունների մեջ է դնում մաքուր և

---

[1] *Տե՛ս **Ա.Պ.Բեղիրյան**,Մայրենիի ուսուցման հարցեր,Եր.,1982,էջ 40-41:*

[2] *Տե՛ս **Ա.Մ.Աբեղյան**,Հայոց լեզվի տեսություն,Եր. ,1965,էջ 159:*

[3] ***Ն.Պառնասյան**, Շարահյուսական հոմանիշները ժամանակակից հայերենում,Երևան,1970,էջ 21:*

վսեմ,անկեղծ և անսուտ բառերը,որոնք խոսքաշարից դուրս հոմանիշներ չեն և տարբեր հատկանիշներ են ցույց տալիս:

Դիտարկենք բանաստեղծական հատվածը՝Մերժեցեք նրանց զոհն էլ խոստացյալ,Որ…

զոհ չգնա ինքը՝հավատը՝Մաքուր-վսեմը,Անկեղծ-անսուտը…/9,6/:

Ընդգծված բառերը բանաստեղծական խոսքում ունեցած կիրառության մեջ են ստացել հոմանշային արժեք և կիրառությունից դուրս այդ հարաբերության մեջ չեն գտնվում:

Հոմանշային ոճական առանձնահատկությունների ուսումնասիրմանը նպատակաուղղված լեզվական աշխատանքը կարելի է իրականացնել նաև բանավոր վարժությունների միջոցով՝գործնական ճանապարհով դիտարկելով տալով դրանց տարբերությունները:

Վարժությունների կատարման հաջորդականությունն ու մատչելիությունը ապահովելու համար այդ աշխատանքը կարելի է իրականացնել որոշակի քայլերով:Նախ՝ պետք է ընթերցած ստեղծագործության կամ վարժության համար առաջարկվող նյութի շրջանակներում ուսանողների մեջ մշակել հոմանիշները ճանաչելու,տվյալ տեքստում դրանց ունեցած իմաստը բացատրելու կարողություններ:Այնուհետև՝ տարբեր նախադասությունների համեմատության միջոցով նպաստել,որ ուսանողները եզրակացնեն, որ միևնույն բառի իմաստային հոմանիշները տարբեր տեքստերում տարբեր իմաստներ են ձեռք բերում,այսինքն՝բառի հոմանիշը իմաստային ամբողջությամբ չի փոխարինում տվյալ բառին , այն նույնիսկ կարող է շատ հեռանալ հիմնաբառից: Ըստ այդմ էլ՝ ուսանողների բառապաշարի հարստացմանն ուղղված հոմանիշների ուսուցման աշխատանքները պետք է իրականացնել հետևյալ ուղղություններով.

ա/բառ-հոմանիշների նմանության որոնում միևնույն տեքստի շրջանակներում.

բ/հոմանիշների շարքում բառերի իմաստային տարբերությունների որոնման ունակությունների ձևավորում.

գ/դրանց՝այլ բառերով կամ բառակապակցություններով փոխարինելու կարողության մշակում:

Նույն հիմունքով կարելի է իրականացնել նաև հականիշների ուսուցումը:

Հականիշներն իրար հակադիր իմաստ արտահայտող բառերն ու արտահայտություններն են,որոնք խոսքի մեջ գործածվում են տարբեր նպատակներով և ոճական տարբեր երանգներով:Ըստ Ա.Սուքիասյանի՝հականշության համար առաջին հերթին հիմք կարող է

հանդիսանալ բառի բառային իմաստի մեջ որակական հատկանիշի առկայությունը:[1]

Լեզվում հականիշները գործածվում են այնպիսի հակադիր առարկաներ, երևույթներ, հատկանիշներ նշանակելու համար,որոնք իմաստով կարող են հարաբերակցվել: Բառերի ձևաիմաստային խմբի մեջ մտնող հականիշներն օժտված են ոճական մեծ ներուժով,հակադրությամբ ներկայացնելով իրերը, երևույթներն ու իրողությունները՝առավել համոզիչ ու պատկերավոր են դարձնում խոսքը:

Գեղարվեստական խոսքը հարուստ է հականիշների կիրառության փայլուն օրինակներով: Որպես հակադրություն ստեղծող գեղարվեստական միջոց՝հականիշները խոսքին հաղորդում են արտահայտչականություն ու պատկերավորություն:

Դիտարկենք օրինակներ՝

<<Գա՛,Ու եթե մի քիչ տխրի, որ չկամ,Բայց քիչ հետո Եվ ուրախանա~,որ իմ կարոտով Կորել է Խավարը…>>/9,14/,<<Հետո ի՞նչ դուրս եկավ.Սխալ է ատելը,Սխալ է սիրելը,Այրվելը,Մխալը…>>/9,96/,<<Շարժումը ձեռքիդ օդի ձևերը քանդեց ու սարքեց՝Հարստացնելով երկրաչափությունն այն օրենքներով, Որ սպասում են իրենց երջանիկ հետազոտողին…>>/9,179/:

Բերված օրինակներում հականշային կապերի մեջ գտնվող բառերը կարևոր դեր են կատարում բանաստեղծական հույզի ու ապրումի շեշտադրման գործում՝ընդգծելով նաև բանաստեղծի մտածողության ինքնատիպությունն ու ցայտուն դարձնելով նրա ասելիքը:Հականիշների ուսուցումը չի հետապնդում լոկ լեզվական գիտլիքների մատուցման նպատակ:Հականիշների ուսուցումը նպաստում է ոչ միայն սովորողների բառապաշարի ընդլայնմանը,այլև զարգացնում է նրանց ստեղծագործական կարողությունները:Ուսուցումը իրականացվում է բնագրային նյութի, գեղարվեստական խոսքի շրջանակներում, քանի որ լեզվական գիտելիքների գործնական կիրառումը խոսքի մեջ ապահովում է այն յուրացնելու գործընթացը:

Սովորողների վերացարկված մտածողության զարգացմանը նպաստում են նաև ժամանակակից գրական հայերենի ձևաիմաստային խմբին պատկանող լեզվական մյուս միավորները՝համանուններն ու հարանունները:

Համանուններն այն բառերն ու քերականական ձևերն են, որոնք իրենց հնչյունական կազմով,գրությամբ և արտասանությամբ նույնն են,բայց իրարից տարբերվում են

---

[1] *Տե՛ս **Ա.Սուքիասյան**, Ժամանակակից հայոց լեզու,Եր.,1999,էջ 134:*

արտահայտած իմաստներով:[1]Համանունների առաջացման հիմնական աղբյուրներից մեկը բազմիմաստությունն է:Ուստի պետք է ուշադրություն դարձվի բազմիմաստության և համանունության տարբերություններին:Բազմիմաստությունը տեղի է ունենում ինչպես իմաստների ներքին փոփոխության,այնպես էլ նոր իմաստների կամ իմաստների զարգացման հետևանքով: Այդ նպատակով զուգահեռաբար տրվում են բազմիմաստ և համանուն բառերի շարքեր:Անդրադառնալով բազմիմաստ բառերի տարբեր իմաստներին՝ ընդգծվում է, որ դրանք այդպիսին են համարվում իմաստային ընդհանրության պատճառով, նշվում է նաև, որ եթե բազմիմաստ բառերի իմաստային ընդհանրությունը վերանում է, բառերը վերածվում են համանունների: Ասածը հիմնավորվում է համապատասխան օրինակներով,ինչպես՝ծաղիկ/բույս/-ծաղիկ/հիվանդություն/,սուր/հատու/-սուր/զենք,փող/խողովակ/-փող/շեփոր/ և այլն:

Համանունների ուսուցումը կարելի է իրականացնել ինչպես համանունների զույգի բաղադրիչների արտահայտության դիտվածքի, այնպես էլ ըստ համանուն արմատների բառակազմական նշանակության: Այս առումով նպատակահարմար է օրինակները բերել գեղարվեստական գրականությունից: Այսպես՝

Մենք վերստին հանդիպեցինք՝

Այս լճակի կամ այն ափի առվին կանաչ…/9, 193/

Եվ չմեկնած ձեռքիս ափում դատարկ Եթե մինչև անգամ տասնոց դնեն,Ես փորձել եմ արդեն-չե՛մ գոհանա.-Ես քո կոպեկների՞ կարիքն ունեմ: /9,193/

Դրանց ոճական երանգավորումը սերտորեն առնչվում է համատեքստին:

Համանունների ուսուցումը նպաստում է նաև սովորողների մոտ լեզվական համանման իրողությունները համադրելու և տարբերակելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Հարանուն են կոչվում այն բառերը, որոնք արտաքին՝ հնչյունական կազմով նման են,իմաստով՝հարաբերակից կամ առնչակից:[2]

Հարանունների ուսուցման ժամանակ պետք է նկատի ունենալ,որ դրանց տարբերակման կարևոր չափանիշ կարող է համարվել ինչպես բառերի արտաքին՝ հնչյունական կազմով մոտ կամ նման լինելը,այնպես էլ դրանց իմաստային որոշակի հարաբերության կամ կապի մեջ գտնվելու հանգամանքը, քանի որ հարանունները ևս որոշվում են ձևային և ձևաիմաստային հատկանիշներով կամ, ավելի ճիշտ, դրանց փոխհարաբերությամբ ու միասնությամբ:Այդ

---

[1] *Տե՛ս **Ալ. Մարգարյան**, Ժամանակակից հայոց լեզու: Բառագիտություն, Երևան, 1993, էջ 61:*

[2] ***Ալ. Մարգարյան**, Հարանունները հայերենում, Երևան, 1979, էջ 80:*

հատկանիշներից մեկնումեկի անտեսումը խանգարում է ճշտորեն որոշելու հարանունության սահմանները:

Անդրադառնալով ձևային հարանուններին՝ պետք է նշել, որ դրանք խոսքում, մասնավորապես գեղարվեստական, ունենում են ոճական որոշակի երանգավորում:

Թողե՛ք, Որ ձեզ էլ դարձնեմ մասնակից

Այն նախաճանոթ հույսի համտեսված անուշությանը,

Որ մեր երեկվա Ու մեր այսօրվա անուժությանը Ասում է՝ Կանգ առ…/9,28/:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ձևաիմաստային հարանուններին, որովհետև հենց դրանց իմաստների հստակ տարբերակումն է հնարավորություն տալիս խուսափելու սխալ գործածություններից: Կողք կողքի բերվում են ձևաիմաստային հարանունների շարքեր՝ ավանդույթ-ավանդություն, հրավեր-հրավերք, բռնագանձել-բռնագրավել, դիտել-դիտարկել, հրավեր-հրավերք, վերաբերել-վերաբերվել, տնօրենություն -տնօրինություն և այլն, բացատրվում իմաստները և հանձնարարվում օգտագործել նախադասությունների մեջ:

Վերոնշյալ բառերի, բառախմբերի միջև դրսևորվող նմանատիպ կապերն ու հարաբերությունները ներկայացնելու, դրանք տարբերակելու և խոսքում տեղին, ճիշտ գործածելու նպատակով տրվում են բազմաբնույթ առաջադրանքներ: Դրանցով սովորողների մեջ ձևավորվում է գեղարվեստական ճաշակ. նրանք ծանոթանում են լեզվի արտահայտչականության գեղարվեստական հնարանքներին, պատկերավորման միջոցներին, ըմբռնում են լեզվի կառուցվածքային իրողությունները, նրանց փոխհարաբերությունները խոսքի բովանդակության և արտահայտության դիտվածքներում:

Այսպիսով՝ քանի որ սովորողների գրավոր և բանավոր խոսքի լեզվական ատաղձը բառապաշարն է, ուստի լեզվի ուսուցման գերխնդիրը պետք է լինի բառապաշարի հարստացումը:

Գրականություն

1.Ս.Աբրահամյան,Աշակերտների խոսքի զարգացումը,Եր.,1973,էջ5:
2.Ա.Տեր-Գրիգորյան,Հայոց լեզվի մեթոդիկա,Եր.,1980,էջ417:
3.Ա.Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու: Բառագիտություն, Եր.,1993,էջ80:
4.Էդ.Աղայան,Ընդհանուր և հայկական բառագիտություն,Եր.,1984,էջ67-68:
5.Պ.Բեղիրյան,Մայրենիի ուսուցման հարցեր,Եր.,1982,էջ40-41:

6.Մ.Աբեղյան,Հայոց լեզվի տեսություն,Եր.,1965,էջ159:
7.Ա.Սուքիասյան,Ժամանակակից հայոց լեզու,Երևան,1999,էջ134:
8.Ս.Էլոյան,Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր.,1989,էջ140-141:
9.Պ.Սևակ,Երկերի ժողովածու 6 հատորով,հ.2,Եր.,1972:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ. , դոցենտ Հ.Ս. Ղազարյանը:

ՀՏԴ ՀՏԴ 398.1(479.342)
ՀՏԴ 941 (479 . 243)
ԳՄԴ 63. 3 (2 Հ) 43
Ա- Բ 706

Գրականագիտություն

Զինաիդա ԲԱԼԱՅԱՆ
ԱրՊՀ, գրականության և լրագրության ամբիոն, բ.գ.թ., դոցենտ

ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒՈՒԹՅՈՒՆԸ» ԳԻՐՔԸ

Արմեն Սարգսյանի «Արցախյան հանելուկներ», «Արցախյան ավանդություններ», «Արցախյան առակները», «Արցախյան զվարճախոսություններ», «Ղարաբաղի բարբառի բառարան», «Արցախի բանահյուսությունը» և այլ բանահյուսական-հայագիտական ժողովածուները հայ բանագիտական մտքի արժեքավոր նմուշներից են, որոնց մեջ արտահայտված են արցախահայության ինքնատիպ մտածելակերպը, մտախառնվածքի (մերթալիտետի) հզորագոր երակը, դարավոր արարումների ոսկե բիլագուկը, ներքին ու արտաքին բռնակալների, հարստահարիչների դեմ սուր, ընդգծված պայքարը, մշտարթուն, աննվաճ, ազատասեր ոգին, իմաստասեր և հավատավոր բարքը, որոնք ընդգծում են նրա անկրկնելի հանճարը:
Արցախցու ազգային և համազգային որակների, տոհմիկ հրաշակերտ հոգեբանական շերտերի, բանահյուսական ակունքների վերհանման հիանալի և դրվատելի գործին է լծված երիտասարդ տաղանդավոր բանագետը, որը երևան է հանված վերոդիտված գրքերում, հատկապես «Արցախի բանահյուսությունը» գրքում:
Բանալի բառեր: *Արցախի բանահյուսությունը, Արցախյան հանելուկներ, Արցախյան ավանդություններ, Ղարաբաղ, բարբառ, բառարան, մենթալիտետ:*

З. Балаян-Аракелян

МОНУМЕНТАЛЬНОЕ ФОЛЬКЛОРНОЕ ИССЛЕДОВАНИЕ: КНИГА АРМЕНА САРКИСЯНА "АРЦАХСКИЙ ФОЛЬКЛОР"

Коллекция книг Армена Саркисяна «Арцахские загадки», «Арцахские традиции», «Арцахские смешные истории», «Словарь арцахского диалекта», «Арцахский фольклор» и другие фольклорные сборники являются одним из ценных доказательств армянской творческой мысли, в них отражен своеобразный ход мыслей армян Арцаха, мощная жилка менталитета, золотой венец векового творчества. Острая борьба против внешних и внутренних диктаторов и угнетателей, всегда бодрствующая и свободолюбивая душа, философский и религиозный образ жизни подчеркивают его непревзойденное мастерство.

Национальным и общенациональным качествам арцахца, его родовой психологии, и изучению фольклорных источников посвятил себя молодой талантливый фольклорист, что и проявляется в вышеупомянутых книгах, особенно в книге «Арцахский фольклор ».

Ключевые слова: *Арцахский фольклор, арцахские загадки,* арцахские традиции, *Карабах, диалект, словарь, менталитет.*

Z.Arakelyan-Balayan

THE MONUMENTAL FOLKLORISTICAL RESEARCH: ARMEN SARKISYAN'S "THE FOLKLORE OF ARTSAKH" BOOK

The collection of Armen Sargsyan's books "Artsakh Puzzles", "Artsakh Ttradition", "Artsakh Funny Stories", "Dictionary of the Artsakh Dialect" , "The folklore of Artsakh" and other folklore collections are one of the valuable evidence of armenian creative thought, they reflect the original thinking of Artsakh, powerful vein mentality, gold crown of sentury creativity. The struggle against external and internal dictators and oppressors always cheeful and freedom-loving soul, philosophical and religious life emphasize its excellence. National and nationwide qualities of Artsakh people, its generic psychology and the study of folklore sources devoted himself to a young talented folklorist, which is manifested in the above mentioned books, especially in the book.

Keywords: *Artsakh folklore, Artsakh riddle, Artsakh tradition, Karabakh, dialect, dictionary, menthalitet.*

«Մեր կիրը յրրգինքյանա կաթա"լ»…
«Հայու աղ, հայու մաղ, հայու հաց թուռնան կաց»…
«Աստո"ւծ, թա կարում չրս տու մեզ պահիս, վրեր եկ, մո"ւնք քեզ ճուղուպուրու մաչու նման պահինք»… *- Ա Ր Ց Ա Խ Ա Ր Ա Ն –*

Հարկավ, որքան **իմաստություն, բարեսրտություն, անխոով ու խոովյալ մտասևեռումներ, կենսական-փիլիսոփայական** տարրեր կան արցախցու

կերպարի, ֆենոմենալ մտահանգումների, փիլիսոփայական եզրահանգումների, իր արարած բարձր արժեքների գնահատման մեջ, որոնք նրա աստվածակերպն են հատկանշում:

Ժողովուրդների ազգաբանության և մասնավորապես հայ ժողովրդի էթնոսաբանության մեջ իր մենթալիտետով (մտախառնվածքով), ազգային որակներով, բարոյական ու գեղագիտական արարումներով, ավանդութակիր շերտերով, ազգային գաղափարակարգմամբ, բարքաբանությամբ, ուղղամտությամբ, ազատասիրությամբ, հայրենասիրությամբ, չարին հակադրվելու հզոր պոռթկումով, սովորույթների հետաքրքիր շարժով, հրեղեն բառ ու բանով, ոգելու իմաստասիրությամբ, աշխատասիրությամբ, իր Արցախամուր (Փ. Բուզանդ) բնության պես պարզ, միաժամանակ բարդ ու խորհրդավոր, ահասարսուռ կամքով, անկոտրուն վարքով առանձնանում է արցախցու տեսակը: Նա աշխարհին ներկայանում է որպես մարդաբանական՝ օրինակը չունեցող կերպավորում: Իր հնամենի բարքաբանությամբ, հզոր ու ազգասեր ոգով, ռազմական հանճարով արցախցին հմայում, առինքնում է ո՛չ միայն հարևան ժողովուրդներին, այլև թե՛ բարեկամ, թե՛ չարակամ օտարներին, շատերին անվեհապահորեն դարձնում իր բազմաթիվ առաքինությունները ազնիվ ու ճշմարիտ գնահատողներ:

Արցախցու ազգային որակների, առաքինությունների ամենաբնորոշ համակարգը նրա ստեղծած ժողովրդական բանահյուսությունն է՝ վաղնջական ժամանակներից եկող և փաստող վավերախոսությամբ, հայ ժողովրդական բանավոր արարումների ոսկե բիլազուկի հրաշաէնզիմը դառնալով, ժամանակ առ ժամանակ՝ պայմանական անցքերին զուգահեռ, իր ավանդական առանձնահատուկ թթխմորից հունցվելով, նոր ժանրատեսակներով հարստացնելով հայ ազգային բանահյուսության հոսանուտ գետը:

Արցախահայության ստեղծած ժողովրդական գոհարների ընտրանին դարերի ընթացքում ունեցել է և՛ պահպանումներ, և՛ կորուստներ, որոնք հետևանք էին ժամանակին դրանց հավաքագրական, հրատարակչական գործի բացակայության:

Նման երևույթը տիպական էր ո՛չ միայն հայոց, մասնավորապես արցախահայության բանայուսագիտության, այլև համաշխարհային բանագիտության մեջ:

Ժողովրդական բանահյուսությունը մարդկային հասարակական կյանքի արշալույսին ստեղծված համակարգ է, կարելի է ընդունել որպես արվեստի ու նրա այլևայլ ճյուղերի արգանդը՝ հարուստ շերտավորմամբ, բազմաժանր, բազմաթեմատիկ, բազմաբնույթ արտահայտություններով, որտեղ երևում է այն ստեղծող ժողովրդի առանձնահատուկ տաղանդը, հանճարի ցոլանքները, զարմանահրաշ ու հարուստ հոգեկերտվածքը:

Ստ. Պալասանյանի և այլ բանագետների կողմից այն, իրավամբ, համարվել է «բանավոր գրականություն»:

Հայ ժողովրդական բանահյուսության ակունքները, շերտերը մենք տեսնում ենք վաղնջական ժամանակներում ստեղծված երկերում, մեհենական մատենագիր Ողյումպ-Ուղյումպ–Օղյումպ քուրմի «Մեհենական պատմության» մեջ, փանդիռներով երգող Գողթան երգիչներից լսած և Խորենացու կողմից գրի առնված հեթանոսական երգերի, հնագույն ժամանակներում հյուսված էպոսի պատառիկների՝ առասպել-քերթվածների, զրույցների, թվելյաց, պարուց, ցցուց երգերի շարքում, որոնց տաղաչափության մասին հմտորեն խոսվում է Ավ. Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափական արվեստը» գրքում:

Բանահյուսական կտորները առկա են նաև Հին Հայոց Արրատա պետության դիցարանի, գրի, անմահության խորհրդի մասին խոսվող շումերա-աքքադական «Ահեղ Գիլգամեշը» դյուցազնավեպում **(այնտեղ Հին Հայոց երկիրը՝ Արրատան, անվանված է «Աստվածների ժողովի երկիր», «Անմահության երկիր», «Գրի երկիր», «Սուրբ օրենքների երկիր» և այլն,** իսկ շումերագետ Ա. Դավթյանի փաստմամբ-հետազոտմամբ ապացուցված է, որ շումերերենը հին հայերենն է), Ագաթանգեղոսի «Հայոց պատմության», Փ. Բուզանդի «Հայոց պատմության», Հ. Մամիկոնյանի (Զենով Գլակ) «Տարոնի պատմության» մեջ, Սեբեոսի, Շապուհ Բագրատունու երկերում, Մ. Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության», Ասողիկի, Կ. Գանձակեցու «Հայոց պատմության» մեջ, Գր. Նարեկացու «Մատեան ողբերգութիւն»-ում, մեղեդիներում, միջնադարյան երգիչների տաղերգերում, Սայաթ-Նովայի խաղերում, Մ. Թաղիադյանի, Խ. Աբովյանի, բանագետների (Բաղտասար Մետրապոլիտ Հասան Ջալալյանց, Գ. Սրվանձտյան, Ս. Երեմյան, Մ. Միանսարյանց, Մ. Աբեղյան, Ա. Ղանալանյան, Հ. և Մ. Էմիններ, Հ. Օրբելի, Գր. Ղափանցյան, Ս. Ջալալյան, Մուրացան, Ռաֆֆի, Ա. Բեկնազարյան, Հայկունի (Հովակիմ Գեղամյանց), Մ. Բարխուդարյան, Հովհ. Թումանյան, Ս. Հարությունյան և այլն) հայ նոր և նորագույն գրականության, արդի ժամանակաշրջանի ներկայացուցիչների, բանահավաքների նյութերում, արարումներում:

Այսպիսով՝ հայ բանագիտության մեջ ևս կարևորված ենք տեսնում բանահավաքչական աշխատանքների փորձը, ընթացքը:

Բանագիտական, բանահավաքչական աշխատանքներից անմասն չմնաց նաև արցախյան հատվածը: Այս ուղղությամբ պարբերական մամուլում մի քանի անգամ հանդես ենք եկել գրախոսություններով՝ անդրադառնալով երիտասարդ գիտնականի Ա. Սարգսյանի ուսումնասիրությունների քննությանը:

2015թ. Երևանի «Էդիտ Պրինտ» հրատարակչությունը Արմեն Սարգսյանի հեղինակությամբ լույս է ընծայել «Արցախի բանահյուսությունը» վերտառությամբ բանահյուսական երկերի ստվարածավալ ժողովածուն, որն իր տեսակի մեջ մոնումենտալ կոթող է հիշեցնում, և որը տիրականորեն գալիս է համալրելու Արցախի բանահյուսական երկերի քննությանը, հավաքագրական աշխատանքներին վերաբերող անվանի շուշեցիներ՝

Առաքել, Ալեքսանդր, Գրիգոր Բահաթրյանների հավաքած հեքիաթների, Հայկունու «Ուղեգնացական ակնարկների», Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթների», Մ. Բարխուդարյանի «Բարոյական առակների», «Պըլը Պուղու», «Արազը տարին կտարի», «Չոբանն ու նշանածը», «Միրզա և Աննայի», «Արցախի», Կոստանդին Մելիք-Շահնազարյանի երկերի, Ե. Լալայանի, Խ. Դավթյանի, Ա. Իսրայելյանի, Կ. Դավթյանի, Ա. Ղազինյանի, Լ. և Ե. Հարությունյանների աշխատանքների, Թ. Հայրապետյանի «Կոստանդին Մելիք-Շահնազարյանի» ուսումնասիրության և այլոց տքնանքով ստեղծված գրքերի շարքը:

Ա. Սարգսյանի «Արցախի բանահյուսությունը» առաջին հայացքից էլ մեծ խորհուրդ է պարունակում. գրքի առաջին կազմին քանդակագործ Ս. Բաղդասարյանի հեղինակած նշանավոր քանդակն է՝ «Մենք ենք, մեր լեռները», որը խիստ ընդհանրական և խորհրդանշական է Արցախ աշխարհը ներկայացնելու համար՝ Պապիկ-Տատիկի ավանդութակիր, ազգային դիմագիծը հատկանշող հստակակարգով, որը միաժամանակ հատկանշում է բնաբանի փոխարեն անոտացիայի նախաթերթին մեջբերված առածը, արցախցու բնավորության գծերից մեկը՝ շիտակությունը. «Ղարաբաղցէն ըստըղավ-ընդըղավ չի ընգընում, խօսկը քյասմա յա ասում»:

Բանահյուսական երկերի քննությանը նվիրված ուսումնասիրությունների մեջ առաջինը չլինելով՝ «Արցախի բանահյուսությունը» գիտնական-բանագետի և ոչ միայն՝ ընդհանրության մեջ բնագավառը ներկայացնող գրքերի մեջ առանձնանում է ստվարածավալությամբ, իր ձևույթի մեջ՝ մոնումենտալությամբ, ժանրատեսակների ընդգրկուն քանակով, բանագիտական դաշտի տեղեկատվական ու տեսական շարժերի սպառիչ պատասխաններով:

1992-2014թթ. պարբերացմամբ հեղինակը Արցախի Հանրապետության տարբեր վայրերի, գյուղերի ու քաղաքների բանասացներից հավաքել ու գրի է առել ժողովրդական երգերի ավելի քան **8078 բնագիր**, որոնք դասդասելով ժողովածուի մեջ ներկայացրել է երեք խորագրի տակ՝ **1. «Վիպական բանահյուսություն», 2. «Քնարական բանահյուսություն» և 3. «Ասույթաբանական բանահյուսություն»:**

Երեք գլխակիրներն էլ իրենց հերթին նախանշում են նյութի մեջ տեղակայված ժողովրդական ասաումների հետևյալ խմբերը. առաջին՝ **1. Հեքիաթներ (22 միավոր), 2. Ավանդություններ (266 միավոր), 3. Առակներ (86 միավոր), 4. Զվարճախոսություններ (592 միավոր), Երկրորդ՝ 5. Խաղիիկներ (237 միավոր), 6. Չափածո այլ ստեղծագործություններ (21 միավոր), Երրորդ՝ 7.Առած-ասացվածքներ (3388 միավոր), 8. Անեծքներ (709 միավոր), 9. Օրհնանքներ և բարեմաղթանքներ (369 միավոր), 10 հանելուկներ (734 միավոր), 11 Գյուղերի ու քաղաքների մականուններ (1307 միավոր), 13. Շուտասելուկներ (24 միավոր), 14. Հանգախաղեր (204 միավոր):**

«Ներածություն» բաժնում բանագետը թռուցիկ, համառոտ ակնարկով պատմական անդրադարձ է կատարում Արցախ աշխարհի տեղանվանը,

վկայակոչելով պատմական աղբյուրների տարբանույթ արձանագրություններ, հայ և օտարերկրյա պատմիչ-մատենագիրների անդրադարձները, միաժամանակ մեկնաբանելով Արցախամուր (Փ. Բուզանդ) աշխարհի պատմական ճակատագրի, քաղաքական, սոցիալական, մշակութային կյանքի կարևորագույն անցքերը, ընդգծում Արցախի օրինական կապը մայր հայրենիքի հետ, բացահայտում արցախահայության մաքառող, ստեղծագործ ոգին ու ազգասեր էությունը, ավանդակիր վարքն ու բարքը:

Ա. Սարգսյանի քննության կենտրոնական առանցքը Արցախի բանահյուսությունն է և նրա վերաբերյալ կուտակված բանասիրական ուսումնասիրությունները, հրապարակումները, բնագրային ժողովածուները, նրբահյուս-ճարտարվեստ արարումները: «Լինելով հարազատ ժողովրդի մտքի ու հոգու վառ արտահայտություններ՝ ժողովրդական տարբեր ժանրերի ստեղծագործությունները մշտապես ուղեկցել են արցախահայությանը՝ ներկայացնելով նրա նիստ ու կացը, հոգեկան նրբին ու մշտախռով ապրումներն ու երևակայությունը, անցյալն ու ներկան՝ հաճախ լուսաբանելով մի շարք հարցեր, որոնք պատմության և այլ գիտությունների համար անլուծելի են: Դժբախտաբար, հազարամյակների ընթացքում ստեղծված ճոխ բանահյուսության միայն մի մասն է մեզ հասել՝ ժամանակին գրի չառնելու պատճառով»[1] , - նշում է Ա.Սարգսյանը:

Ներածությունում մեկնաբանը արժևորում է Արցախի բանահյուսական երկերի հավաքագրական աշխատանքները՝ նշելով այդ գործում ջանք ու եռանդ ցուցաբերած երախտավորների անունները, տքնանքը, հիշատակության արժանի վարքը, այդ ուղղությամբ նրանց հրատարակած ուսումնասիրությունների ուղղվածությունը, վերաբերմունքը բանագիտության և բանահավաքչական աշխատանքների վերաբերյալ, կարևորելով այդ գործում առաջինը հանդիսացող նշանավոր շուշեցի գերդաստանի՝ մտավորականներ Առաքել, Ալեքսանդր, Գրիգոր Բահաթրյանների վաստակը, որոնց շարքին ավելանում է եռանդուն գործիչների մի բույլ՝ իր նախասիրած ժանրատեսակների քննությամբ, հավաքագրական, հրատարակչական աշխատանքների ուղղվածությամբ: Նրանցից նշելի են Տ. Նավասարդյանը, Միք. Տեր-Հովհաննիսյանը, Մ. Բարխուդարյանը, Կ. Մելիք-Շահնազարյանը, Ե. Լալայանը, Խ. Դաղյանը, Ս. Իսրայելյանը, Մ. Գրիգորյան-Սպանդարյանը, Բ. և Ա. Ղազինյանները, Մ. Մխիթարյանը, Մ. Օհանջանյանը, Լ. Հարությունյանը և ուրիշներ:

Լեզվաբանը բացահայտում է նաև հրատարակված ժողովածուներում առկա բարբառային աղավաղումները, դրանց վնասակարության չափը, որոնք, ըստ մեկնաբանի, հետևյալ գործոններով են պայմանավորված.

1. Բանահավաքները, կարևորելով բանահյուսական նմուշների բովանդակային կողմը և բարբառի գիտական քննումը նպատակ չհամարելով, առաջնորդվել են բանահյուսական ժառանգությունը ընթերցող լայն

---

[1] ***Սարգսյան Ա.,*** *Արցախի բանահյուսությունը, Ե., Էդիտ Պրինտ, 2015, էջ 15, 11:*

շրջանակներին հասու դարձնելու սկզբունքով: Այս մասին նշված է որոշ ժողովածուների առջաբաններում և ծանոթագրություններում:

2. Բանահավաքները, բավարար չափով չտիրապետելով տվյալ խոսվածքի նրբություններին, դրանք հարմարեցրել են գրական հայերենի կամ մայրենի խոսվածքի առանձնահատկություններին: Չի բացառվում, որ բազմաթիվ նյութեր գրառվել են վերհիշելով, որի դեպքում գրառողը հանդես է եկել նաև որպես բանասաց:

3. Հաճախ նյութը հնչյունաքերականական օրինաչափությունների խախտումներով են ներկայացնում նաև բանասացները՝ ձգտելով այն գրականացնել:

4. Որոշ դեպքերում էլ, խախտումների պատճառները տեխնիկական են՝ պայմանավորված բարբառային տարաձայնությամբ նյութերի տպագրության դժվարություններով[1]**:**

Բանագիտական մոնումենտալ այս ուսումնասիրության մեջ հեղինակը զետեղել է նաև բանահյուսական նյութեր, որոնք հավաքագրել է 1992-2014թթ. ընթացքում:

Բավականին ծավալուն ներածությունում լեզվաբանը անդրադառնում է այդ նյութերի բանագիտական բացահայտումներին, բարբառային առանձնահատկություններին, հավաքագրական, գրառման աշխատանքներին, ժանրատեսակների կենսունակության աստիճաններին: Այս տեսանկյունից մեկնաբանված են հեքիաթի ժանրը, ավանդությունները, առակները, վիպական բանահյուսական ժանրերից ամենակենսականը՝ զվարճախոսության ժանրը, վերացման սահմանին գտնվող քնարական բանահյուսության գոհարներից՝ պարերգերը, սիրերգերը, ծիսական երգերը, հորովելները, տաղիկ-խաղիկները…

Զուգահեռ, բանագետը բացահայտում է վերոդիտված ժամանակաընթացքում հավաքագրած կտորների ժանրային և իմաստային առանձնահատկությունները՝ սկզբնապես կանգ առնելով հեքիաթի տեսակների բազմաշերտ պարույրներին, դրանք ներկայացնելով բնագրային հետաքրքիր օրինակներով, միաժամանակ ցույց տալով նյութի դաստիարակչական, գաղափարական, փիլիսոփայական շերտերը, կերպարային գծերը:

Մեկնաբանը, հետևելով Ա. Ղանալանյանի եզրահանգումներին, առանձնացնում է ավանդությունների տեսականին. դրանք են՝

1. **ստուգաբանական ավանդություններ,**
2. **բացատրական ավանդություններ**,
3. **վարքաբանական ավանդություններ**, որոնց մեջ ըստ քանակի գերակշիռ են ստուգաբանական ավանդությունները…

Ավանդությունների, հուշիկների պահպանման արդյունքում անձնավորվել են Արցախի սարերն ու ձորերը, քարայրերը, ջուրն ու

---

[1] *Տես՛ նույն տեղում, էջ 17:*

խոտաբույսերը, սրբատեղիներ և այլն, որոնցից շատերը շատ հետաքրքիրը հավատալիքների, գիտական բացատրությունների հետ են կապված:

Բուսական ու կենդանական, թռչնատեսակների աշխարհի հետ կապված հարցադրումները, ավանդութակիր շերտերը ևս մեկնաբանի տեսադաշտում են ու բացահայտումների բանալիներ ունեն: Դրանց քննումները Սարգսյանը ներկայացնում է ըստ աշխարհագրական տեղավայրերի լանդշաֆտի:

Հետաքրքիր քննողական անցումներում բացահայտվում է արցախցու կերպը, մտախառնվածքը (մենթալիտետը), արաչագործ էությունը, ազատասեր, ճշմարտասեր, արդամիտ էությունը, հանճարաբարո բարքն ու վարքը, ազգային նկարագիրը, մաքառող, պատվասեր, վրիժառու քայլքը, խստաբարո կենցաղը, արարչագործ ոգին, աստվածասեր էությունը, աստվածավախ, աստվածապաշտ, աստվածասաստ-աստվածադատ քննողական միտքը, պատվասեր տեսակը՝ առանձնացող իր որակներով, որոնք մեկնաբանվում են տեսաբանի ներկայացրած զրույցներում, ավանդություններում, պատմական երանգներով արարված պատումներում, ասացվածքներում. այնտեղ արցախցին է իր մտախառնվածքային ընդգծված գծերով, հավատով, հավատախախտ գծերով, հզոր ազատասեր էությամբ:

«Պողոսագոմեր գյուղում ժամանակին մի մեծ փոս է եղել, որտեղ թշնամիների հարձակումների ժամանակ թաքնվում էին կանայք ու երեխաները և փրկվում, -գրում է Ա. Սարգսյանը ավելացնելով,- հետագայում, երբ խաղաղություն է տիրում, ժողովուրդը ամենքին փրկող այդ փոսի տեղում եկեղեցի է կառուցում՝ այն անվանելով՝ Ամենափրկիչ»[1]:

Վարանդայի իշխան Մելիք Շահնազարյանի ապարանքում որպես կատակաբան, ապրած, 19-րդ դարի քաղաքական, մշակութային կյանքում մեծ դերակատարություն ունեցած զվարախոս Պըլը-Պուղու (խենթ Պողոս) անվան շուրջ բազմաթիվ ավանդություններ, զրույցներ, զվարճախոսություններ են հյուսել, որոնցում առկա են Արցախի, արցախցու անցյալ կյանքի շուրջ արված դրվագներ: Ահա, օրինակ դրանցից բնութագրական մեկը. «Ընդհանրապես,- գրում է լեզվաբանը,- Պըլը-Պուղու յուրաքնաչյուր խոսք, լինի հանդիմանական, խրատական, թե այլ բնույթի, ուղեկցվում է սրամտությամբ, երբ նա հասնում է տունը թալանած գողերի հետևից, վերջիններիս այն հարցին, թե ուր է գնում, զվարճախոսն ասում է. «Պա մէր տօնը քուչուցունում չը՞ք(4-78), երբ հորթերից մեկը արձակվում եւ փախչում է, նա սկսում է ծեծել կապած մյուս հորթին՝ ասելով. «Վէր սա պէց ընգնէ, էն մինին անա ք,օիլանա ա փըխչիլան(4-71), երբ դատավորը, Պուղու սրախոսությունից զգուշանալով, նրան հրավիրում է թութ ուտելու, զվարճախոսն ասում է. «Չէ՛, կըռէք չօնիմ, լըհա մին ըստաքան արաղ տօ, խըմիմ»(4-8), տեսնելով երեխայի փոխարեն խանձարուրի մեջ փաթաթած գողացած գառը՝ Պուղին գողացողին ասում է.

[1] *Նույն տեղում, էջ 141:*

«Ղազար, տրս հիշկան այե քրզ նման, հանցա լիհա քրթատ վէր ընգած ինի(4-2)»[1]:

Լայնածավալ ներածության մեջ գիտնականը տեսական և բնագրային վերլուծություններով բացահայտում է արցախյան բանահյուսության ժանրային բառագանձը՝ յուր ամբողջական խորքերով՝ լեզվառճական, շարահյուսական, գեղագիտական բառանցումներով, տալիս յուրաքնաչյուրի անհատական բնութագիրը, մեկնում ազգային խիտ երանգները՝ յուրաքանչյուր տարածաշրջանին հատուկ լեզվական, հնչունական առանձնահատկությունները պահպանելով:

Անզուգական զվարճաբան Պըլը-Պուղու մասին եղած աղբյուներին ավելացնենք նաև Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ն, որում Պըլը-Պուղին կերպավորված է Արցախի քաղաքական ճակատագրի զուգահեռներում՝ անվանված «Պիծի աստուծ»:

Արցախյան բանահյուսական երկերի լեզվաբանական, շարահյուսական, ձևաբանական, բարբառային առանձնահատկությունների, ոճական հարցադրումների քննության նախանձախնդիր է հեղինակը՝ Ա. Սարգսյանը: 634-382 էջերում տեղադրված է «Ծանոթագրություններ» բաժինը, որում հեղինակը, ըստ ժանրատեսակների ու բնագրային համարների, վերնագրերի՝ ցուցիչներով տեղադրել է երկերը՝ ըստ բանահյուսական **տարբերակների (Առաջին. Վիպական բանահյուսություն-1.Հեքիաթներ, 2. Ավանդություններ, 3. Առակներ, 4. Զվարճախոսություններ: Երկրորդ. Քնարական բանահյուսություն- 5. Խաղիկներ, 6. Չափածո այլ ստեղծագործություններ)**, որոնք աղյուսակի ձևով, համարակալված ներկայացնում են հետևյալ հետաքրքիր սանդղակը՝ նյութի անվանումը, բանասացը, ծննդավայրը և ծննդյան թիվը:

Արցախյան դժվարամարս բարբառային նյութը, դրա իմաստային, լեզվական բացահայտումները դյուրըմբռնելի դարձնելու համար հեղինակը ներկայացրել է գրքի մեջ գործածված դժվարամարս բառերի բառարան, որում բառերն ու դարձվածները տրված են բացատրություններով: Առանձնացված են նաև անձնանունների և տեղանունների ցանկեր:

Ուսումնասիրության անչափ կարևոր **առանձնահատկություններից մեկն** էլ այն է, որ ի տարբերություն նախորդ շատ ու շատ ուսումնասիրություններում առկա բացթողումների՝ հեղինակը անառարկելիորեն հետամտել է պահպանել բնագրային նյութի բարբառային տարաձայնությունը, ապա վիպական ու քնարական բանահյուսական ժանրատեսակների բնագրերում՝ տվյալ **խոսվածքի առանձնահատկությունները:** Այս միտումը հեղինակին հնարավորություն է ընձեռել առանձին ցանկով, ինչպես նշել ենք, ներկայացնելու քննախոսության նյութերը՝ հաշվի առնելով Արցախի բարբառը՝ ըստ խոսվածքների: Նյութը կարևորվում է նաև նրանով, որ

[1] *Նույն տեղում, էջ 31:*

յուրաքանչյուր բնակավայրի խոսվածքի անվան դիմաց նշվում են տվյալ խոսվածքով գրառված նյութերի համարները:

Գրքի արժեքորությունը բացատրվում է նաև հեղինակի մոտեցումով՝ գիտական ապարատի-մետալեզվի վերաբերյալ, երբ հեղինակը ամբողջացնում և ներկայացնում է Արցախի բանահյուսությանը լիովին և մասնակիորեն առնչվող տպագիր ու ձեռագիր տեսական և բնագրային աղբյուրները: Հավելենք. Ա. Սարգսյանը վիպական ու քնարական բանահյուսական ժանրերի նյութը դասդասել է ըստ խոսվածքների աշխահագրական դիրքի՝ հարավից-հյուսիս հաջորդականությամբ, ասույթաբանական բանահյուսական ժանրերի նյութերը՝ այբբենական հերթականությամբ:

Փոքրիկ անդրադրձներով մեկնաբանը ներկայացրել է նյութեր Մեհտիշենի և Չայլուի խոսվածքներով (բարբառներով), օրինակներ, որոնք տարբերվում են Արցախի բարբառից, և որոնց կրողները, ըստ հեղինակի բացահայտման, 1828-1830-ական թթ. Պարկաստանի Խոյի և Ուրմիայի գավառներից Արցախ գաղթած հայերի հետնորդներն են:

Այսպիսով՝ Ա. Սարգսյանի «Արցախի բանահյուսությունը» ուսումնասիրությունը գալիս է փաստելու, որ վերջին ժամանակներում հրատարակված բանագիտական ուսումնասիրությունների շարքում, իր տեսակի մեջ **ամբողջական ու հսկայածավալ ժողովածու է՝** լուրջ կազմաստեղծ համակարգով, նյութի վերաբերյալ սպառիչ տեսական և բնագրային բացահայտումներով, մեկնաբանություններով, հավաքագրական աշխատանքների նրբին, գիտական մոտեցումով, ժողովածուն ամբողջական ու բազմամակարդակ տեսնելու գիտնականի բծախնդրությամբ ու նույնքան բարձր պատասխանատվությամբ՝ ձեռնարկած դժվարին աշխատանքի վերաբերյալ հաջողության գիտակցությամբ, ինչը, ամենայն հավաստմամբ, հրաշալի փաստ է դարձել վերջին տարիների Արցախի բանագիտության պատմության մեջ:

Գրականություն

1. Սարգասյան Ա., Արցախի բանահյուսությունը, Ե., Էդիտ Պրինտ, 2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Ա. Խանյանը:

ՀՏԴ 82-01
Գրականագիտություն

Մամիկոն ՅԱՎՐՈՒՄՅԱՆ
Երևանի «Ուսում» դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

ԺՈՂՈՎՐԴԱԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ԴԵՐԸ ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

Սոկրատ Խանյանը ժամանակակից այն բանաստեղծներից է, ում գեղարվեստական լեզուն ճոխ է ու գունեղ: Ժողովրդի ծոցից եկած բանաստեղծն իր խոսքը համեմում է բարբառային և ժողովրդախոսակցական բառերով ու արտահայտություններով՝ դրանք զուգադրելով գրական բառապաշարի հետ: Վարպետ գրողի գրչի տակ նման բառերն ստանում են նոր հմայք և իրենց կենդանի արտահայտչականությամբ ստեղծում համապատասխան յուրօրինակ կոլորիտ:

Բանալի բառեր՝ *ժողովրդախոսակցական բառեր, բարբառային բառեր, բառապաշար, լեզվի ոճեր, բարբառային երանգներ, լեզվի ժողովրդայնություն, ոճական արժեք:*

М. Яврумян

РОЛЬ ДИАЛЕКТНЫХ СЛОВ И СЛОВ ОБЩЕНАРОДНОГО РАЗГОВОРНОГО ЯЗЫКА В ПОЭЗИИ СОКРАТА ХАНЯНА

Сократ Ханян - один из тех современных поэтов, чей художественный язык отличается богатством и красочностью. Поет из народа обогащает свою речь словами и фразами диалектного и общенародного разговорного языка, мастерски сопоставляя их с литературным. Под пером талантливого писателя такие слова приобретают новое очарование и создают соответствующий самобытный колорит своей живой экспрессивностью.

Ключевые слова: *разговорная речь, диалектические слова, словарный запас, языковые стили, диалектные оттенки, языковая идентичность, стилистическая ценность.*

M. Yavrumyan

THE ROLE OF COLLOQUIAL AND DIALECTIC WORDS IN SOKRAT KHANYAN'S POEMS

Sokrat Khanyan is one of modern poets whom artistic speech is picturesque and splendid. The poet, that has arised from the nation, embelishes is picturesque and splendid. The poet, that has arised from the nation, embellishes his speech with dialectic and conversational words and exrpressions comparing them professionally with literary launguage.
Such words get a new charm under the master poet's pen and create an appropriate original colouring with ther living expressiveness.

Key words: *Conversative words, dialectic words, vocabulary, styles of language, dialectic nuances.*

Սոկրատ Խանյանի բառապաշարի ընդհանուր շղթայի մեջ որոշակի տեղ են գրավում ժողովրդախոսակցական բառերը. «…Արվեստի ամեն մի իսկական գործի մեջ իշխում է ժողովրդական լեզվամտածողությունը, ասել է թե՝ լեզվի ժողովրդայնությունը»,- իրավացիորեն նկատում է Արտաշես Պապոյանը[1]:

Խոսելով ժողովրդախոսակցական բառերի մասին՝ նա գրում է. «Կան բառեր ու բառաձևեր, որոնք, դարեր ու դարեր գործածվելով ժողովրդի հայտնի ու անհայտ բանաստեղծների, երգիչների ու տաղերգուների անգիր ստեղծագործության մեջ, լիցքավորվել են ազգային շնչով ու ոգով, հղկվել ու սրվել, իմաստավորվել կենսափիլիսոփայությամբ և հագեցել սուրբ ու նվիրական զգացումներով»[2]:

Լեզվի ժողովրդայնությունը, անշուշտ, զգալիորեն պայմանավորված է ժողովրդախոսակցական, բարբառային բառերի հմուտ օգտագործմամբ, սակայն ինչպես իր միտքն է շարունակում Արտ. Պապոյանը, «…դրանից չի կարելի բխեցնել, թե ժողովրդական չի կարող լինել այն գրողների լեզուն, ովքեր խուսափում են բարբառներից ու ժողովրդական ձևերից և նախապատվություն են տալիս «մաքուր» գրական արտահայտություններին… Իսկական գրողը, եթե նա իրոք մեծ արվեստագետ է, այս դեպքում էլ կգտնի այլոց համար անսպասելի ու անմեկնելի, միայն իրեն հայտնի միջոցների ու գույների այն գաղտնի խաղը, որը խոսքին կհաղորդի կենդանություն ու հյութեղություն, ինչն անհրաժեշտ է լեզվի ժողովրդայնացման համար»[3]:

Իրավամբ, ոճական յուրահատուկ երանգ ունեն նաև ժողովրդական-խոսակցական և բարբառային բառերը: Դրանք իրենց կատարած դերով ու ոճական արժեքով ունեն շատ ընդհանրություններ բարբառային բառերի հետ, և հաճախ դժվար է դրանց մեջ որոշակի սահմաններ դնելը: Պապոյանի պատկերավոր նկարագրությունից տեսնում ենք, որ բազմաթիվ բարբառային բառեր, համընդհանուր գործածություն ստանալով, դադարում են նեղ-բարբառային լինելուց, մտնում են ժողովրդական-խոսակցական բառերի մեջ և ապա բարձրանում գրական լեզվի աստիճանի: Եթե անգամ այդ բառերը չեն գրականացվել, դա չի նշանակում, թե դրանք բարբառային են: Օրինակ՝ գարունք, թուշ, իրիկուն, հանաք, յար և նմանատիպ այլ բառեր այսօր այլևս բարբառային չեն, քանի որ հասկանալի են բոլորին:

Բառապաշարի այս երկու շերտերն իրար մոտենում են այնքանով, որ երկուսն էլ ընդունված գրական ձևեր չեն համարվում: Բայց կարևոր է նշել այս երկու խմբերի տարբերությունները: Խոսակցական լեզվին բնորոշ բառերը գործում են մեր լեզվի տարբեր բարբառներում ու ոլորտներում, դրանով իսկ հակադրվում արդեն ընդհանուր ճանաչում գտած գրական լեզվի համակարգ մտած ձևերին: Ժողովրդական-խոսակցական բառաշերտի

---

[1] ***Պապոյան Ա., Պ.*** *Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Ե., 1970, էջ 21:*

[2] *Նույն տեղում, էջ 34:*

[3] *Նույն տեղում, էջ 26:*

առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրանք գրական լեզվի զարգացման ընթացքում աստիճանաբար ընդհանուր ճանաչում են գտնում, անցնում գրական լեզվի բառապաշարին:

Ժողովրդական-խոսակցական բառերը գործածության ավելի լայն շրջանակներ ունեն, որովհետև դրանք օգտագործվում են ոչ թե այս կամ այն խոսվածքում, այլ գրական լեզվի տարբեր ոճերում, որի շնորհիվ և նրանց իմաստային առումների մեջ խաչաձևվում են գրական և բարբառային երանգները: Ժողովրդական-խոսակցական բառերի մեջ եղած լրացուցիչ երանգներն այդ բառերը դարձնում են ավելի արտահայտիչ, հուզական և կենդանի, այդ պատճառով էլ դրանք հաճախ գեղարվեստական խոսքում գործածվում են որպես գրական բառերին զուգահեռ հոմանիշներ: Օրինակ՝ երիտասարդ-ջահել, ընտրել-ջոկել, եղբայր-ախպեր, գեղեցիկ-սիրուն և այլն:

Ինչպես բարբառային, այնպես էլ ժողովրդախոսակցական բառերի գործածությունը պայմանավորված է համապատասխան թեմայի ընտրությամբ և կատարված է որոշակի նպատակադրումով: Օգտվելով այդ բառերի հուզաարտահայտչական երանգներից և իմաստային նրբություններից՝ Ս. Խանյանն աշխատում է այդպիսի բառերի օգտագործումով ժողովրդական հարազատ շունչ տալ ստեղծագործությանը: Այդ կարգի բառերի գործածությունը ոճավորման նպատակ ունի, ժողովրդական ոճի հարազատ երանգավորում:

Առանց լեզվին աղ ու համ տվող լեզվական այդ միջոցների անչափ աղքատ ու անարյուն կլիներ ցանկացած գրողի լեզուն: Ժողովրդական խոսքի սեղմությունն ու դիպուկությունն իրենց մեջ պարունակող հարադրությունները գեղարվեստական խոսքը դարձնում են պատկերավոր ու արտահայտիչ, տալիս նրան ժողովրդական ոճի հարազատ երանգավորում:

Բարբառային բառերը չեն մտնում գրական լեզվի բառապաշարի մեջ և իրենց հնչյունական-ձևաբանական առանձնահատկություններով ու գործածության սահմանափակությամբ տարբերվում են ընդհանուր գործածություն ունեցող գրական բառերից:

Գրողի բառապաշարում եղած բարբառային բառերի մասին խոսելով՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանց օգտագործումը սովորաբար պայմանավորված է լինում գեղարվեստական արտահայտչական զանազան նկատառումներով: Բնականաբար, բանաստեղծը չի կարող բնական և համոզիչ ներկայացնել ժողովրդական տեսարաններ, ստեղծել տվյալ տարածաշրջանին և ժամանակաշրջանին հատուկ կոլորիտ՝ առանց բարբառային բառերով իր խոսքը համեմելու: Բարբառային բառերն ու արտահայտությունները հանդես են գալիս հիմնականում ոչ թե հեղինակային խոսքում, այլ հերոսների զրույցներում և երկխոսություններում: Բարբառային բառերը բանաստեղծի խոսքը դարձնում են ավելի տպավորիչ, բնական և անմիջական:

Բարբառները եղել և մնում են մեր լեզուն սնող հիմնական աղբյուրներից մեկը: Հայերենի բազմաթիվ բարբառներ դեռևս պարունակում են գրական

լեզվի կողմից չյուրացված հարուստ բառապաշար, որի՝ գրական լեզու մուտք գործելու ուղին, բնականաբար, մնում է գեղարվեստական գրականությունը: Բանաստեղծը բարբառներից (հիմնականում՝ Ղարաբաղի բարբառից) վերցրել է այն, ինչը նպաստում է խոսքի հուզականությանն ու արտահայտչականությանը: Սա գեղարվեստական խոսքին ներկայացվող էական պահանջներից մեկն է:

Դիտարկենք Ս. Խանյանի «Արցախի արծիվը» պոեմը, որը հագեցած է բարբառային բառերով ու արտահայտություններով: Ինչպես վերը նշեցինք, բարբառային բառերը հանդես են գալիս հիմնականում հերոսների խոսքում, սակայն Խանյանը պոեմի նախերգում նույնպես օգտագործում է բարբառային և ժողովրդախոսակցական բառեր, և սա պատահական չէ: Չափազանց արհեստական և անհամոզիչ կստացվեր, եթե զուտ գրական բառերով շարադրված նախերգից հետո բանաստեղծն անցում կատարեր ժողովրդախոսակցական ու բարբառային բառերով հագեցած պոեմի գլուխներին: Դրանով հեղինակն օրգանական կապ է ստեղծում պոեմի բոլոր մասերի միջև: Այսպես, նախերգում հեղինակային խոսքում կարդում ենք.

Սիրտս մեկեն առավ թևեր,
Եվ աստղացավ իմ հոգին: [3,136]

Մեկ այլ հատվածում անգամ համեմատության մեջ կարելի է նկատել ժողովրդախոսակցական տարր. ինչպես-ն ավելի գրական հնչողություն ունի, քան ոնց-ը.

…Այդ աշխարհն էլ ինչպես եղեմ,
Ձգվել էր ոնց լեռնապար: [3, 37]

Ինչպես տեսնում ենք, բերված հատվածում բանաստեղծը միաժամանակ օգտագործել է և° ինչպես-ը, և° ոնց-ը, բնականաբար, սա հետապնդում է նաև այլ նպատակ, այն է՝ խուսափել կրկնությունից, ինչպես նաև ելնելով տաղաչափական սկզբունքներից՝ վանկերի քանակից:

Նույն նախերգում հանդիպում ենք.

…Իր հավատին հավատարիմ՝
Ճամփա չտա խուժանին: [3,138]

Այստեղ հանդիպում ենք նաև սեռական հոլովի բարբառային կամ խոսակցական կազմության.

…Ու չոքել էր վիշապն ինչպես
Հազարացոց (հազարացիների) զորքը խիտ: [2,138]

Մեկ այլ տեղ՝

Գիտեմ, որ ինձ ես հիշում ու լալիս,
Ինձ ես որոնում տղերանց շարքում: [2,145]

Վարպետ գրողն օգտվում է ոչ միայն ժամանակակից հայերենի բառական հարստությունից, այլև գրաբարի, ժողովրդական կենդանի խոսքի ու բարբառների կենսունակ տարրերից: Երբ ասում ենք, թե գրողի լեզուն պետք է զերծ լինի բարբառայնությունից, արխաիկ բառերից, ամենևին էլ չի

նշանակում, թե դրանք առհասարակ անընդունելի են գեղարվեստական խոսքի համար: Դիտարկենք հետևյալ օրինակները.

Մետաքսի գործվածք, աղած համով ձուկ,
Հավերի տակից նոր վերցրած տաք ձու,
Չորթան, պզկաթան, շլորի լավաշ,
Այն ամենն, ինչից կստացվի լավ ճաշ... [3,145]

* * *

Շուշանիկը իր հոր կանչից
Զգաստացավ ու խո՞ր շնչեց.
- Այստե՞ղ եմ, հայր, աղբրին մոտիկ: [3,158]

* * *

Գնա՞նք,- ասաց,- քեռի՞ Ադամ,
Մենք էլ ունենք մի չաղ կխտար… [3,159]

Հաճախ ոչ միայն դժվար, այլև անհնարին է լինում այդ կարգի բառերի փոխարինումը գրական համապատասխան հոմանիշներով: Այս կարգի բառերից ոչ մի գրող չպետք է խուսափի, որոնք բանաստեղծի խոսքի մեջ բերում են իրենց յուրահատուկ համն ու հոտը, յուրօրինակ կոլորիտը: Օրինակ՝

…Այան փարվել էր նորընծա հարսին,
Մայրը նայում էր նրա թուխ վարսին, [2,169]

***

Բայց թշնամին առել ճամփի թեք կոնակը
Եվ չէր թողնում, որ մարդ անցնի անգամ ոտով: [3,188]

Հարկ չկա, թերևս բերել բոլոր բարբառային և խոսակցական բառերը, սակայն ևս մեկ անգամ նշենք, որ նպատակային կերպով բանաստեղծը պոեմը հագեցրել է նման բառերով՝ փորձելով ստեղծել տեղի և պատմական ժամանակահատվածի կոլորիտ, ինչը նրան հաջողվել է:

Խանյանը հաճախ է գործածում ջան բառը, որը չի կարող փոխարինել գրական ոչ մի բառով: Գեղարվեստական գրականության մեջ նմանօրինակ բառերի դերը կարևորելով՝ Հովհաննես Թումանյանը դիպուկ պատասխան է տալիս այն քննադատներին, ովքեր պահանջում էին նման բառերից մաքրել գրական լեզուն: «…Առաջարկում եք «ջան»-ի տեղ գործածել «հոգյակ»…, այսուհետև փոխանակ ախպեր ջան կամ Գրիգոր ջան ասելու, մաքուր հայերենով կասենք՝ հոգյակ եղբայր կամ՝ հոգյակ Գրիգոր…: Մի՞թե չեք տեսնում, որ հոնքը շինելու տեղ աչքն էլ հանում եք»,- գրում է բանաստեղծը[1]:

---

[1] ***Թումանյան Հ.***, *Երկերի ժող. 6 հատորով, հ. 4, Քննադատություն և հրապարակախոսություն (1892-1921), Ե., 1951, էջ 142:*

Բազմավանկ բառերում Ա ձայնավորի սղումը, ինչպես հայտնի է, միջինհայերենյան շրջանի հնչյունափոխական երևույթ է, որը պահպանվել է նաև արևմտահայերենում և Կարնո բարբառի խոսվածքներում[1]:

Բերենք մի քանի օրինակ՝ շաբթով (1, 359), քեզնից (1, 418), մեզնից (1, 437), ինձնից (4, 165), փեսին (3, 173), քարվան (նույն տեղում,3 168) և այլն: Երբեմն նկատելի է նաև այլ ձայնավորի սղում (տվյալ դեպքում՝ ի ձայնավորի), ինչը նույնպես բառին հաղորդում է բարբառային երանգ, ինչպես օրինակ՝ հարսանքում (3, 167):

Ժողովրդախոսակցական բառաշերտի մաս են կազմում նաև նվազական, փոքրացուցիչ ածանցներով կազմված բառերը, որոնք ոչ միայն արտահայտչականություն են տալիս բանաստեղծական խոսքին, այլև ընդգծում են բանաստեղծի գորովագութ վերաբերմունքը համապատասխան առարկայի կամ անձի նկատմամբ: Խանյանի խոսքարվեստում ոճական նման գործառույթով են օժտված փոքրիկ (2, 291), շնիկ (2, 293), քույրիկ (2, 300), արջուկ (2, 300), Սուսիկ (2, 303), բալիկ (2, 306), գառնուկ (2, 307), կարմրաթշիկ (2, 318), աչիկներ (2, 322), որբուկ (2, 325), ուլիկ (2, 327), թոռնիկ (2, 330), հորթուկ (1, 360), թխլիկ (1, 360), տաղիկ (1, 352) և այլ բառեր: Հայտնի է, որ նվազափաղաքշական ածանցներով կազմված բառերը ժողովրդական ոճավորման երանգ են կրում: Խոսքային համապատասխան միջավայրով են պայմանավորված նվազափաղաքշական ածանցներով կազմված բառերի գործածությունները, որոնց ստեղծած արտահայտչականությունը բանաստեղծական խոսքը դարձնում է ազդեցիկ ու հուզական:

Գրականություն

1. Թումանյան Հ., Երկերի ժող.6 հատորով, հ. 4, Քննադատություն և հրապարակախոսություն (1892-1921), Ե., 1951:
2. Խանյան Ս.Ա., Ընտիր երկեր, 10 հատորով, հ. 1, 2009:
3. Խանյան Ս.Ա., Ընտիր երկեր, 10 հատորով, հ. 2, 2009:
4. Խանյան Ս.Ա., Ընտիր երկեր, 10 հատորով, հ. 3, 2010:
5. Խանյան Ս.Ա., Ընտիր երկեր, 10 հատորով, հ. 4, 2010:
6. Ղազարյան Ս., Միջին հայերեն, գ. 1, Ե., 1960, էջ 191-192, Սաքապետյան Ռ., Արևմտահայերենի դասագիրք, Ե., էջ 30, Մկրտչյան Հ., Կարնո բարբառը, Ե., 1952:
7. Պապոյան Ա., Պ. Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Ե., 1970:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Ա. Խանյանը:

---

[1] ***Ղազարյան Ս.***, *Միջին հայերեն, գ. 1, Ե., 1960, էջ 191-192,* ***Սաքապետյան Ռ.***, *Արևմտահայերենի դասագիրք, Ե., էջ 30,* ***Մկրտչյան Հ.***, *Կարնո բարբառը, Ե., 1952, էջ 1:*

ՀՏԴ 82-145
Գրականագիտություն

Սիլվա ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱրՊՀ, գրականության և լրագրության ամբիոն, բ.գ.թ., դոցենտ

ԱՐՑԱԽԻ «ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ՎԱԶԳԵՆ ՕՎՅԱՆԻ «ԱՅՍ ՂԱՐԱԲԱՂՆ Է» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում վերլուծված է Արցախի ճշմարիտ բանաստեղծ Վազգեն Օվյանի քնարերգության գլուխգործոց հանդիսացող «Այս Ղարաբաղն է» երկը, որտեղ քննադատվում են Արցախի պատմությունը նպատակային կեղծող թրքազերի պատմաբանները, ինչպես նաեւ ապազգային դավաճանները: Շեշտվում է նաեւ այն փաստը, որ Օվյանը, ինչպես բոլոր մեծերը, զգացել է ազգային ազատագրական գալիք գարթոնքն Արցախում:

***Բանալի բառեր**: Ազգային- ազատագրական, հրաբուխ, Արցախ, Պապ ու Տատ, լեռներ, ոտանավորչի, խաչքար, խիզախ,զանգահար,ահեղասաստ,համազգային:*

С. Хачатрян

АРЦАХСКОЕ «Я СОЛНЦЕМ ВСКОРМЛЕННЫЙ ЯЗЫК МОЕЙ АРМЕНИИ ЛЮБЛЮ» В ПРОИЗВЕДЕНИИ «ЭТО КАРАБАХ» ВАЗГЕНА ОВЯНА

В данной статье исследуется шедевр лирики доподлинного арцахского поэта Вазгена Овяна «Это Карабах», в котором подвергаются критике целенаправленные искажения, совершаемые азербайджанскими историками и некоторыми «внутренними предателями». Кроме того, подчеркивается факт, что Овян предугадал пробуждение национального самосознания в Арцахе.

***Ключевые слова:** национально-освободительный, вулкан, Арцах, Татик Папик. горы, стихотворец, хачкар, смелый, звонарь, страшный, общенациональный.*

S. Khachatryan

"I LOVE THE SUN-NOURISHED LANGUAGE OF MY ARMENIA" OF ARTSAKH IN THE WORK "IT'S KARABAKH" BY VAZGEN OVYAN

This article examines the masterpiece of the lyrics of the original Artsakh poet Vazgen Ovyan "This is Karabakh," in which the purposeful distortions committed by Azerbaijan historians and some "internal traitors" are criticized. In addition, it is emphasized the fact that Ovyan foresaw the awakening of national self-consciousness in Artsakh.

***Key words**: national liberation, volcano, Artsakh, "Tatik Papik", mountains, poet, khachkar, brave, bell-ringer, terrible, national.*

«Այս Ղարաբաղն է» քերթվածքը /236 տող/, որը շիկացած հոգով գրված ասք է, անառարկելի գլուխգործոց է: Այն կարելի է նաեւ վեպ անվանել, որում խտացված են Արցախի պատմության հերոսական դրվագները:

Պատկերված է նաեւ անմխիթար ներկան: Այս անզուգական քերթվածքի յուրաքանչյուր տողը մի սպառազեն զինվոր է եւ հայրենիքը շենացնող պատվախնդիր արհեստավոր, հոգեւոր գանձեր երկնող ոսկեդարի գրիչ, չքնաղ եզերքով սքանչացած տաղանդաշատ նկարիչ, «վասն քծնանքի» տաղեր թխող խղճուկ ոտանավորչիներին խարազանող արվեստագետ եւ դարավոր թշնամու նենգության մասին աղաղակող Չենով Օհան: Չափածո այս երկի գործող անձերն են ՝ «փափուկ հոգով կոշտ լեռնցիները, որոնք, որքան բարի, նույնքան էլ անողոք են, երբ խաբում են իրենց. «ճակատը Մեսրոպյան գրով նախշած» վանքերը՝ մամռապատ խաչքարերով, հուսաբեկ ու չվող կռունկները, մեր անմահության խորհրդանիշ Պապ ու Տատի հուշակոթողը, Ամարասում դպրոց բացած Մեսրոպ Մաշտոցը, հեռատես Մելիք Ավանը եւ զգուշավոր Չենով Օհանը:

Բացասական տիպերն են՝ պատմությունն աղավաղող կեղծ պատմաբանները, ներքին տականք մատնիչները, իր «նեխած խորքով» ծովի հետ չափվել փորձող ճահիճը,որը մեր դարավոր թշնամուն է խորհրդանշում ու նաեւ՝ ներքին թշնամին՝պաշտոնական աթոռը գրկած բյուրոկրատը, ում համար փույթ չէ, որ Արցախը հայաթափվում է, կռունկները չվում, բները թափուր են մնում….Ադրբեջանի դրածո Կեւորկովը, ով ատրճանակի սեւ փողի նման տնկեց իր մատը եւ քարակույտ անվանեց մեր հավերժության խորհրդանիշ հանդիսացող « Մենք ենք մեր լեռները «կոթողը: Բանաստեղծը չի մոռանում իր սերնդակից վայ-պոետներին, որոնց իրավացիորեն շեփորահար անունն է տալիս, ովքեր առանց խղճի շողոքորթում են այդ դրածոյին:

Հպարտ հոգու ճախրանքով, անարդարությունների ու դավերի դեմ ծառացող հոգով գրված այս գործում փայլատակում է բանաստեղծի խիզախ տաղանդը: Սիրահարված իր բնաշխարհին՝ նա անխնա է Արցախի ներքին եւ արտաքին թշնամու նկատմամբ: Այս ստեղծագործությունը հագեցած է մտքի խորությամբ ու սեղմությամբ, աֆորիզմի հասնող բազմաթիվ արտահայտություններով.

«Հարատեւելու այն սուրբ տանջանքը, որ հավասար է խոլ խիզախության, հպարտ թեւելու այն վեհ խոյանքը, որ հատուկ է մեր թեւերին միայն եւ այն զրկանքը, որ մեզ լիաբուռ պարգեւեց տերը»: Բերենք փոխաբերական իմաստ պարունակող մի հատված.

Եւ զգույշ մի քիչ…
Հրաբուխն հանգած
Կարող է հանկարծ
Քո ոտքերի տակ բորբոքվել ներից,
Դարերով լռած իր խառնարանից
Նետել հուր ու բոց,
Հողմահար անել եւ բերդ, եւ ամրոց:

Հանգած հրաբուխն ազատատենչ ղարաբաղցու՝ իր տունն ու պատիվը պաշտպանելու անկոտրում կամքն է խորհրդանշում, բռնությունը

չհանդուրժելու նրա հողեղեն խառնվածքն ու պատմության դաժան քառուղիներում ազատության համար մղած նրա հերոսամարտերը: «Հանգած հրաբուխը» վերստին բոցավառվեց 1988-ին, երբ Արցախը ոտքի ելավ իր անկախության համար.

…Ծառը հզոր է, երբ արմատները
Խորն են մխրճված մայր հողի գրկում,

Գետի թիկունքում կանգնած է լեռը
Եւ դրա համար նա չի ցամաքում…

«Գետի թիկունքում» կանգնած է լեռն, անկասկած, մայր Հայաստանն է, որից չնայած հազար պատնեշով մեկուսացրել էին խլված Արցախը, մեր քոչվոր «բարեկամները», միեւնույն է, հեռվից հեռու ներկա էր նա՝ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ իր ոգեղեն զոյությամբ, սատար էր եւ է Արցախին: Մայր Հայաստանն իր մեծ ըղձասաց որդու՝ Հովհաննես Շիրազի «Ողբ Ղարաբաղի»-ով զգոնության ու զգաստության էր կոչում Արցախին, Կոմիտասի երգից զատված քեզ կուլ կտան մուղամները…

«Հին հրաբխի խառնարանում դեռ հուրը չի պաղել»,- որպես ահեղ սաստ ,ասքի վերջում, ի գիտություն բոլորի, հնչեցնում է բանաստեղծը, ասել է թե՝ ազատատենչ Արցախում ամեն պահ հնարավոր է հրաբխի ժայթքում՝ազատագրական պայքար: Այս ստեղծագործությունը Օվյանը գրել է 1979թ-ին, համազգային ազատագրական շարժումից մոտ 10 տարի առաջ: Այն ժամանակ, երբ իր սերնդակից « թմբուկ պոետները» ծալծլվում էին դրածո Կեւոկովի պատվիրած եղանակի տակ, նրան հաճոյանալու համար աչք փակում Բաքվի կողմից իրականացվող հակահայկական հրեշավոր քաղաքականության հանդեպ: Այս տարիներին՝70-ականներին է գրվել նաեւ «խիզախ մի գիրք», արցախցի գրող Լեոնիդ Հուրունցի «Մենության մեջ» կամ «Ինչպես հասցնեմ ճիչս սերունդներին», որը արձակ իրապատում է Արցախում Բաքվի կողմից հրահրվող հանցագործությունների մասին: Ահա թե ինչ է գրում Վազգեն Օվյանի ավագ ժամանակակիցը. «Եթե գրողը անարդարության ու դաժանության հանդիպելով, առանց հետեւանքների մասին մտածելու, նետվում է մարտի, նրան տաղանդավոր համարիր, խիզախությունը տաղանդի բաղադրիչն է»[1]: Տաղանդից զուրկ գրողը, որը հասել է իշխանության, կարող է անուղղելի վնաս պատճառել ամբողջ կոլեկտիվին: Կրծող նախանձով նա հեշտ ու հանգիստ կարող է կործանել ճշմարիտ տաղանդը, որպեսզի աչքը չծակի[2]«: Հենց տաղանդից ու նաեւ բարոյականությունից զուրկ ոտանավորչիներին է նկատի ունեցել Վազգեն Օվյանը, երբ «Այս Ղարաբաղն է» ասքում գրել է.

---

[1] ***Հուրունց Լ.***, *Ինչպես հասցնեմ ճիչս սերունդներին, Երեւան, «Տի առ ֆիքս», 2004, էջ 4:*

[2] ***Հուրունց Լ.,*** *Ինչպես հասցնեմ ճիչս սերունդներին, Երեւան, «Տի առ ֆիքս» ՍՊԸ, 2004, էջ 14:*

Եւ ծնել է նա շեփորահարներ,
Թմբուկ պոետներ հանգավոր ճառի,
Որ ներբողներ են անվերջ հորինել,
Վասն քծնանքի ու հոնորարի:

Լճացման, ստի, բռնության ու կեղծիքի թանձր խավարում Վազգեն Օվյանը հնչեցրեց «Այս դարաբաղն է» ստեղծագործությունը, որպես անառարկելի ճշմարտություն, որպես նվիրյալ որդու հպարտության հրավառություն եւ ծնրադիր սիրո ծես, որպես կեղեքող վշտի ճիչ ու անհաշտ ընդվզում, որպես բողոքի ու ցասման ոգեղեն լավա եւ զգաստության կոչով զանգ, որի դողանջները թեև խորհրդային գրաքննության պատճառով լռեցվել են գրողի ապրած ժամանակներում՝ այսօր հնչում են բարձր ու խրոխտ՝ տարածվելով հայրենի եզերքում եւ նրանից դուրս՝ ազգային արժանապատվության եւ հայրենասիրության սրբազան հուրը բորբոքելով թե ներսում, եւ թե դրսում:

Խավարի դժխեմ թագավորության մեջ, ուր թուրքն էր խրախճանում իր հոգու կեղծիքով ու հայատյաց գիշատչական բնազդներով, ուր խորհրդային գրաքննությունը մկրատում, ոչնչացնում էր հայրենասիրության անկեղծ պոռթկում պարունակող յուրաքանչյուր տող, Վազգեն Օվյանը լավ գիտեր, որ իր արվեստի իսկական գլուխգործոցները անտիպ են մնալու, գիտեր եւ գրում էր, քանզի զգում եւ տեսնում էր, որ ընթերցողը կարոտ է ճշմարիտ խոսի:

«Այսօր ազնվորեն գրված ամեն մի տողը, գալիք սերունդն ընկալում է որպես անգին ընծա: Շտապեք ասել այդ խոսքը, որն ընդունակ է լուսավորելու մեր օրերի անթափանց խավարը, խոսքի իշխանությունը փողի իշխանությունից զորեղ կլինի»[1],- գրել է Լեոնիդ Հուրունցը:

Իր գործընկերոջ պես,Վ. Օվյանը, բնավ չմտածելով գրաքննության մասին , ասել ու գրել է անթափանց խավարը ցրող իր խոսքը, ստեղծել ճշմարտապատում գեղարվեստական երկեր, որոնք այսօր, հիրավի, անգնահատելի ընծաներ են ներկա ու գալիք սերունդների համար:

«Այս Ղարաբաղն է» երկը հնչում է նաեւ որպես մարտահրավեր՝ ուղղված մեր ժողովրդի պատմությունն աղավաղողներին: Իր խրոխտ լեռների պես, ընդդեմ կեղծիքի և Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, ծառս է լինում Արցախի բանաստեղծ որդին, զգուշացնելով.

Առուն կարող է ժայռի պռնկին
Ջրվեժի ուժով ահեղ շառաչել…

Առուն, որ ժայռի պռնկին, այսինքն՝ կործանման եզրին գտնվող մի բուռ Արցախն է խորհրդանշում , կարող է,այո, ջրվեժի ուժով ահեղ շառաչել, ոտքի կանգնել իր ոտնահարվող իրավունքները պաշտպանելու համար:

---

[1] ***Հուրունց Լ.,*** *Ինչպես հասցնեմ ճիչս սերունդներին, Երեւան, «Տի առ ֆիքս» ՍՊԸ, 2004, էջ 21:*

Բոլոր ճշմարիտ բանաստեղծները անսխալ պայծառատեսներ են նաեւ : Վազգեն Օվյանը կանխազգում էր հասունացող փոթորիկը մեր ազատագրական շարժումից դեռեւս 10 տարի առաջ: «Այս Ղարաբաղն է՝ մեր սուրբ օջախը, ծուխը ծխանի, որ բարձրացել է եղեգան փողից»,- ի լուր բոլոր զեղծարարների ու բռնակալ հափշտակիչների, ազդարարում է բանաստեղծը: «Եղեգան փողից բարձրացող մեր օջախների ծուխը վկայությունն է, որ Հայկի ու Բելի, հուրհեր Վահագնի առասպելական ժամանակներից ի վեր, Արցախը հայ է եղել, Հայաստան աշխարհի մի անառիկ բեկորը,որը «զորավարներ է տվել աշխարհին՝ինքը մնացել առանց զորապետ»:

«Պղծված հոգիներ: Քանի՞սն են իմ Ղարաբաղում:Երկատված մարդիկ,որ մի բան ասում՝մեկ այլ բան են մտածում: Պարզվում է ՝ մարդու հետ ամեն ինչ կարելի է անել՝նրանից պարաններ հյուսել ՝ընդամենը մի տարրական խայծ ունենալով՝մի կտոր հաց:Անիծված լինես, հացի կտոր, առանց որի մարդը չի կարող….որ ընդունակ ես ծունկի բերել նրան ցանկացած կեղծ կուռքի առաջ»[1:]

«Հացի կտորին» ազգի շահը ստորադասող ստրկամիտ ու դիմազուրկ այս ապազգային տարրերին, որոնք վերևներում դիրք ունեն, նկատի ունի բանաստեղծը՝ «գաճաճ թփերի հույսին մնացել» տողում: «Այս Ղարաբաղն է» տողը», որն ասքում կրկնվում է 18 անգամ, ոչ միայն հուզական լիցք է հաղորդում համանուն երկին, կարող է վերնագիր լինել յուրաքանչյու գլխի համար:

Բանաստեղծական խոսը գերշիկացման է հասնում ասքի վերջին հատվածում. Ղարաբաղը Ձենով Օհանի տագնապի գոչն է, որ «Սասնա Դավթին դուրս բերեց հորից»: Սասնա Դավիթը՝մեր միամիտ, լավատես ու հավատավոր ժողովուրդը՝ հուսավառ հայացքը հառած Հյուսիսին, ցայսօր արդարություն է ակնկալում, իսկ «Հյուսիսը սարցալեռ է, քար է աշխարհը, Հայ Ղարաբաղ»:/Հովհաննես Շիրազ/:

Կարծես հենց այսօրվա համար է ասված՝ Ղարաբաղը Ձենով Օհանի գոչն է: Ղարաբաղն, այո՝ Ձենով Օհանի տագնապի գոչը եղավ, որը, ոչ միայն հայ ժողովրդին քնից արթնացրեց, այլև քրիստոնյա աշխարհի ուշադրությունը պանթուրքիզմի հրեշավոր ծրագրի վրա բեւեռեց, ինչը սոցիալիզմի ժամանակ թուրք ազերիների կողմից այնքան ցինիկորեն իրագործվում էր Արցախում: Արցախյան աշխարհասասան ազատագրական շարժումը, հիրավի, ահեղագոչ եղավ համայն քրիստոնյա աշխարհի համար: Տող առ տող բյուրեղանում է բանաստեղծական խոսքը, որն արծվի ճախրի է նման եւ սքանչացնեում է իր փառահեղ սլացքով: Ահավասիկ. «Հպարտ թեւելու այն վեհ խոյանքը,որ հատուկ է մեր թեւերին միայն» տողերը, որոնք այդ տարիներին տպագրված դիմազուրկ ու

---

[1] ***Հուրունց Լ.,*** *Ինչպես հասցնեմ ճիչս սերունդներին, Երեւան, «Տի առ ֆիքս» ՍՊԸ, 2004, էջ 22:*

պատեհապաշտ ներբողներով լցոնված տասնյակ գրքեր արժեն: Ասքի վերջնահատվածում բանաստեղծը պահանջում է դիմակավորված բարեկամից ու թշնամուց.

Այս հողի վրա դու զգույշ քայլիր,
Մաքրիր ոտքերդ, դիմակդ հանիր…
Լեռները լուռ են,բայց ոչ խուլ ու կույր՝
Տեսնում են, զգում, քարը խոսում է,
Քարը ասում է,
Հին հրաբխի խառնարանում դեռ հուրը չի պաղել…

Ասել է թե, ազատագրական պայքարի հուրը, որ դարեր շարունակ անառիկ է պահել Արցախը, դուրս է ժայթքելու որպես ցասման լավա, հնչելու է պայքարի սրբազան շեփորը, և «կարմիր հոկտեմբերի» կողմից Ադրբեջանին ընծայված հինավուրց Արցախը ոտքի է կանգնելու իր բռնադատված ազատությունն ու անկախությունը պաշտպանելու համար: Ահա այսպես է մարգարեացել Վազգեն Օվյանը «Այս Ղարաբաղն է» ասքում, որին համարժեք երկ գոյություն չունի արցախյան գրականության մեջ: Այս ասքը բանաստեղծի ոգեղեն թռիչքն է, նրա ճշմարիտ ու ազգապահ քանքարի հորդահույզ սլացքը: Դժնդակ իրականության մեջ, չհանդուրժելով ոչ մի զսպաշապիկ , նրա զգացմունքները հորդում են ուղղակի …… Հիացումի ու անձնվիրման, հպարտության, ցասման ու բողոքի,ատելության ու արհամարհանքի եւ ահեղ սաստի խիզախ սլացքով,խորը և ճշմարտացի բովանդակությամբ, կատարման վարպետությամբ, խոսքի պատկերավորման միջոցների անթերի կիրառմամբ «Այս Ղարաբաղն է» երկը կարող է դասվել հայ գրականության հայրենասիրական թեմայով գրված լավագույն ստեղծագործությունների շարքը: Այն Արցախի «Ես իմ անուշ Հայաստանին « է: Երբ բանաստեղծական խոսքը հստակ է եւ համարձակ, անկեղծ է և հուզառատ, անվրեպ հասնում է լսարանին և կատարում իր առաքելությունը՝ հայրենասիրության և ազգային արժանապատվության գիտակցության փրկարար լույսը վառում մարդկանց սրտերում: «Այս Ղարաբաղն է» ասքը բարձրաթռիչ ստեղծագործություն է եւ կատարում է իր ազգապահ առաքելությունը՝ իրականացնելով Նժդեհյան՝ ինչ արժե հանճարը,եթե այն չի նպաստում ցեղի ընդերքից շանթանման հերոսներ ծնելու սրբազան առաքելության իրականացմանը, պատգամը:

Ահա թե ինչ է գրել «Այս Ղարաբաղն է» ասքի գնահատողներից մեկը՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի Տորոնտոյի մարմնի ատենապետ հարգարժան Մկրտիչ Մկրտչյանը. «Ես աթոռիս մեջ մխրճված եւ մարմինս փշաքաղված ունկնդրում էի այդ սքանչելի գործը, երբ մեծ ծափահարություններով քերթվածքն ավարտվեց , իմ քով նստած իմ մոտիկ բարեկամին հարցրի, թե ով է այդ գլուխգործոց բանաստեղծության հեղինակը եւ խնդրեցի այդ քերթվածքից մի օրինակ գտնել ինձ համար»: Այս մեծ բարերաի հովանավորությամբ լույս ընծայվեց «Լեռների լեգենդը»

գիրքը: Օվյանի քնարերգության ոսկեհուռ թագի աննման գոհարն է «Այս Ղարաբաղն է» երկը եւ այն անպայման պետք է ընդգրկել հանրակրթական դպրոցի միջին եւ բարձր դասարանների դասագրքերում՝ որպես ծրագրային երկ, Արցախում չգերազանցված գրական կոթող:

Գրականություն

1. Հուրունց Լ., Ինչպեսհասցնեմճիչսսերունդներին, Երեւան, «Տիառֆիքս», 2004:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Ա. Խանյանը:

ՀՏԴ 82-145
Գրականագիտություն

Սոկրատ ԽԱՆՅԱՆ
ԱրՊՀ, գրականության և լրագրության ամբիոն, բ.գ.դ., պրոֆեսոր,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

ԾԱՂԿԱԾ ՑԱՎԻ ՊՈԵԶԻԱՆ

Սույն հոդվածում համառոտ ուրվագծվում է ժամանակակից հայ պոեզիայի տաղանդավոր ներկայացուցիչներից մեկի՝ Կամիլայի բանաստեղծական ուղին ու կոնկրետ վերլուծվում ու գնահատվում նրա նոր ընտրանի ժողովածուն՝ «Ծաղկած ցավե» խորագրով: Նշվում է, որ Կամիլան գրքի վեց շարքերում բանաստեղծական բարձր արվեստով պատկերում է ժողովրդի ճակատագիրը, տառապանքի առկայությամբ ու հարատևելու վճռականությամբ: Կամիլայի նոր ժողովածուն ընդհանրության մեջ գնահատվում է որպես նոր երևույթ 21-րդ դարի պոեզիայի տեսադաշտում;

Բանալի բառեր: *Կամիլա, ծաղկած ցավ, ազգային ճակատագիր, պոեզիա, արվեստ, հայրենապատում, կորուստների վիշտ, լավատեսություն:*

С. Ханян

НЕУТИХАЮЩАЯ БОЛЬ

В данной статье кратко освещается творческий путь одного из талантливых представителей современной армянской поэзии- Камилы и дается конкректный анализ и оценка нового сборника избранных стихов под названием «Неутихающая боль». Отмечается, что Камилла в шести циклах книги с высоким поэтическим мастерством изобразила судьбу народа, его страдания, показала его упорство и волю к жизни. Рецензируемый сборник Камилы полностью можно считать новым явлением на поэтической арене 21-ого века.

Ключевые слова: *Камила, неутихающая боль, национальная судьба, поэзия, искусство, патриотические стихи, боль потерь, оптимизм.*

S. Khanyan

UNCEASING PAIN

This article briefly highlights the creative path of one of the talented representatives of modern Armenian poetry-Camilla and gives a concrete analysis and evaluation of a new collection of " Unabated pain". It is noted that Camilla depicted the fate of the people, his suffering, showed his persistence and will to live with high poetic skill in six cycles of this book. The reviewed collection of Camilla can be completely regarded as a new phenomenon in the poetic arena of the 21st century.

Keywords: *Camilla, unabated pain, national destiny, poetry, art, patriotic poems, pain of loss, optimism.*

Թող չափազանցություն չթվա, եթե խոստովանեմ, որ ամեն անգամ Կամիլայի անունը լսելիս ես ինձ երջանիկ եմ համարել և այսօր էլ համարում եմ երջանիկ հայ մտավորականներից մեկը, որովհետև ինձ բախտ է վիճակվել նրա առաջին գրքին ծանոթանալ անմիջապես ու գրախոսությամբ հանդես գալ «Գրական թերթ»-ում: Իսկ Կամիլայի պոետական երախայրիքին ծանոթանալու առիթը եղել է իմ թոռը՝ Հայկը, Կամիլայի կուրսընկերը՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում սովորելու տարիներին: Հայկն էր, որ ընկերական ազնիվ հիացմունքով ու հպարտությամբ երևանյան իմ մի այցելության ժամանակ նվիրեց իր կուրսընկերուհու գիրքը և ասաց. «Պապի՛կ, պոետական նոր, թարմ խոսք է Կամիլայի քնարերգությունը, չեմ կասկածում, որ այն կհետաքրքրի քեզ»:

Հայկը չէր սխալվել: Ծանոթանալով Կամիլայի երգերի ժողովածուին՝ անմիջապես վերցրի գրիչը և ըստ էության շարադրեցի դրվատանքի իմ խոսքը՝ ընդգծելով. «Բանաստեղծ լինելու համար պետք է բանաստեղծ ծնվել: Հնարավոր չէ Կամիլայի ստեղծագործական կարողությունների մոտով անցնել սովորական զգացմունքներով: Կարդում ես նրա պոեզիան և անպայմանորեն հիանում: Լսում ես նրա նվագը դաշնամուրի վրա, աշխարհը քոնն է դառնում: Դիտում ես նրա ստեղծած նկարները, հմայվում ես: Ու կրկին հայացքդ ուղղում ես Աստծուն՝ նշմարելու և գոհունակությունդ հայտնելու, որ մեզ ընծայում է նման տաղանդներ՝ արարո՞ղ, հուզախա՞ռն, խոհեմ: Կամիլան մարդկային ամենանուրբ զգացմունքներով ծնված մի սիրտ է, որ աշխարհ է եկել պոեզիայի համար»:

Եվ խոստովանեմ, որ Կամիլայի ճանապարհն ու ճակատագիրը միշտ եղել են իմ ուշադրության կենտրոնում: Ու հանգիստ շունչ եմ քաշել, երբ իմացել եմ, որ նա շարունակում է արարել որպես դաշնակահար, գեղանկարիչ և առանձնապես՝ բանաստեղծուհի:

Ու կրկնակի գոհունակություն եմ ապրել և ուրախացել, երբ արվեստի տիեզերական ուղեծրում հանդիպել են մեր Զաքարն ու Կամիլան՝

կազմելով հայկական ավանդական, կենսառատ ու հայապատիվ ընտանիք՝ ազգին նվիրելով ոչ միայն երաժշտական նոր հայտնագործություններ, այլև մերօրյա դից Վահագն հրաշամանուկին:

Կամիլայի առաջին գրքից (1999) հետո անցել է ուղիղ 19 տարի: Այդ ընթացքում հրատարակվեցին նրա «Ձեզ նայելիս» (2001), «Ղովտի կին» (2002), «Քարի ու իմ միջև» (2003), «Բառահանդես» (2007) գրքերը՝ լայն արձագանք գտնելով և՝ լուրջ ընթերցողների, և՝ անվանի գրողների ու գրաքննադատների շրջանում: Եվ անսպասելի, ուղիղ 10 տարի Կամիլան լռեց պոեզիայի արարման ճանապարհին:

Վերջերս կրկին Երևանում էի, որտեղ տնավորվել են աղջիկս՝ Կարինեն ու որդիս՝ Կարենը: Իմ հետաքրքիր զրույցները լինում են աղջկաս ավագ որդու՝ Հայկի հետ: Հայկը, որ արդեն որպես դաշնակահար-կոմպոզիտոր միջազգային մրցույթների բազմակի դափնեկիր է, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պոեզիայի անմնացորդ սիրահար, ունի բավականին հարուստ գրադարան, Կամիլայի բանաստեղծությունների հիման վրա ստեղծել է վոկալ-գործիքային ստեղծագործություններ: Երբ միահյուսվում են իսկական պոեզիան ու բարձրարվեստ երաժշտությունը, շունչ է առնում կատարյալ հրաշքը: Նման հրաշքի ականատես եղա՝ ունկնդրելով Հայկի երաժշտական երկերը՝ Կամիլայի պոեզիայի մոտիվներով: Հայկը տեղյակ է, որ Կամիլան ՀՀ ԳՄ անդամ է 2003 թվականից, արժանացել է «Ռուբեն Սևակ», «Սեպուհ Սարգսյան» համահայկական գրական մրցանակների, Արցախի մշակութային կյանքում ունեցած ավանդի համար պարգևատրվել է ԼՂՀ վարչապետի «Ոսկե մեդալ»-ով: Իսկ երբ նրան ասացի, որ վերջերս լույս է տեսել Կամիլայի «Ծաղկած ցավ» խորագրով բազմանվագ ու բարձրարվեստ նոր ժողովածուն, որը նոր խոսք է արդի հայ պոեզիայում, Հայկն իր անմիջական բնավորությամբ արտաբերեց. «Պա՛պիկ, ասում էի, չէ, որ Կամիլան աշխարհ է եկել մեր պոեզիան հարստացնելու համար»: Հաճելի է լսել Հայկի բարձրաճաշակ կարծիքը:

Կամիլայի ծաղկած ցավի կենսաղբյուրները հասկանալն ու շոշափելը դյուրին գործ չէ: Պետք է ծանոթ լինել աշխարհում, նաև Հայաստանում տեղի ունեցող քաղաքական, սոցիալական, հասարակական ցնցումներին, իմանալ համաշխարհային պոեզիայի ասպարեզում տեղի ունեցող խաչմերուկային փոփոխությունները և արդի հայ քնարերգության առնչություններն այդ ամենին, որպեսզի կարողանաս մասնագիտորեն թափանցել Կամիլայի բանաստեղծականացված ցավի խորքերը և ասես տեսանելի ու համոզիչ խոսք: Այս է թելադրում նրա զարմանալի, կենսաշաղախ պոեզիան, որի թթխմորը, ճիշտ է, կյանքի ալրափոշուց է և ժայռածին հայակարկաչ զուլալ ջրից, սակայն այդ թթխմորից ստացած հացն ուրիշ համ ունի, ուրիշ բույր: Բավական է համտես անել այդ թարմ հացից ու զգալ կամիլայական խոսքի արժեքը՝ որպես ինքնատիպ ու աստղաշող երգաշար, ու կրկնել անմահ Սայաթ-Նովայի այս խոստովանությունը.

Ամեն մարթ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ուրիշ ջըրեն է,
Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գըրեն է,
Բունիաթըս ավազ չիմանաս՝ քարափ է, քարուկըրեն է…

Կամիլայի համար բանաստեղծությունը աստվածային էություն ունի: Այդ մասին հենց ինքն է խոստովանում.

Ես ամեն օր գնում եմ
Բանաստեղծության մոտ՝
Հաղորդություն ստանալու…[1]

Վերընթերցելով գիրքը՝ մի հաճելի զգացում շոյում է սիրտդ՝ հուշելով, որ Կամիլան հաղորդվում է աստվածաթև բանաստեղծությանը՝ հանուն աշխարհի, հայրենիքի, բնության, իրականության, մարդու տիեզերական ճակատագրի, որի համար ցավում է բանաստեղծուհու սիրտը: Նա առաջին հերթին դիմում է հայրենիքին, տագնապած ճչում.

Տունս հենվել է մարող արևիդ,
Ու լուսամուտն է նայում՝ անճրագ,
Անբռնակ օրվա երազի նման,
Ճաքում՝ ճչացող մենության համար:

Ապա՝

Բառդ հենվել է ծարաված շուրթիս,
Հաշմանդամ կյանքի թռչուն է անթև,
Մտքի հայելում ճախրում է անտես,
Տարաբախտ թևով՝ երկինքների դեմ… [2]

Այսքանով հանդերձ, քնարական հերոս-բանաստեղծուհին հայկական մաքառող ոգու վստահությամբ հնչեցնում է լավատեսական-ապրեցնող խորհուրդը.

Վերքս հենվել է փլատակ հույսիդ,
Կյանքն է պառկել՝ որպես ականյալ,
Սերս շաղվել է արնաթաց հողիդ՝
Խոցված արմատիդ մաքառման համար:
Հենվիր դողոցքին սրտիս պատգարակ,
Չի հենվել եմ ես մանկությանս արդար,
Իսկ նա հենվել է արևիդ լույսին՝
Որպես հաղթության հենարան անհաս:[3]

Կամիլայի հայրենապատումը բազմաշերտ է: Ուշագրավն այն է, որ նա իրեն ներկայացնում է որպես հայրենիքի ցավակից դուստր, առանց որի երկուսն էլ չեն կարող հարատևել: Լսենք Կամիլայի զրույցը Հայրենիքի

---

[1] **Կամիլա,** «Ծաղկած ցավ», Երևան, «Վան Արյան» հրատ., էջ 1:
[2] Նույն տեղում, էջ 29:
[3] Նույն տեղում, էջ 29:

հետ. «Մենք նույն արևն ենք կիսում Եվ նույն ճամփան գողգոթա», «Մենք նույն երկինքն ենք մաշում, Ծովը, որ կորցրինք հեռվում, Նույն այբուբենն է հնչում Թռչնագիր բառի սրտում», «Տեր Զորն է իմ մեջ ոռնում՝ Որպես արյան հուշարձան»: Այսպես՝ Որդին ձուլվում է Երկիր-Մոր ցավին, Երկիրը՝ Որդու: Ահա թե ինչ տեսիլների հյուսվածքով է Կամիլան իրեն զգում ցավի ծովում, որն անընդմեջ ոչ թե ցամաքում, այլ ծաղկում է, որի հետևանքով բանաստեղծուհին իր ամբողջական գրքի մորմոքները պարզում է որպես «Ծաղկած ցավ»:

Կամիլայի սույն գրքի բանաստեղծական շարքերն ու առանձին-առանձին հյուսվածքները ցորեն հասկի պես այնքան են հասուն ու լիքը, որ չես հասցնի մեկ առ մեկ տրորել, բացել, հաշվել ոսկեգույն հատիկներն ու պարզել աշխարհին: Ուստի մնում է ընդհանրացված խոսք ասել՝ շոշափելով գրքի շարքերի թեմատիկան, հեղինակի գեղագիտական իդեալից բխող գաղափարը և ասելիքի 22մեցնող պատկերային թարմությունն ու բառապաշարի հարստությունը, ծածանել ավանդույթի և նորարարության հետևողական ձույլը, որոնք նոր են, հմայիչ, որոնց արծարծողն ու արարողն ինքն է, ինքն է հնչեցնողն ու հավերժացնողը:

Սովորաբար գրաքննադատությունն այս կամ այն մեծության ստեղծագործությունն արժևորելիս ընդգծում է կոնկրետ որևէ թեմայի առավել նկատելի տեղն ու դերը: Կամիլայի համար թեմաների հարց գոյություն չունի, նրա բանաստեղծություններից յուրաքանչյուրի աղբյուրն այլ է: Այստեղ կարող ենք նշել, որ Կամիլայի պոեզիան կյանքի պոեզիա է՝ բազմաբնույթ, դարակազմիկ, ճշմարիտ, անմիջական, գունագեղ, ցավոտ, արցունքոտ, հուսավառ…

Այստեղ կցանկանայի շոշափել մի երևույթ, որ հատուկ է Կամիլայի քնարերգությանը: Դա տեսիլքային պատկերների առկայությունն է, որի հետևանքով որոշ ընկերներ Կամիլային տանում են դեպի սիմվոլիզմ, այսինքն՝ խորհրդապաշտություն: Իմ դիտարկումով Կամիլայի պոեզիան խորհրդապաշտության հետ ընդհանրապես կապ չունի: Կամիլայի տեսիլքային պատկերները նրա ծաղկած ցավից վեր բարձրացող քուլաներն են՝ դրանք վերջին հաշվով չտեսնելու, չմորմոքվելու միտումով: Սայաթ-Նովան կասեր. «Դուն չասիս, թե էս խեղճ սազանդարն ով ա, Սայաթ-Նովան իմ, հենց բան կոսիմ, որ ամպերում ձեն հանի»: Մեծն Չարենցը, ժողովրդի ցավն իրենը համարելով, մարգարեաբար կկռահեր. «Հազար ու մի վերք ես տեսել, էլի կտեսնես, Հազար խալխի ձեռք ես տեսել, էլի՝ կտեսնես»: Միաժամանակ, ի հեճուկս չար աշխարհի, կբացականչեր. «Քո Չարենցին լեզու տվող երկի՛ր Հայաստան, Հազար ու մի երգ ես տեսել - էլի՝ կտեսնես»: Այստեղ տեղն է զգույշ լինել ու Կամիլային չտանել դեպի չարենցյան ցավի կրկնության սահմանները: Ոչ, պարզապես Կամիլայի ծաղկած ցավի պոետական պատկերը պետք է համարել նոր սերնդի աշխարհընկալման խոսուն արտահայտություն՝ կապված ժողովրդի ճակատագրի ծանրասահ ընթացքի, նրա չթեթևացող բեռան առկայության, նրա ղեկավար

զավակների ցավաբեր գործունեության հետ: Եվ դարի հողմապտույտ չարիքների հարուցած ազգային տառապանքն իրենը համարելով՝ Կամիլան պիտի շշնջա.

Տառապանք իմ,
Մի՛ տխրիր այդքան,
Ես քո երջանկությունն եմ անխինդ,
Որ կանգնել եմ հայացքիդ ներքո
Եվ ցրում եմ խոսքդ թանձրամիտ:
Քո մետաքսե արտասուքը թշվառ
Հանգչում է հիմա իմ ապարանքում,
Որտեղ չկա՛ չարություն ու տատասկ,
Որտեղ վհուկներ չեն վխտում:
Քամուն եմ տվել ցավդ մրրկահողմ,
Պսակով օծել վիշտդ զարդարուն,
Իմ կուրծքն եմ պատռել ճակատագրի դեմ,
Որ խաղա՞ղ նիրհես անխոց միրաժում:
Տառապանք իմ,
Մի՛ տխրիր այդպես.
Ես քո երջանկությունն եմ անխինդ:[1]

Քեզ այցի եկա, որ ուժ հավաքեմ
Քո փշուրներից
Եւ գնամ նորից Արցախն իմ հզոր[2]:

Բանաստեղծ Ա. Հովհաննիսյանի հայտնի «Գանձասար» բանաստեղծության հետևյալ տողերին՝

Ավերակվող փուշը կողդ խրվել,
Խարխլում է պատդ լուռ, անծպտուն,

---

[1] ***Խանյան Ս.,*** *Գ. Գաբրիելյանի աշխարհը, Ե., էջ 61:*

[2] ***Գ. Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում,*** *2007, Ե., էջ 201:*

Օ, Երկնային , ասա, ինչպես վարվեմ,
Ավաղ, ճաք է տվել սրբատունս...

ավելացնում է իրենը՝ Գաբրիելյանականը.

Արի կյանքով ծածկեմ ճեղքդ վերքոտ
Եվ արմատը հանեմ փուշ- կանաչիդ,
Թող որ նորից թնդա գմբեթը քո,
Զանգակատան զանգդ թող ղողանջի[1]:

Եվ երգը հնչեց ոչ թե որպես ցավի ու տառապանքի մրմունջ, այլ հույսի ու լավատեսության խորհուրդ: Դա 87-ի փետրվարն էր…Ուղիղ մեկ տարի անց պիտի բռնկվեր Հայոց Համազգային Շարժումը: Հայոց ազգային զարթոնքը եկավ փոխարինելու հոգեվարքի մեջ կործանվող ու հոշոտվող արցախցու ինքնագիտակցությանը: 88-ին իր գրչեղբայներ Վ. Հակոբյանի և Հ. Բեգլարյանի հետ մեկնեց Մոսկվա՝ որպես պահանջատեր պատվիրակ. «Ես, Հրաչիկը և Գաբոն դրինք մեր ստորագրությունները, հետո նամակին ծանր կնիքի պես դրվեցին մեր բռունցքները՝մեկը մյուսի վրա, որպես միաբանության և շարժման անմնացորդ նվիրվածության երդում»[2],- հայտնի դեպքերի մասին գրառում է Վ. Հակոբյանը. հետագայում ավելացան այդ բռունցքները, բազմացան՝ դառնալով համազգային զարթոնքի ու վերածննդի խորհրդանիշներ:

Փոթորկահույզ դժվար ու վտանգավոր բազմամարդ հանրահավաքներում, երբ փորձում էին ժողովրդին զսպաշապիկ հագցնել, արհամարհելով ռազմական ու քաղաքական բոլոր տեսակի ճնշումները՝ նաիր բողոքի ձայնն էր բարձրացնում ու ոգեկոչում ժողովրդին: Նրա երևալը ժողովրդի մեջ խանդավառություն էր առաջացնում, իսկ երգը հուզում հազարավոր կրակված սրտեր , գրողը դարձավ փոթորկահույզ օրերի շունչն ու ոգին, ժողովրդի խոսափողը՝ հուժկու ձայնը խառնելով ազգային վերածննդի համար մարտնչող նվիրյալների կոչերին:

Սակայն մարգարեական էր Ռաֆֆու այն պնդումը, որ թուրքը անկիրթ ու բարբարոս է , բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավազակ և այնժամ ավելի վտանգավոր կդառնա …Մեր անկախության երթը վերածվեց դժոխային ճանապարհի. բնաջնջման քաղաքականությամբ՝ արտոնյալ բարբարոսություն, կողոպուտ, բռնագաղթ, արյունոտ նախճիր, մշակութային հուշարձանների ոչնչացում… քանզի մեր ազգի բարոյական նկարագրի հակադիր բևեռում «քաղաքակիրթ « թուրքն էր, որը կրկին յաթաղանով ու նոր ցեղասպանությամբ մոլեգնեց: Բայց ինչպես Վ. Մնացականյանն է նշում, «Ցեղասպանության գերանդին քարին առավ

---

[1] ***Գաբրիելյան Գ.,*** *Ղարաբաղի հորովել, Երևան, 2003 էջ 39:*

[2] ***Գ. Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում,*** *Ե., 2007, էջ 72:*

Արցախում և հատկապես նրա փառքի ու հերոսության բարձունք Շուշիում», որի վանքը սոսկ «քարավոր ու դարավոր» կառույց չէ երկինք կարկառված, այլ ոգեղեն սրբոց օջախ՝ ծնված ազգի տառապանքից ու « փոշոտված- հոշոտված» երազ- մուրազներից, որ դարեր ի վեր հայացքը Մասիսներին Հույսի լույս էր հայցում, իսկ Հիսուսի պատկերով խաչն առաջնորդում հաղթարշավի:

Եվ խաղաղ, մեղմաշունչ տողերին եկան փոխարինելու ոգեշունչ ապրումներն ու մարտական պոեզիան. Գ. Գաբրիելյանի ընտրած բանաստեղծական գույները ձայնեղ են: Եվ ամենացայտունն այդ գույների մեջ Հայրենասիրությունն է»[1]:

Հայոց ազգային զարթոնքը եկավ փոխարինելու հոգեվարքի մեջ կործանվող ու հոշոտվող արցախցու ինքնագիտակցությանը.

Մութ մղձավանջն էր իջել հողին մեր
Եվ խեղդում էր մեզ աջից ու ձախից…
Եվ ըմբոստացան անվախ, անվեհեր,
Փառապանծ որդիք Հայոց Արցախի…
Եվ մղձավանջը փոթորիկ դարձավ
Եվ ծլեց հույսը Արևածագի[2]:

Սա անցողիկ ու հուզական պատկեր չէ, այլ մեր անցած կենսագրական ու պատմական ուղին: Անվանի գրողը ոչ միայն արցախյան շարժման ակտիվ գործիչներից էր, այլև մեր ապագայի ազատագրական պայքարի օրհներգիչը: Մեծ հայրենասերի ոգին չի թուլանում անգամ ադրբեջանական կալանավայրում, ուր արհամարհելով թշնամուն՝ երգում էր իր իսկ գրած «Ղարաբաղի հորովելը»: Այս ամենի դեմ նա ուներ հզոր մի միջոց՝ «անսահման կենսախնդություն և անմնացորդ նվիրվածություն գրչին»,- հավաստում է գրողի այրի Նունիկ Գաբրիելյանը[3]:

Վավերափաստերի գեղագրումներ են Գաբրիելյանի «Մուսա լեռան…երկու որդին», «Ողջակիզված կյանք», «Անդրանիկ», «Աստղաշենի աստղերը» և այլ պոեմներ, որոնցում անցյալն է ներծծված ներկայի մեջ, հայ մարտիկների հաղթարշավն է ու բարոյական հաղթանակի վեհությունը, հավատի սրբագործումն ու կորուստների մատյանը, որոնցից յուրաքանչյուրը ազգային ոգին, ազգային դիմագիծը պահպանող անփոխարինելի խորհուրդ է: Եվ հյուսում է բանաստեղծը նրանց կյանքի առասպելը, ովքեր իրենց քրիստոսված մարմինները դրեցին հայրենյաց սուրբ զոհասեղանին, ասուպացան ու ձուլվեցին բազում ասուպների գիրկ

---

[1] ***Հակոբյան Վ.,*** *Սովետական Ղարաբաղ, 22 հունիս , 1977թ:*
[2] ***Գաբրիելյան Գ.,*** *Ընտրանի, ԱրՊՀ, 2007, էջ 196*
[3] ***Գ. Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում,*** *Ե., 2007, էջ 116:*

դարձած օրրան-հողին… Կասուպանան, կմարեն աստղերն ու ծիածանը, բայց չի խամրի փառքը հերոսների.

Եվ ամեն մի առավոտ ու իրիկվող օրվա հետ
Ես մոմ ու խունկ կվառեմ հիշատակին նրանց սուրբ,
Որ դու, Տե՛ր իմ, պահպանես նրանց սիրով քո հավետ…[1]

Եվ նրանց անհատական ճակատագրի գեղարվեստական պատկերը գրողը միահյուսում է ազգային համապատկերի տարերքին, քանզի բոլորն ունեին մի անուն՝ Զինվոր… Համատեղելով գրիչն ու զենքը՝ մեր բանաստեղծները հերքեցին այն թյուր կարծիքը, որ երբ զենքն է շաչում, լռում են մուսաները: Եվ հերոս նահատակ Կ. Հակոբյանի վկայակոչումով՝ «Կը-րա-կում» էին չափածո. // Տեր իմ Աստված, այս ինչ եղավ// Շփոթվել են իմ գրիչն ու ավտոմատը://

Արցախյան շարքի հանրագումարը, նրա գեղարվեստական որոնումների ընդհանրացումը կարելի է համարել «Ղարաբաղ» բանաստեղծությունը.

Ես ապրում եմ Ղարաբաղում
Եվ չեմ ապրի մեկ այլ հողում
Եվ կմեռնեմ պապերիս պես
Արցախացած նրա կողում[2]:

Դեռևս կենդանության օրոք Գ.Գաբրիելյանը կերտեց իր անմահության լեգենդը՝ արժանանալով առավելագույն պատվին ու կոչմանը՝ ժողովրդական սիրուն ու համակրանքին, ուր ներկա է գրական իր անվիճելի վեհությամբ:

Ահա գրողի նոթատետրի գրառումներից. «Եթե մի օր լսեք, որ ես մահացել եմ, չհավատաք: Կգնաք շրջեք Արցախ աշխարհով մեկ, և դուք ինձ կտեսնեք յուրաքանչյուր հայ մանկան սրտի զարկի մեջ, արցախցի գեղջուկի ցավի ու հույսի մեջ, հայ զինվորի համբերության ու հուսավառ հավատի մեջ, Արցախի երկնակմարի գույների մեջ…

Այնպես եմ հունցված խմորիդ ամեն ,
Այնպես եմ փռված ծաղկունքիդ վրա…
Ու եթե հանկարծ մի օր ինձ քամեն,
Ինձնից քո սերը պիտի ծործրա:
Ես քեզ սիրում եմ Աստծո որդու պես,
Դու ինձ մայր եղիր, իմ հայրենի հող[3]»:

---

[1] ***Գաբրիելյան Գ.,*** *Աստղաշենի աստղերը, Երևան, 1996, էջ56:*
[2] ***Գաբրիելյան Գ.,*** *Ընտրանի, 2007, ԱրՊՀ, էջ 257:*
[3] ***Գաբրիելյան Գ.,*** *Քարի փոքրն է, որ չի մեծանում, Եր., էջ 55:*

Գրականություն

1. Գաբրիելյան Գ., Ընտրանի, Ստեփանակերտ, 2007:
2. Գաբրիելյան Գ., Ղարաբաղի հորովել, Երևան, 2003:
3. Գաբրիելյան Գ., Աշնան հանդես, Երևան, 1999:
4. Գաբրիելյան Գ., Աստղաշենի աստղերը, Երևան, 1996:
5. Գաբրիելյան Գ., Քարի փոքրն է, որ չի մեծանում, Երևան, 1995:
6. Գ. Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 2007:
7. Խանյան Ս., Գ. Գաբրիելյանի աշխարհը, Երևան, 2005:
8. Հակոբյան Վ., Սովետական Ղարաբաղ, 22 հունիս , 1977թ:
9. Ջանյան Բ., Հայաստան, 1995, 9 դեկտեմբեր:
10. Սիմոնյան Հր., Լրաբեր հասարակական գիտությունների, 2001, թիվ 1:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Ա. Խանյանը:

ՀՏԴ 82.09
Գրականագիտություն

Տաթևիկ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
ԱրՊՀ, գրականության և լրագրության ամբիոն, բ.գ.թ., ասիստենտ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ «ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ՎԵՊԻ ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եղ. Չարենցի «Երկիր Նաիրի» վեպը հայ գրականության ամենաբազմաշերտ, դժվար վերծանվող և բովանդակությամբ ու կառուցվածքով ամենաբարդ ստեղծագործություններից է: Գեղարվեստական առումով այն միանգամայն նոր խոսք է հայ պատմավիպասանության մեջ: Տպագրման առաջին իսկ օրից վեպը բուռն քննարկումների, հակասական և հաճախ իրարամերժ կարծիքների է արժանացել: Հոդվածում փորձ է արվում վեպի դասական և ժամանակակից մեկնությունների զուգորդությամբ ներկայացնել տարբեր մեկնաբանների յուրատեսակ գնահատականները, բնորոշել վեպի բնույթը, տեղն ու դերը հայ և համաշխարհային գրականության մեջ:

Բանալի բառեր՝ *բազմաշերտ վեպ, իրարամերժ կարծիքներ, երկփեղկվածություն, երգիծավեպ, պոեմանման վեպ, ենթատեքստ, քաղաքական սահմանային իրավիճակ, կորուսյալ հայրենիքի խորհրդանիշ, կերպավորում:*

Т.Согомонян

СОВРЕМЕННЫЕ И КЛАССИЧЕСКИЕ ИНТЕРПРЕТАЦИИ РОМАНА «ЕРКИР НАИРИ» ЕГИШЕ ЧАРЕНЦА

Роман Чаренца «Еркир Наири» является одним из самых сложных произведений армянской литературы с труднодоступным и отличительным содержанием и структурой. С точки зрения искусства, это совершенно новое слово в армянской истории жанра романа. С самого первого дня публикации роман получил противоречивые и часто противоположные мнения на бурных дискуссиях и дебатах.

В статье предпринята попытка представить уникальные интерпретации разных комментаторов в сочетании с классической и современной интерпретацией романа, охарактеризовать природу, место и роль романа в армянской и мировой литературе.

Ключевые слова: *многоуровневый роман, противоречивые мнения, двоякость, комедийный роман, подтекст, политическая критическая ситуация, символ потерянной родины, изображение.*

T. Soghomonyan

THE CLASSICAL AND MODERN INTERPRETATIONS OF "YERKIR NAIRI" NOVEL OF YEGHISHE CHARENTS

The novel Nairi Land by Yeghishe Charents is one of the multilayer and the most complicated works of Armenian literature with hardly decoded and distinctive content and structure. In terms of fiction it is a completely new word in Armenian historical novel genre. From the very first day of publication, the novel has received controversial and often contradictory opinions of hot discussions and debates.

In this article we attempt to present the unique estimations of the novel by different authors thus combining classic and modern interpretations of the novel characterizing the nature, place and role of the novel in the Armenian and world literature.

Key words: *multilayer novel, controversial ideas, splitting, comic novel, poem novel, context, political emergency situation, symbol of the lost homeland, imaging.*

Գրականության մեջ կան անհատներ, որոնք իրենց բացառիկ տաղանդով, գեղագիտական, փիլիսոփայական թարմ հայացքներով նոր ուղղություն են բացում գրական գործընթացքում՝ դառնալով փորձարար, ուղենիշ և մարգարե: Այդպիսի հանճարեղ դեմք է 20-րդ դարի մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցը, որի անունը ռումբի պես պայթեց, վերաիմաստավորվեց մի ողջ դարաշրջան և դարձավ պայքարի և մարտիրոսացման խորհրդանիշ: Չարենցը նաև խոշտանգված ու կորսված մի ողջ եզերքի խորհրդանիշ է: Ծնողները բնիկ պոլսահայեր էին՝ Մակու քաղաքից: 1895-ին նրանք տեղափոխվում են Կարս, որտեղ էլ ծնվում է Եղիշե Աբգարի Սողոմոնյանը: Գավառական այդ փոքրիկ քաղաքում անցել է մեծ հանճարի անհանգիստ և որոնումներով լի մանկությունը, գավառական այդ փոքրիկ քաղաքին հրաժեշտ չտված՝ նա մտավ մեծ կյանքի հորձանուտը՝ իր կարճատև կյանքը դարձնելով *գիրք անձնազոհության, ազնվության և ճշմարտության*:

Քաջատեղյակ լինելով հայ և համաշխարհային մշակութային գործընթացին՝ Չարենցն իր տաղանդի զորությունը փորձել է գրական գրեթե բոլոր ժանրերում: Որոնումը նրա տարերքն էր: Անցյալ դարի 20-ական թվականներին Աբովի և Վշտունու հետ հրատարակում է «Երեքի» դեկլարացիան, տպագրում «Ստանդարտ» ամսագրի միակ համարը: Ֆուտուրիստական տրամադրություններով, երբեմն նույնիսկ ծայրահեղությունների դիմելով՝ փորձում է անտարբերության նիրհից հանել գրական կյանքը: «Զախ» որոնումների այս շրջանում Չարենցը գրեց «Ամենապոեմ» (1920-1921), «Ռոմանս անսեր» (1922), «Մաճկալ Սաքոյի պատմությունը», «Չարենց- Նամե» (1922), «Պոեզոզուռնա» գործերը: Իսկ նրա «Երկիր Նաիրին» (1921-1924) իր տեսակի մեջ անկրկնելի երևույթ է հայ գրականության մեջ:

Հնօրյա ծննդավայրից միայն հուշեր էին մնացել, հիշատակի փշրանքներ և քարացած վկաներ: Այս հիշատակներն ամբողջացնելու և բազմաթիվ

ինչուների պատասխան գտնելու համար Չարենցը գրեց «Երկիր Նաիրի» վեպը: Ինչո՞ւ «Երկիր Նաիրի» և ինչո՞ւ Տերյանից բնաբան:

Գրականագիտությունը միշտ էլ արժևորել է այս կամ այն ստեղծագործության գրման շարժառիթները, նախապատմությունն ու ազդակները, ժամանակաշրջանը՝ դիտարկելով դրանք որպես ստեղծագործության վերլուծության էական դրվագներ: Ինչպես հայտնի է, Չարենցի վեպը գրվել է քաղաքական և հասարակական բավականին բարդ ու սահմանային իրավիճակում: Այդ օրերի ամենահմուտ քաղաքագետն անգամ չէր կարող նույնիսկ ենթադրյալ ուրվագծումով տալ վաղվա օրվա նկարագիրը: Չարենցն արձագանքեց վեպով, որովհետև ինչպես ինքն է ասում՝ չգրել չէր կարող:

«Երկիր Նաիրին» հայ գրականության ամենից դժվար վերծանվող, իր բովանդակությամբ ու կառուցվածքով ամենաբարդ ստեղծագործություններից է: Տպագրման առաջին իսկ օրից վեպը բուռն քննարկումների, հակասական և հաճախ իրարամերժ կարծիքների է արժանացել: Տիրող հասարակարգի համատեքստում միանգամայն հասկանալի է գրքի ռուսերեն հրատարակչության խմբագիր Մ. Շահինյանի կարծիքը: Ստեղծագործությունը համարելով երեք ցիկլով էպոս՝ նա դիտողություններ է անում բոլշևիկների կերպարների անլիարժեքության կապակցությամբ՝ ընդգծելով, որ բոլշևիկ Մարուքեի կերպարն ավելի թույլ է կերտված, քան դաշնակ Մազութի Համոյի:

Բավականին սխեմատիկ է Ս. Աղաբաբյանի բնորոշումը, նա վեպի հղացման գաղափարը կապում է Չարենցի ստեղծագործական կյանքի առաջին շրջանի հետ: Գրականագետը վեպը համարել է «պամֆլետ», «զայրույթով լցված ելույթ», «ազգային արժեքների անվերապահ պսակազերծում» և դառը հեգնանքով գրված գործ:

«Եթե Վահան Տերյանի և, առհասարակ, հայ ժողովրդի մեծագույն հատվածի՝ նրա դեմոկրատիայի համար «Երկիր Նաիրին» պատերազմի արյունոտ մագիլներում կործանվող ժողովրդի փրկության զինադրոշն էր, սպասվող վերածնության և հույսի խորհրդանշանը, քաղաքական ազատության և ազգային կուլտուրայի արժեքների պահպանման խարիսխը, ապա դեմոկրատիայի տարերքից հեռու կանգնած սոցիալական ուժերի, մասնավորապես դաշնակցության կուսակցության վարիչների ու գաղափարախոսների համար դա մի միֆական աշխարհ էր՝ հետնաշխարհ, որի տեսլացած պատկերների հետ էին առնչվում հայ բուրժուազիայի դասակարգային բաղձանքները,- գրում է Ս. Աղաբաբյանը և շարունակում,- եթե հայ դեմոկրատիայի համար Նաիրին անպարտ երկրի ապագա հառնումի հենարանն էր, ապա նեղահայաց ազգայնական գործիչների համար Նաիրին այն թզատերևն էր, որ կոչված էր «գաղտնագրելու» նրանց դասակարգային ակնկալությունները»[1]:

---

[1] ***Աղաբաբյան Ս.,*** *Հայ սով. գրակ. պատմ., հ. 1-ին, Եր., 1986, Երևան, էջ 282-283:*

«Երկիր Նաիրի» և «Ես իմ անուշ Հայաստանի». Չարենցն ինչպե՞ս կարողացավ հաշտեցնել մահերգն ու օրհներգը: Երկու Չարենց, թե՝ նույն անհատի երկվություն: Իրար հաջորդող գնահատականներում փոքր-ինչ մեղմացվում է քննադատի մոտեցումը: Հայրենիքի բարբարոսական խոշտանգման ականատեսը ժխտումով հաստատում է, համենայն դեպս Չարենցն անկեղծ է և՛ ժխտման, և՛ հաստատման պարագայում:

Վեպին համանման մոտեցում ունի նաև Հր. Թամրազյանը: «Երկիր Նաիրին» նա համարում է երգիծական նմուշի վեպ, որը, անկասկած, առնչություն ունի Օտյանի, Պարոնյանի վեպերի հետ, վերոնշվածում առաջ է քաշվում քաղաքական մեծ խնդիր՝ վեր հանել մի ամբողջ եզերքի պատմությունն ու ճակատագիրը: «Նա հյուսում է,- գրում է Հր. Թամրազյանը,- քաղաքական բազմակերպ անցքերի ու հոսանքների գեղարվեստական պատմությունը: «Երկիր Նաիրին» երգիծական բազմաթեմա վեպ է, ուր կենցաղային ու սոցիալական երգիծանքի հետ միասին բարձրանում և հատկապես ընդգծվում է քաղաքականը»[1]:

Գրականագետն առանձնացնում է նաև Չարենցի՝ կերպարակերտման յուրահատուկ մոտեցումը, որը խիստ տարբերվում է կերպարակերտման դասական եղանակներից: Ըստ նրա՝ հեղինակը գերադասում է ստեղծել էպիզոտիկ կերպարներ, չխառնվել նրանց կենսագործունեությանը, չխառնվել դեպքերի ընթացքին, պատմել ինչպես եղել է:

Ազատ Եղիազարյանը Չարենցի «Երկիր Նաիրի» վեպը համարել է միջազգային ասպարեզում հայ արձակի առաջին լուրջ հայտը: Նա գրողի աշխարհայացքում «Ազգային երազից» «Երկիր Նաիրի» սկզբունքային փոփոխություններ չի նկատում: «Այն, ինչ ասված էր երազի հնարանքի միջոցով, այժմ ներկայանում է իբրև ճշմարտություն հայրենի քաղաքի և ամբողջ Հայաստանի ճակատագրի մասին: Այժմ Չարենցը վերլուծում է իրական դեպքերը և իրական մարդկանց գործողությունները»,- գրում է Ա. Եղիազարյանը[2]:

Այնուհետև տարբեր նրբերանգներով գրականագետը ցույց է տալիս Չարենցի երկփեղկվածությունը. «Երազը պետք է դառնար երգիծանքի առարկա, որովհետև այն կապ չուներ իրականության հետ: Չարենցը վերահմաստավորում է Երկիր Նաիրին»,- եզրակացնում է Եղիազարյանը[3]:

Վեպում գլխավոր հերոսներ չունենալու և այդ մասին մի քանի անգամ շեշտելու՝ Չարենցի մտայնությունն («Բայց այս առթիվ ես, մի անգամ ընդմիշտ, հարկադրված եմ ասել, որ սույն իմ այս վեպում չկա և երևի չի էլ լինելու և ոչ մի «հերոս»- և այս տխուր հանգամանքում, կարծում եմ, ոչ թե ես եմ մեղավոր, այլ նաիրյան այդ քաղաքը, որովհետև- ի՞նչ, ի՞նչ «հերոսներ» կարող են դուրս գալ, ասենք, **Գեներալ Ալոշից** կամ Համո

---

[1] *Թամրազյան Հր., Եղիշե Չարենց, Եր., 1981, էջ 249:*

[2] *Եղիազարյան Ա., Չարենցը և պատմությունը, Եր., 1997, էջ 48:*

[3] *Նույն տեղում, էջ 49:*

Համբարձումովիչից- **Մազութի Համոյից**… Գուցե **Մեռելի Ենո՞քը** հարմար **«հերոս»** լիներ, կամ **Կինտաուրի Սիմո՞նը,** կամ, վերջապես- **Տելեֆոն Սեթո՞ն…** Է, թողնենք այս հարցը, սիրելի՛ ընթերցող, և անցնենք, քանի շուտ է, մեր ընտրած քաղաքի **«օրերին ու վաստակներին»** և, ո՞վ գիտե, կարող է պատահի, որ դեպքերի բերումով այդ աննշան բնակիչներից շատ շատերը հանկարծ դուրս գան **հերոսապանած հերոսներ**- դժբախտ ու հերոսական օրերի բերումով՝ դժբախտանան ու հերոսանան:»[1]) առիթ է տալիս գրականագետին ընդգծել, որ դա հեղինակի գեղագիտական ծրագրի կարևոր կետերից մեկն է. այդ քաղաքում հերոսներ չկան, մարդիկ շատ մանր են հերոսներ լինելու համար: Մեր կարծիքով վիճարկելի են նմանօրինակ բնորոշումները:

Երկփեղկվածության երևույթը, սակայն, նորից մեղմացնում է գույները, երգիծանք, որի մեջ ավելի շատ ցավ կա, քան ծիծաղ, սա է Եղիազարյանի կարծիքով վեպն ընկալելու կարևոր բանալիներից մեկը՝ հասկանալ ողբերգության հանելուկը և լուծել այն, հասկանալ Չարենցի դիրքորոշումը:

Վեպը գրելու ընթացքում Չարենցը կոմկուսի անդամ էր, գրականագետը դրանով է բացատրում հեղինակի վերաբերմունքն ու մտայնությունը:

Տարիների ընթացքում հասարակական-քաղաքական փոփոխություն-ներին զուգընթաց, բացվեցին բոլոր փակ գզրոցներն ու մինչ այդ անձեռնմխելի արխիվները, որն օգնեց նոր լույսի տակ տեսնել այնպիսի գրողներ, ինչպիսիք են Մահարին, Բակունցը, Չարենցը: Գրվեցին մենագրություններ, ուսումնասիրություններ և փաստագրություններ:

Այս բնագավառում անուրանալի աշխատանք է կատարել Դ. Գասպարյանը, որի վերլուծություններն ու հրապարակումները նոր երանգ ավելացրին չարենցագիտության (և ոչ միայն) մեջ:

Գրականագետի կարծիքով մեծ հանճարի մասին մինչ այդ հնչած որակումները բավականին միակողմանի են. «Այդ միակողմանիությունը խորացավ վերջին տասնամյակներին «Երկիր Նաիրիի» մասին գրված բազմաթիվ ուսումնասիրություններում և ներթափանցեց բուհական ու դպրոցական դասագրքերի մեջ:

Ինչո՞ւ այդպես, որովհետև նրանում տեսել են միայն ազգային-ազատագրական պայքարի ծանր, դժվարին ժամանակներում իրենց կյանքը հայրենիքին նվիրած գործիչների ծաղրանկար և ամենասրբազան պայքարին ու ցավագին ապրումներին ուղղված երգիծանք»[2]:

«Երգիծանք» և «սատիրա» եզրույթները համահունչ չեն վեպի բնույթին, քանզի այն դրամատիկական ու ողբերգական է՝ երգիծանքի թեթև շղարշով պատված:

---

[1] ***Եղիշե Չարենց****, Երկիր Նաիրի, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1977, էջ 51:*

[2] ***Գասպարյան Դ.,*** *Փակ դռների գաղտնիքը, «Ապոլոն» հրատ., Երևան, 1994, էջ 314-315:*

Վեպի բարդ կառուցվածքին հատկանշական են նույն բնագրի տարբեր և նույնիսկ հակասական մեկնաբանությունները, նշենք վեպի երկրորդ հրատարակչության առաջաբանի հետգրությունը՝ («Մեր աշխատության մեջ գուցե և կան, իհարկե, **ավելի մեծ**, թեկուզ մի քիչ **այլ կարգի** սխալներ և թերություններ, քան վերոհիշյալները.- բայց այդ սխալներն ու թերությունները շտկելու համար հարկավոր էր թերևս **նորից** գրել այս վեպը, բայց դա արդեն ո՛չ թե **շտկում** կլիներ, այլ **անդամահատություն՝ մահվան սպառնալիքի ներքո**»[1]), վերնագրի ընտրությունը, ո՞րն է Երկիր Նաիրին, ո՞վ ենք մենք, որտե՞ղ ենք գնում հարցադրումները և այլն:

«Երկիր Նաիրին» Չարենցը, կարծես մարգարեաբար զգալով հնչվելիք տարակարծությունները, բնորոշել է որպես պոեմանման վեպ՝ նկատի առնելով գուցե արձակին անհարիր քնարական զեղումները, պաթետիկ ոճն ու կառուցվածքային առանձնահատկությունները: Երրորդ գլուխը շատ դժվար է սկսել. «Ես օրգանապես արդեն հեռու եմ այդ ամենից»,- գրել է նա Մամիկոն Գևորգյանին:

Հետագայում Չարենցը փորձել է շտկումներ մտցնել վեպում, սակայն դա համարել է **«անդամահատություն մահվան սպառնալիքի ներքո»** և հիմնականում թողել է այնպես, ինչպես կա: «Կուզիկի մեջքը միայն գերեզմանը կշտկի»,- ընդհանրացրել է նա:[2]

Այս արտահայտությունը ևս տարակարծիք բացատրությունների է ենթարկվել:

Գուրգեն Մահարին մի առիթով հարցրել է.

-Ինչո՞ւ այդպես գրեցիր «Երկիր Նաիրին»:

-Այդպես գրվեց, ես մեղավոր չեմ:

Հավերժ աքսորյալ գրողը չէր էլ կասկածում, որ, «Այրվող այգեստաններ» վեպի հետ կապված, տարիներ անց իրեն ևս կուղղվի այդ հարցը:

Գրականագիտության մեջ կարծիքներ են հնչել այն մասին, թե ինչպիսին կլիներ «Երկիր Նաիրի» վեպը, եթե այն գրվեր ավելի ուշ շրջանում: Չարենցագետ Դավիթ Գասպարյանն այն կարծիքն է հայտնում, որ այդ ժամանակ կգրվեր միանգամայն այլ սկզբունքներով: Չմոռանանք, որ Չարենցը վեպը գրել է իր ստեղծագործական կյանքի «ձախ» որոնումների շրջանում (1921-1924թթ.) և մաս-մաս տպագրել է «Նորք» հանդեսում, մտահղացվել է 1920 թվականին՝ «Ամենապոեմը» գրելու ընթացքում:

Վեպի հղացումն ու տպագրումը համարելով սխրանք՝ Ս. Մուրադյանը գրում է. ««Երկիր Նաիրի» վեպում, չնայած Չարենցի՝ կոմունիստ լինելու հանգամանքով պայմանավորված կաշկանդումներին, երբեմն ինքնակերպավորված հեղինակը, երբեմն էլ նրա կերտած հերոսները, ովքե՞ր և ի՞նչ ուժեր են մասնատել Հայաստանը հարցադրմանը տվել են համակողմանի և խիզախ պատասխան, ու հենց դա է Լենինի և

---

[1] ***Եղիշե Չարենց,*** *Երկիր Նաիրի, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1977, էջ 4:*

[2] *Նույն տեղում:*

բոլշևիկների մասին բանաստեղծի իրական կարծիքը»[1]: Խոսքը «արյունարբու մի սկյութ, ռսացած մի մոնղոլ, մի գերմանական լրտես» որակումների մասին է:

Աշոտ Ալեքսանյանն իր՝ «Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրին» և եվրոպական վիպական ավանդույթը» հոդվածում վեպը վերլուծում է եվրոպական մոդեռնիստական վեպերի համատեքստում: Հոդվածագիրն ընդգծել է վեպի արտահայտչական և ճանաչողական նորանոր ձևերի առկայությունը:Շարունակության մեջ բավականին մանրամասնորեն նշվում են Չարենց- Ջոյս, Մյուզիլ, Պրուստ նմանության եզրերը:

Նշված հեղինակները, այդ թվում նաև Չարենցը, վեպը դարձրին քերթողական և բանախոհական սկզբունքների բարձրագույն համադրություն:

«Մոդեռնիստական վիպական կառույցը, արտաքուստ ավանդական լինելով, միաժամանակ ներքին գերլարված, անհաշտ բանավեճի մեջ է ավանդապաշտության սկզբունքների հետ և պայթեցնում է վերջինիս ձևաբովանդակային սահմանները, ասել է թե՝ կառուցվածքային հեղափոխությունն ակնբախ է: Այստեղ ամեն ինչ էական է, քանի որ ողջն այստեղ բանախոհությունն է: Չարենցի Կարսը, Մյուզիլի Վիեննան, Բրոխի «Լուսնոտների» գերմանական քաղաքները, Ջոյսի Դուբլինը և այլն՝ բնավ հետնաբեմ չեն, որոնց մասին պատմվում է (ինչպես օրինակ՝ Բալզակի Փարիզը կամ Դավոսը՝ Թ. Մանի ստեղծագործություններում, այլ մի երևակվող թեմա, որի վերաբերյալ խորհրդածություններ են արվում,- գրում է Ա. Ալեքսանյանը):[2]

Հոդվածագրի կարծիքով Չարենցը Մ. Պրուստի, Ռ. Մուզիլի, Ջ. Ջոյսի օրինակով իր առաջ խնդիր է դրել ազատվել իրականության մեստիֆիկացիայից և ռոմանտիզմից ու վերստեղծել իրականություն:

Տպավորիչ է Ա. Ալեքսանյանի՝ Մազութի Համո-Առնհայմ զուգահեռը (Մուզիլի «Մարդն առանց հատկությունների»), երկուսն էլ նույն դերակատարությունն ու ճակատագիրն ունեցան:

Արվեստի ճշմարիտ գործերը տարիներ, երբեմն նաև դարեր շարունակ բացում են իրենց ներքին հարստությունները, յուրաքանչյուր նոր ընթերցմամբ ենթատեքստի նոր շերտ ցուցադրում, հուշում չասվածը:

Չարենցի «Երկիր Նաիրին» այդպիսի գործ է: Բոլոր քննարկումների առանցքում Մազութի Համոյի կերպարն է՝ տարաբնույթ որակումներով՝ ազգային մակաբույծից մինչև հեղինակի խոհերի կրող ու արտահայտիչ և մարտիրոսված հերոս(Մազութի Համոյի նախատիպը Համազասպ Նորհատյանն է, ով, իրոք, կախաղան է հանվել Կարսի անկումից անմիջապես հետո): Մեր կարծիքով, եթե վեպի առաջին և երկրորդ գլուխներում նուրբ ծաղրով են ներկայացված Մազութի Համոն,

---

[1] *Պատմա-բանասիրական հանդես, 2017 թ., հ. 2, էջ 23:*

[2] https://granish.org/erkir-nairin-ev-evropakan-vipakan-avanduyty/

Վառոդյանը, բժիշկ Սերգեյ Գասպարիչը, ապա հեղինակը, չմոռանալով Մազութի Համոյի աչքերի հուսահատական պարտությունը, մարտիրոսացնում է նրան: Համոյի գլխավերևից կախված ցուցանակն ինչո՞ւ չկարդալ՝ ***միացյալ Հայաստան, անկախ Նաիրի,*** այսինքն՝ կախաղան է հանվում ազգային երազը և հատկապես՝ դաշնակցության ազգային երազը: Հենց այս երազի դագաղն է, որ վեպի երկրորդ մասում գավառացի վարժապետը (Չարենցը) տանում է թաղելու որպես նվիրական և սիրելի մեռել: Դ. Գասպարյանն այս պատկերն ասոցացնում է Քրիստոսի խաչելության հետ, հիշենք Քրիստոսի գլխավերևից կախված ցուցատախտակը: «Քրիստոսի խաչելության անդրադարձը պատահական չէ,- գրում է Դ. Գասպարյանը,- հավատի այդ նվիրյալին էլ տառապանք վիճակվեց՝ մատնություն յուրայինների կողմից, պարտություն և խաչելություն սրբազան գործի ճանապարհին»:[1]

Եղ. Չարենցի ողջ ստեղծագործության մեջ խիստ ընդգծված է պատմամշակութային դաշտի ձևավորումը, հետաքրքրությունն առավելապես ուղղված է լատինական մշակույթին: 20-30-ական թվականներին գրած ստեղծագործություններում դրանք առավել համակարգային բնույթ են կրում: Մեծ տեղ են գրավում Հին Հռոմի պատմությունը, լատինական ասույթներն ու թևավոր խոսքերը: Խոհոփիլիսոփայական այս հղումներն ավելի շատ տեղ գտան պոետական բնագրերում, անմասն չմնաց «Երկիր Նաիրին»: Հիշատակելով վերոհիշյալ ցուցատախտակը՝ Ս. Գրիգորյանը գրում է. «Հանրահայտ է, որ այս պատկերը Չարենցը ստեղծել է Հովհաննու գրքի համապատասխան հատվածի զուգորդությամբ, բայց այն անուղղակի կապվում է նաև լատինական ավանդույթի հետ»:[2]

Հավերժ շարժվող, հավերժական շարժիչ, հարասացությունները, *պերպետուում մոբիլե* փոխաբերությունը, *հասկացողը կհասկանա* թևավոր խոսքը գրականագետի կարծիքով այն ոճական թեթև ակնարկներն են, որոնք շարադրանքին տալիս են երգիծանքի նուրբ քողարկված երանգ: Չարենցը խոր ցավով է նկարագրել կորուսյալ հարենիքը խորհրդանշող Կարսի անկումը՝ շատ լավ հասկանալով դրա ռազմաքաղաքական, բարոյահոգեբանական ու գաղափարական պատճառները: Այդ «վիթխարի ցավի» մասին ուղղակի կամ անուղղակի խոսել է ինչպես արձակում, այնպես էլ չափածո ստեղծագործություններում:

Գեղարվեստական առումով «Երկիր Նաիրին» միանգամայն նոր խոսք է հայ պատմավիպասանության մեջ: Նոր է պատումի և՛ ոճը, և՛ լեզուն, և՛ կառուցվածքը, և՛ հերոսների կերպավորման արվեստը: Իր էությամբ և գեղարվեստական սկզբունքներով նա ավելի հարազատ է 20-րդ դարասկզբի եվրոպական մշակույթի չափանիշներին:

---

[1] ***Գասպարյան Դ.,*** *Փակ դռների գաղտնիքը, «Ապոլոն» հրատ., Երևան, 1994, էջ 349:*

[2] ***Գրիգորյան Ս.,*** *Չարենցի բնագիրը, «ՎՄՎ-Պրինտ» հրատ., Երևան, 2013 թ., էջ 15:*

Հեղինակն անկողմնակալ է իր կերտած հերոսների և նկարագրած դեպքերի նկատմամբ: ***Դրական և բացասական*** հերոսներ չի ստեղծել: Նկարագրել է մարդուն, իրականությունը, պատմական իրադարձությունները: Եվ պատահական չէ, որ այն, ահռելի տարբերություններով հանդերձ, համեմատվում է այնպիսի գլուխգործոցների հետ, ինչպիսիք են Մյուզիլի «Մարդն առանց հատկությունների», Կաֆկայի `«Դղյակը», Հաշեկի «Շվեյկը», Մարկեսի «Հարյուր տարվա մենությունը»: Գրականագիտության մեջ նշվել է, որ Գոգոլի «Մեռած հոգիները» և Անդրեյ Բելու «Պետերբուրգ» գործերը որոշակիորեն ներշնչել են Չարենցին: Երկում առկա խոհափիլիսոփայական ենթատեքստը, ասելիքի խտությունն ու հայրենակորստյան կսկիծը առիթ են տվել այն համեմատելու Խորենացու «Հայոց պատմություն» և Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպերի հետ:

«Երկիր Նաիրի» վեպը մեծ ազդեցություն է թողել հետագա գրողների վրա (Բակունց, Մահարի, Թոթովենց, Մնձուրի, Շահնուր): Գրիգոր Արծրունին աղերսներ է տեսնում Շահնուրի «Նահանջը առանց երգի» և Չարենցի «Երկիր Նաիրի» երկերի միջև: «Շահնուրի գրականությունը,- գրում է Ա. Ավագյանը,- հարազատության շատ եզրեր է դրսևորում չարենցյան մտահոգությունների հետ»:[1]

Ինչպես նշեցինք, «Երկիր Նաիրին» իր բազմաշերտ քաղաքական ենթատեքստով դուրս է դասական վեպի չափանիշներից և այսօր էլ արդիական է, ու գրականագետների և ուսումնասիրողների քննության առարկա, որոնք միանգամայն նոր տեսանկյունից են վերլուծում այն: Ազատ Մաթյանը «Երկիր Նաիրին» բնորոշում է որպես սեփական պարտության ցավից ու ամոթից ազատվելու դեղատոմս, որ բանաստեղծը գրել է ինքն իրեն: Վեպի ողբերգական, հերոսական տարբերակը նա համարում է «Մահվան տեսիլը»: Աշոտ Ոսկանյանը վեպը համարում է հաստնության հասած զավակի վերջնական հրաժեշտ, որով ավարտվում է «Տաղ անձնականի» մնաս բարովը:

Ավելի յուրահատուկ ընդհանրացման գալով՝ Վահրամ Դանիելյանն իր «Ինչպե՞ս ընթերցել Կարսը, որպես վեպի տարածություն» հոդվածում աղերսներ է գտնում Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի և ազգությամբ թուրք Օրհան Փամուքի «Զյունը» վեպի միջև:[2] Երկուսն էլ պատմական Կարս քաղաքի մասին են: Ե՛վ Փամուքը, և՛ Չարենցը նկարագրել են հին և նոր քաղաքը, փողոցները, հիշարժան վայրերը, երկուսն էլ ընդգծել են Կարսի փոքրությունը, քաղաքի կարևոր շինությունները, փողոցի անունները՝ Լորիս Մելիքով, Աթաթուրք: Երկու վեպերում էլ կան «Դրոշ» անունով թերթեր:

---

[1] ***Ավագյան Ա.,*** *Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2004, էջ 107:*

[2] https://www.youtube.com/watch?v=oXgbAVysbeY

Եղիշե Չարենցին անվիճելիորեն կարելի է դասել այն գրողների դասին, ովքեր առավելագույն թվով գաղտնագրել և ծածկագրել են կցել իրենց ստեղծագործություններին: Դրանք մեծամասամբ գաղտնազերծվել են: (Հիշենք «Պատգամը», որը և Չարենցի մոտալուտ մահվան պատճառ դարձավ): Ըստ Արքմենիկ Նիկողոսյանի՝ գաղտնագրեր կան նաև «Երկիր Նաիրի» վեպում[1]: Դրանք շեղ գրված բառեր, արտահայտություններ ու նախադասություններ են, որոնք իմի բերելով՝ գրականագետը ստացել է ֆուտուրիստական տրամադրություններով գրված պոեմ («Ռոմանս անսեր»): Տարբեր պարբերություններում այդ արտահայտություններն ամբողջանում են՝ դառնալով իմաստաբանական խմբեր: Գո՞ւցե դրանք Չարենցի վեպն ընթերցելու նոր բանալիներ են առաջարկում:

Անընդհատ կրկնվում են Առաքել, Առաքելոց, Առաքյալ, 12 առաքյալ, 11 առաքյալ արտահայտությունները: Պատմությունից հայտնի է, որ Մազութի Համոյի հոր անունը Առաքել էր: Սա իհարկե ավարտուն դիտարկում չէ, բայց հետաքրքիր է ու հիշարժան, մանավանդ, որ Չարենցը սիրում էր «տեքստի հետ խաղալ»: Բերենք մի հատված.

Առաքելոց,
12 առաքյալ,
Հուդայի 11 առաքելոց,
Մշեցի Թաթոն,
Կոտորած, կոտորած, կոտորած,
Բերդը, Վարդանի կամուրջը, Առաքելոց եկեղեցին,
Օրը կգա և նորից կելնե, կհառնե
Մշուշից Նաիրյան ոգին,
Առաքելոց եկեղեցում:

Այսօր էլ հնչում են այն կարծիքները, թե ինչպիսին կլիներ վեպը, եթե այն գրվեր ավելի ուշ կամ ժանրային այլ տեսակի մեջ: Ընդհանրապես, գրականագիտության մեջ կարևորվում են ***կենսագրություն*** և ***ստեղծագործություն***, ***աշխարհայացք*** և ***ստեղծագործություն*** հարաբերությունները: Չարենցն այն անհատականությունն է, որ անընդհատ ձգտում էր նորին: Դրա վկան ստեղծագործական գործնեության անպարագիծ ուղին է, որը չի տեղավորվում որևէ ***իզմի*** ժանրային սահմանափակման մեջ: Նա ինքն է ստեղծում ուղղություն՝ գրելով 16 տողից բաղկացած պոեմ, «Տաղարան», պոեմանման վեպ:

Նորից անդրադառնանք արդի գրականագիտության մեջ շրջանառվող մի կարևոր խնդրի՝ տեքստի վերլուծությանը. չկա ավարտուն տեքստ, եթե անգամ այն գրվել է հարյուր կամ հազար տարի առաջ: Յուրաքանչյուր ընթերցող մասնակից է տեքստի գրմանը: Եթե ես երեկ ընթերցել եմ «Երկիր Նաիրի» վեպը, այն նորից է գրվել և վաղը նորից կգրվի: Հենց սրանում է արվեստի անմահ գործերի գաղտնիքը:

[1] http://boon.am/yeghishe-charents/

«Երկիր Նաիրի» վեպը պատմաքաղաքական բազմաշերտ վեպ է, հեղինակի ոգու քարտեզագրում նաև՝ սթափության ճիչ:

Գրականություն

1. Աղաբաբյան Ս., Հայ սով. գրակ. պատմ., հ. 1-ին, Երևան, 1986:
2. Ավագյան Ա., Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, Երևան, 2004:
3. Գասպարյան Դ., Փակ դռների գաղտնիքը, Երևան, 1994:
4. Գրիգորյան Ս., Չարենցի բնագիրը, Երևան, 2013:
5. Եղիազարյան Ա., Չարենցը և պատմությունը, Երևան, 1997:
6. Եղիշե Չարենց, Երկիր Նաիրի, Երևան, 1977:
7. Թամրազյան Հր., Եղիշե Չարենց, Երևան, 1981:
8. Պատմա-բանասիրական հանդես, 2017 թ., հ. 2:

Էլ. ռեսուրսներ

- https://granish.org
- https://youtube.com
- http://boon.am

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Ա. Խանյանը:

ՀՏԴ 82
Գրականագիտություն

Զարինե ՍԱՌԱՋՅԱՆ
բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԳՐՈՂԻ ՏԵՍԱԴԱՇՏՈՒՄ. ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ՝ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՅԱՑՔ

Սույն հոդվածում քննության ենք առել ադրբեջանցի գրող Աքրամ Այլիսլիի «Քարակերտ երազներ» վեպ-ռեքվիեմը, որը դարձավ յուրահատուկ ապաշխարություն-կոթող իր ազգի կողմից հայության հանդեպ իրագործած ոճիրների համար: Վեպը, որը կարելի է անվանել փաստագեղարվեստական ստեղծագործություն, ոչ միայն գեղարվեստական, այլ նաև հասարակական-քաղաքական մեծ նշանակություն ունի: Հեղինակի խոսքով՝ հարևան երկրների ու ժողովուրդների միջև պետք է լինեն նորմալ հարաբերություններ, և այդ գիրքը նա գրել է ոչ թե հայերի, այլ ադրբեջանցիների համար: Ազգայնամոլական հիստերիան Այլիսլին լավագույնս է պատկերել իր վեպում՝ նկարագրելով Բաքվի փողոցները 1980-ականների վերջերին: Մեր կարծիքով Այլիսլին այսկերպ փորձում է նաև Ադրբեջանում ազգայնամոլության, շովինիզմի խավարում խարխափող, պատմական ճշմարտությանը անտեղյակ հայրենակիցների աչքերը բացել՝ իրականությունը տեսնելու: Ադրբեջանցի գրող Աքրամ Այլիսլիի «Քարակերտ երազներ» գիրքը արժեքավոր աշխատություն է, որը ոչ է ասում ադրբեջանական ագրեսիային ու մարդատյացությանը:

Բանալի բառեր: *կեղծարարություն, ցեղասպանություն, բռնաճնշում, վեպ, փաստավավերագրություն, Այլիս, գրող, հումանիզմ, ճշմարտություն, կերպար, ագրեսիա, մարդատյացություն:*

З.Саряджян

АРМЯНИН И АРМЯНСТВО В ПОЛЕ ЗРЕНИЯ АЗЕРБАЙДЖАНСКОГО ПИСАТЕЛЯ: ПРАВИЛЬНЫЙ ВЗГЛЯД НА РЕАЛЬНОСТЬ

В данной статье рассматривается роман азербайджанского писателя Акрама Айлисли «Каменные сны», который стал уникальным памятником раскаяния за преступления, совершенные его народом против армян. Роман, который можно назвать документально-художественным произведением, имеет не только художественное, но и огромное общественно-политическое значение. По словам автора между соседними странами и народами должны быть хорошие отношения, а эту книгу он написал не для армян, а для азербайджанцев. Шовинистическую историю Айлисли наилучшим образом представил, описывая улицы Баку в конце 1980-х годов. По нашему мнению Айлисли таким образом пытается открыть глаза своим соотечественникам, находившимся в темноте шовинизма и не осведомленным об исторической правде. Книга «Каменные сны» азербайджанского писателя Акрама Айлисли — ценное произведение, которое говорит «нет» азербайджанской агрессии и мизантропии.

Ключевые слова: *фальсификация, геноцид, репрессия, роман, документально-художественный, Айлисли, писатель, гуманизм, истина, образ, агрессия, мизантропия.*

Z.Sarajyan

THE ARMENIAN AND ARMENIANITY IN THE FIELD OF VIEW OF AZERBAIJANI WRITER: A TRUE LOOK AT THE REALITY

The article analyses the novel of Azerbaijani writer Akram Aylisli "Stone Dreams", which has become a unique monument confessing to the crimes committed by his people against the Armenians. The novel, which can be called a documentary fiction, is of both narrative and social-political significance. According to the author there should be good relations between neighboring countries and people, and he wrote the book not for Armenians, but for Azerbaijanis. Aylisli best presented chauvinistic hysteria, describing the streets of Baku in the late 1980s. In our opinion, Aylisli thus tries to open the eyes of his compatriots who live in the darkness of chauvinism and are unaware of the historical truth. The book "Stone Dreams" by Azerbaijani writer Akram Aylisli is a valuable work which says "no" to Azerbaijani aggression and misanthropy.

Keywords: *falsification, genocide, repression, novel, documentary fiction, Aylis, writer, humanism, truth, image, aggression, misanthropy.*

Հայոց պատմության կեղծարարությունն Ադրբեջանի կողմից ու վերախմբագրված տարբերակով հանրությանը մոլորության մեջ գցելը փաստ է, որը խրախուսվում և հովանավորվում է Ադրբեջանում ամենաբարձր մակարդակով: Ասվածի վկայությանը բազմիցս ենք հանդիպել և շարունակում ենք հանդիպել: Այն, որ ազատ խոսքն ու մտածողությունը ադրբեջանական բռնատիրական հասարակարգում կաղապարված ու բանտված են հազար շղթաներով, ակնհայտ է: Անհերքելի փաստ է նաև այն, որ ասվածը չի շրջանցում նաև գեղարվեստական գրականությունը: Պատվերով գրքեր գրելն ու խեղաթյուրված պատմությամբ դասագրքեր հրատարակելը վաղուց Ադրբեջանի իշխանության ու հանրույթի ամենահարազատ գործելաոճն են: Մեծ խիզախություն է նման բռնատիրական երկրում ճշմարտություն ասել, առավել ևս՝ գրել, որը ծանր հետևանքներ է ունենում հեղինակի համար: Այս երևույթը բնորոշ է նաև Ադրբեջանի մեծ եղբորը՝ Թուրքիային, երբ ճշմարիտ խոսքի համար անգամ պետական ամենաբարձր պարգևի արժանացած մտավորականին զրկում են բոլոր պարգևներից և ենթարկում ամենածանր հալածանքների: Սակայն ճշմարիտ մտավորականը անզոր է իրականության առջև աչքերը փակելու և ճշմարտության ձայն է բարձրացնում ի լուր աշխարհի, որքան էլ որ այն հղի լինի վտանգներով: Այդպիսի մտավորականներից հարկ է նշել Օրհան Փամուքի, Սերքան Էնգինի, Ֆեթիե Չեթինի անունները: Իրականությունը ճշմարիտ հայացքով տեսնող այս խիզախների շարքը կարելի է դասել ազգությամբ ադրբեջանցի գրող Աքրամ Այլիսլիին, ով խիզախեց գրել իր «Քարակերտ երազներ» վեպ-ռեքվիեմը, որն էլ դարձավ յուրահատուկ ապաշխարություն-կոթող՝ իր ազգի կողմից հայության հանդեպ իրագործած ոճիրների համար:

Աքրամ Այլիսլին (Աքրամ Նաջաֆ օղլի Նաիբով) ծնունդով Ագուլիսից է, որը ադրբեջանցիներն աղավաղել են՝ վերանվանելով Այլիս, այստեղից էլ գրողի ազգանունը՝ Այլիսլի, այսինքն՝ Ագուլիսցի: Այլիսլին Ադրբեջանի ժողովրդական գրող էր, ճանաչված մտավորական,արվեստի վաստակավոր գործիչ, բարձրագույն՝ «Իստիգլալ» և «Շոհրաթ» շքանշանների ասպետ: Նրա գործերը ժամանակին թարգմանվել են ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներով, նաև անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն: Ինքն իր հերթին ադրբեջաներեն է թարգմանել Տուրգենևի, Կորոլենկոյի, Չեխովի, Պաուստովսկու, Շուկշինի, Այթմատովի, Բյոլի, Մարկեսի, Ռուշդիի ստեղծագործությունները: Հեղինակ է պիեսների և կինոսցենարների: «Քարակերտ երազներ» վեպ-ռեքվիեմը հեղինակային թարգմանությամբ առաջին անգամ հրապարակվել է ռուսական «Դրուժբա նարոդով» ամսագրում/Акрам Айлисли, <<Каменные сны>>, <<Дружба народов>>, 12, 2012/, որտեղ հեղինակը դրական է խոսում հայ ժողովրդի և հայոց մշակույթի վերաբերյալ՝ միաժամանակ նկարագրելով նաև Ադրբեջանի կողմից հայ ժողովրդի հանդեպ իրականացված ջարդերը՝

1919 թ. Նախիջևանում, 1980-ական թթ. վերջերին և 1990 թ. Բաքվում, Սումգայիթում: «Քարակերտ երազներ» վեպ-ռեքվիեմի լույսընծայումից հետո Աքրամ Այլիսլիին սեփական երկրում սկսեցին լուրջ բռնաճնշումների ենթարկել, գործող նախագահի կողմից զրկվեց բոլոր պետական պարգևներից, պառլամենտում քննարկեցին նրա հարցը, իսկ ազգայնամոլական հիստերիայի մեջ «Ենի մուսավաթ» կուսակցության առաջնորդ Հաֆիս Հաջիևը հայտարարեց, որ 10 հազար եվրո կպարգևի նրան, ով կկտրի գրողի ականջը[1]:

Վեպը, որը կարելի է անվանել փաստագեղարվեստական ստեղծագործություն, ոչ միայն գեղարվեստական, այլ նաև հասարակական-քաղաքական մեծ նշանակություն ունի: Հեղինակի խոսքով՝ հարևան երկրների ու ժողովուրդների միջև պետք է լինեն նորմալ հարաբերություններ, և այդ գիրքը նա գրել է ոչ թե հայերի, այլ ադրբեջանցիների համար:«Եթե ներկայումս Ադրբեջանում ռեֆերենդում անցկացնեն, ապա մեծամասնությունը կողմ կլինի հայության հետ հարաբերությունները կարգավորելուն: Նրանք, ովքեր երբեք հայ չեն տեսել և չեն շփվել հայերի հետ, նրանք ավելի ազգայնամոլ են», -ասել է Ա. Այլիսլին՝ նշելով, որ ինքը մանկուց շփվել է հայերի հետ և միայն լավն է տեսել նրանցից[2]: Իսկ պետական մակարդակով տարվող հակահայ գաղափարախոսությունը ծնունդ է տալիս իշխող հայատյաց տրամադրությունների և գործողությունների, ինչը անթաքույց ճշմարտություն է, որը հաստատում է նաև վեպի գլխավոր հերոսի կինը՝ Ազադա խանումը.«-Ուշքի եկ: Վաղուց արդեն ոչ մի իշխանություն չկա: Իսկ եթե կա, հենց ինքն է ամենուր թշնամանք սերմանում: Կարծում ես՝ ժողովո՞ւրդն է Սումգայիթի դժոխային մղձավանջը կազմակերպել: Ո՛չ, թանկագի՛նս, ո՛չ: Դա ՊԱԿ-ի կամ, հավանաբար, այլևայլ մաֆիոզ խմբավորումների վերածված իշխանության մնացորդների կազմակերպածն էր: Երբեք չեմ հավատա, Սադայ, որ ադրբեջանցիները առանց իրական կազմակերպչի կարող էին դիմել այդպիսի խելագար գազանության»[3]:

Ազգայնամոլական հիստերիան Այլիսլին լավագույնս է պատկերել իր վեպում՝ նկարագրելով Բաքվի փողոցները 1980-ականների վերջերին.«Տարօրինակ էր, որ արդեն մի քանի ամիս Բաքվի փողոցներում ոչ միայն երեկոները, այլև նույնիսկ ցերեկները դժվար էր միայնակ կամ զույգերով անցնող մարդ տեսնել: Հիմա մարդիկ շրջում են ամբոխով, հոտերով: Եվ խոսելու, բղավելու ու բարբառելու լիիշխան իրավունքը

---

[1] *https://azerbaijan-az.livejournal.com/80612.html*

[2] *http://www.yerkramas.org/article/107390/akram-ajlisli-%C2%ABmy-voyuem-s-armyanami-za-zemlyu--a-sama-zemlya-nikomu-ne-nuzhna%C2%BB*

[3] *Տե՛ս **Այլիսլի Աքրամ,** Քարակերտ երազներ, Էդիտ Պրինտ հրատ., Երևան, 2013, էջ 95:*

տրված էր միայն այդ ամբոխին: Եվ առավել տարօրինակ էր այն, որ բառերի քանակությունը, որ բղավում էին այդ արարածները, հավասար էր բառերի քանակին, որը, հավանաբար, օգտագործել են նախնադարյան մարդիկ որսի ժամանակ.

Ա-զա-տու-թյուն:

Հե-ռա-ցիր:

Ղա-բա-բաղ

Վերջին օրերին այդ մարդիկ իրենց բառապաշարը հարստացրել էին ևս երեք արտահայտությամբ.

Հայ ես՝ մահ քեզ՝

Սա է վերջը»[1]:

Ադրբեջանում բնակվող հայերի հանդեպ անհանդուրժողականության և մարդատյացության պատկերը իրական լույսի ներքո բացում է գրողը հենց վեպի առաջին գլխում՝ նկարագրելով ծեր հանդերձապահ հայուհու առեղծվածային մահը, որը հանրությունը ներկայացնում է իբրև ինքնասպանություն, բայց իրականում ադրբեջանցիների զոհն է դառնում, որին ցած են նետում պատշգամբից՝ տիրանալով նրա ինչքին: Ադրբեջանցի գրողը անվարան շարադրում է վեպի հետևյալ տողերը. «Միանգամայն հնարավոր է, որ հենց ինքը՝ Շահոաջար Արմաղանովն է անձամբ ցած նետել Գրետա Սարկիսովնային: Այդպիսի ժամանակներ են հիմա: Ամեն օր վերցրու և պատշգամբից ցած նետիր թեկուզ հարյուր հայի…»[2]: Եվ սա 1980-ականների վերջերն են Բաքվում: Հայատյացությունը տարածված և խրախուսվող երևույթ է Ադրբեջանում, միշտ նորաձև. այս մասին բարձրաձայնում են նաև Այլսիսլիի հերոսները.

«-Ի՞նչ է, հայերին զազրախոսելու մոդան հիմա Այլի՞ս էլ է հասել,-հազիվ լսելի և ընկճված հարցրեց Սադայը և փորձեց պատկերացնել Այլիսի վերջին հայուհի Անիկոյին մահվան մահճում՝ վերջին շնչում՝ շրջապատված այլիսցի մահմեդական կանանցով»[3]:

Վեպի գլխավոր հերոսը Սադայ Սաղըղլին է, մի ճշմարիտ մտավորական-դերասան, որն ունի փխրուն հոգի և խղճմտանք, հավանաբար հեղինակի նախատիպն է: Նա ականատեսն է լինում հայերի հանդեպ կատարվող անմարդկային գազանությունների, և այդ ամենը նրա փխրուն ներաշխարհը փոթորկում է՝ հասցնելով նրան հոգեկան ծանր վիճակի:

Սադայ Սաղըղլին մահացու ծեծի է ենթարկվում իր հայրենակիցների կողմից և անգիտակից վիճակում ընկնում հիվանդանոց լոկ այն պատճառով, որ փորձել էր պաշտպանել մի անպաշտպան հայի: Սադայը հիվանդանոցում, անգիտակից վիճակում պառկած, երազատեսիլով

---

[1] ***Այլիսլի Աքրամ****, Քարակերտ երազներ, Էդիտ Պրինտ հրատ., Երևան, 2013, էջ 47:*

[2] *Նոյն տեղում, էջ 20:*

[3] *Նույն տեղում, էջ103:*

վերապրում է այլիսյան իրականությունը, որը նրա մանկությունն է՝ լի ագուլիսյան հայերով ու հայկականությամբ: Գլխավոր հերոսը գիտակցում է իր ժողովրդի գործած մեղքի ծանրության չափը և իր կյանքի նպատակն է դարձնում ապաշխարությունը: Մեղքի ծանրությունը նրան գրեթե խելագարության շեմին է հասցրել և ամբողջ օրերով դեգերում է կայարանում, որպեսզի դիմավորի և ճանապարհի մանկուց իրեն ծանոթ «Բաքու-Երևան» գնացքը, որով նա ամեն օր մտովի ճամփորդում էր, «փայփայում նոր զառանցագին երազանք Էջմիածնի մասին, ուր պատրաստվում էր քրիստոնեություն ընդունել»[1]: Եվ այդ ապաշխարանքը առաջին հերթին պետք է ադրբեջանցուն, իր խղճի հանգստությանը: Այլիսլիի հերոսի նման հոգեկերտվածքը մեզ հիշեցնում է ապաշխարած թուրք գրող, իրավաբան Սերքան Էնգինին, որ մի առիթով ասել է. «Ես խոսում եմ հայերի, ասորիների ու հույների ցեղասպանությունների մասին, քանի որ դա պարտավորություն եմ համարում իմ խղճի առաջ: Որպես ազնիվ և պատվավոր մտավորական՝ սա էթիկական պարտավորություն է ինձ համար: Սա իմ պարտքն ու պարտավորությունն է նաև մարդկության առաջ: Ես ցանկանում եմ խոսել այս ցեղասպանությունների մասին, որոնք նախապատրաստվել են իմ թուրք նախնիների կողմից, քանի որ Թուրքիայում պետք է խոսել ճշմարտության մասին բարձրաձայն՝ ընդդեմ այսպես կոչված պաշտոնական պատմության»[2]: Այս մտածողությունը բնորոշ է նաև Աքրամ Այլիսլիին: Եվ պատահական չէ, որ Էջմիածին մեկնելու, անձամբ կաթողիկոսի օրհնությամբ քրիստոնեություն ընդունելու, այնտեղ ընդմիշտ վանական լինելու և հայերի հանդեպ մահմեդականների գործած աղոթքով Աստծուց ներում խնդրելու ցանկությունը Աքրամ Այլիսլիի հերոսի՝ Սադայ Սաղրղլի հոգում արթնացել է Սումգայիթյան ոճրագործություններին հաջորդած մի գիշեր:

Այլիսլին համարձակորեն իր վեպում ցույց է տալիս թե՛ ադրբեջանցիների բռնարարքները ժամանակային տարբեր շրջաններում, թե՛ հայի հումանիզմը և թե՛ հայկականությունը ներկայումս Ադրբեջանի կազմում գտնվող տարածքների, մասնավորապես՝ Ագուլիսի, որը մի առանձնակի հմայքով ու լույսով է նկարագրում՝ համարելով այն աստվածային.«Ո՛վ Աստվա՛ծ ամենակարող, բարի եղի'ր, ասա' ինձ, Դու՞ ես երկնել Այլիսն իմ, թե՞ իմ Այլիսն է երկնել Քեզ»[3]:

Գեղանկարչի վարպետությամբ և հոգեբանի խորաթափանցությամբ է Աքրամ Այլիսլին իր վեպում կերտել ագուլիսյան հայուհիների կերպարները՝ լի հումանիզմով ու քրիստոնյայի գթառատությամբ անգամ մահմեդադավանի հանդեպ: Այս կերպարները, ինչպես նշել է վեպի հերոսներից մեկի՝ Լյուսիկի նախատիպը՝ հայտնի ազգագրագետ Լուսիկ

---

[1] *Նույն տեղում, էջ96:*
[2] *http://hayernaysor.am/archives/95687*
[3] *Նույն տեղում, էջ 48:*

Ագուլեցին, իրական են, որոշ դեպքերում՝ անունները փոխված: Այլիսլին իր ծննդավայր Ագուլիսի մասին պատմում է նույնքան հիացմունքով, որքան հայուհիների մասին: Հիշում է, որ ամեն ամառ Լյուսիկ անունով մի աղջիկ էր գալիս Ագուլիս, նրան հաճախ կարելի էր տեսնել եկեղեցու բակում եկեղեցիներ նկարելիս: Այդ փոքրիկ աղջիկը հենց Լուսիկ Ագուլեցին է, որ իր տատի՝ Հայկանուշի մոտ էր գնում ամառները:

Յուրաքանչյուր մեծ գրող իր ծննդավայրը, աշխարհագրական ամենահարազատ տարածքը՝ մարդկանցով ու բնավորություններով, ավելի ճանաչելի է դարձրել իր ստեղծագործություններով. Թումանյանը՝ Լոռին, Բակունցը՝ Կյորեսը, Չարենցը՝ Կարսը, Մաթևոսյանը՝ Ծմակուտը, Տոլստոյը՝ Յասնայա Պոլյանան, Մարկեսը՝ Կոլումբիայի Արակատական, շարքը կարելի է երկար շարունակել: Սակայն Ագուլիսը ճշմարիտ գրողի գրչի պրիզմայով, որպես ադրբեջանցի գրողի ծննդավայր, մնաց նույնքան հայեցի, որքան պատմական ճշմարտությունն է փաստում: Ճշմարիտ գրողի դավանանքին հավատարիմ՝ Այլիսլին, պատկերելով իր դրախտավայր ծննդավայր Այլիսը, ինչպես ինքն է անվանում, պատկերում է իրական, հայկական Ագուլիսը՝ բերելով նաև պատմական փաստարկներ, որոնք տարբեր ժամանակաշրջանների ադրբեջանական վայ-պատմաբաններ խեղաթյուրել են: Հայկականության դարավոր պատմությունն են փաստարկում Ագուլիսի հայ ճարտարապետական կոթողները՝ քարակերտ եկեղեցիները: Վեպում հետաքրքիր կերպար է նաև Ագուլիս-Այլիսլիի մեկ այլ երկրպագու՝ Սադայի աները՝ բժիշկ Աբասալիևը, որի շուրթերով հեղինակը խոստովանում է.«Եթե յուրաքանչյուր սպանված հայի համար գեթ մեկ մոմ վառվի՝ այդ մոմերի ցոլքը լուսնի լույսից վառ կլինի»[1]:

Հոգեբույժ Աբասալիևը համոզված է, որ ոճրագործ անցյալը երբեք չի թույլատրում խաղաղ ներկա: Նրա համոզմամբ՝ Այլիսում հայերին կոտորելով և հափշտակելով նրանց գույքն ու տները, ադրբեջանցիները չեն վայելելու: Չարագործությամբ հայերի տներին տիրացած ընտանիքներում անհնար է խաղաղ կենսագործունեությունը.«-Այլիսի յուրաքանչյուր ընտանիքում,-սկսեց նա գրգռված, մի տեսակ տարօրինակ ձայնվ,-որը հայի տուն է հափշտակել, հոգեկան հիվանդներ կան. ես սա իբրև բժիշկ եմ ասում քեզ: Այդ ընտանիքներից գեթ մեկում դու երբևէ խաղաղություն տեսե՞լ ես»[2],-մտահանգում է ադրբեջանցի բժիշկը:

Ճշմարիտի հանդեպ մարդու յուրատիպ հավատարմությունն է ընկած բժիշկ Աբասալիևի սկզբունքների հիմքում և հենց դրանով է պայմանավորվում նրա սերը Այլիսի հանդեպ, ում համոզմաբ՝ «Աստծո 1001 անուններից մեկը հենց Այլիս է»: Վեպում հեղինակը ծեր հոգեբույժ Աբասալիևի միջոցով ստվարածավալ մեջբերումներ է անում «Զաքարիա

---

[1] *Նույն տեղում, էջ130:*

[2] *Նույն տեղում, էջ 64:*

Ագուլեցու օրագրից», որը ևս մեկ ծանրակշիռ պատմական փաստարկ է Ագուլիսի հայկականության: 340 տարի առաջ Ագուլիսում ծնված և աշխարհով մեկ շրջած հայ վաճառականի օրագիրն առանձնակի ոգևորությամբ է ընթերցում Աբասալիևը և պատմական փաստարկներով ցույց տալիս, որ Ագուլիսը հայկական է, և հայերն են այնտեղ ապրել անհիշելի ժամանակներից՝ ստեղծելով հայկական մշակութային կոթողներ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ վեպում հեղինակը անթաքույց հիացմունքով է խոսում աշխատավոր ու արարող հայի հանդեպ. ահա պրոֆեսոր Աբասալիևի կարծիքը.«Այլիսում այն ժամանակներում ապրել են աստվածներին հավասարազոր մարդիկ: Նրանք ջրմուղ են սարքել, այգի տնկել, քար տաշել: Այդ հայերը՝ թե' արհեստավորները և թե' վաճառականները, շրջել են հարյուրավոր գյուղեր ու քաղաքներ, գրոշ առ գրոշ վաստակել սոսկ նրա համար, որ իրենց փոքրիկ Ագուլիսի ամեն թիզ վերածեն հիրավի դրախտային անկյունի: Այն բանից հետո, երբ թուրքերը տասնինը թվականի վերջին Ագուլիսը ավերակ թողնելով հեռացան, Այլիսի մահմեդական բնակչությունը հայերի տների ավերակներում մինչև հիմա ոսկի է փնտրում: Նույնիսկ երբ ցանքսի համար հող են փորում, ակնկալում են, որ հրես, հրես՝ ոտքերի տակից չերվոն ոսկի կհայտնվի»[1] :

Վեպում առանձնահատուկ բարությամբ ու լուսապսակով են կերտված ագուլիսցի հայուհիների կերպարները՝ Հայկանուշը, Անիկոն, Լյուսիկը, որոնք առանձնանում են իրենց գթասրտությամբ, աշխատասիրությամբ, մաքրակեցությամբ, աստվածապաշտությամբ: Սեղմ տողերում հեղինակը կարողանում է լայնակտավ բովանդակություն տեղավորել՝ արտահայտելով իր սերն ու համակրանքը հայերի և առհասարակ Ագուլիսի հանդեպ: Վեպի հեղինակը իր սերն ու համակրանքը հայերի և Ագուլիսի հանդեպ արտահայտելու տարբեր մեթոդներ է կիրառել. ուշագրավ է գլխավոր հերոսի՝ դերասան Սադայ Սադըոլլիի լռելյայն խորհրդածությունները.«Դերասանն ընդհանրապես այլիսցի հայերին վեհացնող, նրանց հրաշակերտ-արարչագործ աշխատասիրության և Աստծո հանդեպ անսահման հավատի մասին թատրոնի տնօրենին ինչ-որ խոսքեր ասելու բուռն ցանկություն զգաց: Սակայն չարեց: Հասկացավ, որ իմաստ չունի այլիսցի որևէ հայի մասին ասել մի մարդու, որը չի ծնվել Այլիսում, պատկերացում չունի զանգերի փոխղողանջների մասին, երբ դրանք միասին հնչում են Այլիսի բոլոր տասներկու եկեղեցիներից, ոչինչ չի լսել Ադիֆ բեյի սև նժույգի ու մսագործ Մահմեդաղայի սուրսայր դաշույնի մասին, երբևէ չի տեսել այն դեղնավարդագույն լույսը, որը, գաղտնախորհուրդ ցոլալով եկեղեցու բարձրադիր գմբեթին, գուցե մինչ օրս դյութում-կախարդում է այլիսցի ինչ-որ մանչուկի հոգին»[2]:

---

[1] *Նույն տեղում, էջ146:*

[2] *Նույն տեղում, էջ111:*

Աքրամ Այլիսլիի «Քարակերտ երազները» վեպը աղերսներ ունի թուրք գրող Օրհան Փամուքի «Ձյունը» վեպի հետ այն առումով, որ երկու գործերում էլ հեղինակները վեր են հանում պատմական ճշմարտությունը. Փամուքը պատկերում է հայկական Կարսը՝ ցույց տալով հայկական հետքերը պատմական փաստերով, ապացուցելով, որ ներկայումս Թուրքիայի կազմում գտնվող Կարսը թուրքաբնակ ներկայով իրականում հայկական է և հայեցի՝ ամեն մի հիշողությամբ, մշակութային բջիջով, խոսուն հայկական պատմական փաստարկներով, ճարտարապետական շինություններով, քրիստոնեական աշխարհից մնացած մշակութային շերտերով, որոնք մահմեդականները ջանք չեն խնայում և փորձում են ջնջել ամեն կերպ: Փամուքի «Ձյունը» վեպում հաճախ կարելի է հանդիպել այդպիսի տողերի. օրինակ՝ «Կան (գլխավոր հերոսը) շատ էր հիշատակում Ստամբուլի հին փողոցները, Անի ուրվական քաղաքը, որն այդպիսին էր դարձել հայկական թագավորության անկումից հետո…»[1] ,կամ «Կան հայտնաբերեց, որ կանգնած է բարձրադիր առաստաղով հին հայկական տան պատուհանների առջև, որոնք բացվում էին դեպի Աթաթուրքի պողոտա»[2], կամ «Նախկին հանրակացարանը, որը մի ժամանակ հայկական առանձնատուն էր եղել, իսկ հետո հյուպատոսարան… »[3] և այլն:

Իրականությանն ուղղված սթափ և ճշմարիտ հայացքով է ստեղծել Ագուլիս-Այլիսի հայեցի և հայկական ներկայությունը նաև Աքրամ Այլիսլին իր վեպում: Փամուքյան այս խիզախումը, որը կրկնեց նաև Այլիսլին, յուրատիպ ապաշխարանք-կոթող է, գործ, որը մնայուն արժեք է և դրվատանքի է արժանի: Մանավանդ մեր օրերում, երբ ռազմատենչ հռետորաբանությունն ու հայատյաց քարոզչությունը Ադրբեջանի նախագահի մակարդակով է իրականացվում, հրամայական են դառնում Այլիսլիի նման ճշմարիտ մտավորականների ձայնը բարձրացնելը և միջազգային հանրությանը ճշմարտությունը լսելի դարձնելը՝ ադրբեջանցու շուրթերով:

3.Трансформации, осуществляющиеся на референциальном уровне, - это конкретизация (или гипонимическая трансформация). При переходе от одного языка к другому изменения в наименовании часто не ограничиваются лишь заменой одного способа номинации другим, но связаны с изменением объема или границ самого обозначаемого понятия[2].

Очевидно, что студенты должны усердно трудиться, чтобы изучить и основательно усвоить все виды переводческих трансформаций. В этом плане важным представляются их теоретические знания по общей лингвистике, в частности по теории грамматики, лексикологии, стилистике и т.д. Во-первых, они должны ознакомиться с точки зрения теории устного перевода с такими понятиями как «генерализация (гиперонимическая трансформация)», «замена реалий (интергипонимическая трансформация)». Будущие переводчики должны иметь четкое представление о «реметафоризации (синекдохическая трансформация)», «метонимической трансформации», «деметафоризации (замены метафоры ее антиподом - неметафорой)».

Студенты преодолевают большие трудности, связанные с использованием различных комбинаций названных трансформаций. Они, в основном, имеют дело с так называемыми комплексными трансформациями (например, конверсивные).

На продвинутом этапе, будущие переводчики изучают компрессию и расширение, которые считаются трансформациями на стилистическом уровне. Под компрессией подразумевается эллипсис, семантическое стяжение, опущение избыточных элементов и лексическое свертывание.

---

[1] ***ЛевицкаяТ.Р.***, *Фитерман А.М. Проблема перевода (англ.яз)-М.: Международные отношения,1976, 205с.*

[2] ***Швейцер А.Д.***, *Теория перевода. Статус, проблемы, аспекты, М.,Наука, 1988, С.33-70.*

При проектировании курса по обучению устному переводу, важно учитывать особенности применения не только стратегий, но и приемов перевода. В этом плане выделяется подход Дарбельне и Вине, который выдвигает идею о двух группах технических приемов, используемых при переводе:

а) приемы прямого перевода;

б) приемы косвенного перевода.

К первой группе относят:

- дословный перевод
- калькирование
- и заимствование.

Ко второй:

1. эквиваленцию (передача смысла предупредительных надписей, пословиц, афоризмов другими словами);
2. транспозицию (замена одной части речи на другую);
3. адаптацию (замена деталей сообщаемой истории прочими);
4. модуляцию (изменение присутствующей точки зрения)[1].

В целом учащиеся используют разные приемы, например, прием смыслового развития, который заключается в замене переводимой единицы на контекстуальное, логически связанное с ней слово или словосочетание. В основе лежит принцип, когда упомянутая в тексте причина развивается и заменяется ее следствием (или наоборот).

Прием лексического опущения предполагает игнорирование в процессе перевода некоторых семантически избыточных слов, которые не несут важной смысловой нагрузки, а их значение зачастую комплексно восстанавливается в переводе. Опущение является методом прямо противоположным приёму добавления.

Пожалуй, самым традиционным примером семантической избыточности является употребление т.н. «парных синонимов», часто проявляющееся во всех стилях письменной речи английского языка.

Например:

brave and fearless- храбрый;

just and equitable treatment - справедливое отношение;

He was breathless and dead - Он был мертв;

by violence and force - насильственным путём;

normal and regular - обычный;

Согласно Л. С. Бархударову: «этот прием находит применение не только при переводе «парных синонимов», имеются и другие избыточные элементы. К примеру:

So I paid my check and all. Then I left the bar and went out. Я расплатился и пошел к автоматам. (J. Salinger, The Catcher in the Rye).

В итоге, использование приема опущения позволяет переводчику производить некоторое сокращение общего объема произведения, что называется осуществлять «компрессию текста». Очевидно, что проблема

---

[1] ***Вине Ж.П.***, ***Дарбельне Ж.*** *Технические способы перевода. Вопросы теории перевода в зарубежной лингвистике, М., 1978, С.157-167.*

изучения приемов устного перевода рассматривается, прежде всего, на развития навыков и умений перевода.

Однако не только семантически избыточные слова являются объектом приёма опущения. Этот метод также используется в случаях такой особенности английского языка, как стремление к максимальной конкретности. Подобные тенденции находят свое выражение в применении названий мер и весов либо в употреблении числительных даже в тех случаях, когда это не поддерживается семантическими факторами. Здесь тоже применяется опущение, например:

About a gallon of water *was dripping down my neck, getting all over my collar and tie.* ***Вода*** *с головы лилась за шиворот, промок весь воротник и галстук.* (J. Salinger, The Catcher in the Rye)

Применение приема контекстуальной, или речевой конкретизации происходит в случаях, когда требуется завершить фразу, когда необходимо избежать повторений, достичь большей выразительности и т.д. То есть в ситуациях, когда изменения продиктованы чисто стилистическими соображениями. Например:

You could hear him putting away his toilet articles. (Дж. Сэлинджер «Над пропастью во ржи») - *Было слышно, как он убирает свои мыльницы и щетки.*[1]

Полной противоположностью конкретизации является генерализация. Суть этого приема - замена видового понятия родовым, частного понятия общим. Например:

The ***weatherman*** *says we can expect another week of rain. По сообщению* ***синоптиков****, дождливая погода продлиться ещё неделю*[2].

Важно подчеркнуть, что анализ текста в устном переводе напоминает по своей схеме анализ текста в письменном переводе, только, пожалуй, он лишен того разнообразия доминирующих черт, а сам перевод допускает меньшую степень сохранения инварианта, поскольку делается в обстановке дефицита времени. Знание и умение использования стратегий и приемов устного перевод являются необходимым условием успешного осуществления устного перевода. Очевидно, что только в учебных условиях и, в основном теоретическими знаниями, невозможно добиться хороших результатов. В этом плане, на первый план выступает проблема организации самостоятельной работы студентов, развития их профессиональной рефлексии и мотивации. Они должны понять, что без постепенного формирования переводческой культуры, они не могут добиться успеха и овладеть основными элементами переводческой техники и искусства.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.դ., Ի.Կ.Կարապետյանը:

---

[1] *www.classes.ru/grammar/125.Barhudarov-yazik-i.../4_17.html*

[2] ***Романова С. П.*** *Пособие по переводу, М., КДУ, 2008, 173 с.*

ՀՏԴ 796.01
Ֆիզիկական կուլտուրայի դասավանդման մեթոդիկա

Սուսաննա ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ԱրՊՀ Ֆիզիկական դաստիարակության և ՆԶՊ ամբիոնի ավագ դասախոս

Աշոտ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ք.Ստեփանակերտի հ.8 միջնակարգ հոսքային դպրոցի ավագ ուսուցիչ

ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ ՆԱԽԱՎԱՐԺԱՆՔԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախավարժանքն ուսումնական դասընթացների և մրցումների հիմնական մասերից մեկն է, որից շատ առումներով կախված է հաջողությունը, ինչպես վերապատրաստման, այնպես էլ մրցակցության: Նախավարժանքին վերաբերող բազմաթիվ տեսակետներ կան: Խնդրին լրացուցիչ ճշգրտումներ կատարելու համար մենք անցկացրենք ուսումնառության և մրցակցային պայքարում զինված ուժերի նախավարժանքի մեթոդաբանության, ժամանակի և միջոցների ուսումնասիրություն: Արդյունքները համառոտ ձևով ներկայացվում են հոդվածում:

Բանալի բառեր՝ *նախավարժանք, սոցիոլոգիական հարցում, առանձնահատկություններ, նպատակ, ուսուցում, վարժություններ, մկանների խումբ:*

С.Айрапетян, А.Айрапетян

МНЕНИЯ СПЕЦИАЛИСТОВ О ЗНАЧИМОСТИ РАЗМИНКИ

Разминка является одним из основных частей учебно – тренировочного урока и соревнований, от чего, во многом, зависит успех как на тренировке, так и на соревновании. Существует много точек зрений относительно разминки. Для внесения дополнительного корректива в проблему нами проведено исследование методики, сроков и средств разминки борцов на учебно-тренировочных и соревновательных схватках. Результаты в сокращенном виде приводятся в статье.

Ключевые слова*: разминка, социологический опрос, особенности, цель, тренировка, нагрузка, упражнения, группа мышц.*

S.Hayrapetyan, A.Hayrapetyan

OPINIONS OF SPECIALISTS ON THE IMPORTANCE OF WARM-UP

Warm-up is one of the main parts of the training lessons competitions, from which depends largely on the success of the training and in competition. There are many points of regarding workouts. To make an additional adjustment to problem we have carried out a study on the method, timing means of warming up to the fighters of training and compet bouts. The results are given in abbreviated form in the article.

Keywords*: warm-up, sociological survey, features, goal, training, loading, muscle group*

Ֆիզիկական բեռնվածությամբ մարզիկի պատրաստությունը մեկնարկին կարճատև ժամանակահատվածում հանգիստ վիճակից անցումն է ֆիզիկական մեկ այլ աստիճանի՝ աշխատանքի մի լարված աստիճանից անցումը մեկ այլ, ապահովելով, երբեմնել ավելացնելով պահանջվող ֆիզիկական բեռնվածությունը: Պատրաստականությունը աշխատունականությանը բնորոշ հատկություններից մեկն է, քանի որ մի շարք դեպքերում կարևոր է ոչ միայն աշխատանքը կատարել որոշակի բեռնվածությամբ կամ տևողությամբ, այլև ժամանակին կամ դրանից էլ շուտ: Անցումը պահանջվող մակարդակի, այսինքն՝ աշխատանքի մեջ համակարգերի ներգրավումը, արագացվում է նախնական նախավարժանքի, տարբեր քսուքների, արյան շրջանառության տեղային ակտիվացման միջոցներով և այլն: Պատրաստականությունն արագացնում և ակտիվացնում է աշխատանքի մեջ մարզիկի ներգրավումը և ապահովում է նախամեկնարկային վիճակի առավելագույն աստիճան:

Ֆիզիկական վարժություններ կատարելուց առաջ ջերմային գոմեոստազի կարգավորման համար (մարզումներ կամ հատկապես մրցումներ) անչափ կարևոր է նախավարժանքը, այսինքն՝ հենաշարժողական ապարատի մկանները և կարդիոռեսպիրատիվ համակարգի նախապատրաստումը սպասվելիք աշխատանքին:

Հայտնի է, որ հանգիստ վիճակում մարզիկի մկանախմբերն արյան սնուցում են ստանում 15-20%, իսկ ֆիզիկական մկանային աշխատանքի ժամանակ 20-30 անգամով ավելանում է արյան սնուցումը՝ հասնելով 80-100%-ի, ինչը պայմանավորված է սրտամկանի հանգիստ և արագ աշխատանքով, որը ընդունված է (տվյալ գործընթացը) անվանել բոպեական սիստոլիկ ծավալ:

Հանգիստ ժամանակ մկանի ջերմաստիճանը (տաքությունը) հավասարվում է 33-34c°, իսկ նախավարժանքից հետո այն բարձրանում է մինչև 38,5^{0} և մկաններում կատարվող թթվային գործընթացների համար դառնում է օպտիմալ միջավայր:

Նյութափոխանակության և խմորվող գործընթացների կատալիզի առավելագույն արագությունը օրգանիզմում նկատվում է 37-38^0 –ի դեպքում: Ջերմաստիճանի անկման ժամանակ այն կտրուկ դանդաղում է: Ըստ տեսաբանների՝ մկանում 10%-ով ջերմաստիճանի անկումը պատճառ է դառնում նաև նրանում կատարվող գործընթացների անկմանը՝ 50%-ով:

Նախավարժանքը ընդգրկում է ընդհանուրը զարգացման վարժություններ՝ վազք, ցատկ, ծալման և տարածման վարժություններ և այլն: Նախավարժանքի ընդհանուր մասը կարող է միևնույն լինել բոլոր մարզաձևերի համար, այսպես՝ ֆուտբոլիստները վարժություններ են կատարում տեղում՝ գնդակով շարժման ժամանակ, կատարում են գնդակի փոխանցումներ, հարվածներ, գնդակով արագացումներ, հոկեիստը տեղում և շարժման ժամանակ կատարում է փոխանցումներ, հարվածներ, տափօղակի հետ տեղաշարժեր, և այլն: Նախավարժանքի և ընդմիջման առավելագույն տևողությունը որոշվում է մի շարք գործոններով՝աշխատանքի բնույթով (մարզաձևը), մարզիկի ֆունկցիոնալ վիճակով, մարզվածությամբ, արտաքին գործոններով՝ օդի ջերմաստիճան, խոնավություն, նաև տարիքով, սեռով և մրցման մասշտաբներով՝ աշխարհի, Եվրոպայի և հանրապետության առաջնություններ և այլն: Նախավարժանքի տևողությունը խիստ անհատական է, ուստի տարբեր մարզաձևերի մարզիչների մոտ նախավարժանքի բովանդակության, տևողության և ձևի մասին գոյություն ունեն տարբեր կարծիքներ՝ (Լ.Ա.Իոֆե, 1988; Վ.Ի. Դրեսվյանկին, 1989; Ի.Ա. Տեր – Հովհաննիսյան, 1996; Պ.Ն. Լևաշով, 1998; Համեդ Ժամաա, 2001 և այլն):

Հետազոտության նպատակը՝ այդ հիմնահարցում որոշ պարզաբանումներ մտցնելու նպատակով Արցախի և Հայաստանի Հանրապետությունների տարբեր մարզաձևերի մարզիչների և մարզիկների շրջանում մարզումային և մրցակցական նախավարժանքի բնույթի, տևողության, լարվածության և բովանդակության վերաբերյալ իրականացվել են սոցիոլոգիական հարցումներ:

Հետևաբար մշակվել է 21 հարցից և նույնքան ենթահարցից բաղկացած հատուկ հարցաթերթիկ՝ այլընտրանքային պատասխաններով:

Սոցիոլոգիական հարցմանը մասնակցել են տարբեր մարզաձևերի 294 մարզիչներ, այդ թվում՝ հանրապետության վաստակավոր մարզիչներ, որոնց միջին տարիքը կազմում է 38-40 տարի, իսկ մարզչական ստաժը՝ 15-ից ոչ պակաս: Հարցմանը մասնակցել են նաև երկու հանրապետությունների 468 կարգային մարզիկներ, որոնք ունեին 8-12 տարվա մարզական ստաժ: Հարցվողների շարքում եղել են Եվրոպայի, աշխարհի, հանրապետության չեմպիոններ և մրցանակակիրներ, միջազգային և հանրապետական կարգի սպորտի վարպետներ:

Սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ առանց բացառության, 762 հարցվողները սպորտում մարզումից և մրցույթից առաջ մարզիկների հետ լիարժեք նախավարժանքի

անցկացման անհրաժեշտության կողմ են արտահայտվել: Ընդ որում՝ յուրաքանչյուր տասներորդ հարցվող մարզիչ և մարզիկ ընդգծել է, որ մարզումներից ու մրցումներից առաջ կատարվող նախավարժանքները սկզբունքորեն իրարից չեն տարբերվում:

Միևնույն ժամանակ մարզիչների 38,4% -ը և մարզիկների 25%-ը, մարզաձևի առանձնահատկության հետ կապված, որոշակի տարբերությամբ են անցկացնում նախավարժանքը:

Իրավացի է և այն, որ նախավարժանքի հիմնական խնդիրը բոլոր մարզաձևերի մասնագետները համարում են մկանային համակարգի և օրգանների նախապատրաստումը առաջիկա ֆիզիկական աշխատանքին (76-85%) և հատկապես այն մկանախմբերին, որոնք կրում են հիմնական բեռնավածությունը (14.9-23.9%):

Հարցվողները համակարծիք են և նրանում, որ յուրաքանչյուր նախավարժանք պետք է բաղկացած լինի 2 մասից՝ ընդհանուր և հատուկ: Նախավարժանքի ընթացքում պետք է կատարվեն ընդհանուր զարգացնող (26.2-28.8%) և հատուկ (մոտավորապես 18%) վարժություններ, որտեղ մեծ տեղ են տրվում վազքերին (11.7-14.3%), մարմնամարզական վարժություններին (20-22%), տարբեր խաղերին (10-14%) և այլն: Այլ կերպ ասած՝ կոնկրետ վարժությունների ընտրությունն ըստ մարզիչների (68.4%) և մարզիկների (60.2%), անմիջականորեն կախված է ընտրած մարզաձևի առանձնահատկությունից և տարբերվող կոնկրետ վարժության կրկնությունների քանակից: Համաձայն հարցման արդյունքների՝ առավել օպտիմալ են համարվում վարժության 10-ը կրկնությունը (37.4-48.0%):

Մասնագետները համակարծիք են նաև նրանում, որ նախավարժանքի իրականացման ժամանակ պետք է հաշվի առնվի մարզաձևի առանձնահատկությունը: Ընդ որում՝ դրա բովանդակությունը, ըստ նրանց, պայմանավորված է մի շարք գործոններով՝ մարզիկների պատրաստվածության աստիճանով (13-17%), կլիմայական պայմաններով (8.5-10.2%), մարզական շրջանով (10.8-18.7%) և մարզման ընթացքում լուծվող խնդիրների առանձնահատկություններով (42.5-44.8%): Ստացված արդյունքների վերլուծությունը վկայում է այն մասին, որ այն կարող է շարունակվել 10ից մինչև 40 րոպե, առավելագույն մինչև 50 րոպե: Այդպիսի կարծիքի են մարզիկների 32%-ը և մարզիչների 25%-ը:

Ակնհայտ է և այն, որ երկու խմբի հարցման մասնակիցները 100%-ով նախավարժանքի հիմնական միջոցները համարում են ֆիզիկական տարբեր վարժությունները, որոնք չի կարելի փոխարինել ո՛չ օրգանիզմի պարզ տաքացմամբ և ո՛չ էլ հոգեբանական ներշնչմամբ: Ուստի, թերի և ոչ հստակ անցկացված նախավարժանքը բացասաբար է ազդում մարզիկի աշխատունակության որակի (84.4-90.1%), հոգեբանական տրամադրվածության վրա (82.2-83.3%), որոնք 90-100% -ով պատճառ են դառնում տարբեր վնասվածքների:

Հետաքրքիր է նաև, որ նախավարժանքի կայացման կարևոր նշան է համարվում պարապմունքի հիմնական մասին անցնելու մարզիկի պատրաստականության ցուցանիշը (32.0-42.5%), սրտի կծկումների օպտիմալ հաճախականությունը (19-30%), քրտնարտադրությունը (3.8-18.7%), հոգնածության ոչ մեծ աստիճանը (8,5%): Ըստ այդմ էլ՝ մարզիչների 91.8% և մարզիկների 55.5%-ը կողմ են արտահայտվել նախավարժանքի անհատականացման և պարապմունքի հիմնական մասի սկսման համար 10-15 րոպե առավելագույն պատրաստվածությանը (18.8-24.1%):

Եզրակացություն: Մասնագետների կարծիքով նախավարժանքը հանդիսանում է նաև հոգեկան վիճակների կանոնավորման և ինքնականոնավորման լավագույն մեթոդ: Մարզիչները և մարզիկները համամիտ են այն փաստին, որ մրցույթների ժամանակ կատարվող նախավարժանքը, մրցակցային գործունեության ամենաարդյունավետ միջոցն է: Ուստի նախավարժանքի բովանդակությունը պայմանավորված է ոչ միայն կոնկրետ առանձնահատկությամբ, այլ նաև մարզիկի անձի անհատական առանձնահատկություններով և մրցակցային ոճով:

Գրականություն

1. Дресвянкин В.И. Варианты разминки лыжника-гонщика: Автореф. дисс… к.п.н., Малаховка, 1989, 17с.
2. Иоффе Л.А. Терморегуляционные аспекты разминки // Теория и практика ФК.-1988.-N4.-с. 24-28.
3. Левашов П.Н Методы повышения эффективности разминки в соревновательных фехтовальщиков: Автореф. дисс… к.п.н., М., 1998, 22с.
4. Тер-Ованесян И.А. Актуальные проблемы подготовки высококвалифицированных легкоатлетов.- М.: Сов.спорт.-1996.-158
5. Хамед Джомаа Эффективность разминки баскетболистов с использованием специальной аппаратуры: Автореф. дисс… к.п.н., М., 1998, 22с.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.դ., պրոֆեսոր Ե.Ս. Հակոբյանը:

ՀՏԴ 159.9
Հինվորական հոգեբանություն

Արայիկ ՖԻՐՅԱՆ
ԱրՊՀ դասախոս

ԱՆՁԻ ԻՆՔՆԻՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՈՏՈՒՄ

Հոդվածում առաջ է քաշվել վարկած այն մասին, որ սահմանամերձ գոտում բնակվելու փաստը կարող է որոշակի ազդեցություն ունենալ անձի ինքնիրացման արդյունավետության վրա: Հիմնարար ներկայացվել է այն դատողությունը, որ անձի ինքնիրացման արդյունավետությունը սահմանամերձ գոտում պայմանավորված է անձի հոգեբանական կայունությամբ, որը համեմատաբար թույլ է արտահայտված կյանքի համար վտանգ ներկայացնող պայմաններում:

Բանալի բառեր՝ *ինքնիրացում, հոգեբանական կայունություն, սահմանամերձ գոտի, պահանջմունքներ, դժվար իրավիճակ, հարմարվողականություն:*

А. ФИРЯН

САМОРЕАЛИЗАЦИЯ И ПСИХОЛОГИЧЕСКАЯ УСТОЙЧИВОСТЬ ЛИЧНОСТИ В ПРИГРАНИЧНОЙ ЗОНЕ

Исследования показывают, что самореализация - это комплексное психологическое образование, осуществляемое на протяжении всего жизненного пути. Успешность самореализации в приграничной зоне обусловлена психологической устойчивостью, которая имеет относительно слабое проявление в жизнеугрожающих условиях, поскольку адаптационные возможности личности также ограниченны.

Ключевые слова: *самореализация, психологическая устойчивость, приграничная зона, сложная ситуация, адаптация.*

A.FIRYAN

PERSON'S SELF-ESTEEM AND PSYCHOLOGICAL STABILITY IN THE BORDER ZONE

Studies allow us to come to the conclusion that a person's self-esteem is a psychological complex that is being implemented throughout life. Its effectiveness in the borderline is conditioned by a person's psychological stability, which is relatively weak in the conditions of life threatening

Key words: *self-esteem, psychological stability, border zone, needs, difficult situation,*
adaptation. situations, as the individual's adaptability is also limited.

«Սահմանային գոտի» հասկացությունը, Հայաստանի Հանրապետության պետական սահմանի մասին օրենքի հոդված 21-ի համաձայն, պետական սահմանագծից Հայաստանի Հանրապետության տարածքի խորքը մինչև 5 կմ լայնությամբ ծավալվող տարածքն է: Իսկ սահմանային գոտու մի մասը, որը հարում է պետական սահմանին մինչև 1 կմ լայնությամբ, կոչվում է սահմանային շերտ :

«Սահմանամերձ գոտի» տերմինն օրենքում ամրագրված չէ, սակայն լայն կիրառություն ունի[1]:

Մի շարք հետազոտողներ հակված են այն մտքին, որ ինքնիրացման արդյունավետությունը սերտորեն կապված է անձի հոգեբանական կայունության հետ: Սույն ենթադրությունների հաստատման կամ ժխտման նպատակով նախ և առաջ բացահայտենք նշված հասկացությունները և դրանց մեջ առկա կապերն ու փոխազդեցությունները (ինքնիրացում, հոգեբանական կայունություն): Հոգեբանական հետազոտությունները բացահայտում են արտաքին գործոնների դրական և բացասական ազդեցությունը անձի ինքնիրացման գործընթացի վրա, որը մեծապես կախված է շրջակա միջավայրի պայմաններից:

«Ինքնիրացում» տերմինը հոգեբանության շրջանառության մեջ է մտցվել Աբրահամ Մասլոուի կողմից, ով ակտիվորեն ուսումնասիրել է անձի ինքնիրացման պրոբլեմատիկան: Հետազոտությունները նրան տվեցին մարդու պահանջմունքների ստորակարգության (հիերարխիայի) առկայության գաղափարը, որը 1943թ. հեղինակը բուրգի տեսքով ներկայացրեց իր՝ «Մարդկային պատճառաբանության տեսություն» հոդվածում:

Մասլոուն համարում էր, որ ինքնիրացման պահանջմունքը, ըստ «բուրգի պահանջմունքների» հերթականության, մարդու պահանջմունքներից

[1] *Տե՛ս www.sns.am:*

ամենավերջինն է: Ավելի ցածր պահանջմունքների բավարարումից արդիական են դառնում ավելի բարձր մակարդակի պահանջմունքները[1]:

Հարկ է նշել, որ պահանջմունքները չեն գտնվում անխախտելի հաջորդականության մեջ, ինչպես դա ցուցադրված է «պահանջմունքների բուրգի» վրա:

Ռ.Ա. Զորովը և Վ.Ն. Կելասևը առանձնացրել են անձի ինքնիրացման վրա ազդող երկու խումբ գործոններ.

1) անձնային գործոններ (արժեքային կողմնորոշումները, մտքի ճկունությունը, կամքը և այլն),

2) գործոններ, որոնք կախված չեն անձից (սոցիալական իրավիճակը, նյութական ապահովվածության վիճակը, զանգվածային լրատվական միջոցների ազդեցությունը մարդկանց վրա, էկոլոգիական միջավայրը և այլն)[2]:

Հիմք ընդունելով այն փաստը, որ ինքնիրացումը սերտորեն կապված է անձի զարգացման հետ, նպատակահարմար է ինքնիրացման գործոնների ուսումնասիրությանը զուգընթաց հետազոտել անձի զարգացումը պայմանավորող մի շարք գործոններ: Հայտնի է, որ զարգացումն ընթանում է կենսաբանական և սոցիալական գործոնների ազդեցության ներքո: Մարդու մեջ բարձրագույն հոգեկան գործընթացները ծնվելու օրվանից չեն դրսևորվում, այլ տրվում են ներուժի ձևով, որի լիարժեք և արդյունավետ իրացումը պայմանավորված է բնական և սոցիալական գործոնների փոխներգործությամբ: Սոցիալական գործոնների ազդեցության արդյունքում մարդը՝ որպես կենսաբանական էակ՝ անհատ, կերպարանափոխվում է և դառնում սոցիալական էակ՝ անձ: Սակայն, այս հասկացությունները մարդու բարձրագույն ընդունակությունները և ստեղծագործական ակտիվության վառ դրսևորումները նկարագրելու համար բավական չեն: Հետևաբար գոյություն ունի մարդու զարգացման ևս մեկ բարձր մակարդակ՝ անհատականությունը, որի զարգացումը անձի սովորական ձևավորում համարել չի կարելի, քանի որ այն ընթանում է որոշակի սպասումներից անկախ: Արդյունքում անձը ոչ միայն ձևավորվում է, այլ նաև ինքնիրացվում ու զարգանում: Անձի անհատականացման համար միայն սոցիալական պատճառականությունը (դետերմինացիան) բավական չէ, կարևոր են նաև անհատական և անձնային առանձնահատկությունները:

Անձի զարգացման մակարդակները չեն դիտարկվում որպես ժամանակագրական փուլեր, քանի որ վեջիններս միշտ չէ, որ ենթարկվում են հաջորդականության սկզբունքին: Ուստի, երբեմն ինքնիրացման գործընթացը կարող է նկատվել օնտոգենետիկական զարգացման վաղ փուլերում (օրինակ՝ մանկական շնորհալիությունը): Ընդունակությունների վաղ զարգացումը

---

[1] Տես ***Абрахам Маслоу***: *Мотивация и личность, 3-е изд. СПб.: Питер 2008. 352 стр.*

[2] Տե՛ս ***Зобов Р.А., Келасьев В.Н***. *Самореализация человека: введение в человекознание.-СПб.:СПбГУ,2001.*

թվում է, թե հաստատում է կենսաբանական գործոնների առաջնահերթ լինելը: Սակայն, այդ զարգացումը հնարավոր է միայն անձի սոցիալիզացման այն մակարդակում, որում ձևավորվում է ինքնիրացման պատրաստակամությունը: Հարկ է նշել, որ անձը ինքնիրացման գործընթացում ինքնուրույնաբար ընտրում է գործունեության այն ուղղությունը, որը համապատասխանում է իր պահանջներին:

Վ.Ֆրանկլը իր հերթին, օրինակ բերելով Սոկրատեսի, որը հավատում էր, որ ուներ ներքին մղումներ ու ներուժ տաղանդավոր հանցագործ դառնալու համար, նշում է, որ մարդիկ անընդհատ ստիպված են ընտրել, թե իրենց հավանական կարողություններից ու հնարավորություններից որոնք են ենթակա իրացման: Մարդիկ, որևէ ապրելակերպի հետևելով, ստիպված են լինում հրաժարվել այն նախասիրություններից և հակումներից, որոնք համատեղելի չեն տվյալ կենսակերպի հետ: Այսպիսով, մարդիկ, իրենց կյանքում ընտրելով ինքնիրացման կոնկրետ մի ուղղություն, երբեք չեն կարող իրացնել իրենց ողջ ներուժը[1]:

Այդ ընտրության վրա վճռորոշ ազդեցություն են թողնում սոցիալական գործոնները: Վերոգրված տեսակետը արդարացվում է նաև գենդերային հետազոտությունների արդյունքներով: Հայտնի է, որ տղամարդկանց ու կանանց հասարակությունը վերագրում է տարբեր սոցիալական դերեր: Հետազոտության արդյունքները վկայում են, որ տղամարդիկ ու կանայք, յուրացնելով գենդերային կարծրատիպերը, հակված են ընտրել սոցիալականացման այն ուղղությունները, որոնք համապատասխանում են իրենց գենդերային դերերին: Սեռերի ինքնիրացման մեջ արտացոլված են այն գենդերային կարծրատիպերը, որոնք բնութագրում են տղամարդկանց ու կանանց մասին հասարակության մեջ ընդունված պատկերացումները:

Համակարգային մոտեցման դեպքում կարող ենք առանձնացնել ինքնիրացման հետևյալ բազային նախադրյալները՝ էկոլոգիական, ֆիզիոլոգիական, հոգեբանական, մանկավարժական և սոցիալական: Անձի ինքնիրացումը իրենից ներկայացնում է բարդ ֆունկցիոնալ համակարգ, որը ներառում է հոգեբանական համալիր կազմավորումներ: Այլ կերպ ասած, ինքնիրացումը բազմաբովանդակ հոգեբանական կազմավորում է, որը դետերմինացված է արտաքին և ներքին գործոններով, որոնք ապահովում են անձի ինքնաարտահայտման արդյունավետությունը նրա կենսագործունեության տարբեր ոլորտներում: Անձի ինքնիրացման գործընթացի վրա առավելապես ազդում են այնպիսի անհատական առանձնահատկություններ, ինչպիսիք են նրա ակտիվությունը, լավատեսությունը, ներքին (ինտերնալ) վերահսկողության լոկուսը, ստեղծարարությունը, բարձր շարժառիթավորումը, պահվածքում և շփման մեջ կառուցողական մոտեցումը:

---

[1] *Տե՛ս* ***Франкл.В.****: Сказать жизни «ДА»: Психолог в концлагере.:Альпина нон-фикшн,2009 с240*

Ժամանակակից հասարակության մեջ մարդիկ պարբերաբար հայտնվում են դժվար և ճգնաժամային իրավիճակներում: Դա պայմանավորված է տարբեր գործոններով՝ քաղաքական, տնտեսական, բնապահպանական, սոցիալական (աղքատություն, հիվանդություն, գործազրկություն, բարոյական արժեքների կորուստ և այլն): Կյանքի համար վտանգ ներկայացնող իրավիճակների վերլուծության հետ կապված՝ հոգեբանական գրականության մեջ օգտագործում են հասկացությունների լայն շրջանակ՝ *դժվար իրավիճակ, կյանքի իրադարձություններ*, *արտակարգ իրավիճակ*, *ճգնաժամային իրավիճակ* և այլն:

Ֆ.Ե.Վասիլյուկը հանգել է այն մտքին, որ վտանգավոր և անելանելի պետք է սահմանել այնպիսի իրավիճակը, երբ անձը բախվում է իր կյանքի համար առաջնահերթություն հանդիսացող ներքին կարիքների (դրդապատճառների, ձգտումների, արժեքների և այլն) իրագործման անհնարինության հետ: Ընդ որում, արտակարգ և վտանգավոր հանդիսացող իրավիճակի ձևը կախված է «անհնարինության» վիճակից, որում հայտնվել է անձի կենսագործունեությունը[1] [2]:

Մարդիկ որքան մեծ ինֆորմացիայի հոսք են ստանում, տվյալ դեպքում՝ պատերազմական իրավիճակի մասին (թշնամու կողմից հարձակումներ, դիվերսիոն-հետախուզական փորձեր և այլն), այնքան նրանց մոտ սթրեսի առաջացումն անխուսափելի է դառնում: Ձևավորված իրավիճակում սահմանամերձ գոտու բնակչությունը հաճախ է ենթարկվում անցանկալի բացասական ազդեցությունների[3]: Հետևաբար, նման իրավիճակներում առաջնահերթ կարելի է համարել անձնային այնպիսի ունակություններն ու հմտությունները, որոնք օգնում են դիմադրելու արտաքին բացասական ազդեցություններին և հաղթահարելու կյանքի դժվար իրավիճակներն ու սթրեսները:

Անբարենպաստ պայմաններում անձի հոգեկան ակտիվ գործունեության պահպանումը և հարմարվողականությունը իրագործվում են հոգեբանական կայունության շնորհիվ:

Ա. Ռեբերի բառարանում կայունությունը հասկացվում է որպես անձի բնութագիր, որը ոչ ստանդարտ իրավիճակներում համեմատաբար հուսալի և կայուն ցուցանիշներ ունի: Տվյալ բառարանում կայունությունը բնութագրվում է որպես *առավել հուզական փոփոխությունների բացակայություն*: Այս դեպքում հաճախ օգտագործվում է ճշտող, շտկող *«հուզական կայունություն»* հասկացությունը[4]: Ա.Վ. Միխեևը գտնում է, որ

---

[1] *Տե՛ս* ***Василюк Ф.Е.:*** *Психология переживания.-М .,1984*

[2] *Տե՛ս* ***Кудинов С.И., Хаммад С.М.:*** *Психологическая устойчивость личности как основа самореализации, Вестник РУДН, 2015,стр 26-29*

[3] *Տե՛ս* ***Медведев В.И.:*** *Психологические реакции человека в экстремальных условиях,М,1979с66-67*

[4] *Տե՛ս* ***Ребер А.:*** *Большой толковый психологический словарь-М.,2000*

գիտնականները, բնութագրելով կայունությունը որպես հոգեբանական երևույթ (ֆենոմեն)՝ կիրառում են տարբեր եզրույթներ՝ *«անձի կայունություն»* (Բ.Ս.Բասարով, Ա.Ն.Լեոնտև, Կ.Կ.Պլատոնով), *«կայունություն սթրեսի նկատմամբ»* (Բ.Վ.Կուլագին), *«հուզական կայունություն»* (Լ.Մ.Աբոլին, Ե.Ա.Միլերյան), *«հոգեկան կայունություն»* (Մ.Ա. Մատովա, Մ.Ֆ.Սեկաչ), *«հոգեբանական կայունություն»* (Ի.Ն.Գրրզլովա, Վ.Կ.Կալին): Մի շարք գիտնականներ (Ն.Դ.Լևիտով, Յա. Ռեյկովսկի, Կ.Կ.Պլատոնով, Ա.Գ.Մակլակով) «սթրեսակայունություն» հասկացությունը նույնացնում են հուզական և հոգեկան կայունության հետ, ուրիշները (C.S.Carver, A.Antonovsky, S.Kobasa, С.Мадди)՝դիմադրողականության և կենսունակության հետ [1]:

Լ.Մ.Աբոլինը «հոգեբանական կայունություն» հասկացությունը սահմանում է որպես մարդուն լարված գործունեության պայմաններում բնութագրող հատկություն, որի առանձին հուզական մեխանիզմները ներդաշնակորեն զուգորդվում են միմյանց և նպաստում դրված նպատակների ձեռքբերմանը[2]:

Ն.Ի.Բերեժնայան իր հերթին հակված է այն տեսակետին, որ հուզական կայունությունը որոշվում է ծայրահեղ պայմաններում բացասական ազդեցությունների հաղթահարման գործընթացում կուտակած անձնական փորձով, կամքի ուժով, մտավոր կարողություններով և ազդող դրդապատճառի ուժգնությամբ: Կախված նրանից, թե ինչ դրդապատճառներով է պայմանավորված ակտիվությունը, միևնույն, մարդու մոտ կարելի է նկատել հուզական կայունության տարբեր աստիճաններ[3]: Դժվար իրավիճակներում գտնվող մարդկանց հոգեֆիզիոլոգիական վիճակի մոդելավորմանն իրենց աշխատանքներում անդրադարձել են Ռոբերտ Յերկսը և Ջոն Դոդսոնը: Ըստ Ց.Պ.Կորոլենկոյի՝ նրանք ապացուցել են, որ աշխատանքի արդյունավետության կախվածությունը հուզական գրգռվածությունից ունի որոշակի սահման, որից հետո շարժառիթավորման բարձր աստիճանը հանգեցնում է անցանկալի հուզական հակազդումների (լարվածություն, անհանգստություն, սթրես). արդյունքում գրանցվում է գործունեության վատթարացում[4]:

Մի շարք գիտնականներ (Ու.Լ. Խասմագոմեդովնա, Ա.Բ Ախմեդով) իրենց աշխատանքներում ապացուցել են, որ սահմանամերձ գոտու ազգաբնակչության մոտ ևս նկատվում են հոգեբանական կառուցվածքային փոփոխություններ, որոնք արտահայտվում են բնավորության

---

[1] *Տե՛ս* ***Михеева А.В.*** *Стрессоустойчивость: к проблеме определения/ Вестник РУДН, серия Вопросы образования, 2010 N2 с. 82-86*

[2] *Տե՛ս* ***Аболин Л.М.*** *Психологические механизмы эмоциональной устойчивости человека.- Казань, 1987*

[3] *Տե՛ս* ***Бережная Н.И.****..:Стрессоустойчивость оперативных сотрудников таможенных органов.Ежегодник психологического общества.:в8ТСПб,2003.Т.1.С.453-457*

[4] *Տե՛ս* ***Короленко Ц.П.*** *Психофизиология человека в экстремальных условиях.-Л., 1978.-272стр.*

շեշտվածությամբ, նյարդահոգեկան լարվածությամբ, զգայության շեմերի, արժեքային կողմնորոշիչների փոփոխությամբ և այլն[1]:

ԱՀ սահմանամերձ բնակավայրերում մեր կատարած դիտարկումների արդյունքները փաստում են, որ երկար ժամանակ ապրելով ու գործելով լարված, կյանքի համար վտանգ ներկայացնող պայմաններում՝ սահմանամերձ գոտու բնակչությունը կարող է դրսևորել բարձր հարմարվողականություն: Ուսումնասիրությունները, սակայն, վկայում են, որ անձի հարմարվողականության հնարավորությունները սուղ են ու սահմանափակ:

Այս տեսակետին է հակված նաև Ե.Պ.Իլյինը: Նա նշել է, որ միջին հուզական լարվածության պայմաններում գործունեության արդյունավետությունը բարձրանում է բոլոր մարդկանց մոտ՝ անկախ այն հանգամանքից, թե անհատական ինչ առաձնահատկություններով են նրանք օժտված: Սակայն մեծ լարվածության դեպքում թույլ նյարդային համակարգ ունեցող անձանց մոտ գործունեության արդյունավետությունն իջնում է[2]:

Սահմանամերձ գոտու բնակչության անհանգստություններն ու տագնապները մեծ մասամբ կապված են սահմանային միջադեպերի, ռազմական լոկալ ընդհարումների, հրաձգությունների և ռմբակոծությունների հետ: Մեր կողմից կատարված ուսումնասիրություններն արդարացնում են դատողություններն այն մասին, որ սահմանամերձ գոտում բնակվողները դառնում են ոչ միայն բռնության ականատեսներ, այլև մարտական գործողությունների անմիջական մասնակիցներ: Նույնիսկ հայրենասիրությամբ տոգորված և զինվորական համապատասխան պատրաստություն անցած զինծառայողների համար բավականին դժվար է հարմարվել պատերազմի վտանգներին ու դժվարություններին, ինչպես նաև ընդունել դրանց հետևանքով ձևավորված կյանքի նոր առաջնահերթությունները, քանի որ արտակարգ պայմաններում գոյատևելը և հարմարումը նոր պայմաններին պահանջում են վարքի և գիտակցության նախկին կարծրատիպերի պառակտում:

Ամերիկյան հոգեբանների հետազոտություններով պարզվել է, որ կյանքի համար վտանգ ներկայացնող պայմաններում (գլխավորապես առաջին մարտից առաջ, մարտի ժամանակ, իսկ երբեմն էլ՝ մարտից հետո, երբ արդեն գիտակցվում է մահվան վտանգը) զինվորների 90 տոկոսը սարսափ է ապրում, 25 տոկոսը չի կարողանում ղեկավարել միզապարկի և աղիքների աշխատանքը: Պարզվում է, որ աղիքների և միզապարկի դատարկումը կյանքին սպառնացող իրական վտանգի դեպքում բնական կենդանական

---

[1] Տե՛ս ***Хасмагомедовна.У.Л.***: *Проблемы и переживание подростков, находящихся в экстремальных условиях, Санкт-Петербург 1997с 3-8*

[2] Տե՛ս ***Ильин Е.П***. *Дифференциальная психофизиология. Челябинск, 1999,*

բնազդ է, որը մարդիկ ժառանգել են գազաններից: Այս երևույթը պայմանավորված է նրանով, որ դատարկ միզապարկով և աղիքներով առավել հեշտ է փախչել ու փրկվել: Ռազմական փորձագետները արձանագրել են դեպք, երբ զինծառայողների մի գունդ, զորավարժությունների ժամանակ խոցելով 500 թիրախ, մի քանի օր հետո մարտական գործողություններում կատարել է ընդամենը 3 արդյունավետ կրակոց հակառակորդի ուղղությամբ: Գիտնականները հանգել են այն մտքին, որ բնազդները արգելում են մարդուն ոչնչացնել իր կենսաբանական տեսակի ներկայացուցչին[1]:

Ամեն դեպքում նրանք, ովքեր պատերազմի արհավիրքներից խեղվում, վնասվում և ծանր կորուստ են կրում, ինքնաբերաբար իրենց դասում են տուժածների խմբին: Վերոնշված խումբը կարող է օտարվել հասարակությունից, երևելի դարձնել իր հիասթափությունը, դժգոհությունը, անհավատարմությունը:

«Զոհի» կարգավիճակ ստանձնած և վերջինիս բնորոշ պասիվություն դրսևորած մարդկանց մոտ ի հայտ են գալիս անօգնականության ու հուսահատության զգացումներ: Ժամանակի ընթացքում զոհի դիրքորոշումը պասիվ վիճակից վերափոխվում է ակտիվ և նույնիսկ ագրեսիվ վիճակի: Նրանք սկսում են պաշտպանել իրենց իրավունքները:

Զոհի դիրքորոշումը ներկայացվում է այսպես. «Ես տուժած մարդ եմ: Իմ տառապանքները եզակի են: Ես այնքան թույլ և անօգնական եմ, որ յուրաքանչյուր ոք պետք է ցավի ինձ համար և օգնի ինձ»: Սկզբնական շրջանում ընտանիքի անդամներն ու հարազատները ապահովում են տուժածի խնամքը և դրսևորում գերհոգատարություն, բայց աստիճանաբար սկսում են վերաբերվել նրան որպես անվիարժեք մարդու, քանզի նմանատիպ դիրքորոշում ունեցող մարդկանց խնդիրները մշտապես հիշեցնում են տառապանքների, ցավերի, զայրույթի մասին, որոնք բոլորը հակված են մոռանալու: Արդյունքում շրջապատի մարդիկ փորձում են ամեն կերպ խուսափել տուժածների հետ շփումից[2]:

Մարդու առօրյա կյանքը կարելի է բնութագրել հատկանիշով, որը պայմանականորեն կարող ենք անվանել *ապրելակարգ*: Հոգեբանության մեջ այս տերմինը կապված է *հարմարվողականություն (ադապտացիա)*, *ինքնակարգավորում, կայունություն* հասկացությունների հետ:

---

[1] *Տե՛ս forum.pravda.com.ua: Поведение человека на войне*

[2] *Տե՛ս* ***О. Наталия****, Человек в экстремальной ситуации: теоретические интерпретации и модели психологической помощи стр.152-166.*

Իրավիճակները, որոնք դուրս են գալիս *ապրելակարգի* տրամաբանությունից, կարելի է բաժանել երեք մակարդակի:

Առաջին մակարդակ՝ «առօրյա տհաճություններ», որոնք մարդը ինտեգրում է իր ապրելակարգի մեջ: Այս տհաճությունները ստեղծում են դժվարություններ, բայց չեն ընդհատում մարդու սովորական ապրելակարգը և չեն խոչընդոտում նրա ինքնիրացումը:

Երկրորդ մակարդակ՝ «դժվար իրավիճակներ», երբ արտաքին ազդեցությունների և դրանցից բխող ներքին փոփոխությունների հետևանքով ի հայտ են գալիս հարմարվողականության խանգարումներ: Այս իրավիճակները բնութագրվում են կայունության խանգարումներով: Արդյունքում մարդը այլևս ունակ չէ բավարարելու կենսագործունեության հիմնական պահանջմունքները:

Երրորդ մակարդակ՝ «արտակարգ իրավիճակներ», որոնք կապված են բնական և տեխնածին արտակարգ իրավիճակների, համաճարակների, ահաբեկչությունների, լայնամասշտաբ և տեղային զինված ընդհարումների հետ: Ըստ հոգեբանների՝ բոլոր այս հանգամանքները հրահրում են հոգեկան և ֆիզիկական տագնապալի վիճակներ, որոնք կարելի է դիտարկել որպես խոչընդոտներ անձի զարգացման և ինքնիրացման ճանապարհին: Բնության և հասարակության ուժերի հանդեպ սեփական անկարողությունը մարդուն վերածում է անջատված մի գոյության:

Բնական և տեխնածին աղետները, որոնց արդյունքում զոհվում և վիրավորվում են բազմաթիվ մարդիկ, ունեն սպառնալիքի անդեմ աղբյուր: Բնական ծագում ունեցող արտակարգ իրավիճակների հետևանքներն ու դժվարությունները մարդիկ համեմատաբար հեշտ են հաղթահարում: Մինչդեռ պատերազմների հետևանքով առաջացած վտանգները անթրոպոգեն են և պայմանավորված են մարդու գործունեությամբ:

Այն տեսակի մարտերում, որտեղ հակառակորդն ընկալվում է որպես մարդ և անհատականություն (հետևակային մարտեր, կործանիչների օդային մենամարտեր և այլն), բանակը արդյունավետ չէ: Բոլորովին այլ պատկեր կարող ենք տեսնել այն մարտերում, որտեղ հակառակորդ բանակի զինվորները միմյանց չեն տեսնում, օրինակ՝ հրթիռահրետանային և տանկային մարտերի ժամանակ: Նմանատիպ միտում է նկատվել ապրիլյան պատերազմի ժամանակ, որի ընթացքում առանձնակի արդյունավետությամբ են գործել ԱՀ ՊԲ հրետանավորները: Ուստի և տուժածի հակազդեցությունները առավել տևական, բուռն և կործանարար են այն դեպքերում, երբ սպառնալիքը հրահրվում է մարդու կողմից:

Անթրոպոգեն բնույթի արտակարգ իրավիճակները քայքայիչ ազդեցություն են թողնում մարդու հոգեկանի վրա:

Արդյունքում մարդու մոտ զարգանում է ինքնիրացմանը հակադիր, էկզիստենցիալիստական վիճակ, որը կոչվում է *ինքնաօտարում*:Հոգեբանական ճգնաժամի մեջ հայտնված անձը փորձում է մեկուսանալ մարդկային ճակատագրի անելանելի ողբերգությունից, ինչպես նաև շոկային այնպիսի վիճակներից, որոնք առաջանում են մահվան ու դաժանության նկատմամբ կյանքի արժեքների անիմաստության գիտակցումից: Ըստ Է. Ֆրոմմի՝ մարդու հիմնական ընտրությունը կյանքի ու մահվան միջև ընտրությունն է: Յուրաքանչյուր արարք ենթադրում է այդ ընտրությունը: Լինել օտարված՝ նշանակում է զրկվել մարդկային կարողություններն օգտագործելու հնարավորությունից: Ինքնաօտարումը մշտապես հակասում է անձի զարգացմանն ու ինքնահիրացմանը: Որոշ հեղինակներ *«ինքնիրացում»* տերմինը նույնացնում են *«կյանքի ուղի»* հասկացության հետ, իսկ *«ինքնաօտարում»* տերմինը սահմանում են որպես ճանապարհ, որը տանում է մահվան[1]:

Գրականություն

1. Абрахам Маслоу: Мотивация и личность, 3-е изд. СПб.: Питер 2008. 352 стр.
2. А.В. Михеева Стрессоустойчивость: к проблеме определения/ Вестник РУДН, серия Вопросы образования, 2010 N2 с. 82-86
3. Артур Ребер .: Большой толковый психологический словарь- М.,2000
4. В.И. Медведев Психологические реакции человека в экстремальных условиях/ Экологичвская физиология человека. Адаптация человека к экстремальным условиям среды. М., 1979С.66-67.
5. В.В. Байлук Сущность самореализации личности и ее структура: Педагогическое образование в России 2011, стр. 12-16.
6. Виктор Франкл.: Сказать жизни «ДА»:Психолог в концлагере.:Альпина нон-фикшн,2009 с240
7. Е.П.Ильин: Дифференциальная психофизиология. Челябинск, 1999,
8. Л.М. Аболин Психологические механизмы эмоциональной устойчивости человека.- Казань, 1987
9. Н.И.Бережная.:Стрессоустойчивость оперативных сотрудников таможенных органов.Ежегодник психологического общества.:в8ТСПб,2003.Т.1.С.453-457

[1] *Տե՛ս* ***Байлук В.В.*** *Сущность самореализации личности и ее структура: Педагогическое образование в России 2011, стр. 12-16.*

10. Наталия О., Человек в экстремальной ситуации: теоретические интерпретации и модели психологической помощи стр.152-166.
11. Р.А Зобов., Келасьев В.Н. Самореализация человека: введение в человекознание.-СПб.:СПбГУ,2001.
12. С.И.Кудинов, С.М.Хаммад: Психологическая устойчивость личности как основа самореализации, Вестник РУДН, серия Психология и педагокика, 2015, стр 26-29
13. У.Л.Хасмагомедовна.:Проблемы и переживание подростков, находящихся в экстремальных условиях, Санкт-Петербург 1997с 3-8
14. Ф.Е. Василюк .: Психология переживания.-М .,1984
15. Короленко Ц.П. Психофизиология человека в экстремальных условиях.-Л., 1978.-272стр.
16. forum.pravda.com.ua: Поведение человека на войне
17. www.sns.am

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.դ., պրոֆեսոր Ե.Ս. Հակոբյանը:

ՀՏԴ 37.02
Ռազմական գործ

Բագրատ ԵՐԻՑՅԱՆ
մ.գ.թ., պրոֆեսոր
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան

ԻՆԺԵՆԵՐ-ՍԱԿՐԱՎՈՐ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Առանցքային բառեր՝ *ինժեներ-սակրավոր, ռազմակիրառական հմտություններ, գիտափորձ, մոդելային սանդղակներ, արգելագոտու հաղթահարում, մաթեմատիկական վերլուծություն:*

Б. Ерицян

МЕТОДИКА ОЦЕНКИ ВОЕННО-ПРИКЛАДНЫХ НАВЫКОВ КУРСАНТОВ СОПЕРОВ

Главной задачей высших военных учебных заведений является подготовка высококвалифицированных офицерских кадров. Решая эту важную задачу в Военном университете им. В. Саргсяна будущим офицерам преподают много необходимых дисциплин, в том числе и физическую подготовку.

С целью совершенствования физической подготовки и, в частности, ее военно-прикладной составляющий, был проведен педагогический эксперимент, в результате которого для курсантов соперов были разработаны модельные оценочные шкалы, благодаря которым стало возможным конкретизировать и дифференцировать совершенствование военно-прикладных навыков.

Ключевые слова*: военно-прикладные навыки, саперы, педагогический эксперимент, математический анализ, модельные шкалы, преодоление препятствий.*

B. Yeritsyan

METHODOLOGY OF MILITARY APPLIED SKILLS ASSESSMENT OF SAPPER CADETS

The main task of the Military University is to train highly qualified officers.Solving this important task future officers are given necessary disciplines including physical training in the Military University after V. Sargsyan.

In order to improve physical training and, in particular, its military-applied component, a pedagogical experiment was conducted as a result, model estimated scales have been compiled for sapper cadets,

thanks to which it became possible to specify and to differentiate the improvement of military-applied skills.
***Key words**: Military-applied skills, sapper, pedagogical experiment, mathematical analysis,model scales, overcoming obstacles.*

Արդիականությունը: Ցանկացած ռազմական ուսումնական հաստատության գերակա խնդիրն է բարձր որակավորում ունեցող սպաների պատրաստումը: Այդ խնդրի լուծման նպատակով, Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում դասավանդվող մարտական պատրաստության շուրջ տասնյոթ առարկաների՝ կրակային պատրաստության, ռազմական տեղագրության, միջազգային մարդասիրական իրավունքի, շարային պատրաստության, մեքենավարման և այլնի շարքում հատուկ տեղ է զբաղեցնում ֆիզիկական պատրաստությունը:

Ֆիզիկական պատրաստությունը կարևորել և, մասնավորապես դրա ռազմակիրառական բաղադրիչին են անդրադարձել բազմաթիվ երկրների գիտնականներ՝ Ս. Վ. Նեպոմնյաշչի, Վ. Ի. Սուխոցկի և ուրիշներ՝ նշելով դրա կարևորությունը ուժային կառույցների և հատկապես՝ ազգային բանակի համար:

Սակայն, ծանոթանալով ավագ դպրոցի շրջանավարտներին, որոնք որոշել են շարունակել ուսումնառությունը ռազմական ուսումնական հաստատությունում, փաստում ենք նրանց զգալի մասի մոտ ֆիզիկական պատրաստվածության ցածր մակարդակ, ինչը հետագայում լրացուցիչ խնդիրներ է ստեղծում դասախոսների և հրամանատարների համար, ինչպես նաև բարդացնում ծառայությունն ու ուսումնառությունը, խոչընդոտում տեխնիկական հնարքների յուրացումը, բացասաբար անդրադառնում դաշտային պայմաններում գործողությունների կատարմանը:

Բազմաթիվ երկրների գիտնականներ մեծ ուշադրություն են դարձրել նախազինակոչային տարիքի պատանիների ֆիզիկական պատրաստվածությանը: Այսպես, ըստ Ս.Վաժենինի, Չեխիայի զորակոչային տարիքի պատանիների 60%-ն է համապատասխանում բանակի պահանջներին: Ըստ Յու.Չերնովի՝ ԱՄՆ-ում նույն տարիքի պատանիների 54%-ն ունեն առողջական շեղումներ:

Ցածր են ցուցանիշները նաև ԱՊՀ երկրների զորակոչիկների մոտ: Բելառուսում յուրաքանչյուր հինգերորդ շրջանավարտը պատրաստ չէ ծառայելու ազգային բանակում (Ե. Վորսին): ՌԴ Ադիգեայի ինքնավար մարզի զինակոչիկների 22% -ը ճանաչվել է ծառայությանը ոչ պիտանի, իսկ բարձր դասարանի աշակերտների մոտ 65%-ն ունի առողջական տարբեր խանգարումներ(Ս. Պետրունին):

Այս առումով ցածր են ցուցանիշները նաև Հայաստանի Հանրապետությունում: Ըստ Ֆ.Գ.Ղազարյանի և Յու.Ե.Կուպալյանի, հանրապետական սպարտակիադայի արդյունքների համաձայն, զինակոչային տարիքի դպրոցականները մի շարք վարժու-թյուններից ցուցադրել են ցածր արդյունքներ, իսկ նրանց 10% -ն ի վիճակի չէր կատարել մրցակցային որոշ վարժություններ:

Վերլուծությունը հաստատում է այն փաստը, որ տվյալ խնդիրը բնորոշ է հետխորհրդային տարածաշրջանի բոլոր երկրներին, սակայն եթե այլ երկրների համար տվյալ խնդիրը լուծելի է ազգաբնակչության մեծ թվի շնորհիվ, ապա մեզ համար նման մոտեցումն անընդունելի է մի քանի պատճառով...

Ազգաբնակչությունը մեծաթիվ չէ, հանրապետության տարածքը փոքր է և այլն... Սակայն սպասելով ավելիին և ավելի լավին՝ մենք կարող ենք կորցնել եղածը: Այդ իսկ պատճառով ֆիզիկական պատրաստության և մարզման մոտեցումներն անհատականացվել են:

Հետազոտության նպատակը: Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում անցկացվել է գիտափորձ ինժեներ-սակրավորի մասնագիտությունն ընտրած 1-4-րդ կուրսերի կուրսանտների ներգրավմամբ որոշելու համար նրանց ռազմակիրառական հմտությունները ձևավորող գործոնները, բացահայտելու առավել կարևոր շարժողական ընդունակությունները, կազմելու նրանց ֆիզիկական վիճակի գնահատման մոդելային սանդղակները և նախապատրաստելու գործնական առաջարկությունները մասնագետների համար:

Հետազոտության խնդիրները: հետազոտության իրականացման համար առաջադրվեցին հետևյալ խնդիրները՝ երկամյա գիտափորձը՝ որոշելու համար սակրավոր կուրսանտների ֆիզիկական զարգացման փոփոխությունները, պարզելու ֆիզիկական պատրաստության դասերի ծանրաբեռնվածությունը և դրանց արդյունավետության բարձրացման հնարավոր ուղիները, մշակելու և գիտափորձի արդյունքում հիմնավորելու ռազմակիրառական հմտությունները ձևավորող մեթոդ-ների և միջոցների արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդները: Դրված խնդիրների լուծման համար ընտրվեցին հետևյալ մեթոդները՝ մանկավարժական գիտափորձ, մանկավարժական դիտարկում, շարժողական ընդունակությունների թեստավորում, մաթեմատիկական վերլուծություն:

Կիրառելով նշված մետոդները՝ պետք է ուսումնասիրվեին ինժեներ-սակրավոր կուրսանտների ռազմակիրառական ընդունակությունները ձևավորող վարժությունները, չափագրվեին դրանք՝ գտնելու գիտականորեն հիմնավորված տվյալները, որոնք թույլ կտային գնահատել կուրսանտների ֆիզիկական պատրաստության կազմակերպման գործընթացը, հագեցնելու այն համալիրներով ու վարժություններով, ինչն էլ, իր հերթին, կնպաստեր արդյունքների աճին և ռազմակիրառական հմտությունների բարելավմանը:

Հիմնական բովանդակություն: ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանում ինժեներ-սակրավորների հետ չափագրումներն անցկացվել են Մոսկվայի անթրոպոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի մշակված մեթոդիկայով, ըստ որի՝ ֆիզիկական զարգացման հիմնական հատկանիշներն են ընդունվել մարմնի զանգվածը, հասակը և կրծքավանդակի շրջագիծը:

Շարժողական ընդունակությունները որոշելու նպատակով ընտրվել են վեց վարժություններ՝ վազք 100 մետր, թիվ 24՝ ընդհանուր ստուգողական վարժություն միասնական արգելագոտում, ձգումներ պտտաձողի վրա, սեղմումներ գետնի վրա, թիվ 25՝ հատուկ ստուգողական վարժություն՝ արգելագոտիներում և Հարվարդյան ստեպ թեստը:

Ստորև ներկայացվում է ուսումնասիրվող վարժությունների նկարագրությունը՝

- վազք 100 մետր. անցկացվում է մարզադաշտի վազքուղու ուղիղ հատվածում: Մեկնարկը տրվում է դրոշի շարժումով՝ միաժամանակ սկսելով ժամանակի հաշվարկը: Ստուգողական վազքատարածությունը հաղթահարելուց հետո դադարեցվում է ժամանակի հաշվարկը. չափման միավորը՝ վայրկյան:

- ձգումներ պտտաձողի վրա. կատարվում է պտտաձողից ուղիղ ձեռքերով կախված վիճակում, ափակողմերը մարմնին հակառակ բռնումով վեր /կախված վիճակը՝ 1-2 վայրկյան անշարժ/: Ձգվելիս ծնոտը պետք է անցկացնել պտտաձողից վեր: Թույլատրվում է կծկվել, ոտքերը բացազատել, մարմինը թեքել անշարժ դիրքից: Ոտքերով թափառման շարժումներն արգելվում են:

- սեղմումներ գետնի վրա. հենում-պառկած դրությունից ձեռքերի ծալում և տարածում: Վարժությունը կատարելիս ուղիղ պահել իրանը, ծալելով ձեռքերը՝ իջնել իրանով այնքան, որ արմնկային հոդում անկյունը՝ բազուկը նախաբազկի նկատմամբ, կազմի 90 աստիճան:

- թիվ 24 վարժություն. ընդհանուր ստուգողական վարժություն միասնական արգելագոտում: Կատարվում է առանց զենքի: Խրամատում կանգնած նռնակի նետումով, լաբիրինթոսի հաղթահարումով, ցանկապատի մագլցումով, փլված կամրջի և սանդուղքի հաղթահարումով, խրամուղու անցումով և այլ արգելքներ /համաձայն ՖՊՀ- 2011թ./:

- թիվ 25 վարժություն. հատուկ ստուգողական վարժություն՝ արգելագոտիներում: Կատարվում է ավտոմատով, երկու փամփշտատուփով և հակագազով: Զրահափոխադրիչից վայր ցատկելով, 200 մետր վազելով, խրամատ ցատկելով և հագնելով հակագազը, դուրս ցատկելով խրամատից՝ անցնել գերանի վրայով՝ հաղթահարել ձորակը, ցատկել փոսը՝ հետնամասից արկղը տեղափոխել առաջամաս, հաղթահարել փլվածքը, անցնել լաբիրինթոսը, թեք տախտակով բարձրանալ ցանկապատի վրա, անցնել գերանի վրայով և այլ արգելքներ /համաձայնՖՊՀ-2011թ./:

- աշխատունակությունը որոշելու համար անցկացվել է Հարվարդյան ստեպթեստը /ՀՍԹ/: Աշխատունակությունը գնահատվել է հինգ րոպեի ընթացքում, յուրաքանչյուր րոպեում 30 անգամ բարձրանալով և իջնելով աստիճանների վրա՝ աշխատանքի արդյունքում չափելով զարկերակի բաբախումների քանակը և ներկայացված բանաձևով հաշվարկելով: ՀՍԹ=t x 100/f1+f2+f3 x2 :

Ընտրված վարժություններից երկուսը՝ թիվ 24-ը և 25-ը, համարվում են հատուկ մասնագիտական, քանի որ արգելագոտու հաղթահարման բոլոր վարժությունները ինքնըստինքյան ռազմակիրառական են, իսկ պայմաններն առավելագույնս մոտեցված պատերազմականին: Այսպես, փշալարի տակից սողեսող անցնել 25 մետրանոց հատվածը, կառչումով մագլցել երկու մետրանոց պատի վրայով, վազքով անցնել երկու մետր բարձրություն ունեցող փլված կամրջի վրայով, վազքով բարձրանալ և հաղթահարել փլված սանդուղքները և այս բոլորը պայթյունների, ծխի և կրակի ներքո:

«Արգելագոտու» հաղթահարում վարժության տիրապետման բարդ գործընթացը մեծաքանակ արգելքների առկայությամբ տեղի է ունենում բազմաթիվ դժվարությունների հաղթահարման պայմաններում և կրկնություններով, երբ ապագա սպաները դրսևորում են տարբեր կամային հատկանիշներ՝ համառություն, տոկունություն, վճռականություն, իսկ երբ չի ստացվում՝ հիասթափություն, երբեմն էլ՝ հուսահատություն, սակայն վերջնարդյունքում, չորս տարվա համառ աշխատանքի շնորհիվ՝ կոփում են կամքը և տիրապետում անհրաժեշտ հմտությունների:

Գնահատման մոդելային սանդղակների մշակման համար ուսումնասիրվել են I-IV կուրսի բոլոր կուրսանտները: Ուսումնասիրության ծրագիրը ներառում է շարժումների արագության, ճարպկության, դիմացկունության, մկանային

ուժի և աշխատունակության գնահատումը, ցուցանիշների մշակումը և այդ ցուցանիշների շարադրումը ըստ գնահատման 5 (բարձր, միջինից բարձր, միջին, միջինից ցածր և ցածր) աստիճանների: Տվյալները հաշվարկվել են ըստ կուրսերի; Ներկայացնում ենք II կուրսի ինժեներ-սակրավոր կուրսանտների ցուցանիշները: Աղյուսակը ներկայացված է այնպես, որ շարժողական ընդունակությունների ամեն մի ցուցանիշ ունենում է իր համապատասխան գնահատականը:

Գիտափորձի արդյունքում ստացված մոդելային սանդղակները իրավազոր են, քանի որ հաշվարկված են սոցիալական միևնույն միջավայրում և, համաձայն ընդուն-ված կարգի, դրանց կիրառման թույլատրելի ժամկետը 6-8 տարի է, որից հետո բերված ցուցանիշները կարիք ունեն վերանայման:

ՄՈԴԵԼԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿ
II կուրսի ինժեներ-սակրավորների ֆիզիկական զարգացման և շարժողական ընդունակությունների

		Ցուցանիշներ				
		Բարձր	**Միջինից բարձր**	**Միջին**	**Միջինից ցածր**	**Ցածր**
Ֆիզիկական զարգացում	հասակը (սմ)	182.7 և բարձր	182.6-177.8	177.7-170.1	170.0 - 165.6	165.5 և ցածր
	քաշը (կգ)	77.2և բարձր	77.1-72.2	72.1-64.3	64.2-58.6	58.5 և ցածր
	կրծքավանդակի շրջագիծը (սմ)	93.5 և բարձր	93.4-91.2	91.1-85.9	85.8-82.7	82.6 և ցածր
Շարժողական ընդունակություններ	վազք 100 մ (վրկ)	14.0 և բարձր	14.1 - 14.4	14.5 - 15.1	15.2-15.7	15.8 և ցածր
	թիվ 24 վարժ.	2.22 և բարձր	2.23-2.30	2.31 - 2.36	2.37-2.41	2.42 և ցածր
	ձգումներ պտտաձողի վրա	15 և բարձր	14 - 12	11 - 9	8 - 7	6 և ցածր
	սեղմումներ գետնի վրա	55 և բարձր	54 - 46	45 - 38	37 - 31	30 և ցածր
	թիվ 25 վարժ.	3.24 և բարձր	3.23– 3.29	3.30- 3.38	3.39-3.46	3.47և ցածր
	ՀՍԹ	101.1 և բարձր	101.2-95.4	95.3-87.6	87.5-81.2	81.1 և ցածր

Գիտական նորույթը: Աշխատանքի գիտական նորույթը այն է, որ գիտափորձի արդյունքում առաջին անգամ ներկայացվել են Ռազմական համալսարանի ինժեներսակրավոր մասնագիտությամբ կուրսանտների ցուցանիշները մասնագիտակիրառական ընդունակությունների վերաբերյալ և կազմվել են դրանք արտացոլող մոդելային սանդղակներ:

Եզրակացություն:

Մոդելային սանդղակը հնարավորություն է ընձեռում.

1. գնահատել յուրաքանչյուր կուրսանտի շարժողական ընդունակությունների զարգացման մակարդակը ուսուցման տարբեր փուլերում,

2. բացահայտել շարժողական ընդունակություններից անբավարար ցուցանիշներ ունեցող կուրսանտներին և ուղենշել նրանց մոտ այդ որակների զարգացման մեթոդներն ու միջոցները,

3. ըստ շարժողական ընդունակությունների՝ անբավարար արդյունքներ ցուցաբերած, մոտավորապես հավասար պատրաստություն ունեցող կուրսանտներին բաժանել խմբերի՝ անհատականացնելու և տարբերակելու համար մարզման գործընթացը:

Գրականություն

1. ՀՀ Զինված ուժերի ֆիզիկական պատրաստության ձեռնարկ, Երևան, 2011թ., 160 էջ:
2. Օհանովա Ի.Ա., Դանիելյան.Կ.Գ.: Լաբորատոր պրակտիկում, մեթոդական ցուցումներ, Երևան, 1998 թ., 38 էջ:
3. Важенин С.А., Лобжа М.Т.; Проблемы и пути совершен ствования физической подготовки авиаторов. СПБ. ВДКИФК 1993 г., 211с.
4. Ворсин Е.Н.: Физическая культура и спорт в системе перестройки народного образования. Мат. доклада НМК. Минск. 1990г., 24-32с .
5. Казарян Ф.Г., Купалян Ю.Е.: Характеристика уповня двигательной подготовленности молодежи Армении допризывного возраста: Тезисы доклада научной конференции Армянского государственного института физической культуры. Ереван. 1996, 60с.
6. Петрунин С.Н.: Криминакьные цветы России. Мир Новостей. Н 51 1998г., 6с.
7. Чернов Ю.А.: Основные концепции содержания физического воспитания в современной буржуазной педагогике США.Автореферат диссертации. КПН. М. 1988 г., 23 с.
8. Непомнящий С. В.: Средства и методы профессионально-прикладной физической подготовки работников отдельных подразделений МВД СССР: Автореферат диссертации КПН, М., 1989, 24с.
9. Сухоцкий В. И.: Теоретический раздел требования военно-спортивного комплекса. М., 1975г., 62с.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.դ., պրոֆեսոր Ե.Ս. Հակոբյանը:

ՀՏԴ 372.8: 74/75
Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա

Մարինե ՂԱԼԱՅԱՆՑ
ԱրՊՀ կերպարվեստի ամբիոնի հայցորդ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է հանրակրթական դպրոցի վերափոխումների, ուսուցման միջառարկայական կապերի ամրապնդման, կիրառվող եղանակների ու խնդիրների հարցը: Ինչպես նաև լուսաբանվում են ժամանակակից դպրոցին բնորոշ միջառարկայական կապերի ապահովման անհրաժեշտ խնդիրները: Առանձնապես շեշտադրումներ են արվում գրականության, կերպարվեստի, երաժշտության, տեխնոլոգիայի դպրոցական այլ առարկաների միջև ինտեգրատիվ կապերի ապահովմանը: Հոդվածում կատարվում են մասնագիտական, մեթոդական, տեսական ու գործնական անհրաժեշտ եզրահանգումներ:

Բանալի բառեր՝ ուսուցում, ինտեգրում, կերպարվեստ, գրականություն, միջառարկայական կապ, հեքիաթ, կերպար, երևակայություն, ստեղծագործական կարողություն, մտապատկերներ, հիշողություն, գեղարվեստական:

М.Галаянц

ПРОБЛЕМА ИНТЕГРИРОВАННОГО ОБУЧЕНИЯ ИЗОБРАЗИТЕЛЬНОМУ ИСКУССТВУ В ШКОЛЕ

В статье представлены вопросы трансформации общеобразовательной школы, укрепления междисциплинарных педагогических отношений и вопросы используемых путей и проблем. Также рассмотрены вопросы обеспечения междисциплинарных связей, характерных для современной школы. Особое внимание уделяется литературе, изоискусству, музыке, технологии и обеспечению интеграции других школьных предметов.

Статья содержит профессиональные, методологические, теоретические и практические выводы.

***Ключевые слова**: интеграция, изоискусство, литература, междисциплинарные связи, сказка, образ, воображение, творческие способности, представление, память, художественный.*

M.Galayants

THE PROBLEM OF INTEGRATED EDUCATION IN FINE ARTS AT SCHOOL

The article presents the issues of reforms of public education, reinforcement of interdisciplinary teaching, applied techniques and problems. It also covers the solution of necessary issues of interdisciplinary connections typical to modern school. Special emphasis is placed on the literary, fine arts, music, and on the integration links between other school subjects.

The article contains professional, methodological, theoretical and practical appropriate conclusions.

Keywords: *teaching, integration, fine arts, literature, interdisciplinary communication, fairy tales, imagination, visions, creative ability, memory, fiction.*

Հանրակարթական կամ մասնագիտական դպրոցի վերափոխումների իրականացումը նշանակում է ամենից առաջ բարձրացնել ուսուցման և դաստիարակության որակը, ձևավորել սովորողների իմացական և աշխարհընկալման նոր մակարդակներ: Եվ որպեսզի սովորողներն ըմբռնեն բնական և հասարակական գիտությունների հիմունքները, հասարակության զարգացման օրենքներն ու օրինաչափությունները, առաջին հերթին անհրաժեշտ է փոխել ուսուցման բնույթը, որը պետք է լինի ոչ թէ վերարտադրող, այլ զարգացնող և դաստիարակող:

Դպրոցականների գեղարվեստական պատկերացումների ձևավորման մասին այսպես է գրում Դ.Դ.Դավոյանը.-«Ուսուցման նման դրվածքի դեպքում դպրոցականները կկարողանան լուծել ճանաչողական խնդիրներ, կատարել վերլուծություններ և ընդհանրացումներ, համեմատություններ և մտահանգումներ, տվյալ երևույթը կամ իրողությունը բացատրել՝ կիրառելով տարբեր առարկաներից ստացած գիտելիքներ»: [2,16]:

Զարգացնող և դաստիարակող ուսուցումը լայն հնարավորություն է տալիս սովորողներին խորանալու ուսուցանվող նյութի էության մեջ, պարզելու տարբեր առարկաների միջև գոյություն ունեցող միջառարկայական և միևնույն դասընթացի ինտեգրատիվ կապերը: Իրականում հնարավոր չէ մեկ առարկայի սահմաններում ուսուցանել և ձևավորել բնության և հասարակության վերաբերյալ եղած ողջ գիտելիքներն ու դրանց կիրառման կարողությունները: Այն հնարավոր է իրականացնել միայն ուսուցման համակարգ տարբեր առարկաներ մտցնելու շնորհիվ, և պատահական չէ, որ հանրակրթական դպրոցի զարգացման ընթացքում ձևավորվեց կրթության բովանդակության յուրացման առարկան՝ կառուցվածքը:

Ուսումը տարբեր առարկաների բովանդակությունն արտացոլում է ռեալ իրականությունն իր տարբեր կողմերով՝ փոխկապակցված ձևով, իսկ միջառարկայական կապերը լայն հնարավորություններ են ընձեռում

ուսուցման ու դաստիարակության նկատմամբ դրսևորելու համալիր մոտեցում, ծառայում են օբեկտիվ իրականության նկատմամբ միասնական հայացքների ձևավորմանը: Այլ առարկաների հետ առնչվող նյութը, կամ նյութերը աշակերտը պետք է նախօրոք սովորած, յուրացրած լինի համապատասխան առարկաների դասընթացներից, հակառակ դեպքում նա չի կարող բացահայտել որևէ միջառարկայական կապ: Դիցուք՝ մայրենի լեզվի կամ գրականության նյութը, որը գեղարվեստական ստեղծագործության մեջ գործ է ածվում որպես առարկան կամ երևույթը գեղարվեստորեն բնորոշելու և խոսքը հուզական ու պատկերավոր դարձնելու միջոց, և քանի որ աշակերտն այդ ամենը սովորել է դասերի ընթացքում, պետք է հանձնարարվեն այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման միջոցով որոշվեն աշակերտների կարողությունները՝ ըստ տարբեր առարկաներից ստացած գիտելիքների արդյունավետ կիրառման (օրինակ՝ կերպարվեստի միջոցով գրական տեքստի նկարագրադում):

Օրինակ՝ հեքիաթի նկարագրադումը համարվում է աշակերտի գեղագիտական զգացմունքների ձևավորման մանկավարժական կարևորագույն միջոցներից մեկը: Յու. Ա. Լեբեդևան նշում է. ,,Յուրաքանչյուր հեքիաթ ունի սոցիալ-մանկավարժական արդյունավետ կողմնորոշում, այն ուսուցանում է, դաստիարակում, խթանում գործունեությունը և նույնիսկ այն բուժում,,: [7,115]:

Միջառարկայական կապերի բացահայտման նման եղանակը հնարավորություն է ընձեռում ստուգելու մի կողմից աշակերտների կարողությունները, թե որքանով են նրանք կարողացել միևնույն կամ նման երևույթների մասին տարբեր առարկաներից ստացած գիտելիքներն ու փաստերը համադրելով կատարել եզրակացություններ ու մտահանգումներ, մյուս կողմից՝ կատարելով նման աշխատանք, աշակերտները ձեռք են բերում փաստերը վերլուծելու և համադրելու կարողություններ, արագ կողմնորոշվելու ունակություններ, նրանց մեջ ձևավորվում է այն գիտակցությունը, որ ինչպես հասարակական, այնպես էլ բնական երևույթները անկախ ու մեկուսի չեն, այլ ունեն իրենց զանազան դրսևորումներն ու առնչությունները տարբեր առարկաների դասընթացներում:

Ուսումնասիրություններն ու փորձը ցույց են տալիս, որ միջառարկայական կապերի իրականացմանը նպաստում են ուսուցման որոնողական, հետազոտական և հիմնախնդրային մեթոդները: Կիրառելով նմանատիպ մեթոդներ՝ կարելի է աշակերտներին, և ընդհանրապես սովորողներին հանձնարարել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարումը պահանջի տարբեր առարկաներից ստացած գիտելիքների ու կարողությունների համադրական կիառում:

«Բացահայտելով միջառարկայական կապերը սովորողները ոչ միայն հիմնովին ըմբռնում են տվյալ առարկայի բովանդակությունը կազմող գիտելիքներն ու հիմնական գաղափարները, այլև ընդհանուր

պատկերացում են կազմում բնության և հասարակության՝ ռեալ իրականության վերաբերյալ, ձեռք են բերում ստեղծագործելու, մտավոր աշխատանք կատարելու փորձ, կարողանում են կողմնորոշվել մասնագիտության ընտրության, հասարակության մեջ իրենց տեղի ու դերի պատասխանատվության հարցում»:[4,7]:

Ուսուցման այս համակարգում առաջին հարթությունում գտնվում է սովորողը, իր ընդունակությունների խթանման, ուղղորդման, զարգացման իրականացմամբ և նպաստավոր պայմանների շարքում պետք է առանձնացնել «Կենսունակ կապի» եղանակի օգտագործումը կամ սովորողների ստեղծագործական գործունեության դրսևորման դրույթը: Մանկավարժի ուշադրությունը պետք է ուղղված լինի սովորողների ինքնուրույնության և ստեղծագործական դրսևորման ցանկացած փորձի, ուսուցանվող նյութից անհրաժեշտ տեղեկություններ քաղելու կարողությանը:

Կենսունակ կապի հիմքում ենթադրվում է պարապմունքի սկզբում սովորողների կողմից առաջ քաշված հարցերի կամ խնդիրների առաջադրում: Այս եղանակի կիրառման դեպքում նպաստավոր մթնոլորտի ստեղծումը հանգեցնում է ճանաչողական գործունեության առավել կենսունակացման՝ ապահովելով ուսուցման արդյունքների հրապարակային գնահատում, թույլ տալիս որոշելու գիտելիքների բացթողումները, կենսունակ դարձնում և բարձրացնում այն սովորողների հեղինակությունն ու ջանքերի մոտիվացիան, ովքեր իրենց ինքնատիպ հարցերի կազմման ժամանակ դրսևորում են ճանչողական և ստեղծագործական հնարավորություններ, հնարամտություն, հատկապես եթե խնդիրը տրամաբանական կապ ունի ուսուցանվող նյութի և աշխարհընկալման հետ: Կարելի է նշել նաև, որ այս եղանակը համադրում է ուսումնական գործունեության ստուգողական գործառույթը, վստահելի հարաբերություններ ստեղծում ուսուցչի և աշակերտի միջև:

Նման իրավիճակում որոշակի սահմաններում պետք է սովորողներին ստեղծագործելու ազատ ընտրության հնարավորություն տալ՝ նրանց հետաքրքրությունների և ընդունակություններին համապատասխան:

Այս համատեքստում պետք է ուղղորդվել զուգորդական-համեմատական եղանակով, որը հնարավոր է միջառարկայական կապերի կիրառմամբ՝ ուսուցանվող նյութի պատկերացման և ըմբռնման, նրանում էական հատկանիշների և հարաբերությունների բացահայտման համար:

Այս եղանակը հատկապես արդյունավետ է ուսուցանվող նյութի յուրացման նախնական փուլում, երբ որոշվում է հիմնական հասկացությունը, քանի որ այն ինչ որ տեղ ուսումնական առարկայի տեսական հիմնադրույթների հաջորդականությունը որոշարկող չափանիշ է:

Մ.Մկրտչյանը նշում է. ,,Հասկացության որոշարկման խորությունը, հատկապես դպրոցական ուսուցման պայմաններում, համակարգում է

կերպարների միջև զուգորդումմները, որոնք տեսական նյութի ուսուցման մեջ լրացնում են տրամաբանական տիրույթը: Բացի այդ, գրաֆիկական առարկաների ընկալողական համակարգի մեջ մտնող շատ հասկացություններ ուսումնական այլ առարկաների հետ մեկ ընդհանրություն են կազմում, այսինքն՝ կարող են օգտագործվել այլ նշանակությամբ,,: [3.76]:

Գրաֆիկական հասկացությունների ուսուցման ժամանակ դրա ներմուծման անուղղակի միջոցը մեծ դեր է խաղում և կարող է կարևոր նշանակություն ունենալ տարբեր գիտելիքների, հարաբերությունների և գործողության ձևերին դիմելիս: Մեզ համար բացառիկ կարևոր է, որ նույն համատեքստում է արվեստի տարբեր տեսակների ուսուցումը՝ ժողովրդական արվեստը, կերպարվեստը, գրականությունը, երաժշտությունը: Ընդ որում, գրական ստեղծագործությունը կարող է ուսուցման մեջ ներառվել ոչ միայն որպես տվյալ հասկացության համար ծառայող պատկերազարդում նույն թեմայով, այլև իբրև ուսումնական նյութի իմաստավորման հուզական միջոց՝ սովորողներին միաժամանակ ծանոթացնելով գրական ստեղծագործություններին, զարգացնելով նրանց մեջ երևակայությանն և ստեղծագործական մտածողության սուբլիմացիայի (փոխակերպման) կարողությունները:

«Ուսումնական նյութերի հուզական տպավորություններով հարստացնելու գործընթացը, գիտության և արվեստի միջև փոխադարձ կապերի հայտնաբերումը նպաստում է գեղեցիկի նկատմամբ սուր զգացողության դաստիարակմանը,,- գրում է Լ.Ներսիսյանը: [6,17]:

Իր հերթին ի հայտ են գալիս դասավանդվող առարկայի ցանկացած ուսումնական նյութի հիմնավորում՝ սովորողներին հոգեբանորեն տրամադրելով կենսունակ ուսուցում:

Հուզականության խթանման և ուսուցման գրաֆիկական գործունեության նկատմամբ ճանաչողական հետաքրքրության ձևավորման կարևոր մեթոդական եղանակ է գրական երկի նկարազարդումը՝ ինտեգրելով կերպարվեստային գործունեության հետ: Սովորողների մեջ ստեղծագործական ընդունակությունների զարգացման համար կարևոր նշանակություն ունի ուսումնական նյութի հետ տարբերակային գործողություններ կատարելու եղանակի ներմուծումը, որը հնարավորություն է ընձեռում սովորողներին և մանկավարժին ուսումնական ապացույցներ և օրինակներ ընտրել գրաֆիկական գործունեության իրականացման ստույգ պայմանների համար:

Տեղեկատվության տարբերակման օրինակ կարող է հանդիսանալ այն հիմնական հասկացությունների օգտագործումը, որոնք վերաբերում են մարդու գործունեության ձևերին, գրաֆիկական առարկաներին: Ուսումնական նյութի հետ տարբերակային գործողություններ կատարելը նախատեսում է նկարչական ուղղվածությամբ առաջադրանքների ինտեգրում: Հատուկ գործառնական հնարավորությունները

բացահայտվում են տարբեր ուսումնական առարկաների կամ գործունեության տեսակների ինտեգրման գործընթացում: Այդպիսի առարկաներն ասես հակասության մեջ են մտնում իրենց կառուցողական կամ գեղարվեստական որոշակի բնութագրերի հետ: Կերպարվեստի հետ նրանց կապը հնարավորություն է ընձեռում բարձրացնել սովորողների գրաֆիկական գործունեության արդյունավետությունը, նրան հաղորդել գեղագիտական, հասարակական, հուզական ուղղվածություն:

Այսպիսով՝ ուսուցման մատուցման տվյալ եղանակը, որը ներգրավված է ուսուման գործունեության մեջ, իրականացնում է իրեն հատուկ գործառույթ, որը մեթոդական մեծ նշանակություն ունի, քանի որ սովորողների վերլուծակն ուսուցման մեջ ինտեգրվածության աստիճանն ուղիղ համեմատական է գիտելիքների յուրացման արդյունավետությանը, ամբողջականությանն ու հաստատունությանը:

Գրականություն

1. Ներսիսյան Լ.Ս. -Կրթություն և գեղագիտություն, Երևան, 2002,157էջ.
2. Դավոյան Դ.Դ.– Կրտսեր դպրոցականների գեղարվեստական պատկերացումների ձևավորումը արվեստի համալիր ուսուցման գործընթացում, Երևան, 2007 :
3. Մկրտչյան Մ. Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական , տեսական և գործնական հարցերը, մենագրություն, Երևան, 2011, 146 էջ
4. Ներսիսյան Լ.Ս. Արվեստի տեսակների փոխազդեցության հիմնախնդիրը որպես գեղագիտական դաստիարակության արժեքային համակարգ, Երևան, ՛՛Գեղարվեստական միտք հ. 3՛՛, 2008, 6-11 էջ
5. Ներսիսյան Հ. Լ., Ստեղծագործական ընդունակությունների ձևավորման առանձնահատկությունները մանկական տարիքում, ՛՛Հոգեբանությունը և կյանքը՛՛, Երևան, 2007, 3-8 էջ
6. Ներսիսյան Լ.Ս., Ներսիսյան Ս.Մ., ՛՛Կերպարվեստ-4՛՛, դասագիրք հանրակրթական դպրոցի համար, Երևան, 2008-2009, 94 էջ
7. Лебедеба Ю.А. –Проблема одаренности. Вопросы психологии. 2000, н.1, с.115
8. Зверев И.Д., Максимова В.Н.— Межпредметные связи в современной школе.- М., Педагогика, 1999; 60с.

9. Зверев Н.Д., Взаимная связь учебных предметов, М., Знание, 1977, 64с.
10. Интернет-обучение; технологии педагогического дизайна/под ред. М. В. Моисеевой/, М., Издательский дом ,,Конеерон”, 2004, 224с.
11. Мерлин Б.С. – Очерк интегралного исследованния индивидуальности. М., 1986, 254с.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.թ., Ա.Վ. Թադևոսյանը:

ՀՏԴ 159.9
Հոգեբանություն

Վիտյա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ
հոգեբ.գ.թ.
ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոն

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Բուհում մասնագիտական պատրաստման գործընթացի մշտական վերահսկողությունն ու մշտադիտարկումը կրթության որակի կառավարման կարևորագույն բաղադրիչներից են: Ուսանողների շրջանում ուսումնական մոտիվացիայի մակարդակի որոշման սոցիալ-հոգեբանական հարցման մեթոդը հնարավորություն է տալիս լուծելու այդ խնդիրը և բացահայտել այն գործոնները, որոնք բացասաբար են անդրադառնում ուսումնական գործընթացի որակի վրա: Սույն հոդվածում ներակայացված են Արցախի պետական համալսարանում ուսումնական գործունեությունից սովորողների ուսումնական մոտիվացիայի մակարդակի վրա ազդեցություն ունեցող գործոնների հետազոտման որոշ արդյունքներ՝ համապատասխան վերլուծություններով և եզրակացություններով: Առանձնացված են հոգեբանական այն գործոնները, որոնք, մեր կարծիքով, ներազդում են կրթական ծրագրերի իրականացման որակի վրա:

Բանալի բառեր. *բուհ, ուսանող, մոտիվացիա, մեթոդ, սոցիալ-հոգեբանական հարցում, եզրափակիչ գնահատումով ստուգում, բավարարվածություն, միջազգային հավատարմագրում, ուսումնական առաջադիմություն, հոգեբանական գործոն:*

В.Ярамишян

НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ ПОВЫШЕНИЯ УРОВНЯ УЧЕБНОЙ МОТИВАЦИИ У СТУДЕНТОВ

Постоянный мониторинг и контроль над процессом профессиональной подготовки в вузах является одним из важнейших составляющих процесса управления качеством образования. Метод социально-психологического опроса по определению уровня учебной мотивации у студентов дает возможность решить эти вопросы и выявить те факторы, которые отрицательно влияют на качество образовательного процесса. В данной статье с соответствующим анализом и заключением представлены некоторые результаты исследования факторов, влияющих на уровень учебной мотивации

обучающихся в Арцахском государственном университете. Выделены психологические факторы, которые, по мнению автора, влияют на качество выполнения образовательных программ.
Ключевые слова: *вуз, студент, мотивация, метод, социально-психологический опрос, проверка с заключительным оцениванием, удовлетворенность, международная аккредитация, академическая успеваемость, психологический фактор.*

V.Yaramishyan

SOME PSYCHOLOGICAL FACTORS OF INCREASING THE LEVEL OF STUDENTS' MOTIVATION IN EDUCATION

Permanent monitoring and control over the process of vocational training in universities is one of the most important components of the process of quality management in education. The method of socio-psychological survey of determining the level of academic motivation among students makes it possible to resolve these issues and identify those factors that negatively affect the quality of the educational process. The article presents the results, as well as corresponding analysis and conclusion of the study conducted at the Artsakh State University to determine the level of academic motivation among students. The psychological factors that, in the author's opinion, influence the quality of the implementation of educational programs are singled out.
Keywords. *university, student, motivation, method, socio-psychological survey, verification with final assessment, satisfaction, international accreditation, academic progress, psychological factor.*

Հայոց պետականությանն ու մեր ժողովրդի ազգային արժեքներին, մասնավորապես՝ մատաղ սերնդի դաստիարակությանն ու կրթական ոլորտի արդյունավետությանն սպառնացող վտանգները 21-րդ դարում սկսել են առաջ գալ ավելի արագ, քան հանրային մտածողության իներտությունը: Քարացած կարծրատիպերը, կառավարման համակարգի հնացած մոդելները թույլ են տալիս ադեկվատորեն հակազդելու դրանց: Հայտնի ճշմարտություն է. եթե նորահայտ խնդիրները ժամանակին չեն լուծվում, ապա կուտակվում են և խափանում համակարգը:

Որոշակի մարտահրավերներ սպառնում են նաև բարձրագույն կրթությանը: Ներկայումս ՀՀ և ԱՀ բուհերի մասնագիտական պատրաստման համակարգը հիմնականում ներառում է ուսումնական-մեթոդական, գիտական-հետազոտական, ուսանողների հետ տարվող և ապահովման (վարչատնտեսական) ուղղություններ: Իրավիճակի քննությունը մեզ բերել է այն համոզմանը, որ բուհում առավել արդյունավետ է այնպիսի մոտեցումը, որն իրարից տարանջատում է ուսումնական գործընթացի կազմակերպումը (հիմնականում՝ պլանավորումը, ապահովումը և իրականացումը) նրա բովանդակային կառավարումից (ծրագրերի բովանդակությունից, գործընթացի մանկավարժամեթոդական ուղղորդումից): Դրանք երկուսն էլ

ամբողջական, համեմատաբար ինքնուրույն գործընթացներ են: Առաջին խմբի երևույթների հիմքում ընկած է կազմակերպչական, իսկ երկրորդ խմբի երևույթների հիմքում՝ մեթոդաբանական բաղադրիչը: Պատկերավոր ասած՝ առաջինը միսն ու արյունն է, երկրորդը՝ հոգին:

Գաղտնիք չէ, որ ուսուցման արդյունավետությունն առավելապես կախված է այնպիսի կազմակերպչական խնդիրների լուծվածության աստիճանից, ինչպիսիք են օրենսդրական կարգավորումները, շենքային ու լսարանային պայմանները, պրոֆեսորադասախոսական և ուսանողական անձնակազմերի առկայությունը, ապահովման համակարգերը, նյութատեխնիկական միջոցները, ընդունված կանոնակարգերը, կանոնադրությունները և այլն: Արդյունավետության երկրորդ բաղադրիչը, անշուշտ, մեթոդաբանությունն է, այսինքն՝ այն, թե ինչ խնդիրներ են լուծվում, ինչ սկզբունքներով, ձևերով ու հնարքներով, այսինքն՝ մեթոդոլագիական ինչ հիմքի վրա է իրականացվում ուսումնական գործընթացը: Անհրաժեշտ ենք համարում նաև նկատել, որ ուսումնագիտական աշխատանքները և ուսանողների հետ տարվող աշխատանքները մանկավարժական երկմիասնական գործընթացի հավասարարժեք բաղադրիչներն են: Ուսանողների հետ տարվող աշխատանքը, ըստ էության, նույնական է դաստիարակությանը, թեև ունի իր կազմակերպական, բովանդակային և մեթոդաբանական առանձնահատկությունները: Այն, ինչպես դաստիարակությունը, չի կարող գոյատևել առանց ուսուցման: Ճիշտ է նաև հակառակ պնդումը. ուսուցումը նույնպես չի կարող գոյություն ունենալ առանց դաստիարակության, առանց անձի ձևավորման նպատակաուղղված գործընթացի[1]:

Այս պնդումները մանկավարժական պարզ, ելակետային դրույթներ են, սակայն դեռևս կենսունակ է մնում այն մոտեցումը, երբ դասախոսը բավարարվում է միայն ուսումնական խնդիրներ իրագործելով, ինչի արդյունքում որակյալ մասնագետների կողքին ունենում ենք նաև զգալի թվով լիարժեք չձևավորված շրջանավարտներ:

Պատճառները մի քանիսն են: Նախ՝ Բոլոնյան կրթական կամ կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգը[2] (ճշգրիտ՝ այդ համակարգի դրույթների սուբյեկտիվ, ոչ ադեկվատ ընկալումը), թերևս, պահանջում է զուտ ուսումնական արդյունք և թվանշաններ (մոդուլներ, կրեդիտներ)՝ անձի համակողմանի ձևավորումը

---

[1] *Անշուշտ, կարելի է պլանավորել և իրականացնել միջոցառումներ, որոնք արտաքինից կարող են երևութականություն ստեղծել թե իրականացվում են որակյալ ուսանողական աշխատանքներ, մինչդեռ, իրականում, այդ տրամաբանությամբ կազմակերպվող աշխատանքները որևէ աղրես չունեն գիտական մանկավարժության ու հոգեբանության հետ:*

[2] *Տե՛ս ԱրՊՀ գործունեությունը կարգավորող ակտերի ժողովածու, Ստեփ, ԱրՊՀ, 2019թ., 674 էջ, էջ 29:*

թողնելով տվյալ բուհի իրավասությանը: Բանն այն է, որ այդ համակարգը մշակվել է եվրոընտանիքի երկրների համար և միտված է եղել ազգային-էթնիկական, գաղափարական-աշխարհայացքային, կրոնական և այլ տարբերությունների վերացմանը, ուստի ուղղված է եղել ազգային դաստիարակության դեմ:

Ունենք ևս մեկ՝ մոտիվացիայի[1] խնդիր, երբ կրթության որակի համար դասախոսը և ուսանողը քիչ են մտահոգված: Դասախոսը պարզապես որևէ իմաստ չի տեսնում ավելին մատուցելու, քան անհրաժեշտ է ուսանողին: Ուսանողն էլ հաճախ սովորում է այնքան, որքան անհրաժեշտ է պահանջվող գնահատականն ստանալու համար: Չմոռանանք, որ գործող համակարգով գնահատական ստանալն այնքան էլ դժվար չէ: Մոտիվացիոն ոլորտի[2] բարելավմանը չի նպաստում նաև պետության կողմից պահպանվող վճարովի-անվճար համակարգի առկայությունը:

Այսպիսի մոտեցումները հանգեցրել են նրան, որ բուհն սկսել է բախվել որոշ անտրամաբանական խնդիրների հետ, օրինակ՝ ուսանողը, հանձնելով ընթացիկ ստուգումները և վաստակելով պահանջվող նվազագույն միավորը, այլևս կորցնում է հետաքրքրությունը և չի հանձնում ստուգումներից ամենակարևորը՝ եզրափակիչ ստուգումը: Այս խնդիրը, լինելով ուսումնական, միաժամանակ դաստիարակչական է, որովհետև կապ ունի ուսումնական գործունեության նկատմամբ սովորողի կայուն վերաբերմունքի ու դիրքորոշումների համակարգի, նրա դրդապատճառների ու արժեքային կողմնորոշումների հետ: Այն, ինչ ակտիվացնում ու ձևավորում է ուսանողի վարքը, միանշանակ պետք է դասել հոգեբանամանկավարժական խնդիրների շարքին:

Գիտելիքների գնահատման գործող համակարգը[3], բացի նկարագրվածից, ձևավորել է մի իրավիճակ, երբ լիարժեք չի ապահովվում պահանջվող կրթական արդյունքը կամ պետական չափորոշիչը, որը նախատեսված է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական

---

[1] *Մոտիվ, մոտիվացիա-լատ. movere-շարժել դրդել, կոչվում է այն ամենը, ինչ բացատրում է մարդու վարքը, հոգեկան երևույթ է, որը դրդում է մարդուն ընտրել գործողության այս կամ այն տարբերակը, տե՛ս. Н.И.Конюхов, прикладные аспекты современной психологии, термины, законы, концепции, методы, Москва, 1992., 72 стр*

2 Մոտիվացիա հասկացությունը Ա.Նալչաջյանը դիտարկում է առնվազն որպես 1. վարքի բոլոր դրդապատճառների համակարգը, անձի ընդհանուր կառուցվածքի կենտրոնական ենթահամակարգերից մեկը, 2. անձի կոնկրետ գործունեության դրդապատճառների խումբը, 3. դրդապատճառների խմբի ակտիվությունը, դինամիկան: Տես Նալչաջյան Ա.Ա. Հոգեբանական բառարան, Եր, Լույս, 1984, 240 էջ:

[3] *Տես ԱրՊՀ գործունեությունը կարգավորող ակտերի ժողովածու, Ստեփ, ԱրՊՀ, 2019., 674 էջ, էջ 295:*

կրթության մասին օրենքով»[1]: Խոսքը մասնագիտական (և ոչ միայն) հմտությունների, կարողությունների, կոմպետենցիաների մասին է: «Բարձրագույն և հետբուհական կրթության համակարգում որակի ապահովման գործընթացների սկզբունքներն են՝ գնահատման օբյեկտիվությունը, անընդհատությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը» - նշված է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքում[2]: Ընթացիկ քննություններով ստուգվում է միայն տեսական գիտելիքը: Ավելին՝ եզրափակիչ ստուգման ժամանակ կրկին ստուգվում է միայն տեսական գիտելիքը: Ուսանողի մասնագիտական կարողությունները, հմտություններն ու իրավասությունները մնում են չստուգված: Ճիշտ է, որոշ միավորներ կան նախատեսված պարապմուքներին հաճախելու և ուսումնական ակտիվություն հանդես բերելու համար, սակայն, որպես կանոն, այն դրսևորվում է համացանցից ներբեռնված կամ դասախոսի տրամադրած էլեկտրոնային դասախոսությունից պատճենված ռեֆերատի տարբերակով: Կարծում ենք, որ պարապմունքներին հաճախումների համար ակադեմիական միավոր տրամադրելը արդարացված չէ, քանի որ չի արտահայտում դասընթացի յուրացման որևէ կողմ: «Ներկա է եղել՝ ուրեմն մի բան է սովորել» պնդումը կեղծ է: Գուցե որոշ դեպքերում սկզբունքային մոտեցում է ցուցաբերվում, սակայն, դժվար չէ նկատել, որ նույնիսկ նման դեպքերում չեն ստուգվում որակավորումների ազգային շրջանակի պահանջների հիման վրա մշակված պետական չափորոշչի հիմնական բաղադրիչները՝ ***հմտությունները, կարողությունները, կոմպետենցիաները:*** Այստեղից էլ առաջանում են կրթության որակի համար մտահոգ դասախոսների և ուսանողների այն դժգոհությունները, թե ժամանակակից ստուգման համակարգը զոմբիացնում է ուսանողին, որը, օրինակ, «հայոց լեզվից կամ գրականությունից բավարար գնահատական է ստանում՝ լեզուն չբացելով»:

Այս և հարակից այլ խնդիրների հոգեբանական պատճառականությունը պարզաբանելու նպատակով 2017-18 ուսումնական տարում ԱրՊՀ ուսանողների շրջանում անց ենք կացրել սոցիալ-հոգեբանական հարցում: Հարցման նպատակն էր նաև բացահայտել Արցախի պետական համալսարանում ուսմանը խոչընդոտող երևույթները և գտնել այն հարցի պատասխանը, թե ինչու ուսանողները եզրափակիչ քննությանը չեն ներկայանում կամ ներկայանում են, բայց հրաժարվում են այն հանձնելուց: Հարցմանը մասնակցել են բոլոր ֆակուլտետների տարբեր խմբերի ուսանողներ, արդյունքներն ամփոփվել

---

[1] *ԼՂՀ Օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», ԱրՊՀ գործունեությունը կարգավորող ակտերի ժողովածու, Ստեփ, ԱրՊՀ, 2019թ., 674 էջ:*

[2] *Տե՛ս նույն օրենքը, Հոդված 22, կետ 5,*

են պարզ մաթեմատիկական մեթոդներով, վերլուծվել են քննարկումների ժամանակ, կատարվել են եզրակացություններ:

Հարցման համար առաջադրվել են այնպիսի հարցադրումներ, որոնց պատասխանելու համար ուսանողը պետք է ընտրեր «Այո, համաձայն եմ», «Այո՛ մասամբ համաձայն եմ», «Չեմ կարող ասել», «Այնքան էլ համաձայն չեմ», «Ո՛չ, համաձայն չեմ» հինգ տարբերակներից մեկը:

Աղյուսակ 1-ում բերված են հարցման ընդհանրացված արդյունքները:

Հարցման արդյունքներ

աղյուսակ 1

Հարգելի ուսանողներ, խնդրում ենք ուշադիր կարդալ հարցադրումը և հնարավոր պատասխաններից ընտրել առավել հարմար տարբերակը:		*այո՛, համաձայն եմ*	*այո՛, մասամբ համաձայն եմ*	*չեմ կարող ասել*	*այնքան էլ համաձայն չեմ*	*ո՛չ, համաձայն չեմ*
1.	Որոշ ուսանողներ 8 միավոր վաստակելուց հետո այլևս չեն ցանկանում սովորել	27%	30%	10%	18%	15%
2.	Գնահատման համակարգի վերաբերյալ համալսարանի ընդունած կարգերը չեն նպաստում ուսման նկատմամբ դրական վերաբերմունքի ամրապնդմանը	30%	25%	14%	14%	17%
3.	Դասախոսները եզրափակիչ քննությունն այնպես են ընդունում, որ ուսանողները չեն ցանկանում դրանց մասնակցել	14%	10%	13%	30%	33%
4.	Ես որևէ խնդիր չեմ տեսնում, որովհետև ուսանողն ստանում է իրեն հարկավոր 8 միավորը	18%	20%	20%	14%	28%
5.	Այստեղ խնդիր կա, և դա այն է, որ 8 միավոր ստանալը նույնիսկ թույլ ուսանողի համար չափազանց հեշտ է	30%	15%	16%	17%	22%
6.	Այդ երևույթից պետք է զգուշանալ, որովհետև ուսանողը միայն մեխանիկական հիշողությունն է զարգացնում, գործնական հմտություն չի ցուցաբերում, չի խոսում...	47%	18%	13%	8%	14%

7.	Ուսանողի իրավունքն է ինքնուրույն որոշելու, թե ինչ և ինչքան պիտի սովորի		45%	23%	9%	16%	7%
8.	Նա իրացնում է իր իրավունքը, բայց չի կարելի թույլ տալ, որովհետև դառնում է վատ մասնագետ		47%	17%	16%	12%	8%
9.	Գիտելիքների գնահատման գործող համակարգը պետք է	ավելի խստացնել	69%				
		մի քիչ մեղմացնել	31%				
10.	Համակարգչային եղանակը պետք է	հանել, վերացնել	30%				
		կատարելագործել	70%				
11.	Ստուգումներն ավելի շատ պետք է լինեն	համակարգչային	31%				
		գրավոր	23%				
		բանավոր	46%				
12.	Ստուգումների քանակը պետք է	ավելացնել	16%				
		քչացնել	84%				
13.	Պետք է ավելի մեծ ջանք թափել ուսուցման, այլ ոչ թե գնահատման որակի բարձրացման համար		84%	9%	5%	1%	1%
14.	Ստուգողական թեստերը պետք է տալ ուսանողին		45%	23%	12%	5%	15%
15.	Ուսանողին պետք է տալ միայն թեստի նմուշը		31%	12%	9%	19%	29%

Ուսանողների ակադեմիական առաջադիմության և ուսումնական մոտիվացիայի բարձրացման խնդրի լուծումը հոգեբանական հարթությունում է, որը հաճախ դուրս է մնում ուշադրությունից՝ տեղիք տալով այլազան քննարկումների: Մարզիչները և կենդանիների վարքն ուսումնասիրող մասնագետները լավ գիտեն, որ երբ վարժեցնողը որևէ գործողություն է պահանջում իր սանիկից, ապա խրախուսում է նրա միայն այն քայլը, որը հարկավոր է սովորեցնել, այսինքն, խրախուսանքը տալիս է սանիկին միայն այն ժամանակ, երբ վերջինս ճիշտ է կատարում վարժությունը: Ակնհայտ է, որ չի կարելի սկզբում խրախուսել մարզիկին, որից հետո միայն սպասել արդյունքին, կամ կենդանուն կոնֆետ տալ, հետո պահանջել վարժության ճիշտ կատարումը: Մոտիվացիան կանհետանա: Մարդուն, իհարկե, կենդանու հետ համեմատել չի կարելի, սակայն դրանից բնական օրենքի ճշգրտությունը չի նվազում:

Իսկ ի՞նչ կարելի է անել, որպեսզի ուսանողը, այնուամենայնիվ, ստեղծված իրավիճակում հաղթահարի հաշվենկատ մոտեցումը,

ներկայանա բոլոր կազմակերպվող ստուգումներին ու պարապմունքներին, շատ ու լավ սովորի և ոչ միայն ձգտում ունենա ստանալու բարձր միավորներ, այլև ինքնակատարելագործվելու, ինքնաիրականանալու ներքին պահանջմունք ձևավորի:

Մեր կարծիքով, խնդրի լուծմանը կնպաստի մի քանի պրագմատիկ հնարքների կիրառումը:

Կարելի է վերականգնել հաճախումների և ակտիվության համար հատկացվող 4 միավորների հատկացման տրամաբանությունը, այսինքն՝ հրաժարվել միայն հաճախումների համար միավոր տրամադրելու պրակտիկայից, քանի որ այն շփոթում է ակադեմիական արդյունքը ուսանողի անձնային հատկանիշի՝ պարտաճանաչության վրա հիմնված վարքային դրսևորման՝ պարապմունքից չբացակայելու հետ: Միավորները կամ նրա որոշակի չափաբաժինները ուսանողին տրամադրել միայն այն բանից հետո, երբ նա կհանձնի եզրափակիչ քննությունը, որի ժամանակ կցուցադրի իր հմտություններն ու կարողությունները, օրինակ՝ զարգացած բանավոր խոսքը, ասմունքելու, մաթեմատիկական խնդիր լուծելու, քիմիական փորձ կատարելու, ակնարկ, դիմանկար, տեղեկություն, շարադրություն գրելու, բնութագիր կազմելու, տեքստ թարգմանելու կարողությունը և այլն: Որպես լավագույն տարբերակ՝ կարելի է ուսանողին խնդրել, որպեսզի այլոց ներկայությամբ ներկայացնի, հրապարակայնորեն պաշտպանի իր այն աշխատանքը, որը քննաշրջանի ընթացքում կատարել է ինքնուրույն: Առավելագույն միավոր կարելի կլինի տրամադրել միայն հետազոտական և ստեղծագործական բնույթի աշխատանքին: Այն դեպքերում, երբ ուսանողը ձևականորեն ներկայացել է եզրափակիչ քննությանը, սակայն հրաժարվում է այն հանձնելուց կամ հանձնում է, բայց վաստակում է զրո միավոր, ակտիվության միավոր չպետք է հատկացնել, ընդ որում, նույնիսկ այն դեպքում, երբ պարտաճանաչորեն հաճախել է պարապմունքներին: Որպես տարբերակ կարելի է քննարկել ակտիվության միավորների որոշակի չափաբաժիններն այն հարաբերակցությամբ տրամադրելու առաջարկությունը, որն ուսանողը ստացել է եզրափակիչ քննության համար հնարավոր միավորի թվից: Օրինակ, եզրափակիչ քննությունից, որի համար սահմանված է առավելագույնը 6 միավոր, ստացել է 6:2=3 միավոր, ուրեմն ակտիվությունից, որի համար սահմանված է 4 միավոր, կստանա 4:2=2 միավոր: Ընդհանուր հատկացվող միավորը կլինի 3+2=5՝ առավելագույն 10-ի փոխարեն: Այսպիսի մեխանիզմը կապահովի ուսանողի շարժառիթավորումը, այսինքն՝ նա չի ցանկանա կորցնել հաճախումների և ինքնուրույն կատարած աշխատանքի համար իր «վաստակած» միավորները և անպայման կներկայանա եզրափակիչ քննությանը:

Այսպիսի մոտեցումը նաև կապահովագրի դասախոսի սուբյեկտիվ մոտեցումներից, քանի որ ինքնին պարունակում է բազմաթիվ օբյեկտիվ բաղադրիչներ, որոնց քանակի ու որակի վրա դասախոսն ազդել չի կարող՝

հաճախումների քանակը, ինքնուրույն աշխատանքի փաստացի կատարումը, քննությանը ներկայանալու պատրաստակամությունը և այլ գործոններ, որոնք չի կարելի անտեսել, այսինքն՝ դասախոսը չի կարող չգնահատել ուսանողի ձեռքբերումները: Եթե կա անհանգստություն, թե դասախոսը կարող է չարաշահել իրեն վերապահված այդ իրավունքը, ապա այստեղ կարելի է մշակել հավասարակշռման մեխանիզմներ, օրինակ՝ մասնակցության աստիճանը, սեմինարների ժամանակ հավաքած միավորները, ինքնուրույն աշխատանքի առկայությունը և որակը, բազմաթիվ այլ չափորոշիչներ, որոնք նվազագույնի կհասցնեն դասախոսի սուբյեկտիվ մոտեցումները:

Որոշ տաղանդաշատ ուսանողներ հնարավոր է, որ ընթացիկ քննություններից վաստակեն անհրաժեշտ անցումային միավորները, սակայն այդ անելը բավականին դժվար կլինի, իսկ հաջողվելու դեպքում հարց կառաջանա կամ թեստերի որակը վերանայելու, կամ ուսանողի նկատմամբ հատուկ վերաբերմունք մշակելու և նրա համար ուսուցման անհատական պլան կազմելու համար: Տաղանդավոր ուսանողի մոտիվացիայի խնդիրը, ըստ իս, հետևյալն է՝ մենք պետք է կողմնորոշվենք. ինչպիսի գիտելիքներով, հատկանիշներով ու կարողություններով շրջանավարտ ենք ուզում թողարկել՝ աշխարհաքաղաքացի՞, թե՞ ազգային ավանդույթներով տոգորված քաղաքացի: Այս խնդիրը համակարգային է, ուստի մեկանգամյա միջոցառումներով չի լուծվի, եթե համալսարաններում չստեղծվեն կրթության որակի ապահովման արդյունավետ մեխանիզմներ:

Գրականություն

1. ԼՂՀ Օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», ԱրՊՀ գործունեությունը կարգավորող ակտերի ժողովածու, Ստեփ, ԱրՊՀ, 2019թ., 674 էջ,
2. Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ, ԱրՊՀ գործունեությունը կարգավորող ակտերի ժողովածու, Ստեփ, ԱրՊՀ, 2019, 674 էջ, էջ 257,
3. Նալչաջյան Ա.Ա. Հոգեբանական բառարան, Եր, 1984, 240 էջ
4. Н.И.Конюхов, прикладные аспекты современной психологии, термиы, законы, концепции, методы, Москва, 1992, 72 стр .
5. https://hy.wikipedia.org/wiki/ Մոտիվացիա, առ. 26.04.2019թ.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հոգեբ.գ.թ., Ա.Մ. Մխիթարյանը:

ՀՏԴ 159.9
Հոգեբանություն

Գայանե ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Գորիսի պետական համալսարանի հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների ֆակուլտետի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի ասիստենտ, ՀՀ Սյունիքի մարզ,քաղաք Գորիս

ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՈՒԶԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՄՈՏ

Տագնապայնությունը չի կարելի դիտարկել որպես մեկուսացված հուզական երևույթ:Այն փոխկապացված է դեռահասի որոշ անձնային գծերի՝ ագրեսիվության և ինքնագնահատականի հետ: Դրա հետ մեկտեղ չի կարելի անտեսել սոցիալական միջավայրի գործոնը: Մենք կարծում ենք, որ տագնապայնությունը կարող է համարվել տարիքային հուզական նորագոյացություն: Տագնապայնության զարգացման օբյեկտիվ վերլուծությունը ի հայտ է բերում մեկ ուրիշ կողմ: Դեռահասի տագնապայնությունը պետք է դիտարկվի որպես գործընթաց, որը սկիզբ է առնում արդեն վաղ մանկության տարիքում: Եվ եթե մենք արձանագրում ենք դեռահասի տագնապայնության ախտաբանական դրսևորումները, ապա դրանց պատճառները պետք է որոնել մանկության տարիքում: Հոդվածը նպատակ ունի մատնանշել տագնապայնության ձևավորման և զարգացման գործընթացը, դինամիկան համատեքստում: Դեռահասության հոգեֆիզիոլոգիական փոփոխությունները իհարկե առաջացնում են տագնապային հոգեվիճակներ, սակայն մենք պետք է տարբերակենք այդ վիճակները, ըստ նրա, թե ինչպիսի պաշտպանական գործառույթ են դրանք իրականացնում: Ելնելով այս մոտեցումից մենք կարող ենք կանխատեսել դեռահասության տարիքում օրինաչափորեն ձևավորվող տագնապայնության վտանգի աստիճանը: Դեռահասության տագնապայնությունը օրինաչափ գործընթաց է, այն չի կարող չլինել դեռահասի հոգեկան դաշտում: Խնդիրը այլ է, որքանով է այս տագնապայնության աստիճանը համապատասխանում նորմային, որքանով են դեռահասի հուզական ապրումները անվնաս տեղ գտնում նրա տարիքային սահմաններում:

Այսպիսով՝ քանի որ տագնապայնությունը մեկուսացված, ինքնավար երևույթ չէ, այն պետք է դիտարկվի հոգեհուզական և սոցիալական ամբողջական տիրույթում: Եթե մենք փորձենք պահպանել նշված ամբողջականության սկզբունքը, դեռահասի տագնապայնության խնդիրը լուսաբանելիս, ապա դրանով հենց մենք հնարավորություն կունենանք վերլուծության ենթարկել նաև այլ գործոններ, որոնցից կուզեինք նշել և ներանձնային կոնֆլիկտները և նևրոտիկ կոնֆլիկտների պատճառները:

Բանալի բառեր՝ դեռահասություն, տագնապայնություն, հոգեսոցիալական զարգացում, օրալ փուլ, նևրոտիկ կոնֆլիկտներ, հուզական վարք, ինքնագնահատական:

Г. Айрапетян

ТРЕВОЖНОСТЬ КАК ЭМОЦИОНАЛЬНОЕ ЯВЛЕНИЕ У ПОДРОСТКОВ

Тревожность нельзя рассматривать как изолированное эмоциональное явление. Она взаимосвязана с некоторыми личностными чертами подростка – агрессивнистью и самооценкой. В то же время нельзя игнорировать фактор социальной среды. Нам представляется, что тревожность можно считать возрастным эмоциональным новообразованием. Объективный анализ развития тревожности выявляет другую сторону. Тревожность подростка должна рассматриваться как процесс, который начинается уже в раннем детстве. И когда мы фиксируем патологические проявления подростка, причины следует искать в детском возрасте.

Статья имеет целью указать на процесс, динамику формирования и развития тревожности во взаимосвязи. Психофизиологические изменения в подростковом возрасте, конечно, создают психическое состояние тревожности, однако, мы должны различать эти состояния по тому, какие защитные функции они выполняют. Исходя из данного подхода, мы можем предсказать степень опасности закономерно развивающейся тревожности в подростковом возрасте. Тревожность в подростковом возрасте – закономерный процесс, она не может не существовать в психическом поле подростка. Вопрос в том, насколько степень этой тревожности соответствует нормам, насколько эмоциональные переживания подростка безвредны в его возрастных пределах.

Таким образом, так как тревожность – не изолированное, автономное явление, она должна рассматриваться в рамках психоэмоциональной и социальной целостности. Если мы попытаемся сохранить принцип данной целостности при освещении проблемы тревожности у подростка, этим у нас появится возможность подвергнуть анализу также другие факторы, среди которых нам хотелось бы выделить межличностные конфликты и причины невротических конфликтов.

Ключевые слова: *подросковый возрост, тревожность, психосоциальные развитие, оральный этап, невротичесние конфликты, эмоциональное поведение, самооценка.*

G. Hayrapetyan

ANXIETY AS EN EMOTIONAL PHENOMENON AMONG THE TEENAGERS

Anxiety can't be observed as an isolated emotional phenomenon. It correlates with some personal traits of the teenager, such as aggression and the self-assessment. The factor of the social environment should also be considered. We think that anxiety can be considered a new emotional formation triggered by age. The objective analyses of the development of anxiety reveals another aspect: the adolescent's anxiety should be observed as something that starts during the early childhood. Thus, when recording the pathologic displays in an adolescent's anxiety we should look into their causes in his /her childhood period. The article

aims to point out the process and dynamics of the formation and development of anxiety in a context. The psycho-physiological changes of the adolescent age certainly cause anxious situations, but we should differentiate them as to how protective they actually are. Based upon this, we can predict the possibly precise degree of the thread of the formation of anxiety. The anxiety is a normal process available in the adolescent's emotional life. The problem is as to what extent it is considered normal and how harmless the adolescent's emotions correspond to his/her age.

Thus, as the adolescent's anxiety is not an isolated and autonomic process, it should be observed in a spiritual-psychological and social context. If we try to pertain the above-mentioned context while illustrating the adolescent's anxiety, we will therefore be able to analyze other factors as well, such as inner conflicts and the causes of neurotic conflicts

***Key words**: adolescence, anxiety, ,spritiual-social development, oralphase, neurotic conflicts, emotional behaviour, selfestimation.*

Դեռահասության տարիքի հոգեբանական գոյացություններից մեկը, որը կարող է դիտվել որպես տվյալ տարիքային շրջաբաժանման ճգնաժամ կազմող մաս՝ տագնապայնությունն է: Իհարկե, տագնապայնությունը սկիզբ է առնում վաղ մանկության տարիքում և ունի իր զարգացման ու արտահայտման դրսևորումները: Այսինքն՝ դեռահասության տարիքում ապրվող տագնապն ունի իր պատմությունը և նոր երևույթ չէ հոգեկանի դաշտում: Զարգացման, ինչպես նաև կլինիկական հոգեբանության մեջ, տարբերում են տագնապ և տագնապայնություն՝ վերջինս դիտարկելով որպես անձնային գիծ: Տագնապային հոգեվիճակ կարող է վերապրել ցանկացած անձ, սակայն տագնապայնությունը որպես անձնային գիծ՝ չի կարող լինել բոլորի մոտ: Այս դրույթները հոգեբանության մեջ համարվում են համընդհանուր դրույթներ, սակայն մենք կարող ենք ենթադրել, որ տագնապայնությունը ևս կարող է բնորոշ լինել բոլոր մարդկանց՝ տագնապայնության տարբեր աստիճանի դրսևորումներով: Այս դեպքում, երբ տագնապայնությունը սկսում է ազդել կյանքի որակի վրա, սահմանափակել անձի կյանքի հնարավորություններն ու ինքնաիրականացման գործընթացը, ի հայտ է գալիս տագնապայնության ախտաբանական դրսևորումը: Բոլոր այն դեպքերում, երբ տագնապայնությունը կրում է արդյունավետ պաշտպանական գործառույթ, այն կարող է դիտարկվել նորմայի սահմաններում: Դեռահասության տարիքում հաճախ մենք գործ ունենք նոր հուզական վիճակի հետ. տագնապայնությունը, որը առաջ ուներ ակնհայտ պաշտպանական ֆունկցիա, վերափոխվում է այսպես կոչված «տարիքային ախտաբանական կարգավիճակի»: Մենք ենթադրում ենք, որ դեռահասության տագնապայնությունը կարող է դիտարկվել որպես տարիքային ախտաբանական նորագոյացություն, որը ճգնաժամի հաղթահարումից հետո կորցնում է իր ախտաբանական կողմերը և նորից վերածվում «նորմալ» տագնապայնության՝ պահպանելով հարմարվողական, պաշտպանական արդյունավետ գործառույթները: Տագնապայնությունն այսպիսով, կարող է դիտարկվել որպես ոչ այնքան ախտաբանական,որքան տարիքային հուզական նորագոյացություն: Դեռահասության տարիքում տագնապալի վիճակների ապրումը

պայմանավորված է մի քանի հոգեֆիզիոգիական գործոններով: Առաջինը, դեռահասի համար ապագայի կանխատեսման դժվարություններն են: Քանի որ այս տարիքում մենք գործ ունենք երեխայի հորմոնային դաշտի փոթորկալից շրջանի հետ, ապա կարող ենք ենթադրել, որ նոր հոգեֆիզիոլոգիական վիճակը հաճախ առաջացնում է անորոշության զգացում, որն օրինաչափորեն տագնապ է առաջացնում դեռահասի հոգեկանում: Վ.Պ.Սամոխվալովը նշում է, որ ցանկացած նոր ստեղծված երևույթ իրենից ներկայացնում է հին ու նոր պատկերների միաձուլում՝ մանկության տարիքում ձևավորված տագնապայնության նմուշից[1]: Վարքի նոր տեսակները հաճախ դիտարկվում են որպես ախտաբանական երևույթ: Այդ տեսանկյունից դեռահասի տագնապայնությունն, իհարկե, կարող է դիտարկվել որպես նոր հոգեֆիզիոլոգիական կարգավիճակի հետևանք: Դեռահասության ճգնաժամի կարևոր յուրահատկություն է միջանձնային փոխհարաբերություններում պաշտպանվածության զգացման որոնումը: Այս պահանջմունքը միշտ չէ, որ բավարարվում է դեռահասի կյանքում: Դեռահասը ներթափանցում է մեծահասակների սոցիալական աշխարհ, որտեղ իրեն լիարժեք չի զգում,քանի որ չունի լիարժեքության և պաշտպանվածության զգացում: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ դեռահասները հաճախ հայտվում են քրեական մշակույթներում, քանի որ նրանց նկատմամբ դրսևորվում է ուշադրություն և ձևավորվում պաշտպանվածության զգացում: Անկախ այն հանգամանիքից, որ դեռահասը փորձում է դրսևորել ինքնավստահություն իր վարքում, նա անգիտակցորեն զգում է, որ մեծամասամբ կախված է այլ մարդկանցից: Այդ կախվածությունը օրինաչափորեն առաջացնում է տագնապ, սակայն տագնապի հաղթահարման մեթոդներին դեռահասը դեռ չի տիրապետում: Պետք է նշենք, որ դեռահասի կողմից ապրվող տագնապի աստիճանը պայմանավորված է նրա մանկության հուզական փորձով, մանկության տարիներին ձևավորված հաղթահարման ունակություններով: Իսկ դա նշանակում է, որ դեռահասի տագնապը ինքնակամ երևույթ չէ, այն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք ձևավորվել են մանկության տարիներին, հատկապես ընտանեկան կյանքում և պետք է դիտարկվի որպես շարունակական գործընթաց: Հ.Սալիվանը նշում է, որ տագնապայնությունը ձևավորվում է միջանձնային հարաբերությունների համատեքստում: Բացի այդ, նա պնդում է, որ անձի տագնապայնությունից փախչելու աստիճանը հավասար է նրա անվտանգության պահանջմունքի որոնման աստիճանին[2]: Նրա կարծիքով տագնապայնությունը մարդու կյանքի անբաժանելի մասն է, քանի որ մարդը շփվում է այլ մարդկանց հետ: Հ.Սալիվանը գրում է. «Տագնապայնությունը ձևավորվում է վաղ մանկության տարիքում և տեղ ունի մեր ամբողջ կյանքում, որպես յուրահատուկ հուզական ապրում[3]»: Խոսելով տագնապայնության մասին, Հ.Սալիվանն ընդգծում է, որ եթե երեխայի մոտ ի սկզբանե ձևավորվում է միջանձնային վստահության զգացում, ապա այդ զգացումը թույլ չի տա, որ երեխայի մոտ ձևավորվի տագնապայնություն: Սալիվանի հայացքները համահունչ են նրա գիտական հայեցակարգին: Նրա կարծիքով անձը պետք է դիտարկվի որպես կրկնվող միջանձնային իրադրությունների համակարգ և հենց այդ կրկնվող իրադրությունները լիովին

---

[1] ***Самохвалов В.П***. *Психический мир будущего. «Кит», Симферополь. 1998 г.-с.59*
[2] ***Sullivan H. S***.*The Collected Work.V. 1, 2. — N. Y., 1953.*
[3] ***Sullivan H. S***.*The Collected Work. V. 2.,p. 228*

բնութագրում են անձի կյանքը: Բացի դրանից, միջանձնային հարաբերություններում տեղ ունի ուրիշներին դուր գալու մոտիվացիան: Ամեն մարդ ձգտում է կյանքում դուր գալ իր համար նշանակալի մարդկանց,միաժամանակ վախենում է այն մտքից, որ նրան չի հաջողվի այդ անել: Տագնապայնության առաջացման աղբյուր կարող է լինել նշանակալից անձին դուր չգալու վախը: Իհարկե, նման տեսակի տագնապայնության հիմքերը շատ հեշտ է գտնել դեռահասի մանկության շրջանում: Փոքր տարիքում, համաձայն Հ.Սալիվանի, երեխայի մոտ ձևավորվում է այսպես կոչված «վատ Ես-ի» կերպարն: Այդ կերպարը առաջանում է այն դեպքում, երբ ծնողները կամ երեխայի համար նշանակալից այլ մարդիկ արհամարհանքի են արժանացնում երեխային, չեն դրսևորում դրական հուզական հարաբերություններ երեխայի նկատմամբ: «Վատ Ես-ի» հետ մեկտեղ կարող է առաջանալ նաև Ես-ի դրական կերպար, այն դեպքում, երբ մայրը երեխայի նկատմամբ ցուցաբերում է սեր և հոգատարություն: Երեխան ձգտում է ծնողի հավանությանը և այս ձգտումը ևս պայմանավորված է տագնապից խուսափելու միտումով: Դեռահասության տարիքում նշանակալից անձանց դուր գալու միտումը պահպանվում է, իսկ դա նշանակում է, որ դեռահասի մոտ տագնապայնության զարգացումը դառնում է իրական հոգեբանական վտանգ, քանի որ նորից վերակենդանանում է «վատ Ես-ի» կերպարը: Կ.Հորնիի աշխատություններում ևս վերլուծության առարկա է դառնում միջանձնային հարաբերությունների պաշտպանվածության զգացման խնդիրը: Ինչպես գիտենք, Կ.Հորնիի հայեցակարգում հիմնական գաղափարը կայանում է նրանում, որ մարդու կյանքի հիմնական նպատակը կայանում է նրա ինքնահիրականացման մեջ: Ելնելով այս հիմնական դրույթից, Կ.Հորնին համարում է, որ այս գլխավոր նպատակին հասնելու համար մարդը պետք է կարողանա հաղթահարել իր տագնապայնությունը, քանի որ վերջինս վտանգավոր խոչընդոտ է դառնում նշված հիմնական նպատակն իրականացնելու համար: Կ. Հորնին, որպես հոգեվերլուծության դպրոցի վառ ներկայացուցիչ, ևս ընդունում է այն միտքը, որ տագնապայնությունը ձևավորվում է մանկական տարիքում, որում մեծ դեր ունեն երեխայի սոցիալական շրջապատն ու ընտանիքը:

Տագնապի բացասական ազդեցությունն անձի հոգեկան զարգացման գործընթացի վրա, ակնհայտ ճշմարտություն է: Քանի որ երեխան ամբողջովին կախված է ծնողից, ապա բնական է, որ հենց այդ կախվածության աստիճանը ինքնին կառաջացնի տագնապայնություն: Երեխայի հիմնական պահանջմունքները միշտ ուղղված են միջանձնային, ընտանեկան դաշտի վրա: Մեծահասակը կարող է բավարարել երեխայի բազմաթիվ պահանջմունքներ, սակայն կարող է նաև արհամարհանք դրսևորել երեխայի պահանջմունքների նկատմամբ, իսկ արհամարհանքը, որպես հոգեբանական բռնության տեսակ՝ երեխայի մոտ ձևավորում է տագնապայնություն: Սիրո և հոգատարության պահանջմունքները միանշանակ միջանձնային պահանջմունքներ են: Եթե վաղ մանկության տարիներին այդ բազային պահանջմունքները բավարարվում են, ապա երեխայի մոտ ձևավորվում է պաշտպանվածության և ինքնավստահության զգացում: Իհարկե, այս դրույթը կրկնում է Է.Էրիկսոնի հոգեսոցիալական զարգացման առաջին փուլի նկարագրությունը: Համաձայն Հորնիի, եթե ծնողները կամ այլ պատասխանատու անձինք չեն կարողանում բավարարել երեխայի բազային պահանջմունքները, ապա հոգեկան զարգացումը կանգնում է վտանգի առաջ: Դրա հետ մեկտեղ, Կ.Հորնին նշում է,

որ տագնապալի ծնողները չեն կարող բավարարել երեխայի բազային պահանջմունքները: «Նրանք կարող են լինել իշխող, գերխնամող, վախեցնող և տագնապալի, չափից շատ պահանջկոտ և անտարբեր: Արդյունքում երեխայի մոտ չի ձևավորվում «Մենքի» զգացումը, այլ փոխարենը զարգանում է բազային տագնապայնություն[1]»: Նման դեպքերում մենք կարող ենք արձանագրել, որ երեխան մեծանում է տագնապի մթնոլորտում, դժվար է հարմարվում սոցիալական միջավայրին և այս դեպքում վտանգվում է երեխայի հոգեսոցիալական զարգացումը: Կ.Հորնիի հայտնի դրույթն այն մասին, որ անձն ունի վարքային երեք հիմնական ուղղվածություն, այն է՝ գնալ մարդկանց ընդառաջ, գնալ մարդկանց դեմ և հեռանալ մարդկանցից, կիրառելի է դառնում տագնապայնությունը բացատրելիս: Մարդ պետք է կարողանա լինել ճկուն, այսինքն՝ պետք է կարողանա օգտագործել տարբեր պաշտպանական ռազմավարություններ, եթե փոքր տարիքից երեխայի մոտ չի ձևավորվում վարքային ճկունություն, ապա նա տարբեր իրադրություններին արձագանքում է նույն պաշտպանական եղանակով: Եվ այդ սահմանափակումը սկիզբ է դառնում տագնապայնության զարգացման համար: Բնական է, որ նման սահմանափակման հետևանքով վտանգվում է ինքնաիրականացման մոտիվացիան: Երբ տագնապը դառնում է անտանելի, մարդը անգիտակցորեն հետին պլան է մղում իր իրական «Ես-ը» և փորձում է ստեղծել սեփական իդեալականացված «Ես-ի» տարբերակ: Այսինքն՝ այս դեպքում մենք գործ ունենք սեփական «Ես-ից» օտարացման գործընթացի հետ: Ի՞նչ է տեղի ունենում, երբ դեռահասը օտարացնում է իրենից իր սեփական «Ես-ը», ի՞նչպիսի ելքեր կարող են ձևավորվել այս դեպքում: **Եթե դեռահասը, օտարացնելով իրենից իր սեփական «Ես-ը», փորձում է նույնականանալ իր կողմից հորինված իդեալական «Ես-ի» հետ, ապա այս դեպքում նա կփորձի դրսևորել իր իրական «Ես-ի» հետ անհամատեղելի վարք: Նա կփորձի հասնել փառքի, մեծ նվաճումների, այն ամենի, ինչը թույլ կտա նրան հնարավորինս շատ հեռանալ իր անկարողության և տագնապայնության ապրումներից: Իսկ դա իհարկե նշանակում է, որ նվաճումների մոտիվացիան կրում է փոխհատուցող գործառույթ: Այսինքն՝ ոչ թե անձն է զարգացում ապրում, այլ տեղի է ունենում ուղղակի տագնապալի փախուստ սեփական «Ես-ի» դաշտից, փորձ է արվում փոխարինել տագնապալի «Ես-ը» ինքնավստահ «Ես-ով»:** Նոր իդեալականացված կերպարի հետ նույնականացումը, ինչպես համարում է Կ.Հորնին, միայն ավելացնելու է տագնապայնությունը: Այս անգամ տագնապը կդառնա անձի հիմնական ուղեկիցը, քանի որ այս դեպքում բոլոր հոգեկան ուժերը պետք է անընդհատ ապահովեն իդեալական «Ես-ի» կեցությունը: Իդեալական «Ես-ը» այս դեպքում ստանում է կյանքի իմաստի կարգավիճակ: Նման հոգեբանական իրողության սահմաններում մենք չենք կարող արձանագրել դեռահասի անձի զարգացման գործընթացը, քանի որ այն իրականում չկա: Գոյություն ունի մեկ այլ գործընթաց և.ս. կատարվում է փախուստ սեփական «Ես-ից», հորինվում է իդելական «Ես» և բոլոր ջանքերն ու ամբողջ էներգիան ուղղվում է այդ հորինված իդեալական «Ես-ի» արտաքին պահպանմանը: Դրա հետ մեկտեղ, որքան ավելանում են այս նպատակի ճանապարհին առաջացած խոչընդոտները, այնքան ավելի է մեծանում տագնապայնության աստիճանը: Այս երևույթը կարելի է ներկայացնել որպես

[1] ***Horney K.*** *Neuros: and human groneth. № 9. 195, p. 27*

սեփական առաջնային տագնապայնությունից փախուստ նոր՝ավելի ինտենսիվ տագնապայնության մեջ: Ինչպես Հ.Սալիվանը, այնպես էլ Կ. Հորնին համարում են, որ տագնապն ի ծնե մարդու ուղեկիցն է: Ինչպես մենք տեսնում ենք, Հ.Սալիվանի մոտ այն անվանվում է առաջնային տագնապ, իսկ Կ.Հորնին այն անվանում է բազային տագնապ: Ե՛վ Հ.Սալիվանը, և՛ Կ.Հորնին համարում են, որ տագնապայնությունը ձևավորվելով վաղ մանկության տարիներին՝ կարող է փոխանցվել կյանքի մյուս փուլերը (հատկապես դեռահասության և պատանեկության): Իհարկե, այս փաստը չի վկայում այն մասին, որ տագնապայնությունը դառնում է մարդու հոգեբանական ճակատագիր: Եթե վաղ մանկության տարիներին ծնողների սիրո և հոգատարության շնորհիվ տագնապայնությունը հաղթահարվում է, ապա արդեն դեռահասության տարիքում այն չի դառնում դեռահասի անձի հոգեկան կայուն գիծ: Տագնապայնության ձևավորման և պահպանման գործընթացում մեծ դեր ունի Է.Էրիկսոնի կողմից նկարագրված հոգեսոցիալական զարգացման առաջին փուլի որակը: Հենց այս փուլում, որը մեզ հայտնի է նաև որպես օրալ փուլ, ձևավորվում է արտաքին աշխարհի նկատմամբ վստահությունը կամ անվստահությունը: Ծատերի մոտ կարող է տպավորություն առաջանալ, որ տագնապայնությունը ընդհանրապես չի կարող անհետանալ մարդու կյանքից, քանի որ այն ձևավորվում է միջանձնային դաշտի սահմաններում միշտ կապրի այդ բացասական զգացումը: Նման եզրակացությունը բավականին թերի է, քանի որ եթե տագնապայնությունը ձևավորվում է միջանձնային հաղորդակցման դաշտում, ուրեմն նույն դաշտում էլ կարող է հաղթահարվել: Եվ հենց այս կողմի վրա են մեր ուշադրությունը սևեռում և՛ Հ,Սալիվանը, և՛ Կ.Հորնին: Քանի որ հաղորդակցումը հանգուցային տեղ է զբաղեցնում հոգեթերապիայի կառուցվածքում, ապա սա նշանակում է, որ տագնապայնությունը կարող է անհետանալ հենց այդ գործընթացում: Ա. Մ. Պրիխոժանի սահմանմամբ հոգեթերապիան կարող է լուծել տագնապայնության խնդիրը: Հ.Սալիվանի այս դրույթը լինելով չափազանց արդիական՝ հետագայում զարգացում ստացավ այլ հոգեբանների մոտ(Կ.Ռոջերս և ուրիշներ): Ինչ վերաբերվում է Կ.Հորնիի հոգեթերապևտիկ աշխատանքի արդյունավետության մասին տեսակետին, ապա այս դեպքում կիզակենտրոնը քիչ փոխվում է: Եթե Հ.Սալիվանի մոտ հոգեթերապիայի իմաստը պետք է լինի հենց միջանձնային շփումը և ոչ ներաձնային անգիտակցական կոնֆլիկտների բացահայտումը, ապա Կ.Հորնին, հավատարիմ մնալով հոգեվերլուծության մոդելին, համարում է, որ հոգեթերապիայի մեջ կարևորն այն է, որ անձը սկսի գիտակցել իր տագնապայնության և նևրոտիկ կոնֆլիկտների պատճառները, իր իդեալականացված «Ես-ի» կեղծ բնույթը: Եվ միայն դրանից հետո անհրաժեշտ է որոնել ներանձնային կոնֆլիկտները լուծելու ստրատեգիան: Ամեն դեպքում ակնհայտ է դառնում այն, որ դեռահասության փուլում տագնապայնությունն իրենից ներկայացնում է փոխանցվող երևույթ: Ելնելով այդ օրինաչափությունից, կարելի է մշակել կոնկրետ հոգեբանական ճանապարհներ, որոնք կնվազեցնեն տագնապայնության ձևավորման վտանգը: Տագնապայնությունը, ինչպես և մենք պատկերացնում ենք, չի կարող լինել մեկուսացված ինքնավար հուզական երևույթ: Ակնհայտ է, որ այն կարող է փոխկապակցված, փոխպայմանավորված կապեր ունենալ դեռահասի որոշ անձնային գծերի հետ: Որպես ենթադրություն մենք կարող ենք առաջ քաշել այն դրույթը, որ դեռահասի տագնապայնության աստիճանը խիստ

փոխկապակցված է լինում նրա ագրեսիվության և սոցիալական կախվածության աստիճանով: Սոցիալական կախվածության երևույթը բավականին ուսումնասիրված է զարգացման հոգեբանության սահմաններում: Ինչպես հայտնի է, կախվածության երևույթը բազմակողմանիորեն ուսումնասիրված է հոգեդինամիկ ուղղվածության մեջ: Ա.Ադլերի հայեցակարգը մեծ տեղ է հատկացնում թերարժեքության բարդույթին և նրա սոցիալական կախվածության հետ կապին: Կախվածության երևույթը մենք դիտարկում ենք նորածնության փուլում, և որտեղ կախվածությունը համարվում է նորմալ երևույթ, քանի որ այլ կերպ չեն կարող ձևավորվել երեխայի և մոր հարաբերությունները: Երեխան ամբողջովին կախված է մորից, գտնվում է տոտալ կախվածության վիճակում: Բնական է, որ երբ մայրը լիարժեք խնամք չի ցուցաբերում երեխայի նկատմամբ, առաջանում է բարձր աստիճանի տագնապի զգացում: Այդ բազային կախվածությունը դառնում է յուրացված հուզական վարքի բացասական մոդել, որը լիովին չի անհետանում դեռահասի հոգեկանից: Այն կարող է նորից ու նորից վերարտադրվել որպես պաշտպանական գործառույթ: Եթե վաղ մանկության կախվածությունը փոխանցվում է հաջորդ տարիքային շրջաբաժանմանը, դրա հետ մեկտեղ փոխանցվում է նաև տագնապայնությունը: Անօգնականության զգացումը, որը բնորոշ է ցանկացած մարդու՝ անկախ տարիքից, սեռից և ազգությունից, օրինաչափորեն ձևավորում և զարգացնում է տագնապայնությունը: Վաղ մանկության այդ անօգնականության հոգեվիճակը մտնում է մեր կյանք և մենք պաշտպանական ճանապարհներ ենք որոնում: Զարմանալի չէ, որ վաղ մանկության տարիքում նման պաշտպանական գործառույթ է դառնում կախվածությունը մեծահասակներից: Անօգնականության վիճակը ծանր ապրվող հույզ է, որը չի կարող անհետևանք անցնել անձի հոգեկան և մարմնական առողջության համար: Անօգնականությունից ազատվելու համար երեխան հայտնվում է կախվածության մեջ ծնողներից կամ իրեն խնամող այլ մեծահասակներից,քանի որ դեռ չի ձևավորել պաշտպանական վարքի այլ մոդելներ: Մանկության տարիներին երեխան և ծնողը կարծես թե պայմանագիր են կնքում՝ «դու ինձ ազատիր այդ ծանր ապրումներից, իսկ ես կլինեմ հնազանդ երեխա»: Հաճախ այդ պայմանագիրը չունի ժամկետային սահմանափակումներ, չի ավարտվում մանկության հետ և գործում է անձի ողջ կյանքում:

Դեռահասությունն ինչ-որ իմաստով մեզ համար էկրան է, որի վրա դեռ շարունակվում է նկարահանվել կյանքի մանկության սցենարը, իսկ դեռահասության սցենարը տեսանելի է դառնում պատանեկության տարիքում: Կյանքի փուլերի վերաբերյալ հոգեբանական մոտեցումը պետք է կրի դինամիկ բնույթ: Հոգեբանական զարգացումը չի կարող ընթանալ հարթ, առանց խոչընդոտների: Ավելին՝ հենց դժվարությունների, խնդիրների հաղթահարումը թույլ է տալիս զարգացման գործընթացը դարձնել արդյունավետ: Դեռահասության տարիքում նկատվող կախվածությունը սոցիալական միջավայրի նշանակալից անձանցից փոխանցված արտադրանքն է: Այն եկել է մանկության տարիներից՝ որպես հարմարվածության մոդել, իսկ նման դեպքում չի կարելի չնկատել, որ դեռահասի վարքում կրկնվում են մանկության վարքի մոդելներ, որոնք, սակայն, արդեն դեռահասը փորձում է ճնշել: Մինչդեռ դեռահասությունը որպես տարիքային ճգնաժամային փուլ, լի է հոգեբանական խնդիրներով, որոնցից երևի թե հանգուցայինն այն է, որ դեռահասը գտնվում է սահմանային վիճակում՝նա դեռ մեծահասակ չէ, բայց արդեն երեխա չէ:

Տարիքային նման երկակիությունը չի կարող չառաջացնել այնպիսի խնդիրներ, որոնք ևս երկակի են, որոնք խճճված են և միաժամանակ լուծումներ են պահանջում: Մենք չենք հասկանա դեռահասի կախվածությունը, տագնապայնությունը և ագրեսիան, եթե չդիտարկենք այդ հատկությունների զարգացման գործընթացը, որը սկսվել է վաղ մանկության տարիներին: Դեռահասության տարիքին բնորոշ առանձնահատկությունները և հույզերը հիմնականում խմբավորվում են ինքնագնահատականի ոլորտի շուրջ: Ցանկացած հատկություն, որը դեռահասի մոտ առաջացնում է տարակուսանք, դժգոհություն, կամ նյարդայնացնում է նրան, այսպես թե այնպես, կապված է նրա ինքնագնահատականի զգացման հետ: Իրականում մենք բոլորս էլ ունենք ոչ թե ինքնագնահատականի վերաբերյալ գիտելիք, այլ՝ զգացում: Եթե ինքնագնահատականը լիներ կոգնիտիվ կառույց, ապա այն հույզերի ճամբարում անընդհատ չէր գտնվի պատանդի կարգավիճակում: Մենք փորձում ենք կարծիքներ հայտնել մեր ինքնագնահատականի մասին՝ ելնելով կոնկրետ չափանիշներից, առանց հասկանալու, որ նույն այդ չափանիշները հիմնավորման կարիք ունեն: Բացի դրանից, մարդու ցանկացած հոգեկան հատկություն, ցանկացած հոգեկան գործառույթ, կապված է նրա ինքնագնահատականի հետ: Դեռահասի մոտ մենք կարող ենք խոսել ինքնագնահատականի ճգնաժամի մասին, քանի որ նրա հուզականությունը առաջին հերթին բխում է ինքնագնահատականի զգացումից: Դեռահասության տարիքում ինքնագնահատականը մերկ է և խոցելի: Այն ձևավորվում է սոցիալական միջավայրի կողմից: Եվ մենք կարող ենք պնդել, որ դեռահասության տարիքում դեռ չի կարող լինել իրական ինքնագնահատական,քանի որ դեռահասի կարծիքն իր մասին ուրիշների կողմից ներշնչված կարծիքների հավաքածու է: Դեռահասն ընդունում կամ ժխտում է այն, ինչ իր մասին ներշնչվում է նրան շրջապատող սոցիալական միջավայրից: Զուտ ինքնագնահատականը այն կարող է ընդհանրապես չձևավորվել ողջ կյանքի ընթացքում, մարդը կարող է իրեն վերաբերվել այնպես, ինչպես իրեն վերաբերվում են ուրիշները, հատկապես՝ սոցիալական միջավայրը:Դեռահասության փուլում աչքի ընկնող տագնապայնությունը և ագրեսիան ևս մեծ չափով պայմանավորվում են այդ միջավայրի ազդեցությամբ:Ի վերջո՝ ինքնագնահատականը միաժամանակ ինքնավերաբերմունք է և հաճախ այդ երկու տերմինները հոգեբանական գրականության մեջ օգտագործվում են որպես հոմանիշներ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հոգեբ.գ.թ., Ա.Մ. Մխիթարյանը:

ՀՏԴ 159.9
Հոգեբանություն

Արմինե ԱՎԱՆԵՍՅԱՆ
ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս

ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԹՐԵՅՆԻՆԳՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀՈԳԵՇՏԿՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Խմբային հոգեշտկումը և թրեյնինգն ունեն նույն ծագումը և, հաճախ, ունեն միևնույն նպատակները: Խմբային հոգեշտկման առանձնահատկությունը արտահայտվում է խմբային դինամիկայի նպատակային կիրառման մեջ: Սոցիալ-հոգեբանական թրեյնինգների պարագայում ևս հիմնարար նշանակություն ունի խմբային դինամիկան, որը զարգանում է թրեյնինգային խմբի մասնակիցների և մարզիչի միջև փոխհամագործակցության և փոխազդեցության արդյունքում: Խմբային հոգեշտկման և սոցիալ-հոգեբանական թրեյնինգի համար ընդհանրական է այն, որ երկու դեպքում էլ հոգեբանական ազդեցության հիմնական գործիք է հանդիսանում խումբը: Թրեյնինգների և խմբային հոգեշտկողական աշխատանքների հիմնական նպատակները, հետևաբար նաև գործառույթները փոխկապակցված են: Թրեյնինգներում հոգեշտկողական գործառույթների կիրառումն արտահայտվում է թրեյնինգային ծրագրերում հոգեշտկման գործիքակազմի օգտագործման մեջ, ինչն առավել հարուստ է դարձնում թրեյնինգի մեթոդոլոգիան ու ընթացակարգը, իսկ արդյունքներն՝ առավել հուսալի:

Բանալի բառեր՝ *սոցիալ-հոգեբանական թրեյնինգ, գործառույթ, հոգեշտկողական գործառույթներ, խմբային հոգեշտկում, հոգեբանական ազդեցություն, խմբային դինամիկա*

А. Аванесян

ФУНКЦИИ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИХ ТРЕНИНГОВ В ПСИХОКОРРЕКЦИОННЫХ РАБОТАХ

Групповая психокоррекция и тренинги имеют одинаковое происхождение и часто имеют одинаковые цели. Особенность групповой психокоррекции проявляется в целенаправленном использовании групповой динамики. В случае социально-психологических тренингов так же фундаментальное значение имеет групповая динамика, которая развивается в результате взаимоотношения и взаимодействия между участниками

тренинговой группы и тренером. Для групповой психокоррекции и социально-психологических тренингов общим является то, что в обоих случаях основным инструментом психологического воздействия является группа. Основные цели тренингов и групповой психокоррекционной работы, а, следовательно, и функции взаимосвязаны. Использование в тренингах психокоррекционных функций выражается в использовании во время тренинговой программы психокоррекционых инструментов, которые делают методологию, процедуру и достоверность результатов тренингов более эффективными.

Ключевые слова: *социально-психологический тренинг, функции, психокоррекционные функции, групповая психокоррекция, психологическое воздействие, групповая динамика*

A. Avanesyan

THE FUNCTIONS OF THE SOCIO-PSYCHOLOGICAL TRAININGS IN PSYCHOLOGICAL WORKS

Group psycho-correction and trainings have the same origin and they very often have the same aims. The feature of the group psycho-correction appears in the purposeful use of group dynamics. In case of socio-psychological trainings, group dynamics, which develops in the result of the relationship and the interaction between the participants of the training group and the trainer, also has fundamental value.

For group psycho-correction and socio-psychological training the common thing is that in both cases the main tool of the psychological impact is the group. The main aims and functions of the trainings and group psycho-correctional work are interconnected. The use of psycho-correctional functions in trainings during the training programme is expressed in the use of psycho- correctional tools, which make the methodology, the procedure and the veracity of the training results more effective

Key words*: socio-psychological training, function, psycho-correctional functions, group psycho-correction, psychological impact, group dynamics.*

Սոցիալ-հոգեբանական թրեյնինգների գործառույթները հոգեշտկողական աշխատանքներում, կարելի է ներկայացնել տարբեր տեսանկյուններից: Նախ՝ սոցիալ-հոգեբանական թրեյնինգի կիրառումը հոգեշտկման ոլորտում կարելի է դիտարկել որպես մասնագետների պատրաստում, ովքեր, հնարավոր է, կկիրառեն իրենց աշխատանքում խմբային մեթոդներ, քանի որ տեսական գիտելիքների հետ մեկտեղ հոգեշտկող մասնագետը պետք է զինված լինի գործնական ունակություններով՝ կարողանա հուզական կապ հաստատել, կազմակերպել շփման տարածություն, նույնականացնել հուզական վիճակները վարքի էքսպրեսիվ արտահայտումներով, ստեղծել շփման բարենպաստ ոլորտ, լսել և հասկանալ այցելուին, վերահսկել սեփական էքսպրեսիվ վարքը, մարմնի դիրքը, դիմախաղը, ժեստերը, փաստարկել սեփական կարծիքները, հարթեցնել կոնֆլիկտային խնդրահարույց իրավիճակները, լինի կոմպետենտ շփման մեջ, քանի որ, ինչպես Բ. Ֆ.

Լոմովն է նշում <<շփման ժամանակ մի մարդու համար բացահայտվում է մյուսի սուբյեկտիվ աշխարհը>> [2, էջ 262]: Հոգեբանների համար այս ունակություններին տիրապետելը և գործնականում դրանց արդյունավետորեն կիրառման ձեռք բերված փորձը ՍՀԹ-ի հիմական նպատակն է: Գ. Մ. Կոջասպիրովան և Ա. Յու. Կոջասպիրովը բնութագրում են թրեյնինգը հետևյալ ձևակերպմամբ. <<Թրեյնինգն ինտերակտիվ ուսուցման ձև է, որի նպատակն է շփման մեջ միջանձնային կոմպետենտայնության և մասնագիտական վարքի զարգացումը>> [1, էջ 357]: Խմբային պարապմունքների ժամանակ խաղերի օգնությամբ բացահայտվում և վերլուծվում են այցելուի հետ շփման հնարավոր սխալները, ձեռք է բերվում զրույցի վարման փորձ, իրականացվում է սեփական հուզական վիճակի շտկում: Այս տեսանկյունը արտացոլվում է հետևյալ մեջբերման մեջ. <<Թրեյնինգը գործունեություն է, որն ուղղված է մասնագիտական գործունեության հաջող իրագործման համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերմանն ու դիրքորոշումների և կարողությունների շտկմանը և ձևավորմանը>> [4, էջ 178]:

Եթե խոսում ենք հոգեշտկողական աշխատանքներ իրականացնող հոգեբանների վերապատրաստման ընթացքում ՍՀԹ-ի կիրառման գործառույթների մասին, ապա պետք է նշենք, որ այս դեպքում թրեյնինգների ոչ պակաս կարևոր խնդիրն է խմբի մասնակիցներին բնորոշ վարքային ստերիոտիպերի բացահայտումը: Ակնհայտ է, որ ստերիոտիպերը խանգարում են արդյունավետ շփմանը, խոչընդոտում են հոգեբանի աշխատանքը: Սակայն, սովորական շփման ընթացքում հաջողությանը նպաստող ստերիոտիպերը պետք է մաքրվեն, քանի որ մասնագիտական գործունեության ժամանակ դրանք կարող են անցանկալի հետևանքների հասցնել:

Նպատակահարմար է հոգեշտկողական աշխատանքներում ՍՀԹ-ի գործառույթները դիտարկել ևս մեկ տեսանկյունով, նկատի ունենալով որ ՍՀԹ-ները հոգեբանական ազդեցության խմբային մեթոդների շարքին են դասվում, հետևաբար դրանք պետք է զուգակցվեն խմբային հոգեշտկման գործընթացի հետ:

ՍՀԹ-ն համագործակցային, փոխլրացնող գործունեություն է, փոխազդեցության կամ փոխլրացման և հնարավոր շտկման ու կարգավորման միջոցներով ու մեթոդներով՝ միտված յուրաքանչյուր մասնակցի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը որպես վերջնաարդյունք:

Այստեղ երևում է, որ որպես թրեյնինգի գործիքակազմ մենք դիտարկում ենք նաև հոգեշտկման միջոցները, որոնք տեղ են գտնում թրեյնինգների, այդ թվում նաև ՍՀԹ-ի ծրագրերում: Դա հնարավոր է դառնում շնորհիվ այն բանի, որ և՛ խմբային հոգեշտկումը, և՛ թրենինգն իրենց արմատներով միևնույն ծագումն ու հաճախ միևնույն նպատակներն ունեն: Խմբային

թրեյնինգային աշխատանքի տարրերն արդեն իսկ նկատելի էին դեռևս ավստրիացի հոգեբույժ, <<Կենդանական մագնիտիզմ>>-ի տեսության հեղինակ Ֆրանց Անտուան Մեսմերի (1734-1815թթ) մեթոդների մեջ: Նույնը կարելի է ասել նաև խմբային հոգեշտկման մասին, քանի որ տարբեր մարմնային (սոմատիկ) և հոգեկան հիվանդությունների բուժման նպատակով Մեսմերի կողմից կիրառվող խմբային սեանսներում նույնպես կարելի է տեսնել խմբային հոգեշտկման հիմքեր:

Խմբային հոգեշտկման յուրահատկությունը դրսևորվում է խմբային դինամիկայի նպատակային օգտագործման մեջ: Ինչպես խմբի անդամների, այնպես էլ նաև հոգեբանի հետ ձևավորվող փոխհարաբերությունների և փոխազդեցությունների ողջ ընդհանրությունը ծառայեցվում է շտկման նպատակներին: ՍՀԹ-ի պարագայում ևս հիմնարար է ինչպես թրեյնինգային խմբի մասնակիցների, այնպես էլ մարզչի միջև առաջացող փոխհարաբերություններից և փոխազդեցություններից ծնված խմբային դինամիկան:

Խմբային հոգեշտկման և ՍՀԹ-ի համար ևս ընդհանուրն այն է, որ երկու դեպքում էլ հոգեբանական ազդեցության հիմնական գործիքը խումբն է, մինչդեռ անհատական հոգեշտկման դեպքում նման գործիքի դեր է ստանձնում հոգեբանը: Փաստորեն, 20-րդ դարի հիմնական հոգեբանական տեսական ուղղություններում այս կամ այն կերպ օգտագործվել են խմբային աշխատանքների ձևերը և, ինչպես ՍՀԹ-ում, այնպես էլ խմբային հոգեշտկման պարագայում նկատելի են հոգեբանական տարբեր դպրոցների ունեցած անմիջական ազդեցությունները: Այս համատեքստում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում հոգեվերլուծական և հումանիստական ուղղությունները: Ա. Ադլերն ուշադրություն է դարձրել սոցիալական շրջապատի ազդեցությանը, երբ այցելուի մոտ կան խանգարումներ: Նա համարում էր, որ խումբն իրենից ներկայացնում է համապատասխան ենթատեքստ, որը կարող է ծառայել հուզական խանգարումների բացահայտմանը և դրանց շտկմանը: Ենթադրում էր, որ այցելուի կոնֆլիկտների և դժվարությունների աղբյուրը նրա արժեքների և կենսական նպատակների ոչ ճիշտ համադրման մեջ է, նա համոզված էր, որ խումբը ոչ միայն կարող է ձևավորել հայացքներ և տեսակետներ, այլև օգնում է կերպարանափոխել դրանք: Խմբային հոգեշտկման զարգացման մեջ նշանակալից ներդրում է ունեցել հոգեդրամայի հիմնադիր Դ. Մորենոն, նրան վերագրում են նաև <<խմբային հոգեկորեկցիա (հոգեշտկում)>> եզրույթի ներմուծումը: Հումանիստական ուղղության ներկայացուցիչներից առանձնահատուկ դիրքից է հանդես գալիս Կ. Ռոջերսը: Նա մեծ նշանակություն էր տալիս հոգեբանական խմբային աշխատանքներին՝ համարելով, որ հոգեբանը դրանցում խմբի անդամների համար հանդես է գալիս որպես նմանակման օբյեկտ և դրանով իսկ նպաստում է տագնապայնության վերացմանը, ինքնաբացման զարգացմանը: Խմբի անդամների միջև կառուցվող հարաբերությունները կարող են

նպաստավոր պայմաններ ստեղծել անձի հոգեբանական փոփոխությունների համար:
Հոգեշտկման, ինչպես նաև թրեյնինգային մեթոդների զարգացման վրա մեծ ազդեցություն ունեցան Կ. Լևինի աշխատանքները) [6] : Կ. Լևինին է պատկանում հետևյալ միտքը. <<Սովորաբար ավելի հեշտ է փոխել խմբում հավաքված անհատներին, քան թե փոխել նրանցից յուրաքանչյուրին առանձին- առանձին >> [3, էջ 22] Նա համարում է, որ օբյեկտիվ փոփոխությունների մեծ մասը տեղի են ունենում խմբային, այլ ոչ թե անհատական զարգացման ենթատեքստում: Կ. Լևինը և նրա հետևորդներն անձնային խանգարումները դիտարկում էին որպես սոցիալական շրջապատում այլ մարդկանց հետ խանգարված հարաբերությունների արտահայտումներ և արդյունքներ: Նրանք խմբում էին տեսնում խանգարված փոխազդեցությունների շտկման գործիքները, քանի որ նմանատիպ շտկումը տեղի է ունենում սոցիալական ուսուցման գործընթացում: Ինչպես թրենինգային, այնպես էլ հոգեշտկողական խումբը արհեստականորեն ստեղծված փոքր խումբ է, որը միավորվում է միջանձնային ուսումնասիրությունների, անձնային ուսուցման, ինքնաբացման նպատակներով: Դա <<այստեղ և այժմ>> փոխազդեցությունն է, որի ընթացքում մասնակիցներն ուսումնասիրում են այն, ինչ տեղի է ունենում իրենց հետ, տվյալ պահին, տվյալ վայրում: Հոգեշտկողական խմբի անդամների կազմը որոշվում է նրա տեսակով (հանդիպման խմբեր, կարողության խմբեր և այլն), ինչպես նաև ենթադրվող հեգեշտկողական աշխատանքի կազմակերպման ձևով և բովանդակությամբ: «Ինքնուրույն ուղղություն» որակում խմբային հոգեշտկումը հանդես է գալիս այն իմաստով, որ այցելուին դիտարկում է սոցիալ-հոգեբանական դաշտում, շրջապատի հետ նրա փոխհարաբերությունների և փոխազդեցությունների ենթատեքստում՝ դրանով իսկ ընդլայնելով շտկողական գործընթացի սահմանները և կենտրոնանալով ոչ միայն անհատի ու նրա ներանձնային խնդիրների, այլև շրջապատող աշխարհի հետ իրական փոխհարաբերությունների և փոխազդեցությունների ամբողջության մեջ գտնվող անհատի վրա: Փոխհարաբերությունները և փոխազդեցությունները, որոնց մեջ մտնում է այցելուն խմբի մեջ, նշանակալի կերպով արտացոլում են նրա իրական փոխհարաբերությունները: Ինչպես և թրենինգների ժամանակ, խումբը հանդես է գալիս որպես իրական կյանքի մոդել, իսկ այցելուները դրսևորում են նույնատիպ հարաբերություններ, կրում են արժեքներ, ունեն գրեթե միևնույն դիրքորոշումները, հուզական և վարքային միևնույն հակազդումները: Խմբային դինամիկայի կիրառումն ուղղված է նրան, որ յուրաքանչյուր մասնակից հնարավորություն ունենա առավելագույնս դրսևորել իրեն, ինչպես նաև խմբում արդյունավետ հետադարձ կապ ստեղծել, որոնք թույլ կտան այցելուին իր համարժեք ընկալմամբ հասկանալ նաև ինքն իրեն, տեսնել սեփական ոչ ադեկվատ

վերաբերմունքը և դիրքորոշումները, հուզական վարքային կարծրատիպերը: Չէ՞ որ այդ ամենը դրսևորվում է միջանձնային հարաբերություններում և փոխվում է բարյացակամ և փոխադարձ ընդունման մթնոլորտում: Այս իմաստով կարելի է զուգահեռներ անցկացնել թրեյնինգի և մասնավորապես խմբային հոգեշտկման մեթոդների միջև: Խմբային հոգեշտկման մեթոդները պայմանականորեն բաժանվում են երկու խմբի՝ հիմնական և լրացուցիչ: Հիմնական է խմբային բանավեճը, որն ունի երեք գլխավոր ուղղվածություն՝ ա) ինտերակցիոն, բ) կենսագրական և գ) թեմատիկ: Լրացուցիչ մեթոդներին են վերաբերում 1) հոգեդրաման (դերային իրավիճակներ խաղալը), 2) հոգեմարզությունը (ոչ վերբալ միջանձնային փոխգործակցություն), 3) երաժշտաթերապիան (ակտիվ և ռեցեպտիվ տեսակներով), 4) պրոյեկտիվ նկարը (նկարչություն կոնկրետ թեմայով): Նշված մեթոդներից յուրաքանչյուրը կարող է կիրառվել որպես լրացուցիչ, սակայն տվյալ դեպքում խոսքը մեկ հոգեշտկողական խմբի հետ տարվող աշխատանքի մեթոդների համալիրի մասին է [7] մինչդեռ հոգեշտկողական աշխատանքներում ՍՀԹ-ի գործառույթների կիրառման տեսանկյունով կարելի է դիտարկել և զուգահեռներ անցկացնել հոգեշտկման և թրեյնինգային աշխատանքների գործառույթների միջև (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Հոգեշտկման և թրեյնինգային աշխատանքների գործառույթների համեմատականներ

ՍՀԹ-ի գործառույթները	Հոգեշտկման գործառույթները
Հոգեախտորոշիչ գործառույթ (թրեյնինգի ընթացքում բացահայտվում են խմբի անդամներից յուրաքանչյուրի կենսական խնդիրները ինչպես վարքային, այնպես էլ հուզակամային, դիրքորոշումները)	Հոգեախտորոշիչ գործառույթ (որևէ անցանկալի որակ շտկելու, ուղղելու, նաև զարգացնելու համար, այն նախևառաջ պետք է ախտորոշել, ինչը հնարավոր է իրականացնել նաև հոգեշտկման ընթացքում)
Զարգացնող գործառույթ (թրեյնինգի արդյունքը թերի կլիներ, եթե չզարգացվեին այն դրական փոփոխությունները, որոնք տեղի են ունենում մասնակիցներից յուրաքանչյուրի մեջ խմբային աշխատանքի ընթացքում)	Զարգացնող գործառույթ (անցանկալի երևույթների կամ թերությունների ուղղումը տվյալ պարագայում նշանակում է նաև ստացված արդյունքի զարգացում)
Շտկող գործառույթ (թրեյնինգներն ուղղված են	Բնավորության անցանկալի գծերի ուղղում (<<շտկում>> կամ

շտկելու մասնակիցների մոտ բացահայտված թերացումները)	<<կորրեկցիա>> եզրույթը բառացիորեն հենց նշանակում է <<ուղղում>>: Հոգեշտկումը միջոցառումների որոշակի համակարգ է, որն ուղղված է մարդու հոգեկանում կամ վարքում առկա թերությունների ուղղմանը հոգեբանական ազդեցության հատուկ մեթոդների կիրառմամբ)
Մարզող գործառույթ (թրեյնինգային խումբը մի դաշտ է, որտեղ մասնակիցը կարող է դրսևորել իր յուրացրած վարքը, հուզական դրսևորումները և դրանք կիրառել տարբեր	Հոգեբանական կամ վարքային թերությունների շտկում (հոգեբանական մեթոդների համակարգ է, որը կիրառում է հոգեբանը հոգեկան առողջ մարդու հոգեբանական կամ վարքային թերությունների շտկման գործընթացում:

Աղյուսակ 1. (շարունակություն)

պայմանական իրավիճակներում, առանց հնարավոր սխալներից վախենալու. իսկ միևնույն վարքաձևը յուրացնելու նպատակով պարբերաբար դրսևորելը, հենց ինքնին մարզում է):	Հոգեշտկումը հոգեբանի գործունեությունն է՝ ուղղված հոգեբանական զարգացման այն առանձնահատկությունների ուղղմանը, որոնք ըստ իրենց բնորոշող չափորոշիչների չեն համապատասխանում ընդունված մոդելներին)
Ուսուցանող գործառույթ (թրեյնինգը խմբի օգնությամբ, իհարկե, նաև մարզչի մասնակցությամբ, սովորեցնում է մասնակիցներից յուրաքանչյուրին կողքից տեսնել սեփական անձը, կարողանալ ընդունել սեփական սխալները և ձեռք բերել հոգեբանական նոր որակներ)	Սովորեցնող գործառույթ (հոգեշտկողը նաև զինում է այցելուին ինքաշտկման, ստացված արդյունքի ամրապնդման որոշակի գործիքակազմով)

Կարող ենք վերոնշյալ աղյուսակից եզրահանգել, որ թրեյնինգային և հոգեշտկողական, մասնավորապես, խմբային հոգեշտկողական աշխատանքների հիմնական նպատակները, հետևաբար նաև

գործառույթները միմյանց զուգակցվում են: Հոգեշտկողական աշխատանքներում, որտեղ նպատակ է հետապնդվում շտկելու առկա հոգեբանական խնդիրները, կիրառելի են թրեյնինգների ախտորոշիչ գործառույթները այդ խնդիրների պատճառները բացահայտելու համար, քանի որ երբեմն միևնույն դրսևորումներն ունենում են արմատապես տարբեր պատճառներ: Բացի այդ՝ ախտորոշումը կարող է պարզել նաև այն հարցը, թե արդյոք կա շտկողական աշխատանքների կատարման կարիք, թե ոչ: Իսկ խմբային հոգեշտկողական աշխատանքների ժամանակ տեղին է կիրառել հենց իրական խումբը որպես հոգեախտորոշման միջոց: Իսկ խմբի նմանատիպ նշանակությունը մենք տեսնում ենք նաև թրեյնինգում:

Խմբային հոգեշտկողական աշխատանքների ընթացքում թրեյնինգների գործառույթների իրականացումը հնարավոր դարձնող կարևոր գործոն է հոգեշտկումը և սոցիալ-հոգեբանական ու թրեյնինգի մյուս համապատասխան տեսակների (քանի որ կան թրենինգների տեսակներ, որոնք անցկացվում են, օրինակ՝ հոգեբուժարաններում) զուգահեռաբար կիրառումը ուղղված հոգեպես առողջ անհատների հոգեբանական այնպիսի խնդիրների ու առանձնահատկությունների ուղղմանը, որոնք չունեն ժառանգական, բնախոսական և նման այլ ֆիզիոլոգիական արմատներ: Հոգեշտկումը հոգեբանի գործունեությունն է՝ միտված հոգեբանական զարգացման այն առանձնահատկությունների ուղղմանը, որոնք, ըստ իրենց բնորոշող չափորոշիչների, չեն համապատասխանում ընդունված մոդելներին: Թրեյնինգը ևս ունի նման գործառույթ, քանի որ թրեյնինգային աշխատանքների ժամանակ ևս ուղղվում են վարքի, հուզական ոչ ընդունելի ձևերը, սխալ դիրքորոշումները և այլն: Այստեղ զուգակցվում են թրեյնինգի և հոգեշտկման ուղղիչ գործառույթները: Մասնավորապես, խմբային հոգեշտկողական աշխատանքներում կարելի է կիրառել նաև թրեյնինգում ընդունված հնարներ, վարժություններ՝ որոշակի հոգեբանական առանձնահատկությունների ուղղման համար: Բացի այդ՝ պետք է փաստել, որ ցանկացած աշխատանք թերի է, եթե չեն ամրապնդվում և զարգացվում ձեռք բերված արդյունքները: Թրեյնինգների գործառույթները խմբային հոգեշտկողական աշխատանքներում դիտարկելու պարագայում պետք է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, թե ինչ տևողությամբ պետք է կիրառվեն այդ գործառույթները հոգեշտկողական աշխատանքներում: Վերը արդեն նշել ենք, որ հոգեշտկումը ժամանակի առումով տարբեր է (կարճատև, երկարատև և այլն): Թրեյնինգներում ևս տարբեր խմբերի համար տարբեր տևողությամբ վարժանքներ են նախատեսվում: Հետևաբար, մի մեթոդի գործառույթը մյուսի ժամանակ կիրառելու դեպքում պետք է համապատասխանեցվեն երկու մեթոդի ժամանակային առանձնահատ-կությունները: Հոգեշտկողական աշխատանքներում թրեյնինգի

գործառույթների կիրառման համար նախ պետք է բավարարվեն մի շարք պայմաններ, որոնցից են՝
1) իրական խմբի առկայությունը,
2) խմբի քանակական բնորոշման համապատասխանությունը,
3) խմբի անդամների թվաքանակի հոգեբանական բնութագրումների ընդհանրությունները,
4) միևնույն նպատակի, խնդրի առկայությունը,
5) ժամանակային տևողության համապատասխանությունը նպատակին և խնդիրներին:

Թրեյնինգներում հոգեշտկողական գործառույթների կիրառումն արտահայտվում է թրեյնինգային ծրագրում հոգեշտկողական գործիքակազմերի՝ միջոցների, հնարների կիրառմամբ, որոնք առավել հարուստ են դարձնում թրեյնինգների մեթոդաբանությունը, ընթացակարգը և արդյունքների ստացման հավաստիությունը:

Գրականություն

1. Коджаспирова Г.М., Коджаспиров А.Ю., Словарь по педагогике, М., ИКЦ «МарТ»; Ростов-на-Дону, «МарТ», 2005 г., С.357.
2. Ломов Б. Ф. Методологические и теореотические проблемы психологии.- М.: Наука 1984, 226 с.
3. Рудестам К. Групповая психотерапия. Психокоррекционные группы: теория и практика.- М.:Прогресс, 1993, 368 с.
4. Саруханов В. А., Словарь телевидения, или Что бы это значило?.., часть 2, СПб, "Всемирное слово", 2005, С. 178
5. Семечкин Н. И. Социальная психология: Учебник для вузов.- СПб.:Питер, 2004,375 с.
6. Rojers G. Encounter groups.-London: Harmonds- Worth, 1975, 174 p
7. gruppovye-metody-psixokorrekcionnoj-raboty.html/

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հոգեբ.գ.թ., Ա.Մ. Մխիթարյանը:

ՀՏԴ 325 /479.243/
Պատմություն

Նունե ՍԱՐՈՒՄՅԱՆ
պ.գ.թ., ԱրՊՀ պատմության ամբիոնի դոցենտ

ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶՐԿՄԱՆ ՓԱՍՏԸ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հոդվածում փորձ է կատարվում պատմական փաստերի, արխիվային փաստաթղթերի, թուրքական պատմագրության ներկայացուցիչների հրապարակումների հաղորդած տեղեկությունների հիման վրա լուսաբանել հայերի ունեզրկման ծրագրավորված, համակարգված թուրքական գործողությունները: Վերջին տարիներին թուրքական գիտական շրջանակների մի փոքր հատված, իր ուսումնասիրություններում պատմության նկատմամբ օբեկտիվ մոտեցում ցուցաբերելով , հնարավորություն է ընձեռել՝ բացահայտելու թուրքական կեղծարարությունը, հայերի ունեզրկման նրանց ծրագրերը, որի արդյունքում թուրքական կողմը իր պետական տնտեսական միջոցները կարգավորեց:

Հոդվածում ցույց է տրվում, որ թուրքական ժխտողականության հիմքում ընկած է բռնագրավված հայկական ունեցվածքի հարցը:

Բանալի բառեր՝ *ցեղասպանություն, ունեզրկում, խեղաթյուրում, փաստաթուղթ, բռնագրավում, հայկական պատմական հուշարձանների ոչնչացում, արխիվային վարչություն, հողային կալվածքներ, նյութական վնաս, թրքացման քաղաքականություն:*

Н.Сарумян

ЛИШЕНИЕ ИМУЩЕСТВА АРМЯН: ТУРЕЦКИЙ ПРОЦЕСС

В статье делается попытка на основе исторических фактов, архивных документов, на фактах, опубликованных в турецких историографических публикациях, выявить планированные и систематизированные действия турецкой стороны по лишению имущества армян.

В последние годы небольшая часть турецких научных деятелей в своих трудах отражало историю обьективно, что дало возможность выявить турецкую фальсификацию, открыто говорить об их программах по лишению имущества армян в следствие чего турецкая сторона урегулировала свое государственное экономическое положение.

В статье показано то, что в основе отказа Турции признать геноцид положен вопрос об конфискованном имуществе армян.

Ключевые слова: *геноцид, лишение имущество, подделка документов, ликвидация армянских исторических памятников, архивное управление, инвентаризация земель, материальный ущерб и политика фальсификации.*

N. Sarumyan

DEPRIVATION OF ARMENIAN PROPERTY: TURKISH PROCESS

The article attempts, on the basis of historical facts, archival documents, on the published facts of Turkish historiographic publications, to identify Turkish planned and systematic actions to deprive the image of Armenians.

In recent years, a small part of Turkish scientists in their writings objectively related to history, which made it possible to identify the Turkish falsification, to speak openly about their programs to deprive Armenians of their property, as a result of which the Turkish side settled its state economic position.

The article shows that the basis of the Turkish refusal to recognize the genocide is the question of the confiscated property of Armenians.

Keywords: *genocide, deprivation of property, document forgery, elimination of Armenian historical monuments, archive department, land inventory, material damage and falsification policy.*

Ակնհայտ է, որ թուրքական պատմագրությունը, խեղաթյուրելով պատմական փաստերը, անընդհատ ժխտում է Հայոց ցեղասպանությունը: Սակայն վերջին տարիներին բացահայտ է դարձել մի ուշագրավ երևույթ. այն է՝ թուրքական գիտական շրջանակների մի փոքր հատված իր ուսումնասիրություններում պատմության նկատմամբ սկսել է հանդես բերել օբեկտիվ մոտեցում:

Այդ հրատարակություններից ուշագրավ են Մեծ եղեռնի տարիներին երիտթուրքական, այնուհետև քեմալական և հանրապետական իշխանությունների կողմից իրականացրած հայերի ունեզրկման թեմային նվիրված Նևզաթ Օնարանի, Ալի Սայիթ Չեթինօղլուի, Թաներ Աքչամի, Ուղուր Ումիթի, Մեհմեդ Պոլաթելի և Ումիթ Քուրթի ուսումնասիրությունները[1]:

Հայ ժողովրդի հանդեպ երիտթուրքերի, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետության հիմնադիրների իրականացրած հանցագործությունների առարկայական պատկերի բացահայտմանը նպաստեցին վերջին տարիներին թուրք հետազոտողների կողմից տարբեր հարցերի հետ կապված՝ հրապարակված խոսուն վավերագրերի համեմատական քննությունը: Այդ հարցի լուսաբանմանը հանգամանորեն ուշադրություն է դարձրել թուրքագետ, ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող Անուշ Հովհաննիսյանը[2]: Նա Թուրքիայում հրապարակված

---

[1] *Տե՛ս Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը.պատմություն և արդիական խնդիրներ, 1-2 հոկտեմբեր 2014թ., Զեկուցումների ժողովածու, Երևան, 2015, էջ 298:*

[2] *Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը. թուրքական փաստաթղթերի և հրապարակումների լուսաբանմամբ, հոդված, ՎԷմ համահայկական հանդես, 2011, թիվ 1, հունվար-մարտ:*

փաստաթղթերի միջոցով անդրադարձել է Քեմալ Աթաթուրքի հանցավոր քայլերի լուսաբանմանը:

2005 թ. Թուրքիայի կադաստրային վարչությունը ձեռնամուխ եղավ իր գերատեսչության շրջանակում գտնվող օսմանյան շրջանի փաստաթղթերի թուրքացման, թվայնացման, իսկ հետագայում՝ Պետական գլխավոր արխիվային վարչությանը հանձնելու TARBIS ծրագրին: Այդ աշխատանքներն իրականացնելու ընթացքում ի հայտ էին եկել որոշ փաստաթղթեր, որոնց մասին վարչությունը տեղեկացրել էր Ազգային անվտանգության խորհրդին: 2005 թ. օգոստոսի 26-ին գաղտնի նամակով ԱԱԽ Զինակոչի և պատերազմական գործողությունների նախապատրաստման ու պլանավորման բաժնի ղեկավար, բրիգադային գեներալ Թայար Էլմասը հայտնում էր, որ մատյաններում առկա տեղեկությունները կարող են տեղիք տալ «ցեղասպանության անհիմն պնդումների», օսմանյան վակուֆների պահանջների և նմանատիպ այլ անցանկալի շահարկումների: Ուստի նպատակահարմար է այդ նյութերը գաղտնի պահել և սահմանափակ անձանց կողմից օգտագործման իրավունք տրամադրել[1]:

Տեղեկատվական արտահոսքի հետևանքով այս լուրը հայտնվել էր որոշ թուրքական թերթերի էջերում՝ պարզաբանելով, որ մատյաններում նշված են անուն առ անուն այն մարդկանց ցուցակները, որոնք անշարժ գույքի տեր են եղել Թուրքիայում նախքան 1915 թ. դեպքերը:

Պետք է նշել, որ հայտնաբերված ցուցակները, անկասկած, «վտանգ» էին ներկայացնում արդի Թուրքիայի համար, հատկապես, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ օսմանյան պետությունում դարերի ընթացքում մշակվել էր ռայաներից հարկ հավաքելու նպատակով մանրակրկիտ գրառումներ կատարելու փորձը:

Ի դեպ, այս կապակցությամբ երիտասարդ հետազոտողների մի խումբ դիմել էր Հողի և փախստականների տեղավորման վարչության արխիվ՝ անհրաժեշտ տվյալներ ստանալու նպատակով: Դիտարկվել էին Քիլիս, Անթաքիա, Իդլիբ, Ջիսր ալ-Շուղուր բնակավայրերի տեղական արխիվային նյութերը: Նրանցում բազմաթիվ երկրորդական փաստաթղթերի կողքին առկա էին նաև կոնկրետ ունեցվածքի մասին նշումներ (կով, ալրաղաց, կոշիկ, կահկարասի և այլն), սակայն բացակայում էին վերջիններիս տերերի անունները[2]: Այս բացահայտումների արդյունքում հայերի լքյալ գույքի թեման Թուրքիայում հանրային քննարկման առարկա դարձավ:

Հայտնի է, որ պատմության արդի հանգրվանում հայերի սեփականության վերադարձի խնդիրն առաջին անգամ բարձրաձայնվել է 1984 թ. Ժողովուրդների Մշտական տրիբունալում՝ Տիգրան Քույումջյանի «Հայոց

---

[1] *Տե՛ս http://bianet.org/bianet/insan-haklari/85432-osmanli-arsivleri-acilirsa-resmi-tez-zayiflar*

[2] *Տե՛ս http://www.birikimdergisi.com/guncel-yazilar/746/ermeni-emval-i-metrukeleri-uzerine#.XMDUXYkzbIV*

սեփականության բռնագրավումը և հայկական պատմական հուշարձանների ոչնչացումը որպես ցեղասպանության գործընթացի արտահայտություն» զեկույցում[1] : Վերջինս հիշատակում էր, որ հայերի բանկային հաշիվներից գոյացած շուրջ 30.000 կգ ոսկին (5 մլն. թուրքական ոսկե լիրա), ըստ Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Ջեյմս Բոլդուինի՝ վարչապետ Մաք Դոնալդին ուղղված զեկուցագրի, թուրքերի կողմից ուղարկվել էր Գերմանական կայզերական բանկ: Այսօր այդ գումարը կկազմեր ավելի քան 320 միլիոն ԱՄՆ դոլար՝ գումարած տոկոսները:

Բացի բանկային հաշիվների բռնագրավումից, Թուրքիայի կառավարությունը փորձ է արել տիրանալ նաև հայերին պատկանող այլ արժեթղթերի, մասնավորապես՝ ապահովագրական վկայականներով նախատեսված գումարներին: 1916 թ. Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթը ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի հետ զրույցում հարցնում էր, թե կարող է արդյոք վերջինս իրեն ներկայացնել ամերիկյան ապահովագրական ընկերություններում ընդգրկված հայերի ցուցակը: «Նրանք բոլորը մահացել են՝ չթողնելով ժառանգներ», «ուրեմն այդ ապահովագրերի գումարները օրինաբար պետք է անցնեն օսմանյան պետությանը»[2],-եզրակացնում էր նա :

Միևնույն ժամանակ, օսմանյան կառավարությունը հայտարարություններով դիմել էր այլ ընկերությունների՝ հայերի անունների վերաբերյալ տեղեկություններ ստանալու խնդրանքով: Մանրամասն տեղեկություններ էին հավաքվել, թե ինչպիսի սեփականություն ունեին հայերը՝ դեպոզիտ, ապահովագրեր, արժեթղթեր, տներ, հողային կալվածքներ, գործարաններ, խանութներ, ընկերություններ [3]:

Սակայն, եթե Օսմանյան կայսրության հայերի համայնքային սեփականության մասին տեղեկությունները հայտնի են, ապա անհատական սեփականության հաշվառումն այսօր շատ դժվար է: 1912-13 թթ. Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարության հանձնարարությամբ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը կազմել և կառավարությանն էր ներկայացրել կայսրության տարածքում գտնվող հայկական վանքերի և եկեղեցիների լիակատար ցուցակը:1992 թ. դոկտոր Ռայմոն Գևորգյանը հրապարակել է առավել ամբողջական ցուցակ, որում նշվում էին, չհաշված Կ. Պոլիսը՝ 2538

---

[1] *Տե՛ս Զեկույցի լրամշակված տարբերակը տե՛ս Dickran Kouymjian, Confiscation of Armenian Property and the Destruction of Armenian Historical Monuments as a Manifestation of the Genocidal Process: Տես՝ ՎԷմ համահայկական հանդես, 2011, թիվ 1, հունվար-մարտ, էջ 11:*

[2] ***Մորգենթաու Հ.**, Հուշեր, Փարիզ, 1919, էջ 292:*

[3] ***Kévork K. Baghdjian,** La confiscation par le gouvernement turc, des biens arméniens dits "abandonnés", Montréal, 1987, pp. 270-280:*

եկեղեցի, 451 վանք և 2000 կրթօջախ: Ցուցակի մեջ չի մտնում Հայ կաթոլիկ և Հայ բողոքական եկեղեցիներին պատկանող գույքը[1]:

Փարիզի խաղաղության համաժողովում հայկական պատվիրակությունների ղեկավարներ Ավետիս Ահարոնյանը և Պողոս Նուբարը ներկայացրել էին հայերի կրած վնասների վերաբերյալ զեկույց, որում կրած վնասը հաշվարկված էր մոտավորապես 14,5 մլրդ ֆրանկ: 1990 թ. դա կազմում էր մոտավորապես 100 մլրդ դոլար[2]: (Հայոց ցեղասպանության հետևանքով հայերի կրած նյութական վնասների մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդում նաև ArmenianGenocide100.org-ը . «Ըստ հաշվարկների՝ Ցեղասպանության վնասի ընդհանուր չափը գերազանցում է 3 տրլն դոլարը»):

1915 թ. հունիսին՝ «Տեղահանության մասին» օրենքի հրապարակումից անմիջապես հետո, արձակվել էր վարչական կարգադրություն՝ պատերազմական և արտակարգ քաղաքական իրավիճակի պատճառով տեղահանված հայերի լքյալ շարժական և անշարժ գույքի վերաբերյալ: Համաձայն վերը նշված կարգադրության՝ տեղական մակարդակով հատուկ հանձնաժողովներ էին կազմվելու՝ երկու վարչական և մեկ ֆինանսական ներկայացուցիչներից, որոնք պետք է մանրամասն գույքագրեին հայերի ունեցվածքը (3 օրինակից): Պատճեններից մեկը տրվում էր գույքի տիրոջը, մյուսը պահվում էր տեղական համայնքում, որպես կանոն՝ եկեղեցում, իսկ երրորդը ուղարկվում էր Օսմանյան պետական գանձարան: Ի թիվս այլ հանգամանքների՝ այս իրողությունը դարձավ եկեղեցիները հարձակումների, հրկիզումների առաջին թիրախի վերածվելու պատճառներից մեկը:

Այդպիսի թղթեր հայերին տրվեցին և նրանց շարժական գույքը՝ անասուններ, կահկարասի և այլն, վաճառվեց աճուրդով, և գումարները դրվեցին հայերի անունով: Հետագայում այս պաշտոնական գրություններից մի քանիսը հրատարակել է Յուսուֆ Հալաջօղլուն՝ «Թուրքական պատմական ընկերության» նախկին նախագահը՝ փորձելով ցույց տալ, թե որքան «հոգատար» է եղել օսմանյան կառավարությունը տեղահանվող հայերի նկատմամբ: Ի դեպ, տեղահանման ծախսերը ևս կատարվում էին նույն՝ տեղահանվածների հաշվին:

Սակայն դրանից 4 ամիս անց՝ 1915 թ. սեպտեմբերի 26-ին, հրապարակվում է նոր հրամանագիր, որով կարգավորվում էր աճուրդից դժգոհ անձերի՝ հանձնաժողովների գործողությունները բողոքարկելու և ունեցվածքն ըստ պահանջի հետ ստանալու կարգը, որի համար նախատեսված էր 15 օր: Օրենքում, իհարկե, նշված չէր, թե ինչպես կարող էին Դեր-Զոր քշվածները կամ սպանվածները հետևել այդ ընթացակարգին: Այսպես՝ Սարգիս

---

[1] *Տե՛ս* ***Սաֆրաստյան Ա.,*** *Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրությանը ներկայացված եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները (1912-1913), «Էջմիածին», Ա (հունվար), 1965, էջ 42;*

[2] *Տե՛ս http://www ArmenianGenocide100.org*

Չերկեզյանն իր «Աշխարհը բոլորիս է բավարար» գրքում հուշագրություն է զետեղել, որի համաձայն՝ Քարամանում իր ունեցվածքին տեր կանգնել ցանկացած իր հորը՝ Ղազարոսին, փաստաբանը երկու ճամփա է ցույց տվել՝ կամ լռել, կամ կախաղան բարձրանալ [1] :

Իրականում հայերին պատկանող գույքի թալանը տեղի էր ունենում տեղն ու տեղը. գորգերը, արծաթյա և ոսկե իրերը, հագուստը ոստիկաններն ու ժանդարմներն էին վերցնում, մանր կահկարասին՝ տեղի խուժանը: Որոշ դեպքերում աճուրդ իսկապես իրականացվում էր, բայց գոյացած գումարը իշխանավորներն իրենք էին գրպանում, այլ ոչ թե դնում հայերի հաշվին: Զավեշտական պատկեր է ներկայացրել արաբ Ֆայեզ ալ-Ղուսեյնը. «5 լիրա արժեք ունեցող կոստյումը վաճառվում էր 2 մեջիդիեյով, թանկարժեք սպասքը մանրադրամ արժեր, իսկ հին արժեքավոր դաշնամուրը որևէ մեկը չէր գնում: Մանրանկարներով գիրքը տրվեց պանրավաճառին՝ շուկայում վաճառելիս պանիր փաթաթելու համար»[2]: Անշարժ գույքը օգտագործվելու էր պետության հայեցողությամբ, իսկ երբեմն տրվում էր բանակին, որպես կայանատեղի, դառնում էր հոսպիտալ, պահեստ, կամ էլ Բալկաններից տեղահանվածներին տեղավորում էին հայերի տներում:

Պետք է նշել, որ հայերի, ինչպես նաև հույների սեփականությանը տիրանալու ծրագրերը կազմվել էին շատ ավելի վաղ: 1908-1909 թթ. օսմանյան ֆինանսների նախարարության տվյալներով՝ Թուրքիայի պարտքը գերազանցում էր բյուջեի 1/3-ը: Իսկ Բալկանյան պատերազմները վերջնականապես քամեցին բյուջեն, Թուրքիան զրկվեց իր հարկատու շատ տարածքներից: Դրան հետևեց եռյակի հեղաշրջումը՝ 1913 թվականին, որոնք ամեն ինչ առան իրենց ձեռքը: Նրանք սկսեցին իրականացնել Զիյա Գյոքալփի նախանշած «milli iktisad»-ը՝ տնտեսության թուրքացման ծրագիրը: Ծխախոտի, շաքարի մենաշնորհի վերահսկումը նրանց աստղաբաշխական եկամուտներ ապահովեց: Հատուկ հանձնաժողովներ ստեղծվեցին, որոնք թիրախային խմբերի փորձագիտական ուսումնասիրություններ անցկացրին՝ «ազգայնացումը» արագ իրագործելու համար: Այդ ծրագրի համակարգողն էր Շյուքրյու Քայան: Պատմության ապագա կեղծարար Էսաթ Ուրասը զբաղվում էր հայերով, Ջելալ Բայարը՝ հույներով, Զեքերյա Սերտելը՝ ալեվիներով:

Այս ծրագրի հեռահար նպատակն էր տնտեսական լծակները վերցնել այլազգիների ձեռքից: Պատերազմը «նվեր» էր նման ծրագիրն իրականացնելու համար: Այս նպատակին էր ուղղված, մասնավորապես, Թալեաթ փաշայի 1916 թ. հունվարի 6-ի հրամանագիրը, համաձայն որի՝ հայերի ընկերություններից պետք է ստեղծել մահմեդական ընկերություններ, բաժնետոմսեր թողարկել և բաժանել «ազնիվ մուսուլմաններին», որպեսզի կապիտալը չընկնի օտարների ձեռքը: Օրինակ՝ Դիարբեքիրի մետաքսի

---

[1] *Տե՛ս **Չերկեզյան Ս.**, Աշխարհը բոլորիս է բավարար, Ստամբուլ, 2003, էջ 59:*

[2] *Տե՛ս **Ֆայէզ ալ-Ղուսեյն**, Հերոսական հայութեան անցեալէն: Զարդերը Հայաստանի մէջ (ականատեսի վկայութիւններ), Գահիրէ, 1960, էջ 25-30:*

գործարանի տեր Թրփանջյանը տանջամահ արվեց բանտում, տեղի վալի (նահանգապետ) Նեջդեթը տիրացավ նրա շքեղ տանը, իսկ գործարանը անմիջապես անցավ մուֆթիի որդուն՝ Մուֆթիզադե Հուսեյնին[1] :

Ի դեպ, երբ Դիարբեքիրում հայերի տեղահանությունը իրականացրած դոկտոր Մեհմեդ Ռեշադին հարցնում են, թե արդյոք բժիշկ լինելու հանգամանքը չի խանգարել նրան իրականացնել ոճիրները, նա շատ հանգիստ պատասխանում է. «Ես թուրք եմ, ես պետք է ոչնչացնեմ ոչ թուրքերին՝ չսպասելով, որ նրանք ինձ ոչնչացնեն և հետո, մի՞թե բժշկի գործ չէ միկրոբներից ազատվելը»[2]:

Այդ ճանապարհով Առաջին աշխարհամարտի ընթացքում Օսմանյան կայսրության պետական բյուջեն, հակառակ պատերազմական ծանր պայմաններին, հետևյալ աննախադեպ աճ արձանագրեց. 1913-14 թթ.՝ 35 մլն օսմ. ոսկի, 1915-16թթ.՝ 38 մլն, 1917-18 թթ.՝ 85 մլն: 1918 թ. կայսրության ողջ պատմության ընթացքում առաջին անգամ երիտթուրքական իշխանությունները թողարկեցին 19 մլն օսմանյան ոսկուն համարժեք արժեթղթեր: Պարզ է, որ պետական գանձարանը լցվել էր հայերի ինչքի և կալվածքների հաշվին[3] :

1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարը նշանավորեց Օսմանյան Թուրքիայի լիակատար պարտությունը Առաջին աշխարհամարտում: Ուստի սուլթան Մեհմեդ VI-ի կառավարման օրոք նորանշանակ կաբինետի ներքին գործերի նախարար Ահմեդ Իզզեթ փաշայի 1918 թ. նոյեմբերի 1-ի հրամանագրով նախատեսվում էր հայերից բռնագրավված հողերի և գույքի վերադարձը իրենց օրինական տերերին՝ նրանց վերադարձի և պահանջ ներկայացնելու դեպքում: Այդ հրամանագիրը կարելի է որպես ճակատագրի հեգնանք գնահատել, քանզի այնտեղից, ուր «ուղարկվել էին» հայերը, վերադարձ չկար: Սակայն այն հեռանկարը, որ Եղեռնից մազապուրծ եղած թեկուզև փոքրաթիվ հայությունը կարող է հնարավորություն ստանալ վերադարձնել իր ունեցվածքը, հանգիստ չէր տալիս թուրք ազգայնական ուժերին:

2010 թ. Ստամբուլում հրատարակվեց Նազաթ Օնարանի[4] «Լքյալ գույքի դեպքը. հայկական և հունական ունեցվածքի թրքացումը օսմանյան և հանրապետական շրջանում» մենագրությունը, որն ավելի ծավալուն՝ երկու

---

[1] *Տե՛ս* ***Uğur Ümit Üngör,*** *'A reign of terror'. CUP rule in Diyarbekir Province, 1913-1923, Amsterdam, 2005, pp. 16, 20, 61-63: Տես՝ Վէմ համահայկական հանդես, 2011, թիվ 1, հունվար-մարտ, էջ 15:*

[2] *Նույն տեղում:*

[3] ***Հովհաննիսյան Ա.****, Ցեղասպանության ժխտումը և էթիկան (թուրքական ազգայինպետության կազմավորման որոշ հարցերի լույսի ներքո), «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. IV, Եր., 2006, էջ 124-129:*

[4] *Զեկուցումների ժողովածու…, էջ 298:*

հատորով վերահրատարկվեց 2013-ին[1] : Ըստ Նազաթ Օնարանի՝ 1910-ական թվականների կեսերից երիտթուրքական իշխանությունները սկսեցին իրականացնել Փոքր Ասիայի թրքացման քաղաքականությունը, որի տնտեսական քաղաքականությունն իրականացվեց հայերի և հույների սեփականության թրքացմամբ[2]: Հեղինակն իր ուսումնասիրության մեջ անդրադառնում է երիտթուրքական իշխանությունների կողմից ընդունված «Լքյալ գույքերի մասին» իրավական ակտերին, որոնք հայերի տեղահանությունից հետո օրինական հիմքերի վրա դրեցին նրանց թողած շարժական և անշարժ գույքերի կողոպուտն և յուրացումը: Այսպես, 1915 թ. հունիսի 10- ին երիտթուրքական իշխանությունները հրապարակեցին հայերի թողած գույքերի հետ վարվելու վերաբերյալ «Լքյալ գույքերի մասին» 34 հոդվածից բաղկացած հրահանգները, այնուհետև 1915 թ. սեպտեմբերի 13-ին օսմանյան խորհրդարանն ընդունեց «Լքյալ գույքերի մասին» ժամանակավոր օրենքը, իսկ նույն թվականի հոկտեմբերի 26-ին՝ այդ օրենքի գործադրման կանոնադրությունը[3]:

Երկրորդը կոչվում էր մելիք Հովսեփ: Սա նույնպես ինքնագլուխ է /ինքնիշխան/, իր իշխանության մեջ ինչ էլ ցանկանա, կարող է կատարել՝ առանց ուրիշի հետ հաշվի նստելու…:

Երրորդը կոչվում է մելիք Եսայի, սակայն վերոհիշյալների պես անկախություն չունի, այլ ենթարկվում է պարսից տիրապետությանը:

Չորրորդը կոչվում է մելիք Շահնազար…: Սա ևս պարսից իշխանությանն է ենթարկվում:

Հինգերորդը կոչվում է մելիք Միրզախան…: Սա նույնպես հարկատու է պարսից իշխանությանը»[2]:

Ներկայացնելով Ղարաբաղի հինգ մելիքությունների համառոտ պատմությունը՝ Բաղրամյանի այս նշանավոր երկը մի կողմից դառնում է ժամանակակցի ու ականատեսի ներկայացրած հավաստի պատմություն, մյուս կողմից՝ ինքնիշխանության հասնելու ոգեշնչող գաղափար: Ընթերցողը այստեղ ծանոթանում է Լեռնային Ղարաբաղի՝ 18-րդ դարի սոցիալ-տնտեսական կյանքի ամենաէական փաստերի հետ, ուշ միջնադարի մղձավանջում՝ թուրք-պարսկական բարբարոս միջավայրում ապրող հայ ժողովրդի ծանր իրավիճակի, ինչպես նաև հայ ժողովրդի պետականության վերջին առկայծումներին, ազգի ազատագրության հույս ներշնչող տրամադրություններին, ինքնիշխան լեռնեցիների հպարտության ու արժանապատվության դրսևորումներին: Բաղրամյանը փորձ է անում ցույց տալ, որ ազգային շարժումը քառասից դեպի կանոնակարգվածություն պահանջում է, որ ազգի սոցիալական բուրգի գագաթին գտնվող մարդկանց խումբը, տվյալ դեպքում Ղարաբաղի մելիքները և առհասարակ

---

[1] *Տե՛ս **Մովսես Բաղրամյան**, Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ, Եր., 1991:*

[2] ***Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ 103:*

ազնվականությունը պետք է լինեն բանիմաց, նվիրված, զինվորական գործում վարժված, հայրենասեր ու քաջ: Նա պետք է իր գործունեության ոլորտում բարձրագույն չափանիշի կրողը լինի, քաղաքականապես առավել գործունյա սուբյետ, և ընդհանրապես մտավոր կարողություններով օժտված:

Զրաբերդի տեր Մելիք Ադամին /Մելիք Իսրայելյան/ ներկայացնում է որպես խորամիտ և քաղաքավարի մարդու, պատերազմի մեջ՝ խիզախ: Գյուլիստանի տեր Մելիք Հովսեփին /Մելիք-Բեգլարյան/՝ որպես չափազանց քաջ ու արի, որն իր անկախությունը ձեռք է բերել սեփական խիզախության շնորհիվ: Ահա թե ինչու է նա գովում Քրիստոսի այս քաջ զորավարին և խիզախ հերոսամարտիկին, որ պատերազմի մեջ հանապազ արյուն-քրտինք է թափում հանուն Քրիստոսի հավատքի:

Դիզակի տեր Մելիք Եսայուն /Մելիք Եգանյան/, ներկայացնում է որպես գրասեր և ուսման հմուտ մարդու, որը, սակայն վերոհիշյալների պես ինքնիշխան չէ, վարանդայի տեր Մելիք Շահնազարյանին՝ որպես հնարամիտ անձնավորության, հմուտ՝ դիվանագիտական օրենքներին ու ծեսերին, Խաչենի տեր Մելիք Միզախանին՝ որպես համեստ ու խաղաղասեր մարդու[1]:

Այս քաջ ու իմաստուն մելիքները Ղարաբաղում ստեղծել էին հանգիստ ու խաղաղ կյանքի պայմաններ:

«Երկրում այնպիսի ապահովություն էր տիրում,- հետագայում գրում է մեծանուն վիպասան Ռաֆֆին,-որ դեռահաս աղջիկները այգիների ծառերի տակ նստած կար էին կարում, մնում էին այնտեղ, մինչև մութը պատում էր, հարսները զուգված, զարդարված դուրս էին գալիս տներից և աներկյուղ զբոսնում էին լեռների վրա՝ բոլորովին չմտածելով, թե թուրքը կամ պարսիկը կգա, կհափշտակե և կտանե նրանց: Երբ թշնամին հայտնվում էր, երկրի երիտասարդները զենքը ձեռքներում միշտ պատրաստ էին նրան հանդիպելու համար»[2]: Մինչդեռ, Հայաստանի մնացած մասերում տիրում էր համատարած ստրկությունն ու ստրկամտությունը, համատարած հուսալքությունը. «…Խոհեմությամբ ուշք դարձրեք դուք, ո՛վ հայոց երիտասարդներ,- գրում է Բաղրամյանը,- և նայե՛ք մեր հայրերի ու ծերունիների վախկոտությանը, որոնք, կարծես հոժարակամ հաշտվել են, որ իրենց զավակները այլազգիների իշխանությանը ենթարկվեն: Ահա թե ինչու ո՛չ կարողանում են հագնել իրենց սիրած զգեստները, հեծնել ձի ու երիվար,և ո՛չ էլ կարողանում են իրենց դուստրերի ու կանանց գեղեցկությունն ու շքեղությունն ազատորեն ցույց տալ աշխարհին: Չեն թույլատրում նաև, որ պատանիներն ու երիտասարդները երբևէ ի հայտ բերեն իրենց արիությունն ու քաջությունը, որով, թերևս ճանաչման ու հռչակի արժանանալով, նրանց անուններն ազգերի ու սերունդների մեջ հիշվեն, այլ երիտասարդ և պիտանի ժամանակը նեղում են /նրանց՝ պահելով/ մեղավորի պես գլխիկոր և ծառայի պես ձեռքերը ծալած»[3]:

Նման ծանր ու հուսահատական իրավիճակ է ներկայացնում մյուս ականատես գործիչը՝ Հովսեփ Էմինը: Գալով Հայաստան, հյուրընկալվելով Կարինի մոտ գտնվող Ջինիս գյուղում՝ ականատես է լինում նման հուսալքության ու ստրկամտության, իսկ հետո՝ Ղարաբաղում խանդավառվում 40 հայ քաջերի 4000 ավարառուների դեմ մղած ճակատամարտում ձեռք բերած փայլուն հաղթանակով: Էմինը ցավով նշում է,

---

[1] *Տես **Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ102-103:*
[2] ***Ռաֆֆի**, Խամսայի մելիքները, երկերի ժողովածու, հ. 9, Եր., 1987, էջ 450:*
[3] ***Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ 163:*

որ Կարինի ժողովուրդը այնքան ընկճված ու հուսահատ էր, որ նույնիսկ ազատության մասին չէր էլ մտածում: Իր համար ստեղծված ծանրագույն վիճակը համարելով բնական՝ ցավ չի զգում անմարդկային կտտանքներից ու տանջանքներից՝ կարծելով թե դրանով հնազանդության աստվածային պատվիրաններն է կատարում: Դեռևս առաջին ուղևորության ժամանակ՝ 1760 թ. ձմռանը, հյուրընկալվելով հայկական Ջինիս գյուղում, նա ականատես է լինում հետևյալ ցավալի իրավիճակին. երբ գյուղի բնակիչները Էմինին տեսնում են ընտիր գորշ ձի հեծած, կարծում են, թե թուրք ժանդարմ է և սկսում են քծնվել նրան: Բայց երբ նա խոսում է հայերեն, շատ են բարկանում, արհամարում և նույնիսկ ցանկանում հարձակվել և բրով ծեծել նրան: Էմինը, այս վարմունքը տեսնելով թուրքերեն լեզվով սպառնում է նրանց…: Թուրքերեն խոսքերը լսելուն պես խեղճ արարածները կրկին սարսափում են և ծունկի գալիս, ամենախոր ակնածանքով առաջնորդում գյուղապետի տաքուկ տուն և հյուրասիրելու համար ոչխար մորթում…: Այնուհետև Էմինը սկսում է շատ մտերմորեն խոսել նրանց հետ. «Դուք քրիստոնյաներդ ինչու՞ կառարկեք, երբ ձեր ազգականներից մեկը քմահաճույք կունենա ռազմիկ դառնալու. և ինչու՞ դուք ազատ չեք: Ինչու՞ դուք ձեր սեփական թագավորը չունեք: Նրանց պատասխանը եղավ «Պարո՛ն, մեր ազատությունը այն աշխարհում է. մեր թագավորը Հիսուս Քրիստոսն է»: Էմինը զայրացած հարցնում է. «Ի՞նչ խոսք է այդ. ո՞վ ասաց ձեզ թե այդպես է.

-Եկեղեցու Սուրբ հայրերը, լինում է պատասխանը - որոնք ասում են թե հայ ազգը մահմեդականներին հպատակ է եղել աշխարհի ստեղծումից ի վեր և այդպես էլ պետք է մնա մինչև հարության օրը»[1]:

Ահա այսպիսին էր պետականազուրկ հայության ընդհանուր մտածելակերպը 18-րդ դարում: Ինչպես տեսանք այլ էր իրավիճակը Լեռնային Ղարաբաղում:

1766 թվականին Ղարաբաղի կացությանը ծանոթանալու նպատակով Գյուլիստանի մելիք Հովսեփի հետ Հովսեփ Էմինը մեկնում է Ղարաբաղ, հանդիպումներ ունենում Գանձասարի կաթողիկոսի, Ղարաբաղի մելիքների և Շուշիի Իբրահիմ Խանի հետ: Գյուլիստանում եղած ժամանակ Էմինը ականատես է լինում հետևյալ տպավորիչ ռազմական գործողություններին.

Գանձակից եկող մի գեղջուկից Մելիք Հովսեփը իմանում է, որ իր դեմ է շարժվում մուսուլմանական մի մեծ զորաբանակ: Այդ պահին Հովսեփը բարեկենդանի տոների առիթով իր 500 զինվորներին ազատ էր արձակել, որպեսզի յուրաքանչյուրը իր ընտանիքի հետ անցկացնի այդ տոնական օրերը: «Զորապետը /Հովսեփը/ 40 մարդուց ավել չուներ այդ պահին, պատմում է իրադարձության ականատես Հ. Էմինը: Իր 40 մարդկանց չորս մասի բաժանեց և հինգը՝ ինքը իրեն որդի Բեգլարի հետ դիրք բռնեցին մի ապառաժի ետևը, այն բլրի վրա, որի կողքերը սփռված է Գետաշեն գյուղը: Երկրորդ խումբը բաղկացած էր 12 հոգուց, իսկ երրորդը 13 հոգուց»:

Մուհամեդ Հասան Խանը արևածագից երկու ժամ առաջ հասցրել էր 2000 ղզլբաշիների, 2000 մահմեդական հետևազորի և գյուղացի 500 հայերի գլուխ անցած գրավել գյուղի վերևում գտնվող ամրոցը: Հազարավոր հրացանների պայթյունների հետ ալլահ-ալլահ աղաղակող մահմեդականներն անցան գրոհի: Այդ պահին զորապետը հրամայեց իր հարյուրապետ Աղա Բեկին որ կրակի:

---

[1] *Տես **Հ. Էմին**, Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները, թարգ. Հ. Խաչմանյան, Բեյրութ, 1958, էջ 156:*

«Վեհանձն հայը, փոխանակ իր հրացանն ուղղելու դեպի Պալլահ Մուհամեդը, իր գրպանեն հանեց քթախոտի խոշոր կաշվե տոպրակը…և այն բանալով, ամենայն պաղարյնությամբ, մատուցեց իր տիրոջը և ասաց. «Տեր իմ, անհամբեր մի ըլլաք: Հրամայեցեք: … Եվ իր հրացանը ուղղեց դեպի պարսիկը: Հարվածի հետ միաժամանակ Պալլահ Մուհամեդը անմիջապես դարձուց իր ձին և իր մարմինը դեպի ձախ ծռեց, սակայն և այնպես փամփուշտը հասավ իրեն և գլխիվայր գետին նետեց զայն: Անհամար զորքը, իր հրամանատարի ճակատագիրը տեսնելով ցիրուցան հոտի նման սկսեցին փախչել՝ զենքերը ցած նետելով»[1]:

Ահա այսպիսի անհավասար ու հերոսական պայքարի գնով էին ձեռք բերել արցախցիները այն մեծ հավատն ու վստահությունը, որի հետ մեծ հույսեր էին կապում հայ լուսավորիչները և որի հետ հաշվի էին նստում շրջակայքի մահմեդական իշխանությունները, պարսիկներն ու թուքերը և որի վրա էլ հենվելով՝ ռուսները ծրագրում էին հարավային Կովկասում հաստատել իրենց տիրապետությունը: Պատմական բոլոր աղբյուրները վկայում են, որ Վաչագան Բարեպաշտից սկսած միաբանությունն է եղել Արցախի իշխանավորների ուժի ու հզորության պատվարը: Այդպիսի եզրահանգման հիմնավորումներ են հանդիսանում 1714թ. Գանձասարում Եսայի կաթողիկոսի նախագահությամբ Ղարաբաղի մելիքների ժողովում ընդունված կանոնների համակարգը և նույնանման հավաքների շարունակականությունն ու մելիքների փոխադարձ ուղերձներն ու նամակները: Ուշագրավ է 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղում կատարվող քաղաքական անցուդարձերի ակտիվ մասնակից և պարսկական արքունիքում մելիքական իշխանությունների հավատարմատար Աբրահամ Բեկնազարյանին՝ Ջրաբերդի մելիք Վանու նամակը, որտեղ ասված է. <<Ղարաբաղը կազմում է Աղվանքի մի մասը, և հինգ հարազատ մելիքները Աղվանքի թագավորների հարազատ իշխող սերունդներն են…մեր շահ պապերը որպես բազմադարյա սեփականություն, այդ հողերը տվել են հինգ հարազատ մելիքներին՝ որդուց որդի, տեր և իշխան նշանակելով…Ո՛չ ավազակապետ Ջարչի-Ֆանահն է Ղարաբաղ հող բերել Պարսկաստանի խորքերից, ո՛չ Իբրահիմ ճրռ-խանը՝ Շիրազի բանտերից:[2]

Կարևորելով հայ ժողովրդի ոգեղենության առկա վիճակը՝ ռուսական բանակի գեներալ Պավել Պոտյոմկինը Հովսեփ Արղությանին հարցնում է. «Մեծ Հայաստանի երկիրը, ընկնելով օրենքով անմաքուր թուրքերի և պարսիկների ձեռքը, այնքան երկարատև գերությունից հետո էլ պահում է արդյոք ոգու այնքան ուժ, որ կարևոր է ազատ հոգու համար: Գերությունը և զանազան ճնշումները արդյոք չեն ոչնչացրել սրտերի մեջ ազնիվ զգացմունքները: Բանականության ուժը, օրենքը և հավատի ամրությունը այնքան արդյոք ներգործություն ունեն, որ սրտերի ներքին տրամադրությունը հակված լինի խորտակելու նրանց ճնշող լուծը:…Հավատն ուժեղ կերպով է արդյոք ազդում հայ ժողովրդի վրա և բարեպաշտությունը կարող է ժողովուրդ դրդելու առիթ դառնալ: Կաթողիկոսի աստիճանը ի՞նչ հարկ ունի հայերի մեջ: Մելիքները մատուցանու՞մ են նրա սրբազան աստիճանին պատշաճավոր հարգանք, իսկ ժողովուրդը հնազա՞նդ է մելիքներին. և, վերջապես, ի՞նչ

[1] ***Հ. Էմին****, նշվ. աշխ., էջ 340:*

[2] *Ապրես Բեկնազարյանց, Գաղտնիք Ղարաբաղի, Ստեփանակերտ, 2018, էջ 260-261*

միջոցներ կան ժողովրդին հաճոյանալու, մելիքների հավատարմությունն ապահովելու և հոգևորականությունը գրավելու համար»[1]:

Թուրք պարսկական անագորույն լծի տակ Լեռնային Ղարաբաղում պահպանված այս հատվածի ինքնիշխանության շնորհիվ պահպանվել էր հայի ոգու ուժը, ազատ ապրելու տենչը, դրան հասնելու արահետներն ու հույսերը և հավատի մաքրությունը:

Ղարաբաղի մելիքները Եկատերինա 2-րդ կայսրուհուն հղած դիմումների մեջ հպարտորեն ներկայանում էին որպես «Հայ Արշակունյաց թագավորական տնից սերված ազնվականների ժառանգներ»[2]:

Ռուսական կողմը, ծանոթանալով Արցախի մելիքների կարգավիճակին և ռազմական ուժերին, ճանաչում է նրանց ինքնիշխանությունը և ծրագրում ազատագրել երկրամասը և ստեղծել Ղարաբաղի ինքնիշխան մարզ: «Սրանից հետո,-նշվում է հղված փաստաթղթում,.- Ղարաբաղը պետք է կազմի՝ բացի ռուսներից ոչ մեկից կախում չունեցող մարզ»[3]:

Եկատերինա 2-րդին ներկայացված զեկուցագրի մեջ իշխան Պոտյոմկինը այն համոզմունքն է հայտնում, որ Ղարաբաղը՝ բաղկացած հայ ժողովրդից, պետք է ազգային կառավարություն ունենա և այդ միջոցով Ասիայում վերականգնվի քրիստոնեական պետությունը՝ համաձայն Զերդ կայսերական մեծության բարձրագույն խոստումների, որոնք իմ միջոցով տրվել են հայ մելիքներին»[4]:

Ահա այսքան հանրահայտ էր Ղարաբաղի մելիքությունների հեղինակությունն ու հոգու կորովը, որի արդյունքում 18 և հաջորդ դարի հայ ազգային-ազատագրական շարժումների ծրագրերի հիմքում նրանց հեղինակները դնում էին ինքնիշխան Ղարաբաղի մեծ հույս ներնչող գործոնը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ա.Փ.Ենգոյանը:

---

[1] *Н. Дубровин, «История войн и владычества русских на Кавказе», т. 2, СПБ, 1886, էջք 27-28:*

[2] *Տես Армяно-русские отношения в 18 веке, т. 4, Ер., 1930, էջ 239:*

[3] *Նշվ. աշխ., էջ 239:*

[4] *Նշվ. աշխ., էջ 241:*

ՀՏԴ 325 /479.243/
Քաղաքականություն

Հրայր ՓԱՇԱՅԱՆ - Արցախի Պետական Համալսարանի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոն, բ.գ.թ., դոցենտ,
Լիանա ԲԱԼԱՅԱՆ - Ստեփանակերտի համար 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ*

Հոդվածում ներկայացվում է Ղարաբաղյան հակամարտության և Հայ ռազմարվեստի պատմության ուսուցանման կարևորությունը մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության, հիմնախնդրի իրական կերպարի հանրայնացման, պատերազմի և խաղաղության պայմաններում գտնվող մեր Հայրենիքի անվտանգության ապահովման գործընթացում:
Ցույց է տրվում, որ դրանք կարելի է իրականացնել ուսուցման, ունակությունների կատարելագործման, երիտասարդին իր ուժերի նկատմամբ հավատ ներշնչելով և այդ գործընթացում անընդհատ օգտագործելով դաստիարակության բազմաբնույթ մեթոդներ:
Բանալի բառեր՝ *Ղարաբաղյան հակամարտություն, հայ ռազմարվեստի պատմություն, մատաղ սերունդ, ռազմահայրենասիրական դաստիարակություն, ունակությունների կատարելագործում, հիմնախնդրի իրական կերպար, անվտանգության բաղադրիչներ:*

Г. Пашаян, Л. Балаян

ОБУЧЕНИЕ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА И ИСТОРИИ АРМЯНСКОГО ВОЕННОГО ИСКУССТВА, КАК КЛЮЧЕВОЙ ФАКТОР ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ

В статье представляется важность обучения карабахского конфликта и истории армянского военного искусства в вопросе военно-патриотического воспитания молодого поколения, общественизации реального образа проблемы и для обеспечения безопасности находящейся в условиях войны и мира нашей Родины.
Указывается, что это можно осуществить обучением, усовершенствованием навыков, внушением веры молодому

поколению в собственные силы и беспрерывным применением различных методов воспитания в этом процессе.
Ключевые слова: *Карабахский конфликт, история армянского военного искусства, молодое поколение, военно-патриотическое воспитание, усовершенствование навыков, реальный образ проблемы, компоненты безопасности.*

H. Pashayan, L. Balayan

TRAINING THE KARABAKH CONFLICT AND THE HISTORY OF THE ARMENIAN MILITARY ART AS A KEY FACTOR FOR SECURITY ENSURING

The article presents the importance of teaching the Karabakh conflict and the history of the Armenian military art in the issue of military-patriotic education of the younger generation, socializing the real image of the problem and ensuring the security of our Motherland in war and peace.
It is indicated that this can be done by training, improving skills, instilling faith in the young generation in their own strength and the continuous use of various methods of education in this process.
Keywords*: Karabakh conflict, history of Armenian military art, young generation, military-patriotic education, skills improvement, real image of the problem, security components.*

Հոդվածում ներկայացվում է Ղարաբաղյան հակամարտության և Հայ ռազմարվեստի պատմության դասավանդման կարևորությունը մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության, հիմնախնդրի իրական կերպարի հանրայնացման, պատերազմի և խաղաղության պայմաններում զսնվող մեր Հայրենիքի անվտանգության ապահովման գործընթացում:

«Հայ ռազմարվեստի պատմություն» առարկան հանրակրթական դպրոցներում դասավանդելը կարևոր նշանակություն ունի կրթության երկու ենթահամակարգերի՝ ուսուցման և դաստիարակության՝ հետևաբար նաև մեր պետության առջև ծառացած անվտանգային խնդիրների լուծման տեսանկյունից: Նախ՝ ինչպես յուրաքանչյուր առարկայի դեպքում, դա անհրաժեշտ է որոշակի գիտելիքներ ձեռք բերելու, տվյալ դեպքում՝ սեփական ռազմարվեստի պատմությանը ծանոթանալու համար, որն ինքնին կարևոր նշանակություն ունի: Մյուս կողմից, որը մեր պարագայում ավելի կարևոր է, ի տարբերություն մյուս առարկաների, որոնց հիմնական նպատակը զուտ գիտելիքներ հաղորդելն է աշակերտներին, տվյալ բնագավառը կարևորվում է նաև մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության համար: Իսկ ո՞րն է այդ կարևորությունը: Պատերազմի և խաղաղության պայմաններում ապրող յուրաքանչյուր երկրի, այդ թվում և հատկապես մեզ համար երկրի պաշտպանունակության և անվտանգության հիմնական բաղադրիչներից մեկն էլ կապված է ռազմահայրենասիրական դաստիարակություն ունեցող, բարոյականային բարձր որակներով օժտված հասարակություն ունենալու հետ: Բնականաբար, որքան բարձր է նման որակական հատկանիշներով օժտված քաղաքացիների առկայությունը, նույնքան բարձր է երկրի

պաշտպանունակության տոկոսային հարաբերակցությունը: Եվ հակառակը, քանի որ զուտ մեխանիզմի առումով Հայաստանը չունի այլընտրանք, քան անվտանգության կորիզ ստեղծել իր ամբողջ բնակչությամբ[1]:

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Հայ ռազմարվեստի պատմության դասավանդումը ունի իր առանձնահատկությունները[2], որոնց անդրադառնալիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երկու հանգամանքի վրա: Դրանցից մեկը կապված է արդեն վերը նշված նպատակի՝ ռազմահայրենասիրական դաստիարակության, մյուսը՝ գործընթացի կազմակերպման, այն է՝ թեմայի արդյունավետ մատուցման հետ[3]: Այսինքն՝ գլխավոր նպատակը մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունն է, որի իրականացման համար պետք է օգտագործել որոշակի մեթոդներ ու միջոցներ: Փորձենք մանրամասնել ըստ հերթականության:

Այսպես, ռազմահայրենասիրական դաստիարակությունը մեր կարծիքով իր մեջ ներառում է առնվազն հետևյալ բաղադրիչները:

Ռազմական բաղադրիչ: Արցախի Հանրապետության ստեղծման օրվանից երկրի անվտանգության ապահովման գործընթացում գերակա դիրք ուներ և այժմ էլ ունի **ռազմական բաղադրիչը**, որի հիմքերը դրվում են դպրոցում, իսկ ավելի խորացված ու մասնագիտորեն՝ բանակում: Հետևաբար կարող ենք ասել, որ այս հարցում բավականին մեծ է զինղեկների դերը, քանի որ հենց նրանք են այն հիմնական օղակը, որը պետք է մատաղ սերնդին նախապատրաստեի զինվորական ծառայությանը, ձևավորի զինծառայության մասին որոշակի տեսական ու գործնական գիտելիքներ, հայրենասիրական ոգով դաստիարակված, համապատասխան ունակություններով օժտված, և ամենակարևորը՝ թշնամուն հաղթելու վճռական դիրքորոշում ունեցող ապագա հայրենյաց պաշտպաններ:

Բարոյակամային (բարոյահոգեբանական) բաղադրիչ: Սա մարդկանց մեջ ձևավորում է որակական այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են դժվարություններին դիմագրավելու, պայքարելու, ծանր պահերին գլուխը չկորցնելու, սառը դատելու ունակությունը և այլ կամային հատկություններ: Նման ունակությունների ձեռքբերման համար կարևորվում է նաև ֆիզիկական դաստիարակությունը, որը նպատակ ունի ոչ միայն կոփել երիտասարդների մարմինը, այլև ոգին: Եվ հենց այդ միասնության մեջ է, որ անհատը դառնում է անպարտելի[4]:

** Հետազոտությունն իրականացվել է ԷՂՀ ԿԳՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության՝ № SCS 17/003 գիտական թեմայի շրջանակներում:*

*[1] **Բաղալյան Հ.**, Ալիևի խոշոր ծառայությունը Հայաստանին. Որն է հաջորդ քաղաքը, https://www.lragir.am/2018/02/10/169938/*

*[2] Տես՝ **Սարգսյան Ս.**, Հայ ռազմական արվեստի պատմություն, Եր., 1969:*

[3] Այս առումով բավականին ուսանելի նյութ է պարունակում Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կողմից հրատարկված «Նոր մոտեցումներ Հայաստանի պատմության և մշակույթի որոշ հիմնահարցերի ուսումնասիրման և դասավանդման ոլորտում» գիտաժողովի ժողովածուն, Եր., 2016:

[4] «Հոգեբանությունը և զինվորը» գրքում «մարտական ոգի» հասկացությունը շատ դիպուկ է բնութագրել Նորման Կոուպլենդը: Նա գրում է. «Դա մարդուն հայտնի

Այս գործընթացում իր ուրույն տեղն ու դերն ունի **կրթական բաղադրիչը**, որը երկրի անվտանգության ապահովման մյուս բաղադրիչների հետ միասին մեկ ամբողջականություն է կազմում՝ ցույց տալով հասարակության առջև ծառացած մարտահրավերներին դիմակայելու նրա ունակությունը: Այսինքն՝ մարդկանց կրթական մակարդակի բարձրացումը հնարավորություն է ընձեռում ավելի արդյունավետությամբ կազմակերպել հասարակության կառավարումը՝ այդ գործընթացին ներգրավելով իրապես մրցունակ ուժեր, և ստեղծել արժեքներ, որոնք անհրաժեշտ են նրա շարունակական զարգացումն ապահովելու համար: Այլ կերպ ասած՝ կրթված ու գիտակից քաղաքացին ավելի շատ կարող է օգտակար լինել սեփական հանրությանը և հենց ինքն իրեն, դրանով իսկ երկրին ու նրա պաշտպանությանը, քան անկիրթ ու պարփակված անձնավորությունը:

Քարոզչական բաղադրիչ: Սա իր հերթին կարելի է բաժանել երկու ենթախմբի: Առաջինը կապված է այն ընդհանրական գործընթացների հետ, որոնք առավելապես առնչվում են գլոբալիզացիա հասկացությանը: Մենք գիտենք, որ երևույթի տարածման արդյունքում փոխվում է մարդկանց մտածելակերպը, քայքայվում հասարակության արժեհամակարգը, ձևավորում այնպիսի քաղաքացիներ, որոնց համար ազգային մշակույթն ու մտածելակերպը, վարքի ավանդական դրսևորումները և ազգին բնորոշող այլ արժեքները, մեղմ ասած, դառնում են օտար: Եվ այստեղ պետք է ասել, որ հիմնական անելիքն ընկած է ռազմահայրենասիրական դաստիարակությունն ապահովող անձանց վրա, որոնց կարևոր բաղկացուցիչը նաև զինղեկներն են, որոնք մատաղ սերդի մոտ պետք է ձևավորեն մեր ազգին բնորոշ, մեր գոյությանը չսպառնացող և նրա անվտանգությունն ապահովող արժեքներ: Աշխարհի որոշ երկրներ հաջողությամբ կարողանում են օգտագործել գլոբալիզացիայի ընձեռած հնարավորությունները՝ սեփական արժեհամակարգը հարստացնելու և ժամանակի մարտահրավերներին դիմակայելու համար: Օրինակ, Ճապոնիայում առաջ է քաշվել մի հայեցակարգ, որը բառացի նշանակում էր «որևէ բան անել տեղաբնիկի պես», որի նշանաբանն էր «մտածիր գլոբալ, գործիր լոկալ»[1]: Նշված հայեցակետը, որը մասնագետների կողմից ստացել է գլոկալիզացիա անվանումը, միտված է գլոբալիզացիան օգտագործել սեփական ազգայինը պահպանելու և զարգացնելու համար[2]:

Քարոզչական բաղադրիչի մյուս կողմն ուղղակիորեն կապված է մեր ֆիզիկական գոյությանը սպառնացող՝ հակառակորդի քարոզչական

ամենահզոր զենքն է. ավելի հզոր, քան ամենածանր տանկը, քան ամենաուժեղ հրանոթը, քան ամենակործանիչ ռումբը: Բանակի բարձր բարոյական վիճակը այն միջոցն է, որն ի զորու է պարտությունը վերածել հաղթանակի: Բանակը ջախջախված չէ, քանի տիրապետող չէ արտության գիտակցումը, քանի որ պարտությունը մտահանգում է, ոչ թե ֆիզիկական վիճակ»: Տես՝ Норман Коупленд, Психология и солдат; Перевод с английского А.Т. Сапронова и В.М. Катеринича. - 2-е изд. - М., 1991. ст. 96.

*[1] Տես՝ **Благовещенский Ю.** Глокализация-новая парадигма в экономике (http://www.cemi.rssi.ru/activity/seminars/Glokalizatsiya.pdf):*

*[2] Այս մասին մանրամասն տես՝ **Քոթանջյան Հ.**, Հայաստանի հանրապետության զարգացման և անվտանգության նպատակներն ու գերակայությունները գլոկալիզացման պահանջների լույսով՝ «Թավշյա հեղափոխության» նպատակադրման իմաստավորմամբ, Հայկական բանակ, 3 (97), Եր. 2018, էջ 9-15:*

գործունեության հետ: Այստեղ հարկ է անդրադառնալ ոլորտում նրա ցուցաբերած որոշ դրսևորումների: Առաջինը կապված է լրատվամիջոցներում, հանրային լայն շրջանակներում և նույնիսկ դպրոցական ու բուհական դասագրքերում հակահայկական քարոզչության իրականացման հետ, որոնց հիմնական նպատակը հայերի նկատմամբ ատելությամբ լցված սերնդի դաստիարակումն է, և նրանց, որ ցանկացած պահի պետք է պատրաստ լինեին ոչնչացնելու հայերին, որոնց սպանությունը համարվում է հերոսական արարք: Մենք երբեմն անսալով մեր ճշմարտացիությանը՝ թերագնահատում ենք հակառակորդին, սակայն պետք է ասել, որ նրանք այս ոլորտում բավականին հաջող են գործում: Մեկ օրինակ: Տրամաբանությունը ենթադրում է, որ 1991-1994թթ. ռազմական գործողությունների արդյունքում պարտված կողմը հենց այս պատճառով չպետք է ունենար հերոսի կամ նման այլ կոչումներով քաղաքացիներ: Սակայն պարզվում է, որ դրան հակառակ՝ Ադրբեջանի Հանրապետությունում ևս կան նման բարձրագույն կոչումների արժանացած քաղաքացիներ և այնտեղ նույնպես հորինվում են «ադրբեջանական» ռազմական արվեստին նվիրված հերոսական դրվագներ: Ոչնչից նման կերպարներ ստեղծելով՝ նրանք փորձում են բարձրացնել երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական ոգին, նրանց մեջ սերմանել հավանական պատերազմին նախապատրաստվելու, հայրենիքին նվիրվելու ունակություններ:

Մեր կարծիքով՝ ռազմահայրենասիրական դաստիարակության նշված **չորս բաղադրիչները՝ կրթական, ռազմական, բարոյակամային և քարոզչական,** միասին կազմում են մեկ ամբողջություն, որը մյուս բաղադրիչների հետ մեկտեղ հանդիսանում է պետության անվտանգային բաղադրիչի ձևավորվման ընդհանուր շղթայի կարևորագույն բաղկացուցիչը:

ՀԱՅ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այժմ անդրադառնանք գործընթացի կազմակերպման, այսինքն՝ առարկայի արդյունավետ մատուցմանը, որն անմիջականորեն կապված է առաջադրված նպատակին հասնելու ուղիների ու մեթոդների հետ: Այստեղ անհրաժեշտ ենք համարում առանձնացնել հետևյալը.

1. Մանկավարժը որպես տվյալ առարկայի խորագիտակ: Մենք՝ բոլորս, գիտենք, որ մանկավարժների մասնագիտական պատրաստվածության և հմտությունների մակարդակով է պայմանավորված աճող սերնդի ոչ միայն կրթվածության մակարդակը, այլև արժեհամակարգը: Նույնիսկ առօրյա խոսակցության ընթացքում, երբ ինչ-որ մեկը որևէ բնագավառում ցուցաբերում է չիմացություն, մենք նրան հարցնում ենք, թե ով է եղել նրա ուսուցիչը, բնականաբար դրանով իսկ տվյալ մարդու ցածր գիտելիքներ ունենալու մեջ անուղղակիորեն մեղադրելով նրա դաստիարակին: Եվ հակառակը. Արիստոտելի նման ուսուցիչ ունեցողը չէր կարող անպիտան լինել: Ուսուցման արդյունավետությունը կախված է նրանից, թե որքանով է ուսուցիչը խորագիտակ այդ գործընթացի պլանավորման, կազմակերպման, գիտելիքների փոխանցման և աշակերտների վրա ազդելու հարցերում: Մանկավարժական գործունեությունը նրանից պահանջում է գիտելիքների և մասնագիտական կարողությունների անընդհատ կատարելագործում: Հատկապես այդ խնդրի լուծմանն են ուղղված ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթացներն ու ինքնուսուցումը:

Մանկավարժի խնդիրն է յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել այնպիսի նպաստավոր միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ ու հնարքներ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի դրսևորել նախաձեռնողականություն և ստեղծագործական միտք: Ժամանակակից մանկավարժական հնարքները՝ համագործակցային ուսուցումը, նախագծային մոթոդը, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը հնարավորություն են ընձեռում իրականացնելու աշակերտակենտրոն մոտեցում: Կարծում ենք, մանկավարժներից յուրաքանչյուրը, փորձից ելնելով, ունի նաև դասավանդման իր ուրույն՝ որոշակի մոտեցումների նկատմամբ գերակայությունը, քանի որ այն անձինք, որոնց ուղղված են այդ գործողությունները, միատեսակ չեն. նրանցից յուրաքանչյուրն ունի սեփական մտածելակերպն ու այս կամ այն իրադարձության վերաբերյալ սեփական բացատրությունը: Պարզապես ուսուցանվողների հետ հարաբերվելիս կարևոր է գիտակցել, որ անհրաժեշտ է կապ հաստատել յուրաքանչյուր անհատի հետ, նույնիսկ խմբի հետ զրուցելու դեպքում: Ամերիկացի հայտնի գեներալ Նորման Շվարցկոպֆը գրել է. **«Ես տեսել եմ շատ մարդկանց, ովքեր կանգնելով դասակի առջև, տեսել են դասակ: Սակայն մեծ առաջնորդները, կանգնելով դասակի առջև, ընկալում են այն որպես 44 առանձին անհատականություն, որոնցից ամեն մեկն ունի իր սեփական նպատակները, ամեն մեկն ուզում է ապրել ու բարի գործեր կատարել»[1]: Այսիքն՝ կանգնելով ուսուցանվող կոլեկտիվի առաջ, մենք պետք է կարողանանք տեսնել 10, 15 կամ տարբեր քանակակազմի անհատներից կազմված խումբ:**

2. Ուսուցիչը որպես անվիճելի հեղինակություն: Երկրորդ կարևոր առանձնահատկությունը, կարծում ենք, կապված է ուսուցչի անձի ըմբռնման՝ հեղինակության հետ: Այսինքն՝ դաստիարակության գործընթացում կարևոր նշանակություն ունեն աշակերտ-ուսուցիչ հարաբերություններում ձևավորված փոխվստահությունն ու հարգանքը: Որպեսզի ասվածը ավելի պատկերավոր լինի, ներկայացնենք հետևյալը: Շատերը թյուրիմացաբար կարծում են, որ եթե լավ գաղափար առաջարկեն, ապա մարդիկ անպայմանորեն կհետևեն նրան: Սակայն իրականում առաջնորդությունը գործում է այլ մեխանիզմով: Մարդիկ առաջին հերթին հետևում են ոչ թե արժանի ու ոգևորիչ գաղափարներին, այլ՝ մարդկանց: Նրանք հետևում են արժանի առաջնորդներին, որոնք և քարոզում են ուշադրության արժանի գաղափարներ: Գուցե մի խելացի մարդ ունի շատ լավ ծրագրեր ու գաղափարներ, սակայն պետք է լինի նաև առաջնորդ, այդ գաղափարները կյանքի կկոչի: Եթե Գարեգին Տեր-Հարությունյանը հայրենասիրական իր մտքերը հանձներ թղթին, ապա գուցե դա կարդային, մի քիչ էլ ոգևորվեին, սակայն միայն նրա իրական առաջնորդ լինելու դեպքում, իր գաղափարախոսությամբ շարժվելով՝ հաղթանակների հասնելու դեպքում Գարեգին Տեր-Հարությունյանը դարձավ Նժդեհ[2]:

Երբ Ավոն նշանակվեց Մարտունու պաշտպանական շրջանի ղեկավար, միանգամից ժողովուրդը նրան չընդունեց: Բայց շնորհիվ իր գիտելիքների, մարդկանց հետ շփվելու ունակությունների, իր ազնվությամբ և այլ մարդկային որակներով դարձավ բոլորի կողմից հարգված ու վստահելի հրամանատար, որը ոչ

---

[1] ***Максвелл Д.*** *21 неопровержимый закон лидерства, Минск 2005, ст. 82.*

[2] *Այս մասին մանրամասն տես՝ Շաքարյան Կ., Առաջնորդության մակարդակները և առաջնորդի տեսակները զինված ուժերում, Զինվորական առաջնորդություն, Երևան 2012, էջ 103-134:*

միայն իր ուրույն ազդեցությունն է թողել Արցախյան ազգային-ազատագրական պայքարում, այլև նշանակալից հետք է թողել մարդկանց մասնագիտական ու որակական հատկանիշների ձևավորման վրա:

3. Առարկայի ներկայացման կարևորությունը: Առարկայի դասավանդման երրորդ կարևոր առանձնահատկությունը կապված է ուսուցչի կողմից դասի ներկայացման ձևի հետ: Ուսուցչի կողմից նյութը պետք է մատուցվի գրավիչ և մատչելի ձևով: Դա մեծացնում է աշակերտի հետաքրքրությունը, ուժեղացնում սովորելու մոտիվացիան: Մասնավորապես պատմական նյութի ընկալման և իմացության հիմքում անհրաժեշտ է դնել ոչ միայն վերբալ ու պատկերավոր մտածողությունը, այլ նաև հուզական ապրումները, որոնք կարող են մեծապես նպաստել աշակերտների անձնական վերաբերմունքի ձևավորմանը: Հայտնի է, որ մարդու հուզական աշխարհը կարևոր դեր է խաղում նրա կյանքում: Ուստի հուզական պահը, որպես հոգեբանական յուրահատուկ երևույթ, պետք է լայնորեն հաշվի առնել հայ ռազմարվեստի պատմության դասերին: *Ըստ Գ. Նժդեհի, որը դպրոցը ներկայացնում է և՛ որպես կրթարան, և՛ որպես տաճար, նշում է, որ մատուցվող գիտելիքները պետք է լինեն «մեր պատմության բովանդակ գեղեցկությունն ու վեհությունը, ... քամված» և «չպետք է լինեն մույթ և շփոթ տեղեկություններ…ցամաք և անհոգի…այնպես, կարծես նկարագրվում է Սահարայի անապատը կամ հեռավոր կոգի»:* Այնուհետև զարգացնում է իր մտքերը դասավանդման մեթոդների շուրջ. *«Անսահման երկյուղածությամբ և անսահման քաղցրությամբ պիտի դասավանդվի հայրենագիտությունը» ապա «սրտի և մտքի կրակով պիտի խոսվի, այնպես, որ հրահրվի վերջինի պաշտամունքը մանկական հոգիների մեջ»*[1]:

4. **Դասավանդման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունը:** Դասավանդման գործընթացում չափազանց կարևոր է տարիքային առաձնահատկության հաշվառումը: Մենք բոլոր դեպքերում պետք է հաշվի առնենք, որ գործ ունենք դեռահասության տարիքի մարդկանց հետ, որն, ինչպես հայտնի է, անձի ձևավորման ամենավճռական շրջաններից մեկն է: Այս տարիքում են հիմնականում սկսում առաջին անգամ ի հայտ գալ անձի բնավորության դրական ու բացասական դրսևորումները: Երեխաները հաճախ դառնում են անկառավարելի, սրվում են հարաբերությունները ծնողների և ուսուցիչների հետ[2]:

Դեռահասները գնահատում են գիտակ ու խիստ, բայց արդարամիտ, նրբանկատությամբ օժտված ուսուցիչներին, որոնք ազատ տիրապետում են իրենց առարկային, ունեն ընդարձակ գիտելիքներ, ձգտում են դասագրքի սահմաններից դուրս գիտելիքներ հաղորդել[3]:

---

[1] ***Գ. Նժդեհ,*** *Ընտիր երկեր, Երևան 2007, էջ 52-53:*

[2] *Այս մասին մանրամասն տես՝* ***Արամյան Լ., Մակիչյան Ս.****, Արզումանյան Ն., Դեռահասի՝ ապագա զինվորի անհատական տիպով պայմանավորած վարքի սոցիալ - հոգեբանական դրսևորումները, «Բուհ-բանակ» համագործակցության գերակայությունը «Ազգ-բանակ» հայեցակարգի համատեքստում, միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2017, էջ 201-209:*

[3] *Տես՝* ***Պողոսյան Վ.****, Հայոց պատմության դասավանդման գործընթացի հոգեբանական դիտանկյունները, «Բուհ-բանակ» համագործակցության գերակայությունը «Ազգ-բանակ» հայեցակարգի համատեքստում, միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2017, էջ 273-282:*

Քննարկվող տարիքի կարևոր առանձնահատկությունը ակտիվ, ինքնուրույն, ստեղծագործական մտածողության ձևավորումն է: Դեռահասը չի վստահում միայն ուսուցչի կամ դասագրքի հեղինակությանը, այլ ձգտում է ունենալ սեփական կարծիք, իր հայացքներն ու դատողությունները, քննադատաբար է մոտենում նյութին, որը նախկինում նրա մեջ չի հարուցել ոչ մտորում, ոչ կասկած, «սխալներ» է գտնում դասագրքում կամ ուսուցչի դատողություններում, ուզում է համոզվել այս կամ այն մտքի, դրույթի, դատողության ճշտության մեջ: Ինքնին դա մտածողության արժեքավոր հատկանիշ է և այն ամեն կերպ պետք է զարգացնել[1]:

5. Կիրառական նշանակությունը: Չինղեկները ունեն ևս մեկ առավելություն: Ի տարբերություն մյուս մասնագիտությունների, որոնք առավելապես տեսական գիտելիքներ են մատուցում, նրանց աշխատանքը նաև կիրառական նշանակություն ունի բոլոր երիտասարդների համար, քանի որ նպատակ ունի ապահովելու գիտելիքի գործնական կիրառելիությունը ռեալ կյանքում ծագող տիպային խնդիրների լուման համար[2]: Բանն այն է, որ բոլորն էլ պետք է ծառայեն բանակում, բոլոր էլ ստիպված են լինելու ինչ-որ ժամանակ կանգնելու հայրենիքի պաշտպանության դիրքում: Հետևաբար, զուր չեն դպրոցական տարիներին այս ոլորտում ձեռք բերվելիք տեսական ու գործնական գիտելիքները: Իսկ այս կամ այն զորամաս այցելությամբ, որն իրականացվում է տարբեր միջոցառումների, բանակ-հասարակություն կապի ամրապնդման շրջանակներում, վաղվա զինվորը հնարավորություն է ստանում անմիջականորեն ծանոթանալու այն պայմաններին, որում նա կարճ ժամանակ հետո անց է կացնելու երկու տարվա իր ծառայությունը:

6. Հայ ռազմարվեստի պատմությունը որպես սեփական պատմություն: Առարկայի դասավանդման հաջորդ կարևոր առանձնահատկությունը մեր կարծիքով կապված է բուն առարկայի անվան հետ: Հայ ռազմարվեստի պատմության հիշարժան դրվագներին անդրադառնալիս անհրաժեշտ է կարևորել երկու հանգամանք: Առաջինը՝ դրանք իրոք ռազմարվեստի պատմության հիշարժան դրվագներ են Ավարայրից, Սարդարապատից մինչև Շուշի, որոնցում դրսևորվել է հայ ժողովրդի հանուն հայրենիքի մինչև վերջ պայքարելու կամքն ու վճռականությունը, հայ զինվորի խիզախությունն ու նվիրվածությունը: 1918թ. մայիսյան հերոսամարտերի ժամանակ, նույնիսկ, հակառակորդ կողմի զորահրամանատարը՝ Վեհիբ փաշան է հրապարակավ ընդունել հայերի լավագույն զինվորները լինելու հանգամանքը[3]: Հայ զինվորները աչքի էին ընկնում ամենուր, օրինակ, մ.թ.ա. 331թ. Գավգամելայի ճակատամարտում Հայոց այրուձին փախուստի մատնեց Ալեքսանդր Մակեդոնացու ձախ թևը՝ Պարեմենիոնի զորքը և հայտնվեց Մակեդոնացու թիկունքում: Ալեքսանդր Մեծի պատմությունը կարող էր հենց այդ օրն էլ ավարտվել, եթե հակառակ թևում պարսիկները խուճապի չմատնվեին[4]:

---

[1] *Այս մասին մանրամասն տես՝* ***Կրուտեցկի Վ.****, Մանկավարժական հոգեբանության հիմունքներ, Երևան, 1976:*

[2] ***Ավետիսյան Մ., Մանասյան Մ.****, Ռազմավարական խաղերը որպես կիրառական ուսուցման գործիք, Ռազմավարական անվտանգային հետազոտություններ, Եր. 2014, էջ 130:*

[3] *Տես՝* ***Ավետիսյան Հ.****, Հայոց ազգային միասնության հաղթանակը, էջ 115, 243:*

[4] *Տես՝* ***Հայրապետյան Կ., Այայան Է.****, Այրուձիի մեծ գաղտնիքը, «Երևան» ամսագիր, թիվ 4, 2007:*

Երկրորդը, ի տարբերություն շատ այլ զորաբանակների, որոնց հաջողությունը սովորաբար պայմանավորված էր լինում ավարառությամբ, հայկական զորքերի ուսուցման և դաստիարակության հիմքում ընկած էր գաղափարաբարոյական և ֆիզիկական դաստիարակությունը, քանի որ դրսից անընդհատ սպառնացող ներխուժման վտանգը պահանջում էր համախմբվածություն և ամուր պաշտպանություն: Ինչպես վկայում են մեզ հասած պատմական տվյալները, հին դարերից հայկական ազգային և պետական համակարգում **ուրույն դեր ու նշանակություն է ունեցել զինվորական դաստիարակությունը, որի հիմքում ֆիզիկականի հետ մեկտեղ խիստ կարևորվել է բարոյական, տիրասիրության և հայրենասիրական դաստիարակությունը**[1]: Ծնորհիվ դարերի հորձանուտով մեզ հասած ռազմահայրենասիրական այդ գենի՝ 20-րդ դարավերջին մեզ պարտադրված Արցախյան ազատագրական պատերազմում Հայոց նորաստեղծ բանակը ոչ միայն փայլուն ու անթերի իրականացրեց արցախահայության երազանքը և առաջին անգամ զիջելու փոխարեն թշնամուց հետ վերադարձրեց կորսված հայկական տարածքների մի մասը, այլեւ հաստատ ու աներեր կանգնեց է դիրքերում և անթերի կատարում է իր սրբազան առաքելությունը՝ օտար ոտնձգություններից պաշտպանելով հայրենի հողը, պատիվն ու ապագան[2]:

Այստեղ գոյություն ունի ևս մեկ նրբություն: Մեզանից շատերը կամ 1990-ականներին են մասնակցել մարտական գործողություններին կամ 2016-ին, և այս առումով մենք բավականին շահեկան դիրքում ենք գտնվում՝ աշակերտներին ռազմահայրենասիրական դաստիարակություն տալու և հայ ռազմարվեստի պատմությունը ներկայացնելու համար, քանի որ այդ կարևորագույն իրադարձությունների կենդանի վկան ենք հանդիսանում: Սակայն մենք հաճախ մեր գյուղի, համայնքի կամ մեզ ծանոթ մարդկանց մասին, նույնիսկ սեփական՝ մարտի դաշտում կատարած սխրանքները չենք ներկայացնում, մի կողմից համեստություն ցուցաբերելով, իրականում դրանով իսկ նսեմացնելով սեփական արարքի իրական նշանակությունը, իսկ մյուս կողմից՝ առաջնորդվում ենք այն սխալ կանխավարկածով, որ դա համարում ենք ոչ հեռավոր անցյալում տեղի ունեցած և բոլորին հայտնի փաստ: Մինչդեռ ժամանակն անցնում է, մեկը մյուսին հաջորդում են կյանքի բուռն իրադարձությունները և դրանք սովորաբար անցնում են մոռացության գիրկը՝ առանց անհրաժեշտ մանրամասնություններով սերունդներին փոխանցելու:

Տեսեք ինչպիսի վտանգավորություն ունի նման համեստ վերաբերմունքը: Նախ՝ դրա արդյունքում հայոց պատմության ռազմարվեստի հիշարժան դրվագները հանրությանը չեն ներկայացվում, ինչի արդյունքում մենք **հունական ու հռոմեական ռազմարվեստի մասին ավելի շատ բան գիտենք, մինչդեռ անցյալի հայկական բանակների պատմությունը ցայսօր մնում է չպատմված**[3]:

---

[1] *Տես՝ **Մարգսյան Ս.**, Բանակ երևույթը Հայոց մեջ հին դարերից մինչև մեր օրերը, «Բուհ-բանակ» համագործակցության գերակայությունը «Ազգ-բանակ» հայեցակարգի համատեքստում, միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2017, էջ 85:*

[2] *Նույն տեղում, էջ 93:*

[3] *Տես՝ **Հայրապետյան Կ., Այայան Է.**, Այրուձիի մեծ գաղտնիքը, «Երեւան» ամսագիր, թիվ 4, 2007:*

Երկրորդ՝ ամենավտանգավոր դրսևորումը անմիջականորեն կապված է Ղարաբաղյան կարգավորման գործընթացի հետ: Մեր բազմաթիվ շփումներում չներկայացնելով տեղի ունեցած իրադարձությունները, հակամարտության իրական կերպարը՝ մենք հակառակորդին հնարավորություն ենք տալիս իր հորինած ձևով հիմնախնդիրը ներկայացնել միջազգային հանրությանը[1]: Նախահարձակ հակառակորդը, շնորհիվ մեր այդ բացթողնման, և 1990-ականների և 2016-ի ռազմական գործողությունները ներկայացնում է որպես Հայաստանի կողմից իր դեմ ուղղված ռազմական ագրեսիա՝ իր բոլոր բացասական հետևանքներով: Հակառակորդի քարոզչության արդյունքում այնքան է խեղաթյուրվել Ղարաբաղյան հիմնախնդրի իրական կերպարը, որ միջազգային հանրությանն այն բացահայտորեն մատուցվում է որպես Ադրբեջանի միջազգայնորեն ճանաչված տարածքային ամբողջականությանն ուղղված Հայաստանի ագրեսիա: Արդյունքում՝ հիմնախնդրի քաղաքական-դիվանագիտական անվտանգային բաղադրիչը կորցնում է իր դերակատարությունը, և Ադրբեջանի կողմից «արդարացիորեն» հակամարտության լուծման միակ ճանապարհ է հայտարարվում ռազմականը: Վերոնշյալն այնքան ակնառու դրսևորում է ստացել, որ դարձել է ՀՀ վարչապետի՝ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ արտաքին գործերի նախարարության աշխատակիցներին ուղղված հիմնական մեսիջը: «Առաջիկա շրջանի համար մեր մեծագույն խնդիրը հետևյալն է՝ միջազգային հանրության շրջանում բարձրացնել Լեռնային Ղարաբաղի հարցի էության վերաբերյալ տեղեկացվածությունը, որովհետև, ցավոք, այնուամենայնիվ, միշտ չէ և ամենուր չէ, որ մենք հանդիպում ենք այդպիսի տեղեկացվածության: Սա մի խնդիր է, որն իսկապես մեզ համար ունի ազգային անվտանգության նշանակություն: Մենք պետք է համոզված լինենք, որ միջազգային հանրությունը Լեռնային Ղարաբաղի հարցն ընկալում է հենց այնպես, ինչպես այն կա իր էության մեջ: Ցավոք, մենք այսօր նման արձանագրում ամեն տեղ չէ, որ կարող ենք անել և պետք է այս ուղղությամբ շատ լուրջ աշխատել», մասնավորապես նշել է Ն. Փաշինյանը[2]:

Ո՞րն է պատճառը: 1988թ. ավերիչ երկրաշարժից անմիջապես հետո, երբ Մ. Գորբաչովը Լենինականից ժամանեց Երևան, ԽՍՀՄ առաջին և վերջին նախագահն անակնկալի էր եկել, աղետի գոտու փոխարեն երևանցիների իրեն ուղղված. «Երբ է Ղարաբաղը միացվելու Հայաստանին» հարցից[3]: Նույնն է վկայում ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովը[4]:

---

[1] *Տես՝ **Փաշայան Հ., Բալայան Լ.**, «Ղարաբաղյան հակամարտության կարգավորման խոչընդոտները» «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, թիվ 5 (81), Եր., 2018, 11-24 էջեր:*

[2] *Նիկոլ Փաշինյանը մասնակցել է Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ արտաքին գործերի նախարարության ընդունելությանը https://www.mfa.am/hy/press-releases/2018/12/25/pm_newyear/8916*

[3] *Տես՝ **Հակոբյան Թ.**, Գորբաչովի առաջին և վերջին այցը Հայաստան ու Անդրկովկաս, https://www.civilnet.am/news/2017/12/07/ Գորբաչովի-առաջին-և-վերջին-այցը-Հայաստան-ու-Անդրկովկաս/325923*

[4] ***Գորբաչով Մ.** «Ես չունեմ քաղաքական այնպիսի գութան, որ վերահերկեմ միութենական հանրապետությունների սահմանները», www.artsakhtert.com/arm/index.php/politics/item/23620-2017-10-10-06-51-40*

Շնորհիվ համազգային այդ գիտակցման՝ մենք 1990-ականներին կարողացել ենք հակամարտության իրական կերպարը ներկայացնել միջազգային հանրությանը՝ տարբեր միջազգային կառույցներում ապահովելով համապատասխան վերաբերմունք մեզ ու մեր իրավացի խնդիրների նկատմամբ:

Հիմնահարցի բուն էությունն այժմ էլ չի փոխվել, բայց շնորհիվ մեր բացթողումների՝ փոխվել է նույն խնդրի վերաբերյալ միջազգային հանրության ընկալումներն ու վերաբերմունքը: Հետևաբար, թերացումները շտկելու և հատկապես կործանարար հետևանքներից խուսափելու համար Ղարաբաղյան հակամարտությունը և հայ ռազմարվեստի պատմության հատկապես նորօրյա դրվագները անհրաժեշտ է դասավանդել ոչ միայն հանրակրթական դպրոցներում, այլև բուհերում, զինվորական կոլեկտիվներում և ողջ հասարակության մեջ ընդհանրապես՝ արցախահայության արդարացի պայքարի իրական կերպարը վերականգնելու համար: Այլապես հիբրիդային, ցանցային կամ այլ անվանումներ ստացած ժամանակակից պատերազամներում, որոնց մեջ անմիջականորեն ներքաշված են հայկական զույգ պետություններն ու ողջ հայ ժողովուրդը, պարտությունն անխուսափելի է:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ Ղարաբաղյան հակամարտության և Հայ ռազմարվեստի պատմության, մասնավորապես Արցախյան ազատամարտի հիշարժան դրվագների ներկայացումը կարևոր նշանակություն ունեն մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիրակության, հայի տեսակի ու արժեհամակարգի պահպանման ու զարգացման, անվտանգության ապահովման և վերջապես մեր ազգի առջև ծառացած համազգային խնդիրների՝ այդ թվում ղարաբաղյան հակամարտության լուծման գործընթացում: Դրանք կարելի է իրականացնել ուսուցման, ունակությունների կատարելագործման, երիտասարդին իր ուժերի նկատմամբ հավատ ներշնչելով և այդ գործընթացում անընդհատ օգտագործելով դաստիարակության բազմաբնույթ մեթոդներ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ա.Փ.Ենգոյանը:

УДК 316.42:316.485.6
Политология

Елена БОБКОВА
Приднестровский Государственный университет им. Т.Г. Шевченко
Молдова, Приднестровье, г. Тирасполь

ПРАКТИКИ РЕАЛИЗАЦИИ СОЦИАЛЬНО-КОНВЕНЦИОНАЛЬНОГО МЕХАНИЗМА УСТОЙЧИВОСТИ СОЦИУМА В УСЛОВИЯХ НЕПРИЗНАННОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

В статье автором представлены апробированные наработки диагностики и имплементации научных результатов в повседневную жизнь Приднестровского социума в условиях непризнанности. Предпринимается попытка создания методики измерения конвенциональности как условия, определяющего устойчивость социума. Раскрываются основные существующие теории общественного развития, а также возможности применения теоретических моделей в рамках анализа конфликтной ситуации.

Ключевые слова: *общество, социальное развитие, теории и модели развития, структура, динамика, конфликтная ситуация.*

Ե. Բոբկովա

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ԿՈՆՎԵՆՑԻՈՆԱԼ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հոդվածում հեղինակը ներկայացնում է չճանաչված լինելու պայմաններում գիտական արդյունքների ախտորոշման և իրականացման փորձերը մերձդնեստրյան հասարակության ամենօրյա կյանքում: Փորձ է արվում ստեղծել պայմանականության չափման մեթոդաբանություն, որպես պայման, որը որոշում է հասարակության կայունությունը: Բացահայտվում են առկա սոցիալական զարգացման հիմնական տեսությունները, ինչպես նաև տեսական մոդելների կիրառման հնարավորությունը հակամարտության իրավիճակների վերլուծության շրջանակներում:

Բանալի բառեր՝ *հասարակություն, սոցիալական զարգացում, զարգացման տեսություններ և մոդելներ, կառուցվածք, դինամիկա, հակամարտությունների վիճակ:*

E. Bobkova

PRACTICES OF IMPLEMENTING THE SOCIAL-CONVENTIONAL DEVICE (MECHANISM) OF SOCIAL SUSTAINABILITY IN CONDITIONS OF UNRECOGNIZED STATEHOOD

The article discusses the main theoretical and methodological approaches to social development study. In the article, the author presents proven practices of diagnosis and implementation of scientific results in the daily life of Transnistrian society in the context of non-recognition. An attempt is being made to create a methodology for measuring conventionality as a condition that determines the stability of society. The author discusses the basic existing theories of social development, and the possibilities of application of theoretical models in the analysis of a conflict situation.

Keywords: *society, social development, theories and models of development, structure, dynamics, conflict situation.*

В современной социальной практике, несмотря на значительное количество противоборствующих регионов в мире, нет эффективной методики измерения конвенциональности как условия устойчивости. Такая разработка, выполненная и апробированная на примере Приднестровского конфликта, может послужить «дорожной картой» для повышения устойчивости механизмов стабилизации урегулировании в других конфликтных зонах. Предлагаемая методика измерения конвенциональности включает в себя три области: экономическую политическую и социальную (Рис. 4). Оценить состояние конвенциональности в каждой из них можно на основании индексов доверия. На первом этапе аналитическим путем определяются наиболее проблемные и чувствительные области во взаимодействии сторон, на следующем этапе выделяются факторы, влияющие на формирование доверия в конфликтных отношениях.

«Факторы влияния» являются наиболее значимыми параметрами области измерения и определяются профильными экспертами. Значение факторов, в свою очередь, выявляется на основании индикаторов. Под «индикаторами факторов» в данном случае понимается составная часть процесса, состояние которого в текущий момент можно оценить.



Рис. 1. Уровень конвенциональности между Приднестровьем и Молдовой

Предлагаемая методика базируется на широком применении экспертных оценок. Для проведения анализа конвенциональных практик во взаимоотношениях конфликтующих сторон, формирования массива факторов, влияющих на них, необходимо организовать экспертное сообщество. Требуется вовлечение ключевых специалистов: политологов, экономистов, экспертов в вопросах безопасности, представителей гражданского общества и экс-чиновников, социологов и представителей общественности. К решению ключевых вопросов разработки методики исследования, формирования выводов и рекомендаций следует привлечь представителей международной экспертизы в области изучения проблем развития конфликтных зон (в том числе зон замороженных конфликтов)[1].

Примененный математический аппарат, построенный на основе функции Харрингтона для получения относительно точной оценки устойчивости, предполагает преобразование натуральных значений частных откликов (ответов экспертов) в безразмерную шкалу желательности. Обобщенная функция желательности Е.К. Харрингтон широко использовалась в психо-физиологических и экологических исследованиях эффективности в виде конкретного числа, которую можно использовать в дальнейшем анализе технических средств (данная тема рассматривалась в работах С.В. Королёвой и А.В. Пичкалева и др.) [3, 6].

Исследование позволило разработать шкалу, ориентированную на установление соответствия между потенциальными откликами на

[1] *Исследовательский проект «Уровень доверия между Молдовой и Приднестровьем в политическом, экономическом и социальном измерениях» в 2016 году реализован совместно НП «Сигма-эксперт» и CMI при финансовой поддержке Финского правительства. С отобранной группой экспертов проведен ряд рабочих встреч, в ходе которых были трансформированы предложенные факторы, а также определены их индикаторы.*

функционирование объекта и субъективными оценками желательности определенного значения отклика. При разработке авторской шкалы соответствий между отношениями предпочтения (в эмпирической и числовой системах для конкретного случая – измерения конвенции), был использован опыт уже существующих шкал желательности. Ввиду специфики применения шкалы желательности типовая градация оценок («хорошо», «удовлетворительно», «плохо» и т.д.) была разработана дополнительная интерпретации (см. табл. 1).

Таблица 1. Интерпретация шкал желательности

Типовая оценка	По Харринг-тону	По шкале ЮНЕСКО	Авторская интерпретация
Очень хорошо	1,00 – 0,80	100-88	Стороны доверяют друг другу; экономические интересы сторон совпадают; отношения построены на взаимовыгодных договоренностях; разрабатываются программы интеграции и развития отношений; отсутствуют барьеры во взаимоотношениях сторон
Хорошо	0,79 – 0,63	87-71	Стороны формируют свои отношения на договорной основе; отношения ведутся по согласованным правилам и нормам; работают механизмы разрешения противоречий и поиска компромиссов на системной основе; формируется положительная динамика в различных сферах взаимоотношений
Удовлет-ворительно	0,62 – 0,37	70-51	Удовлетворительный уровень доверия; договоренности на основании компромиссов присутствуют, но они носят непостоянный характер; документирование договоренностей находится на низком уровне, имеется потенциал для развития взаимоотношений
Плохо	0,36 – 0,20	50-37	Минимальный (предельный) уровень доверия, граничащий с недоверием; незначительное поле для возможных компромиссов; процесс поиска решений носит случайный бессистемный характер; перспективы для развития взаимоотношений незначительные
Очень плохо	0,19 – 0,00	36-0	Недоверие; высокий уровень враждебности; бескомпромиссность позиций сторон; отсутствие процесса поиска договоренностей; отсутствие предпосылок для формирования положительных взаимоотношений.

գյուղատնտեսական նշանակության ավելի քան 40 հզ. հա. հողահանդակներ: Գյուղատնտեսական բնագավառի զարգացման պետական քաղաքականությունն ուղղված է հանրապետության պարենային անվտանգության ապահովմանը, ֆերմերային տնտեսությունների ստեղծմանը, տեղական արտադրողի շահերի պաշտպանությանը, գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացմանը[1]:

Գյուղատնտեսությունում շուկայական հարաբերություններին անցման ժամանակահատվածում, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, կտրուկ կրճատվեց տեխնիկական մշակաբույսերի մշակությունը, դրա հետ միաժամանակ գյուղատնտեսական շրջանառությունից դուրս մնացին վարելահողերի մի կարևոր մասը, որը բացատրվում է ոչ միայն արտաքին անբարենպաստ հանգամանքներով (պատերազմ, շրջափակում, տեխնիկայի և վառելանյութի գների աննախադեպ թանկացում), այլև հողային անարդյունավետ քաղաքականությամբ: Սակավահող երկրում այդ հողերի մեծ մասը գտնվում է սահմանամերձ գոտում և մշտական վտանգի տակ է:

Աղյուսակ 1. Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բերքահավաքի ցանքային տարածություններն ըստ ԱՀ շրջանների, 2018թ. հունվար-դեկտեմբեր հեկտար

	Հացահատիկ և հատիկաընդեղեն		Կարտոֆիլ		Բանջարեղեն		Բոստանային մշակաբույսեր	
	2018թ .	2018թ. 2017թ. նկատ-մամբ, %	2018թ .	2018թ. 2017թ. նկատ-մամբ, %	2018թ .	2018թ. 2017թ. նկատմ. %	2018թ .	2018թ. 2017թ. նկատ-մամբ, %
ք. Ստեփա-նակերտ	-	-	-	-	-	-	-	-
Ասկերան	13	101.8	162.9	97.3	281.0	113.0	35.5	94.0
Հադրութ	18	179.2	101.0	96.2	131.8	103.0	21.0	175.0
Մարտակերտ	8	142.2	138.8	86.1	76.7	98.6	14.3	76.1
Մարտունի	16	116.5	132.9	120.5	250.6	120.9	13.5	95.7
Շահումյան	164.8	119.8	23.0	87.5	19.4	77.6	0.1	-
Շուշի	254.3	139.6	24.1	98.0	13.8	103.9	0.4	133.3
Քաշաթաղ	23	114.1	41.0	80.9	317.2	106.8	271.0	98.0
Ընդամենը	80 207.5	125.3	623.7	96.6	1 090.5	109.4	355.8	99.0

1 Լեռնային Ղարաբաղ: Գյուղատնտեսությունը
http://www.historyofarmenia.am/am/Encyclopedia_of_armenian_history_LXH_Gyuxatntesutyun

Աղյուսակ 2. Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքը 2018թ. հունվար-դեկտեմբերին, *ցենտներ*

	Հացահատիկ և հատիկաընդեղեն		Կարտոֆիլ		Բանջարեղեն	
	2018թ	2018թ. 2017թ. նկատմամբ, %	2018թ	2018թ. 2017թ. նկատմամբ, %	2018թ	2018թ. 2017թ. նկատմամբ, %
ք.Ստեփանակերտ	-	-	-	-	-	-
Ասկերան	254 584.8	81.0	12 367.0	113.3	54 327.1	163.9
Հադրութ	322 078.0	134.9	10 363.0	114.6	10 150.0	114.0
Մարտակերտ	114 627.6	77.9	6 238.4	73.5	4 769.4	100.0
Մարտունի	340 843.2	116.3	9 294.2	87.6	7 972.5	117.2
Ծաղկունյան	3 302.2	121.4	1 100.0	18.2	1 180.0	30.0
Շուշի	4 314.2	161.1	1 655.0	90.4	2 574.1	107.0
Քաշաթաղ	348 379.9	61.8	3 999.0	58.8	32 796.4	39.2
Ընդամենը	1 388129.9	88.8	45 016.6	83.8	113 769.6	79.2
	Բոստանային մշակաբույսեր		Պտուղ և հատապտուղ		Խաղող	
	2018թ	2018թ. 2017թ. նկատմ, %	2018թ	2018թ. 2017թ. նկատմ, %	2018թ	2018թ. 2017թ. նկատմ, %
ք.Ստեփանակերտ	-	-	-	-	-	-
Ասկերան	10 028.0	72.6	22 020.7	144.4	8 731.2	161.0
Հադրութ	1 170.0	84.8	10 379.0	55.0	4 750.0	71.4
Մարտակերտ	502.0	136.0	14 817.9	107.6	6 218.3	114.0
Մարտունի	494.2	92.7	8 821.5	99.7	51 871.4	102.2
Ծաղկունյան	23.3	-	157.0	5.9	247.5	103.1
Շուշի	93.0	166.1	282.0	35.2	105.0	105.0
Քաշաթաղ	153 385.0	173.9	14 253.1	82.0	2 389.0	69.1
Ընդամենը	165 695.5	158.8	70 731.2	91.2	74 312.4	103.1

Մշակելի հողատարածքների ընդհանուր հաշվեկշռի մեջ ավելացել է էքստենսիվ (հացահատիկային) ճյուղերի տեսակարար կշիռը և կրճատվել բարձրարժեք մշակաբույսերինը (բազմամյա և տեխնիկական մշակաբույսեր): Այս տեղաշարժը թելադրված է օբյեկտիվ պատճառով. տնտեսական ճգնաժամը և բնակչության աղքատացումը առաջնային դարձրին պարենի, հանապազօրյա

հացի խնդիրը, այստեղից էլ՝ հացահատիկի կարտոֆիլի և բանջարեղենի ցանքատարածությունների ընդարձակումը:
Հողի համատարած սեփականաշնորհումը իր դրական արդյունքների հետ միասին բացասական շրջադարձեր բերեց արցախցու համար: Երկրում գյուղատնտեսական նշանակության հողերը մասնատված են:
Ստեղծված պայմաններում գյուղացիական տնտեսություններին (ընտանեկան տնտեսություններին) բաժին է ընկնում ոլորտի համախառն արդյունքի գերակշիռ մասը: Վերջինս վկայում է տնտեսավարման այլ ձևերով, մասնավորապես՝ կոոպերացման սկզբունքով գործող տնտեսավարողների գործունեության սահմանափակության մասին:
Հողի շուկայի ձևավորման գործընթացը դանդաղեցնում է գյուղատնտեսության զարգացումը ողջ երկրի տարածքում: Մյուս կողմից՝ նկատվում է սեփականաշնորհված, հատկապես բերրի, բայց չօգտագործվող հողատարածքների որոշակի պարապուրդ, հետևաբար ժամանակի ընթացքում հանգեցնելով դրա որակի անկման և առկա ռեսուրսների ոչ նպատակային օգտագործման:
Սեփականաշնորհման հետևանքով առաջացած հողի մասնատվածությունը հարկադրում է այն մշակել հիմնականում ձեռքով և, չնայած վերջին տարիներին հակակարկտային կայանների տեղակայմանը մի շարք համայնքներում, թույլ է պաշտպանվածությունը տարերային աղետներից: Առավել զգալի է համատարած սեփականաշնորհումից հետո հողի տնտեսական գնահատման արդյունավետ սկզբունքների ու մեթոդաբանության բացակայությունը: Այս առումով Հայաստանի փորձը վկայում է, արհեստական ոռոգման բացակայության պայմաններում անջրդի պայմաններում հնարավոր է ստանալ բուսաբուծական գյուղմթերքների 1/5 մասը:
Ներկայումս (2018 թվականի տվյալներով) գյուղատնտեսությունում ձևավորվել է ՀՆԱ-ի 10.9%-ը: Համեմատության համար նշենք, որ երկու տարի առաջ այդ ցուցանիշը կազմել է 13.2% Մեր համոզմամբ ՀՆԱ-ում գյուղատնտեսության տեսակարար կշիռը նվազել է ի հաշիվ հանքարդյունաբերության տեսակարար կշռի ավելի քան եռապատիկ ավելացման՝ 2016թ. 5.5%-ից 2018թ. հասնելով 16.7%-ի: 2018 թվականի տվյալներով, գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 74092.8 մլն դրամ, նախորդ տարվա համեմատ կրճատվելով 3.1%-ով, ընդ որում բուսաբուծության ճյուղի մասնաբաժինը՝ 49.20% է, իսկ անասնապահությանը՝ 50.79%:
Աղյուսակ 3. Գյուղատնտեսության և հանքարդյունաբերության տեսակարար կշիռը ԱՀ ՀՆԱ-ում 2016-2018թթ.

	2016	2017	2018
Գյուղատնտեսություն	13.2	12.3	10.9
Հանքարդյունաբերություն	5.5	14.2	16.7

Աղյուսակ 4. Գյուղատնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքը

	2018թ. հունվար-դեկտեմբեր, ընթացիկ գներով, մլն. դրամ	Ընդամենի նկատմամբ, %	Աճի տեմպերը համադրելի գներով %
Գյուղատնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքը	74 097.4	100.0	96.1
այդ թվում՝			
Գյուղատնտեսություն	74 092.8	99.99	96.1
այդ թվում՝			
Բուսաբուծություն	36 458.7	49.20	92.1
Անասնաբուծություն	37 634.1	50.79	98.7
Ձկնորսություն	4.6	0.01	36.3

2018 թվականի հողային հաշվեկշռի տվյալներով վարելահողերի տարածքը կազմել է 84.2 հազ. հա, իսկ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները՝ 8.7 հազ. հա, այսինքն մնացած վարելահողերի մեծ մասը նպատակային չեն օգտագործվում: Էական ազդեցություն ունի մեքենայական աշխատանքների դժվարամատչելիությունը, հողակտորների կտրտվածությունը, ոռոգման ջրի բարձր սակագինը, գյուղատնտեսական արտադրանքի իրացման դժվարությունները: Սահմանամերձ համայնքներում հողի մշակությունը վտանգված է:

Աղյուսակ 5. ԱՀ հողային հաշվեկշիռը

	հեկտար	Բնակչության մեկ շնչի հաշվով
Վարելահող	84.2	0.571
բազմամյա տնկարկներ	8.7	0.059
Խոտհարքներ	22.5	0.153
Արոտավայրեր	294.2	1.994
այլ հողեր	97.5	0.661
Ընդամենը	507.1	3.438

Սերմնաբուծության համակարգի անկատարության, պարարտանյութերի ու թունաքիմիկատների անբավարար և ոչ ճիշտ օգտագործման, մշակության ագրոտեխնիկական կանոնների խախտման հետևանքով դեռևս ցածր է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը: Ցանքատարածությունների ավելացման և որոշ չափով ինտենսիվացման մակարդակի բարձրացման հաշվին մեծացել է հացահատիկի, բանջարեղենի և կարտոֆիլի

համախառն բերքը: Ինտենսիվացման առումով որոշակի դրական տեղաշարժեր կան այգեգործությունում:
Խաղողագործության ճյուղի զարգացմանը դեռևս խոչընդոտում են՝ խաղողի ներկայիս սորտային կազմի ոչ ամբողջական համապատասխանությունը վերամշակող արդյունաբերության և շուկայի պահանջներին, մշակության ագրոտեխնիկայի ոչ լիարժեք կատարումը և այգիների բարձր նոսրությունը:
Ներկայումս գյուղատնտեսական տեխնիկայի զգալի մասի շահագործման ժամկետը լրացել է, որի պատճառով ցածր է սարքինության մակարդակը և արտադրողականությունը, բարձր են շահագործման ծախսերը: Գյուղտեխնիկայի սարքինության մակարդակը ներկայացված է աղյուսակում:

Աղյուսակ 6. Գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունը և սարքինության մակարդակը, 2017-2018թթ, միավոր

	2017թ. հունվար-դեկտեմբեր			2018թ. հունվար-դեկտեմբեր		
	առկա	որից՝ սարքին	սարքինության մակարդակ, %	առկա	որից՝ սարքին	սարքինության մակարդակ, %
Տրակտորներ	1 265	1 037	82.0	1 285	1 100	85.6
Բեռնատար մեքենաներ	1 379	1 149	83.3	1 424	1 186	83.3
Հացահատիքահավաք կոմբայններ	258	207	80.2	277	216	78.0
Կարտոֆիլահավաք	1	1	100.0	2	2	100.0
Տրակտորային կցասայլեր	358	327	91.3	373	335	89.8
Տրակտորային խոտհնձիչներ	132	121	91.7	154	139	90.3
Կերահավաք կոմբայններ	11	11	100.0	5	5	100.0
Հատիկազտիչ մեքենաներ	98	89	90.8	104	98	94.2
Տրակտորային շարքացաններ	329	306	93.0	339	323	95.3
Տրակտորային գութաններ	754	720	95.5	819	795	97.1
Կուլտիվատորներ	340	331	97.4	364	358	98.4
Մալմիչներ	103	94	91.3	108	96	88.9

Լրջորեն տուժել է նաև անասնապահությունը: Բնակչության վճարունակ պահանջարկի, սեփական կերարտադրության կրճատման և ներկրվող կերերի ծավալների կտրուկ սահմանմափակման հետևանքով կրճատվել է անասնագլխաքանակը և անասնապահական մթերքների արտադրությունը: 1990թ. համեմատությամբ մի քանի անգամ կրճատվել է կերային մշակաբույսերի տարածությունը, անբավարար է օգտագործվում բնական կերահանդակները:

Աղյուսակ 7. Անասնագլխաքանակն ըստ ԱՀ շրջանների, 2018թ.

	Խոշոր եղջերավոր անասուններ		այդ թվում՝ կովեր		խոզեր	
	2018թ	2018թ. 2017թ. նկատմամբ, %	2018թ	2018թ. 2017թ. նկատմամբ, %	2018թ	2018թ. 2017թ. նկատմամբ, %
Ընդամենը	43 141	99.5	18 226	98.4	28 537	141.4
ք. Ստեփանակերտ	590	98.0	100	89.3	650	158.2
Ասկերան	7 766	98.1	3 601	102.3	6 274	143.1
Հադրութ	7 472	101.0	2 990	97.4	5 035	146.5
Մարտակերտ	6 412	97.0	2 898	95.6	2 779	123.2
Մարտունի	7 071	96.6	3 023	95.6	7 006	138.8
Շահումյան	2 821	97.3	1 117	95.6	863	169.5
Շուշի	839	102.7	362	98.9	440	2.0 անգ.
Քաշաթաղ	10 170	104.0	4 135	100.9	5 490	139.9

	ոչխարներ և այծեր		թռչուններ	
	2018թ	2018թ. 2017թ. նկատմամբ, %	2018թ	2018թ. 2017թ. նկատմամբ, %
Ընդամենը	68 980	119.2	409 568	107.7
ք. Ստեփանակերտ	97	2.4 անգ.	22 000	122.2
Ասկերան	10 449	88.3	91 981	91.0
Հադրութ	19 280	3.3 անգ.	44 360	122.8
Մարտակերտ	9 090	94.9	57 039	101.0
Մարտունի	8 405	96.9	151 222	117.0
Շահումյան	1 617	111.5	9 645	184.1
Շուշի	492	93.9	6 424	145.6
Քաշաթաղ	19 550	98.0	26 897	91.0

Անասնապահության ճյուղում անասնապահական որոշ մթերքների՝ կաթի և ձվի արտադրության ծավալների ավելացման հետ մեկտեղ դեռևս խնդիրներ կան տոհմային գործի կազմակերպման, մասնավոր անասնաբուժական համակարգի ամրապնդման և ոլորտի պետական աջակցության մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ: Դրա հետ միաժամանակ իր կարգավորումն է պահանջում սննդամթերքի անվտանգության և ստանդարտացման բնագավառները:

Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով), տոննա		Արտադրվել է կաթ, տոննա		Արտադրվել է ձու, հազ. հատ		Խուզվել է բուրդ, տոննա	
	2018թ	2018թ. 2017թ. նկատ-մամբ, %	2018թ	2018թ. 2017թ. նկատ-մամբ,%	2018թ	2018թ. 2017թ. նկատ-մամբ,%	2018թ	2018թ. 2017թ. նկատ-մամբ,%
Ընդամենը	14 618.9	94.8	42 843.5	98.6	48 058.4	120.0	177.6	67.5
ք. Ստեփա-նակերտ	195.3	132.1	243.2	79.4	2 492.2	92.9	0.2	25.4
Ասկերան	2 793.3	86.0	9234.9	101.9	15 850.8	114.5	34.3	62.8
Հադրութ	2 068.5	99.7	5622.7	102.2	4 952.2	122.9	17.1	47.9
Մարտակերտ	1 888.6	96.0	7156.2	100.9	7 394.2	116.4	29.8	87.3
Մարտունի	3 962.9	108.0	7478.5	94.9	12 433.4	123.9	26.7	79.7
Շահումյան	542.2	84.6	2595.1	92.1	1 021.1	2.1 անգ.	3.9	63.0
Շուշի	194.8	96.9	852.3	103.8	653.0	164.6	1.9	129.5
Քաշաթաղ	2 973.3	85.4	9660.6	96.8	3 261.5	147.4	63.7	65.9

Երկրում ինքնաբավության բարձր մակարդակ է ապահովվում՝ կարտոֆիլի, բանջարաբոստանային մշակաբույսերի, պտղի և հատապտղի, խաղողի, մանր եղջերավորների մսի ուղղությամբ, միջինից բարձր ինքնաբավության մակարդակ գոյություն ունի կաթի-կաթնամթերքի և խոշոր եղջերավորների մսի համար, ինչ վերաբերում է ցորենին, եգիպտացորենին, հատիկաընդեղեն մշակաբույսերին, թռչնի և խոզի մսին, ապա ինքնաբավության մակարդակը շարունակում է մնալ ցածր:

Երկրի գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների պատճառների մի մասը պայմանավորված են նաև արտաքին գործոններով: Մասնավորապես, մինչ զարգացած երկրներից ոմանք հորդորում են անցումային տնտեսություն ունեցող երկրներին անցնել ազատ առևտրի և բաց մրցակցության, հրաժարվել պետական միջամտության տարբեր ձևերից, իրենք իսկ խախտում են արդար մրցակցության սկզբունքները՝ կիրառելով լայնածավալ սուբսիդավորում, արտահանման պետական ֆինանսավորում, դեմպինգային քաղաքականության՝ ոլորտից դուրս մղելով տեղական ապրանք արտադրողները:

Ոլորտի զարգացման հեռանկարները

Արցախի գյուղերի և գյուղատնտեսության հեռանկարային զարգացման տեսլականներն են.

1) ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմամբ առևտրային գյուղատնտեսական կազմակերպությունների, կոոպերատիվների և շուկայական ենթակառուցվածքների հետ ինտեգրված ընտանեկան գյուղացիական տնտեսությունների զարգացում,

2) պարենային անվտանգության շահերի և ագրոպարենային արտադրանքների արտաքին առևտրի հարաբերական առավելության սկզբունքների իրատեսական համադրումով՝ բնակչության կայուն պարենային ապահովում և

ագրովերամշակող հատվածի գյուղատնտեսական հումքի պահանջարկի բավարարում,
3) գյուղատնտեսությունում համախառն արտադրանքի ավելացում՝ աշխատանքի արտադրողականության աճի հաշվին, գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակի կրճատում և ավելցուկային աշխատուժի մի մասի օգտագործում գյուղատնտեսության սպասարկման և վերապատրաստման միջոցով ոչ գյուղատնտեսական գործունեության բնագավառներում,
4) արտադրված գյուղատնտեսական հումքի զգալի մասի վերամշակում փոքր ու միջին ձեռնարկատիրության կազմակերպած արտադրամասերում,
5) բուսաբուծության և անասնապահության ներճյուղային կառուցվածքում բարձր ավելացված արժեք ապահովող գյուղմթերքների արտադրության գերակշռություն,
6) հանրապետության բնակչության պարենային անվտանգության բարձր մակարդակ, կարևորագույն պարենամթերքների ինքնաբավության ապահովում, գյուղական աղքատության և արտագաղթի կրճատում:
187. Ժամանակակից գյուղատնտեսության զարգացման մայրուղին արդյունաբերականացումն է, այսինքն՝ ինտենսիվացման մակարդակի բարձրացումը, արդիական տեխնոլոգիաների և կառավարման համակարգերի կիրառումը: Տվյալ խնդրի լուծմանը կարող են նպաստել՝
- գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության խթանումը, արհեստների, գյուղմթերքների վերամշակման, գյուղատնտեսության սպասարկման կարողությունների ստեղծմանն աջակցությունը, ագրոտուրիզմը,
- խնդրի լուծմանը կարող են նպաստել նաև գյուղացիական տնտեսությունների ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացումը, մասնավորապես վարելահողերի լիարժեք օգտագործումը, արտադրության ինտենսիվացման միջոցով՝ մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության բարձրացումը:
Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման գործում կարևոր է առավել անբարենպաստ գոտիներում հողի մշակությանն ուղղված նպատակային սուբսիդավորման ծրագրերի իրականացման վերականգնումը, ոլորտում օգտագործվող կարևորագույն ռեսուրսների գների սուբսիդավորման ծրագրի շարունակումը, դրանց կիրառման մեխանիզմների կատարելագործումը: Միաժամանակ, հողօգտագործմանը կնպաստի արտադրատեխնիկական սպասարկումների բարելավումը լիզինգային ծրագրերի, գյուղտեխնիկայի ձեռքբերման սուբսիդավորում շնորհիվ: Հողօգտագործման արդյունավետության բարձրացման խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է իրականացնել մասնատված հողակտորների համատեղ օգտագործման ծրագրեր, վերջինիս ուղղությամբ կիրառելով խթանման տարբեր լծակներ (վարկեր, դրամաշնորհներ, պետական ծրագրեր և այլն): Կարևորվում են նաև գյուղմթերքների կանոնակարգված գործող մեծածախ շուկաների ձևավորումը, հավաքման կետերի, տեղեկատվական կենտրոնների գործունեությունը:
Ստեղծված իրավիճակում ագրարային ոլորտում կիրառվող քաղաքականության մեջ կարևորվում է կոոպերացիայի խթանման քաղաքականությունը: Առավել նպատակահարմար են կոոպերացիայի զարգացման հիմնական չորս ուղղություններ.
- առաջինը՝ օրենսդրության կատարելագործումը և համալրումն է.

- կոոպերացիայի ձևավորման տնտեսական խթանման մեխանիզմների կիրառումը.
- հաջորդը՝ կոոպերացիայի սկզբունքների, առավելությունների վերաբերյալ գյուղատնտեսությունում տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացումն է.
- կոոպերացիայի զարգացման ուղղություններից է նաև գյուղատնտեսությունում կոոպերացիայի ձևավորմանը խթանող ինստիտուցիոնալ կառույցների ձևավորումը:

Ագրարային ոլորտի առջև ծառացած կարևոր խնդիրներից է համարվում հաշվառման համակարգի բարելավումը: Խնդրի լուծմանը պետք է ուղղել՝

- գյուղատնտեսական համատարած հաշվառման ծրագրի իրականացումը, որի նպատակն է՝ գյուղատնտեսության կառուցվածքի, մասնավորապես գյուղատնտեսական նշանակության հողերի, անասնագլխաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի, գյուղատնտեական նշանակության շինությունների, ինչպես նաև ոլորտի առկա ներուժի՝ մարդկային, նյութական և դրա օգտագործման վերաբերյալ հավաստի տեղեկատվության ստացումը՝ մարզերի և համայնքների կտրվածքով,
- հաշվառման համակարգի բարելավման ուղղություններից է գյուղատնտեսական վարչական ռեգիստրի ամբողջական համակարգի ներդրումը,
- ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և համարակալման համակարգի ներդրումը:

Գյուղատնտեսության կայունացման և զարգացման համար կարևորվում է ոռոգման ջրապահովվածության մակարդակի բարձրացումը, որը հնարավոր է համարվում հետևյալ ուղղություններով՝

- ջրամատակարարման մեխանիկական եղանակից ինքնահոսին անցում,
- ոռոգման համակարգերում նոր տեխնոլոգիաների ներդրում, դրանց արդյունքում ջրի խնայողական ռեժիմների կիրառում:

Գյուղատնտեսության առաջիկա խնդիրներից է համարվում նաև կարևորագույն գյուղատնտեսական մթերքների երաշխավորված գների կիրառման համակարգի ներդրումը: Այս ուղղությամբ հանրապետությունում անհրաժեշտ է իրականացնել՝

- կարևորագույն գյուղատնտեսական մթերքների երաշխավորված գների կիրառման համակարգի ներդրման մեխանիզմների մշակում,
- երաշխավորված գների կիրառման իրավա-օրենսդրական հիմքերի մշակում և ընդունում:

Գյուղմթերքների արժեշղթայի ձևավորման գործընթացին կնպաստի նաև իրացման համակարգի կատարելագործման, տեխնիկական ապահովման, նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարման, հետբերքահավաքային տեխնոլոգիաների, խորհրդատվության, տեղեկատվության, արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների խնդիրների լուծումը:

Երկրի պարենային անվտանգության նպատակով առաջիկա տասնամյակում անհրաժեշտ է պարենամթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացում շուրջ 20 տոկոսային կետով: Վերջինս պահանջում է հետևյալ միջոցառումների իրականացումը՝

- ցորենի, եգիպտացորենի, հատիկաընդեղենային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացման պետական ծրագրերի իրականացման միջոցով՝

սերմերի ապահովվածության մակարդակի բարձրացումը և մատչելի վարկավորմամբ ցանքատարածքների օգտագործման արդյունավետության բարձացում,

- կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավման ծրագրերի ծավալների ընդլայնում, մատչելի պայմաններով՝ կենդանիների արհեստական սերմնավորման գործընթացի կազմակերպում, բարձր մթերատու կենդանիների ներկրման և տեղում վերարտադրության ծրագրերի ծավալների ընդլայնում, անասնաբուժական համակարգի բարելավում:

Սննդամթերքի անվտանգության հիմնական ուղղությունները կլինեն՝

- օրենսդրությունը սննդի անվտանգության միջազգային դաշտին մոտարկումը,
- պետական օժանդակությամբ սննդամթերքի արտադրության պատշաճ հիգիենիկ և արտադրական գործելակարգերի, ինչպես նաև HAACCP համակարգի կամ ISO 22000 ստանդարտի ներդրումը,
- սննդամթերքի անվտանգության լաբորատորիաների կարողությունների հզորացումը և ISO 17025 ստանդարտով հավատարմագրումը,
- բնագավառում կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացի պատշաճ կազմակերպումը:

Առանձնահատուկ կարևորվում է նաև սելեկցիոն անվտանգությանը՝ հաշվի առնելով վերջին շրջանում տրանսգենետիկ ձևախեղումներն ու կասկածելի ծագում ունեցող ներմուծված սննդամթերքը, ինչպես նաև արտերկրից ներկրված կոմերցիոն սորտերը, որոնք քանակ և ամրություն ապահովելով, լուրջ սպառնալիքի են վերածվել մարդկանց առողջության համար: Առանձնակի կարևորվում է հացահատիկային և կերային մշակաբույսերի սերմնաբուծության համակարգի զարգացումը, առաջնային սերմնաբուծության բնագավառում պետական աջակցությունը,

Կարևոր չափանիշներից մեկը, որով կարելի է գնահատել բարեփոխումների արդյունավետությունը, դա գյուղացու տնտեսական և սոցիալական վիճակի բարելավումն է: Գյուղատնտեսությունում զբաղվածության կրճատում չի ակնկալվում, այլ ենթադրվում է, որ տնտեսական աճը գյուղատնտեսության ոլորտում կիրականացվի բացառապես արտադրողականության աճի հաշվին:

Գյուղատնտեսության ոլորտի ռիսկերի մեղմման գործընթացում կարևորվում է ապահովագրական համակարգի ներդրումը, որը պահանջում է գյուղում ապահովագրական ռիսկերի գնահատման ծրագրի իրականացումը:

Արցախի գյուղերի զարգացման նպատակով պետք է խնդիր դնել ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի և բնակիչների ոչ գյուղատնտեսական եկամուտների տեսակարար կշիռների ավելացումը, մասնավորապես, գյուղմթերքների վերամշակման ոլորտում՝ համապատասխան արտոնությունների արդյունավետ համակարգի ներդրման միջոցով:

Կարևորվում է գյուղում փոքր արտադրությունների, ինպես նաև ժողովրդական արհեստների զարգացմանն աջակցությունը:

Պետությունը պետք է աջակցի տեղական արտադրության գյուղմթերքների և դրանց վերամշակումից ստացված ապրանքների համար Հայաստանի միջոցով արտերկրի, առաջին հերթին՝ ԵԱՏՄ պետությունների շուկաների բազմակողմանի ուսումնասիրությունների իրականացմանը և տեղական ապրանքների ցուցահանդեսների կազմակերպմանն ու դրանց գովազդին՝ արտերկրում:

Առաջնահերթ խնդիրներից է բուսաբուծության, անասնապահության ճյուղերում, գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերությունում արդիա-

կան տեխնոլոգիաների ներդրումը, որոնց իրականացումը հնարվոր է համարվում հետևյալ գործիքների կիրառմամբ՝

- նպատակային մատչելի վարկերի տրամադրում,
- մրցակցային դրամաշնորհային ծրագրերի իրականացում,
- վարկային ծրագրերում արդիական տեխնոլոգիաների խթանման բաղադրիչների նախատեսում,
- ագրարային ոլորտի առանձնահատկություններին համապատասխան լիզինգային մեխանիզմների կիրառմամբ տեխնիկական վերազինում,
- վենչուրային հիմնադրամների միջոցների օգտագործում և այլն:

Արտաքին կապերի համադրման առումով կարևոր է բացառել ներկայումս նկատվող կրկնողություններն ինչպես միջազգային կառույցների, այնպես էլ Սփյուռքի տարբեր բարեգործական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերում: Արդյունքում՝ դժվարությամբ ձեռք բերվող միջոցներ չեն վատնվի միևնույն նպատակների համար՝ երբեմն ոչ բավարար արդյունավետությամբ: Ինչպես գյուղատնտեսության ներկա կարողության առաջարկվող գույքագրումը, ագրարային հատվածի կարիքները ևս հաշվառման կարիք ունեն:

Արտոնյալ վարկերի տրամադրմամբ և պետական մթերումների (պետական պատվերի) նվազագույն քանակով գյուղմթերքների արտադրության խթանմամբ անհրաժեշտ է նպաստել գյուղմթերքների մրցունակության բարձրացմանը:

Աչցախում գյուղատնտեսության զարգացումը և գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության բարձրացումը պայմանավորված են հետևյալ հիմնական խնդիրների արդյունավետ լուծման հետ.

- ամայացած գյուղերի աստիճանական վերաբնակեցումը և Արցախի Հանրապետության տարածքային զարգացման անհամաչափության կրճատումը,
- գյուղացիական տնտեսությունների զարգացման համար գրավիչ պայմանների ձևավորման արդյունքում գեր-ուրբանիզացիայի կասեցումը,
- հարկային համահարթեցված վարչարարության վերանայումը և անցումը՝ հարկային շրջանայնացման՝ նախատեսելով հարկային գրավիչ արտոնությունների համակարգ հեռավոր բնակավայրերի համար:

Ոլորտի արդյունավետության բարձրացմանը կնպաստեն նաև հետևյալ քայլերը՝

- Նպատակային և հետևողական ներդրումներ ճանապարհային շինարարության մեջ (հատկապես սահմանամերձ գյուղերը մարզկենտրոնների հետ կապելու համար):
- Բնական գազի և վառելիքի այլ տեսակների տեղական պահեստարանների ստեղծում:
- Համեմատաբար էժան գներով էլեկտրաէներգիայի կանոնավոր մատակարարման խնդրի հանգուցալուծում՝ արևի, հողմի, երկրի ընդերքի, ջրի էներգիան արդյունավետ օգտագործելով լեռնային և սահմանամերձ գյուղերում:
- Լեռնային տեղանքին համապատասխան հատուկ գյուղատնտեսական մեքենաների ձեռքբերում և դրանց սպասարկման և հավաքման արտադրության կազմակերպում՝ Արցախում:
- Գյուղատնտեսական մթերքները վերամշակող և էկոլոգիապես մաքուր արդյունաբերական փոքր ձեռնարկությունների հիմնում (մասնավորապես, գյուղմթերքները վերամշակող կամ դրանից ստացվող սննդամթերքի փաթեթավորման, սառեցման և պահեստավորման):

• Փոքր արտադրությունների, մասնավորապես Արցախի գորգագործության, կարպետագործության, ասեղնագործության, բրուտագործության, փայտամշակման, խեցեգործության արհեստանոցների հիմնման խթանում:
• Կենցաղային սպասարկման տեղական փոքր կենտրոնների վերականգնում:
Գյուղմթերքների վերամշակման և դրանց արտահանման խթանման նպատակով՝
- վարկի գրավադրման ժամանակ հաշվի առնել պետության կողմից ԱԱՀ-ի վերադարձման պարտավորությունները,
- նախատեսել գյուղմթերքներ արտահանող ձեռնարկությունների բաժնեմասի ձեռքբերում պետության կողմից,
- ձևավորել Արցախյան ապրանքանիշ և կիրառել պետության կողմից մրցունակ ապրանքների պատվերներ,
- գյուղմթերքների վերամշակմամբ մասնագիտացած, մասնավորեցված և չգործող ձեռնարկությունների նկատմամբ կիրառել պրոգրեսիվ գույքահարկ, իսկ որոշ դեպքերում նախատեսել նաև դրանց մրցութային վերամասնավորեցում,
- արտերկրի ցուցահանդեսներում Հայաստանի աջակցությամբ կատարել Արցախում արտադրված ապրանքների առավել գրավիչ տաղավարի ընտրություն և համաֆինանսավորում,
- տրամադրել երկարաժամկետ վարկեր՝ պետական երաշխիքներով,
- աջակցել վերամշակվող արտադրությունների արտադրանքի իրացմանն արտերկրում:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը:

ՀՏԴ 330.3(479.243)
Տնտեսագիտություն

Ռուզաննա ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ
ԱրՊՀ տնտեսագիտության
տեսության և կառավարման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ

Յանա ԼԱԼԱՅԱՆ Ֆինանսների մագիստրոս

ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՀ-ՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են բնակչության կյանքի որակի գնահատման մոտեցումները և կարևորագույն ասպեկտները, սոցիալական բարեկեցության օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների համակարգը, բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշով համեմատության մեջ դրվում ճանաչված և չճանաչված երկրները և կատարվում հիմնավոր եզրահանգումներ:

Ներկայացվում է Արցախի Հանրապետությունում տնտեսական աճից ստացվող եկամուտների անհավասարաչափ բաշխումը բնակչության տարբեր խմբերի միջև, բնակչության բարեկեցության մակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշները, կատարվում համեմատական վերլուծություններ և հիմնավորվում աղքատությունից խուսափելու առավել արդյունավետ միջոցառումները:

*Հոդվածում, Հանրապետության **բնակչության կյանքի որակի բարելավման նպատակով, առաջարկվում է ընտանեկան փոքր բիզնեսի և** կանանց ձեռներեցության **զարգացում:***

Բանալի բառեր՝ *տնտեսական աճ, կյանքի որակ, բնակչության բարեկեցություն, աղքատություն, **ընտանեկան բիզնես,** կանանց ձեռներեցություն, արդյունավետություն, զբաղվածություն, գործազրկություն:*

Р. Мангасарян, Я. Лалаян

ПРОБЛЕМЫ УЛУЧШЕНИЯ КАЧЕСТВА ЖИЗНИ В АР

В статье рассматриваются важные аспекты и подходы к оценке качества жизни населения, система объективных и субъективных показателей социального обеспечения, сравниваются ВВП признанных и непризнанных стран на душу населения и делаются существенные выводы.

Представлены также неравномерное распределение доходов на экономический рост между различными группами населения, основные показатели благосостояния населения, проведены сравнительные анализы и обоснованы наиболее эффективные меры для предотвращения бедности.

В статье, в целях повышения качества жизни населения, предлагается развитие малого бизнеса и женского предпринимательства.

Ключевые слова: *экономический рост, качество жизни, благосостояние населения, бедность, семейный бизнес, женское предпринимательство, эффективность, занятость, безработица.*

R. Mangasaryan , Ya. Lalayan

PROBLEMS OF IMPROVING THE QUALITY OF LIFE IN AR

The article examines important aspects and approaches to assessing the quality of life of the population, a system of objective and subjective indicators of social security, makes comparison of GDP of recognized and unrecognized countries per capita and draws substantial conclusions.

The article presents uneven distribution of income for economic growth among various groups of population, the main indicators characterizing the welfare of the population, as well as carries out comparative analyzes and substantiates the most effective ways to avoid poverty.

To improve the quality of life of the population, the development of small business and female entrepreneurship is proposed in the article.

Key words: *economic growth, quality of life, population welfare, poverty, family business, female entrepreneurship, efficiency, employment, unemployment.*

Այսօրվա բևեռացված աշխարհում գերիշխում են անարդարություններն ու անհավասարությունը: Արդյունքում յուրաքանչյուր պետության՝ որպես ինստիտուտի, մանավանդ սոցիալական շուկայական տնտեսահամակարգ ունեցող պետության, վերջնական նպատակը բնակչության կենսամակարդակի և կյանքի հնարավոր բարձր որակի ապահովումն է: Վերջինիս մասին պատկերացումները ամենատարբեր դրսևորումներ են ունեցել և հասկացությունը ծագումնաբանական փոփոխությունների է ենթարկվել՝ ինչպես տնտեսագետների, այնպես էլ սոցիոլոգների, բժիշկների, քաղաքագետների և այլնի ուշադրության կենտրոնում լինելով:

«Կյանքի որակ» արտահայտության ժամանակակից մեկնաբանությունը երևան եկավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Սկզբնապես նրանում ընգծվում էր այն միտքը, որ լավ կյանքն ավելին է, քան նյութական լիությունը և բովանդակում է մի շարք գործոններ, ինչպիսիք են զբաղվածությունը, կենցաղը, շրջակա միջավայրը, առողջապահությունը, մշակույթը և այլն: Ներկայումս «կյանքի որակ», «մարդկային բարեկեցություն» և «կենսամակարդակ» հասկացությունները հաճախ կիրառվում են որպես փոխադարձ փոխարինելի կատեգորիաներ, չնայած նշվածներից յուրաքանչյուրը տարբեր իմաստ և ենթատեքստ է բովանդակում:

Ընդհանուր առմամբ, դիտարկումները ցույց են տալիս, որ երբ խոսք է գնում համընդհանուր, այսինքն՝ ողջ բնակչությունը կամ սոցիալական լայն շերտեր ծածկող կյանքի որակի գնահատման մասին, սովորաբար երկու մոտեցում է առանձնացվում՝ ամերիկյան և սկանդինավյան[1]: Վերջիններս տարբերակվում են՝ Քեմբելի այն ձևակերպման նկատմամբ դրանց դիրքորոշումից ելնելով, ըստ որի «կյանքի որակը պետք է դիտարկել ականատեսի աչքերով», այսինքն՝ ըստ սոցիալական բարեկեցության օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների հարաբերական կարևորության: Վաղ ամերիկյան աշխատությունները կենտրոնանում են օբյեկտիվ ցուցանիշների վրա՝ առողջություն,

[1] *Antinazi. Энциклопедия социологии, 2009*

աղքատություն, գործազրկության մակարդակ, որոնք ներկայացնում են սոցիալական փաստերն անկախ անհատական գնահատումներից՝ ի հակադրություն սուբյեկտիվ ցուցանիշների, որոնք հենվում են և մատնանշում սոցիալական իրավիճակների անհատական ընկալումներն ու գնահատումները: Ստորև ներկայացվում է առավել հաճախ կիրառվող օբյեկտիվ և սուբյեկտիվ սոցիալական ցուցանիշների համախմբությունը (տե՛ս հավելված 1)[1]:

Կյանքի որակի չափման կամ գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել երեք կարևորագույն ասպեկտներ.

- Մակարդակները և ոլորտները, որոնց կարող է բաժանվել կյանքը:
- Չափորոշիչները, որոնք պետք է օգտագործվեն կյանքի տարբեր ոլորտները գնահատելու համար:
- Կշիռները, որոնք պետք է կիրառվեն տարբեր ոլորտների նկատմամբ դրանց մեծ կամ փոքր կարևորությունը մատնանշելու համար /տես հավելված 2/:

Անհրաժեշտ է ընդգծել, որ տնտեսական ոլորտը յուրաքանչյուր պետության ու հասարակության բարեկեցության իրացման կարևորագույն միջավայրն է: Հայտնի է, որ ժամանակի ընթացքում տնտեսական զարգացման տեմպերի գնահատման համատեքստում առաջադրվել են տարբեր մոտեցումներ և ցուցանիշներ, որոնց մեջ առ այսօր ուրույն տեղը պատկանում է ազգային հաշիվների համակարգին / ՀՆԱ-ի հաշվարկմանը/: Արցախի Հանրապետությունում վերջին տասը տարիների ընթացքում (2008-2017թթ.) միջինում գրանցվել է համախառն ներքին արդյունքի 10.4%, իսկ 2017թ. բացառիկ՝ 15.6% իրական աճ:[2] Սակայն ՀՆԱ-ն մակրոտնտեսական կարևոր էտալոնային ցուցանիշ լինելով հանդերձ, հնարավորություն չի տալիս գնահատել շրջակա միջավայրի ոչնչացումը, առողջապահության, կրթության որակը և հասանելիությունը, կյանքի տևողությունը և այլն: Այս ամենը հիմք է հանդիսացել նոր ինդիկատորի որոնման համար, որը կկարողանար իր մեջ ներառել բոլոր վերը նշված ասպեկտները երկրի տնտեսական զարգացումը և կյանքի որակը գնահատելու համար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եթե երկրները համադրենք երջանկության և ՀՆԱ (տնտեսական աճի) մակարդակով, ապա կառնչվենք <<պարադոքսի>> հետ. <<ամենաերջանիկ>> երկրները ամենևին էլ ամենահարուստները չեն, իսկ ամենահարուստները՝ <<ամենաերջանիկները>>: Նշենք, որ երջանկության մակարդակի որոշումը իրականացվում է <<Կայուն զարգացման որոշումների ցանցը>>՝ ՄԱԿ-ի հովանու ներքո, Կոլումբիական համալսարանին կից գործող <<The Earth Institute>> վերլուծական կենտրոնը: Ցուցանիշի հաշվարկման նպատակն է ներկայացնել բնակիչների երջանիկ կյանքով ապահովելու երկրների հնարավորությունները /տե՛ս հավելված 3/[3]:

Աղյուսակի տվյալներից տեսանելի է, որ որոշ երկրների համար ցուցանիշների միջև դիտարկվող կապը ուղիղ է, իսկ հաճախ նաև՝ հակադարձ: Ընդ որում զարգացած երկրներից գերակշիռ մասում դիտարկվող ցուցանիշների միջև կապը ուղիղ է, իսկ զարգացող երկրներում՝ հակադարձ:

---

[1] ***Rapley,*** *2003, p.11*

[2] *Հաշվարկները կատարվել են ԱՀ ԱԿԾ պաշտոնական տվյալների հիման վրա:*

[3] *www.gtmarket.ru*

Վերոնշյալ վերլուծությունը հիմք է տալիս փաստել, որ նյութական բարեկեցության մակարդակը այն հիմնական գործոնը չէ, որը կարող է հանգեցնել պետության բարեկեցության և կյանքի որակի բարձրացման: Նշված հիմնախնդիրը քննարկման առարկա էր նաև 2018թ. և 2019թ. հունվարին Դավոսում անցկացված Միջազգային տնտեսական ֆորումի ժամանակ: Ֆորումի շրջանակներում նշվել է, որ ՀՆԱ-ի օգտագործումը որպես տնտեսական զարգացման ցուցանիշ, անարդյունավետ է, քանի որ այն արտացոլում է ապրանքների և ծառայությունների ընթացիկ արտադրությունը, այլ ոչ թե այն աստիճանը, որով տնտեսությունը կարող է նպաստել ավելի լայն սոցիալ-տնտեսական առաջընթացին, ինչպես այն երևում է տնային տնտեսությունների միջին եկամտից, աշխատանքի տեղավորման հնարավորություններից, տնտեսական անվտանգությունից և կյանքի մակարդակից: Եվ հենց Դավոսում ներկայացվել է երկրների տնտեսական զարգացման գնահատման ալտերնատիվ համակարգ՝ ՀՆԱ-ի արդիական անալոգային ցուցանիշը: Գնահատման համակարգը կոչվել է Ներառական զարգացման համաթիվ կամ վարկանիշ (Inclusive Development Index): Այն պետք է <<տեղեկացնի հասարակությանը և նպաստի կայուն և ներառական տնտեսական զարգացմանը>>: Տվյալ ցուցանիշը ընդգրկում է ոչ միայն ՀՆԱ ցուցանիշը, այլ նաև ևս 11 պարամետրեր / տե՛ս հավելված 4 /:

Կարծում ենք, որ այս հիշյալ ցուցանիշը առավել իրատեսական կարող է ներկայացնել երկրների զարգացման մակարդակը, բնութագրել նրանց բնակչության բարեկեցության մակարդակը: Դա նշանակում է, որ ի տարբերություն ՀՆԱ-ի՝ ՆԶՀ-ն կարող է դառնալ և՛ քանական, և՛ որակական ցուցանիշ:

Նման իրավիճակ է ձևավորվել նաև ԱՀ-ում, որտեղ տնտեսական աճից ստացվող եկամուտները բնակչության տարբեր խմբերի միջև բաշխվել են անհավասարաչափ: Կարծում ենք, որ բևեռացման նման պայմաններում, բնակչության մեկ շնչին բաժին ընկնող իրական եկամտի կամ միջին աշխատավարձի հաշվարկը դառնում է անիմաստ, քանի որ հարուստների եկամտի ավելացումը սոցիալապես անապահով բնակչության անփոփոխ եկամտի դեպքում մեխանիկորեն հանգեցնում է բնակչության ճնշող մեծամասնության եկամտի միջին մեծության աճի: Նշանակում է՝ միջին եկամտի ցուցանիշը ճիշտ պատկերացում չի տալիս իրական կենսամակարդակի մասին: Ուստի, տնտեսական աճի պարագայում էապես կարևորվում է նաև եկամուտների բաշխման հիմնախնդրի կարգավորումը, որպեսզի հնարավոր լինի բարձրացնել բնակչության բարեկեցության մակարդակը, նվազագույնի հասցնել բևեռացվածության աստիճանը սոցիալական խմբերի միջև: Ըստ այդմ պատահական չէ, որ տնտեսական աճին զուգահեռ ուշադրության կենտրոնում պետք է լինի նաև եկամուտների բաշխման համակարգը: Այդ առումով, բնակչության կենսամակարդակի բարձրացման նախապայմաններն են կայուն տնտեսական աճը և ըստ եկամուտների ու սպառման բնակչության բևեռացման և, ընդհանրապես, եկամուտների մեծ տարբերությունների կրճատումը:

ԱՀ-ում բնակչության եկամուտների բաշխվածությունը տրվում է հավելված 5-ում[1]: Հավելվածի տվյալներից երևում է, որ տնային տնտեսությունների

---

[1] *ԱՀԱՎԾ «Արցախի սոցիալական պատկերը և աղքատությունը» Վիճակագրական - վերլուծական զեկույց, Ստեփանակերտ 2018 էջ 54*

եկամուտների հիմնական մասն ապահովվում է վարձու աշխատողի աշխատավարձից, որը 2017 թ. դրությամբ կազմել է 59,7 %: Դիտարկելով տնային տնտեսությունների եկամուտների աղբյուրներն ըստ բնակավայրերի՝ ակնհայտ է դառնում, որ վարձու աշխատանքից ստացված եկամուտների կարևորությունը մեծ է հատկապես քաղաքաբնակների համար, որտեղ այն 2017թ.-ին կազմել է դրամական եկամուտների 66.0%-ը, 2016թ.-ի 66.9%-ի փոխարեն: Մյուս կողմից՝ գյուղաբնակ տնային տնտեսություններում վարձու աշխատանքից ստացվող եկամուտների մասնաբաժինը կազմել է ամբողջական եկամուտների 54.0%-ը, 2016թ.-ի 58.5%-ի փոխարեն[1]:

ԱՀ-ում միջին ամսական անվանական աշխատավարձը 2018թ. դրությամբ կազմել է 161181 դրամ, նախորդ տարվա համեմատ աճելով 3,7 %-ով, իսկ միջին իրական աշխատավարձը 2018թ. դրությամբ կազմել է 158331 դրամ: ԱՀ-ում նվազագույն աշխատավարձը 55000 դրամ է, որը կազմում է միջին ամսական անվանական աշխատավարձի հետ 34,1%-ը, իսկ նվազագույն սպառողական բյուջեի՝ 92,4%-ը: 2017թ.-ին սպառման անհավասարությունը, որը չափվում է Ջինիի գործակցով, կազմել է 0.314, 2016թ-ի 0.287-ի փոխարեն: Ըստ ամբողջական եկամուտների՝ անհավասարությունը կազմել է 0.416, 2016թ. 0.388-ի դիմաց[2]:

2019 թվականին Երկիր մոլորակի բնակչությունը գերազանցում է 7.7 միլիարդ մարդ: Միայն անցած դարի ընթացքում աշխարհում բնակչության թիվը ավելացել է 4,35 միլիարդով: Ցավոք, ոչ բոլոր պետության քաղաքացիներն են ապահովված նորմալ կենսագործունեության տարրական պայմաններով: Օրինակ, Օքսֆորդի համալսարանի փորձագետների վերջին հետազոտությունների համաձայն՝ աշխարհի 103 երկրներում, որտեղ բնակվում է աշխարհի բնակչության 76% -ը (5.4 մլրդ մարդ), աղքատության գծից ներքևում բնակվում է առնվազն 26.5% (1.45 մլրդ) մարդ:

Համաշխարհային բանկի չափանիշներով առաջնորդվող «շատ աղքատների» կատեգորիան կարող է վերագրվել այն երկրներին, որտեղ մեկ շնչին ընկնող ՀՆԱ մակարդակը տարեկան $ 1,025-ից ցածր է[3]: Աշխարհի ամենահարուստ երկրներում այս ցուցանիշը գերազանցում է $ 12,475-ը: Այսօր, առնվազն 800 միլիոն մարդ ապրում է օրական ավելի քան 1,25 դոլարի չափով: Ընդհանուր առմամբ, աշխարհի բնակչության գրեթե կեսը դեռևս ծայրահեղ աղքատության մեջ է:

Հայտնի է, որ Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) կիրառում է «թույլ զարգացած երկրներ» տերմինը աղքատ տարածքների համար: Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական տեղեկատվության, 2019թ. 47 երկրներ գտնվում են թույլ զարգացած երկրների ցանկում: Աղքատ պետության կարգավիճակը ստացվում է ՄԱԿ-ի համապատասխան հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա, որը գնահատվում է երեք չափանիշներով: Դրանք ներառում են.

- ✓ տնտեսական խոցելիության ինդեքս;
- ✓ բնակիչների եկամուտների մակարդակը (հաշվարկվում է միջինում վերջին երեք տարիների ընթացքում միջինում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի վրա);
- ✓ կյանքի իրական որակի գնահատում:

---

[1] *Հաշվարկները կատարվել են ԱՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների հիման վրա:*

[2] *Հաշվարկները կատարվել են ԱՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների հիման վրա:*

[3] *World Bank "Ending extreme poverty", 8 Jun 2016,www.worldbank.org*

Հիմնվելով Արժույթի միջազգային հիմնադրամի պաշտոնական տվյալների վրա և հաշվի առնելով բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մակարդակը գնողունակության հավասարության ժամանակ, փորձենք հավելված 6-ում ներկայացնել 2019թ. աշխարհի ամենաաղքատ տաս երկրները[1]:

Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշով համեմատության մեջ դնելով չճանաչված երկրները կստանանք հավելված 7-ի պատկերը:

Համեմատելով վերոնշյալ երկու խմբերի երկրների ցուցանիշները, կարող ենք փաստել, որ չճանաչված երկրներում 1 բնակչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշով բնակչության կենսամակարդակը մի քանի անգամ ավելի բարձր է:

Վերլուծելով թույլ զարգացած երկրների ցուցանիշները, կարող ենք գտնել հետևյալ ընդհանրությունները՝

- աղքատ բնակչություն ունեցող երկրների մեծամասնությունը գտնվում է Աֆրիկայում և Ասիայում,
- հիշյալ երկրներում բնակչության կյանքի միջին տևողությունը ոչ ավել քան 50 տարի է ,
- 1 բնակչի հաշվով միջին ՀՆԱ-ն կազմում է 438 դոլլար,
- առկա է գյուղատնեսության ճյուղի գերակայություն,
- քաղաքական մոդելը ավտորիտար է,
- բնակչության գրագիտության մակարդակը ցածր է,
- բարձր է շրջակա միջավայրի աղտոտվածությունը՝ կապված աղբավայրերի մեծ քանակի հետ,
- բժշկությունը թերզարգացած է, մահացության աստիճանը՝ բարձր,
- կոռուպցիայի մակարդակը բարձր է,
- դիտվում է հանցագործությունների թվի աճ:

ԱՀ-ում չնայած կյանքի որակի բարելավման բնագավառում առկա են որոշակի դրական տեղաշարժեր, այնուամենայնիվ աղքատության հաղթահարումը դեռևս հանրապետության կարևորագույն խնդիրներից է: 2017թ.-ի ընթացքում ԱՀ-ում աղքատության մակարդակը կազմել է 21.6%, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ ամբողջ բնակչության 6.1%-ը: Աղքատության խորությունը 2017թ.-ի համար գնահատվել է 5.3%, իսկ աղքատության սրությունը՝ 2.3%[2]:

Գաղտնիք չէ, որ զբաղվածության և աղքատության մակարդակները հակադարձ համեմատական են: Ուստի բնակչության կյանքի որակի բարելավման շարքում առաջնային պետք է համարել նաև աշխատատեղերի ապահովումը, առավել ևս, որ Արցախի Հանրապետությունում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացների վրա իր ազդեցությունն ունի հենց գործազրկության մակարդակը: Երկրում գործազրկության մակարդակը վերջին հինգ տարներին տատանվել է 4,0-15,8%-ի սահմաններում: Հանրապետությունում 2017թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտությունների արդյունքներով՝ երկրում գործազրկության մակարդակը կազմել է 12.9 տոկոս, ինչը նախորդ տարվա համեմատ նվազել է 2,9 տոկոսով: Դա նշանակում է, որ տնտեսապես ակտիվ բնակչության

---

[1] *https://www.imf.org*

[2] *ԱՀԱՎԾ «Արցախի սոցիալական պատկերը և աղքատությունը» Վիճակագրական - վերլուծական զեկույց, Ստեփանակերտ 2018 էջ 26*

առնվազն ութ քաղաքացիներից մեկը գործազուրկ է եղել[1]: Այս ամենի հետ մեկտեղ պետք է նշել, որ գործազուրկների թվի մասին պաշտոնական վիճակագրությունը չի արտացոլում իրական պատկերը, և գործազուրկների իրական թիվը Արցախում մի քանի անգամ ավելի բարձր է: Այս անհամապատասխանության պատճառն այն է, որ ոչ բոլոր գործազուրկներն են գրանցվում համապատասխան մարմիններում և ստանում նման կարգավիճակ:

ԱՀ-ում գործազրկության մակարդակը 2013-2017թթ. ներկայացված է գծապատկեր 1-ում[2]:

2013-2018թթ. ընթացքում գործազուրկ կանայք միջինում կազմել են գրանցված գործազուրկների 91,1%-ը: Արձանագրելով գործազուրկների մեջ կանանց մեծ տեսակարար կշիռը, առանձնահատուկ ուշադրություն է պահանջում կանանց զբաղվածության կարգավորման հիմնահարցերը: Հարկ է նկատել, որ զարգացած երկրներում ավելի ու ավելի է մեծանում կանանց դերակատարությունը պետության և շրջանների մրցունակության ձևավորման հարցում:

Գծապատկեր 1. ԱՀ-ում գործազրկության մակարդակը 2013-2017թթ.



Վերջին 40 տարիների ընթացքում ծավալուն աշխատանք է տարվել ամբողջ աշխարհում կարծրատիպերը և հայրիշխանական կարգերը փոխելու նպատակով: Ի տարբերություն ՏՀԶԿ 5 երկրների, ուր կին գործարարների ցուցիչը ավելի բարձր է (40-45%), Հայաստանում նույն ցուցիչը բավականին ցածր է՝ 13%:[3] Համաձայն գոյություն ունեցող տվյալների՝ կանայք՝ որպես ձեռներեցներ, ակտիվ են հիմականում այն ոլորտներում, որտեղ մուտքի արգելքներն ավելի ցածր են, որտեղ հեշտ է կրկնօրինակել բիզնեսը, հաճախ որտեղ կա երկարատև մրցակցության ցածր ցուցանիշ, մասնագիտացման ցածր պահանջներ և արդեն հագեցած շուկաներ: Արցախում անհրաժեշտ է հզորացնել կանանց ձեռներեցությունը՝ հասանելի դարձնելով ավելի որակյալ բիզնես ծառայությունները, ստեղծելով կին գործարարներին աջակցող ավելի հզոր կազմակերպություններ և միություններ, ինչպես նաև պոտենցիալ կին

---

[1] *Հաշվարկները կատարվել են ԱՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների հիման վրա:*

[2] *Գծապատկերը կառուցվել է ԱՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների հիման վրա:*

[3] *https://www.smednc.am*

գործարարներին տրամադրելով առավել նպատակային աջակցություն տարբեր աջակցող կառույցների, դոնոր կազմակերպությունների և պետական ծրագրերի միջոցով: 2013 թվականի մարտից Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ը Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ Հայաստանում սկսել է իրականացնել Կանանց ձեռներեցության աջակցության ծրագիր, որի շրջանակներում դասընթացների, տեղեկատվական արշավների, ֆինանսական աջակցության և այլ միջոցներով խրախուսվում է կանանց ձեռներեցությունը: Կարծում ենք, որ վաղուց ժամանակն է Արցախում ևս խրախուսել կանանց ձեռներեցությունը՝ տնտեսության մեջ ներգրավելով ավելի մեծ թվով պոտենցիալ և նորարար կին ձեռնարկատերերի, ինչը երկրում կարող է նոր թափ հաղորդել տնտեսական առաջընթացին:

Միջազգային հեղինակավոր կառույցները ժամանակ առ ժամանակ իրականացնում են հետազոտություններ՝ աղքատության կրճատմանը նպաստելու ուղիների հայտնաբերման և աշխարհում ներկա իրավիճակի վերլուծման նպատակով, որի արդյունքները ցույց են տալիս, որ աղքատությունից խուսափելու առավել արդյունավետ միջոց է հանդիսանում սեփական գործի նախաձեռնումը: Զարգացած երկրներում ձեռնարկատիրական կառույցների մոտ 70%-ը բաժին է ընկնում փոքր բիզնեսին, իսկ ՀՆԱ-ի և ազգային եկամտի գերակշիռ մասը ստեղծվում է խոշոր ընկերությունների կողմից: Հարկ է նշել Թայվանի փորձը, որտեղ ՓՄՁ-ին բաժին է ընկնում ՀՆԱ-ի 45%-ը և զբաղվածության 78%-ը, ինչը տնտեսության զարգացման մեջ նշված ոլորտին տալիս է որոշիչ դեր[1]: ԱՀ-ում ՓՄՁ-ի բաժինը բոլոր ձեռնարկությունների մեջ կազմում է մոտ 98.4%: Վերջին երկու տարվա ընթացքում ԱՀ-ում ՓՄՁ-ի քանակը նվազել է 278-ով, սակայն ՀՆԱ-ում նրանց մասնաբաժինը միջինում տատանվել է 33-34% շրջանակներում՝ 2016թ. կազմելով 38.5%[2]: Կարելի է եզրակացնել, որ չնայած ԱՀ կառավարությունը ձեռնարկում է ՓՄՁ աջակցության մի շարք ծրագրեր, այդուհանդերձ մեր տնտեսությունում գերփոքր և փոքր տնտեսվարող սուբյեկտները բավական թույլ են զարգացած, իսկ միջին սուբյեկտները դեռևս կայացման խնդիր ունեն:

Ստեղծված իրավիճակում կարծում ենք, որ մեր տարածաշրջանում բնակչության կյանքի որակի բարելավման կարելի է հասնել նաև ընտանեկան փոքր բիզնեսի զարգացմամբ: Աշխարհում ընտանիքի անդամների մասնակցությամբ փոքր բիզնես վարելու ավանդույթը դարերի պատմություն ունի: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ աշխարհում ընկերությունների 2/3-ը հիմնված է հենց ընտանեկան բիզնեսի վրա: Հայաստանում, չնայած ընտանեկան ձեռնարկատիրությամբ զբաղվելու բազմամյա փորձերին, այդ մոդելի բիզնեսին աջակցող օրենք ընդունվել է միայն 2014թ.: Ըստ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 266 հոդվածի՝ ընտանեկան ձեռնարկատիրություն համարվում է «ձեռնարկատիրական եկամուտ ստանալու նպատակով ընտանիքի մեկից ավելի անդամների կողմից համատեղ իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը», ընդ որում, որպես ընտանիքի անդամներ դիտարկվում են ծնողը, ամուսինը, զավակը, քույրը, եղբայրը:

---

[1] ***Бирюков А.*** *Развитие малого и среднего бизнеса - локомотив экономики (опыт Тайваня) //Вопросы экономики. - 2004. - № 9., стр.128*

[2] www.stat-nkr.am

Օրենքում հստակ նշվում է, որ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ չեն կարող համարվել առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, արտոնագրային հարկ վճարողները, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողները և (կամ) ներմուծողները:

Ընտանեկան բիզնեսն ազատվում է բոլոր տեսակի ձեռնարկատիրական հարկերից և շարունակում է մնալ ընտանեկան, քանի դեռ տարեկան շրջանառությունը չի գերազանցել 18 մլն դրամը: Ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված ընտանիքի անդամներին ընտանեկան ձեռնարկատիրության մասով հարկային գործակալի կողմից վճարվող հարկվող եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվում և վճարվում է յուրաքանչյուր անձի համար ամսական 5 հազար դրամի չափով:

Կարծում ենք, որ Արցախում ևս անհրաժեշտ է կիրառել նման մոտեցում, քանի որ ընտանեկան ձեռնարկատիրությունը.

- **լուծում է սոցիալական խնդիր՝ ընտանիքի անդամներին ապահովում է աշխատանքով,**
- **թեթևացնում է պետության բեռը, որն իր ռեսուրսները կարող է ուղղել այլ տեղ, քանի որ արդեն հազարավոր մարդիկ ապահովված են աշխատանքով,**
- **թեև ազատվում է հարկերից, սակայն իր գործունեությամբ խթանում է, որպեսզի այդ հարկերը գեներացվեն գործընկերների հետ հարաբերություններում:**

Բացի տնտեսական ու սոցիալական նշանակությունից՝ ընտանեկան բիզնեսը փոխում է մտածելակերպը, մասնավորապես՝ կրթության նկատմամբ վերաբերմունքի հարցում: Այսպես, ծնվելով «բիզնեսի մեջ» և հետագայում ներգրավվելով դրանում՝ ընտանիքի երեխաները հստակ գիտակցում են՝ ինչ գիտելիքներ են իրենց անհրաժեշտ: Արդյունքում կրթություն ստանալը, կոնկրետ մասնագիտություն կամ հմտություն ձեռք բերելը դառնում է ոչ թե ինքնանպատակ քայլ, այլ անհրաժեշտություն:

Այսպիսով՝ ընդհանրացնելով ընդգծենք, որ երկրում սոցիալական լարվածությունը մեղմելու և բնակչության բարեկեցությունը բարելավելու համար, ելնելով տնտեսական ու սոցիալական զարգացվածության աստիճանից և հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները, ԱՀ կառավարությունը պետք է մշակի և առաջարկի աջակցության նոր ուղիներ և ծրագրեր:

Գրականություն

1. ԱՀ վիճակագրության տարեգիրք 2011-2017թթ.:
2. ԱՀԱՎԾ «Արցախի սոցիալական պատկերը և աղքատությունը» Վիճակագրական - վերլուծական զեկույց, Ստեփանակերտ 2018 էջ 26-54
3. Antinazi. Энциклопедия социологии, 2009
4. Бирюков А. Развитие малого и среднего бизнеса - локомотив экономики (опыт Тайваня) //Вопросы экономики. - 2004. - № 9., стр.128
5. Rapley, 2003, p.11
6. https://www.smednc.am
7. https://www.imf.org
8. www.gtmarket.ru
9. www.stat-nkr.am
10. World Bank “Ending extreme poverty”, 8 Jun 2016,www.worldbank.org

Հավելված 1

Օբյեկտիվ և սուբյեկտիվ սոցիալական ցուցանիշներ

Օբյեկտիվ սոցիալական ցուցանիշներ	Սուբյեկտիվ սոցիալական ցուցանիշներ
• Կյանքի սպասվող տևողություն • Հանցագործների թիվ • Գործազրկության մակարդակ • ՀՆԱ • Աղքատության մակարդակ • Դպրոց հաճախելիություն • Շաբաթական աշխատաժամանակ • Մանկական մահացության տեմպ • Ինքնասպանությունների թիվ	• Համայնքային և պատկանելության զգացում • Նյութական ունեցվածք • Ապահովության զգացում • Երջանկություն • Բավարարվածություն կյանքից՝ որպես ամբողջ • Հարաբերություններ ընտանիքի հետ • Աշխատանքից բավարարվածություն • Սեռական կյանք • Արդարության ընկալում • Դասակարգային պատկանելություն • Սիրած զբաղմունք /հետաքրքրություններ և ակումբային պատկանելություն/

Հավելված 2

Կյանքի որակի գնահատման ասպեկտները

Ոլորտ/ենթաոլորտ	Ցուցանիշ	Բնութագրիչ
Տնտեսական • Ներքին տնտեսություն • Ֆինանսական հատված • Արտաքին տնտեսություն	• Զարգացում • Կայունություն • Ապահովություն, խթաններ	• իրական ՀՆԱ-ի աճի տեմպ • բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ • ինֆլյացիայի տարեկան տեմպ • պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցություն • պետական բյուջե/ ՀՆԱ հարաբերակցություն • համախառն կուտակում • փոխարժեքի կայունություն • արտահանում/ ՀՆԱ հարաբերակցություն • օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալ • վարկեր/ՀՆԱ%

Հավելված 3

Տնտեսական աճի և երջանկության ինդեքսի համեմատություն

Երկիր	ՀՆԱ-ի մակարդակով զբաղեցրած տեղը	Երջանկության մակարդակով զբաղեցրած տեղը	Երկիր	Երջանկության մակարդակով զբաղեցրած տեղը	ՀՆԱ-ի մակարդակով զբաղեցրած տեղը
ԱՄՆ	1	14	Նորվեգիա	1	26
Չինաստան	2	79	Դանիա	2	33
Ճապոնիա	3	51	Իսլանդիա	3	111
Գերմանիա	4	16	Շվեյցարիա	4	20
Մեծ Բրիտանիա	5	19	Ֆինլանդիա	5	42

Հավելված 4.

ՆԶՀ-ի մեջ ընդգրկված ցուցանիշները

Աճ և զարգացում	**Ներառականություն**	**Մերունդների անընդհատությունը և զարգացման կայունությունը**
1 շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ $՝ 2010թ. արժեքով)	Հասարակության եկամուտների բևեռվածության գործակից	Ճշգրտված զուտ խնայողությունները (ՀՆԱ-ի %)
Աշխատանքի արտադրողականություն (ՀՆԱ՝ 1 աշխատողի հաշվով)	Աղքատության մակարդակը, %	ՀՆԱ-ի ջերմոցային ինտենսիվություն (CO2 արտանետումները՝ 1 $-ի հաշվով, կգ)
Առողջ կյանքի սպասվող տևողություն(տարիներ)	Հասարակության բևեռվածության գործակից՝ ըստ հարստության	Պետական պարտք, %
Բնակչության զբաղվածության մակարդակը, %	Մեդիական եկամուտ (ԱՄՆ $)	Ժողովրդագրական ծանրաբեռնվածության գործակից, %

Հավելված 5

Բնակչության եկամուտների բաշխվածությունը

	Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով, միջին ամսական եկամուտ			
	դրամ		%	
	2016	2017	2016	2017
1.Դրամական եկամուտներ	44 704	48 396	92.4	92.7
այդ թվում՝				
• վարձու աշխատողի աշխատավարձից	28 353	31 184	63.4	59.7
• ինքնազբաղվածությունից	2 791	3 173	6.2	6.1
• գյուղամթերքի նկենդանիների վաճառք	1 099	815	2.5	1.6
• սեփականությունից /վարձակալության վճարներ, տոկոսավճարներ, շահաբաժիններ/	91	64	0.2	0.1
• պետական թոշակներ և նպաստներ	11 320	11 852	25.3	22.7
• տրանսֆերներ	282	268	0.6	0.5
դրանցից՝ - ԱՀ-ում ապրող բարեկամներ	11	51	0.0	0.1
- ԱՀ-ից դուրս ապրող	269	217	0.6	0.4
• այլ եկամուտներ	768	1 041	1.8	2.0
2. Ոչ դրամական եկամուտներ	3 673	3 820	7.6	7.3
այդ թվում՝ • սննդամթերքի սպառում սեփական տնտեսությունից	3 592	3 669	7.4	70
• անվճար ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ	81	152	0.2	0.3
Ընդամենը ամբողջական եկամուտ	48 376	52 217	100.0	100.0

Հավելված 6.

Աշխարհի ամենաաղքատ երկրները

Երկիր	ՀՆԱ բնակչության 1 շնչի հաշվով /2016թ./
Կենտրոնաաֆրիկյան հանրապետություն	$391
Բուրունդի	$642
Կոնգո	$648
Լիբերիյա	$703
Էրիթերեա	$707
Զիմբաբվե	$788
Նիգերիյա	$829
Մալավի	$879
Մադագասկար	$970
Տոգոզի Հանրապետություն	$1084

Հավելված 7

1 բնակչի հաշվով ՀՆԱ-ն չճանաչված երկրներում

Երկիր	2016թ. 1 բնակչի հաշվով ՀՆԱ /դոլլար/
Կոսովո	3661
Արցախի Հանրապետություն	3282
Աբխազիայի Հանրապետություն	2955
Մոլդովայի հանրապետություն	2074
Հարավային Օսեթիա	1892
Պուտլանդ	1000
Սոմալիլենդ	347

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.դ., Թ.Ն.Մանասերյանը:

ՀՏԴ 336.2(479.243)
Տնտեսագիտություն

Լիլիկ ԲԵԳԼԱՐՅԱՆ
ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և
կառավարման ամբիոնի ավագ դասախոս, տ.գ.թ.

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԱՀ-ՈՒՄ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հոդվածը նվիրված է Արցախի Հանրապետությունում հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման և հարկային վարչարարության կատարելագործման հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Հոդվածում բացահայտվել են հանրապետությունում սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոնները: Հիմնավորվել է Արցախի Հանրապետությունում գործարար միջավայրի վրա ազդող հարկային համակարգի դերը, առաջարկվել են ուղիներ հարկային համակարգի զարգացման համար, առաջադրվել են ներդրումների ներգրավման և Արցախի Հանրապետությունում տնտեսության ոլորտներում տնտեսական աճի ապահովման հարկային մեխանիզմներ:

Բանալի բառեր՝ *հարկային վարչարարություն, հարկային համակարգ, հարկային ռիսկ, հարկային եկամուտներ, հարկային գործիքներ, հարկային մեխանիզմ, ներդրումներ, հարկերի հավաքագրում*

Л.Бегларян

ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ НАЛОГОВОГО АДМИНИСТРИРОВАНИЯ В РА И ПУТИ ЕГО УЛУЧШЕНИЯ

Статья посвящена изучению налоговых проблем Республики Арцаха с целью повышения эффективности налоговой политики и налогового администрирования. В статье выявлены факторы, которые препятствуют социально-экономическому развитию. В работе обосновалась роль налоговой системы, оказывающей влияние на бизнес-среду Республики Арцаха и предложились пути ее развития. При помощьи факторного анализа в отношении отдельных видов налогов, предложились механизмы, направленные на привлечение инвестиций и обеспечение экономического роста в областях экономики Республики Арцаха.

Ключевые слова. *налоговое администрирование, налоговая система, налоговый риск, налоговые доходы, налоговые инструменты, налоговый механизм, инвестиции, сбор налогов*

L. Beglaryan

ASSESSING THE EFFICIENCY OF TAX ADMINISTRATION IN RA AND WAYS OF ITS IMPROVMENT

The article is devoted to the study of the problems of the Republic of Artsakh to increase the efficiency of tax policy and tax administration. The article revealed the factors that hinder socio-economic development. The role of the tax system influencing on the Republic of Artsakh business environment has been fixed in the work and the ways have been proposed for the development of the tax system and the tax mechanisms have been proposed for attracting investments and for supporting the economical growth in the Republic of Artsakh economy.

***Keywords**: tax administration, tax system, tax risk, tax income, tax toolware, tax mechanism, investments, tax mechanism.*

Հարկային վարչարարությունը բխում է երկրում իրագործվող հարկային քաղաքականությունից, հարկումը կառուցելու մոտեցումներից ու ամրագրումներից, հարկային մարմինների և հարկատուների միջև հարաբերություններից, որոնք ի վերջո իրենց արտահայտությունն են գտնում վարչարարության մեջ: Հարկային վարչարարությունը կարելի է դիտարկել որպես հարկային իրավահարաբերությունների մասնակիցների միջև «փոխգործակցության գործընթացի կառավարում»[1]: Ներկայումս ինքնագնահատումը դարձել է հարկային վարչարարության կարևոր բաղադրիչը, ինչը կնպաստի հարկային համակարգի զարգացմանը: Այն նպաստում է նաև հարկային համակարգում ազնվության և հավասարության սկզբունքի ամրապնդմանը՝ միևնույն ժամանակ ընդգծելով յուրաքանչյուր հարկ վճարողի իրավունքները և պարտականությունները, ենթադրում է հարկ վճարողների կողմից իրենց առևտրային գործունեության արդյունքում պետական բյուջե վճարման ենթակա հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ինքնուրույն, ինքնակամ գնահատումը, հաշվարկումը և վճարումը: Մյուս կողմից, որքան հիմնավոր են պետական ծախսերը և համարժեք են դրանք հարկատուների սպասումներին, այնքան ավելի բարձր է վստահությունը պետության հանդեպ, և հետևաբար ավելի արդյունավետ կարելի է գնահատել բուն հարկային վարչարարությունը տվյալ երկրում:

Արցախի Հանրապետությունում վերջին տասը տարիների ընթացքում հարկերի ինքնուրույն հաշվարկման և վճարման մշակույթի ձևավորման ու արմատավորման նպատակով բարեփոխումներ են իրականացվել հետևյալ ուղղություններով.

1) օրենսդրական փոփոխություններ, որոնց թվում են՝

ա. արտոնագրային վճարներով հարկման համակարգի ներդրումը,

բ. նոր ստեղծված հարկ վճարողներին եռամյա ժամկետով առևտրի հարկի, հաստատագրված և արտոնագրային վճարների գծով արտոնությունների տրամադրումը,

գ. փոքր ու միջին ձեռնարկատիրության համար հաշվետվությունների ներկայացման պարբերականության կրճատումը:

դ. փաստաթղթաշրջանառության բեռի թեթևացումն ու հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունների ցանկի կրճատումը,

---

[1] ***Девятых Н.В.**, Налоговое администрирование как элемент налоговой политики*

ե. տնտեսության գերակա ոլորտների մասով արտոնությունների սահմանումը,

զ. ներդրումների ներգրավման նպատակով ընկերության կանոնադրական կապիտալում 100,0 մլն ՀՀ դրամ և ավելի ներդրում կատարելու դեպքում շահութահարկի գծով ժամկետային արտոնությունների սահմանումը,

է. հարկային օրենսդրության խախտումների համար նախատեսված պատժամիջոցների չափերի նվազեցումը, ինչը միտված է վարչարարության մեղմացմանն ու հարկային հսկողության արդյունավետության բարձրացմանը,

ը. պարտավորություններ կուտակած հարկ վճարողներին պարտավորությունների աստիճանական մարման հնարավորության ընձեռնումը՝ տույժերի և տուգանքների որոշակի մասից ազատման միջոցով,

թ. հիպոթեքային վարկի շրջանակում վարձու աշխատողի կողմից վճարված եկամտային հարկի վերադարձի ծրագրի ներդրումը :

1. Օրենսդրական փոփոխությունների ազդեցությունը [1]

- 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ Արցախի Հանրապետությունում գործող հարկ վճարողների ավելի քան 22 տոկոսը կամ մոտ 1 300 հարկ վճարողներ հարկվում են արտոնագրային վճարների հարկման համակարգով:
- Յուրաքանչյուր տարի եռամսյա ժամկետով արտոնություններ են տրամադրվում ավելի քան 600 նոր ստեղծված հարկ վճարողների, որի արդյունքում գործունեությունը նոր սկսող հարկ վճարողները նշված ժամկետում ազատվում են առևտրի հարկի, հաստատագրված վճարների և արտոնագրային վճարների կատարումից:
- 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ մոտ 1 000 հարկ վճարողներ հաշվարկ-հաշվետվությունները ներկայացնում են կիսամյակային պարբերականությամբ:
- Արտոնագրային վճարների հարկման համակարգի ներդրման, հաշվարկ-հաշվետվությունների և այլ տեղեկությունների ներկայացման պարբերականության կրճատման շնորհիվ հարկային մարմին ներկայացվող փաստաթղթերի քանակը կրճատվել է տարեկան շուրջ 70 000-ով, այդ թվում՝

- արտոնագրային վճարների հարկման համակարգի ներդրման արդյունքում կրճատվել են մոտ 40 000 փաստաթղթեր.
- հաշվարկ-հաշվետվությունների կիսամյակային ներկայացման պարբերականության ներդրման արդյունքում կրճատվել են ավելի քան 30 000 փաստաթղթեր:

Միջինում մեկ հարկ վճարողի հաշվով հարկային մարմին ներկայացվող հաշվարկ-հաշվետվությունների և այլ տեղեկությունների քանակը կրճատվել է շուրջ երկու անգամ և կազմում է եռամսյակային կտրվածքով յոթ փաստաթուղթ:

- Կանոնադրական կապիտալում ներդրումներ կատարելու շնորհիվ 30 հարկ վճարողներ օգտվել են ավելի քան 1,4 մլրդ ՀՀ դրամ գումարի չափով շահութահարկի արտոնությունից:

---

[1] *ԱՀ հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգ*

➢ 2015 թվականի ապրիլի 1-ից մինչև 2018 թվականի հունվարի 1-ը 296 վարկառուների կատարվել է շուրջ 287,0 մլն ՀՀ դրամ գումարի չափով եկամտային հարկի վերադարձ:

2) **հարկ վճարողների սպասարկման մակարդակի բարձրացում**, այդ թվում՝ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի գործարկում, ինչը հնարավորություն է տալիս հարկ վճարողներին ցանկացած կետից և ցանկացած պահի առանց հարկային մարմին այցելությունների ուղարկել հաշվետվություններ՝ տնտեսելով նաև ժամանակային և ֆինանսական ռեսուրսները.

2. Հաշվետվությունների էլեկտրոնային համակարգի ներդրման կատարողականության ցուցանիշը [1]

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվետվությունների ամբողջական փաթեթը էլեկտրոնային եղանակով ներկայացնողների թիվը կազմում է շուրջ 2 200 հարկ վճարող կամ հաշվետվություն ներկայացնող հարկ վճարողների մոտ 50 տոկոսը: Ընդ որում, բոլոր հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացման ենթահամակարգից օգտվողների մեջ ավելի քան 68 տոկոսը կամ 1 500 հարկ վճարողներ կամավոր հիմունքներով են միացել էլեկտրոնային համակարգին:

3) հարկ վճարողների իրազեկվածության մակարդակի բարձրացում, այդ թվում՝

ա. հարկ վճարողների հետ պարբերաբար սեմինարների և հանդիպումների կազմակերպումը.

բ. նոր ստեղծված հարկ վճարողներին օժանդակության նպատակով այցելությունների կանոնակարգի ներդրումը, որի համաձայն հարկ վճարողի ցանկությամբ տարեկան առնվազն երկու անգամ հարկային մասնագետների կողմից այցելություններ են կազմակերպվում՝ տեղում պարզաբանելով օրենսդրական դրույթները, ուսուցանվում հաշվետվությունների էլեկտրոնային համակարգից օգտվելու գործընթացը.

գ. հարկային մարմնի պաշտոնական կայքէջի գործարկումը.

դ. թեժ գծի և «Սկայպ» (Skype) հեռաձայնային ծառայության գործարկումը.

3. Հարկ վճարողների իրազեկվածության ապահովման կատարողականության ցուցանիշը [2]

➢ Տարվա կտրվածքով Ստեփանակերտ քաղաքում և շրջաններում գործող հարկ վճարողների հետ կազմակերպվում են միջինում տասը սեմինար-քննարկումներ՝ ընդգրկելով մոտ 1 500 հարկ վճարողների ներկայացուցիչների:

➢ Հարկային մարմնի կայքէջի այցելուների քանակը կազմում է տարեկան միջինում 160 000 այցելու:

➢ Հարկ վճարողների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով 2017 թվականի ընթացքում նոր ստեղծված 137 հարկ վճարողների մոտ կազմակերպվել են այցելություններ և տեղում պարզաբանվել

[1] *ԱՀ հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգ*

[2] *ԱՀ հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգ*

օրենսդրական դրույթները, ինչպես նաև տրամադրվել հարկման համապատասխան ռեժիմների (առևտրի հարկով, հաստատագրված վճարներով և ընդհանուր հարկման ռեժիմների) վերաբերյալ ուղեցույց-գրքույկներ, որոնցում պարունակվող տեղեկատվության իմացությունը բիզնեսն արդյունավետ կազմակերպելու և հնարավոր սխալներից խուսափելու անհրաժեշտ պայմաններից է:

4) հարկային վարչարարության բարելավում, այդ թվում՝

ա. ստուգումների քանակի կրճատում՝ դրանք իրականացնելով ռիսկային չափանիշների հիման վրա, ինչը հսկողությունը դարձնում է առավել նպատակային և հասցեական,

բ. կամերալ ուսումնասիրությունների համակարգի գործարկում,

գ. ստվերային երևույթների չափերի նվազեցմանն ուղղված համակարգված միջոցառումների իրականացումը,

դ. ապառքների կառավարման համակարգի ներդրում, կախված դրանց ռիսկայնությունից ներկայացվում են ծանուցումներ, իրականացվում վճարունակության ուսումնասիրություններ, կիրառվում արգելադրումներ և ներկայացվում դատական հայցեր,

ե. Արցախի Հանրապետություն ներմուծվող և արտահանվող ապրանքանյութական արժեքների հաշվառման գործընթացի բարելավումը:

4. Հարկային վարչարարության ազդեցությունը[1]

- 2007 թվականի համեմատ 2017 թվականին ստուգումների թիվը կրճատվել է շուրջ երկու անգամ (2017 թվականին կատարվել է պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 281 ստուգում՝ 2007 թվականի 547 ստուգման դիմաց): Ընդ որում, 2017 թվականին ստուգված հարկ վճարողների մասնաբաժինը գործող հարկ վճարողների մեջ կազմում է մոտ 5 տոկոս՝ 2007 թվականի 17 տոկոսի դիմաց:
- Յուրաքանչյուր տարի կամերալ ուսումնասիրության են ենթարկվում հարկ վճարողների ավելի քան 10 000 հաշվարկ-հաշվետվություններ:
- Հարկային իրավախախտումների դեմ համակարգված պայքար իրականացնելու նպատակով մշակվել և կիրառության մեջ է դրվել «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգը, որի շրջանակներում իրականացված բացատրական և հսկողական միջոցառումների արդյունքում բարելավվել են մի շարք ցուցանիշներ, այդ թվում՝ հարկ վճարողերի կողմից ինքնահայտարարագրման և ճշտված հաշվարկներ ներկայացնելու միջոցով: Մասնավորապես,

- առևտրի ոլորտում իրացման շրջանառությունները 2017 թվականին կազմել են ավելի քան 56 270,0 մլն ՀՀ դրամ, որը 2015 թվականի համեմատ ավել է մոտ 7 տոկոսով.
- աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների մեծությունը (առանց Արցախի Հարապետության ամենախոշոր հարկ վճարողի՝ «Բեյզ Մեթըլս» ընկերության ցուցանիշների) 2017 թվականին կազմել է ավելի քան 61 673,0 մլն ՀՀ դրամ, որը 2015 թվականի համեմատ ավել է մոտ 6 տոկոսով.

[1] *ԱՀ հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգ*

- 2017 թվականի ընթացքում Արցախի Հանրապետություն ապրանքանյութական արժեքների ներմուծման ծավալները կազմել են ավելի քան 111 675,0 մլն ՀՀ դրամ, իսկ արտահանման ծավալները՝ ավելի քան 75 650,0 մլն ՀՀ դրամ, որոնք 2015 թվականի նույն ցուցանիշները գերազանցել են համապատասխանաբար 7,3 տոկոսով և 2,6 անգամ.
- հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքների գումարը 2017 թվականին 2015 թվականի համեմատ նվազել է ավելի քան 9 տոկոսով՝ կազմելով մոտ 3 836,0 մլն ՀՀ դրամ:

Արդյունքում պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքի գծով մուտքերը 2010 թվականի համեմատ 2017 թվականին աճել են շուրջ 85 %-ով *(Հավելված 1):*

Իսկ հարկային եկամուտների և պետական տուրքի գծով կատարողականները ՀՆԱ-ի հարկվող ճյուղերի նկատմամբ 2010-2017 թվականներին տատանվել են 29,3-33,7 %-ի սահմաններում : (*Հավելված 2*) Չ/

ՀՆԱ կառուցվածքը, ըստ ճյուղերի դիտարկելիս նկատվում է, որ արդյունաբերական արտադրանքի ծավալը 2017 թվականին 2013 թ-ի համեմատ աճել է 2.2 անգամ, գյուղատնտեսականը՝ 1.4, շինարարության ոլորտում աճը կազմել է 4.2 %: Կարող ենք նշել, որ նախորդ 6 տարիների ընթացքում աճի դրսևորում ունի գյուղատնտեսական արտադրանքի ծավալը աճել է 1.4 անգամ, շինարարության ծավալը, նվազում դրսևորելով միայն 2015 թվականին, աճել է 1.2 անգամ[1]: Դա մեծապես պայմանավորված է ոլորտներում կիրառվող հարկային արտոնություններով: Արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալի վրա մեծ ազդեցություն ունի հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման 53.4% բաժինը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ բաժնի աճի արդյունքում (ծավալի ինդեքսը կազմել է 2013թ.՝ 121.0%, 2017թ.՝ 263.4%) 2013-2017թթ ամբողջ արդյունաբերական արտադրանքի ծավալը աճել է 2.2 անգամ: 2013-2016թթ ոլորտում արտահանման ծավալները ունեն նվազման դրսևորում, 2017 թվականին այն զգալիորեն ավելացել է: Կարծում ենք, որ նշված միտումը պայմանավորված է այդ ժամանակահատվածում «Բեյզ Մեթալս» ՓԲԸ-ի արդյունահանման ծավալների կրճատմամբ, ինչպես նաև հանքավայրերի պաշարների փոքրությամբ և դրանց աստիճանաբար սպառմամբ: Ուստի առաջարկում ենք ոլորտի հետագա զարգացման համար սահմանել հարկային արտոնություններ նաև երկրաբանահետախուզական աշխատանքների և ուսումնասիրությունների իրականացման մասով: (*Հավելված 3*)

Իսկ պետական բյուջեի հարկային եկամուտների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շահութահարկից մուտքերը թեև չնչին մասով ավելի են, քան 2016 թ–ին, սակայն 2013 թ-ի նկատմամբ նվազել են շուրջ 1,7 անգամ, նույն ժամանկահատվածում ԱԱՀ-ն՝ 1.2 անգամ: Կարծում ենք, քանի որ ոլորտում հարկային դրույքաչափերի էական փոփոխություններ չեն կատարվել, հարկային նոր հսկողության գործիքակազմի՝ դրոշմապիտակների ներդնումը էական ձեռքբերումներ դեռևս չունի: Սա վկայում է շահութահարկի գծով հարկային հաշվառման բազմաթիվ թերությունների և բացթողումների, ինչպես

[1] *http://www.stat-nkr.am/*

նաև շահութահարկ վճարողների համար վերջինիս բեռը բարձր լինելու մասին: Հետևաբար շահութահարկի հարկվող եկամուտը կամ թերհայտարարագրվում է կամ իրականացվում է անօրինական և չհաշվառված տնտեսական գործունեություն: Այնուամենայնիվ, 2017 թվականի ընթացքում պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են `95.3%, որը չի նվազել նախորդ տարվա համեմատ:

Վերը նշված փաստերը ցույց են տալիս, որ եկամուտների աճը հնարավոր դարձավ տնտեսական աճի և հարկային վարչարարության խստացման շնորհիվ: Ինչն էլ վկայում է նաև տնտեսական աճի վերլուծությունը : (*Հավելված 4*)

Գործարար միջավայրի բարելավումը առաջին հերթին պայմանավորված է տնտեսության ներսում տեղի ունեցող գործընթացներով, որոնց արդյունավետ կառավարումը նպաստում է գործարար ակտիվության բարձրացմանը և տնտեսության զարգացմանը: Պետք է նշել, որ ինչպես զարգացած, այնպես էլ հետանցումային բոլոր երկրներում գերակա խնդիրներից մեկը ՓՄՁ-ների խթանումն է , իսկ տնտեսական գործընթացներում կատարվող շարունակական բարեփոխումների նպատակներից մեկը ՓՄՁ-ների ավելացումն է, քանի որ աշխարհի բոլոր երկրներում հարկային եկամուտների գերակա մասը ապահովում են ՓՄՁ-ները: ԱՀ–ում գործարար միջավայրը բարենպաստ է, որի արդյունքում 6 տարվա կտրվածքով, 2015 թվականին 2009 թվականի համեմատ դրանց թիվը աճել է ավելի քան 2 անգամ՝ 4086-ից հասնելով 8141-ի[1]:

Սակայն նշենք, որ այսօր օրենսդրական որոշակի դրույթներ տնտեսավարման տարբերակված պայմաններ են ենթադրում ՓՄՁ-երի և խոշոր ձեռնարկությունների համար, օրինակ՝ «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքով հարկվող շահույթը որոշելիս կատարվող որոշ ծախսեր ճանաչվում են որպես այդպիսին միայն ԼՂՀ կառավարության սահմանած նորմաները չգերազանցող մասի չափով: Նման սահմանափակումը կարող է խոչընդոտել ՓՄՁ-երի գործունեությանը, քանի որ սահմանած չափը գերազանցող ծախսերի բացարձակ մեծությունը խոշոր ընկերությունների ընդհանուր շրջանառության նկատմամբ շատ ավելի փոքր մասնաբաժին է կազմում, քան ՓՄՁ-երի համար: Հարկման դաշտը արդարացի չէ նաև «Եկամտային հարկի» մասին օրենքով սահմանված որոշակի գործունեություններից տարեկան համախառն եկամուտներից 21 տոկոս հարկման դրույքաչափի մասով, երբ «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված է 10 տոկոս և բարձր շահութաբերություն ունեցող ոլորտներում՝ 20 տոկոս դրույքաչափ:

Արտոնագրային վճարը օրենքով սահմանված չափերով և ժամկետներում սահմանված գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի համար ավելացված արժեքի հարկին փոխարինող պարտադիր և անհատույց վճար է: Արտոնագրային վճար վճարող կարող են համարվել այն ֆիզիկական անձինք, որոնց կողմից նախորդ տարվա իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել12000.0 հազար դրամը: Այսինքն՝ հարկման այս համակարգն ուղղված է ինքնազբաղվածներին՝ առավելագույնս հեշտացնելով հարկային համակարգի հետ փոխառնչությունները: Սակայն, կարծում ենք, գործունեության գրեթե բոլոր տեսակների մասով կարելի է շրջադարձ կատարել դեպի արտոնագրային վճարների համակարգ, ինչը

[1] *http://www.stat-nkr.am/*

հնարավորություն կտա հատկապես փոքր և ընտանեկան ձեռնարկություններին խուսափել հարկային հաշվառում վարելուց: Ընդ որում՝ արտոնագրային վճարների համակարգում վարձու աշխատողներ ունենալու սահմանափակումը նպատակահարմար է կասեցնել ընտանիքի անդամների մասով՝ սահմանելով ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար ուղղիչ գործակից, ընտանիքի անդամների հստակ չափորոշիչներ, ինչը ընտանեկան ձեռնարկատիրության զարգացման լուրջ խթաններ կստեղծի: 2019 թվականի օրենսդրական փոփոխությունները արտոնագրային վճարների մասով մեծ նշանակություն ունի մինչև 10 քառ.մ տարածքում առևտուր իրականացնող անհատ ձեռնարկատերերի համար : «Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ դեպքերում այն խոչընդոտ է հանդիսանում նորաստեղծ տնտեսավարող սուբյեկտների շուկա մուտք գործելու համար, քանի որ, պարտադիր լինելով կիրառման համար, շատ դեպքերում ավելի մեծ հարկային բեռ է ձևավորում, քան հարկման ընդհանուր ռեժիմը այն պատճառով, որ հարկման օբյեկտ է դիտվում ոչ թե ձեռնարկատիրական գործունեության արդյունքը, այլ՝ տեսակը[1]: Հաշվի առնելով նման խոչընդոտները՝ օրենքով ատամնաբուժական պոլիկլինիկաների, կենտրոնների կամ կաբինետների կազմում գործող ատամնատեխնիկական ծառայությունների մատուցման նկատմամբ սահմանվել է նվազեցվող գործակից, հասարակական (ներառյալ՝ բարեգործական), կրոնական և նմանատիպ բնույթի այլ կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում բացառապես անվճար հիմունքներով իրականացվող ատամնաբուժական գործունեությունն ազատվել է հաստատագրված վճարների կատարումից: Հաշվառման պարզեցմանն է ուղղված նաև վարսավիրանոցներում բացի վարսավիրական ծառայություններից այլ ծառայությունների (դիմահարդարում, եղունգների մաքրում և այլն) մատուցման մասով ևս հաստատագրված վճարների սահմանումը: Գործող օրենքով նշված ծառայությունները հարկվում էին ընդհանուր կարգով, որն էլ դժվարություններ էր ստեղծում հարկ վճարողների կողմից հարկերի հաշվարկման և հաշվառման վարման համար: Տարածքային հավասարաչափ զարգացում ապահովելու համար հարկային բարեփոխումների արդյունքում սահմանամերձ շրջաններում գործող հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված 80 ք.մ և ավելի մակերես ունեցող սրահի միջոցով իրականացվող գործունեության համար սահմանվել է նվազեցվող գործակից: Արդյունքում՝ շրջանում ավելացել է տվյալ գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների թիվը: Նշված օրենքներում նվազեցման լրացուցիչ գործակիցների կիրառումը մեծ նշանակություն ունի առանձնապես ՓՄՁ-ի համար :

Հարկային համակարգի ազդեցությունը գործարար միջավայրի վրա կարևոր և արդիական է նաև օտարերկրյա ներդրումների ներգրավման մեխանիզմների ձևավորման գործընթացում, ինչը հնարավորություն է համաշխարհային տնտեսությանը սերտ ինտեգրման համար: Այս տեսանկյունից կարևորվում է օտարերկրյա ներդրողների համար հարկման առանձնահատկություններ, տարբերակված հարկային արտոնությունների կիրարկում և այլն: Այսպես,

[1] http://www.arlexis.am/, *ԼՂՀ իրավական տեղեկատվական համակարգ*

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված հարկվող շահույթը որոշելիս նախորդ 3 տարիների հարկային գործունեությունից ռեզիդենտի վնասը նվազեցվում է: Միևնույն ժամանակ, օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ կետով ոչ ռեզիդենտ ընկերությունները տվյալ նվազեցումից օգտվելու իրավունք չունեն: Նշենք նաև, որ օրենքով շահութահարկի կանխավճարների ինստիտուտը ոչ ռեզիդենտ ընկերությունների համար գործում է նրա նախորդ տարվա շահութահարկի գումարը միայն 2 մլն դրամը գերազանցելու դեպքում, ռեզիդենտների համար՝ այդ շեմը 100.0 հազար դրամ է: Մեր կարծիքով դա հավասարակշռում է ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների իրավունքների ու պարտականությունների զամբյուղը: Իսկ նախորդ տարիների ոչ ռեզիդենտի հարկային վնասի նվազեցման հնարավորությունը, կարծում ենք, կբարձրացնի երկրի ներդրումային գրավչության մակարդակը և կապահովի մրցակցային հավասար պայմաններ՝ միևնույն ժամանակ համահարթեցնելով համապատասխան օրենսդրական դաշտը ռեզիդենտ ու ոչ ռեզիդենտ ընկերությունների համար:

Եթե նախկինում առաջնային նպատակ էր մեծ շահույթի ստացումը, ապա տնտեսության ներկայիս զարգացումներում կարևորվում են այլ գործոններ: Այսօր արդյունքում շահույթ է ստանում իր գործունեության ընթացքում լավագույն պայմաններ հաշվի առնող ձեռնարկությունը, որը կհամապատասխանեցնի արտադրությունը տեղի ունեցող դինամիկ տատանումներին: Եթե կազմակերպությունները շահույթ են ստանում առանց նորարարությունների, առանց գործարարության կատարելագործման, խոչընդոտում են ճյուղի զարգացումը, նաև՝ տնտեսության հետագա զարգացումը: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է վերանայել «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված ամորտիզացիոն քաղաքականության սկզբունքները՝ օրենսդրությամբ սահմանված ամորտիզացիոն ժամկետները կրճատելու և արագացված ամորտիզացիա իրականացնելու ուղղությամբ: Կարծում ենք, որ այդպիսի մոտեցումը կնպաստի հայրենական տնտեսության արդիականացմանն և վերազինմանը, մրցունակության բարձրացմանը: «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքով հարկվող շահույթը որոշելիս գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական աշխատանքների ծախսերը նվազեցվում են այդ ծախսերի կատարման տարվա ընթացքում: Կարծում ենք, որ տնտեսության իրական հատվածում, հատկապես ինովացիոն ոլորտում բիզնես ծրագրերի իրականացման ժամանակ առաջին տարիների ընթացքում հարկային արտոնությունների տրամադրումը դարձել է տնտեության արդիականացման հրամայական պահանջ, իսկ ամորտիզացիոն մասհանումների նոր նորմաները հարկային պարտավորությունների տարաժամկետման և կատարված ներդրումների արագ հետգնման մեծ հնարավորություններ կտան: Կարծում ենք, առաջին հերթին, պետք է էականորեն մեծացնել հարկերի խթանիչ դերը, հատկապես կազմակերպություններից շահութահարկի գանձման դեպքում անհրաժեշտ է չհարկել շահույթի այն մասը, որն ապահովվել է ինքնարժեքի նվազեցման հաշվին: Սա, մի կողմից, կխթանի տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող ներդրումները, իսկ մյուս կողմից, այլ հավասար պայմաններում, կնվազեցնի ապրանքների գները: Արտադրություն ներդրումների ներգրավումը խթանելու համար անհարաժեշտ է շահութահարկից մասնակի կամ ամբողջությամբ ազատել ընկերության շահույթի այն մասը, որը կներդրվի ինովացիոն տնտեսական ծրագրերում:

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքով ոչ ռեզիդենտ կազմակերպություններից, օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից ստացված խորհրդատվական ծառայությունների ծախսերը՝ հաշվետու տարվա համախառն եկամտի՝ ԼՂՀ կառավարության սահմանած նորմաները չգերազանցող մասի՝ միայն 2 տոկոսը չգերազանցող գումարի չափով են թույլատրվում նվազեցնել: Այս դրույթները չեն կիրառվում տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի բնագավառում նորամուծությունների ներդրման և ինովացիոն գործունեություն իրականացնող Արցախի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպությունների հիմնադիր հանդիսացող ոչ ռեզիդենտ կազմակերպություններից, օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից ստացված կառավարման ծառայությունների ծախսերի նկատմամբ: Դրանց կիրառումը կխթանի ինովացիոն տնտեսական ծրագրերի ներդրումները:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Արցախի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավման գործում հրատապ խնդիրներից մեկը տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումն է, հատկապես սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համատեքստում: Պետք է նշել, որ գործարար միջավայրի գրավչությունը պայմանավորված է ոչ միայն հարկային համակարգով, այլև մակրոտնտեսական այնպիսի ցուցանիշներով, որոնք ուղղակի և անմիջական ազդեցություն են ունենում, օրինակ՝ արտահանման և ներմուծման ծավալների դինամիկայի, տրանսֆերտների, վարկային տոկոսադրույքների, ֆինանսական ռեսուրսների հասանելիության աստիճանի, իրավական համակարգի, ներդրողների շահերի պաշտպանվածության վրա, որոնք առավել անմիջական ազդեցություն են ունենում գործարար միջավայրի վրա, քան հարկերը[1]:

Ի թիվս դրանց՝ կարելի է ընդգծել շինարարության թույլատվության տրամադրման, միջազգային առևտուր վարելու դյուրինության, հարկերի վճարումների, սեփականության գրանցման, ներդրողների շահերի պաշտպանության հետ կապված խնդիրները, որոնք պայմանավորված են նաև հարկային վարչարարությամբ, քաղաքական դիրքորոշմամբ, անհավասար մրցակցային պայմաններով, ուստի Մերձ Բալթյան, ԱՊՀ և ԵԱՏՄ անդամ երկրների հետագա ռազմավարությանը զուգընթաց՝ հանրապետությունում հետագա բարեփոխումները պետք է ուղղված լինեն հարկային քաղաքականության համաձայնեցմանը, ազգային տնտեսությունների խթանմանը, այդ թվում հարկային օրենսդրության բարելավմանը՝ հաշվի առնելով տնտեսավարող սուբյեկտների մրցակցությունը:

[1] ***Романенко Е.В.*** *Особенности развития и взаимодействия малого, среднего и крупного пред- принимательства [Текст] / Е.В. Романенко // Вестник СибАДИ. – 2011. – № 3(21). – С.* 65-68.

Գրականություն

1. <<Նոր ստեղծված հարկ վճարողներին օժանդակության և սպասարկման ծառայությունների այցելությունների կազմակերպման>> ԱՀ կանոնակարգ-2018թ.
2. ԱՀ հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգ - 2018թ.
3. http://www.stat-nkr.am/
4. http://tax.nk.am/
5. http://www.arlexis.am/, ԼՂՀ իրավական տեղեկատվական համակարգ
6. Девятых Н.В., Налоговое администрирование как элемент налоговой политики
7. Романенко Е.В. Особенности развития и взаимодействия малого, среднего и крупного предпринимательства [Текст] / Е.В. Романенко // Вестник СибАДИ. – 2011. – № 3(21). – С. 65-68.

Հավելված 1.
Հարկային եկամուտների և պետական տուրքի գծով կատարողականը 2010-2017թվականներին



Հավելված 2.
Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՆԱ-ի հարկվող ճյուղերի նկատմամբ 2010-2017 թվականներին

Տարեթիվը	Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՆԱ-ի հարկվող ճյուղերի նկատմամբ (%)
2010	29,7
2011	29,6
2012	30,9
2013	29,3
2014	29,3
2015	33,7
2016	29,8
2017	30,3

Հավելված 3.



Հավելված 4.
ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԱՃԻ ՏԵՄՊԵՐԸ (տոկոսներով՝ նախորդ տարվա նկատմամբ)[1]



Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը:

ՀՏԴ 336. 77(479.243)
Տնտեսագիտություն

Արևիկ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ԱրՊՀ, ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԱՀ-ՈՒՄ

Զարգացած ֆինանսական շուկաներ ունեցող երկրներում ֆինանսական ժամանակակից մեխանիզմներից է ակտիվների արժեթղթավորումը, որի համար որպես ֆինանսական գործիքներ կիրառվում են ակտիվներով ապահովված տարբեր արժեթղթերը: Հոդվածում ներկայացված են արժեթղթավորման տեսակները, ակտիվների արժեթղթավորման գործընթացը, ակտիվների արժեթղթավորման մեխանիզմի իրականացման քայլերը ՀՀ-ում և Արցախում, դրան խոչընդոտող հիմնախնդիրները և այդ մեխանիզմի գործարկման անհրաժեշտ նախադրյալները:

Բանալի բառեր՝ *հիպոթեքային վարկ, սեքյուրիտիզացիա, ավանդական արժեթղթավորում, սինթետիկ արժեթղթավորում, Հատուկ մասնագիտացված ընկերություն, օրիգինատոր, Pfandbrief, MBS — mortgage backed pass-through securities, commercial paper, կոնդուիտ:*

А. Алексанян

ПРОБЛЕМЫ ЗАПУСКА МЕХАНИЗМА СЕКЮРИТИЗАЦИИ АКТИВОВ В АРМЕНИИ И В АРЦАХЕ

В современном мире, в странах, имеющие развитые финансовые рынки, в качестве современных финансавых механизмов применяется секюритизация активов, а в качестве финансового инструмента исползуются разные ценные бумаги. В статье описаны виды секьюритизации, процесс секьюритизации активов, шаги по внедрению механизма секьюритизации активов в Армении и в Арцахе, препятствия, мешающие ему, и предпосылки для запуска этого механизма.

Ключевые слова: *ипотечный кредит, секьюритизация, традиционная секьюритизация, синтетическая секьюритизация, специальная специализированная компания, оригинатор, Pfandbrief, MBS - mortgage backed pass-through securities, commercial paper, кондуит.*

A.Aleksanyan

PROBLEMS OF STARTING THE ASSETS SECURITIZATION MECHANISM IN ARMENIA AND ARTSAKH

Summary: In today's world, in countries that have developed financial markets, asset securitization is used as a modern financing mechanism, and various securities are used as a financial instrument. The article describes the types of securitization, the process of asset securitization, steps to introduce a mechanism for asset securitization in Armenia and Artsakh, obstacles that hinder it, and prerequisites for starting this mechanism.

Keywords: *mortgage loan, securitization, traditional securitization, synthetic securitization, special specialized company, originator, Pfandbrief, MBS - mortgage backed pass-through securities, commercial paper, conduit.*

Զարգացած ֆինանսական շուկաներ ունեցող երկրներում ֆինանսական ինստիտուտները իրենց ֆինանսական գործառնությունների ֆինանսավորման նպատակով ձգտում են ներգրավել ցածր տոկոսադրույքով ֆինանսական ռեսուրսներ, որոնց համար ավանդական գործիքները ոչ միշտ են շահավետ: Նման դեպքերում վերջիններս սկսում են կիրառել ժամանակակից և այլընտրանքային մեխանիզմներ, որոնցից մեկն է արժեթղթավորումը կամ սեքյուրիտիզացիան, որը մշակվել է ԱՄՆ-ում՝ որպես ֆինանսական ինժինիրինգի ձև:[1] Վերջինս իրենից ներկայացնում է բանկի կամ վարկային կազմակերպության հաշվեկշռի ակտիվների և պասիվների կառավարման մեխանիզմ, որի նպատակն է վարկային պորտֆելի կառուցվածքի փոփոխությունը և փոխակերպումը ավելի ապահովված ձևերով (բարձր եկամտաբերություն և ցածր ռիսկայնություն):

Արժեթղթավորումը բարդ և բազմաքայլ գործողությունների ամբողջություն է, որին մասնակցում են տարբեր ֆինանսական հաստատություններ՝ կիրառելով ֆինանսական շուկայի տարաբնույթ գործիքներ:

Տարբերում են արժեթղթավորման երկու հիմնական ձևեր՝ ավանդական և սինթետիկ: Ավանդական արժեթղթավորումը արտահաշվեկշռային ֆինանսավորման մեխանիզմ է, իսկ սինթետիկ արժեթղթավորումը՝

---

[1] *Տե՛ս* ***Разумова И.А.,*** *"Ипотечное кредитование:Учебное пособие", СПб.: Питер. 2005 г., стр.31*

հաշվեկշռային ֆինանսավորման մեխանիզմ:[1] Սինթետիկ արժեթղթավորումը ձևավորվել է 1990 թթ. կեսերին[2]. արժեթղթավորման այս դեպքում վարկատու կազմակերպությունը՝ «օրիգինատորը», տրամադրելով հիփոթեքային վարկ, վերջինիս ապահովությամբ թողարկում է հիփոթեքային պարտատոմսեր և վաճառում դրանք բաց շուկայում: Վարկատու կազմակերպությանը չի թույլատրվում հիփոթեքային վարկը հանել իր հաշվեկշռից, հետևաբար տվյալ բանկային գործունեության հետ կապված ռիսկը տարածվում է նաև այդ պարտատոմսերի վրա: Սինթետիկ արժեթղթավորման դեպքում SPV-ի առկայությունը պարտադիր չէ:[3] Արժեթղթավորման այս ձևը բնորոշ է հիփոթեքային վարկավորման բաց ընդլայնված միամակարդակ մոդելին: Ավանդական արժեթղթավորման գլխավոր գործառույթը էժան ֆինանսական ռեսուրսների ներգրավումն է, իսկ սինթետիկ արժեթղթավորմանը՝ վարկային ռիսկի հեջավորումը:[4]

Ավանդական արժեթղթավորմումը հատուկ է հիփոթեքային վարկավորման բաց ընդլայնված երկմակարդակ մոդելին և իրականացվում է հետևյալ քայլերով.[5]

1. առաջնային վարկատուն հիփոթեքային վարկ է տրամադրում վարկառուին. այն առաջ է բերում վարկառուի պարտքային պարտավորությունների ձևավորում, որը արտացոլվում է վարկատուի (***արժեթղթավորման գործարքի նախաձեռնող***) վարկային պորտֆելում,
2. տրամադրված փոխատվությունների հիման վրա ձևավորվում է գրավաթղթերի փուլ, որոնք նախկինում տրամադրված, բայց չվճարված միասեռ պարտավորություններն են, և որոնց մարման ժամկետը չի ավարտվել. խմբավորումը նույնպես իրականացնում է նախաձեռնող ֆինանսական հաստատությունը,
3. ընկերությունը վաճառում է այդ փուլը Հատուկ մասնագիտացված ընկերությանը (SPV- special purpose vehicle). վարկը դուրս է գրվում վարկատու կազմակերպության հաշվեկշռից, հետևաբար բանկային գործունեության հետ կապված ռիսկը այլևս չի տարածվում թողարկված պարտատոմսերի վրա,

---

[1] *Տե՛ս* ***Մամիկոնյան Կ.Հ.,*** *Բանկային համակարգի արժեթղթավորումը որպես ՀՀ կապիտալի շուկայի ակտիվացման և «երկար փողերի» ձևավորման նախապայման, ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱ, #2 (164), Փետրվար 2014, էջ 12*

[2] *Տե՛ս* ***Туктаров Ю.*** */СИНТЕТИЧЕСКАЯ СЕКЬЮРИТИЗАЦИЯ. / РЫНОК ЦЕННЫХ БУМАГ N 11 (338) 2007г., стр 3*

[3] *Տե՛ս* ***Вриз Роббе, Жан Жоб де.*** *Секьюритизация и право/ Жан Жоб де.Вриз Роббе, Пол Али: пер. с англ.-М.: Волтерс Клувер,2008.-,стр 3*

[4] *Տե՛ս* ***Матросов С.В.****/ ТРАДИЦИОННАЯ И СИНТЕТИЧЕСКАЯ СЕКЬЮРИТИЗАЦИЯ ФИНАНСОВЫХ АКТИВОВ./ Экономика и социология, 2 / 2012 г., стр 412*

[5] *Տե՛ս* ***Ալեքսանյան Ա.Ա.****, Արժեթղթավորումը՝ որպես հիփոթեքային վարկավորման ֆինանսական մեխանիզմների կատարելագործման ուղի Արցախի Հանրապետությունում, ՀՊՏՀ 27-րդ գիտաժողով 2017 թ., նոյեմբերի 22-24 Երևան 2018*

4. Հատուկ մասնագիտացված ընկերությունը (SPV), գնված հիփոթեքային վարկերի փուլի համար, թողարկում և տեղաբաշխում է արժեթղթեր,

5. վաճառելով փուլը՝ նախաձեռնողը միաժամանակ հնարավորություն է ստանում օգտվել ամենից հայտնի և բարձր հեղինակություն ունեցող վարկանշային ընկերությունների ծառայություններից, որոնք մանրամասն ուսումնասիրում են փուլի ռիսկի աստիճանը, ակտիվների որակը, որի արդյունքում որոշում է թողարկվող արժեթղթերի վարկանիշը, ինչը մեծ ազդեցություն է թողնում արժեթղթերի եկամտաբերության և պոտենցիալ ներդրողների որոշումների կայացման վրա:

Հիփոթեքային արժեթղթերը իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝

•գերմանական հիփոթեքային արժեթղթեր («Pfandbrief»), որոնց դեպքում պարտատոմսի մայր գումարը մարվում է ժամկետի ավարտին, իսկ տոկոսները՝ ամսական.

•ամերիկյան հիփոթեքային արժեթղթեր (MBS — mortgage backed pass-through securities), որոնց դեպքում պարտատոմսի մայր գումարները և տոկոսները մարվում են ամսական, բացի այդ վարկի վաղաժամկետ մարման դեպքում հնարավոր է նաև պարտատոմսի վաղաժամկետ մարում:

Այս պարտատոմսերի տարբերությունները առավել պատկերավոր երևում են գծապատկեր 1-ի (ա և բ) տեսքով:[1]





ա) *բ)*

Գծապատկեր 1 Գերմանական և ամերիկյան հիփոթեքային արժեթղթերի (ձախից աջ) տոկոսների և մայր գումարների վճարումները

Ինչպես երևում է գծապատկեր 1-ի ա-ից և բ-ից, գերմանական արժեթղթերի թողարկողները պարտատոմսերի դիմաց պարտատոմսի

[1] *Տե՛ս* ***Косарева Н.Б.*** *"Основы ипотечного кредитования", Фонд «Институт экономики города», Москва 2006 г., стр .280, 282*

գործողության ժամկետում վճարում են միայն տոկոսներ, իսկ հիմնական գումարը վճարում են ժամկետի վերջում: Ամերիկյան հիփոթեքային արժեթղթերի թողարկողները վարկառուների կողմից հիփոթեքային վարկի մարումներին զուգահեռ իրականացնում են տոկոսների և հիմնական պարտքի մարումներ, բացի այդ՝ վարկի վաղաժամկետ մարման դեպքում կարող են ժամկետից շուտ մարել պարտատոմսը:

Հայ գիտնականների կողմից ուսումնասիրվել են արժեթղթավորման համակարգի ներդրման հնարավորությունները և հիմնախնդիրները ՀՀ-ում: Համաձայն մեկ տեսակետի՝ ՀՀ-ում արժեթղթավորումը տարածում չի գտնում, քանի որ առկա են ակտիվների փոխանցման հետ կապված վերահսկողական մեխանիզմների «ձևականություններ», որի արդյունքում վարկատու կազմակերպությունների համար շահավետ չէ արժեթղթավորել իրենց ակտիվները:[1] Բացի այդ, նշվում է, որ ՀՀ-ում պետք է ձևավորվեն Հատուկ նշանակության ընկերություններ՝ «կոնդուիտներ» և SPV-ներ: SPV-ները հատուկ նշանակության այն ընկերություններն են, որոնք գնելով վարկատու կազմակերպություններից ակտիվներ՝ թողարկում են երկարաժամկետ պարտատոմսեր: Դրանք ոչ առևտրային ընկերություններ են, որոնք, բացի արժեթղթավորումից, համաձայն ՀՀ օրենսդրության, այլ գործունեություն իրականացնել չեն կարող: Իսկ «կոնդուիտները», գնելով այդ ակտիվները, թողարկում են կարճաժամկետ արժեթղթեր, և քանի որ որոշ երկրներում դրանց թողարկումը օրենսդրորեն փաստաթղթերի գրանցում չի պահանջում, ուստի այդ արժեթղթերը ավելի արագ են իրացվում: Կոնդուիտները ֆինանսական կազմակերպություններ են, որոնք գնելով երկարաժամետ ակտիվներ, դրանց ֆինանսավորման նպատակով թողարկում են կարճաժամկետ արժեթղթեր կամ առևտրային թղթեր («*commercial paper*»): Ըստ մեկ այլ տեսակետի՝ «Կոնդուիտը», հավաքագրելով գնված հիփոթեքային վարկերը տարբեր փուլերում, դրանց ապահովությամբ թողարկում է արժեթղթեր՝ «MBS-ի» տեսքով, և վաճառում ներդրողներին:[2] Օրինակ, ԱՄՆ-ում գործող «Fannie Mae» հիփոթեքային հաստատությունը բաժնետիրական է, որի բաժնետոմսերը ազատ և առանց սահմանափակման շրջանառվում են Նյու-Յորքի Ֆոնդային բորսայում: Իսկ ընկերության հիմնական գործառույթը այն է, որ այն հիփոթեքային վարկերը սեքյուրիտիզացիայի միջոցով փոխակերպում է հիփոթեքային արժեթղթերի՝ «MBS- mortgage-backed security»-ի տեսքով:

Մեր կարծիքով, ՀՀ-ում և ԱՀ-ում նպատակահարմար է «կոնդուիտների» գործունեությունը, քանի որ վերջիններս, բացի արժեթղթավորման գործառնություններ իրականացնելուց, կարող են իրականացնել նաև

---

[1] *Տե՛ս* ***Մամիկոնյան Կ.Հ.****, Առենախոսություն, «Վարկային քաղաքականության բարելավման եւ սինդիկացված վարկավորման ուղիները ՀՀ-ում», Երևան 2014թ., էջ 135*

[2] *Տե՛ս* ***Разумова И.А.****, "Ипотечное кредитование:Учебное пособие", СПб.: Питер. 2005 г., стр. 98*

օրենքով չարգելված գործունեության այլ տեսակներ: Նման գործունեություն կարող են իրականացնել ՀՀ ֆինանսական շուկայում գործող և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական ինստիտուտները: Որպես կոնդուիտներ կարող են հանդես գալ ՀՀ տարածքում գործող ներդրումային և կենսաթոշակային ֆոնդեր, որոնք կարող են ավելի մեծ հաջողությամբ գնահատել ակտիվները և թողարկել արժեթղթեր: 2017թ. վերոնշյալ ֆոնդերում անցկացված տարեկան աուդիտի արդյունքում տրված եզրակացությունները դրական էին, ինչը խոսում է այն մասին, որ այդ ընկերությունները վստահելի են և ունեն փորձ ակտիվների կառավարման բնագավառում: Սակայն «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 3 և 4-ի համաձայն՝

1. արժեթղթավորման հիմնադրամը պետք է ստեղծվի միայն ոչ առևտրային կազմակերպության տեսքով,
2. արժեթղթավորման հիմնադրամը բացի ակտիվների արժեթղթավորումից այլ գործունեություն իրականացնելու իրավունք չունի:

Արժեթղթավորման հիմնադրամին առավելապես նման է Հատուկ նշանության ընկերությունը՝ SPV-ն, որը իրավամբ ստեղծվում է ոչ առևտրային ընկերության տեսքով:

Այսպիսով, որպեսզի ՀՀ ֆինանսական համակարգի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունները ճանաչվեն «կոնդուիտ», անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը.

- վերոնշյալ օրենքում ավելացնել ևս մեկ հոդված, որով կամրագրվի, որ ակտիվների արժեթղթավորում կարող են իրականացնել նաև «կոնդուիտները»,
- սահմանել, որ «կոնդուիտը» կարող է ստեղծվել առևտրային կազմակերպության տեսքով, որը իրավունք ունի իր կողմից գնված ակտիվների ապահովությամբ թողարկել պարտատոմսեր:

«Կոնդուիտի» կողմից արժեթղթերի թողարկման գործընթացը ներկայացնենք գծապատկերի տեսքով:



Գծապատկեր 2 Ակտիվների արժեթղթավորման առաջարկվող մեխանիզմը ՀՀ-ում և ԱՀ-ում

Առաջին քայլում վարկառուն դիմում է վարկատու կազմակերպություն՝ վարկ ստանալու նպատակով:

Երկրորդ քայլում վարկատու կազմակերպությունը («օրիգինատորը») տրամադրում է հիփոթեքային վարկ:

Երրորդ քայլում վարկատու կազմակերպությունը փաթեթավորում է տրամադրված հիփոթեքային վարկերը առանձին փուլերում: Յուրաքանչյուր փուլում ընդգծրկված վարկերը պետք է լինեն միասեռ, այսինքն՝ համապատասխանեն միմյանց իրենց որակով, ժամկետներով, ռիսկի մակարդակով, եկամտաբերությամբ և այլն: Այնուհետև «օրիգինատորը» վաճառում է հիփոթեքային վարկերի փուլերը: Այդ հիփոթեքային վարկերը դուրս են գրվում վարկատուի հաշվեկշռից և հաշվառվում «կոնդուիտի» հաշվեկշռում: Վարկատու կազմակերպությունը պարտավոր է տեղեկացնել վարկառուներին՝ ակտիվների վաճառքի մասին:

Չորրորդ քայլում տեղի է ունենում վճարում «կոնդուիտի» կողմից՝ ակտիվների ձեռք բերման դիմաց: «Կոնդուիտը», գնված ակտիվների գրավադրմամբ, թողարկում է արժեթղթեր՝ հիփոթեքային պարտատոմսեր և մասնակցության վկայագրեր: Այդ արժեթղթերը կարող են տեղաբաշխվել ինչպես փակ, այնպես էլ հրապարակային տեղաբաշխմամբ՝ ֆոնդային բորսայում կամ բորսայից դուրս: Միաժամանակ վարկատու կազմակերպությունը պետք է դիմի ՀՀ Կենտրոնական բանկ՝ վարկանիշ ստանալու համար, որը պետք է մանրամասն ուսումնասիրի պարտքային պարտավորությունների յուրաքանչյուր փուլի ռիսկայնությունը, վարկառուի, վարկատու կազմակերպության և երաշխավորի ֆինանսական կայունության աստիճանը, և, ըստ այդմ, որոշի թողարկված արժեթղթերի վարկանիշը: Այնուհետև «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա»

ԲԲԸ-ը ակտիվներով ապահովված արժեթղթերին կտրամադրի միջազգային տարբերակիչ ծածկագիր:

Հինգերորդ քայլում «կոնդուիտը» վաճառում է այդ արժեթղթերը ներդրողներին. վերջիններս կարող են լինել և՛ իրավաբանական, և՛ ֆիզիկական անձինք:

Հաջորդ քայլում ներդրողը վճարում է արժեթղթերի դիմաց:

Յոթերորդ քայլում վարկառուն ամսական վճարումներ է կատարում «կոնդուիտին», որը ներառում է վարկի մայր գումարը և տոկոսագումարները:

Այնուհետև «կոնդուիտը» կատարում է իր պարտականությունները ներդրողի նկատմաբ՝ վճարումներ իրականացնելով պարտատոմսերի դիմաց:

Այլ է իրավիճակը ապահովված հիփոթեքային պարտատոմսերի շուկայում, քանի որ այդ պարտատոմսերի թողարկումը ավելի կարճ ժամանակահատվածում է իրականացվում և չի պահանջում Հատուկ նշանակության ընկերությունների և «կոնդուիտների» առկայություն: Այսպես, 2008թ. մայիսի 26-ին ընդունվել է օրենք «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին», որի նպատակն էր հիփոթեքային վարկավորման բաց ընդլայնված մոդելի ներդնումը: ՀՀ-ում 2017թ. առաջին անգամ Հայաստանի Հանրապետության միակ ֆոնդային բորսայում վաճառվել են «Առաջին Հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հիփոթեքային վարկերով ապահովված պարտատոմսերը, որոնք տեղաբաշխել է «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ը (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Առաջին հիփոթեքային ընկերության կողմից թողարկված հիփոթեքային պարտատոմսերի հիմնական պայմանները

Ցուցանիշները	FMGCB1*	FMGCB2**
Պարտատոմսերի թողարկման ծավալը	500,000 ԱՄՆ դոլար	100,000,000 ՀՀ դրամ
Ժամկետայնությունը	2 տարի	2 տարի
Արժեկտրոնային տոկոսադրույքը	6.5%	10.5%
Թողարկված պարտատոմսերի քանակը	20,000 հատ	10,000 հատ
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	25 ԱՄՆ դոլար	10,000 ՀՀ դրամ

****ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսեր, **ՀՀ դրամով թողարկված պարտատոմսեր***

Հարկ է ընդգծել, որ ցուցակված բոլոր պարտատոմսերը վաճառվել են անվանական արժեքից ավելի բարձր գնով և ընկերությունը կարողացել է ներգրավել 500,046.7 ԱՄՆ դոլար և 100,004,450 ՀՀ դրամ: Սակայն, եթե

միջազգային պրակտիկայում հիփոթեքային պարտատոմսերին հատուկ է ավելի երկար մարման ժամկետ, ապա տվյալ դեպքում այն ունի մարման փոքր ժամկետ, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ սա նորույթ է ՀՀ արժեթղթերի շուկայում, ինչպես նաև ներդրողները չեն վստահի առաջին անգամ տեղաբաշխվող և երկար մարման ժամկետ ունեցող պարտատոմսերին և ներդրումներ չեն կատարի:

Մեր կարծիքով ԱՀ-ում հիփոթեքային վարկերի ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործման նպատակով անհրաժեշտ է ձևավորել արժեթղթերի շուկա: Քանի որ ՀՀ-ում ֆինանսական համակարգի և արժեթղթերի շուկայի նկատմամբ վերահսկողություն է իրականացնում ՀՀ ԿԲ-ը, և Արցախում գործում են ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված վարկատու կազմակերպությունները, ուստի վերջիններս պետք է ենթարկվեն այս ոլորտները կարգավորող ՀՀ օրենքների և այլ նորմատիվ-իրավական ակտերի պահանջներին: Սակայն այդ գործընթացը դժվար կլինի, քանի որ դրան խոչընդոտում են հետևյալ հանգամանքները.

- Հասարակության հոգեբանական իրավիճակը և երկրում տիրող ռազմական անկայուն իրավիճակը: 2016թ. Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո հիփոթեքային վարկերի պահանջարկի կտրուկ նվազման հետևանքով որոշ ֆինանսավարկային հաստատություններ դադարեցրին վարկերի տրամադրումը և մինչև հիմա չվերսկսեցին այդ գործընթացը:
- Արժեթղթերի շուկայի բացակայությունը: ԱՀ-ում համեմատաբար շատ շրջանառվող արժեթղթերից կարելի է համարել բաժնետոմսերը, չեկերը և այլն: ԱՀ-ում գրանցված կազմակերպություններից մեծամասնություն են կազմում Սահմանափակ պատասխանատվությամբ և Փակ բաժնետիրական ընկերությունները, ինչը ենթադրում է, որ բաժնետոմսերի բաժանորդագրությունը կունենա սահմանափակ բնույթ:
- Ինչպես ցանկացած նորարարություն, այնպես էլ հիփոթեքային պարտատոմսերի ներդրման համար անհրաժեշտ է գիտելիքների խորը մակարդակ, քանի որ անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային փորձը, այնուհետև կատարել վերլուծություններ և լավագույն տարբերակը ներդնել մեր երկրում:

Այսպիսով, ՀՀ-ում և ԱՀ-ում հիփոթեքային վարկավորման բաց ընդլայնված երկմակարդակ մոդելի կամ ակտիվների արժեթղթավորման համակարգի գործարկման համար, որը ներդրված է 2008թ.-ից, անհրաժեշտ է օրենսդրական դաշտի կատարելագործում և «կոնդուիտների» ճանաչում որպես միջնորդ կազմակերպություն:

Գրականություն

1. Կ.Հ. Մամիկոնյան, Ատենախոսություն, «Վարկային քաղաքականության բարելավման եւ սինդիկացված վարկավորման ուղիները ՀՀ-ում», Երևան 2014թ.,
2. Կ. Հ. Մամիկոնյան, Բանկային համակարգի արժեթղթավորումը որպես ՀՀ կապիտալի շուկայի ակտիվացման և «երկար փողերի» ձևավորման նախապայման, ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱ, #2 (164), Փետրվար 2014,
3. Ա.Ա.Ալեքսանյան, Արժեթղթավորումը՝ որպես հիփոթեքային վարկավորման ֆինանսական մեխանիզմների կատարելագործման ուղի Արցախի Հանրապետությունում, ՀՊՏՀ 27-րդ գիտաժողով 2017 թ., նոյեմբերի 22-24 Երևան 2018
4. Разумова И.А., "Ипотечное кредитование:Учебное пособие", СПб.: Питер. 2005 г.,
5. Косарева Н.Б. "Основы ипотечного кредитования", Фонд «Институт экономики города», Москва 2006 г.,
6. Вриз Роббе, Жан Жоб де. Секьюритизация и право/ Жан Жоб де.Вриз Роббе, Пол Али: пер. с англ.-М.: Волтерс Клувер,2008.
7. Туктаров Ю. /СИНТЕТИЧЕСКАЯ СЕКЬЮРИТИЗАЦИЯ. / РЫНОК ЦЕННЫХ БУМАГ N 11 (338) 2007г.,
8. Матросов С.В./ ТРАДИЦИОННАЯ И СИНТЕТИЧЕСКАЯ СЕКЬЮРИТИЗАЦИЯ ФИНАНСОВЫХ АКТИВОВ./ Экономика и социология, 2 / 2012 г.,

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը:

ՀՏԴ 336. 658
Տնտեսագիտություն

Գոհար ՍԱՐԳՍՅԱՆ
ԱրՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Շուկայական տնտեսության պայմաններում առաջնային նշանակություն է ստանում կազմակերպությունների կողմից դրանց ֆինանսատնտեսական վիճակի օբյեկտիվ և ճշգրիտ գնահատումը, բոլոր տնտեսական և ֆինանսական գործընթացների կառավարումը, որտեղ առանձնահատուկ տեղ է հատկացվում իրացվելիության վերլուծությանը: Հոդվածում քննարկվում են "իրացվելիություն" հասկացության էության ընկալման տարբեր մոտեցումներ, ներկայացված են ակտիվների իրացվելիությունը բնութագրող հիմնական բացարձակ և հարաբերական ցուցանիշները:

Բանալի բառեր՝ *կազմակերպության իրացվելիություն, հաշվեկշռի իրացվելիություն, ակտիվների իրացվելիություն, սեփական ընթացիկ ակտիվներ, իրացվելիության գործակիցներ*

Г.Саргсян

АНАЛИЗ ЛИКВИДНОСТИ КАК ИНСТРУМЕНТ ФИНАНСОВОГО УПРАВЛЕНИЯ ПРЕДПРИЯТИЯ

В условиях рыночной экономики первостепенное значение приобретает объективная и точная оценка финансово-экономического положения организации, управление всеми экономическими и финансовыми процессами, в которой немаловажную роль играет анализ ликвидности. В статье рассмотрены различные подходы к пониманию сущности понятия “ликвидность”, приведены основные абсолютные и относительные показатели, характеризующие ликвидность активов.

Ключевые слова: *ликвидность предприятия, ликвидность баланса, ликвидность активов, собственные текущие активы, коэффициенты ликвидности*

G.Sargsyan

THE ANALYSIS OF LIQUIDITY AS A TOOL FOR THE FINANCIAL MANAGEMENT OF THE ORGANIZATION

An objective and accurate assessment of the financial and economic situation of the organization, the management of all economic and financial processes (where the analysis of liquidity plays a huge role) gets priority in a market economy. The article describes various approaches to understanding the essence of the concept of “liquidity”, the basic absolute and relative indicators characterizing the liquidity of assets.

Keywords: *the liquidity of the company, balance sheet liquidity, liquidity of assets, working capital, the liquidity ratios*

Շուկայական տնտեսության պայմաններում առաջնային նշանակություն է ստանում կազմակերպությունների կողմից դրանց ֆինանսատնտեսական վիճակի օբյեկտիվ և ճշգրիտ գնահատումը, բոլոր տնտեսական և ֆինանսական գործընթացների կառավարումը: Այդպիսի կառավարման համակարգում առանձնահատուկ տեղ է հատկացվում իրացվելիությանը:

Տնտեսական գրականության մեջ տարբեր հեղինակներ յուրովի են մեկնաբանում իրացվելիություն հասկացությունը: Սակայն պետք է նշել, որ տարբեր հետազոտողների կողմից տրված սահմանումները չեն հակասում իրար, այլ արտացոլում են հեղինակների տեսանկյունից գերակա ասպեկտները կազմակերպության վճարունակության և իրացվելիության գնահատման վերաբերյալ:

Ն.Պ. Լյուբուշինն[1], օրինակ, համարում է, որ իրացվելիությունը կազմակերպության ունակությունն է արագ կատարելու ֆինանսական պարտավորությունները, իսկ անհրաժեշտության դեպքում նաև արագ իրացնելու իր միջոցները: Վ.Ռ. Բանկը[2], խոսելով կազմակերպության իրացվելիության մասին, նկատի է ունենում ընթացիկ ակտիվների առկայություն այն չափով, որը տեսականորեն բավարար է կարճաժամկետ պարտավորությունների մարման համար, թեկուզ պայմանագրերով նախատեսված մարման ժամկետների խախտմամբ: Ըստ Վ.Վ. Կովալյովի[3]՝

---

[1] *Տե՛ս* ***Любушин Н.П., Бабичева Н.Э.*** *Анализ методик по оценке финансового состояния организации // Экономический анализ: теория и практика. – 2006. - №22 - С.79.*

[2] *Տե՛ս* ***Банк С.В., Тараскина А.В.*** *Система показателей комплексного анализа финансового состояния хозяйствующего субъекта // Экономический анализ: теория и практика. – 2007. - №4 – С.37.*

[3] *Տե՛ս* ***Ковалев В.В.*** *Финансовый менеджмент: теория и практика. - М.: ТК Велби; Проспект, 2009. 1016 с.*

իրացվելիությունը տնտեսավարող սուբյեկտի ակտիվների հատկություն է՝ շարժունակություն, որի էությունը դրանց՝ արագ փողի վերածվելու ունակության մեջ է:

Ա.Ա. Կանկեն և Ի.Պ. Կոշևայան[1] գտնում են, որ իրացվելիությունը կազմակերպության ակտիվների առանձին տեսակների բնութագիրն է՝ ըստ դրանց դրամական ձևի վերածվելու արագության, առանց հաշվեկշռային արժեքը կորցնելու՝ կազմակերպության վճարունակության անհրաժեշտ մակարդակն ապահովելու նպատակով:

Ըստ Վ. Վ. Բոչարովի[2]՝ իրացվելիությունը որոշում է կազմակերպության ունակությունը արագ և ֆինանսական կորուստների նվազագույն մակարդակով փոխարկելու իր ակտիվները (գույքը) դրամական միջոցների: Այն բնութագրվում է նաև ֆիրմայում իրացվելի միջոցների առկայությամբ՝ դրամարկղում, հաշիվներում դրամական միջոցների մնացորդի ձևով և հեշտ իրացվող ընթացիկ ակտիվների տարրերի (օրինակ, կարճաժամկետ արժեթղթերի) տեսքով:

Ընդհանուր առմամբ տնտեսական գրականության մեջ ընդունված է տարբերել ակտիվների, հաշվեկշռի և կազմակերպության իրացվելիությունը:

Ըստ Գ. Սավիցկայի[3]՝ ակտիվի իրացվելիության տակ հասկացվում է նրա դրամական միջոցների տրանսֆորմացվելու (փոխակերպվելու) ունակությունը, իսկ ակտիվի իրացվելիության աստիճանը որոշվում է ժամանակահատվածով, որն անհրաժեշտ է նրան դրամական միջոցների վերածվելու համար: Որքան քիչ ժամանակ է պահանջվում տվյալ ակտիվի ինկասացիայի համար, այնքան բարձր է դրա իրացվելիությունը: Ընդ որում, պետք է տարբերել համախառն ակտիվների իրացվելիություն հասկացությունը որպես դրանց արագ իրացման հնարավորություն կազմակերպության սնանկացման և ինքնալուծարման ժամանակ, և շրջանառու (ընթացիկ) ակտիվների իրացվելիությունը, որն ապահովում է նրա ընթացիկ վճարունակությունը: Այստեղ նկատի է առնվում, որ շրջանառու (ընթացիկ) ակտիվների յուրաքանչյուր տեսակը պետք է անցնի գործառնական ցիկլի համապատասխան փուլերը՝ նախքան ձևափոխվելը դրամական միջոցների:

Նույն հեղինակի[4] տեսակետով՝ հաշվեկշռի իրացվելիությունը տնտեսավարող սուբյեկտի հնարավորությունն է վերածելու ակտիվները

---

[1] *Տե՛ս* ***Канке А.А., Кошевая И.П.*** *Анализ финансово-хозяйственной деятельности предприятия, 2-е изд., испр. и доп. – М.: Форум: ИНФРА-М, 2007, стр. 238*

[2] *Տե՛ս* ***Бочаров В.В.*** *Финансовый анализ. Краткий курс. 2-е изд. — СПб.: Питер, 2009. — 240 с.: ил., стр. 240*

[3] *Տե՛ս* ***Савицкая, Г.В.*** *Экономический анализ : учеб. / Г.В. Савицкая. — 11-е изд., испр. и доп. — М.: Новое знание, 2005., стр. 377*

[4] *там же*

կանխիկի և մարել վճարային պարտավորությունները, իսկ ավելի ճիշտ՝ հաշվեկշռի իրացվելիությունը կազմակերպության պարտքային պարտավորությունների ծածկման աստիճանն է այն ակտիվներով, որոնց դրամական միջոցի վերածման ժամկետը համապատասխանում է վճարային պարտավորությունների մարման ժամկետին: Այդ հասկացության որակական տարբերությունը ակտիվների իրացվելիությունից այն է, որ հաշվեկշռի իրացվելիությունը արտացոլում է ակտիվների ծավալների և իրացվելիության համաձայնեցվածության չափը պարտավորությունների մարման չափերի և ժամկետների հետ, իսկ ակտիվների իրացվելիությունը որոշվում է հաշվեկշռի պասիվից անկախ:

Ակտիվների և հաշվեկշռի իրացվելիության տակ, ըստ Ա.Դ. Շերեմետի[1], հասկացվում է կազմակերպության ակտիվներով պարտավորությունների ծածկման աստիճանը, որոնց դրամի վերածման ծամկետը (ակտիվների իրացվելիությունը) համապատասխանում է պարտավորությունների մարման ժամկետին:

Ըստ Չունի և Չունայի[2] հաշվեկշռի իրացվելիությունը պարտավորությունների ծածկման աստիճանն է այն ակտիվներով, որոնց վերափոխման ժամկետը դրամական ձևի համապատասխանում է պարտավորությունների մարման ժամկետին:

Հաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը կայանում է ըստ իրացվելիության աստիճանի խմբավորված ու դրանց անկման կարգով տեղադրված կազմակերպության միջոցների (ակտիվների) և ըստ մարման ժամկետների խմբավորված ու աճման կարգով տեղադրված պարտավորությունների (պասիվների) համեմատության մեջ:

Հաշվեկշռի ակտիվները՝ ըստ իրացվելիության անկման աստիճանի և պասիվները՝ ըստ դրանց մարման հրատապության խմբավորվում են հետևյալ կերպ (աղյուսակ 1).

Աղյուսակ 1.

Հաշվեկշռի ակտիվների և պասիվների խմբավորումը

Ակտիվներ	Պասիվներ	Հաշվեկշռի իրացվելիության նախապայման
Ա1 – բացարձակ և առավել իրացվելի ակտիվներ	Պ1 – առավել հրատապ պարտավորություններ	Ա1 ≥ Պ1

[1] *Տե՛ս* ***Шеремет А.Д.*** *Комплексный анализ хозяйственной деятельности. – М.: ИНФРА-М, 2006, стр. 307*

[2] *Տե՛ս* ***Чуев И.Н., Чуева Л.Н.*** *Комплексный экономический анализ хозяйственной деятельности: Учебник для вузов. – М.: Издательско-торговая корпорация «Дашков и К°», 2006, стр. 309, 310*

Ա2 – արագ իրացվելի ակտիվներ	Պ2 – կարճաժամկետ պասիվներ	Ա2 ≥ Պ2
Ա3 – դանդաղ իրացվելի /իրացվող/ ակտիվներ	Պ3 – երկարաժամկետ պասիվներ	Ա3 ≥ Պ3
Ա4 – դժվար իրացվելի ակտիվներ	Պ4 – մշտական պասիվներ	Ա4 ≤ Պ4

Հաշվեկշռի իրացվելիությունը որոշվում աղյուսակ 1-ում ներկայացված անհավասարումների կատարմամբ: Առաջին երեք անհավասարումների կատարումը բերում է չորրորդ անհավասարման կատարմանը, ուստի էական է ակտիվների և պասիվների առաջին երեք խմբերի համադրումը: Չորրորդ անհավասարումը կրում է հաշվեկշռող բնույթ և, միևնույն ժամանակ, ունի խորը տնտեսագիտական իմաստ. դրա կատարումը վկայում է ֆինանսական կայունության նվազագույն պայմանի պահպանման մասին՝ կազմակերպության մոտ սեփական ընթացիկ ակտիվների առկայության մասին:

Այն դեպքում, երբ մեկ կամ մի քանի անհավասարումներ ունենում են նշան, որը հակադարձ է օպտիմալ տարբերակում նշվածից, հաշվեկշռի իրացվելիությունը քիչ թե շատ տարբերվում է բացարձակից:

Առավել իրացվելի միջոցների և արագ իրացվող ակտիվների համադրումը առավել իրացվելի պարտավորությունների և կարճաժամկետ պասիվների հետ թույլ է տալիս պարզել ընթացիկ իրացվելիությունը: Ընթացիկ իրացվելիությունը վկայում է կազմակերպության վճարունակության (կամ անվճարունակության) մասին ուսումնասիրման պահին առավել մոտ ժամանակահատվածում: Հեռանկարային իրացվելիությունն իրենից ներկայացնում է վճարունակության կանխատեսում՝ հիմնված ապագա մուտքերի և վճարումների վրա:

Հաշվեկշռի իրացվելիության վերլուծության օգնությամբ գնահատվում է կազմակերպության ֆինանսական վիճակի փոփոխությունը իրացվելիության տեսակետից: Տվյալ ցուցանիշը կիրառվում է նաև հաշվապահական հաշվետվության հիման վրա առավել վստահելի գործընկեր ընտրելու ժամանակ:

Տնտեսավարող սուբյեկտի իրացվելիությունը ավելի լայն հասկացություն է, քան հաշվեկշռի իրացվելիությունը: Հաշվեկշռի իրացվելիությունը ենթադրում է վճարային միջոցների փնտրում ներքին աղբյուրների հաշվին: Սակայն տնտեսավարող սուբյեկտը կարող է ներգրավել նաև փոխառու միջոցներ, եթե այն ունի համապատասխան իմիջ (հեղինակություն) գործարար աշխարհում և ներդրումային գրավչության բավականին մեծ մակարդակ: Ուստի, գնահատելով կազմակերպության իրացվելիությունը, անհրաժեշտ է հաշվի առնել նրա

ֆինանսական ճկունությունը, այսինքն ունակությունը փոխառել միջոցներ տարբեր աղբյուրներից, մեծացնել բաժնետիրական կապիտալը, վաճառել ակտիվներ, արագ արձագանքել շուկայի իրավիճակին և այլն:

Հաշվեկշռի իրացվելիության աստիճանից կախված է վճարունակությունը: Միևնույն ժամանակ իրացվելիությունը բնութագրում է ինչպես հաշվարկների ընթացիկ, այնպես էլ հեռանկարային վիճակը: Կազմակերպությունը կարող է ունենալ վճարունակություն հաշվետու ամսաթվով և միևնույն ժամանակ անբարենպաստ հնարավորություններ ապագայում, և հակառակը:

Հաշվեկշռի իրացվելիությունը հանդիսանում է տնտեսավարող սուբյեկտի վճարունակության և իրացվելիության հիմքը: Իրացվելիությունը վճարունակության պահպանման հիմքն է:

Տնտեսավարող սուբյեկտի համար առավել կարևոր է դրամական միջոցների առկայությունը, քան շահույթի: Դրանց բացակայությունը հաշիվներում միջոցների շրջանառելիության օբյեկտիվ առանձնահատկությունների պատճառով կարող է բերել ճգնաժամային ֆինանսական վիճակի:

Իրացվելիությունը գնահատելու համար կիրառվում են մի շարք բացարձակ և հարաբերական ցուցանիշներ: Բացարձակ ցուցանիշներից հիմնականը սեփական ընթացիկ ակտիվների (WC – working capital) մեծությունը բնութագրող ցուցանիշն է, որը որոշվում է ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների տարբերությամբ:

Սեփական ընթացիկ ակտիվները բնութագրում են կազմակերպության սեփական կապիտալի այն մասը, որը հանդիսանում է կազմակերպության ընթացիկ ակտիվների ծածկման աղբյուր: Ցուցանիշը կախված է ինչպես ակտիվների, այնպես էլ պասիվների կառուցվածքից: Ըստ Վ.Վ. Կովալյովի և Օ.Ն. Վոլկովայի[1] այլ հավասար պայմաններում նշված ցուցանիշի աճը դինամիկայում դիտարկվում է որպես դրական միտում: Սեփական ընթացիկ ակտիվների ավելացման հիմնական և մշտական աղբյուր է հանդիսանում շահույթը:

Ս.Մ. Բուգրովան և Ն.Մ. Գուկը[2] նշում են, որ զուտ շրջանառու կապիտալն անհրաժեշտ է կազմակերպության ֆինանսական կայունությունը պահպանելու համար, քանի որ շրջանառու միջոցների գերազանցումը ընթացիկ պարտավորություններին նշանակում է, որ կազմակերպությունը ոչ միայն կարող է մարել դրանք, այլ նաև ունի ֆինանսական ռեսուրսներ ապագայում իր գործունեությունն ընդլայնելու

---

[1] *Տե՛ս* ***Ковалев В.В., Волкова О.Н.*** *Анализ хозяйственной деятельности предприятия : учеб. - М.: ТК Велби, Изд-во Проспект, 2007, стр. 243*

[2] *Տե՛ս* ***Бугрова С.М.*** *Финансовый менеджмент: учебное пособие / С.М. Бугрова, Н.М. Гук; Кемеровский технологический институт пищевой промышленности. – Кемерово, 2008, стр.33-34*

համար: Հեղինակները պնդում են, որ կազմակերպության ֆինանսական դրության վրա բացասաբար է ազդում ինչպես զուտ ընթացիկ կապիտալի պակասը, այնպես էլ ավելցուկը: Այդ միջոցների պակասը կարող է բերել կազմակերպության սնանկացմանը, քանի որ վկայում է նրա անկարողության մասին մարելու կարճաժամկետ պարտավորությունները, իսկ զուտ շրջանառու կապիտալի զգալի գերազանցումը նրա օպտիմալ պահանջից վկայում է ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման մասին:

Եֆիմովան[1] նշում է, որ պետք է զգույշ և կշռված մեկնաբանել սեփական շրջանառու կապիտալի փոփոխության բնույթը՝ դրա աճը, որը պայմանավորված է ընթացիկ ակտիվների ընթացիկ պարտավորությունների համեմատ գերազանցող աճով, որպես կանոն, ուղեկցվում է դրամական միջոցների արտահոսքով:

Ինչ վերաբերում է գործակիցներին, ժամանակակից գիտության մեջ դիտվում է հետևյալ միտումը. միևնույն գործակիցը կարող է ունենալ տասից ավելի տարբեր անվանումներ, մեկնաբանություններ և հաշվարկման մեթոդներ: Շատ հեղինակներ ցուցանիշների մեծամասնության համար առաջարկում են մի շարք նորմատիվ պարզաբանումներ, որոնք նույնն են բոլոր ճյուղերի համար, չնայած, ըստ էության, յուրաքանչյուր ճյուղ պետք է ունենա իրացվելիության, շրջանառության շահութաբերության և այլ ցուցանիշների նշանակության իր հնարավոր սահմանները, որոնք փոփոխվում են ժամանակակից տնտեսությանը համապատասխան:

Իրացվելիության գործակիցները թույլ են տալիս որոշել կազմակերպության ունակությունը վճարելու կարճաժամկետ պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում: Դրանք են՝ ընթացիկ իրացվելիության գործակիցը, արագ իրացվելիության («կրիտիկական» գնահատման) գործակիցը և գործառնական դրամական հոսքերի հարաբերությունը հրատապ պարտավորություններին: Որոշ հեղինակների կողմից առաջարկվում է նաև բացարձակ իրացվելիության գործակցի ուսումնասիրությունը:

Ընթացիկ իրացվելիության գործակիցը (current ratio) համեմատում է կազմակերպության «իրացվելի» ակտիվները (դրամական միջոցներ և ակտիվներ, որոնք շուտով կվերածվեն դրամական միջոցների) նրա կարճաժամկետ պարտավորությունների հետ /տարվա ընթացքում մարման (կատարման) ենթակա պարտավորությունների հետ/ և հաշվարկվում է որպես կազմակերպության ընթացիկ ակտիվների հարաբերությունը ընթացիկ պարտավորություններին:

---

[1] *Տե՛ս* ***Ефимова О.В.*** *Финансовый анализ. 3-е изд., перераб. и доп.– М.: Изд-во “Бухгалтерский учет”, 1999., стр. 46*

Համաձայն ընդունված միջազգային ստանդարտների՝ համարվում է, որ այդ ցուցանիշը պետք է գտնվի մեկից երկուսի (երեքի) սահմաններում: Ներքևի սահմանը պայմանավորված է նրանով, որ ընթացիկ ակտիվները պետք է առնվազն բավարար լինեն ընթացիկ պարտավորությունների կատարման համար, այլապես կազմակերպությունը կգտնվի սնանկացման վտանգի տակ: Ընթացիկ ակտիվների գերազանցումը ընթացիկ պարտավորություններին ավելի քան 2(3) անգամ նույնպես համարվում է ոչ ցանկալի, քանի որ կարող է վկայել կապիտալի ոչ ռացիոնալ կառուցվածքի մասին: Որոշ հրապարակումներում առաջարկվում է «իդեալական» հարաբերակցություն, սովորաբար հավասար 2-ի: Սակայն, այն հաշվի չի առնում այն փաստը, որ տարբեր տիպի բիզնեսների համար պահանջվում է շրջանառու միջոցների և կարճաժամկետ պարտավորությունների տարբեր հարաբերակցություններ:

Որքան բարձր է այդ հարաբերությունը, այնքան ավելի վճարունակ (իրացվելի) է համարվում կազմակերպությունը կարճաժամկետ ժամանակահատվածում: Քանի որ իրացվելիությունն ունի կարևոր նշանակություն բիզնեսի գոյատևման համար, նախընտրելի է ավելի բարձր հարաբերություն, քան ցածր: Սակայն, եթե այդ հարաբերությունը շատ բարձր է, դա թույլ է տալիս ենթադրել, որ կազմակերպության ակտիվները ներկայացված են առավելապես դրամական միջոցներով կամ այլ իրացվելի ակտիվներով և չեն օգտագործվում այնքան արդյունավետ, որքան դա հնարավոր է:

Արագ իրացվելիության կամ «կրիտիկական» գնահատման գործակիցն (acid test ratio) իրենից ներկայացնում է իրացվելիության ավելի համոզիչ ստուգում: Կարելի է վիճել այն առումով, որ շատ կազմակերպությունների ունեցած ապրանքանյութական պաշարները հնարավոր չէ ակնթարթորեն վերածել փողի: Արդյունքում ավելի լավ է բացառել կոնկրետ ակտիվը կազմակերպության վճարունակության չափումից: Արագ իրացվելիության գործակիցը հիմնված է հենց այդ սկզբունքի վրա և հաշվարկվում է ընթացիկ ակտիվների առավել իրացվելի մասը՝ դրամական միջոցները, կարճաժամկետ ֆինանսական ներդրումները և զուտ դեբիտորական պարտքերը, հարաբերելով ընթացիկ պարտավորություններին:

Ինչպես կազմակերպության ընթացիկ իրացվելիության գործակիցը, այդպես էլ «կրիտիկական» գնահատման գործակիցը հաշվարկվում են հաշվեկշռի համապատասխան տվյալների հիման վրա: Քանի որ հաշվեկշիռը պարզապես կազմակերպության ֆինանսական դրության «ակնթարթային նկարն» է առանձին վերցված ժամանակում, պետք է զգուշորեն մեկնաբանել տվյալ գործակիցները: Հնարավոր է, որ հաշվեկշռի տվյալները ոչ կոռեկտ են արտացոլում իրացվելիության վիճակը տարվա ընթացքում: Դա կարող է տեղի ունենալ բացառիկ գործոնների հետևանքով կամ պարզապես այն փաստից, որ կազմակերպության գործունեությունը

կրում է սեզոնային բնույթ և հաշվեկշռի տվյալներն արտացոլում են դրությունը այդ ցիկլի որևէ կոնկրետ պահի:

Միջազգային ստանդարտներով գործակցի մակարդակը պետք մեծ լինի 1-ից, ինչը նշանակում է, որ դրամական միջոցները և ընթացիկ գործունեությունից առաջիկա մուտքերը պետք է ծածկեն ընթացիկ պարտքերը: ՀՀ-ում ցուցանիշի նորմալ սահմանափակումը Գիկ ≥ 1.0, ՌԴ-ում ցուցանիշի օպտիմալ արժեքը որոշված է որպես 0.7-0.8:

Ռուսական և հայրենական գրականության մեջ առավել հաճախ հանդիպում է նաև բացարձակ իրացվելիության գործակիցը: Այն ցույց է տալիս, թե պարտատիրոջ ընթացիկ պարտավորությունների որ մասն է կարող ծածկել կազմակերպությունը ունեցած դրամական միջոցների և կարճաժամկետ ֆինանսական ներդրումների, այսինքն առավել իրացվելի ակտիվների հաշվին: ՌԴ-ում գործակցի օպտիմալ մակարդակը հավասար է 0.2-0.5-ի: ՀՀ-ում այն ընդունված է ≥0.25:

Արևմտյան պրակտիկայում բացարձակ իրացվելիության ցուցանիշը հազվադեպ է հաշվարկվում:

Իրացվելիությունը բնութագրող հաջորդ ցուցանիշը դրամական միջոցների գործառնական հոսքերի հարաբերությունն է պարտավորություններին, որոնցով մոտենում է կատարման ժամկետը (operating cash flows to maturing obligations): Ցուցանիշը համեմատում է գործառնական դրամական հոսքերը կարճաժամկետ պարտավորությունների հետ: Այն նաև ցույց է տալիս կազմակերպության ունակությունը սպասարկել նրա գալիք պարտավորությունները:

Որքան բարձր է այդ գործակիցը, այնքան ավելի իրացվելի և վճարունակ է կազմակերպությունը: Ցուցանիշի առավելությունը կայանում է նրանում, որ գործառնական դրամական հոսքերը ժամանակաշրջանի համար տալիս են ավելի ստույգ պատկերացում կազմակերպության իրացվելիության մասին, քան նրա շրջանառու ակտիվները հաշվեկշիռը կազմելու օրվա դրությամբ:

Իրացվելիության տարբեր ցուցանիշներ ոչ միայն տալիս են կազմակերպության ֆինանսական դրության կայունության բազմակողմանի բնութագիրը իրացվելի միջոցների տարբեր աստիճանի հաշվառման դեպքում, այլ նաև բխում են վերլուծական տեղեկատվության տարբեր արտաքին օգտագործողների շահերից:

Նշված բոլոր ցուցանիշները կանխատեսմամբ են բնութագրում կազմակերպության վճարունակությունը: Սակայն գործակցային վերլուծության հիմնական խնդիրն այն է, որ վերջնական արդյունքը միշտ չէ, որ տալիս է ամբողջական պատկերը: Ուստի կարևոր է նաև կատարել ընթացիկ ակտիվների կառուցվածքի վերլուծություն, գնահատել հաշվարկային հաշվում դրամական միջոցների մեծությունը, անհրաժեշտ է համեմատել ընթացիկ ակտիվների կառուցվածքը ընթացիկ պարտավորությունների կառուցվածքի հետ, հաշվարկել ակտիվների և

պարտավորությունների շրջանառության ցուցանիշները, որոնք կտան ֆինանսական վիճակի ավելի ճշգրիտ գնահատական:

Այսպիսով՝ իրացվելիության ցուցանիշները թույլ են տալիս գնահատել կազմակերպության ֆինանսական դրությունը կարճաժամկետ ժամանակահատվածի համար և հանդիսանում են կազմակերպության ֆինանսական կառավարման կարևորագույն գործիքներ:

Ընդհանուր առմամբ հոդվածում դիտարկված տեսակետները թույլ են տալիս եզրահանգել, որ որևէ ակտիվի իրացվելիության տակ հասկանում են դրա ունակությունը տրանսֆորմացվելու դրամական միջոցների նախատեսված արտադրատեխնոլոգիական գործընթացում, իսկ կոնկրետ ակտիվի իրացվելիությունը որոշվում է այն ժամանակահատվածի տևողությամբ, որի ընթացքում այդ տրանսֆորմացիան (վերափոխումը) կարող է իրականացվել: Որքան կարճ է այդ ժամանակահատվածը, այնքան բարձր է տվյալ տեսակի ակտիվի իրացվելիությունը:

Գրականություն

1. Բայադյան Ա.Հ. Ֆինանսական վերլուծություն. Ուս. ձեռնարկ: Եր., 2013, 293 էջ:
2. Банк С.В., Тараскина А.В. Система показателей комплексного анализа финансового состояния хозяйствующего субъекта // Экономический анализ: теория и практика, 2007, №4, С.37
3. Бочаров В.В. Финансовый анализ. Краткий курс. 2-е изд. — СПб., Питер, 2009, 240 с.: ил.
4. Бугрова С.М. Финансовый менеджмент: учебное пособие / С.М. Бугрова, Н.М. Гук; Кемеровский технологический институт пищевой промышленности, Кемерово, 2008, 177 с.
5. Ефимова О.В. Финансовый анализ. 3-е изд., перераб. и доп.– М.: Изд-во “Бухгалтерский учет”, 1999, 352 с.
6. Ковалев В.В. Финансовый менеджмент: теория и практика. - М.: ТК Велби; Проспект, 2009. 1016 с.
7. Ковалев В.В., Волкова О.Н. Анализ хозяйственной деятельности предприятия : учеб. - М.: ТК Велби, 2007, 424с.
8. Канке А.А., Кошевая И.П. Анализ финансово-хозяйственной деятельности предприятия, 2-е изд., испр. и доп. – М.: Форум: ИНФРА-М, 2007, 288 с.
9. Любушин Н.П., Бабичева Н.Э. Анализ методик по оценке финансового состояния организации // Экономический анализ: теория и практика, 2006, №22, С.79.

10. Савицкая, Г.В.. Экономический анализ : учеб. / Г.В. Савицкая,11-е изд., испр. и доп, М.: Новое знание, 2005, 651с.
11. Чуев И.Н., Чуева Л.Н. Комплексный экономический анализ хозяйственной деятельности: Учебник для вузов. – М.: Издательско-торговая корпорация «Дашков и К°», 2006, 368с.
12. Шеремет А.Д. Комплексный анализ хозяйственной деятельности. – М.: ИНФРА-М, 2006, 415с.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը:

ՀՏԴ 330(479.243)
Տնտեսագիտություն

Շուշանիկ ԱՍՐՅԱՆ
տ. գ. թ., ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի դոցենտ

ԱՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Ժամանակակից պայմաններում ԱՀ տնտեսական զարգացումների վերարժևորման անհրաժեշտությունը պայմանավորված է ներկա զարգացումներում առկա այն հիմնախնդիրներով, որոնք կարող են խոցելի դարձնել ԱՀ քաղաքացու, հասարակության, պետության տնտեսական շահերը, այլ կերպ ասած՝ տնտեսական անվտանգությունը: «ԱՀ տնտեսական անվտանգության հիմնախնդիրների արդի միտումները» հոդվածում ներկայացվել է ԱՀ տնտեսական անվտանգության առկա մակարդակը և փոփոխությունների ընդհանուր միտումները: ԱՀ տնտեսական անվտագության գնահատման համար հիմք է հանդիսացել Լ. Գլազևի՝ Տնտեսական անվտանգության շեմային մեծությունների հայտնի համակարգը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած առանձին ցուցանիշների գծով առկա դրական միտումներին՝ ԱՀ տնտեսական անվտանգության բնագավառում դեռևս պահպանվում են սոցիալ-տնտեսական, կառուցվածքային և այլ բնույթի հիմնախնդիրներ, որոնց ուղղությամբ կատարվել են համապատասխան հետևություններ և առաջադրվել լուծման ուղիներ:

Բանալի բառեր *- Տնտեսական անվտանգություն, անվտանգության ներքին սպառնալիքներ, անվտանգության արտաքին սպառնալիքներ, անվտանգության ցուցանիշների համակարգ, մակրոտնտեսական համամասնություններ, տնտեսական աճ, զբաղվածություն, բյուջեի ճեղքվածք, կայուն զարգացում, բացասական ազդակներ, սոցիալական հիմնախնդիրներ, անվտանգության շեմային մեծություններ, աղքատության մակարդակ, աղքատության հաղթահարում*

Ш.Асрян

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ В ВОПРОСАХ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ АРЦАХСКОЙ РЕСПУБЛИКИ

В современных условиях необходимость переоценки экономического развития Республики Арцах обусловлена теми текущими проблемами, которые могут сделать уязвимоми граждан, общества и экономическую безопасность Республики Арцах, другими словами, экономическую безопасность государства. В статье «Современные тенденции в вопросах экономической безопасности Арцахской Республики» были представлены текущий уровень экономической безопасности и общие тенденции изменений. Основа для оценки экономической безопасности Арцахской Республики является известная система порога экономической безопасности Глазьева. Анализ показывает, что, несмотря на положительные тенденции в определенных показателях, в области экономической безопасности Арцахской Республики по-прежнему остаются социально-экономические, структурные и другие вопросы, по направлению которых сделаны соответствующие выводы и предложены решения.

***Ключевые слова**: экономическая безопасность, внутренние угрозы безопасности, внешние угрозы безопасности, индексы безопасности, макроэкономические пропорции, экономический рост, занятость, бюджетный разрыв, устойчивое развитие, негативные сигналы, социальные проблемы, пороги безопасности, уровни бедности, искоренение бедности.*

Sh.Asryan

THE CURRENT TRENDS IN THE ECONOMIC SECURITY ISSUES OF THE REPUBLIC OF ARTSAKH

In modern conditions, the necessity to evaluate the economic development of the Republic of Artsakh depends on the current problems that can make vulnerable the interests of the citizens, society of Artsakh and the state's economic security, in other words, the economic security. "The current trends in the economic security issues of the Republic of Artsakh" article presents the current level of economic security in Artsakh and general trends of the change. As a base for evaluating the trends was used Glazyev's well known economic security threshold system. The analysis shows that, despite the positive trends in certain indicators, the socio-economic, structural and other issues still remain in the field of the economic security of the Republic of Artsakh, in which the corresponding conclusions have been made and the solutions have been proposed.

***Key words:** Economic security, internal security threats, external security threats, security indices, macroeconomic proportions, economic growth, employment, budget gap, sustainable development, negative signals, social issues, security thresholds, poverty levels, poverty eradication.*

Ժամանակակից տնտեսագիտական մտքում ազգային տնտեսությունների տնտեսական անվտանգությունը ներկայացվում է ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից մեկը: Ազգային տնտեսական անվտանգության հասկացությունը տարբեր կերպ է մեկնաբանվում տնտեսագետների կողմից:

Ըստ Լ. Ի. Աբալկինի՝ տնտեսական անվտանգությունը պայմանների և գործոնների ամբողջությունն է, որը ապահովում է ազգային տնտեսության անկախությունը, նրա կայունությունը և կանգունությունը, անընդհատ նորացման և ինքնակատարելագործման հնարավորությունը: Ա. Ն Ֆոմինը տնտեսական անվտանգությունը դիտարկում է որպես ազգային տնտեսության վիճակ, որը հնարավորություն ունի ապահովելու հասարակական պահանջմունքների արդյունավետ բավարարումը՝ պետության սոցիալ-քաղաքական և ռազմական կայունության բավարար մակարդակի վրա պահելու պայմանով:

Ըստ Թ. Մանասարյանի՝ տնտեսական անվտանգությունն ազգային տնտեսության կայուն վիճակ է, որն ապահովում է հասարակական պահանջմունքների արդյունավետ բավարարում, տեխնիկատնտեսական անկախություն, ներքին ու արտաքին սպառնալիքների և ազդեցությունների հանդեպ երկրի անխոցելիություն և պետության մարտավարական նպատակների և դրանց համապատասխան ներքին ու արտաքին սպառնալիքների և ազդեցությունների փոփոխություններից անկախ ներքին և արտաքին շուկաներում երկրի տնտեսական շահերի պաշտպանությունը:[1]

Չնայած տնտեսական անվտանգության ձևակերպումների որոշ տարբերությանը՝ կարծում ենք՝ մի բան հաստատ է, որ յուրաքանչյուր անհատի, կառույցի, հասարակության և պետության համար երկրի տնտեսական անվտանգությունն առաջին հերթին երկրի ազգային տնտեսական շահերի ձևակերպումն է և ամրագրումը երկրի իրավական համապատասխան փաստաթղթերում առաջին հերթին նպատակ ունենալով պաշտպանելու անձի, հասարակության, պետության տնտեսական շահերը: Հիմնվելով տվյալ մոտեցման վրա՝ դժվար է չհամաձայնվել, որ ազգային գլխավոր տնտեսական շահը տնտեսության ամբողջական համակարգի կայացման համար քաղաքացիների ընդհանուր հետաքրքրությունների ներդաշնակեցումն է, ինչը կարող է ապահովվել ազգային տնտեսական անվտանգության հայեցակարգի միջոցով: Նշենք, որ ԱՀ-ն դեռևս չունի ազգային տնտեսական անվտանգության հայեցակարգ:

Զարգացման տարբեր մակարդակում գտնվող յուրաքանչյուր երկրի համար տնտեսական անվտանգությունն ունի տարբեր իմաստ՝

---

[1] *Տե՛ս **Մանասերյան Թ.**, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտ, Տնտեսական անվտանգություն, ռազմավարության ուրվագծեր, Երևան, Այլընտրանք, հետազոտական կենտրոն, 2014 էջ 12:*

պայմանավորված պետության առջև դրված խնդիրների բնույթով և ազգային տնտեսության զարգացման որոշակի շահերով: Պարզ է, որ Արևմտյան Եվրոպայի, Չինաստանի, Ճապոնիայի և արդյունաբերական զարգացած երկրներից շատերի համար տնտեսական անվտանգության թե' մեկնաբանությունը և թե' խնդիրները կարող են էականորեն տարբերվել նախկին խորհրդային հանրապետությունների համար օրինաչափ համարվող ձևակերպումներից[1]: Դա կարելի է ներկայացնել հետևյալ կերպ, եթե զարգացած յոթնյակի որևէ երկրի համար տնտեսական անվտանգության հիմնախնդիրները ներկայացվում են առավելագույն կենսամակարդակի ապահովման և յուրաքանչյուր անհատի համար սոցիալական ծառայությունների մատչելիության ու սոցիալական արդարության երաշխիքների ապահովման ձևով, ապա հետխորհրդային երկրներից շատերի համար տնտեսական անվտանգության գերխնդիրներն արտահայտվում են բնակչության նվազագույն կենսամակարդակի, տարրական պայմանների ապահովման, աղքատության դեմ արդյունավետ պայքարի, սովի և համաճարակների վերացման և այլ խնդիրների ձևով: Իսկ ԱՀ-ի պարագայում, ազգային անվտանգության լուրջ մարտահրավերներով պայմանավորված, տնտեսական անվտանգության հիմնախնդիրները ստանում են առավել սուր բնույթ:

Վերջին տաս տարիներից ավել ժամանակահատվածում տնտեսական աճի բարձր տեմպերը վկայում են ԱՀ տնտեսական բնագավառում արդյունավետ քաղաքականության մասին: Սակայն տնտեսական նվաճումներն արտահայտել միայն արտադրության ծավալի աճով, կլինի խիստ սահմանափակ, և չի արտահայտի այն ամենի իրական պատկերը, որն առկա է ներկա զարգացումներում: Այդ ամենի ամբողջական պատկերն ունենալու համար կարիք կա դրանք դիտարկել մակրոտնտեսական երևույթների փոխկապված միջավայրում՝ ապահովելով տնտեսական անվտանգության ձևավորված մակարդակի գնահատման համար անհրաժեշտ բազա: Կայուն տնտեսական աճը, զբաղվածության մակարդակը, գների մակարդակը, արտաքին առևտրային հաշվեկշիռը, բյուջեի ճեղքվածքը և այլ մակրոտնտեսական համամասնություններ, իսկապես, հայտնի են որպես մակրոտնտեսական հիմնական սկզբունքներ, որոնք որպես միասնական համակարգ չեն կարող տարանջատվել և դիտարկվել առանձին-առանձին, և որոնք տնտեսական անվտանգության կարևորագույն բաղկացուցիչներն են: Մյուս կողմից տնտեսության մեջ կարևոր սկզբունքներից են մակրոտնտեսական և սոցիալական գործընթացների փոխառնչությունները: Կայուն մակրոտնտեսական միջավայրը ստեղծում է բավարար նախադրյալները սոցիալական կայունության

---

[1] *Տե՛ս* ***Богомолов В., Эриашвили Н., Барикаев Е., Павлов Е., Ельчанинов М.,*** *"Экономическая безопасность". 2009, Изд.: Юнити-Дана, с.296.*

համար և հակառակը: Հետևապես, տնտեսական զարգացումների դիտարկումները անհրաժեշտ է իրականացնել մակրոտնտեսական և սոցիալական գործընթացների համատեքստում: Այս սկզբունքները որպես միասնական համակարգ բնորոշում են նաև տվյալ ազգային տնտեսության տնտեսական անվտանգությունը: Նշված սկզբունքներից յուրաքանչյուրի բացասական ազդակների դեպքում անհրաժեշտություն է առաջանում գնահատել դրանց տնտեսության անվտանգության վրա հնարավոր ազդեցության մեխանիզմները: Իսկ տնտեսական անվտանգության հիմնախնդիրների լուծման ուղիները նախանշելու համար անհրաժեշտ է վերլուծել տվյալ հիմնախնդիրների փոխկապակցված ազդակները՝ բացահայտելով դրանց պատճառահետևանքային կապերը:

Նմանօրինակ վերլուծությունների համար հիմք կարող է հանդիսանալ Ս. Գլազևի տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգը, որը ներառում է վերոնշյալ սկզբունքները: Ուստի նպատակահարմար ենք գտնում ԱՀ տնտեսական անվտանգության առկա մակարդակը և փոփոխության ընդհանուր միտումները դիտարկել հենց այդ ցուցանիշ-ների փոփոխության ընդհանուր միտումների համատեքստում:

Նախ նշենք, որ ըստ Հավելված 1-ի տվյալների՝ ՀՆԱ-ի ծավալային անվտանգության ցուցանիշների շեմային մեծությունների գծով, ԱՀ-ն խիստ զիջում է Լ. Գլազևի անվտանգության շեմային մեծությունների համապատասխան ցուցանիշներին, ինչը մասամբ բացատրվում է ԱՀ տնտեսության սահմանափակ հնարավորություններով:

Անդրադառնալով գործազրկության մակարդակին՝ պետք է նշել, որ այն շեմային 7%-ի փոխարեն 2017թ-ին կազմել 13,3%: 2014թ-ի 12,9 %-ի համեմատությամբ այն ոչ միայն աճել է, այլև գերազանցում է շեմային համապատասխան ցուցանիշը: Հաջորդ կարևոր գործոնը բյուջեի դեֆիցիտն է ՀՆԱ-ի նկատմամբ, որը 2014թ. 24,8%-ի դիմաց 2017թ. կազմել է 18,7%: Չնայած փոփոխության ընդհանուր դրական միտումներին՝ այնուամենայնիվ, շեմային մեծությունը դեռևս գերազանցում է 3,7 անգամ: Տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգում կարևոր ցուցանիշներից է ինֆլյացիայի ընդհանուր մակարդակը, որը՝ որպես անվտանգության շեմ, Ս. Գլազևյան համակարգում կազմում է 20%: Գների ընդհանուր մակարդակի փոփոխությունների պատկերն այն է, որ ՀՆԱ-ի դեֆլյատորը 2017թ-ին կազմել է 2,5%, 2014թ-ի 2,8 %-ի դիմաց: Ինչ խոսք, ինֆլյացիայի ցածր մակարդակը սոցիալական լուրջ հիմնախնդիրներ ունեցող երկրի, այդ թվում նաև ԱՀ-ի համար, կարելի է ներկայացնել դրական երևույթ և այդ իմաստով տնտեսության կայունության կարևորագույն չափանիշ, սակայն տնտեսական աճի ապահովման տեսան-կյունից արտադրողների անհրաժեշտ խթաններ ապահովվում է առավել բարձր գնաճի պայմաններում: Եթե գնաճը դանդաղ է և տարեկան կազմում է 3-3,5% , այդ դեպքում գնաճի սանդղակը կառավարելի է և ուղեկցվում է գործարար գործունեության աճով: Այդպիսի գնաճը համարվում է նորմալ և

վերջին տարիներին բնորոշ է ԵՄ երկրների մեծամասնությանը: Ազգային տնտեսական անվտանգության արտաքին պարտքի (ԱՀ-ի դեպքում միջպետական վարկի) ծավալը, ՀՆԱ-ի նկատմամբ 2017թ-ին կազմել է 18,6%, 2014թ-ի 24,7%-ի փոխարեն:

Հաջորդ կարևոր ցուցանիշն արտաքին փոխառությունների տեսակարար կշիռն է բյուջեի դեֆիցիտի ծածկման մեջ, որը 2017թ-ին կազմել է 17,4% է, 2014թ-ի 23,3%-ի դիմաց: Չնայած ընդհանուր դրական միտումներին՝ խնդիրն այն է, որ փոխառու միջոցներն օգտագործվում են պետական բյուջեի ընթացիկ ծախսերի ճեղքվածքը փակելու, այլ ոչ թե տնտեսության հզորացման խնդիրները լուծելու համար:

ԱՀ բնակչության սոցիալական բևեռվածության և եկամտային անհավասարության բարձր մակարդակի պայմաններում կարևոր է հասարակական բարեկեցության և արժանապատիվ աշխատանք ու զբաղվածություն ապահովելու համար եկամտի բաշխման գործընթացում ավելի հավասար հնարավորությունների ձևավորումը: Նշվածն առավել հիմնավոր է դառնում, երբ դիտարկում ենք բնակչության սոցիալական անհավասարության հիմնախնդիրները: Այսպես. 2017թ-ին սպառման անհավասարությունը, որը չափվում է Ջինիի գործակցով, կազմել է 0,314, 2016թ-ի 0,287-ի փոխարեն, իսկ ըստ ամբողջական եկամուտների՝ անհավասարությունը կազմել է 0,416, 2016թ-ի 0,388-ի դիմաց: 2017թ.-ին 10% ամենաբարձր և 10% ամենացածր եկամուտներ ունեցող բնակչության խմբերի եկամուտների միջև տարբերությունը կազմել է 15,8 անգամ, անվտանգության շեմային մեծության 8%-ի փոխարեն: Նվազագույն կենսամակարդակից ցածր եկամուտներ ունեցող մարդկանց տեսակարար կշիռը բնակչության մեջ 21,6% է, շեմային 7%-ի դիմաց: Հարկ է նշել, որ աղքատության մակարդակի վիճակագրական տվյալները փաստում են, որ այդ կատեգորիայի մարդկանց գերակշիռ մասը չունի միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթություն:

Իրական ներդրումների ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ չի հասել շեմային 25%-ի մակարդակը, սակայն վարկային ներդրումներ ՀՆԱ հարաբերակցությունը 2017թ-ին կազմել է 54,9%: Բնակչության երկարակեցությունը 74 տարի է, անվտանգության 70 տարու դիմաց: Հանցագործության մակարդակը (100 հազար բնակչության հաշվով հանցագործությունների քանակը) 2017թ-ին 766 է, 2014թ-ի 350-ի փոխարեն, սակայն թեև հանցագործությունների թիվն աճել է, սակայն զիջում է անվտանգության շեմային մեծությունը: Նշված դրական միտումների, գնաճի ցածր մակարդակի, տնտեսական աճի բարձր տեմպերի պայմաններում (2017թ. տնտեսական աճի մակարդակ 15,6% է) կարելի է խոսել տնտեսական որոշակի կայունության և որոշակի տնտեսական անվտանգության առկայության մասին: Սակայն այնուամենայնիվ, տնտեսական անվտանգության զգալի ցուցանիշների գծով ընդհանուր միտումները դրական համարել հնարավոր չէ:

Բացի վերոնշյալ ցուցանիշներից, տնտեսական անվտանգության առումով հայտնի են նաև տնտեսության մոնոպոլացումը, ճյուղային դիվերսիֆիկացիայի հիմնախնդիրը, առևտրային հաշվեկշիռի լուրջ ճեղքվածքը և մակրոտնտեսական այլ համամասնություններ: Տնտեսության բացասական ազդակներն իսկապես առկա են բոլոր տնտեսություններում: Տնտեսական անվտանգության տեսանկյունից կարևոր է այն, թե արձանագրվող տնտեսական անվտանգության ազդակ-ներին ինչպես են արձագանքում դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները: Այդ առումով 2017 թվականին ԱՀ հարկային եկամուտները և տուրքերը գերակատարվել են, սակայն ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների և պետական տուրքերի հարաբերակցության ցուցանիշը 2014թ. համապատասխան ցուցանիշի նկատմամբ նվազելով 2017թ. կազմել է 15,6%: ԱՀ տնտեսական հոմեոստազի (տնտեսական կայունություն) հնարավորությունները գնահատելու համար կարևոր են հարկային մուտքերի կառուցվածքային հարաբերակցությունները և դրանց փոփոխության միտումները: Հարկային եկամուտները 2017թ-ին կազմել են պետական բյուջեի ընդհանուր եկամուտների 95,3%-ը: Ավելացված արժեքի հարկի գծով բյուջեի մուտքերի 39,6%-ն են, ինչը պլանավորված ցուցանիշը գերազանցել է 8%-ով, իսկ եկամտային հարկը՝ 38,4%-ը, ակցիզային հարկը՝ 0,4%-ը, իսկ շահութահարկը՝ 7,9%-ը: Ինչպես նկատում ենք ԱԱՀ-ն ունի աճի միտում և դեռևս բարձր տեսակարար կշիռ Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքում:

Ինչ վերաբերում է կառուցվածքային մյուս հիմնախնդիրներին, ապա դրանցից կարելի է նշել ՀՆԱ-ի ոչ դիվերսիֆիկացված կառուցվածքը: Այսպես. 2017թ. ԱՀ ՀՆԱ-ի կառուցվածքում արդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 35,8,%, իսկ մասնաբաժինն ավելացված արժեքում՝ 24,7%, գյուղատնտեսությունը կազմել է ՀՆԱ-ի 27,9 %-ը: Տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռները տարբերվում են նաև ըստ շրջանների:

Տնտեսության հոմեոստազը՝ որպես տնտեսական անվտանգության հիմնական գործոն, ներկա տնտեսական համաշխարհային և տարածաշրջանային իրավիճակում, առանց լուրջ վտանգ ներկայացնող տատանումների, զարգացման համար դառնում է առաջնահերթ գործոն: Սակայն տնտեսության դիվերսիֆիկացման ցածր մակարդակով և հարկաբյուջետային քաղաքականությամբ պայմանավորված՝ ներկա զարգացումներում առկա են ՀՆԱ-ի անկման վտանգներ: Այդ առումով, կարծում ենք պետք է իրականացնել բարեփոխումներ ինչպես հարկային դրույքաչափերի ճշգրտման, այնպես էլ հավաքագրման առումով՝ նպատակ ունենալով ինչպես կառուցվածքային անհամաչափությունների ուղղված տնտեսական աշխուժացումը, այնպես էլ արտահանման դիվերսիֆիկացիայի խթանումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր հարևան երկրներում, ԱԱՀ-ն ավելի ցածր է, քան ԱՀ-ում, կարծում ենք

նպատակահարմար է, որ ԱՀ–ում ևս իջեցվի ԱԱՀ-ի դրույքաչափը: Վերջինս կխթանի տնտեսությունը, և արդյունքում երկարաժամկետ առումով բյուջետային կորուստներ չեն լինի: Իհարկե, ԱԱՀ իջեցումը պետք է կատարել համակարգված, որպեսզի կորուստներ չլինեն նույնիսկ կարճաժամկետ առումով:

Վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռը արդյունաբերական արտադրության մեջ 2014թ. 43,2%-ի փոխարեն նվազել է և 2017թ-ին կազմել 21,3%՝ շեմային մեծության 70%-ի դիմաց: Մեքենաշինության տեսակարար կշիռն արդյունաբերական արտադրության մեջ 0% է շեմային մեծության 20%-ի դիմաց: ԱՀ-ն թեև չունի ռեսուրսների ապահովության բարձր մակարդակ, այնուամենայնիվ համարվում է հանքահումք արտահանող երկիր: Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործումը ԱՀ արդյունաբերության կառուցվածքում կամել է 53,4%, 2013թ-ի 25,7%-ի փոխարեն:

Արդյունաբերության այսպիսի կառուցվածքը վտանգում է, ինչպես արդյունաբերության աճի, այնպես էլ տնտեսական աճի կայուն տեմպերը: Սակայն տնտեսական անկման սցենարի հիմնախնդիրը ոչ թե միայն արտադրության ծավալների հնարավոր անկումն է, այլև դրանով պայմանավորված բյուջետային դեֆիցիտի ձևավորումը, որի պայմաններում մեծանում է փոխառու միջոցների պահանջը, ինչի ապահովման առումով ԱՀ հնարավորությունները խիստ սահմանափակ են:

ԱՀ տնտեսական անվտանգության հիմնահարցերի վերլուծությունն իրականացնելիս կարևոր է տարբերակել անվտանգությունն ապահովման ներտնտեսական և արտաքին տնտեսական գործոնները: Ինչպես և ցանկացած երկրի դեպքում, ԱՀ-ի պարագայում ևս արտաքին գործոնների հաղթահարումը շատ ավելի դժվար է, քան ներքին գործոնների: Առավել ակնհայտ արտաքին գործոնը, թերևս ԱՀ-ի ճանաչումն է, որի շուրջ վերջին շրջանում, միջազգային ասպարեզում, ՀՀ-ն և ԱՀ-ն փորձում են միասնական ձևով ներկայացնել ԱՀ-ի ճանաչման խնդիրը՝ տարածաշրջանային խաղաղության և կայունության տեսանկյունից, որը տնտեսական անվտանգության անմիջական երաշխիքն է:

Անդրադառնալով ներտնտեսական գործոններին, որոնց պայմանականորեն կարելի է դասակարգել միկրո և մակրո տնտեսական գործոններ ըստ անհատի, ձեռնարկության և հասարակության կամ պետության, պետք է նշել, որ ներտնտեսական որոշ սպառնալիքներ, անգամ զարգացման նույն հարթության վրա հայտնված զարգացող որոշ երկրների համար կարող են դուրս լինել անվտանգության ամենօրյա օրակարգից: Խոսքը բնակչության միգրացիայի, աշխատունակ բնակչության միգրացիայի, որակյալ մասնագետների արտագաղթի, տնտեսության ոչ բավարար դիվերսիֆիկացիայի և բազմաթիվ այլ

գործոնների մասին է, որոնք սակայն ԱՀ-ի պարագայում ստանում են առավել սուր հնչեղություն:

Հաշվի առնելով ՀՆԱ-ի աճի բարձր տեմպերը և գնաճի համեմատաբար ցածր մակարդակը՝ ՀՆԱ-ի եկամտային կառուցվածքի ձևախեղումների (համախառն եկամուտ և համախառն շահույթը 2017թ. կազմել են ՀՆԱ-ի 48,7%-ը, 2010թ. 41,5%-ի դիմաց, իսկ վարձու աշխատողների աշխատավարձը, հակառակը՝ նվազելով 2017թ. կազմել է 46,0, 2010թ. 52,2%-ի փոխարեն) պայմաններում հրամայական է դառնում աշխատավարձերի բարձրացման խնդիրը: Աշխատավարձի բարձրացման խնդիրի լուծմանը պետք է մոտենալ՝ ելնելով բնակչության ինչպես սոցիա-լական իրավիճակից, այնպես էլ աշխատանքի խրախուսման տեսակետից: Բարձրացումը պետք է իրականացվի (ՀՆԱ աճին + գնաճ) բանաձևի հիման վրա, սակայն սոցիալական հավասարության պահպանման նպատակով այդպիսի մոտեցում պետք է ցուցաբերել նաև թոշակների նկատմամբ:

Ինչ վերաբերում է ՀՆԱ-ի նկատմամբ արտաքին առևտրի բացասական մնացորդին, ապա այն նշված ժամանակահատվածում 62%-ից կրճատվել և կազմել է 23%, ինչը, սակայն, դեռևս բավականաչափ բարձր ցուցանիշ է :

Հաշվի առնելով վերոնշյալ վերլուծության արդյունքները՝ կարծում ենք՝ տնտեսական անվտանգության բարձրացման միջոցառումների համակարգը պետք է ներառի հետևյալ ուղղությունները՝

❖ հասարակական բարեկեցության ապահովման, ներառյալ կրթության, առողջապահության մատչելիություն և զբաղվածության, ընտանիքի կյանքի որակի և ապագա սերնդի արժանապատիվ ապրելու հեռանկարների ձևավորում,

❖ ԱՀ բնական պաշարների արդյունավետ և թափանցիկ օգտագործում, որպես տնտեսական անվտանգության կարևոր նախապայման,

❖ հումքային ռեսուրսների արտահանումից խուսափելու որպես այլընտրանք՝ մրցունակ տնտեսության ձևավորում, որը պետք է զարգանա աշխարհում մրցունակ, բարձր որակավորում ունեցող, կիրթ, մոտիվացված աշխատուժով,

❖ համայնքների զարգացման հնարավորությունների համահարթեցում համայնքների զարգացման ծրագրերի ընդլայման, սեփական եկամուտների մասնաբաժնի տեղական բյուջեում ավելցման ճանապարհով:

Հավելված1[1]
ԱՀ Տնտեսական անվտանգության ցուցանիշներն ըստ Ս. Գլազևի (2014-2017թթ.)

	Տնտեսական անվտանգության ցուցանիշներ	Սահմանային մեծություններ	Փաստացի մեծություններ	Փաստացի մեծություններ /Սահմանային մեծություններ
1	2	3	4	5
2	ՀՆԱ-ի ծավալ			
3	ա) յոթնյակի միջինի նկատմամբ	75%	11,3%	15,06%
4	բ) միջին հաշվով յոթնյակի բնակչության մեկ շնչին ընկնող	50%	8,3%	16,6%
5	գ) միջին հաշվով աշխարհի բնակչության մեկ շնչին ընկնող	100%	35,7%[2]	35,7%
6	Վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռն արդյունաբերական արտադրության մեջ	70%	21,3%	31,4%
7	Մեքենաշինության տեսակարար կշիռը արդյունաբերական արտադրության մեջ	20%	0%	0%
8	Ներդրումների ծավալը, ՀՆԱ-ի նկատմամբ %-ով	25%	23,5%	94%
9	Տնտեսական աճի մակարդակ	7%	15,6%	222,5%
10	Գիտական հետազոտության վրա ծախսերը, ՀՆԱ-ի նկատմամբ %-ով	2%	-	
11	Թողարկվող արտադրանքի ծավալում նոր արտադրա-տեսակների տեսակարար կշիռը	6%	-	
12	Նվազագույն կենսամակարդակից ցածր եկամուտներ ունեցող մարդկանց տեսակարար կշիռը բնակչության մեջ	7%	21,6	308,5%
13	Բնակչության երկարակեցությունը	70 տարի	74	105,7%

[1] Հաշվարկներն իրականացվել են stat-nkr.am կայքի տվյալների հիման վրա:
[2] Համաշխարհային ՀՆԱ-ն IMF կանխատեսումներով 2018թ. $84.8 միլիարդ է, բնակչության թիվը՝ 7.461 միլիարդ մարդ, մեկ շնչին ընկնող համաշխարհային ՀՆԱ-ն 2018թ. 11 հազ. 727 դոլար է:

14	10% ամենաբարձր և 10% ամենացածր եկամուտներ ունեցող բնակչության խմբերի եկամուտների միջև տարբերությունը	8 անգամ	15,8 անգամ	197,5%
15	Հանցագործության մակարդակը (100 հազար բնակչության հաշվով հանցագործությունների քանակը)	5 հազար	766	15,2%
16	Գործազրկության մակարդակը	7%	12,9%	184,2%
17	Ինֆլյացիայի տարեկան մակարդակը	20%	2,5 %	12,5%
18	Ներքին պարտքի ծավալը, ՀՆԱ-ի նկատմամբ %-ով	30%	-	
19	Ներքին պարտքի սպասարկման և մարման ընթացիկ պահանջը, բյուջեի հարկային մուտքերի նկատմամբ %-ով	25%	-	
20	Արտաքին պարտքի ծավալը, ՀՆԱ-ի նկատմամբ %-ով	25%	18,6%	74,4%
21	Արտաքին փոխառությունների տեսակարար կշիռը բյուջեի դեֆիցիտի ծածկման մեջ	30%	17,4%	58%
22	Բյուջեի դեֆիցիտը, ՀՆԱ-ի նկատմամբ %-ով	5%	18,7%	374%

Հավելված 2[1]

ԱՀ մակրոտնտեսական համամասնությունների դինամիկան 2010-2017թթ.

	2010թ.	2017թ.
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, հազ. դրամ	823,2 հազ. դրամ ($2203)	1855.9 հազ. դրամ ($3844.7)
Վարկային ներդրումները (կարճ, երկարաժամկետ)ՀՆԱ-ի նկատմամբ	35,7%	54,9
Պետական և համայնքային բյուջեների եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ	20,8%	15.6
Պետական և համայնքային բյուջեների ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ	53,5%	34.3
Պետական և համայնքային բյուջեների պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ	32,6%	18,7%
Ընդ. համախմբված բյուջեի սոցիալական ոլորտների ուղղված ծախսեր (ընդհամենը ծխասերի նկատմամբ)	45,7%	47,3
Զուտ արտահանման ծավալը, հազ. ԱՄՆ դոլար	-19859,6	-131274,9
Արտաքին առևտրի բացասական մնացորդը ՀՆԱ-ի նկատմամբ %-ով	62%	23,2%
Եկամուտների ձևավորված հաշիվները ՀՆԱ-ի նկատմամբ %-երով, այդ թվում՝		
Վարձու աշխատողների աշխատավարձը	52,2%	46,0
Համախառն եկամուտ և համախառն շահույթ	41,5%	48,7
Ապրանքների զուտ հարկեր	8,1%	5,2
Արտադրության այլ զուտ հարկեր	0,2%	0,1

[1] *www.stat-nkr.am*

Գրականություն

